


KANTSASAR / ANNUAL SPECIAL

ԳԱՆՁԱՍԱՐ

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՊԱՇՏՏՆԱԹԵՐԹ



2020
ԲԱՅԱՌԻԿ

"Իրաքանչիւր Հայու երազն է
Երեւանի մէջ տուն ունենալ"

«Մենք կ'առաջարկենք ձեզի ունենալ
ձեր երազած տունը Երեւանի մէջ»
Աւետիս Գարակուլեան +374 93 626260
Ռիթա Եագուպեան +374 93 003737

**" It is dream of every Armenian
to have a home
in Yerevan"**



**We can give you the home you've dreamt about,
only a few minutes from Republic square"**

Avedis Karagulian +374 93 626260

Rita Yacoupian +374 93 003737

Yerevan . Armenia

www.heartofyerevan.com

Jewelry GARO BEDERIAN



تصميم أحدث موديلات المحابس من الجورنال
تصليح كافة المجوهرات و الألماس و الفضيّات




☎ 021 4440 032


☎ 0967 609 959

📌 Jewelery Garo

حلب_السليمانية_مفرق غريبة للسيارات



Հայկական Վարդանախշ հոգեշունչ իրեր



Roots / Արմատ
@roots.armad




+961 81 244 589



+963 998 204 031

rootsarmad@gmail.com



ՆՈՐԻՆ ՎՍԵՄՈՒԹԻՒՆ ՆԱԽԱԳԱՆ
ՊԱՇՇԱՐ ԱԼ ԱՍԱՏ



ԳԵՐՇ. Տ. ՄԱՍԻՍ ՍՐԲ. ԵՊՍ. ԶՕՊՈՒԵԱՆ
ԱՌԱԶՆՈՐԴ ՆԱՅՈՅ ԲԵՐԻՈՅ ԹԵՄԻՆ

KANTSASAR / ANNUAL SPECIAL

ԳԱՆՁԱՍԱՐ

2020

ԲԱՑԱՌԻԿ

ԽՄԲԱԳԻՐ՝
ԶԱՐՄԻԿ ԶԻԼԱԲՕՇԵԱՆ - ՊՕՂԻԿԵԱՆ

ԷԶԱԴՐՈՂ ԵՒ ՁԵՒԱԲՈՐՈՂ՝
ՅՈՎԱՍԷՓ ՉԱԼՕՂԼԵԱՆ


ԳՐԱՇԱՐ՝
ԱՆԻ ԹՈՓԱԼԵԱՆ - ՍԱՐՈՒԽԱՆ

ՍՐԲԱԳՐԻՉՆԵՐ՝
ԶԵՓԻԻՌ ԱԲԱԳԵԱՆ - ՊԱՊԻԿԵԱՆ
ՅՈՒՇԻԿ ՂԱԶԱՐԵԱՆ

ԿԱՅՔԷԶԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՔ՝
ՔՐԻՍՏ ԽՐՈՅԵԱՆ

ՆԱՇՈՒԱՊԱՆ՝
ՍԵԲԱԿ ԿԻԼՎԱՆԷՍԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
ԿԱԶՄ



ԿՈՂՔԻ ՁԵՒԱԲՈՐՈՒՄ՝
GrsphicArt@web.de

ՏՊԱՐԱՆ՝
ԱՐԵԻԵԼՔ

2019-2020

www.kantsasar.com

ՎԵՐԱԲԺԵԻՈՐԵՆՔ ՄԵՐ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆ ՈՒ ՆԱՅՈՒ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ



*Մասիս Եպս. Զօպունեան
Առաջնորդ Հայոց Բերիոյ Թեմին*

Կանգնած ենք Նոր Տարուան սեմին: Նոր Տարին դիմաւորելու համար գոհունակութեամբ եւ արդար ակնկալութեամբ բարին կը մաղթենք համայն մարդկութեան: 2019 թուականը յուշարար է մեզմէ իրաքանչիւրին, որ ժամանակի անիւը զարմանալի արագութեամբ կը թաւալի:

Յետադարձ ակնարկով մը կը ջանանք իրատեսութեամբ եւ ինքնաքննութեամբ հաշուեյարդար մը կատարել, ձեւական, մակերեսային, քմահաճ գնահատումներէն խուսափելով եւ մեր ապրելակերպին ուշադրութիւն դարձնելով, որպէսզի վերաբժեւորենք մեր քրիստոնէական կոչումն ու հայու ինքնութիւնը:

Աստուած մարդ արարածին շնորհած է ազատութիւն, բանականութիւն, դատողութիւն, խիղճ եւ արտայայտուելու յատկութիւններ: Այս աստուածատուր արժէքներուն շնորհիւ կարելի է կառչիլ բարիին, դրականին եւ շահեկանին: Ուրեմն, ընտրելու ենք այն ինչ որ աստուածահաճոյ է, որպէսզի ըստ այնմ

կարգաւորենք մեր կեանքի առաջնահերթութիւնները: Ուստի, զգուշութեամբ եւ իմաստութեամբ ընթանալու ենք:

Դեկտեմբեր ամսուն նկատելի երեւոյթ էր արտաքին աշխարհին ուշագրաւ զարդարանքն ու լուսաւորումը: Առանց լուսաւորութեան գեղեցկութիւնը ակնթարթի մը մէջ կը կորսնցնէ իր հրապոյրը: Բայց անլի էական է մեր ներաշխարհին լուսաւորութիւնը: Ահա թէ ինչո՞ւ մեր Տէրը Յիսուս Քրիստոս իր հետեւորդներուն կ'ըսէ. «*Դուք էք աշխարհի լոյսը*» (Մտ 5.14) Քրիստոնէան լոյս որդի ըլլալու սրբանուէր պատիւը ստացաւ, ինչպէս առաքելաւ առիթով մը կ'ըսէ. «*Թեպէտ ժամանակ մը խաւար էիք, սակայն հիմա որ Տիրոջ միացաք՝ լոյս էք*» (Եփ 5.8): Հետեւաբար աստուածատուր լոյսով կրնանք կերտել պայծառ գալիք, սերմանել բարիք, ու մանաւանդ կրնանք զօրեղապէս նպաստել բարեփոխելու անօրէնութեամբ ապականած աշխարհին տխուր պատկերը: Ծանր լուծ մը, որ դիրաւ տանելի կ'ըլլայ երբ Քրիստոսի լոյսով պայ-

ծառանանք: Սքանչելի լոյսը՝ Զրիստոս, իր յայտնութեամբ ազատութիւն ակետեց, փրկութիւն հռչակեց, նոր կեանք պարգեւեց, հաշտութիւն քարոզեց եւ խաղաղութիւն հաստատեց: Մենք եւս ունինք յատուկ առաքելութիւն մը, որուն ուղեցոյցը եւ ներշնչման աղբիւրը Աւետարանն է, որ կը պատգամէ հետեւիլ Զրիստոսի օրինակին, դառնալու համար լոյսի առաքեալներ:

2019 տարուան ընթացքին սուրիահայութեան համար մտահոգութիւններն ու մարտահրաւերները անժխտելի իրականութիւններ էին: Հակառակ այս իրողութեան, մեր եկեղեցւոյ գաւազները տրտմութեան հովիտէն անցան անպարտելի կերպով: Տոկուն կամքով եւ քաջասիրտ կեցուածքով վճռեցին հաւատքով սպառազինուիլ: Փառք Աստուծոյ, որովհետեւ Սուրիական Հայրենիքը անխախտելի մնալով հերոսական գոյապայքար մղեց, խաղաղութեան ծիածանը տեսնելու ձգտումով: Փառք Աստուծոյ, որովհետեւ նոր ժամանակուան «Բարի Սամարացիներ» օգնութեան ձեռք երկարեցին, աղօթակից եւ ցաւակից ըլլալով:

Մանկացեալ Փրկիչին իրաշափառ Ս. Ծննդեան տօնը մեզի կ'իմացնէ որ մենք Լոյսի Առաքեալ ենք: Այս իրողութեան պերճախօս վկան է մեր դարաւոր պատմութիւնը: Օտարացնող եւ այլասերող հոսանքներուն դէմ կանգուն մնաց հայը, իր հոգեւոր, բարոյական եւ ազգային արժէքներուն տեր կանգնեցաւ՝ ծով գոհողութեամբ եւ հաւատքի վկայութեամբ: Հայուն հոգին սխրագործութիւններուն ընդմէջէն սքանչելի լոյսին յաւերժախօս խորհուրդը փոխանցեց սերունդէսերունդ:

Թող ընդմիշտ պայծառ մնայ Զրիստոսաւեր հայու հոգին ի փառս Աստուծոյ, ի պա-

տիւ մեր ազգին եւ ի պանծացումս Հայ եկեղեցւոյ:

Ամանորի եւ Ս. Ծննդեան օրհնաբեր առիթներով մեր որդիական անվերապահ սերը կը յայտնենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան արժանընտիր հայրապետ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառին, մաղթելով արեւշատութիւն եւ երկնային բարիքներով ծաղկազարդ օրեր: Մեր Թեմէն ներս գործող հոգեւորականաց դասուն, ազգային իշխանութեան եւ բոլոր կառոյցներուն կը մաղթենք բարեյաջող աշխատանքներ, երջանկաբեր, օրհնաբեր եւ խաղաղ օրեր:

2020 թուականը յատկանշական տարի է երկու Եզակի առիթներով: Առաջինը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հայրապետին գահակալութեան 25-ամեակն է: Ուստի, սրտի անհուն բերկրանքով եւ երախտագիտական զգացումներով կը շնորհաւորենք մեր հովուապետը, մաղթելով ընդ երկար գահակալութիւն ի փառս Աստուծոյ եւ ի պանծացումս Հայ եկեղեցւոյ: Երկրորդը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի հիմնադրութեան 90-ամեակն է: Արամ Ա. Վեհափառին բնորոշմամբ *«Դպրեվանքը Կաթողիկոսութեան սիրտն է»*: Արդար բնութագրում մը, որ հարազատ կերպով կը բացատրէ դպրեվանքին առաքելութիւնը: Ուստի, Ամենակալէն կը հայցենք, որ այդ «Սիրտը» հոգեմտաւոր արժէքներով բաբախուն մնայ, որպէսզի նոր մշակներ պատրաստէ մեր եկեղեցիին՝ «Հոգիներու ծննդավայրին»:

Թող բացուող նոր տարին ըլլայ բարեբեր համայն մարդկութեան եւ ողջ հայութեան համար: Թող մանկացեալ Յիսուս Փրկիչը իր խաղաղութիւնը շնորհէ մեզի եւ իր անպատմելի սերը թագաւորէ մեր կեանքէն ներս:

Շնորհաւոր Նոր Տարի:

Խմբագրական

ԻՆՉՈ՞ՒՄ «ԳԱՆՉԱՍԱՐ»Ի ԲԱՅԱՌԻԿԸ

Չարմիկ Պողիկեան

Յաճախ, յատկապես Սուրիոյ պատերազմի ծանր տարիներուն, խմբագրակազմի անդամներուն հետ կը գրուցեիք, թէ ինչո՞ւ ամէն ջանք պէտք է թափենք հրատարակելու «Գանձասար»ի տարեկան բացառիկ հատորը, սովորութիւն մը պահելո՞ւ համար պարզապէս, թէ աշխատանքի մը իրագործման մէջ թերացում արձանագրած չըլլալու պարտաճանաչութիւնը մեզ կը մղէր ձեռնարկելու այս հատորի հրատարակութեան:

Իրականութեան մէջ վերը յիշուած պատճառներէն ոչ մէկուն դրդումն էր, որ մեզ կ'առաջնորդէր:

Թերթի տարեկան բացառիկ հատորը հաւաքական աշխատանքի մը արդիւնքն է, տարբեր մտքերու, մտայնութիւններու, մակարդակներու հանդիպումը հատորի մը մէջ, ապա անկէ դուրս գալու եւ ընթերցողներուն հետ հաղորդակցելու, միտք ու գեղարուեստական ճաշակ հրամցնելու անհրաժեշտ կարիք մըն է:

«Այդ կարիքը կա՞յ տակաւին», պիտի ըսեն մամուլի դերակատարութեան թերահաւատութեամբ նայողները: *«Կա՞յ ու ջանք պէտք է թափենք, որ աճի, պահանջքի վերածուի»*, պիտի ըլլայ մեր պատասխանը:

Մեր աշխատակիցներու գործակցութիւնն ու Սուրիոյ տարբեր նահանգներուն մէջ վերջին տարիներուն հիմնուած թղթակցային կետերուն աշխոյժ աշխատանքը եւս մեր պատասխանը կը հաստատեն:

ԼՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսը 2019-ն յայտարարած էր «Մամուլի Տարի», Լիբանանի

մէջ կազմակերպուած խորհրդաժողովին քննարկուեցան մամուլի դերակատարութիւնն ու դիմագրաւած դժուարութիւնները, անոր զարգացումը խոչընդոտող, խօսքի ազատութիւնը կաշկանդող նեղ-հատուածական մտածողութենէ դուրս գալու անհրաժեշտութիւնը: Այս բոլորը, սակայն, խօսքէն գործի հարթակ փոխադրելու համար անհրաժեշտ են խիզախ գրիչներ, յանդուգն լրագրողներ ու խմբագիրներ, լեզուն ամէն մակարդակներու վրայ արհամարհող ու երկրորդական արժէք համարողներուն դէմ պայքարող մտաւորականներ ու այդ մտաւորականներուն ստեղծագործական աշխատանքը գնահատող ու խրախուսող հաստատութիւններ, որոնք նօսրացած են հայկական մեր կեանքին մէջ, ցաւօք:

Մամուլը, թերթը, վերջապէս, առեւտրական աշխատանքի մը արդիւնքը չեն ու չեն կրնար ըլլալ: Մամուլը միտք, հոգի ու սիրտ կը մէկտեղէ ու մեր կեանքին որակը ցոյց կու տայ, ազգային արժէքները պահպանելու լրջութիւնը կ'արտացոլացնէ, ու վա՛յ մեզի, եթէ այդ ցոլացումը խամրի, դարդի մտքերու լուսաւորումը ու մենք, մեր անտարբերութեամբ, լուսանցքէ դուրս պահենք լուսաւորիչները:

Հազարամեակներու կեանք ունեցող ազգային մեր արժէքներուն, գլխաւորաբար՝ գիր ու բանին, նոր աւիւն հայթայթելու, զայն տեւաբար մեր ներկային մէջ պահելու ու անընդհատ հարստացնելով ներգործական դարձնելու դերը կատարելու է մամուլը՝ մեր ստեղծարար ոգին ու թռիչքը գիրէն ու գիրքէն կեանքի

վերածելով, դրական միջավայր ձեւաւորելով ու կրաւորականութենէ դուրս գալով: Այլապէս ո՞ր պիտի ձեւաւորուի մեր մտաւորական միջավայրը:

Բարեբախտաբար հայ մամուլին շուրջ կը խմբուին անոր դերակատարութեան հաւատացողները, բոլոր անոնք, որոնք ոչ միայն յօդուածներ ստորագրելով, այլեւ նիւթական յատկացումներով անոր պահպանման ու զարգացման իրենց նախանձախնդրութիւնը կ'արտայայտեն:

Այս առիթով մեր երախտագիտական խօսքը բոլոր աշխատակիցներուն, նաեւ նուիրատուներուն, յատկապէս սուրիահայ նուիրատուներուն, որոնք երկրէն մեկնած ըլլալով մեկտեղ կը պահպանեն զիրենք իրենց ծննդավայրին հետ կամրջող այլազան կապերը, այս պարագային նաեւ՝ մեր տարեկան բացառիկ հատորը ընթերցելով, կարծիք արտայայտելով, աշխատակցելով եւ նիւթապէս օժանդակելով անոր տպագրութեան: Հեռաւորութիւնը չէ խզած կապը, համայնքը կը մնայ որքան մեր, նոյնքան անոնց սեւեռակէտը՝ իր տագնապներով ու ձեռքբերումներով: Փաստօրէն անոնք գտած, ձեւակերպած, ու կենսաւորած են իրենց հարազատ միջավայրէն չհեռանալու բանաձեւը:

Այդ բանաձեւն է, որ կը փորձէ պահպանել նաեւ թերթը՝ ֆիզիքապէս տարտղնուած, բայց մտային ու հոգեկան կապերով մշտապէս զօդուած սուրիահայութիւնը խմբուած տեսնելու իր շուրջ, անոր կամրջումին օղակը դառնալու, անոր տագնապալի եւ ուրախալի օրերուն, ձեռքբերումներուն եւ դժուարութիւններուն արձագանգելու:

Շնորհակալութիւն մեր ճամբան հարթ դարձնող բոլոր ձեռքերուն:

Սուրիոյ տագնապը կը թեւակոխէ իր 9-րդ տարին:

Ապահովական եւ տնտեսական տագնապները կը մնան ճնշող, միեւնոյն ատեն, սակայն, համայնքին մէջ վերաշինութեան, վերակազմակերպումի ճիգեր կ'երեւին, ճիգեր, որոնց մէջ մեծ ներդրում ունի յատկապէս երիտասարդ տարրը, գործ ստանձնելու պատրաստակամութեամբ:

Հալեպը, Գամիշլին, առաւելաբար կը շարունակեն ենթակայ մնալ զինեալ ահաբեկչական խմբաւորումներու հրթիռակոծումներուն, թրջական ուժերու Սուրիոյ հիւսիսարեւելեան շրջան թափանցումը վերաշխուժա-

ցուցած է ահաբեկչական խմբաւորումներուն գործունեութիւնը: Սուրիոյ հարաւային սահմանները կը շարունակեն մերթ ընդ մերթ թիրախ դառնալ իսրայելեան հրթիռակոծումներու: ԱՄՆ-ի կողմէ Սուրիոյ տնտեսական շրջափակումը, «Քաղաքացիները Պաշտպանելու Կեսարի Օրէնք» անուան տակ պատժական նոր տնօրինումները, յատկապէս քարիւղի եւ վերականգնումի մարզերուն մէջ գործող ընկերութիւններուն յատուկ, այլ բան չեն, եթէ ոչ՝ Սուրիոյ տագնապը երկարաձգելու եւ ժողովուրդին կենսամակարդակը անկումի առաջնորդելու քաղաքականութեան դրսեւորումներ:

Հակառակ այս բոլորին, Սուրիոյ պետութիւնը ամէն ջանք ի գործ կը դնէ:

-Շարունակելու երկիրը վերականգնելու աշխատանքը:

-Քաջալերելու երկրի փոքրամասնութիւններուն մշակութային եւ ազգային իւրայատկութիւններն ու տնտեսապէս նեցուկ կանգնելու անոնց:

-Ազատագրելու սուրիական հողերն ու վերահաստատելու ժողովուրդին բնականոն ու խաղաղ կեանքը:

-Ըլլալով ինքնաբաւ տնտեսութիւն ունեցող երկիր, կարելի բոլոր միջոցներով յաղթահարելու տնտեսական շրջափակումն ու պատերազմին հետեւանքով յառաջացած դժուարութիւնները:

-Պայքարելու խաւարամտութեան դէմ ու սատար հանդիսանալու նորահաս սերունդի մտքի լուսաւորութեան ու բարձրագոյն ուսման՝ օժանդակելով յատկապէս վարժարաններու վերաշինութեան եւ ուսումնական ծրագիրներու բարելաման:

Միջին Արեւելքի, յատկապէս Սուրիոյ եւ Լիբանանի հայութեան համար դժուար տարի մը մեր ետին ձգելով, Նոր Տարին դիմաւորենք համայնքային մեր աշխատանքները նոր թափով ու որակով օժտելու յանձնառութեամբ: Յանձնառութիւնը կ'իմաստաւորուի աշխատանքով, իսկ աշխատանքը կ'արդիւնաւորուի, երբ տեղքայլը նահանջ համարելու յանդգնութիւնը կ'ունենանք ու տարբեր մարզերու մէջ քայլ առ քայլ դէպի առաջ կ'ընթանանք: Պայմանները փոփոխական են, ուստի անոնք թող չսահմանեն մեր գործունեութեան որակը: Որակաւոր ու հետեւողական աշխատանքն է, որ նոր արահետ կրնայ բանալ մեզի համար:

ՏԱՐԵՄՈՒՏԻ ՄԱՂԹԱՆՔ



Արմեն Սարգսյան
ՀՀ Հալեպի Գլխավոր Հիւպատոս

Սիրելի՛ հալեպահայեր,
2019 թուականը մօտենում է աւարտին: Ինչպէս ամէն տարի, մենք ի մի ենք բերում մեր ձեռքբերումներն ու նուաճումները, յիշում մեր բացթողումների մասին, փորձում նորովի, նոր աւիւնով եւ շնչով մտնել 2020 թուական: Բայց ամէն տարի, սեփական հաշուետուութեան ամենասկզբում եւ վերջում, մեր ընկերներին, հարազատներին եւ բարեկամներին շնջում ենք արդէն աղօթք դարձած բարեմաղթանքի հետեւեալ խօսքերը. *«Ամենաբարձեալից խնդրում ենք խաղաղութիւն մեր Հայրենիքին եւ անվտանգ ծառայութիւն Հայոց Աշխարհի սահմանները պաշտպանող հայ զինուորին»:*

Մեր Հայրենիքում տեղի են ունենում խորքային փոփոխութիւններ, որոնք միտում են էլ աւելի հզօրացնելու, էլ աւելի ամրապնդելու Հայաստանի պետականութիւնը: Այս փոփոխութիւնները նոր ընթացք եւ թափ պիտի հաղորդեն հայ ժողովրդի միասնական լինելու երազի իրականացմանը: Այս գործընթացները պետք է շէնացնեն մեր Հայրենիքը, ուր ցանկացած հայ պետք է ունենայ իր արժանապատիւ տեղն ու դերը: Այս զարգացումները նոր հայեցակարգ են ձեւաւորել նաեւ Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան օրակարգում, ուր, որպէս առաջնահերթութիւն, հռչակուել են ինքնիշխանութեան, հայրենադարձութեան եւ փոխգործակցութեան կենսական նշանակութիւն ունեցող հիմնարար սկզբունքները:

Հայրենիքի առաջադիմութեան եւ բարգաւաճման տեսլականը դարձել է աւելի ընդգրկուն եւ բազմապրոֆիլ, միախառնուել ազգային հայեցակարգի հետ, որի առանցքում հայ մարդն է, նրա կենսական շահերի եւ իրաւունքների պաշտպանութիւնը՝ անտեսելով աշխարհագրական բոլոր սահմանները: Անուաճի վառ վկայութիւնն է 2019 թուականի Փետրուարից Հայաստանի Հանրապետութեան Մարդասիրական Առաքելութեան հմբի գործունեութիւնը Հալեպ քաղաքում: Այն իր առաքելութեամբ եւ ազգային արժեքներին հաւատարիմ մնալու ուխտով ոչ միայն նոր էջ բացեց հայ-սիրիական յարաբերութիւնների նորագոյն պատմութեան մէջ, այլեւ իր անբասիր եւ նուիրեալ աշխատանքով ոսկեզօծեց հայ ժողովրդի բարձր անունը յաւերժացնելով հայ-սիրիական դարաւոր բարեկամութիւնն ու անմահացնելով հայի անունը Սիրիայի բարեկամ ժողովրդի սրտերում:

Սիրելի՛ հալեպահայեր,
Հալեպում Հայաստանի Հանրապետութեան գլխավոր հիւպատոսութեան ողջ անձնակազմի, Հալեպում Հայաստանի Հանրապետութեան Մարդասիրական Առաքելութեան հմբի բոլոր անդամների անունից թոյլ տուէք շնորհաւորել ձեզ Ամանորի եւ Ս. Ծննդեան տօների կապակցութեամբ: Թող 2020 թուականը բոլորիս համար լինի խաղաղութեան, անվտանգութեան, առաջընթացի եւ նոր ձեռքբերումների տարի:

ԺՈՂՈՎՐԴԱՆՈՒԷՐ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՄԲ, ՄՇՏԱՆՈՐՈԳ ՈՒՆՏՈՎ

Յակոբ Քիլճեան

Վերջին ինն տարիներու Սուրիական արհաւիրքին հետեւանքով Սուրիոյ հայութիւնը ապրեցաւ մեծ ցնցումներ, որոնց իբրեւ արդիւնք ունեցանք արտահոսք՝ թիւի եւ որակի: Մեր կազմակերպուածութիւնը եւ տարիներու փորձառութիւնը, սակայն, թոյլ տուին նուազագոյն վնասներով պահել մեր գաղութը:

Տարիներու արհաւիրքին կը միանայ վերջին տարուան ընթացքին շեշտուած տնտեսական ճգնաժամը, որ իր բացասական ազդեցութիւնը կ'ունենայ Սուրիոյ հայութեան ընկերային, կենցաղային, կրթական եւ մշակութային կեանքին վրայ:

Ճգնաժամային այս տարիներուն պէտք էր սուրիահայութիւնը իր բոլոր գոյներով գօտեպնդուէր եւ առաջնորդուէր միասնականութեամբ: Այս իմաստով արձանագրեցինք յաջողութիւն կարգ մը ասպարեզներու մէջ, իսկ այլ տեղեր միասնականութիւնը շահագործուեցաւ ոմանց կողմէ, ինչ որ ընդունելի երեւոյթ չէր եւ անհրաժեշտ է սրբազրել գայն:

Ժամանակը եկած է վերականգնումի մասին խօսելու, ծրագրելու եւ գործադրելու արդէն ընթացք առած աշխատանքները: Որոշ կարեւոր փուլեր նուաճած ենք, սակայն հարկ է

ճշդել թէ ի՞նչ է առաջնահերթութիւնը մեզի համար՝ կառոյցներու վերաշինութիւնը, թէ մարդուժի պատրաստութիւնը: Իրականութեան մէջ երկուքն ալ նոյն չափով կարեւոր են, որովհետեւ մէկը միւսը կ'ամբողջացնէ, մարդուժը առանց կառոյցներու զարգանալու եւ ինքզինք պահելու կռուաններ չ'ունենար,



իսկ առանց մարդուժի կառոյցները դատարկուած, ինքնանպատակ կը դառնան, զուրկ տեսլականէ, հետեւաբար պէտք է հաւասարակշռութիւն պահել եւ պարտն ու պատշաճը կատարել այս ուղղութեամբ:

Իսկ մարդուժի պատրաստութեան համար նախ պէտք է վերաբժեւորել ներկայ իրավիճակն ու մեր ունեցած հնարաւորութիւնները եւ ըստ այնմ մշակել ապագայի

ծրագիրները, որոնց մեծ բաժինը պետք է յատկացուի երիտասարդներուն: Անոնք են մեր յոյսն ու ապագան, որոնցմով կ'ամրանանք եւ կը գոյատևենք ու նորարարութիւն կը ներածենք:

Հոս կը կարելորուի հայկական դպրոցներու դերակատարութիւնը ապագայ սերունդները կերտելու՝ նախ իբրեւ մարդ, ապա իբրեւ հայ եւ հաւատարիմ քաղաքացի Սուրիական Հայրենիքի: Մեր այս քաղաքականութեան իբրեւ հետեւանք, պետական բարձրաստիճան պատասխանատուներն ու իշխանութիւնները հայերը կը բնորոշեն Սուրիոյ մէջ իբրեւ տիպար եւ լիարժէք քաղաքացիներ, որոնք իրենց պարտաւորութիւնները կը կատարեն եւ բոլոր իրաւունքները կը վայելեն, միեւնոյն ատեն իրենց իւրայատկութիւնը կը պահեն: Վերականգնումը գործնականօրէն ընթացք առած է պետական տարողութեամբ, իրագործուած է վերանորոգումը զանազան կառոյցներու, ըլլան անոնք կրթական թէ առողջապահական: Այս ներդրումները հոս չեն ակարտիր, այլ կը շարունակուին եւ այս անգամ ժողովուրդին ուղղուած տնտեսական փոքր ծրագիրներու մակարդակով:

Մենք եղած ենք միշտ պետականութեան կողքին, ջատագովը Սուրիոյ հողային ամբողջականութեան ու կը հաւատանք, որ ոչ ծայ-

րայեղ կողմերու հետ երկխօսութիւնը կ'արդիւնաւորուի, միշտ նկատի առնելով Սուրիոյ ընդհանուր շահերը եւ անոր գերիշխանութիւնը: Դատապարտելի է Թուրքիոյ ոտնձգութիւնը եւ ներխուժումը Սուրիոյ հիւսիսարեւելեան շրջան, որ վտանգի ենթարկեց հայ ընտանիքները եւ պատճառ դարձաւ անոնց տեղահանման ու մինչեւ օրս թրքական ուժերու ներկայութիւնը սուրիական հողերու վրայ կը սպառնայ անոնց անվտանգութեան, որուն համար առնուեցան յատուկ կարգադրութիւններ:


Դատապարտելի է նաեւ օտար երկիրներու միջամուխ ըլլալը Սուրիոյ ներքին հարցերուն, ուր հայերու պատմական թշնամին՝ Թուրքիան, այսօր նոյն կործանիչ քաղաքականութիւնը կը վարէ Սուրիոյ նկատմամբ: Մենք կը հաւատանք, որ Սուրիան կ'ունենայ դրական դերակատարութիւն Հայ Դատի արդար լուծման գործընթացին մէջ:

Դաշնակցութիւնը միշտ յանձնառու է ժողովրդանուէր ծառայութեամբ եւ մշտանորոգ ուխտով շարունակելու իր նպատակներու իրագործման ուղին՝ հաւատարիմ իր գաղափարաբանութեան եւ սկզբունքներուն:

Կեցցե՛ Սուրիան,
Կեցցե՛ հայ ազգը,
Կեցցե՛ն Արցախն ու Հայաստանը:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

«Գանձասար» շնորհակալութիւն կը յայտնէ VENUS լուսանկարչատան, տարիներու ընթացքին միութենական, եկեղեցական եւ այլ ձեռնարկներու բոլոր լուսանկարները սիրայօժար թերթիս տրամադրելուն եւ գործակցելուն համար:



ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՄԻԱՄԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳ. ԵՐԵՍՓՈՒԿԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. ԱԶԳ. ԵՐԵՍՓՈՒԿԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍԵՐ

Անցնող տարուան, Ազգ. Երեսփոխանական ժողովի դիւանին հետ խորհրդակցաբար, Ազգ. Վարչութեան առաջարկով գումարուեցան Ազգ. Երեսփոխանական ժողովի 165-րդ, 166-րդ եւ 167-րդ նիստերը:

2. ԱԶԳ. ԵՐԵՍՓՈՒԿԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԼՐԱՑՈՒՅԻՉ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ազգ. Վարչութիւնը նկատի առնելով մահացող եւ երկրէն գաղթած երեսփոխաններու բացակայութիւնը, անհրաժեշտ նկատեց երեսփոխանական լրացուցիչ ընտրութիւններուն իրականացումը: Ընտրութիւններուն նախօրեակին, խառն ժողովի 22/02/2019 թուակիր նիստին որոշումով, յառաջացաւ Ընտրական Յանձնախումբ: Տիրող տեղաշարժերուն բերումով զանց առնուեցաւ Ազգային տուրքի գանձումի աշխատանքը եւ ի զօրու համարուեցան նախորդ շրջանի ընտրական ցուցակները:

Թեմի Ազգ. Երեսփոխանական ժողովի լրացուցիչ ընտրութիւնները, տեղի ունեցան Կիրակի, 17 Մարտ 2019-ին:

Հալէպի մէջ նոր երեսփոխաններ ընտրուեցան.- տիարք Ժիրայր Ռէսեան, Ճորճ Շահինեան, Յովսէփ Գասապեան, Ճորճ Պապեան, Յարութիւն Հայրապետեան, Փիէր Սուսալի, Հրաչ Յակոբեան, Արա Ղազարեան, Պետրոս Յովհաննէսեան, երկրջ. Տիգրան Պետրոսեան, օրդ. Սիլվա Ճապաղջուրեան, փաստաբան Նորա Գրաճեան-Նարկիզեան:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

Ա.- ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՒ ԱԶԳ. ԿԵՂՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԵՏ

ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ Ազգ. Կեղրոնական Վարչութեան հրաւերով, թեմակալ առաջնորդը եւ թեմի պա-



տասխանատուները, հանդիպումներ ունեցան Անթիլիասի մէջ, թեմին, սուրիահայութեան վերականգնումի եւ Սուրիոյ իրավիճակին, թեմակալ առաջնորդին մեկնումին եւ նոր առաջնորդին ընտրութեան նիւթերուն հետ առնչուած օրակարգերով:

Նախկին Առաջնորդ Գեղշ. Տ. Շահան Ս. Արք. Սարգիսեան, որպէս Ազգ. Կեղրոնական Վարչութեան Կրօնական ժողովի անդամ, միւսը մեկնումը Անթիլիասի մէջ մասնակցեցաւ Ազգ. Կեղրոնական Վարչութեան Կրօնական ժողովի նիստերուն եւ լիակատար նիստերուն, ուր բանաւոր զեկոյցներ ներկայացուց թեմի ընդհանուր վերակազմակերպումի երեք ոլորտներուն մասին.- վերաշի-

նութիւն, թեմի վերակազմակերպում եւ սուրիա հայութեան վերականգնում: Իրենց կարգին կիստերուն մասնակցեցան տիար Ճորճ Շահինեան եւ տիար Յրաչ Յակոբեան որպէս Ազգ. Կեդրոնական Վարչութեան՝ Ազգ. Զաղաքական Ժողովի անդամ:

Բ. ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՈՒՊԵՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՀԱԼԵՊԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԵՒ ՍԶՄՄԵ ՍՐԲԱԳՈՐԾՈՒՄ

Բերիոյ Հայոց Թեմի Նախկին Առաջնորդ Գերշ. Տ. Շահան Ս. Արք. Սարգիսեանի եւ Ազգ. Իշխանութեան Իրաւերին ընդառաջելով, ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, հովուապետական օրինաբեր այցելութիւն մը շնորհեց Հալէպի հայ համայնքին (29/03/-01/04/2019), ՍԶՄՄԵ սրբագործման առիթով:



Հոգեւորականներուն կողքին, շքախումբին մաս կազմեցին Նաեւ Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամներ եւ լիբանանահայ բարերար ազգայիններ:

Վեհափառ Հայրապետին հովուապետական այցելութիւնը եւ ՍԶՄՄԵ Սրբագործումն ու վերաբացումը ընթացան ըստ Նախատեսուած ժամանակացոյցին, կատարեալ բժախնդրութեամբ եւ պատշաճութեամբ:

Այցելութեան շրջագիծէն ներս, պաշտօնական Հացկերոյթին ընթացքին (Շաբաթ, 30/03/2019) Վեհափառ Հայրապետը պանակելով մը գնահատեց Շահան Սրբազանը, իսկ Ազգ. Վարչութիւնը, Թեմի Ծառայութեան Շքանշանով պարգեւատրեց զինք, առ ի գնահատանք տասնհինգ տարուան արդիւնաշատ գործունեութեան, յատկապէս ՍԶՄՄԵ Նորոգութեան ընթացքին ցուցաբերած հետեւողական հետապնդումին համար:

Կիրակի, 31/03/2019-ին, յընթացս Ս. Պատարագին, վեհափառ հայրապետը Օրինութեան

Գիրով գնահատեց Շահան Սրբազանը:

Ազգ. Վարչութիւնը արձանագրեց թէ՛ հաւկառակ տակաւին տիրող դժուարութիւններուն, ըստ արժանւոյն տեղի ունեցան վեհափառ հայրապետին ու շքախումբին հիւընկալութիւնը եւ ՍԶՄՄԵ Սրբագործումն ու վերաբացումը: Թեմը պատմական երեք օրեր ապրեցաւ, որոնք Նոր խանդավառութիւն եւ գոյատեւելու կամք ներարկեցին մեր ժողովուրդին:

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԻՈՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՅԻՆ (14/05/2019)

- Կաթողիկոսութեան կողմէ առնուած յատուկ ժամադրութեամբ, Երեքշաբթի, 14/05/2019, կէսօրէ առաջ, Վեհափառ Հայրապետը, ընկերակցութեամբ Նախկին Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեանի, Ազգ. Կեդրոնական Վարչութեան՝ Զաղաքական Ժողովի անդամ տիար Յրաչ Յակոբեանի, Ազգ. Երեսփոխանական Ժողովի անդամ տիար Կարօ Իւզպաշեանի, Ազգ. Երեսփոխանական Ժողովի ատենապետ եւ պետական երեսփոխան տիար Ժիրայր Ռեյիսեանի, պետական երեսփոխան Դոկտոր Նորա Արիսեանի, Լիբանանի Չքօսաշրջիկութեան Նախարար տիար Ալետիս Կիտանեանի, գաւազանակիր Հոգե-



շնորհ Տ. Յովակիմ Աբեղայ Բանջարճեանի, պաշտօնական այցելութիւն մը տուին Սուրիոյ Վսեմաշուք Նախագահ Տոքթ. Պաշար Հաֆէզ Ասատի:

Յարգալիր եւ մտերմիկ մթնոլորտի մէջ ընթացած այցելութեան, Վեհափառ Հայրապետը շնորհակալութիւն յայտնեց վսեմաշուք Նախագահին կողմէ Սուրիոյ հայ համայնքին նկատմամբ ցուցաբերուած ուշադրութեան եւ հոգատարութեան՝ յատկապէս Սուրիոյ վե-


ԳԱՆՁԱՍԱՐ

րականգնումի եւ վերաշինութեան շրջագիծէն ներս, վերահաստատեց հայութեան հաւատարմութիւնը սուրիական հիւրընկալ հայրենիքին հանդէպ, անոր կառչած մնալու անխախտ համոզումով, միաժամանակ ընդգծելով Սուրիոյ հայ համայնքին պարզած կարեւորութիւնը հայութեան համայնական կեանքէն ներս:

Սուրիոյ Նախագահը իր կարգին բարձր գնահատեց սուրիահայութեան կեցուածքը, յատկապէս սուրիական տագնապի օրերուն, եւ կոչ ուղղեց որպէսզի արտագաղթած հայերը վերադառնան Սուրիա եւ մասնակցին Սուրիոյ վերականգնումին, ապա նաեւ իր լաւատեսութիւնը յայտնեց Սուրիոյ ապագային նկատմամբ:

- Վեհափառ Հայրապետը եւ իր շքախումբը այցելեցին Դամասկոս, ուր հանդիպեցան Հանրապետութեան Միւֆթի Շէյխ Դոկտոր Պատր Ըտտին Հասսունի, ՀՀ Դեսպանատուն եւ դամասկահայութեան հետ:

- Կիրակի, 2 Յունիս 2019-ի առաւօտեան ժամը 10:00-ին Ս. Քառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած Ս. Եւ Անմահ Պատարագին ներկայ գտնուեցաւ Հալէպ ժամանած ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ ընկ.



Յակոբ Տէր Խաչատուրեան: Յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագին, ընկ. Յակոբ Տէր Խաչատուրեան Առաջնորդարանի դահլիճէն ներս հանդիպում ունեցաւ ազգային ու միութենական մարմիններուն հետ:

ՆԵՐՔԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախորդ եւ նորընտիր առաջնորդներու օրերուն.

- Աշխատանքային այցելութիւն Լաթաքիա (19-20/01/2019)

- Հովուական եւ աշխատանքային այցելութիւն Լաթաքիա (18/06/2019)

- Հովուական եւ աշխատանքային այցելութիւն Քեսապ (19/06/2019)

- Հովուական եւ աշխատանքային այցելութիւն Դամասկոս (14/07/2019)

- Հովուական եւ աշխատանքային այցելութիւն Գամիշլի եւ Հասաքէ (15-16/07/2019)

- Աշխատանքային այցելութիւն Լաթաքիա (16/08/2019)



- Հովուական այցելութիւն Արամո-Ուխտի Օր (17/08/2019)

- Հովուական այցելութիւն Քեսապ, Գարատուրան, Եսկիւրէն (Ս. Աստուածածնի Վերափոխում) (18-20/08/2019)

- Հովուական այցելութիւն Թարթուս եւ Լաթաքիա (14-18 Նոյեմբեր 2019)

- Հովուական այցելութիւն Դամասկոս, հովանաւորելու Ազգային Միացեալ վարժարանի բացման հանդիսութիւնը, ընկերակցութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Պատուիրակութեան (22/11/2019)

- Հովուական այցելութիւն Գամիշլի (21/12/2019), ուր Կիրակի, 22 Դեկտեմբեր 2019-ի առաւօտեան ժամը 9:30-ին, Գամիշլիի Սուրբ Յակոբ եկեղեցւոյ մէջ մեծ շուքով տեղի ունեցաւ սարկաւազաց ձեռնադրութիւն՝ ձեռամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպիսկոպոս Չօպուեանի եւ խարտաւիլակութեամբ՝ Հոգշ. Տ. Լեւոն Արք. Եղիայեանի: Այս առիթով վեհափառ հայրապետին կողմէ արժ. Տէր Պսակ Քիւյ. Պերպերեանին շնորհուեցաւ լանջախաչ կրելու իրաւունք:

ՊԵՏԱԿԱՆ

ա. ՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

- Քաղաքավարական, շնորհաւորական, պաշտօնական, աշխատանքային եւ շարք մը յատուկ հարցերու հետապնդման օրակարգերով, Թեմակալ գոյգ Առաջնորդները, ընկերակցութեամբ՝ Ազգ. Իշխանութեան պատուիրակութեան եւ արդիւնաշատ յարաբերութեան:

եան մեջ եղան Հալեպի, շրջաններու եւ մայրաքաղաք Դամասկոսի պետական-կառավարական բարձրաստիճան պատասխանատուներուն հետ:

Պետական շրջանակին հետ կատարուած հանդիպումները, հիմնական ու առաջնային կերպով տրամադրուեցան անվտանգութեան ապահովման հարցերուն, օրէնքի ընձեռած հնարաւորութիւններով ազգային ծրագիրները նպաստաւորելու առաջադրութեան, ինչպէս նաեւ յետ սուրիական տագնապի շրջագիծէն ներս՝ սուրիական պետութեան ընձեռած օժանդակութիւններէն՝ համայնքիս նպաստաւորման:

- Երեքշաբթի, 18 Յունիս 2019-ի առաւօտուն, Բերիոյ Հայոց Թեմի նորընտիր Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան



եւ իրեն ընկերակցող պատուիրակութիւնը այցելեցին հանգուցեալ Նախագահ Հաֆէզ ալ Ասատի դամբարանը, Զրտահա: Առաջնորդ Սրբազան Հայրը ծաղկեպսակ գետեղեց դամբարանին դիմաց որպէս յարգանքի եւ երախտագիտութեան արտայայտութիւն: Այնուհետեւ Նախագահին շիրիմին դիմաց տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն. այցելուները աղօթք բարձրացուցին առ ամենաբարին Աստուած՝ խաղաղութիւն հայցելով Սուրիական Հայրենիքին եւ բարի երթ՝ անոր վերականգնումի աշխատանքներուն:

Աւարտին Առաջնորդ Սրբազան Հայրը իր տպաւորութիւնն ու մաղթանքը արձանագրեց դամբարանի յուշամատենանին մէջ:

Բ. ՍՈՐԻՈՅ ԱՌԱՋԻՆ ՏԻԿՆՈՑ ԱՅՅԵ-ԼՈՒԹԻՒՆԸ ԱԶԳ. ՄԻԱՅԵԱԼ ՎԱՐԺԱՐԱՆ

- Ուրբաթ, 20 Դեկտեմբեր 2019-ին, Դամասկոսի Ազգային Միացեալ վարժարանի Ամանորի տօնակատարութեան ընթացքին:

Սուրիոյ Առաջին տիկին Ամմա ալ Ասատը

անակնկալօրէն այցելեց աշակերտները, շնորհաւորեց անոնց ուսումնատենչ ոգին, ամա-



նորեան բարեմաղթութիւններ փոխանցեց ու մասնաւորաբար հայերէնով վանկարկեց. «Շնորհաւոր՛ր Նոր տարի»:

Գ. ՀԱԼԵՊԻ ՄՈՒՖԹԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԱԶՄՍ ԵԿԵՂԵՑԻ

- Չորեքշաբթի, 29/01/2019, Հալեպի Մուֆթի Շէյխ Դոկտոր Մահմուտ Աքքամ, ընկերակցութեամբ Հալեպի Աուքաֆի տնօրէն Շէյխ Ռամի Օպէյտի, այցելութիւն մը տուին ԱԶՄՍԵ:



Այցելուներուն հանգամանակից բացատրութիւններ տրուեցան վերաշինութեան գործընթացին մասին: Փոխադարձաբար հիւրերը իրենց գնահատանքը արձանագրեցին տարուած բժախնդիր աշխատանքին գծով: Ապա Ազգ. Առաջնորդարանէն ներս տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

Դ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄՈՒՖԹԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՍՐԱԶԱՆ ՀՕՐ

- Երկուշաբթի, 17/06/2019, Սուրիոյ Հանրապետութեան Մուֆթին՝ Շէյխ դոկտոր Պատր Ըտտին Հասսուն, ընկերակցութեամբ իսլամ կրօնաւորներու եւ քարտուղարներուն,

շնորհաւորական այցելութիւն մը տուաւ Լորդնսիր Առաջնորդ Սրբազան Զօր, ուր ներկայ գտնուեցան Ազգ. Երեսփոխանական Ժ-



ղովի անդամ տիար Կարօ Իւզպաշեան, Ազգ. Կրօնական Ժողովի եւ Ազգ. Վարչութեան կազմերը:

- Այնուհետեւ տարուան ընթացքին, Մուֆթին եւ Առաջնորդ Սրբազան Զայրը զանազան առիթներով տեսակցեցան:

ՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ

- Թեմակալ առաջնորդներն ու Ազգ. Վարչութիւնը պաշտօնական եւ յարգալիր յարաբերութեան մէջ եղան քոյր եւ քրիստոնէայ համայնքներու Զամայնքապետներուն, հոգեւորականաց դասերուն եւ աշխարհական ժողովականութեան հետ, ինչպէս նաեւ իսլամ հոգեւոր առաջնորդներուն եւ պետերուն հետ, առաւելաբար յետ սուրիական տագնապի շրջագիծէն ներս ընդհանրապէս Զալէպի իրավիճակին գծով խորհրդակցելու:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

ՍՈՒՐԻՈՅ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զալէպի Նահանգապետարանի Տեղական ինքնակառավարման մարմիններուն



ընտրութեանց յաջողեցաւ փաստաբան Մարիա Գաբրիէլեան: Ապա Յուլիս 2019-ին, Նահանգապետարանի Խորհուրդի ընտրուողներէն ներկայացուցիչի մը մահուան պատճառով, ըստ ընտրական կանոնագրութեան, հանգուցեալին աթոռը զբաղեցուց յաջորդ առաւելագոյն քուէներ ստացած՝ տիկին Անի Պզտիկեան:

Զալէպի Զաղաքապետարանի Խորհուրդէն ներս, այս նստաշրջանին Թեմը ներկայացուցիչ չունի:

ԲԵՐԻՈՅ ԶԱՅՈՑ ԹԵՄ-ՅՅ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉՈՒԹԻՒՆՆԵՐ

Ազգ. Վարչութիւնը պաշտօնական եւ յարգալիր յարաբերութիւն մշակեց ԶՅ Դամասկոսի Դեսպանութեան, Զալէպի Գլխաւոր Զիւպատոսութեան եւ ԶՅ Մարդասիրական Առաքելութեան խումբին հետ:

ԶՅ դիւանագիտական ներկայացուցչութիւնները, Զայաստան-Սփիւռք շրջագիծին մէջ կազմակերպուած ձեռնարկներուն առիթներով համապատասխան տեղեկանք փոխանցեցին Ազգ. Վարչութեան յատուկ պաշտօնագրերով: Փոխադարձաբար, հրաւերներ ուղղուեցան անոնց Ազգ. Իշխանութեան կողմէ կազմակերպուած բոլոր նախաձեռնութիւններուն:

ԶՅ ԶԻՊԱՏՈՍԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ ԶԱՆԴԻՊՈՒՄ ԵՒ ԴՐՕՇԻ ՕՐՅՆՈՒԹԻՒՆ

- 02/03/2019-ին մասնակցութեամբ Զայ երեք Զամայնքապետներուն, հայ երեք կազմակերպութեանց, ՍՕ Խաչի եւ ԶԲԸՄ-ի ներկայացուցիչներուն, ԶՅ Դամասկոսի եւ Յորդանանի Արտակարգ եւ Լիազօր Նորանշանակ Դես-



պան Տիգրան Գեորգեանի, հանդիպում մը տեղի ունեցաւ ԶՅ Զիւպատոսարանէն ներս, ընթացքին ԶՅ Դեսպանին եւ Զալէպի

Գլխավոր Զիւպատոսին ԶՅ Նախագահի հրամանագիրով շնորհուեցաւ Արտակարգ Դեսպանորդ-Լիազօր Նախարարի դիւանագիտական աստիճան:

- Նոյն օրը յետմիջօրէին, ներկայութեամբ ԶՅ բանակի հրամանատարութեան, ռուսական բանակի եւ սուրիական սպայակոյտի ներկայացուցիչներուն, եւ շարք մը հրաւիրեալներու, նախկին Առաջնորդ Շահան Սրբազանի կողմէ կատարուեցաւ դրօշի օրհնութիւն, ապա դրօշը բարձրացաւ ԶՅ Մարդասիրական Առաքելութեան Զալէպի Կեդրոնին վրայ:

ՎԵՅԱՓԱՌ ԶԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԶՅ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ իր շքախումբին հետ այցելեց Դամասկոս (14/05/2019), ուր հանդիպում մը ունեցաւ ԶՅ դեսպանին հետ:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԶՅ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ 28-ԱՄԵԱԿԻՆ

ԶՅ անկախութեան 28-ամեակին առիթով, Կիրակի, 22/09/2019-ի առաւօտեան, Ազգ. Վարչութեան կազմը ներկայ գտուեցաւ յընթացքս Ս. Պատարագներուն տեղի ունեցած Զանրապետական Մաղթանքի արարողութիւններուն:

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԵՐԻՈՅ ԶԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ

- **ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ**
Բերիոյ Զայոց Թեմի Ազգ. Վարչութիւնը, իր պաշտօնավարութեան երկամեակի ընթացքին, 25/08/2017 մինչեւ 17/05/2019 շրջանը բոլորեց, Նախագահութեամբ Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահան Ս. Արք. Սարգիսեանի: Ապա 12/06/2019-էն սկսեալ, նախագահութեամբ Բերիոյ Զայոց Թեմի Լոքնտիր Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Ս. Եպ. Չօպուեանի:

- **ԳԵՐՇ. Տ. ՇԱՅԱՆ Ս. ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆԻ ՄԵԿՆՈՒՄ**

Ազգ. Վարչութեան (03/05/2019) թուակիր նիստի որոշումով, խորհրդակցաբար Թեմի Ազգ. Երեսփոխանական Ժողովի դիւանին հետ, Ազգ. Երեսփոխանական Ժողովի 165-րդ նիստը գումարուեցաւ Ուրբաթ, 17/05/2019, Ազգ. Առաջնորդարանի դահլիճէն ներս, Գերշ.

Տ. Շահան Ս. Արք. Սարգիսեանի մեկնումին հիմնական օրակարգով: Ժողովական կարգի օրակարգերէն ետք, Շահան Սրբազան ար-



տասանեց իր մեկնումի եւ հրաժեշտի խօսքը, որ ժողովականներուն կողմէ ընդունուեցաւ ծափողջոյններով, արտասանուեցան սրտի խօսքեր, ուր բարձր գնահատուեցաւ Շահան Սրբազանին տասնհինգ տարիներու ծառայութիւնը:

Նախաձեռնութեամբ Թեմի Ազգ. Իշխանութեան, Ազգ. Վարչութեան (22/05/2019) թուակիր նիստի որոշումով եւ անոնց կազմակերպութեամբ, ըստ նախատեսուած եւ ծրագրուած յայտագրին, Գերշ. Տ. Շահան Ս. Արք. Սարգիսեանի Զրաժեշտի Զանրապումը տեղի ունեցաւ Ուրբաթ, 24/05/2019-ին:

- **ԳԵՐՇ. Տ. ՄԱՍԻՍ Ս. ԵՊ. ՉՕՊՈՒԵԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԺԱՄԱՆՈՒՄ**

- Բերիոյ Զայոց Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովի 166-րդ նիստը գումարուեցաւ Կիրակի, 2 Յունիս 2019, Ազգ. Առաջնորդարանի դահլիճէն ներս, ներկայութեամբ



Թեմի Երեսփոխաններուն, Ազգ. Կրօնական Ժողովի եւ Ազգ. Վարչութեան կազմերուն: Նիստը յատկացուեցաւ Բերիոյ Զայոց Թեմի՝ Նոր Առաջնորդի ընտրութեան:

ԳԱՆՁԱՍԱՐ

- Յետ կայացած խորհրդակցութեանց եւ կարծիքներու փոխանակման, Ազգ. Երեսփոխանական Ժողովի 166-րդ նիստը (02/06/2019), միաձայնութեամբ Բերիոյ Յայոց Թեմի Գաւազանագիրքին 62-րդ Առաջնորդը ընտ-



րեց, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբաններէն, Գերշ. Տ. Մասիս Ս. Եպս. Զօպուեանը:

Բերիոյ Յայոց Թեմի նոր Առաջնորդին ընտրութիւնը ընդունուեցաւ ծափողջոյններով, դօղանջեցին Սրբոց Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ զանգերը:

- Թեմի ընտրեալ Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Ս. Եպս. Զօպուեանի Յալէպ ժամանումը եւ պաշտօնական ու ժողովրդային դիմաւորութիւնը կազմակերպուեցաւ Թեմի Գործադիր Իշխանութեան՝ Ազգ. Կրօնական Ժողովին եւ Ազգ. Վարչութեան կողմէ, Թեմի Խառն Ժողովի (10/06/2019) թուակիր նիստի որոշումով, եւ իրականացաւ ըստ նախատեսուած յայտագրին:

Սրբազան Յայրը եւ շքախումբը Ս. Աստուածածին Եկեղեցի ժամանեցին 12/6/2019-ին երեկոյեան ժամը 6:00-ին, եկեղեցականաց եւ դպրաց դասերու թափօրով մուտք գործեց եկեղեցի, ուր համախմբուած էր հաւատացեալներու հոծ բազմութիւն: Եկեղեցական եւ ծանօթացման բաժիններէն ետք, Սրբազան Յայրը ուղղեց իր անդրանիկ եւ բազմաբովանդակ պատգամը:

Աւարտին, Եկեղեցւոյ ներքնասահէն ներս, խանդավառ մթնոլորտի մէջ տեղի ունեցաւ ժողովրդային աջահամբոյր:

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՇՔԱՆՁԱՆ-ՊԱՐԳԵԱՏՐՈՒՄ

- Ազգ. Վարչութիւնը իր (04/02/2019) թուակիր նիստին, գնահատեց նախկին Առաջնորդ Շահան Սրբազանի անցնող տասնհինգ

տարիներու արդիւնաշատ ծառայութիւնը, եւ որոշեց Թեմի Ծառայութեան շքանշանով պարգեւատրել Շահան սրբազանը:

- Ազգ. Վարչութեան (07/03/2019) թուակիր նիստին, որոշուեցաւ պարգեւատրել ՍԲՄՄԵ հիմնական բարերարներէն՝ Մոնաքօ հաստատուած տիար Հրանդ Ճիւրճեանը:

Շահան Սրբազանի պարգեւատրման որոշումը գործադրուեցաւ Վեհափառ Յայրապետին Յալէպ այցելութեան ընթացքին կազ-



մակերպուած պաշտօնական ընթրիքին (Շաբաթ, 30/04/2019), իսկ տիար Հրանդ Ճիւրճեանի պարգեւատրումը գործադրուեցաւ Կիրակի, 31/03/2019, Ազգ. Առաջնորդարանի դահլիճէն ներս, շքանշանը յանձնուեցաւ այդ օրերուն Յալէպ գտնուող եղբօրը՝ ազգային բարերար տիար Տիգրան Ճիւրճեանին:

ԹԵՄԱԿԱՆ

ՃԵՉԻՐԷԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ

Վեհափառ Յայրապետին թիւ 72/19, 15/08/2019 թուակիր նամակով, Ճեզիրէի Յայոց Առաջնորդական Փոխանորդ նշանակուեցաւ Հոգեշնորհ Տ. Լեւոն Աբեղայ Եղիայեան:

ԱԲԵՂԱՅԱԿԱՆ ՁԵՆՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ ՀԱԼԷՊԻ ՄԵՋ

Հրամանաւ եւ Օրհնութեամբ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Յայրապետին Մեծի Տանն Կիլիկիոյ, ձեռամբ Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Ս. Եպս. Զօպուեանի, հալէպահայ բարեշնորհ սարկաւազ ճորճ Պերիխանեանի աբեղայական ձեռնադրութիւնը եւ օծումը տեղի ունեցան Շաբաթ եւ Կիրակի, 5-6/10/2019-ին, ՍԲՄՄԵ-ին մէջ, ձեռամբ սրբազան հօր:

Ձեռնադրեալը վերանուանուեցաւ Տ. Մաւուկ Աբեղայ:

ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Ազգ. Առաջնորդարանի Նորոգութեան առաջին փուլը իրագործուեցաւ եւ 4 Նոյեմբեր 2019-ին Ազգ. Առաջնորդարանի պաշտօնէութիւնը, եօթը տարիներու բացակայութենէ ետք, տեղափոխուեցաւ Ազգ. Առաջնորդարանի վերանորոգուած կառոյց:

9 Դեկտեմբեր 2019-ին Ազգ. Առաջնորդարանի դիւանապետ Նշանակուեցաւ տիար Զրիստափոր Յապոյեան:

ՈՒՍՈՒՆԱԿՐԹԱԿԱՆ

ԱԶԳ. ԶԱՐԵՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆ

- Նախորդ տարուան ընթացքին, Ազգ. Զարեն Եփփէ ճեմարանը դարձաւ թեմակալ առաջնորդներուն, եւ Ազգ. Վարչութեան ուշադրութեան կիզակետը, որպէս Նորահաս սերունդներու կերտման միջնաբերդ:

- Ազգ. Վարչութիւնը հորհրդակցաբար հնամակալութեան հետ, ջանաց իր աջակցութիւնը բերել ճեմարանի վարչական ներքին վերակազմակերպման եւ ուսումնակրթական մակարդակի բարձրացման, ինս-



մակալութեան եւ տնօրէնութեան հետ տեղի ունեցան խորհրդակցական ու աշխատանքային հանդիպումներ, տրուեցան յաճախակի այցելութիւններ, մօտէն հետեւելով ճեմարանի ուսումնակրթական, դաստիարակչական, կարգապահական եւ վարչական ներքին կեանքին, ինչպէս նաեւ անվերապահ կերպով զօրակցելով ճեմարանի վերելքին սատարող բոլոր նախաձեռնութիւններուն:

- 2018-2019 տարեշրջանի աւարտին, տիար Յակոբ Զիլեճեանի զօրացումով, Ժողովիս (12/09/2019) թուակիր Նիստին հնամակալութեան կողմէ փոխանցուեցաւ որ՝ տիար Վահէ Ղազարեան ներկայացուցած է հրաժարականը: Ազգ. Վարչութիւնը Նոյն Նիստին

հաստատեց տիար Վահէ Ղազարեանի հրաժարականը, եւ ճեմարանի տնօրէնի պաշտօնը ստանձնեց տիար Յակոբ Զիլեճեան:

ՇՏԱՊԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ Ա. ԲԵՐԻՈՅ ՅԱՅՈՅ ԹԵՄԻ ՆՊԱՍՏԻՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄ

- Նպաստից Յանձնախումբը բծախնդիր եւ հետեւողական աշխատանքով շարունակեց իր առաքելութիւնը, Յայ Առաքելական Եկեղեցւոյ կարիքաւոր ընտանիքներուն, նիւթական օժանդակութիւններ, կրթական



օժանդակութիւններ, հայ համալսարանականներու, դպրոցականներու, Նորածիններու օժանդակութիւններ, առողջապահական կողովի օժանդակութիւններ, բնակարանային Նորոգութիւններու օժանդակութիւններ, սնունդամթերքի օժանդակութիւններ, տարեցներու ծրագիրներ, յարաբերական գործունէութիւն՝ քաղաքիս մէջ գործող բարեսիրական շրջանակներու հետ:

Բ. ՍՈՒՐԻԱՅԱՅՈՒԹԵԱՆ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱԿԱՆՁՆՈՒՄԻ ՍԱՐՍԻՆ

1) ՍՇՕՎ Մարմինը, որ կազմուած էր Յուլիս 2012-ին, մինչեւ օրս կը պահէ իր գոյութիւնը, ատենապետութեամբ Յայ Առաքելական Յամայնքի Թեմակալ Առաջնորդին:

2) Ներկայիս ՍՇՕՎ Մարմնի գործունէութեան շրջագիծը կը կազմէ՝ փոքր նախաձեռնութիւններու կատարուած օժանդակութիւնները, խանութներու եւ աշխատանոցներու Նորոգութիւնը,

3) Ազգ. Վարչութիւնը այս տարի եւս շարունակեց իր ներկայացուցիչը ունենալ ՍՇՕՎ Յալէպի Գործադիր Մարմնին մէջ:

4) ՍՇՕՎՄ կրթական հաստատութիւններուն կատարեց նիւթական օժանդակութիւններ: Իր կազմութենէն ի վեր, տարեկան դրութեամբ

եամբ նիւթական օժանդակութիւն տրամադրեց Հայ Ծերանոցին, ինչպէս նաեւ կազմակերպեց՝ հայ-ռուսական մարդասիրական համագործակցութեան կողմէ, Սուրիոյ կատարուած 97 թոն սննդամթերքի օժանդակութեան, ապա նաեւ ռուսահայ համայնքին կողմէ Դեկտեմբեր 2019-ին առաքուած 80 թոն ալիւրին բաշխումը:

ՀԻՄՆԱՅՎՐՅԵՐ

Ա.- ՍՈՒՐԻՈՅ ՏԱԳՆԱԿ

- Ազգ. Վարչութեան աշխատանքները կը շարունակուին Սուրիոյ յետ պատերազմեան շրջանի դժուարին պայմաններուն մէջ, նիւթաբարոյական սահմանափակ հնարաւորութիւններով, ապագայի հանդէպ յաճախ անորոշութեան հասնող հեռապատկերներով: Յատկապէս Հալէպի հայ համայնքի գաւակներուն ֆիզիքական գոյութեան պահպանման, կենցաղային կենսական կարիքներուն հայթայթման հարցերը, ինչպէս նաեւ Համայնքի հաւաքական գոյերթի անհրաժեշտ կռուաններու (կրթական հաստատութիւններ, միութենական ձեռնարկներ, եւ այլն) առաքելութեան շարունակման կարելիութիւնը ապահովելու հարցերը՝ դարձան Ազգ. Վարչութեան առաջնահերթութիւններուն առաջնայինը:

- Դժբախտաբար սուրիական տագնապին հետեւանքով հայութենէ պարպուեցան թեմի կարգ մը շրջանները, յատկապէս հիւսիսային Սուրիոյ վրայ կատարուած վերջին թրջական յարձակման հետեւանքով: Բնականաբար այս շրջաններու հայ համայնքներուն նկատմամբ ունինք բարոյական պարտաւորութիւններ եւ ազգապատկան կառոյցներու իրավիճակին հետ առնչուած հարցեր:

- Տիրող իրավիճակին մէջ, առաւել շեշտադրուող տնտեսական հնարաւորութիւններու ապահովումով պայմանաւորուեցաւ ծրագրուած աշխատանքներուն յաջողութիւնը: Անտարակոյս թեմի նիւթական կարելիութիւնները անբաւարար մնացին, կարենալ դիմակայելու տագնապին բազմաբնոյթ հետեւանքները: Հետեւաբար, օրուան թեմակալ առաջնորդին գլխաւորութեամբ, Ազգ. Վարչութիւնը՝ համայնքներու, կազմակերպութիւններու, միութիւններու, համահայկական կառոյցներու, ի Մայր Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի կարելիութիւններու համատեղման անհրաժեշտութիւնը կարելորե-

լով, շարունակեց նախաձեռնել Սուրիահայութեան տագնապի շրջանցման գործին համար բոլոր կարելիութիւններու մէկտեղման, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան զօրակցութեամբ:

Տակաւ շարունակուող ապահովական եւ տնտեսական տագնապի այս փուլին, անշուշտ կարելի չէ վերջնական կերպով արժեւորել տարուած աշխատանքներուն արդիւնքները, սակայն կարելի է ըսել որ սուրիահայութեան պարագային ընդհանրապէս, եւ Հալէպի Հայ Համայնքի պարագային մասնաւորապէս, հոգեւոր եւ աշխարհիկ ղեկավարութիւններու օրինակելի միասնականութեամբ, առկայ կարելիութիւններու գերլարումով եւ իր ազնուագոյն գաւակներուն արեան գնով, «Մայր Գաղութ»ը շարունակեց իր գոյերթը, ապագային հանդէպ որոշ ակնկալութիւններով:

Բ.- ՀԱԼԷՊԻ ԵՒ ԾՐՋԱԼՆԵՐՈՒ ԻՐԱՎԻՃԱԿ

- Ազգ. Վարչութիւնը խոր մտահոգութեամբ հետեւեցաւ Հալէպի ապահովական իրավիճակին, որ քանիցս սուր կերպով խախտեցաւ, զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն հռթիրակոծումներուն պատճառով, եւ ունեցանք նահատակներ: Այս բոլորին գումարուեցան նաեւ քաղաքին տնտեսական ու կենցաղային լուրջ կացութիւնները:

Հալէպի ժողովուրդը Յունիս-Յունիս ամիսներուն 2019թ. դարձեալ սկսաւ ապրիլ արիւնահեղ օրեր, զինեալ խմբաւորումներու կողմէ բնակելի թաղամասերու վրայ կատարուած հրթիրակոծումներուն պատճառով, որոնք մեծապէս խախտեցին քաղաքին ապահովական վիճակը:

- Հինգշաբթի, 11/07/2019, ահաբեկչական զօրաւոր պայթում մը ցնցեց Գամիշլիի հայահոծ թաղամասը: Առաջնորդ Սրբազան Հայրը, Ազգ. Վարչութեան եւ Ազգ. Իշխանութեան ներկայացուցիչները անմիջապէս կապ պահեցին Գամիշլիի հոգեւոր հովիւ Արժ. Տ. Պսակ Զինյ. Պերպերեանի եւ տեղւոյն ազգայիններուն հետ, մօտէն հետեւելով հայ համայնքի իրավիճակին եւ պայթումին հետեւեանքներուն:

Մխիթարական Է որ՝ մեր ազգային կառոյցները թեթեւօրէն վնասուեցան, իսկ հայ վիրաւորներ ու զոհեր չարձանագրուեցան:

- Յունիս 2019-ին, Եագուպիէի մէջ մեր համայնքէն տիկին մը (Սուզան Տէր Գրիգոր), տեղւոյն զինեալներուն կողմէ խոշտանգուե-

ցաւ եւ սպանուեցաւ:

Կիրակի, 21/07/2019-ին, յաւարտ Ս. Պատարագին, հանդիսապետութեամբ սրբազան հօր, ՍԶՄՄԵ-ին մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն, ապա հարազատները բարձրացան Ազգ. Առաջնորդարանի դահլիճը, ուր սրբազան հօր հետ հանդիպում մը տեղի ունեցաւ:

- Վեհափառ Հայրապետը, Թեմիս Առաջնորդը, Ազգ. Վարչութիւնը եւ Ազգ. Իշխանութիւնը, խոր մտահոգութեամբ եւ ուշադիր հետեւեցան Հոգեմեծի ամսուան սկիզբը (10/10/2019) թրջական իշխանութիւններուն կողմէ հիւսիսային Սուրբիոյ, եւ յատկապէս հիւսիս արեւելեան շրջաններուն դէմ սանձազերծուած զօրաւոր յարձակումներուն եւ համապատասխան զարգացումներուն:

Անխնայ հիրթհռակոծման ենթարկուեցան Գամիշլի, Հասաքէ, Թէլ Ապիատ, Ռաս ուլ Այն քաղաքները, ուր մեր համայնքները ենթարկուեցան վտանգաւոր կացութեան, տեղի ունեցան ժողովուրդի հապճեպ տեղաշարժներ, արձանագրուեցան նիւթական վնասներ:

Վեհափառ հայրապետին, թեմիս Առաջնորդին, Ազգ. Վարչութեան եւ Ազգ. Իշխանութեան ներկայացուցիչներուն կողմէ, Ճեզիրէի Հայոց Առաջնորդական Փոխանորդ Հոգեշնորհ Ս. Լեւոն Աբեղայ Եղիայեանի եւ տեղւոյն մեր ազգայիններուն հետ մնայուն կապեր հաստատուեցան, զօրակցութիւն յայտնուեցաւ մեր ժողովուրդի զաւակներուն, հարկաւոր թելադրութիւնները տրուեցան զգօն ու շրջահայեաց ըլլալու, եւ կառչած մնալու սուրիական հայրենիքին:

Սրբազան Հայրը Հալէպի մէջ, Շաբաթ, 12/10/2019-ին, հանդիպում ունեցաւ Թէլ Ապիատէն Հալէպ ապաստանած տեղահանուած ընտանիքներու հետ, իրազեկ դարձաւ տիրող կացութեան, եւ պատրաստակամութիւն յայտնեց տեղահանուած ընտանիքները հիւրընկալելու Հալէպի եւ Գամիշլիի մէջ:

- 11 Նոյեմբեր 2019-ին Գամիշլիի հայ կաթողիկէ համայնքի ժողովրդապետ Տէր Յովսէփ Զինյ. Պետոյեան եւ իր հայրը Հաննա Պետոյեան ահաբեկիչներու կողմէ սպանուեցան:

Նահատակ ժողովրդապետի թաղման կարգին մասնակցեցան Ճեզիրէի Հայոց Առաջնորդական Փոխանորդ Հոգեշ. Ս. Լեւոն Աբղ. Եղիայեան, Արժ. Ս. Պսակ Զինյ. Պերպերեան եւ Գամիշլիի քրիստոնէայ համայն-

քապետները:

- Նախագահութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Ս.Մասիս Ս. Եպս. Չօպուեանի, Բերիոյ Հայոց Թեմի Ազգ.Երեսփոխանական Ժողովի 167-րդ նիստը գումարուեցաւ Հինգշաբթի, 24/10/2019-ի երեկոյեան ժամը 7:00-ին, Ազգ.Առաջնորդարանի դահլիճէն ներս եւ շարունակուեցաւ Ուրբաթ, 25 Հոկտեմբեր, 2019-ին առաւօտեան ժամը 10:00-ին, ներկայութեամբ Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդ Հոգեշնորհ Ս.Լեւոն Աբեղայ Եղիայեանի, թեմի երեսփոխաններուն, Ազգ.Կրօնական եւ Ազգ. Վարչութեան շրջանաւարտ կազմերուն, ինչպէս նաեւ Ազգ.Խորհուրդներու ատենապետներուն եւ Ազգ.կրթական հաստատութիւններու տնօրէններուն եւ խնամակալութեան ու հոգաբարձութեան ատենապետներու:

Ապա տեղի ունեցաւ թեմի Գործադիր Իշխանութեան երկու նոր կազմերուն ընտրութիւնը:



Նորընտիր Ազգ. Վարչութեան կազմը կը կրէր հետեւեալ պատկերը.

Տիար Յարութ Զիլիսլեան Ատենապետ, Թեմի Ազգ. Վարժարաններու կապ եւ Ուսումնակրթական հարցերու պատասխանատու

Մէթր Հուրի Ապահունի Ատենդպիր

Տիար Մանուէլ Ս. Մանուէլեան Տնտեսական Խորհուրդի կապ

Տիար Յովսէփ Գասապեան Թեմի եկեղեցիներու Թաղականութեանց կապ

Տիար Յարութ Չամիչեան Պետական-Յարաբերական

Մէթր Տիար Պայքար Թովմասեան Կալուածոց Հոգաբարձութեան կապ

Տիար Հրայր Թրթռեան ՍՇՕՎ Մարմնի, Ընկերային Ծառայութեան Խորհուրդի եւ Նպաստից Յանձ.-ի ներկայացուցիչ:

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ 2019-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ

Համազգային Հայ Կրթական Եւ Մշակութային Միութեան Սուրբոյ շրջանը կը շարունակէ գործել իր մասնաճիւղերով ու միաւորներով, հաւատարիմ մնալով մշակութային իր առաքելութեան, շարունակեց իր բնականոն գործունէութիւնը 2019 տարուան ընթացքին, միշտ հաւատալով, որ վերականգման կարելորագոյն ազդակը մարդու վերականգնումն է իր հոգեմտաւոր աշխարհով: Միութիւնս Սուրբոյ մէջ կը գործէ Շրջանային Վարչութեամբ, մասնաճիւղերով ու մասնագիտական միաւորներով: Շրջանս ունի Համազգայինի Կեդրոնական Վարչութեան իր ներկայացուցիչը, յանձին ընկ. Կարօ Ալեքսանեանի:

Ա. ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՆ

Համազգային Սուրբոյ Շրջ. Վարչութեան նստավայրը Հալէպ քաղաքն է: Վարչութեան գործունէութեան հիմնական ծիրն է վերահիսկողութիւնը մասնաճիւղերու եւ միաւորներու վաչութիւններու աշխատանքներուն եւ ապահովումը միութեանս կազմակերպական կառոյցի առողջ զարգացման:

Շրջ. Վարչութիւնը 19 Յունիս 2019-ին կազմակերպած է ԼԵՆՈՆ Չաքի Ետալեանի «Գոյութեան Մարտահրաւեր. Սուրբոյ Հայութիւնը 2011-2018» գիրքին շնորհանդէսը: Իսկ Սեպտեմբեր ամսուան ընթացքին՝ Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանի հայերէն լեզուի մէջ առաջնակարգ շրջանաւարտներու ծանօթացման հաւաք, զանոնք ծանօթացնելու միութեանս գործունէութեան եւ անդամագրելու շարքերէն ներս:

Համազգայինի մեծ ընտանիքը շնորհաւորական այցելութիւն տուաւ Բերիոյ Հայոց Թեմի Նորընտիր Առաջնորդ Գեր. Տ. Մասիս Սրբ.

Եպս. Չօպուեանին, Առաջնորդարանէն ներս, 9 Օգոստոս 2019-ին:

Միութեանս ԻԲ. Շրջանային Ժողովը գումարուեցաւ Կիրակի, 27 Յոկտեմբեր 2019-ին ԱՄԺ Տան «ԼԵՆՈՆ Շանթ» սրահէն ներս, եւ ընտրուեցաւ Նոր Շրջանային Վարչութիւնը, որ կը կրէ հետեւեալ պատկերը.-

Ընկ. Պերճ Պօղիկեան Ատենապետ Ընկի. Յուշիկ Ղազարեան Ատենադպիր Ընկի. Սոնիա Գաբրիէլեան Գանձապահ Ընկի. Շուշիկ Ղազարեան Հաշուապահ Խորհրդականներ՝ ընկ. Յարութ Պարոնեան, ընկ. Շանթ Ուրիշիկեան, ընկ. Անդրանիկ Մանսուրեան, ընկի. Սեւան Մանճիկեան (Քեսապ) եւ ընկի. Նայիրի Կարապետեան (Լաթաքիա):



Նորընտիր Շրջ. Վարչութիւնը պաշտօնական այցելութիւններ տուաւ Հալէպի հայ համայնքապետներուն եւ ՀՀ Հալէպի գլխաւոր հիւպատոսին:

Շրջանային Վարչութիւնը կը տանի նաեւ քարոզչական աշխատանք դիմատետրի իր էջին (Hamazkayin Syria) եւ կայքէջին hamazkayin-sy.com միջոցաւ, ինչպէս նաեւ

«Գանձասար» շաբաթաթերթին մեջ լոյս տեսած յօդուածներով իրազեկ կը դարձնէ հանրութիւնը շրջանիս գործունէութեան: Այս առումով վարչութիւնը կազմեց Տեղեկատուական Կեդրոնական Յանձնախումբ, որ իր գործունէութիւնը պիտի ծաւալէ յառաջիկայ տարուան ընթացքին:

Բ. ՄԱՍՆԱԾԻՂԵՐ **1-«ՆԻԿՈՒ ԱՂԲԱԼԵԱՆ» ՄԱՍՆԱԾԻՂ, ԶԱԼԵՊ**

Մասնաճիւղի Վարչութիւնը կը գործէ իր գրական, երաժշտական, «Սարդարապատ» պարարուեստի, «Շուշի» մանկապատանե-



կան, ընկերային եւ տիկնաց յանձնախումբերով: 2019-ի ընթացքին մասնաճիւղը տարած է բազմաբնոյթ գործունէութիւն: Ընկերային հաւաքներու եւ պարահանդէսներու կողքին, վարչութիւնը կազմակերպած է խթան գիշերուան այցելութիւն ՍՕ Խաչ-Ազգ. Պատուարան եւ երեք համազգայնականներուն բնակավայրեր, 5 Յունուար 2019-ին, ԱՄԺ Տան «Լ.Շանթ» սրահէն ներս բոլոր համազգայնականներուն «Համազգայնի կազմակերպական կառոյցի բացատրողական զրոյց», գրուցավար՝ ընկ. Գրիգոր Տունկեան, 16 Մարտ 2019-ին, ինչպէս նաեւ 29 Նոյեմբեր 2019-ին, ԱՄԺ Տան «Լ.Շանթ» սրահէն ներս, մեծ շուքով յիշատակեց Լ.Շանթի ծննդեան 150-ամեակը, դասախօս՝ տիկին Լալա Միսկարեան-Մինասեան, իսկ գեղարուեստական յայտագիրի իրագործման իրենց մասնակցութիւնը բերին մասնաճիւղի բոլոր յանձնախումբերը, Համազգայնի Հալէպի Հայագիտական Հիմնարկն ու «Լեւոն Շանթ» Թատերական Միաւորը:

Մասնաճիւղի «Շուշի» եւ «Սարդարապատ» պարախումբերը շարունակեցին իրենց փայլուն երթը. 27 եւ 28 Ապրիլ 2019-ին տեղի ունեցան զոյգ պարախումբերու տարե-

կան հանրային ելոյթները «Գ.Եսայեան» սրահէն ներս: Տարեկան ելոյթին կողքին, պարախումբերը իրենց մասնակցութիւնը բերին Հալէպի ազգային ու պետական ձեռնարկներու:



Պարախումբերը գործեցին վարչութեան եւ պարարուեստի յանձնախումբի աջալուրջ հետեւողականութեամբ: Անոնք ելոյթներու կողքին, պարողներուն համար կազմակերպած են ընկերական հաւաքներ, պտոյտներ ու գնահատանքի երեկոներ, ինչպէս նաեւ յանձնախումբը կազմակերպած է զանազան առիթներու հանրային խորախճանքներ ու պա-



րահանդէսներ:

Մասնաճիւղի Գրական Յանձնախումբը 22 Փետրուար 2019-ին ԱՄԺ Տան «Լեւոն Շանթ» սրահէն ներս իրականացուց երեք ձեռնարկ՝ «Արամ Մանուկեան՝ Անկախութեան Կերտիչը» մահուան 100-Ամեակի ոգեկոչում, բանախօս՝ տիար Քրիստափոր Հապոյեան, 10 Մայիս 2019-ին Յովհաննէս Թումանեանի ծննդեան 150-ամեակին նուիրուած աշակերտական ձեռնարկ, 27 Օգոստոս 2019-ին Ռաֆֆիի «Խաչագողի Յիշատակարանը» շարժանկարի ցուցադրութիւն:

Երաժշտական Յանձնախումբը 24 Դեկտեմբեր 2018-ին կազմակերպեց «Յունական Երեկոյ» պարահանդէս ԱՄԺ Տան «Անի» ճաշարանէն ներս, իսկ 29 եւ 30 Մարտ ինչպէս նաեւ 5 Ապրիլ 2019-ին «Երաժշտական

ԳԱՆՁԱՍԱՐ

մրցաշարը», ԱՄՏ Տան «Լ. Շանթ» սրահին ներս: Մրցաշարքին իրենց մասնակցությունը բերին Զալեպի բոլոր հայկական երաժշտանոցներու աշակերտները: Նպատակն էր գիրենք եւ հանրությունը ծանոթացնել հայ դասական երաժշտության դեմքերուն:

Նախորդ տարուան ընթացքին աշխոյժ ներկայություն էր նաեւ Տիկնանց Յանձնախումբը, որ ընկերային բնոյթի ձեռնարկներով օժանդակեց վարչութեան գործունեութեան:

Մասնաճիւղը Դեկտեմբեր 2019-ին գումարեց իր տարեկան անդամական ընդհանուր ժողովի Բ. նիստը եւ ընտրեց նոր վարչութիւն:

2-«ՎԱՅԱՆ ՆԱԿԱՐԴԵԱՆ» ՄԱՍՆԱԾԻՐ, ԼԱԹԱՔԻԱ

Յամազգայինի Լաթաքիոյ «Վահան Նաւասարդեան» Մասնաճիւղը իր աշխոյժ ներդրումը ունեցած է տեղւոյն հայ համայնքի մշա-



կութային կեանքին մէջ, յատկապէս իր «Գեղարդ» պարախումբով եւ «Նարեկ» երգչախումբով, որոնք կարճ ժամանակի ընթացքին, յաջողեցան ձեռք բերել մեծ ժողովրդականութիւն քաղաքի թէ՛ հայկական եւ թէ արաբական շրջանակներուն մէջ: Պարախումբն ու երգչախումբը իրենց մասնակցությունը բերած են տեղւոյն ազգային ու պետական ձեռնարկներուն: 10 Փետրուար 2019-ին «Գեղարդ» պարախումբը բեմ բարձրացաւ իր տարեկան ելոյթով:

Այս բոլորին կողքին, վարչութիւնը մշակած է միջմիութեանական եւ միջմասնաճիւղային սերտ յարաբերութիւններ, ինչպէս նաեւ ունեցած է սերտ կապեր տեղւոյն այլազան, նոյնիսկ արաբական միութիւններու հետ, գտնելով գործակցութեան լաւագոյն եզրեր՝ ի նպաստ միութեան առաքելութեան գարգացման եւ հայ մշակոյթի պահպանման ու ներկայացման:

Մասնաճիւղը Նոյեմբեր 2019-ին գումարեց իր տարեկան անդամական ընդհանուր ժողովի Բ. նիստը եւ ընտրեց նոր վարչութիւն:

3-«ՀԱՄՕ ՕՅԱՆՁԱՆԱԵԱՆ» ՄԱՍՆԱԾԻՐ, ԲԵՏԱՊ

Միութեանս Բեսապի «Համօ Օհանջանեան» Մասնաճիւղը նախորդ տարուան ընթացքին գործեց, ի միտի ունենալով Բեսապի



մշակութային ժառանգութեան պահպանումը: Այս նպատակով 30 Մարտ 2019-ին, վարչութիւնը կազմակերպեց Բեսապի տոհմիկ երեկոյ, որուն ընթացքին հնչեցին Բեսապի բարբառը, անանդական երգերն ու խաղիկները, իսկ ներկաները խանդավառ մթնոլորտի մէջ, սրահը թնդացուցին Բեսապի ազգագրական պարերով: Հաւատալով նաեւ գալիք սերունդի կարեւորութեան, 26 Յունուար 2019-ին վարչութիւնը կազմակերպեց «Փոքրիկներու Օր», որուն մասնակցեցան մանկապարտեզի աշակերտները: Մասնաճիւղի վարչութիւնը 4 Մայիս 2019-ին կազմակերպեց Յամազգայինի 90-ամեակին նուիրուած ձեռնարկ, որ ընդգրկեց գեղարուեստական կոկիկ յայտագիր՝ պատրաստուած տեղական ուժերով: Օրուան բանախօսն էր Եսայի Հաւաթեան, Այնճարէն:

Մասնաճիւղը Նոյեմբեր 2019-ին գումարեց իր տարեկան անդամական ընդհանուր ժողովի Բ. նիստը եւ ընտրեց նոր վարչութիւն:

4-«ԼԵՆՈՆ ՇԱՆԹ» ՄԱՍՆԱԾԻՐ, ԴԱՄԱՍԿՈՍ

Յամազգայինի Դամասկոսի «Լենոն Շանթ» Մասնաճիւղը կը դիմագրաւէ բազմաթիւ մարտահրաւերներ, այդուհանդերձ նախորդ տարուան ընթացքին յաջողեցաւ տանիլ որոշ գործունեութիւն: Վարչութիւնը իրականացուց Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօնի

աւանդական պարհանդեսները, ինչպէս նաեւ բազմիցս հիւրընկալեց Լաթաքիոյ «Վահան Նաւասարդեան» Մասնաճիւղի «Գեղարդ» պարախումբը, դիւրացնելով անոր մասնակցութիւնը մայրաքաղաքին մէջ տեղի ունեցած պետական ու ազգային ձեռնարկներուն:



րուն:

Մասնաճիւղի վարչութիւնը 11 Յոկտեմբեր 2019-ին կազմակերպեց Թարգմանչաց տօնակատարութիւն, բանախօս՝ Մեծի Տանն Կիլիկիոյ միաբաններէն Յոգձ. Տ. Չարեհ Վրդ. Սարգիսեան: Հանդիսութիւնը ընդգրկեց նաեւ գեղարուեստական յայտագիր, մասնակցութեամբ Դամասկոսի Ազգ. Միացեալ վարժարանի աշակերտներուն:

Գ. ՄԻԱՌՈՐՆԵՐ

1-ՀԱՄԱՉԳԱՅԻՆԻ ՀԱԼԷՊԻ ՀԱՅՎԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

Հակառակ իր դիմագրուած բազմաթիւ դժուարութիւններուն (տնտեսական, վայրի անկայուն վիճակ, դասախօսներու թիւի սահմանափակում եւ այլն), Համազգայինի Հալէպի Հայագիտական Հիմնարկը կը շարունակէ գործել որպէս արեւմտահայերէնի պահպանման միջնաբերդ: Հիմնարկի տնօրէնն է օրդ. Սիլվա Ճապաղջուրեան: Հիմնարկը 2019-2020 տարեշրջանը բացաւ Սեպտեմբերին, 7 դասախօսով եւ աւելի քան 50 ուսանողով:

2-«ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆ» ԵՐԱԺԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Դպրոցը կը շարունակէ գործել Ազգ. Կիւլպէնկեան վարժարանէն ներս: Դպրոցի տնօրէնն է օրդ. Ռուզան Պարսումեան: Երաժշտական գործիքներու կողքին 2019-2020 տարեշրջանէն սկսեալ դպրոցը ունեցաւ նաեւ ձայնամարդութեան բաժին, ղեկավարութեամբ մայեսթրա Գայիանէ Սիմոնեան-Տեր-

եանի: Դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները յաճախակի մասնակցութիւն բերին հա-



մայնքէն ներս կազմակերպուած տօնակատարութիւններու երաժշտական բաժիններուն: Երաժշտանոցի վարչութիւնը զանազան տօներու առիթով կը կազմակերպէ հալաքներ աշակերտութեան եւ ուսուցչական կազմին:

3-«ՉՈՒԱՐԹԵՆՑ» ԵՐԳՉԱՆՈՒՄԻ ՄԻԱՌՈՐ Նախորդ տարուան ընթացքին «Չուարթ-



նոց» երգչախումբը թեւակոխեց իր 50-ամեակը, որ յիշատակեց հանդիսաւոր ելոյթով, 7 եւ 14



Ապրիլ 2019-ին: Ելոյթին ընթացքին յատուկ տեսերիզով ցուցադրուեցաւ երգչախումբին

ԳԱՆՁԱՍԱՐ

յիսնամեայ պատմութիւնը, իսկ աւարտին բեմ հրաւիրուեցան Նախկին զուարթնոցականները եւ միասնաբար երգեցին «Երեւան-Երեբունի» երգը:

Երգչախումբը Նաեւ յատուկ ելոյթ մը ունեցաւ «Ամբողջական Սիրով Ու Հաւատքով» խորագրով, Նուիրուած երկրիս Առաջին Տիկնոջ ապաքինման, Ս. Քառասնից Մանկանց մայր եկեղեցիէն Ներս, Ներկայութեամբ Հալեայ քրիստոնեայ եւ իսլամ կրօնապետներու, պետական ու ազգային մարմիններու Ներկայացուցիչներու: Համերգի ընթացքին Ներկայացուեցաւ փունջ մը հոգեւոր երգեր՝ տարբեր լեզուներով:

Երգչախումբը կը գործէ գեղարուեստական ղեկավարութեամբ տիկին Գայիանէ Սիմոնեան-Տերեանի: Ելոյթներու կողքին երգչախումբը մասնակցած է ազգային եւ պետական տօնակատարութիւններու, Բանուորներու Տօնի պետական հանդիսութեան, 1 Մային 2019-ին եւ Ատամնաբուժներու Սենտիքայի Միաջազգային Խորհրդաժողովի բացման հանդիսութեան, 17 Սեպտեմբեր 2019-ին, Հալեայի Բերդէն Ներս: Միաւորի Վարչութիւնը 31 Օգոստոս 2019-ին կազմակերպեց «Երգեցիկ Երեկոյ», Նոր Գիւղի «Տիգրանեան» ընտանեկան պարտեզէն Ներս:

4-«ԼԵՒՆ ՇԱՆԹ» ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐ Միութեանս Ի.Բ. Շրջանային Ժողովի որո-



շումով «Լեւոն Շանթ» անուանակոչումը ստացած Թատերական Միաւորը ուշագրաւ գործունեութիւն տարաւ 2019-ի ընթացքին: Միաւորի վարչութիւնը 12 եւ 19 Մայիս 2019-ին կազմակերպեց «Չ՛ԸՍՈՒԻՐ... բայց ըսիք» խորագիրով ծիծաղի երեկոյ, որուն երկրորդ ելոյթը Նախատեսուած չէր, սակայն իրականացաւ ժողովուրդին բուռն փափաքին համաձայն:

Ոգեկոչելով միութեանս հիմնադիր եւ Հայ Թատրոնի Իշխան Լեւոն Շանթի ծննդեան 150-ամեակը, միաւորը Ներկայացուց մեծանուն հեղինակին «Եսի Մարդը» թատերգութիւնը, 17 եւ 24 Նոյեմբեր 2019-ին, բեմադրութեամբ միաւորի անդամ ընկի:



Յուշիկ Ղազարեանի: Ներկայացումը, որուն իրենց մասնակցութիւնը բերին աւելի քան 35 զանազան տարիքի դերակատարներ, արժանացաւ Ներկաներու բարձր գնահատանքին:

Միաւորի Վարչութիւնը կը գործէ Մշակութային, Տիկնանց եւ Մանկապատանեկան-Օժանդակ յանձնախումբերու դրութեամբ եւ յաճախակի ձեւով իր անդամներուն կը կազմակերպէ ընկերական հաւաքներ ու գնահատանքի երեկոներ:

Դ. «ՉԱՄԱՐԵԱՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՂՐՈՆ

Հալեայի ազատագրումէն ի վեր եւ քաղաքիս մէջ ստեղծուած Նոր կացութեան լոյսին տակ, Նոր Գիւղի շրջանին մէջ գտնուող Նախկինի «Չաւարեան» վարժարանը տրամադրուեցաւ Համազգայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան, որպէս մշակութային կեղրոն: Այս առումով՝ 10 Դեկտեմբեր 2018-ին «Չաւարեան» կեղրոնէն Ներս տեղի ունեցաւ յուշաքարի զետեղում: Ներկայիս «Նիկոլ Աղբալեան» մասնաճիւղն ու «Լեւոն Շանթ» Թատերական Միաւորը արդէն իսկ կը գործեն կեղրոնէն Ներս: Նախատեսուած է իրականացնել վերանորոգման աշխատանքներ հեռանկար ունենալով հանգրուանային ձեւով Հալեայի մէջ գործող Համազգայինի բոլոր մարմինները համախմբել անոր յարկին տակ: Հսկելու համար վերանորոգման աշխատանքները, ինչպէս Նաեւ հոգալու կեղրոնի կարիքները, Շրջ. Վարչութիւնը յառաջացուց «Չաւարեան» կեղրոնի հոգաբարձութիւն, որ իր աշխատանքները կը տանի Նոյեմբեր 2019-էն սկսեալ:

ԵՐԿՐՈՐԴ ՆԱՐԻԲՐԱՄԵԱԿԻ ՍԵՄԻՆ ՆԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՆԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ (2019)

2019-ին, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միությանը վերանորոգելով հայ սերունդներ կերտելու իր ուխտը, մուտք գործեց երկրորդ հարիւրամեակ նոր ծրագիրներով եւ նոր ռազմավարությամբ:

Ամփոփ կերպով կը ներկայացնենք 2019 տարուան միութեան գործունէութիւնները,-

ՀՄԸՄ-Ի ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԵՆ ԶԱՍԱՐԱՏՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԵՐ

- Հինգշաբթի, 28 Փետրուար 2019-ին, Հայ Սկսուտի օրուան առիթով ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութիւնը, ՀՄԸՄ-ի Հալէպի Մասնա-



ճիւղի Վարչութեան ատենապետին ընկերակցութեամբ այցելեց ՀՄԸՄ-ական երեք եղբայր Չաւեն Տերվիշեանի բնակարանը՝ մեծարելով երկար տարիներու իր ծառայութիւնը ՀՄԸՄ-ի սկսուտական շարքերէն ներս, որպէս խմբապետ, խորհուրդի անդամ, մարզանքի ուսուցիչ ու վարչական:

- Երեքշաբթի, 9 Ապրիլ 2019-ին, ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութիւնը Զիլիսի Հայրենակցական Միութեան սրահէն ներս կազմակերպեց երիտասարդական խորհրդաժողով մը, մասնակցութեամբ 18-30 տարեկան ՀՄԸՄ-ականներու, որոնցմէ բխած առաջարկները

ներկայացուեցան ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպած Երիտասարդական Ա. համագումարին, որ տեղի ունեցաւ Յունաստանի մէջ 10, 11 Մայիս 2019-ին:

- Կիրակի, 23 Յունիս 2019-ին, ՀՄԸՄ-ի Սուրիոյ 21-րդ Ներկայացուցչական Ժողովը ընթացք առաւ Ա. Մանուկեան Ժ. Տան «Լեւոն Շանթ» սրահէն ներս:

Ժողովը ընտրեց Շրջ. Վարչութեան նոր կազմը, որկրեց հետեւեալ պատկերը.-



Եղբ. Աւետիս Տերվիշեան Ատենապետ
Եղբ. Կարո Գալայճեան Ատենադպիր
Եղբ. Յարութ Օզճեան Գանձապահ
Քոյր Մարիա Գաբունճեան Հաշուապահ
Եղբ. Արսո Փայասեան Խորհրդական
Եղբ. Եղիա Զիլճեան Խորհրդական
Եղբ. Չաւեն Գասպարեան (Գամիշլի) Խորհրդական

Եղբ. Միսաս Պալեան (Լաթաքիա) Խորհրդական

Եղբ. Գեորգ Գալեմբերեան (Դամասկոս) Խորհրդական:

ՀՄԸՄ-ի պատգամաւորական ժողովի

ԳԱՆՁԱՍԱՐ

պատգամաւորներ ընտրուեցան եղբ. Մանուկ Թեօշկերեան եւ եղբ. Յարութ Գաբրիէլեան:

- 14-19 Յոկտեմբեր 2019-ին, Սուրիոյ շրջանի պատուիրակութիւնը իր մասնակցութիւնը բերաւ ՅՍԸՄ-ի Պատգամաւորական 12-րդ Ընդհ. Ժողովին, որ տեղի ունեցաւ Ծաղկածոր-Յայաստանի մէջ, հետեւեալ պատկերով.

- Եղբ. Մանուկ Թեօշկերեան /պատգամաւոր/

- Եղբ. Յարութ Գաբրիէլեան /պատգամաւոր/

- Եղբ. Աւետիս Տերվիշեան /Շրջ. Վարչութեան Ներկայացուցիչ/

- Եղբ. Կարօ Գալայճեան /հրահրեալ/

Երկուշաբթի, 14 Յոկտեմբեր 2019-ին, Սուրիոյ պատուիրակութիւնը ներկայ գըտնուեցաւ Շաւարշ Զրիսեանի կիսանդրիի բացումին, «Յայաստանի Ֆիզիքական Կուլտուրայի եւ Սպորտի Պետական Համալսարան»ին մէջ:

Պատգամաւորական 12-րդ Ընդհանուր ժողովի բացման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Երեւանի «Մարիոթ» հիւրանոցի «Արարատ» սրահին մէջ: Հանդիսութեան ընթացքին ՅՍԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Սկրտիչեանի ձեռամբ «Արժանեաց» շքանշանով պարգեւատրուեցաւ Սուրիոյ շրջանի վաստակաշատ ՅՍԸՄ-ական, Նախկին Շրջ. Վարչութեան ատենապետ եղբ. Մանուկ Թեօշկերեան:

Պատգամաւորական ժողովը թուրքիոյ կողմէ Հիւսիսային Սուրիա ներխուժելու քայլին անդրադառնալով 17 Յոկտեմբեր 2019-ին

խող այս անմարդկային արարքը:

Իր աշխատանքներուն աւարտին, ժողովը ընտրեց յառաջիկայ քառամեայ ստաշըրջանի նոր Կեդրոնական Վարչութիւնը, որուն մաս կազմեց Նաեւ Սուրիոյ շրջանէն եղբ. Մանուկ Թեօշկերեանը:

- Ուրբաթ, 29 Նոյեմբեր 2019-ին, կազմակերպութեամբ ՅՍԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան, ՅՍԸՄ-ական կազմերը մտերմիկ հաւաքով յիշատակեցին միութեան հիմնադրութեան 101-րդ տարեդարձը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅՍԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան Յուշամատենի Յանձնախումբը լոյս ընծայեց «ՅՍԸՄ-ական Դէմքեր եւ Յուշեր» Ա. հատորը, որ կը պարփակէ մեզմէ առ յաւետ բաժնուած վաստակաշատ ՅՍԸՄ-ական երեց եղբայրներու մենագրութիւնները, ինքնակենսագրութիւններն ու յուշագրութիւնները: Յանձնախումբը կը շարունակէ միութեան յուշամատենի պատրաստութեան աշխատանքները:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՍԿԱՈՒՄ ԽՈՐՀՈՒՐԴ

- 15-16 Մարտ 2019-ին, կազմակերպութեամբ ՅՍԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Սկաուտ Խորհուրդին եւ խմբապետութեան, Հալէպի մէջ տեղի ունեցաւ Ապագայ ղեկավարներու որակաւորման սեմինար, որուն իրենց մասնակցութիւնը բերին Լաթաքիոյ մասնաճիւղէն հինգ քոյր-եղբայրներ:

- 27 Սեպտեմբեր 2019-ին, կազմակերպութեամբ ՅՍԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Սկաուտ Խորհուրդին, Դամասկոս Մասնաճիւղի պատաս-



խատուկ յայտարարութեամբ խստիւ դատապարտեց միջազգային օրէնքները ոտնակո-



խանատու եղբ. Յարութ Մանուկեան օժտուեցաւ խմբապետի աստիճանով, ձեռամբ շրջ. խմբապետուհի քոյր Թամար Աւետեան-

Գատեհճեանի:

Նոյն օրերուն, 26-27 Սեպտեմբեր 2019-ին, հովանաւորութեամբ ՀՄԸՄ-ի Դամասկոս Մասնաճիւղի Վարչութեան եւ կազմակերպութեամբ ՀՄԸՄ-ի Դամասկոս Մասնաճիւղի Սկաւուտ Խորհուրդին, «Ա. Ահարոնեան» կեդրոնէն ներս տեղի ունեցաւ սկաւուտական կարգերու վերատրակաւորման սեմինար:

- Շրջ. Սկաւուտ Խորհուրդը դպրոցներու վերամուտին պատրաստեց դասացոյցներ ու բազմապատկումի աղիւսակներ:

- Շրջանային Սկաւուտ Խորհուրդի հրատարակչական յանձնախումբը ամբողջ տարի մը հրատարակեց ընդհ. գարգացման եւ սկաւուտական գիտելիքներ պարունակող թերթիկներ՝ գայլ-արծուիկ, արի-արեւոյշ եւ երեց-պարման միաւորներուն համար:

ՍԵՎԱՄ ՄԱՐԶԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

- ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան ՍԵՎԱՄ Մարզական Յանձնախումբին կազմակերպած 2018-2019 տարեշրջանի միջվարժարանային մրցաշարքերը շարունակուեցան, երկրորդ կիսամեակին տեղի ունեցաւ պասքեթպոլի մրցաշարք, ՀԵԸ-ի պասքեթ մարզադաշտէն ներս: Այնուհետեւ տեղի ունեցաւ ոտնագնդակի մրցաշարքը՝ Ազգ. Քարէն Եփփէ Ծեմարանի բակէն ներս:

- Չորեքշաբթի, 1 Մայիս 2019-ին, ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան ՍԵՎԱՄ Մարզական Յանձնախումբին կազմակերպած 2018-2019 տարեշրջանի միջվարժարանային քարաթէի մրցաշարքը տեղի ունեցաւ ՀՄԸՄ-ի «Շաւարշ Քրիսեան» քարաթէի մարզասրահէն ներս:



- Շաբաթ, 18 Մայիս 2019-ին, Միսիթարեան վարժարանի շրջափակին մէջ տեղի ունեցաւ ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ՍԵՎԱՄ Մարզական Յանձնախումբին կազմակերպած 2018-2019 տարեշրջանի միջ-

վարժարանային մրցաշարքերու փակման հանդիսութիւնը:

- 2019-2020 տարեշրջանի միջվարժարանային մրցաշարքերը ընթացք առին Սեպտեմբեր ամսուն:

- Ուրբաթ, 11 Հոկտեմբեր 2019-ին, Կրթասիրաց Ս. Չեմպէրճեան Երկրորդ վարժարանի շրջափակէն ներս տեղի ունեցաւ ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան ՍԵՎԱՄ Մարզական Յանձնախումբին կազմակերպած 2019-2020 տարեշրջանի միջվարժարանային մարզական մրցաշարքերուն բացման հանդիսութիւնը:

- Ուրբաթ, 4 Հոկտեմբեր 2019-ին, ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան ՍԵՎԱՄ Մարզական Յանձնախումբի 2019-2020 տարեշրջանի միջվարժարանային ոտնագնդակի մրցաշարքը սկիզբ առաւ Ազգ. Քարէն Եփփէ Ծեմարանի բակէն ներս: Մրցաշարքը շարունակուեցաւ երկու ամսուան տեւողութեամբ: Հալէպահայ ութ վարժարաններու երկսեռ աշխոյժ մասնակցութիւնը հաճելի եւ լուրջ մրցակցութիւն ստեղծեց այս տարի եւս, շուրջ 60 մրցումներով:

- 28, 29 եւ 30 Նոյեմբեր 2019-ին, ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան ՍԵՎԱՄ Մարզական Յանձնախումբի փինկ փոնկի մրցաշարքը տեղի ունեցաւ Հայ Աւետարանական Բեթէլ Երկրորդ վարժարանի «Փօլատեան» սրահէն ներս, մասնակցութեամբ 160 երկսեռ աշակերտներու:

Բոլոր մրցաշարքերու ավարտին, ՍԵՎԱՄ Մարզական Յանձնախումբին կողմէ առաջին երեք դիրքերը գրաւող աշակերտները եւ դրպրոցները պարգեւատրուեցան յատուկ հաստատագրերով, յանձնախումբի անդամներուն ձեռամբ:

ԳՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ (ՆԱԽԿԻՆ՝ ՄԱՍՈՒԼԻ)

- Գրական յանձնախումբը ամբողջ տարին թղթակցութիւններով միութեան գործունեութիւնը արտացոլացուց դիմատետրի «ՀՄԸՄ Սուրիա» էջին, «Գանձասար» շաբաթաթերթին եւ (youtube)ի «ՀՄԸՄ Սուրիա» էջին ճամբով:

- Յանձնախումբը ստանձնեց միութեան 101-րդ տարեդարձին նուիրուած տօնախմբութեան յայտագիրի պատրաստութիւնը:

- 27 Դեկտեմբեր 2019-ին, հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ.

Տ. Մասիս Ս. Եպս. Չօպուեանի, Գրական յանձնախումբը պիտի կազմակերպէ Զայ Մամուլի Տարուան նուիրուած դասախօսական ձեռնարկ մը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

- Շաբաթ, 20 Ապրիլ 2019-ին, ԶՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան Տնտեսական Յանձնախումբը կազմակերպեց Խթման տօնին նուիրուած ընթրիք, Ա. Մանուկեան Ժ. Տան «Անի» ճաշասրահէն ներս:

- Նոր Տարուան առիթով յանձնախումբը հրատարակեց վիճակահանութեան տոմսեր:

- Յանձնախումբը իր ներդրումը բերաւ միութեան 101-րդ տարեդարձին նուիրուած տօնախմբութեան կազմակերպչական աշխատանքներուն:

ՀԱԼԵՊ ՄԱՍՆԱԾԻՂ

- Կիրակի, 24 Փետրուար 2019-ին, տեղի ունեցաւ Ա. կարգի երդման արարողութիւն եւ վկայականաց բաշխում, ինչպէս նաեւ Խմբապետ աստիճանի տուչութիւն:

- Չորեքշաբթի, 24 Ապրիլ 2019-ին, Զալէպի ԶՄԸՄ-ի մեծ ընտանիքը ոգեկոչեց ապրիլեան զոհերուն յիշատակը: ԶՄԸՄ-ականներ, Զալէպի ԶՄԸՄ-ի սկաուտներն ու փողերախումբը Արամ Մանուկեան Ժողովրդային Տունէն ընթացք առած քայլարշաւին մասնակցեցան ուղղուելով դէպի Ս. Աստուածածին եկեղեցի, ուր ծաղկեպսակ գետեղեցին եւ իրենց յարգանքի տուրքը մատուցեցին ապրիլեան անմեղ զոհերու յիշատակին:

- Կիրակի, 2 Յունիս 2019-ին, տեղի ունեցաւ Մայիսեան յաղթանակներուն նուիրուած տողանցք, մասնակցութեամբ՝ ԶՄԸՄ-ի փողերախումբին եւ անելի քան 250 սկաուտներու:

- 6, 7 Յունիս 2019-ին, տեղի ունեցաւ Բ. կարգի երկօրեայ բանակում, Թերսանթ վանքէն ներս: Սոյն բանակումին մասնակցեցան 39 քոյրեր ու եղբայրներ:

- Կիրակի, 21 Յունիս 2019-ին, «Գ. Եսայեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Գրիգոր Յակոբեան Գայլ-Արծուիկ միաւորի Մովլիի Օրուան հանդիսութիւն: Տեղի ունեցաւ կակուղ թաթիկի, միաստղ եւ երկաստղ կարգերու վկայականաց բաշխում եւ աստիճանատուչութիւն:

- 27 Յունիս 2019-ին, Շաւարշ Զրիսեան Արի-Արեւոյշ միաւորի «Վագր» խումբը միօրեայ գործունէութիւն կատարեց:

- 28 Յունիս 2019-ին, Շաւարշ Զրիսեան Արի-Արեւոյշ միաւորի քոյրերն ու եղբայրները Միխթարեան վարժարանէն ներս կիսօրեայ գործունէութիւն կատարեցին, նուիրուած Լիզպոնի հինգ հերոսներու յիշատակին:

- Կիրակի, 11 Օգոստոս 2019-ին, Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով Զալէպ մասնաճիւղի սկաուտները ներկայ գտնուեցան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, ուր Ս. Եւ Անմահ Պատարագ մատուցուեցաւ եւ ապա խաղողօրհնէք կատարուեցաւ:

- 16-22 Օգոստոս 2019-ին, ԶՄԸՄ-ի Զալէպ մասնաճիւղի «Նշան Թիւսիւզեան» բանակումը տեղի ունեցաւ Զաֆար Ռամի վանքին մէջ, 90 քոյր-եղբայրներու մասնակցութեամբ: Բանակումի ընթացքին տեղի ունեցան փոխ խմբապետի, վարիչ առաջնորդի եւ փոխառաջնորդի աստիճանատուչութիւն, ինչպէս նաեւ նորընծայի եւ Բ. կարգի վկայականաց բաշխում:

- Սեպտեմբեր 2019-ին Գայլ-Արծուիկ միաւորի վոհմակ երամները այցելեցին Մահապպէ եւ Նոր Գիւղի փուռերը ու մօտէն ծանօթացան փռապաններու աշխատանքին:

- Կիրակի, 22 Սեպտեմբեր 2019-ին, գործակցութեամբ՝ Սուլէյմանիէ մասնաբաժնի



տնօրէնութեան, ԶՄԸՄ-ի Զալէպ մասնաճիւղի Վարչութեան եւ Սկաուտ Խորհուրդին, Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանի մէջ տեղի ունեցաւ մաքրութեան արշաւ: Սկաուտները իրենց մասնակցութիւնը բերին ճեմարանի փողոցը մաքրելու եւ մայթերու եզրերը ներկելու աշխատանքին:

- Կիրակի, 22 Սեպտեմբեր 2019-ին, Սրբոց Զառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ մէջ խմբապետական կազմէն քոյրեր եւ եղբայրներ իրենց մասնակցութիւնը բերին Զայաստանի վերանկախացման 28-ամեակին

առթիւ տեղի ունեցած Հանրապետական մաղթանքին եւ դրօշակի օրհնութեան:

- Կիրակի, 6 Յոկտեմբեր 2019-ին, Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանի շրջափակէն ներս տեղի ունեցաւ սկաուտական հանդիսութիւն: Աւարտին տեղի ունեցաւ նորընծայի եւ Բ. կարգի վկայականաց բաշխում եւ փոխխմբապետի աստիճանատուջութիւն:

- Կիրակի, 6 Յոկտեմբեր 2019-ին, Ազգ. Սահակեան վարժարանէն ներս սկաուտական գործունեութեան ընթացքին տեղի ունեցաւ փոխանցման արարողութիւն:

- Երեքշաբթի, 8 Յոկտեմբեր 2019-ին, ՀՄԸՄ-ի Հալէպ Մասնաճիւղի սկաուտները, ընկերակցութեամբ փողերախումբին, իրենց մասնակցութիւնը բերին Ալ Ասատ մարզադաշտին մէջ կայացած Սուրիոյ Յաղթանակի Փառատօնին:

- Շաբաթ, 12 Յոկտեմբեր 2019-ին, ՀՄԸՄ-ի Հալէպ Մասնաճիւղի սկաուտները իրենց սկաուտական զանազան գործունեութիւններուն կողքին, կատարեցին բարեսիրական գործունեութիւն մը եւ այցելեցին ճորճ Սալէմ դպրոց, ուր հանդիպեցան «Պէյթէլ Մահապպէ» կեդրոնի յատուկ խնամքի կարիք ունեցող եւ թերաճ երիտասարդներուն հետ:

- Կիրակի, 13 Յոկտեմբեր 2019-ին, կիրակնօրեայ գործունեութեան ընթացքին, տեղի ունեցաւ Գրիգոր Յակոբեան Գայլ-Արծուիկ Միաւորի վոհմակներու փոխանցման արարողութիւն:

- Յոկտեմբեր 2019-ին բոլոր սկաուտական խումբերը յիշատակեցին Սրբոց Թարգմանչաց տօնը:

- Կիրակի, 27 Յոկտեմբեր 2019-ին, կենտրոնի պահպանման օրուան առթիւ, ՀՄԸՄ-ի Արի-Արեւոյշ եւ Երեւ-Պարման Միաւորները իրենց մասնակցութիւնը բերին Նոր Գիւղի շրջանի մաքրութեան աշխատանքներուն:

- 2 Նոյեմբեր 2019-ին, ՀՄԸՄ-ի Հալէպ Մասնաճիւղի Արի-Արեւոյշ եւ Գայլ-Արծուիկ միաւորները իրենց մասնակցութիւնը բերին բնապահպանութեան ազգային տօնին առիթով տեղի ունեցած ծառատնկումի գործունեութեան, որ կազմակերպուած էր Հալէպի նահանգային եւ քաղաքային խորհուրդներուն կողմէ:

- Կիրակի, 17 Նոյեմբեր 2019-ին, Արի-Արեւոյշ Միաւորի Վագր եւ Աղուէս խումբերը ՀՄԸՄ-ի պարտեզէն արշաւեցին դէպի Հալէպի Պետական թանգարան: Անոնց միացաւ

նաեւ Գայլ-Արծուիկ միաւորէն ճերմակ վոհմակ երամը:

- 17 Նոյեմբեր 2019-ին, Գայլ-Արծուիկ Միաւորի Կարմիր վոհմակ երամը հիւրընկալեց Զրիստ Խրոյեանը, որ գայլիկներուն «Գանձասար» Շաբաթաթերթին մասին ընդհանուր գիտելիքներ փոխանցեց:

- Շաբաթ, 23 Նոյեմբեր 2019-ին Յովհաննէս Հինդլեան Երեւ-Պարման միաւորի սկաուտները եւ Շաւարշ Զրիսեան Արի-Արեւոյշ միաւորի Վագր խումբը կատարեցին գիշերային գործունեութիւն:

Հալէպ Մասնաճիւղի փողերախումբը պաշտօնական բոլոր ձեռնարկներուն իր մասնակցութիւնը բերաւ:

Մասնաճիւղի մարզական կեանքը աշխուժօրէն կ'ընթանայ, ընդգրկելով պասքէթպոլի, ոսնագնդակի եւ ճատրակի մարզաձեւերը:

ԴԱՄԱՍԿՈՍ ՄԱՍՆԱՃԻՂ

- 13-17 Օգոստոս 2019-ին, ՀՄԸՄ-ի Դամասկոս Մասնաճիւղի Վարչութեան հովանաւորութեամբ, մասնաճիւղի տարեկան բանակումը տեղի ունեցաւ Հոմսի Մար Եուհաննա վանքին մէջ (Հապ Նամրա):

- 26-27 Սեպտեմբեր 2019-ին, «Ա. Ահարոնեան» կեդրոնէն ներս տեղի ունեցաւ սկաուտական կարգերու վերաորակաւորման սեմինար:

- Շաբաթ, 12 Յոկտեմբեր 2019-ին, կազմակերպութեամբ ՀՄԸՄ-ի Դամասկոս Մաս-



նաճիւղի Գայլ-Արծուիկ միաւորին տեղի ունեցաւ «Ռալի», «Պապ Թումա» թաղամասերուն մէջ:

- Ուրբաթ, 25 Յոկտեմբեր 2019-ին, տեղի ունեցաւ «Ռալի»:

- Ուրբաթ, 15 Նոյեմբեր 2019-ին, սկաուտ-

ԳԱՆՁԱՍԱՐ

ները այցելեցին պոլինկի, պիլիարտի եւ այլ խաղերու յատուկ «Garden» սրահ:

Մասնաճիւղի փողերախումբը իր մասնակցութիւնը կը բերէ պաշտօնական բոլոր ձեռնարկներուն:

ԼԱԹԱՔԻՎ ՄԱՍՆԱԾԻՂ

- Երթելեկութեան միջազգային տօնին առիթով ՅՄԸՄ-ի Լաթաքիոյ Մասնաճիւղէն խումբ մը քոյրեր ու եղբայրներ ճանապարհները հսկող ոստիկաններուն վարդեր նուիրեցին ու անոնց տօնը շնորհաւորեցին, մաղթելով ուժ եւ կորով իրենց առաքելութեան մէջ:

- Երկուշաբթի, 6 Մայիս 2019-ին, նախաձեռնութեամբ ՅՄԸՄ-ի Լաթաքիոյ Մասնաճիւղի Վարչութեան եւ Սկաուտ Խորհուրդին, ներկայութեամբ արժանապատիւ Տէր Վազգէն քահանայ Զեօշկերեանի, արաբական վաշտերու պատասխանատու մարմնին եւ առա-



ջին վաշտի սկաուտներուն տեղի ունեցաւ արեան տուչութիւն Սուրիոյ եւ Հայաստանի նահատակներուն յիշատակին:

- Ուրբաթ, 31 Մայիս 2019-ին, տեղի ունեցաւ Մայիսեան յաղթանակներուն առիթով տողանցք, ընկերակցութեամբ ՅՄԸՄ-ի փողերախումբին: Տողանցքը ընթացք առաւ ՍՕ Խաչի կեդրոնէն դէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակը, ուր տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն նահատակներու յուշարձանին առջեւ, ինչպէս նաեւ Սուրիոյ եւ Հայաստանի դրօշակներու օրհնութիւն, ձեռամբ՝ Տէր Վազգէն Զեօշկերեանի:

- 2-3 Յունիս 2019-ին, հովանաւորութեամբ ՅՄԸՄ-ի Լաթաքիոյ Մասնաճիւղի Սկաուտ Խորհուրդին, կազմակերպութեամբ խմբապետական կազմին, տեղի ունեցաւ Սկաուտ Միաւորի որակաւորման երկօրեայ սեմինար, ակումբէն ներս:

- 20-25 Օգոստոս 2019-ին, Լաթաքիոյ Մասնաճիւղի «Տիգրան Խոյեան» անունը կրող բանակումը տեղի ունեցաւ «Սայիտեղ ալ ճապալ» վանքին մէջ:

- Ուրբաթ, 15 Նոյեմբեր 2019-ին, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Ս. Եպս. Չօպուեան այցելեց Լաթաքիոյ ՍՕ Խաչի կեդրոն: ՅՄԸՄ-ի Արի-Արեւոյշ եւ Գայլ-Արծուիկ միաւորները փողերախումբի ընկերակցութեամբ իրենց սկաուտական պարտականութիւնը կատարեցին բարի գալուստ մաղթելով Առաջնորդ Սրբազան Հօր:

- Կիրակի, 17 Նոյեմբեր 2019-ին, ՅՄԸՄ-ի Լաթաքիոյ Մասնաճիւղի աստիճանաւորական կազմը եւ սկաուտները, փողերախումբի ընկերակցութեամբ իրենց մասնակցութիւնը բերին Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առիթով տեղի ունեցած մատաղօրհնէքին:

ԳԱՄԻՉԼԻ ՄԱՍՆԱԾԻՂ

- Չորեքշաբթի, 24 Ապրիլ 2019-ին, ՅՄԸՄ-ի Գամիշլի Մասնաճիւղի սկաուտներն ու փողերախումբը իրենց յարգանքի տուրքը մատուցեցին Հայոց Յեղասպանութեան 104-րդ ամեակի յիշատակին եւ Գամիշլիի հայ ժողովուրդին ընկերակցութեամբ ուղղուեցան դէպի Ս. Յակոբ եկեղեցի, ուր կատարեցին ծաղկեմատոյց:

- Ս. Յարութեան տօնին առիթով, ՅՄԸՄ-ի Գամիշլի Մասնաճիւղի փողերախումբն ու



սկաուտական կազմը կազմակերպեցին տողանցք մը հայահոծ թաղամասերուն մէջ:

- Կիրակի, 2 Մայիս 2019-ին, ՅՄԸՄ-ի մարգադաշտէն ներս արժանաւայել տօնակատարութեամբ յիշատակուեցաւ Հայաստանի Ա. Անկախութեան տօնը:

- Հինգշաբթի, 1 Օգոստոս 2019-ին, կազմակերպութեամբ ՅՄԸՄ-ի Գամիշլի Մասնաճիւղի Սկաուտ Խորհուրդին տեղի ունեցաւ Լիզպոնի անմահ հերոսներուն յիշատակին նուիրուած գիշերային գործունեութիւն, Ս. Աստուածածին ուխտավայրին մէջ, մասնակցութեամբ՝ 55 արի-արեւոյշներու եւ 12 աստիճանաւորներու: Գործունեութեան ավար-

տին տեղի ունեցավ վկայականաց բաշխում եւ աստիճանատուչութիւն:

- Երկուշաբթի, 12 Օգոստոս 2019-ին, ՅՄԸՄ-ի Գամիշլի Մասնաճիւղի Սկաուտ Խորհուրդը կազմակերպեց աւագանագնացութիւն:

- 19-22 Սեպտեմբեր 2019-ին, տեղի ունեցավ տարեկան «Արցախ» բանակումը, Կաթողիկէ համայնքի ուխտավայրէն ներս, մասնակցութեամբ 60 արի-արեւոյշներու եւ 15 աստիճանաւորներու:

- Ուրբաթ, 4 Յոկտեմբեր 2019-ին, ՅՄԸՄ-ի Գամիշլի Մասնաճիւղէն խումբ մը աստիճանաւորներ յաջորդաբար այցելեցին Ազգ. Եփրատ մանկապարտէզ, Ազգ. Եփրատ Լախակրթարան եւ Ազգ. Միացեալ միջնակարգ վարժարաններ: Աստիճանաւորները աշակերտութեան ծանօթացուցին ՅՄԸՄ-ի 100-ամեայ պատմութիւնը եւ անդրադարձան գաղութներէ ներս անոր դաստիարակչական առաքելութեան: Աւարտին աշակերտներուն բաժնեցին ՅՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Խորհուրդին պատրաստած դասացոյցներն ու բազմապատկումի աղիւսակները:

- Երեքշաբթի, 12 Նոյեմբեր 2019-ին, Գամիշլիի Յայ Կաթողիկէ Յամայնքի Ս. Յովսէփ եկեղեցւոյ մէջ, ՅՄԸՄ-ի սկաուտներն ու փողերախումբը յարգանքի տուրք մատուցեցին եւ իրենց մասնակցութիւնը բերին վախճանեալ Ժողովրդապետ Տ. Յովսէփ Բինյ. Պետոյեանի թաղմանական կարգին:

- Կիրակի, 24 Նոյեմբեր 2019-ին, Գամիշլիի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ Յոգեհանգստեան պաշտօն տեղի ունեցավ Յայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան հիմնադիրներու եւ Լախակրթարանի յիշատակին: Յոգեհանգստեան Պաշտօնը Նախագահեց Բերիոյ Յայոց Թեմի Ըեզիրէի Առաջնորդական Փոխանորդ Յոգշ. Տ. Լեւոն Աբղ. Եղիայեանը: Յիւրաբար ներկայ կը գտնուէր Լաւ Ըեզիրէի Յայ Կաթողիկէ Առաջնորդ Գերպ. Տ. Անդրանիկ Ծ. Կրդ. Այվազեան:

ՔԵՍԱԳ ՄԱՍՆԱԾԻՂ

- Շաբաթ, 2 Փետրուար 2019-ին, տեղի ունեցավ գայլ-արծուիկ եւ արի-արեւոյշ միաւորներու Բարեկենդանի խրախճանք, Քեսապի Ժողովրդային տան մէջ:

- Կիրակի, 24 Փետրուար 2019-ին տեղի ունեցավ Յայ Սկաուտի օրուան տօնակատարութիւն, «Սարդարապատ» սրահէն ներս:

- Չորեքշաբթի, 18 Ապրիլ 2019-ին, Ս. Յարութեան տօնին առիթով տեղի ունեցան գայլ-արծուիկ եւ արի-արեւոյշ միաւորներու հաւկթախաղերը:

- Ուրբաթ, 3 Մայիս 2019-ին, «Սարդարապատ» սրահին մէջ տեղի ունեցավ Մոկլիի Օր:

Ձեռնարկին վերջին բաժինով բեմ հրաւիրուեցան մասնաճիւղի վարչութեան ատենապետն ու սկաուտ խորհուրդի ատենապետու-



հին, հովանաւորելու կակուղ թաթիկի, միաստղ եւ երկաստղ կարգերու վկայականաց բաշխումն ու աստիճանատուչութիւնը: Ապա քոյրերն ու եղբայրները կատարեցին երդման արարողութիւն եւ ստացան փոխ խմբապետի աստիճան:

- Երկուշաբթի, 3 Յունիս 2019-ին, տեղի ունեցավ միօրեայ որակաւորման սեմինար, «Սարդարապատ» սրահէն ներս, մասնակցութեամբ 22 աստիճանաւորներու:

- 8-14 Յուլիս 2019-ին, տեղի ունեցավ մասնաճիւղի տարեկան բանակումը՝ Քեսապի ՍՕ Խաչի Կազդուրման Կայանին մէջ: Շաբաթ 13 Յուլիս 2019-ին, դրօշակի արարողութեան ընթացքին տեղի ունեցավ փոխ խմբապետի, վարիչ առաջնորդի եւ փոխ առաջնորդի աստիճանատուչութիւն:

- 17, 18, 19 Օգոստոս 2019-ին, ՅՄԸՄ-ի Քեսապ Մասնաճիւղի Վարչութիւնը Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով կազմակերպեց «Քերմէս», երեք օրերու տեւողութեամբ՝ Եսկիւրանի ուխտավայրին մօտ:

- Կիրակի, 18 Օգոստոս 2019-ին, Ս. Աստուածածնայ վերափոխման տօնին առիթով ՅՄԸՄ-ի Քեսապ Մասնաճիւղը իր սկաուտներով եւ փողերախումբով ներկայ գտնուեցավ Քեսապի Ս. Աստուածածին եկեղեցի, ուր Բերիոյ Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Ս. Եպս. Զօպուեան իր անդրանիկ պատարագը մատուցեց, ապա տեղի ունեցավ խաղողօրինէք:

100 ՏԱՐԻ ԾԱՌ-ԱՅՈՒԹԻՒՆ՝ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՍ ՆԵՏ, ԺՈՂՈՎՈՒՐԴԻՍ ՆԱՄԱՐ

100 տարի առաջ, երբ հայ կինը ընկերային եւ հասարակական կեանքին մէջ սահմանափակ դեր ուներ, Օգնութեան Խաչը փորձեց դրսեւորել հայ կնոջ ներքին կարողակաւորութիւնը եւ մղել զինք դեր վերցնելու մեր ընկերային, հասարակական եւ քաղաքական հոլովոյթին մէջ, հաստատելով կառոյցներ, կազմակերպելով հասութեաբեր ձեռնարկներ եւ ինքզինք պարտադրելով որպէս այր մարդուն հաւասար կարողութիւններով օժտուած էակ:

Ներկայիս, 100 տարի ետք, հայ կինը կը գործէ խոյն ոգիով, սակայն արդիական ոճով: Ունի նուիրեալներու եւ ծառայողներու փառանգ մը: Ունի ՍՕ Խաչի աշխոյժ անդամուհիներ, տարեց, միջին տարիքի եւ երիտասարդ, որոնք հաւաքուած ՍՕ Խաչի Շրջանային Վարչութեան շուրջ հաւաքական ճիգով կը նպաստեն գաղութի զարգացման գործին:

Այս համերաշխ ընտանիքը, որուն կեանքը լեցուած է սիրով, կազմած է սփիւռքահայութիւնը, յատկապէս Սուրիոյ մէջ, ուր պահուած է 100-ամեայ պատմութիւն՝ բազմաթիւ աշխատանքներով յագեցած:

ՍՕ Խաչի 100-ամեակը առիթ մըն է վերանորոգելու մեր ուխտը դէպի նոր նուաճումներ՝ ազգային, ընկերային, կրթական, բարեսիրական եւ մշակութային ոլորտներէն ներս:

Այս մթնոլորտին մէջ է, որ գործեց ՍՕ Խաչի ընտանիքը՝ յանձնառութեամբ ու նուիրումով: Անոր լայնածաւալ գործունեութեան ամփոփ պատկերը կը ներկայացնենք ստորեւ:

1. ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

ՍՕ Խաչի 38-րդ Շրջ. Պատգամաւորական ժողովով ընտրուած Շրջանային Վարչութեան

եան աշխատանքները շարունակուեցան մինչեւ Յոկտեմբեր 2019: Ծաբաթ, 26 Յոկտեմբեր 2019-ին գումարուած ՍՕ Խաչի 39-րդ Շրջ. Պատգամաւորական ժողովը, 2019-2021



երկամեակին համար ընտրեց Շրջանային Վարչութեան նոր կազմը, հետեւեալ պատկերով.-

- Ընկի. Սեդա Կերկերեան Ատենապետ
- Ընկի. Լենա Էլէյճեան Փ. Ատենապետ
- Ընկի. Սիւզի Խշուաճեան Ատենադպիր
- Ընկի. Շողիկ Տեր Պօղոսեան Փ. Ատենադպիր
- Ընկի. Պայծիկ Զերչեան Հաշուապահ
- Ընկի. Մայտա Աւագեան Գանձապահ
- Ընկի. Հուրի Մուսալլի Գոյքապահ
- Ընկի. Զրիստին Սեթիկեան «Երեբունի» մանճ.-ի ներկայացուցիչ
- Ընկի. Հուրի Գարամարտեան «Շուշի» մանճ.-ի ներկայացուցիչ
- Ընկի. Նարինէ Փանոսեան «Մեղրի» եւ «Գետաշէն» մանճ.-ի ներկայացուցիչ
- Ընկի. Անի Սարգիսեան «Արցախ», «Լոռի», «Սարդարապատ» մանճ.ի ներկայացուցիչ
- Գրասենեակը ունի իր գործավարուհիները՝ 2 քարտուղարական եւ 2 հաշուապահական:

2. ՅԱՐԱՔԵՐԱԿԱՆ

ՍՕ Խաչի Շրջանային Վարչութիւնը որպէս բարեսիրական միութիւն իր լայնածաւալ եւ բազմաբնոյթ գործունէութեան զուգահեռ յարաբերութիւններ ունեցած է ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան, ՍՕԽ-ի մասնաճիւղերուն եւ Շրջանային յանձնախումբերուն, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդներ՝ Տ. Շահան Ս. Արք. Սարգիսեանի, ապա Տ. Մասիս Ս. Եպս. Չօպուեանի, ՀՀ Հալէպի Գլխաւոր Հիւպատոս Արմէն Սարգիսեանի, Հայ Կաթողիկէ եւ Աւետարանական համայնքապետներուն, Սուրիահայութեան Շտապ Օգնութեան եւ Վերականգնումի Մարմինի, Բերիոյ Հայոց Թեմի Նպաստից Յանձնախումբին, Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկին, Հ. Գարակեօզեան հիմնարկին, ուղեկից միութիւններուն, պետական մարմիններուն՝ Ընկերային Հարցերու եւ Աշխատանքի Տնօրէնութեան, Սուրիական Կարմիր Մահիկի Հալէպի Տնօրէնութեան, UNHCR-ի եւ Պետական Վարչութեան հետ, որոնք ընթացած են յարգալից եւ փոխադարձ համագործակցութեան ոգիով:

Յարաբերական այս օղակէն ներս Շրջանային Վարչութիւնը՝

1.- Ծանօթացման հանդիպումներ ունեցած է Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Շահան Ս. Արք. Սարգիսեանի եւ զեկուցած միութեանս վարած աշխատանքները, յատկապէս՝ Ընկերաբժշկական կեդրոնի շինարարութեան եւ կազմակերպական գործընթացը, ինչպէս նաեւ պատասպարանի սաներու հետ կապուած խնդիրները:

Տ. Շահան Ս. Արք. Սարգիսեանի Թեմէս մեկնումին, Շրջանային Վարչութիւնը Ազգ. Պատասպարանէն ներս կայացած Ս. Յարութեան ճրագալոյցի ընթրիքի ընթացքին, սաներուն եւ պատասպարանի յանձնախումբի ներկայութեամբ, Սրբազան հօր նուիրած է ՀՕՄ-ի 100-ամեակի արուեստի գործ յուշապնակը, ինչ որ մեծապէս գնահատուած է իր կողմէ:

2.-2 Մարտ 2019-ին ներկայ գտնուած է Հիւպատոսարանէն ներս կայացած ՀՀ դեսպան Տիգրան Գեորգեանի հետ հանդիպումին, յարանուանութիւններու, կուսակցութիւններու եւ բարեսիրական միութիւններու ներկայացուցիչներուն կողքին:

3.-24 Ապրիլ 2019-ին Հիւպատոսարանէն ներս կայացած ընդունելութեան ներկայ գտնուած է Շրջ. Վարչութեան օրուան

ատենապետ ընկի. Հռիփ Կանանեան եւ պարգեւատրուած ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան յուշանուէրով:

4.-20 Յունիս 2019-ին Շրջ. Վարչութեան դիւանը հանդիպում ունեցած է Նորընտիր Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Ս. Եպս. Չօպուեանի հետ: Որպէս առաջին եւ ծանօթացման հանդիպում, ընկերուիները ամփոփ զեկույց ներկայացուցած են ՍՕ Խաչի կառոյցին եւ գործունէութեան մասին:

5.-6 Նոյեմբեր 2019-ին Նորընտիր Շրջ. Վարչութիւնը լրիւ կազմով ծանօթացման հանդիպում ունեցած է Առաջնորդ Տ. Մասիս Ս. Եպս. Չօպուեանի հետ :

6.-Ս. Ծննդեան եւ Ս. Յարութեան տօներուն առիթներով շնորհաւորական այցելութիւններ տուած է Հայ երեք համայնքապետներուն, ՀՀ Հալէպի Գլխաւոր հիւպատոսին, ինչպէս նաեւ Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկի տնօրէնուիին եւ Հ. Գարակեօզեան հաստատութեան տնօրէնին: Ընդառաջած է համայնքներու բոլոր հրաւերներուն ներկայութեամբ եւ շնորհաւորագրերով:

7.-Սուրիոյ Վերականգնումի Կեդր. Մարմինին եւ Բերիոյ Հայոց Թեմի Նպաստից Յանձնախումբին մէջ ունեցած է իր ներկայացուցիչները, որոնց ջանքերով, յաճախ ՍՕ Խաչի ընտանիքին եւ Ազգ. Պատասպարանի սաներուն կարելի եղած է մեծաքանակ օժանդակութիւն ապահովել, դրկուած Հայաստանի Հանրապետութեան, Ռուսիոյ Դաշնութեան եւ այլ բարեսիրական միութիւններէ (սննդամթերք, հագուկապ, կօշիկ, գրեմական պիտոյք, ծածկոց, խաղալիք եւ այլն):

8.-Ընկերային Հարցերու եւ Աշխատանքի տնօրէնութեան հետ յարաբերութիւնը ընթացած է միութեանս պետական վարչութեան միջոցաւ՝ արտօնագրի, տարեկան օրացոյցի հրատարակութեան եւ պետական արտօնագրերու ապահովման եւ այլ հարցերով:

Իսլամական Ֆթըր եւ Ատիա տօներուն առիթով շնորհաւորական այցելութիւն տուած է տնօրէնութեան:

9.-27-28 եւ 29 Մայիս 2019-ին, Ռամատանի առիթով մասնակցութիւն բերած է «Լքմթէ Սաուա» (Մեր պատառը միասին) ծրագրին, Իֆթարի ճաշ մատուցելով Հալէպի շրջակայքը պաշտպանող պահակակետերու պետական զինուորներուն, շուրջ 100 հոգիի: Յիշենք որ առաջին օրուան ճաշը մատուցուած է Շրջ. Վարչութեան ընկերուիներու ձե-

ռամբ, Պոստան Փաշայի, շուրի ընկերություն, Պայիտիկի եւ այլ վայրերու պահակ զինուորներուն:

10.-Սուրիական Կարմիր Մահիկի Հալէպի տնօրէնութենէն ապահոված է սննդամթերք՝ «Փեթակ» խոհանոցին եւ դեղորայք՝ դարմանատան համար:

Իսկ Իսլամական Ֆթըր եւ Ատհա տօներուն առիթով շնորհաւորական այցելութիւն տուած է կեդրոնի ներկայացուցիչին:

11.-2018-ին ընտրուած պետական վարչութեան կազմը ցարդ կը շարունակէ իր աշխատանքները:

- 1 Օգոստոս 2019-ին գումարած է Միութեանս Պետական Անդամական Ընդհանուր ժողովը,

- Պետական Վարչութիւնը մասնակցած է Ընկ. Ծառայութեան եւ Աշխատանքի տնօրէնութեան եւ Բարեսիրական Միութիւններու Համընկերակցութեան ժողովներուն, շնորհաւորական այցելութիւններ տուած է Ֆթըր եւ Ատհա տօներուն առիթով:

-25 Օգոստոս 2019-ին ներկայ գտնուած է Հալէպի Բարեսիրական Միութիւններու Համընկերակցութեան ժողովին, ուր Ատհա տօնին առիթով շնորհաւորագրեր եւ զեկոյցներ ներկայացուած են միութիւններու մտահոգութիւններուն եւ աշխատանքին շուրջ:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

Ա.- Շրջ. Վարչութեան Ժողովներ

Շրջ. Վարչութիւնը մօտէն հետեւած է մասնաճիւղերու եւ Շրջ. յանձնախումբերու կազմակերպչական աշխատանքներուն:

-Մարդուժի պատրաստութեան անհրաժեշտութենէն մեկնած 16 եւ 19 Սեպտեմբեր 2019-ին կազմակերպած է նստավայրի նորագիրներու վերապատրաստութեան դասընթացք, որուն աւարտին անոնց տրամադրած է դասընթացքի ընթացքին դասախօսուած նիւթերը պարփակող «Ուղեցոյց» գրքոյկը:

-22 Յունիս 2019ին գումարած է ՍՕ Խաչի 39-րդ Շրջ. Պոզմ. ժողովի Ա. Նիստը, որուն ընթացքին եղած են առաջարկներ եւ ընտրուած պատգամաւորներ ՅՕՄ-ի 72-րդ Համահայկական Պատգամաւորական ժողովին:

-Հոկտեմբեր 2019-ին գումարած է ՍՕ Խաչի 39-րդ Շրջ. Պոզմ. ժողովի Բ. Նիստը եւ ընտրած նոր վարչական կազմ: Ժողովը յառաջիկայ գործունէութեան համար կատա-

րած է առաջարկներ: Նորընտիր Շրջ. Վարչութիւնը արդէն իսկ սկսած է անոնց իրականացման աշխատանքներուն:

Բ.- Մասնաճիւղեր

ՍՕ Խաչը Սուրիոյ շրջանին մէջ կը գործէ 10 մասնաճիւղերով, որոնցմէ երեքը՝ Նայիրին, Սեւանը եւ Անին նստավայրի մէջ, Շուշին՝ Լաթաքիա, Մեդրին ու Գետաշէնը՝ Զեսապ, Էրեբունին՝ Դամասկոս, Արցախը՝ Գամիշլի, Սարդարապատը՝ Տերիք եւ Լոռին՝ Հասիչէ: Այսօրուան տուեալներով ՍՕ Խաչը ունի 1480 անդամ:

Մասնաճիւղերը կազմակերպած են եկամտաբեր ձեռնարկներ՝ պտոյտներ, ընթրիքի երեկոներ, նախաճաշ, տոհմիկ սովորութիւններու յայտագրով ձեռնարկներ, դասընթացքներ, ցուցահանդէս-վաճառքներ, որոնք կոկիկ մուտք ապահոված են մասնաճիւղերուն, ինչպէս նաեւ դասախօսութիւններ եւ հարց-պատասխանի մրցոյթներ: Ձեռնարկներուն թղթակցութիւնները լոյս տեսած են «Գանձասար» շաբաթաթերթով:

Այցելած են եւ ճաշ մատակարարած Ազգ. Պատսպարանի սաներուն եւ Հայ Ծերանոցի պատսպարեալներուն:

Մասնակցութիւն բերած են շրջանէս ներս կայացած հանդիսութիւններու, յատուկ ժողովներու եւ կարգ մը պաշտօնական այցելութիւններու:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ

ՍՕ Խաչի Շրջանային Վարչութիւնը յառաջացուցած է 9 Շրջանային Յանձնախումբեր, որոնք կը վարեն մասնագիտական գործունէութիւն հետեւողականութեամբ Հաշուեքննիչ Մարմին:

ՍՕ ԽԱՉ-ԱԶԳ. ՊԱՏՍՊԱՐԱՆ

ՍՕ Խաչ-Ազգ. Պատսպարանը կը գործէ Ազգ. Իշխանութեան եւ Սուրիահայ Օգնութեան Խաչի հովանիին ներքեւ եւ որպէս եգալի կառոյց արժանացած է ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան եւ ՀՕՄ-ի մեծ ընտանիքին ուշադրութեան, իրենց կատարած նուիրատուութիւններով, որոնք նշանակալից տեղ ունեցած են սաներու բարօր կեանքի ապահովման մէջ: Անոնց կողքին կ'աւելնան նաեւ անհատ բարերարներու, կազմակերպութիւններու եւ միութիւններու կողմէ տրամադրուած նիւթական օժանդակութիւններն ու հիւ-

րասիրուած ճաշերը:

Սաները ամառնային արծակուրդը կ'ան-
ցընեն Քեսապի Կազդուրման Կայանէն Ներս,
որ Քեսապի տխուր դէպքերէն վերջ վերանոր-
ոգուեցաւ: 2019-ի ամրան Քեսապի մէջ
աւանդութիւն դարձած ճամբարը կարելի
չեղաւ կայացնել Քեսապ հայաւանի
ապահովական պայմաններու բերմամբ:



Պատասպարանի ինամքին տակ եւ մա-
յուն թէ այցելու կարգավիճակով 34 սան՝ 25
աղջիկ եւ 9 մակ:

25/6/2019-ին Բերիոյ Թեմի Նորանշանակ
Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Ս.Եպս. Չօպու-
եան հովուական առաջին այցելութիւնը
տուած է պատասպարանին եւ ծանօթացած
անոր կառոյցին, սաներու առօրեային, մտեր-
միկ ճաշի ընթացքին եւ տուած իր հայրական
օրհնութիւնը:

6/7/2019-ին ԶԶ Հալեպի Գլխաւոր Հիւպա-
տոսի բարի տնօրինումով Պատասպարան
այցելած են Մարդասիրական առաքելութեամբ
Սուրիա գտնուող հայաստանեան գումար-
տակի ներկայացուցիչները եւ 50 սնտուկ ման-
կական հանդերձանք, խաղալիք, գիրքեր եւ
գրեական պիտոյքներ Նուիրած են պատըս-
պարանի սաներուն:

Հայրենի բժիշկները կամաւոր կերպով
պարբերաբար այցելած են Պատասպարան եւ
օգտակար դարձած սաներուն:

Առողջապահական

Նոր Գիւղի շրջանին մէջ գտնուող ՍՕ Խաչի
դարմանատան առողջապահական
սպասարկութենէն կ'օգտուին հայ թէ օտար
հիւանդներ, մայուն եւ այցելու բժիշկներու
հսկողութեամբ, առաւօտեան ժամը 9:00-2:00
աշխատանքային ժամերով:

2019-ին պետական հրաւերով ԶԶ Մար-

դասիրական առաքելութեամբ Հալեպ
գտնուող հայրենի մասնագետ բժիշկները երեք
խմբակներով կամաւոր կը ծառայեն դարմա-
նատունէն Ներս եւ համագործակցութեան
բարձր ոգիով կը սատարեն դարմանատան:



Այս շրջանին դարմանատունը օժտուած է
ատամնաբուժական բաժինով, որ արդէն
սկսած է հիւանդները ընդունիլ դարմանատան
կից ԲԺ. Ներսէս Սարգիսեանի կողմէ տրա-
մադրուած ատամնաբուժական քլինիքէն
Ներս:

Յանձնախումբը կազմակերպած է առող-
ջապահական դասախօսութիւններ՝ «Սննդա-
կանոն»ի, «Շաքարախտ»ի, «Կուրծքի Զաղ-
կեղ»ի եւ Շտապ Օգնութեան դասաընթացք
մէկ ու կէս ամսուան տեսողութեամբ հայրենի
բժիշկներու մատուցմամբ:

Խնամատարական

Յանձնախումբը ստանձնած է ՀՕՍ-ի
Կեդրոնական Վարչութեան «Պնակ Մը Տաք



Ճաշ»ի ծրագրի մատակարարումը շաբաթա-
կան երկօրեայ դրութեամբ, 362 ընտանիքի
ներառեալ հայկական թաղամասերը հսկող
պահակ տղոց:

ԳԱՆՁԱՍԱՐ

Յանձնախումբը նիւթական օժանդակութեան կողքին, կարիքաւոր ընտանիքներուն հայթայթած է սնունդ եւ զգեստերէն:

«Փէթակ» խոհանոց

Փէթակ խոհանոցը ցարդ կը գործէ Ազգ. Պատասպարանի կեդրոնի յարակից բաժնին մէջ:

Արդէն ժողովրդականութիւն ունեցող խոհանոցէն ներս կը պատրաստուին ՅՕՄ-ի «Պնակ Մը Տաք Ճաշ»ը: Հայկական ճաշերու պատրաստութեամբ զոհացում կը տրուի նաեւ միութիւններու եւ անհատներու պատուերներուն:

Ձեռարուեստ

Յանձնախումբը շարունակած է դասընթացքներու եւ ցուցահանդէսներու միջոցաւ սերունդներուն փոխանցել հայկական ասեղնագործութեան մշակոյթն ու անոր պահպանման արժէքը:

Վիլլաներու շրջանին մէջ գտնուող «Նախշատուն» վաճառատունը ապացոյցն է, որ հակառակ երկրիս տնտեսական վերիվայրումներուն, ան կը գործէ իր շուրջ համախմբելով հետաքրքրուողներու փաղանգ մը ու կը ջանայ կորուստէ փրկել հայկական մշակոյթը:

Յանձնախումբը իր մասնակցութիւնը բերած է ՍՕԽ-ի եւ պետական ցուցահանդէս վաճառքներուն:

Աշխատանոց

Ազգ.Սահակեան վարժարանի ներքնասրահէն ներս գործող աշխատանոցը, գործ հայթայթելով տիկիներուն, կը ձգտի նաեւ եկամտաբեր աղբիւր դառնալ ՍՕ Խաչին:

Յանձնախումբը կը գործակցի քոյր միութիւններու, հայկական վարժարաններու, եկեղեցիներու, բարեսիրական հաստատութիւններու հետ ստանձնելով համազգեստներու, ամավերջի հանդէսներու, պարային եւ երգչախմբային տարազներու, տպագրուած ծածկոցներու պատրաստութիւնը, նաեւ կ'իրագործէ ՅՕՄ-ի Զանաւառի միաւորի նուիրատուութեամբ «Տաքուկ Չգեստներ»ու ծրագիրը: Կը մասնակցի միութեանս եւ պետական ցուցահանդէսներուն:

Դաստիարակչական

Յանձնախումբը կազմակերպած է դաստիարակչական

սախտութիւններ հետեւեալ նիւթերով՝ «Հայ Արքունի Տիկիներ», «Սերնդափոխութեան



Հոլովոյթը Միութեանկան Կեանքին մէջ» եւ «Կենսոլորտի Ապականում»: Ինչպէս նաեւ սեմինար մը «Հաղորդակցութեան, Բանակցութեան Արուեստը եւ Հանրային Հասարակական Կապեր», որոնց շուրջ թղթակցութիւններ լոյս տեսած են «Գանձասար» շաբաթաթերթին մէջ:

Մանկամտուր

ՍՕ Խաչի «Կակաչ» մանկամտուրը, 2017-ին վերսկսաւ գործել Ազգ. Պատասպարանի տարածքէն ներս առաւօտեան ժամը 8:00-2:00 ունենալով յարմարաւետ պայմաններ եւ խնամատար պաշտօնեաներ:



Յանձնախումբը ճիգ չէ խնայած բարօր եւ ուրախ մթնոլորտ ստեղծելու իր խնամքին յանձնուած 3 ամսականէն մինչեւ 3 տարեկան երեխաներուն, որոնց մայրերը ընդհանրապէս վարժարաններու ուսուցչուհիներ են: Անոնք հերթապահութեան ամենօրեայ դրութեամբ ներկայութիւն եղած են կեդրոնէն ներս, իրազեկ դառնալու մանկամտուրէն ներս տարուած, երեխաներու խնամատարական եւ

դաստիարակչական աշխատանքներուն, որոնց համար պատրաստած են յատուկ ծրագիր:

Յանձնախումբը կազմակերպած է Կաղանդի, Բարեկենդանի, Տեառնըդառաջի, Մայրերու օրուան եւ Չատկուան տօներու առթիւ տօնախմբութիւններ, ձեռային աշխատանքներ եւ ամբան պտոյտի յայտագիր, երեխաներուն շաբաթական տնային պատրաստութեամբ հիւրասիրութիւն եւ վիճակահանութիւն: Ինչպէս նաեւ ծնողական հաւաքներ մանկավարժական դասախօսութիւններու ներկայացումով:

30 Օգոստոս 2019-ին կազմակերպած է տարեկան ամավերջի հանդէս մանկամտորի 21 շրջանաւարտ երեխաներուն (9 աղջիկ, 12 տղայ), ուր ներկայ գտնուած են նաեւ հայրենիքէն ժամանած բժշկուհիները, որոնք գեղեցիկ կուրսներով ուրախացուցած են երեխաները եւ բարձր գնահատած յանձնախումբին աշխատանքը:

Տօնական օրերուն եւ յատուկ առիթներով, ընդունած են պաշտօնական հիւրեր եւ առօրեայ այցելուներ:

Մանկամտորը ունի դիմատետրի իր էջը «ՍՕԽ-ի Կակաչ Մանկամտոր» անունով:

Արխիւային

Յանձնախումբը շարունակած է ՍՕԽ-ի արխիւներու մէկտեղման եւ տարիներու յաջորդականութեամբ դասաւորելու աշխատանքը: Ծրագրի իրականացումը կ'ենթադրէ երկարաշունչ եւ երկարաժամկետ աշխատանք:

4.-ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Ա.- ԴՕՄ-Ի ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ԵՒ ՄԱՍՆԱԿԿՅՈՒԹԻՒՆ

ԴՕՄ-ի Կեդրոնական Վարչութիւնը շարունակած է իր մարդասիրական ծրագիրները Սուրիոյ մէջ:

Իսկ Շրջ. Վարչութիւնը հետամուտ եղած է այդ ծրագիրներու անխափան շարունակութեան:

- «Պնակ մը Տաք ճաշ» ծրագիրը իրագործուած է շաբաթական երկօրեայ դրութեամբ, «Փեթակ» խոհանոցի մատակարարութեամբ եւ Խնամատարական Յանձնախումբի ձեռամբ:

- «Տաքուկ Բնակարան» ծրագրի գծով գումարներ յատկացուած է 300 նպաստընկալներու:

- ԱՄՆ Արեւելեան շրջանի միաւորի ներդրումով «Երաշխաւորէ՛ Զայ Ընտանիք Մը» ծրագրէն օգտուած են 300 ընտանիք:

-Քանատայի Միաւորի ներդրումով 2019-ին իրականացուցած է 450 *փուլովոր*ներու պատրաստութիւնը ՍՕ Խաչի աշխատանոցէն ներս եւ բաշխումը՝ Ազգ. Միացեալ Վարժարանի աշակերտութեան:

- «ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՖՈՆՏ» նպաստէն 2018-2019 տարեշրջանին օգտուած են Զալէպի պետական համալսարանի երկու ուսանողներ:

Բ.- ԾՐՁԱՆՆԵՐ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Շրջ. Վարչութիւնը, աշխուժացնելու համար մասնաճիւղերը յաճախակի կերպով այցելած է շրջանները եւ ներկայ գտնուած մասնաճիւղերու կազմակերպած ձեռնարկներուն ու ժողովներուն:

- 11 Յունիս 2019-ին այցելած է Դամասկոս եւ ներկայ գտնուած «Էրեբունի» մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովին եւ նպաստած մասնաճիւղի ցուցահանդէս վաճառքին:

- Այցելութիւն Սուրիոյ Զիւսիսային Շրջաններ 14-18 Յունիս 2019:



ՍՕ Խաչի Շրջ. Վարչութեան ատենապետ ընկի. Զոհի Կանանեան մաս կազմելով Բերիոյ Թեմի պատուիրակութեան, այցելած է Սուրիոյ Զիւսիսային Շրջաններ 14-18 Յունիս 2019-ին:

Շրջանի լիազօր ընկերուհիին հետ, ան հանդիպումներ ունեցած է Գամիշլիի «Արցախ», Զասիէի «Լոռի» եւ Տերիքի «Սարդարապատ» մասնաճիւղերու վարչութեանց եւ անդամներուն հետ, լսած՝ անոնց մտահոգութիւններն ու աշխատանքային գեկոյցը եւ համատեղ սերտած կեդրոններու բարեգարդման, անդամներու աշխուժացման եւ շրջաններու հետ փոխ գործակցութեան հարցերը:

ԳԱՆՁԱՍԱՐ

Այցելութիւնը թէւ կարճատեւ եղած է, սակայն բեղմնաւոր եւ արդիւնաւետ ու իր դրական անդրադարձը ունեցած է մասնաճիւղերուն վրայ:

ՀՕՄ-ի 72-րդ Համահայկական Պտգմ. ժողովը եւ ՍՕ Խաչի 39-րդ Շրջ. Պատգամաւորական ժողովը յատուկ կոչերով հանդէս եկան, դատապարտելով թրքական զօրքին ոտնձգութիւնները եւ բարբարոսութիւնները սուրիական հողերուն ու Սուրիոյ բնակչութեան նկատմամբ: Առ այդ, իր զօրակցութիւնը յայտնեց նիւթապէս եւ բարոյապէս զօրավիգ կանգնելու Սուրիոյ Հիւսիսային շրջանի հայութեան:

5. ԶԱՐՈՉՉԱԿԱՆ-ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

Ա.- Միութեանս աշխատանքն ու գործունեութիւնը առաւելագոյնս ցլւացնելու հիմնական ազդակներէն մէկը եղած է քարոզչութիւնը, իր զանազան միջոցներով:

Առ այդ, ՍՕ Խաչի գործունեութիւնը օրը օրին հրապարակուած է Գանձասարի էջերով, յայտարարութիւններով, յատուկ հաղորդագրութիւններով, թղթակցութիւններով, իսկ պաշտօնական հանդիսութիւնները ուղիղ եթերով սփռուած են Ռատիօ Երազի ճամբով:

Բ.- Նախորդ շրջանին ստեղծուած դիմատետրի յատուկ էջը՝ «Souriahay Oknoutian Khach - Շրջանային Վարչութիւն» անունով, շարունակած է գործել եւ նպաստել միութեանս գործունեութեան տարածման: Էջը այսօր ունի 2300-էն ավելի հետեւող:

Գ.- Հրապարակած է միութեան 2019-ի պատի տարեկան օրացոյցն ու գրպանի տետրերը, ՍՕ Խաչի 100-ամեակի նշանակով: Ինչպէս նաեւ 2020-ի պատի տարեկան օրացոյցը:

Ե.- Ապրիլ 2019-ին Շրջ. Վարչութեան ատենապետուհի ընկի. Հռիփ Կանանեան ՀՀ Հիւպատոսարանէն ներս հարցազրոյց մը ունեցած է ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան թղթակից՝ Նազելի Էլբակեանի հետ, գլխաւոր նիւթ ունենալով հայրենիքէն առաքուած հայ երեխաներու օժանդակութիւնը, սաներու տպաւորութիւնը եւ ինչու չէ միութեանս գործունեութեան ներկայացումը՝ ամփոփ գիծերու մէջ:

6. ԳԵՐԱՉԱՆՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ԾՐԱԳԻՐ

Շարունակած է «Գերազանց ուսանողներու ծրագիր»ը, եւ նիւթական պարգէ-

ներով գնահատած Սուրիոյ տարածքին Ազգ. երկրորդական վարժարաններէն պետական քննութեանց առաջին երեք տեղերը գրաւած հայ աշակերտները:

7. ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ա.- ՍՕ Խաչի Ընկերաբժշկական Կեդրոն

15 Սեպտ. 2018-ին սկիզբ առած ՍՕ Խաչի Ընկերաբժշկական կեդրոնի շինարարական աշխատանքները գրեթէ աւարտած են, շինարարական յանձնախումբի հսկողութեամբ եւ մասնագետ կապալառուի ջանքերով: Այդուհանդերձ հսկայ աշխատանք կը սպասուի կահաւորման եւ յատկապէս նիւթական ապահովելու առումով:

Ընկերաբժշկական կեդրոնի վերաշինութիւնը իր շուրջ սկսած է համախմբել բարե-



րարներ, որոնք հաւատալով ՍՕ Խաչի առաքելութեան, պատրաստակամութիւն յայտնած են զօրավիգ կանգնելու անոր վերաշինութեան:

Շրջ. Վարչութիւնս որոշած է յատուկ ցուցանակ մը գետեղել տալ շէնքի մուտքին, ցանկագրելով հիմնադրութեան, բարեկարգման եւ վերանորոգութեան բաժին բերող բարերարներուն անունները:

Բ.- Քեսապի Կազդուրման Կայան

ՍՕ Խաչի Քեսապի Կազդուրման կայանի շինարարական աշխատանքները շարունակուեցան Քեսապի շրջանէն նշանակուած յանձնախումբի հսկողութեամբ եւ կապալառուի գործադրութեամբ: Կը մնան ցանկապատման լրացուցիչ աշխատանքներն ու ծառատնկումը:

8.- ՍՕ ԽԱՉԻ 100-ԱՄԵԱԿ

- ՍՕ Խաչի հիմնադրութեան 100-ամեակը արժանաւոր ու պատշաճ ձեւով նշելու

նպատակով, Շրջ. Վարչությունը կազմակերպած է հետևեալները.-

- Պատրաստել տուած է 100-ամեակի նշանակը եւ յատուկ պատահներ, որոնք տրամադրուած են մասնաճիւղերուն:

- Հրապարակած է 2019-ի տարեկան պատի օրացոյցն ու գրպանի տետրերը:

- 11 Դեկտ. 2018-ին ՍՕ Խաչի 100-ամեակի Մեկնարկ Ամանորեայ Յուզահանդես Վա-



ճառքի ընդմէջէն, զայն նուիրելով Քիլիսի աւանդական ծրարներուն:

- 25-26 Յունուար եւ 1 Մարտ 2019-ին կազմակերպած է ՍՕ Խաչի 100-ամեակին նուիր-



րուած «Հայ Կնոջ Դերը Գաղութի Չարգացման Մէջ» խորագրով եռօրեայ խորհրդաժողովը, որուն իրենց մասնակցութիւնը բերած են նստավայրի մասնաճիւղերէն աւելի քան 150 անդամուհիներ:

Խորհրդաժողովի ընթացքին բանախօսութիւններով հանդես եկած են՝

-Ընկի. Հուրի Տիլպերեան «ՍՕ Խաչի Դարմանատան պատմականը»

-Դոկտ. Հուրի Ազեզեան «Քրիստոնէական կրօնը եւ հայ կինը Ազգ-Եկեղեցի շրջագիծէն ներս»

-Շահան Եպս. Սարգիսեան «Հայ Կնոջ դերը գաղութի զարգացման մէջ»

-Վեր. Յարութիւն Սելիմեան «Դրական մտածողութիւն զարգացնելու մեթոտաբանութիւն»

-Տիար Կարօ Եուզպաշեան «Սուրիական տագնապ, հայ համայնքի գոյատեւում, ուղեկից միութիւններ-կուսակցութիւն յարաբերութեան եղանակ»

-ՍՕ Խաչի մասնաճիւղերու եւ Շրջանային Յանձնախումբերու պատմականները 1985-էն սկսեալ:

-Խորհրդաժողովի ընթացքին մասնակիցները այցելած են ՍՕ Խաչի Ընկերաբժշկական կէտրոն, Ս. Զառասնից Մանկանց Մայր Եկեղեցի, Հայ Կաթողիկէ Մայր Գթութեանց եկեղեցիները, որոնք մեծապէս վնասուած էին պատերազմի պատճառով եւ վերաշինութեան ընթացքի մէջ էին եւ վերանորոգուած Հայ Աւետ. Էմմանուէլ եկեղեցի:

- 7 Փետրուար 2019-ին ՀՕՄ-ի օրուան առթիւ հոգեհանգստեան արարողութիւններ ՀՕՄ-ի, ՍՕԽ-ի եւ Ազգ. Պատասպարանի բարերար ննջեցեալներուն հոգիներուն համար, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Նմանօրինակ արարողութիւններ կայացած են նաեւ շրջաններուն մէջ:

-28 Մարտ 2019-ին Մայրերու Օրուան հանդիսութիւնը նուիրելով հայ կին խմբագիր-



ներուն (1860 թուականէն սկսեալ) համաձայն «Մամլոյ Տարուան» կարգախօսին եւ նշած է ՀՕՄ-ի «Հայ Սիրտ»ի 80-ամեակը:

Հանդիսութեան աւարտին յատուկ գնահատագրեր յանձնած է 30 եւ աւելի տարիներ ծառայութիւն ունեցող արժանաւոր ընկերուհիներուն:

-26 Մայիս 2019-ին համերգ՝ կատարողութեամբ ձայնամարզութեան ղեկավար՝ Գայ-

ԳԱՆՁԱՍԱՐ

իանէ Սիմոնեանի աշակերտներուն (VOCALIST):



-3-4-5 Դեկտեմբեր 2019-ին ամանորեայ ցուցահանդէս վաճառք Շրջանայինի Ձեռարուեստի, Աշխատանցի եւ «Փեթակ»-ի յանձնախումբերու մասնակցութեամբ:

-10 Դեկտեմբեր 2019-ին ՍՕ Խաչի 100-ամեակի Յորելենական հանդիսութիւն եւ ՅՕՄ-ի



գնահատագրերու բաշխում՝ ՍՕ Խաչէն Ներս 50 տարուան եւ անելի ծառայութիւն ունեցող ընկերուիներուն: Ինչպէս նաեւ պրոշիւրի հրատարակութիւն:

9.- ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ-ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

1.- 17 Մարտ 2019-ին Բերիոյ Յայոց Թեմի Ազգ. Երեսփոխանական լրացուցիչ ընտրութիւններուն, քուէատուփերու հսկողութեան եւ այլ աշխատանքներուն:

2.- 1-3 Ապրիլ 2019-ին ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Յայրապետի Յալեպ այցելութեան առիթով կայացած հանդիպումներուն, հացկերոյթին եւ Սրբոց Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ Վերօծման արարողութեան եւ Ս. Պատարագին:

3.- Յայ Ծերանցի Մայրերու Օրուան հանդիսութեանց եւ Մեծն Ներսէսի աւանդական ճաշկերոյթին:

4.- Ունեցած է իր ներկայացուցիչը Ապրիլեան կեդրոնական հանդիսութեան կազմակերպիչ յանձնախումբին մէջ եւ հայերէն բացման խօսքով հանդէս եկած:

Ինչպէս նաեւ մեծաթիւ խաչուիներով մասնակցած է մոմավառութեան, ծաղկեմատոյցին եւ արեան տուչութեան:

5.- Ունեցած է իր ներկայացուցիչը Մայիսեան կեդրոնական հանդիսութեան կազմակերպիչ յանձնախումբին մէջ եւ ներկայ եղած 2019-ի Մայիսեան հանդիսութեան եւ հացկերոյթին:

6.-ԸՈՄ-ի կազմակերպութեամբ Մայիս 2019-ին Յալեպի Պետական Յամալսարանէն Ներս Յայոց Ցեղասպանութեան նուիրուած վաւերական եռօրեայ ցուցահանդէսին, հայկական արժեքաւոր ձեռագործներու ցուցադրութեամբ, ձեռարուեստի յանձնախումբի հետ գործակցաբար:

7.- 24 Մայիս 2019-ին Սրբազան Յօր Յրածեշտի երեկոյին:

8.- 2 Յունիս 2019-ի ՅՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Յակոբ Տէր Խաչատուրեանի հետ ազգային մարմիններու հանդիպման, Ազգ. Առաջնորդարանի դահլիճէն Ներս, իսկ երեկոյեան Ս. Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ մէջ կայացած Յոգեւոր Յամերգին, որ նուիրուած էր երկրիս Ա. Տիկնոջ:

9.- 3 Յունիս 2019-ին ՅՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ ընկերոջ ընկերակցած Նոր Գիւղի շրջան կատարած այցելութեան, որու ընթացքին ան այցելած է նաեւ Ազգ. Պատարագին, մանկամտուր եւ ընկերաթշկական կեդրոն եւ



դիմաւորուած մեծաթիւ խաչուիներու կողմէ: Շրջ. Վարչութիւնս Բիւրոյի ընկերոջ յանձ-

Նաժ Է միութեանս «Յուշամատեն»ը եւ հայկական ձեռագործներով պատրաստուած նուէրներ:

10.- 12 Յունիս 2019-ին Թեմիս Նորընտիր Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մասիս Եպս. Զօպուեանի ընդունելութեան եւ մասնակից դարձած աջահամբոյրին:

11.- 31 Յուլիս 2019-ին այցելութիւն՝ Նորընտիր Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Եպս. Զօպուեանի, առ ի ծանօթացում: Ներկայ



գտնուած են Նաեւ Նստավայրի վարչութիւնները: Այս առիթով Սրբազան Զօր Նուիրուած Է ձեռագործուած հայոց տառերը:

12.- Երկրիս Նախագահին թելադրութեամբ, ընկերաբժշկական կեդրոն այցելած Է տիար Ֆարէս Բալլաս, Ներկայութեամբ Շրջ. Վարչութեան ատենապետին, պետական վարչութեան ընկերուհիներուն եւ պատկան մարմնի ներկայացուցիչին: Ան շրջել է ետք կեդրոնի բոլոր յարկերը, իր գոհունակութիւնը յայտնած Է տարուած աշխատանքին գծով: Ապա, Ազգ. Պատասպարանէն ներս կայացած հանդիպումով, տիար Բալլաս փոխանցած Է Նախագահին սերն ու գնահատանքը հայ համայնքին նկատմամբ եւ նշած, թէ հայութիւնը իր աշխատասիրութեամբ, վարպետ արհեստաւորներով եւ հաւատարմութեամբ կը մնայ այս երկրին պատուաւոր քաղաքացի: Ինչպէս նաեւ փոխանցած Է, որ Նախագահը իր պատրաստակամութիւնը յայտնած Է հայ երիտասարդութեան աշխատանքի գծով նիւթապէս օգտակար դառնալու:

13.- Միջազգային GOPA կազմակերպութեան Նախաձեռնութեամբ եւ Թեմիս Նպաստից Յանձնախումբի գործակցութեամբ, Շրջ. Վարչութիւնս քաջալերած Է Շրջ. Խնամատարական յանձնախումբը եւ իր նպաստը նկատելի երկու հանգրուանով մասնակից դարձուցած Թեր Սէնթի մէջ կայացած կիսօրեայ

պտոյտին:

14.- 12 Օգոստոս 2019-ին, այցելած են Այնճարի ԼՕԽ-ի կազդուրման կայանը, իրազեկ դարձած կատարուած աշխատանքին եւ հետեւած ինչ կազդուրուելու մեկնած կարիքաւոր փոքրիկներու առօրեային:

15.- ՍԵՄ-ի քառասնամեակի Նուիրուած հացկերոյթին 28 Սեպտեմբեր եւ 30կտեմբեր 2019-ին տօնակատարութեան:

16.- 25 Սեպտեմբեր 2019-ին շնորհաւորական այցելութիւն տուած Է ԶԶ Զալէայի գլխաւոր հիւպատոս տիար Արմէն Սարգիսեանին, «Միսիթար Գոշ» շքանշանով պարգեւատրուելուն առիթով:

17.- 27 Սեպտեմբեր 2019-ին ԶԶ անկախութեան առիթով կայացած տօնակատարութեան Նատի Զալէայի մէջ:

18.- 8 Ղեկտ. 2019-ին ԶՅԴ 129-ամեակի առիթով կայացած տօնակատարութեան եւ հացկերոյթին:

10.- ԶՕՍԻ ԶԱՄԱՅԱՅԿԱԿԱՆ 72-ՐԴ ԺՈՂՈՎ

ԶՕՍ-ի 72-րդ Զամահայկական Պատգամաւորական ժողովին, որ կայացաւ Մոնթրէալ-Քանատայի մէջ 6-11 Զոկտեմբեր 2019-ին, շրջանս չկրցաւ իր մասնակցութիւնը բերել, մուտքի վիզա չապահովելուն համար, հակառակ Կեդր. Վարչութեան կատարած միջամտութեան:

Առ այդ, Սուրիոյ շրջանին վերապահուած յատուկ օրակարգով, շրջանս իր մասնակցութիւնը բերած Է այդ ժողովին գրաւոր Նամակով եւ լսատեսողական միջոցով, ուր Շրջ. Վարչութեան ատենապետուհին ներկայացուցած Է շրջանիս մտահոգութիւնները եւ յատկապէս անդրադարձած վերջին շաբաթներուն Սուրիոյ հիւսիսային շրջանին մէջ կատարուած թրջական ներխուժման:



2019-Ի ՎԵՐԱԿԱՆՔՆՈՒՄԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

*Պատրաստեցին՝ Սեւան Ազարիկեան
Մարինա Պողիկեան
Լուսին Չիլաբոջեան*

ԲԵՐԻՈՅ ԶԱՅՈՑ ԹԵՄ

ՍՐԲՈՑ ԶԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

30 Մարտ 2019-ի առաւօտուն, ձեռամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին, մասնակցութեամբ Բերիոյ Զայոց Թեմի



իր դռները բացաւ հաւատացեալներուն դիմաց: Վեհափառ Զայրապետը վերօծումը կատարեց այն միւռնոսով, որ 29 Մարտ 1923 թուականին օրհնուած էր երջանկայիշատակ Սահակ կաթողիկոսին կողմէ, Սրբոց Զառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ:

Պատմական եւ խորհրդանշական մեծ արժէք եւ աւելի քան 600 տարուան կեանք ունեցող Սրբոց Զառասնից Մանկանց Մայր եկեղեցին կանգուն վիճակով կը շարունակէ իր առաքելութիւնը՝ իբրեւ հալէպահայութեան հոգեւոր ամրոց:

Եկեղեցւոյ վերանորոգութեան իր ազնիւ ներդրումը բերաւ Սուրիոյ նախագահ տոքթ. Պաշշար ալ Ասատ:

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Օրհնութեամբ Բերիոյ Զայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս.



Առաջնորդ Գերշ. Տ. Շահան Ս. Արք. Սարգիսեանի, Սրբոց Զառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ վերօծումը կատարուեցաւ: Եկեղեցին կրկին

Չօպուեանի, հսկողութեամբ Ազգ. Վարչութեան եւ եկեղեցւոյ Թաղականութեան ամենօրեայ հետապնդումներով աւարտեցան

Հալեպի Հայ Առաքելական Ս. Աստուածածին եկեղեցւոյ գմբէթի եւ զանգակատուներու վերանորոգութեան աշխատանքները: Եկեղեցին պատերազմի տարիներուն մասնակի վնասներ կրած էր:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Ս. Գրիգոր Լուսանորիչ եկեղեցւոյ շինարարական գործընթացը ընթացք առաւ 2019-ին: Աշխատանքը գլխաւորաբար կ'ընդգրկեր



նստարաններու նորոգութիւն եւ եկեղեցւոյ պատերը ներկելու ծրագիր: Առաջնորդ Սրբազան Հայրը գնահատեց եւ խրախուսեց Ազգ. Վարչութիւնը եւ եկեղեցւոյ Թաղական Խորհուրդը՝ իրենց հետեւողական ճիգերուն համար:

ԱԶԳ. ՄԻԱՅԵԱԼ ՎԱՐԺԱՐԱՆ (Դամասկոս)

Երկուշաբթի, 14 Հոկտեմբեր 2019-ի առաւօտուն, վերանորոգուած Ազգ. Միացեալ Վարժարանը իր դռները լայն բացած, գրկաբաց ընդունեց իր աշակերտները: Աշակերտ-



ներուն ցնծութեան բացազանջութիւնն ու սրտառուչ ծիծաղը նոր շունչ ու երանգ տուին հայեցի կրթութիւն ջամբող, միտք ու հոգի կռանող այս կրթօճախին:

Ուրբաթ, 22 Նոյեմբեր 2019-ին կատա-

րուեցաւ վարժարանի վերանորոգուած կառուցին պաշտօնական բացման հանդիսութիւնը: Հանդիսութեան ներկայ էին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Զօպուեան, ՀՀԴ Բիւրոյի անդամ Բենիամին Պէպքեան, Սուրիոյ Խորհրդարանի անդամներ՝ դոկտ. Նորա Արիսեան եւ տիար Խալիլ



Թոհմէ, նախագահական պալատի ներկայացուցիչներ, ՀՀ Սուրիոյ դեսպան Տիգրան Սարգսեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կեդր. Վարչութեան անդամ Հրաչ Յակոբեան, Բերիոյ Հայոց Թեմի ազգային Վարչութեան, ազգային մարմիններու եւ միութիւններու ներկայացուցիչներ եւ վարժարանի հոգաբարձութիւնն ու տնօրէնութիւնը:

Սուրիոյ մայրաքաղաք Դամասկոսի հայկական վարժարանը, որ պատերազմի ընթացքին ծանր վնասներու ենթարկուած էր, նախագահ տոքթ. Պաշար ալ Ասատի եւ

ԳԱՆՁԱՍԱՐ

Առաջին Տիկնոջ Ամա ալ Ասատի անմիջական օժանդակությամբ վերաշինուած եւ վերականգնուած է:

-Սուրիոյ պատերազմի տարիներուն ահաբեկչութեան թիրախ դարձած, ապա Սուրիոյ



Նախագահին նիւթական ներդրումով վերանորոգուած Դամասկոսի Ազգ. Միացեալ Վարժարանը 20 Դեկտեմբերին տօնեց իր Ամանորը: Տօնը կրկնակի ցնծութեան առիթ եղաւ, երբ վարժարան անակնկալ այցելութիւն տուաւ Սուրիոյ Առաջին Տիկնոջ Ամա ալ Ասատը եւ իր բարեմաղթութիւնները յայտնեց աշակերտներուն, բարի եւ արգասաբեր տարի ցանկալով բոլորին:

Աշակերտները Առաջին Տիկնոջ ներկայութեան գեղարուեստական ճոխ յայտագիրով հանդէս եկան:

Տօնակատարութեան ներկայ էին Սուրիոյ Խորհրդարանի Երեսփոխան ղոկտ. Նորա Արիսեան, «Ա. Ահարոնեան» կեդրոնի պատասխանատու Արմէն Ուրֆալեան, Վարժարանի տնօրէնուհին եւ վարժարանի Զոգաբարձական կազմին անդամները:

Ժամեր անց վարժարան այցելեցին Նաեւ Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդն ու Ազգ. Առաջնորդարանի դիւանապետը:

ՀՄԸՄ-ի ՄԱՐԶԱԴԱՇԻ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

Հալէպի դժնդակ պատերազմի օրերուն հրկիզուած ՀՄԸՄ-ի մարզադաշտը իր անկարագրելի տժգունութենէն եւ սեւ ճակատագրէն դուրս բերելու համար ՀՄԸՄ-ի Հալէպի Մասնաճիւղի Վարչութիւնը անխնայ ճիգերով ու ջանքերով գործի լծուեցաւ վերստին կենքի կոչելու այսպիսի կենսական կեդրոն մը:

Վարչականներու բարեխօսութեամբ, միութեան ու Զրիստոնեական Բարեսիրական հաստատութիւններու ներդրումով 2016-ին ընթացք առին շինարարական աշխատանքները:

Աշխատանքը տակաւին ընթացքի մէջ է:

Պատրաստուած ու ի գործ դրուած է արդէն կրտսերներու առօրեայ փորձերու դաշտը վերստին գարկ տալով ՀՄԸՄ-ի պասքեթի



խումբերուն եւ այժմ արդէն կը շարունակուին Պասքեթի ֆետերասիոնիս կողմէ վաւերացուած օրինաւոր դաշտին վերջին փուլի գործերը:

ՍՕԽ-Ի ԸՆԿԵՐԱԲԺՇԿԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

15 Սեպտ. 2018-ին սկիզբ առած ՍՕ Խաչի Ընկերաբժշկական կեդրոնի շինարարական աշխատանքները գրեթէ աւարտած են, շինարարական յանձնախումբի հսկողութեամբ եւ մասնագետ կապալառուի ջանքերով: Այդուհանդերձ հսկայ աշխատանք կը սպասուի կահաւորման եւ յատկապէս նիւթական ապահովելու առումով:

Ընկերաբժշկական կեդրոնի վերաշինութիւնը իր շուրջ սկսած է համախմբել բարե-



րարներ, որոնք հաւատալով ՍՕ Խաչի առաքելութեան, պատրաստակամութիւն յայտնած են զօրավիգ կանգնելու անոր վերաշինութեան:

Այստեղ կարելութեամբ կը յիշենք, որ Սուրիոյ Նախագահ Պաշշար ալ Ասատ իր նիւթական օժանդակությամբ նեցուկ կանգնեցաւ բարեսիրական այս հսկայ կեդրոնի վերականգնումին:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔ

Յետ պատերազմին, 2019-ին Սուրիոյ մէջ Հայ Կաթողիկէ Համայնքին կառոյցներուն վերանորոգութեան աշխատանքները շարունակուեցան: Նախապատուութիւնը տրուեցաւ կրթական օճախներու վերանորոգութեան, ապա՝ եկեղեցիներու:

ՀԱԼԷՊ

- Հայ Կաթողիկէ Համայնքի Առաջնորդարանի վերանորոգութիւնը աւարտեցաւ:

- Թիլէլի մէջ գտնուող Հայ Կաթողիկէ Աթոռանիստ եկեղեցին հետեւողական աշխատանքով հիմնովին նորոգուեցաւ: Պաշտօնա-



կան բացումն ու վերօծումը տեղի ունեցան Դեկտեմբեր ամսուան մէջ:

- Աթոռանիստ եկեղեցւոյ եւ դպրոցին միջեւ գտնուող «Սարգարապատ» սրահը նորոգուեցաւ: Սրահ մը, որ իր բեմով եւ լայն տարածութեամբ կը նպաստէ կազմակերպե-



լու դպրոցի եւ եկեղեցւոյ գործունեութիւնները, դասախօսութիւններ եւ զանազան ձեռնարկներ:

- Սիլվեյմանիէ թաղամասին մէջ գտնուող Հայ Կաթողիկէ «Սուրբ Փրկիչ» եկեղեցւոյ սրահը նորոգուեցաւ, անոր պաշտօնական բացումը կատարուեցաւ Դեկտեմբեր ամսուան:

- Նոր Գիւղի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ «Աղաճանեան» սրահը ընդհանուր նորոգութեան ենթարկուեցաւ:

- Ազիզիէ թաղամասի Անարատ Յղութեան Հայ Զոյրերու վարժարանը նոյնպէս վերանորոգուեցաւ: Դպրոցը կը շարունակէ իր կրթական առաքելութիւնը յառաջ տանիլ:

ՏԵՐ ԶՕՐ

- Տեր Զօրի մէջ ընթացք առին Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ եւ անոր շրջակայ տուներու եւ խանութներու վերանորոգութեան աշխատանքները: Նորոգութեան աշխատանքները ստանձնած էր Տ. Յովսէփ Բահանայ Պետոյեան, որ Նոյեմբերին, իր առաքելութեան ընթացքին, ահաբեկիչներու կողմէ սպանուեցաւ: Բահանայ իր նահատակութեամբ աշխատանքը կիսատ մնաց:

ՔԵՍԱՊ

- Հայաբնակ Քեսապի «Սուրբ Միքայել» եկեղեցին վերանորոգուեցաւ: Հոն տեղադրուեցան երկու յուշարձաններ՝ Սուրբ Մարիամ Աստուածածինի եւ Կարտինալ Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեանի: Վերջինս իր ներդրումը բերած է Քեսապը սուրիական հողատարածքին մէջ պահելու որոշումին:

ՅԱՌԱՋԻԿԱՅ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ

- Ճապալ ալ Սայտա թաղամասին մէջ պիտի վերանորոգուին Հայ Կաթողիկէ Համայնքին պատկանող երեք շէնքեր, որոնք կը պարունակեն շուրջ 45-50 յարկաբաժին:

- Քեսապի Պաղճաղազ ավանի Հայ Կաթողիկէ վանքի վերանորոգութիւնը շուտով ընթացք պիտի առնէ:

- Նախապէս Հալէպի Վարդանանցի մէջ գործող «Սուրբ Միքայել» դպրեվանքը կրկին կեանքի կոչելով պիտի տեղափոխուի Թիլէլի Աթոռանիստ եկեղեցւոյ մօտ: Դպրեվանքը գիշերօթիկ դրութեամբ պատանիներ պիտի ընդունի եւ կրթական ուսման կողքին եկեղեցական-հոգեւոր դաստիարակութեամբ պիտի պատրաստէ զանոնք, հետագային Սուրիոյ երկրորդական ուսումը ստանալէ ետք, պատրաստուած մեկնելու Չմմառի վանք եւ շարունակելու իրենց ուսումը:

ՍՈՒՐԻՈՅ ԶԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԶԱՄԱՅՆՔ

Հովանավորությամբ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան եւ Նախաձեռնութեամբ Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի Պետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեանին 2019-ին պատերազմէն վնասուած համայնքապատկան կեդրոնները վերանորոգման ենթարկուեցան: Ստորեւ կը յիշենք ներառեալ կեդրոնները:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՄ

1923-ին, Հալէպի ալ ճապրիէ թաղամասին մէջ կառուցուած Հայ Աւետարանական Բեթէլ Եկեղեցին անասանօրէն կը շարունակուէր:



Կէ հաւատացեալները իր երդիքին տակ պահելով կատարել իր սրբազան առաքելութիւնը: Սուրիական պատերազմի տարիներու



րուն Բեթէլ Եկեղեցին կործոյալին ներկայութեամբ իր հաւատացեալներուն փորձեց հասնիլ՝ համապատասխան ծրագիրներով եւ գործունեութեամբ: Սակայն պատերազմի տարիներուն Եկեղեցին ահաբեկչական հրթիռակոծումներէն մասնակի վնասներ կրեց: 16 Սեպ-

տեմբեր 2019-ին, Եկեղեցւոյ տանիքը ամբողջովին վերանորոգելու ծրագիրը արդէն ի գործ դրուեցաւ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԻ ԿԱՌՈՒՅՈՄ

24 Սեպտեմբեր 2019-ին համայնքը նախաձեռնեց Բեթէլ Եկեղեցւոյ շրջափակէն



ներս, Համայնքապետարանի շինարարութեան, որ տակաւին ընթացքի մէջ է:

ԲԵԹԷՆ ԲՈՒԺ-ԿԵԴՐՈՆԻ ՆՈՐ ՎԱՅՐԻ ՀԱՅԹԱՅԹՈՄ

Բեթէլ Բուժ-կեդրոնը կը գործեր Եկեղեցւոյ շրջափակէն ներս, Քրիստոնեական Դաս-



տիարակութեան սենեակներուն մէջ: Սակայն 15 Մարտ 2019-էն սկսեալ շինարարական նոր ծրագիրով անոր հայթայթուեցաւ նոր վայր «Ֆաուր» հիւանդանոցին կից գտնուող համայնքապատկան շէնքին մէջ:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՄ

Հայ Աւետարանական Գոլէճ դպրոցի

վերանորոգման աշխատանքները ներառեցին ջերուցիչներու, բաղնիքներու, էլեկտրականութեան ցանցի, գրասեղաններու, կահոյքի եւ դպրոցի ջրհորի նորոգութիւնները:



Նախաձեռնուեցաւ եւ ընթացք առաւ Հայ Աւետարանական Գոլէճ դպրոցէն ներս նոր մարզադաշտի մը կառուցումը:

Հայ Աւետարանական Էմմանուէլ դպրոցի նորոգութիւնը ներառեց նախակրթարանի



աստիճանները, բաղնիքները, էլեկտրական ցանցը, գրասեղանները եւ կահոյքը, երկաթ դռները եւ մանկապարտեզի ցանկապատը:

Հայ Աւետարանական Սուրիանի դպրոցի նորոգման աշխատանքները ներառեցին նոր երկու դասարաններու հաստատում եւ



կահաւորում, բաղնիքներու նորոգութիւն, էլեկտրական ցանցի, գրասեղաններու, կահոյքի եւ նոր համակարգիչի սենեակի դասաւորում:

Հայ Աւետարանական Բեթէլ Երկրորդական վարժարանի նորոգութիւնը ներառեց դասարաններու վերաձեւաւորում, էլեկտրականութեան ցանցի նորոգութիւնը, համակարգիչի եւ տարրալուծարանի սենեակներու նորոգութիւն, գրասեղաններու եւ կահոյքի,



պատուհաններու, առաստաղի եւ ջուրի համակարգի նորոգութիւն:

Համայնքապատկան վեց դպրոցներուն մէջ, ներառեալ Դամասկոսի եւ Քեսապի դպրոցներուն, շինարարական աշխատանքներու կողքին, տարեմուտին ընդհանուր մաքրութիւն եւ պատերու գունազարդում կատարուեցաւ:

ՔԵՍԱՊԻ ԶԶԱԿ ԿԵԴՐՈՆԻ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

Սուրիոյ պատերազմի ահաւոր վիճակէն Սուրիոյ Հայ Աւետարանական համայնքի Քեսապի Զջակ կեդրոնն ալ իր բաժինը կրեց՝ հրթիռակոծումներու ենթարկուելով: Չորս շէնքէ բաղկացած կեդրոնի ջրամբարները, ջերուցիչները եւ այլ կազմածներ վնասուեցան եւ կողոպուտի ենթարկուեցան: Հետեւաբար,



Յուլիս 2018-ին սկսաւ վերանորոգման աշխատանքները, որոնք ընդգրկեցին ջրամբարներու, քանդուած մասերու, էլեկտրականութեան ցանցի եւ այլ կահաւորումի պիտանի նորոգութիւններ:

ՀՅԴ 130-ՎՄԵՎԿ

ԿԻՐՕ ՄԱՆՈՅԵԱՆ. «ԱՅՈ՛, ՊԱՆԸ ԵԿԱԾ Է, ԵՒ ՊԷՏՔ ՉԷ ՅԱՊԱՂԻՆՔ ՉԵՐ ԲՆՈՐՈՇՈՒՄՈՎ՝ ՆԱՅԿԱԿԱՆ ՊԱՆԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՆԱՄԱՆԱՅԿԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ ՄՇԱԿԵԼՈՒ ԵՒ ԱՄՐԱԳՐԵԼՈՒ»

*Հարցազրույցը վարեց
Յարութ Լորտկեան*

Հայ Դատի յանձնախումբերուն վերջին ձեռքբերումները նոր լուսարձակներ բացին Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացին վրայ: Տարեվերջին, մեր ընթերցողները Հայ Դատի յանձնախումբերուն հետապնդած նպատակներուն եւ դիմագրաւած մարտահրաւերներուն իրազեկ դարձնելու համար «Գանձասար» հետեւեալ

«Գանձասար»- Ներկայ ժամանակներու զարգացումներուն լոյսին տակ, ճանաչումի նոր սահմաններ հատած Հայ Դատը ռազմավարական ինչպիսի՞ առաջնահերթութիւններու որդեգրման կը կարօտի:

Կիրո Մանոյեան- Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կողմէ 1944-ին հիմնադ-



առցանց հարցազրույցը ունեցաւ ՀՅԴ Բիւրոյի անդամ, Հայ Դատի եւ քաղաքական հարցերու գրասենեակի ղեկավար Կիրո Մանոյեանի հետ:

րուած Հայ Դատի Յանձնախումբին հիմնական նպատակն էր «*Թրքահայ հողերու կցումը Հայաստանի Հանրապետութեան եւ տարագիր հայութեան վերադարձը հայրենիք*»,

ժամանակի ընթացքին, ան անելի ընդլայնեցաւ, եւ արդէն քառասուն տարիէ ի վեր կը գործէ:

ա.- Ամբողջական Հայաստանի ստեղծում արեւմտեան եւ արեւելեան Հայաստանի հողամասերուն վրայ (Արցախի հարցի արդար լուծումը կը հանդիսանայ Հայ Դատի փուլերէն մէկը):

բ.- Սփիւռքի տարագիր հայութեան համախմբում՝ իր հայրենի հողերուն վրայ:

գ.- Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի կերտում:

Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչումը օրակարգ սկսաւ մտնել 1950-ական թուականներուն, երբ Նոր ուժի մէջ մտած էր ՄԱԿ-ի Յեղասպանութեան ուխտագիրը (convention) եւ երկբեւեռ աշխարհի մէջ կը տիրէր Պաղ պատերազմը: Միաժամանակ, Թուրքիոյ ազդեցութիւնը միջազգային քաղաքական իրականութեան մէջ մեծցած էր եւ անոր կողմէ Հայոց Յեղասպանութիւնը ժխտելու քաղաքականութիւնը Նոր թափ առած էր: Սակայն, ցեղասպանութեան միջազգային ճանաչումը երբեք ինքնանպատակ չէ եղած. մէկ կողմէ նպատակ եղած է միջազգային ճանաչման միջոցով մղել Թուրքիան, որ ինք ալ ճանչնայ ցեղասպանութիւնը. միւս կողմէ՝ նպատակ եղած է միջազգային հանրային կարծիքը պատրաստել Հայկական Յեղասպանութեան համար հատուցումներու հարցը բարձրացնելու: Մենք արդէն հատուցման հարցով տարբեր բնոյթի նախաձեռնութիւններ առած ենք 2007-էն սկսեալ: Պէտք է շեշտել, որ թէեւ յաճախ երբ հատուցում կ'ըսենք տպաւորութիւն կը ստեղծուի, որ այդ կը վերաբերի իրաւական դաշտին, բայց հատուցումը միայն իրաւական միջոցով չէ որ կը հետապնդուի, այն նաեւ, ես կ'ըսէի առաւելաբար՝ քաղաքական գործընթաց է, որ կրնայ ընդգրկել նաեւ իրաւական-դատական քայլեր:

Հայոց Յեղասպանութեան 100-ամեակը եւ Միացեալ Նահանգներու օրէնսդիր մարմիններուն կողմէ վերջերս որդեգրուած բանաձեւերը ստեղծած են բաւարար քաղաքական յենարան, որ բարձրաձայնեք հատուցման հարցերը: Արդէն, 2015-ի Համահայկական հռչակագիրը կ'ուրուագծէր հայութեան իրաւունքներուն եւ պահանջներուն շրջանակը՝ «անհատական, համայնքային եւ համազգային իրաւունքներ»: կը մնայ ամբողջացնել այդ

գծով ուսումնասիրութիւնները եւ համախոհութիւն ու դերերու բաժանում կատարել, որպէսզի գործուն կերպով, բոլորս միասին առաջ տանինք այդ աշխատանքը:

Բնականաբար, պէտք է շարունակել նաեւ Յեղասպանութիւնը ճանչնալու, անոր մասին դասաւանդելու, անոր ժխտումը քրեականացնելու ուղղութեամբ աշխատանքներ, հոն ուր այս բոլորին կարելիութիւնները կան:

«Գ.»- Տարեվերջին ուշագրաւ երկու իրադարձութիւններ Նոր թափ եւ շունչ հաղորդեցին հայ դատի աշխատանքներուն, առաջինը՝ ԱՄՆ-ի ներկայացուցչական պալատին կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչումը ամրագրող թիւ 296 բանաձեւին ընդունումն էր, երկրորդը՝ ՀՀ-ի կազմակերպած Հայ Դատի դրամահաւաքի ձեռնարկին համահայկական հնչեղութիւն ունեցող խօսքերն էին՝ ՀՀ նախագահին, երկու կաթողիկոսներուն եւ ՀՀ-ի կողմէ: Ձեր կարծիքով եկա՞՞ծ է պահը ամրագրելու Հայկական Պահանջատիրութեան համահայկական օրակարգը:

Կ.Մ.- Այո, պահը եկած է եւ պէտք չէ յապաղինք, ձեր բնորոշումով՝ Հայկական պահանջատիրութեան համահայկական օրակարգը մշակելու եւ ամրագրելու: Ըսի արդէն, որ 2015-ի Համահայկական հռչակագիրը ուրուագծած է այդ, բայց տակաւին բաւական աշխատանք կայ կատարելիք, որպէսզի ունենանք ամբողջական թղթածրար թէ ի՞նչ, ե՞րբ, ո՞ւր, ի՞նչպէս պիտի պահանջենք, եւ ո՞վ պիտի պահանջէ: Այստեղ բոլորս ալ ընելիք ունինք, եւ՝ միասին: Այս գործը մէկ կազմակերպութեան եւ կամ միայն պետութեան գործը չէ. անհրաժեշտ է միասին աշխատիլ:

«Գ.»- Մեր երիտասարդ սերունդը որքանո՞վ ներգրաւուած է Հայ Դատի աշխատանքներուն մէջ: Արդի աշխարհին մէջ, քաղաքական եռուն զարգացումներով յագեցած այս տարիներուն, ինչպիսի՞ մասնագիտութիւններու պէտք է ուղղել Հայ Դատի զինուորագրեալ մեր երիտասարդները, որպէսզի անոնք պատրաստ ըլլան ժամանակի փոփոխութիւններուն արձագանգելու մարտահրաւերին:

Կ.Մ.- Ըսինք արդէն, որ Հայ Դատի աշխատանքներուն նպատակն է «Ամբողջական Հայաստանի ստեղծում», ինչ որ կ'ենթադրէ աշխատանքի շատ լայն ծիր, սկսեալ Հա-

յաստանի Յանրապետութիւնն ու Արցախի Յանրապետութիւնը ամէն առումներով հզօրացնելէն մինչեւ Սփիւռքի մէջ հայապահպանում եւ Սփիւռքի առաւել քաղաքականացում եւ կազմակերպութիւն: Յետեւաբար, հայ երիտասարդութեան առջեւ աշխատանքի շատ լայն դաշտ կայ՝ մասնակցելու Յայ Դատի աշխատանքներուն: Յայաստանի եւ Արցախի հանրապետութիւնները միացեալ Յայաստանի հիմքն են, այդ պատճառով ալ պետք է ըլլան հզօր, թէ՛ տնտեսապէս, թէ՛ ժողովրդագրական պատկերով, թէ՛ ժողովուրդպետութիւն կապի ամրապնդումով, թէ՛ ռազմականօրէն, թէ՛ գիտութեամբ, ամէ՛ն, ամէ՛ն առումով: Եթէ նկատի ունիք Յայ Դատի աւելի նեղ՝ քաղաքական, յարաբերական եւ իրաւական աշխատանքները, ուրեմն պիտի արձանագրենք, որ այդտեղ եւս շատ մեծ դեր ունի հայ երիտասարդութիւնը. այս ուղղութեամբ անհրաժեշտ են ե՛լ իրաւագետներ, ե՛լ պատմաբաններ, ե՛լ քաղաքական-յարաբերական աշխատանք տանելու ատակ երիտասարդներ՝ լեզուներ գիտցող, փորձառութիւն ձեռք բերելու պատրաստ: Ուաշինկթընի եւ Պրիւքսելի Յայ Դատի գրասենեակները արդէն աշխատանք կը տանին երիտասարդներու պատրաստութեան համար: Իրաւագետներ, պատմաբաններ, թրքագետներ, օսմանագետներ պատրաստելու գործը հիմնականին մէջ պետք է տանին բարձրագոյն ուսումնական հաստատութիւնները եւ պետք է ի հարկին օգտուիլ նաեւ արտասահմանի նման հաստատութիւններու հնարաւորութիւններէն: Յայրենիքի թէ Սփիւռքի մէջ միշտ կարիք կայ լաւ ուսուցիչներու, որպէսզի սերունդ պատրաստեն: Կարիք կայ հայկական տարբեր կառոյցները հզօրացնելու համար ատակ երիտասարդներու: Այնպէս որ իսկապէս դաշտը շատ լայն է. կարելորդ՝ երիտասարդները պատրաստ ըլլան տարբեր ոլորտներու մէջ մասնագիտանալու, իսկ հայկական, պետական թէ այլ կառոյցներն ալ՝ երիտասարդներուն գործելու հնարաւորութիւն, աշխատանքի ասպարեզ տրամադրելու:

«Գ.»- Սուրիոյ տագնապի զարգացումներուն մէջ ակնառու էր Թուրքիոյ իրահրիչ դերը: Զեր կարծիքով թրքական գործօնը որքանով վտանգ կը ներկայացնէ տեղւոյն հայութեան գոյատեւման համար, յատկապէս եթէ նկատի ունենանք, որ սուրիահայութիւնը Յայ

յոց Յեղասպանութենէն ճողոպրած, Արեւմտեան Յայաստանի ու Կիլիկիոյ հոգեւոր ծառանգութիւնը պահպանած ու իր ժողովուրդի իրաւունքներու վերականգնումին դատին նուիրուած համայնք մըն է, ու թէեւ թիւով նօրացած, բայց վերականգնումի աշխատանքներով տակաւ ոտքի կանգնած է:

Կ.Ս. - Թուրքիան, առաւել եւս վերջին տարիներուն, իսկապէս անվտանգութեան սպառնալիք է իր անմիջական դրացիներուն՝ ներառեալ Յայաստանին: Սուրիոյ պարագային, Թուրքիոյ կործանարար դերակատարութիւնը արդէն իրականութիւն է. Սուրիա ներխուժումով, Թուրքիան արդէն կը հարուածէ ոչ միայն Սուրիոյ պետութիւնը, այլ նաեւ սպառնալիք է այնտեղ ապրող հասարակութեան բոլոր հատուածներուն, ներառեալ՝ հայութեան: Անցնող տարիներուն Զեսապի եւ Յալեպի հայաբնակ թաղամասերու դէմ ծախօթ դէպքերը Թուրքիոյ այդ թշնամական քայլերուն վկայութիւնն են: Սակայն, Սուրիոյ հայութեան, եւ ընդհանրապէս հայութեան երբեմն հրապարակային, երբեմն ոչ-հրապարակային արձագանգը այդ քայլերուն, ինչպէս նաեւ ընդհանրապէս շատ մը պետութիւններու մօտ Թուրքիոյ նկատմամբ ստեղծուած քաղաքական բացասական կեցուածքները՝ որպէս հետեւանք Թուրքիոյ կողմէ Սուրիա ներխուժումին, կը վկայեն այն մասին, որ Թուրքիան այդքան ալ ազատ չէ Սուրիոյ դէմ եւ Սուրիոյ մէջ իր շարժումներուն գծով: Միաժամանակ, Սուրիոյ իշխանութիւններուն ու իրենց դաշնակիցներուն քայլերը եւս կը վկայեն, որ Թուրքիան չի կրնար անարգել շարժիլ Սուրիոյ մէջ եւ դէմ: Անշուշտ, առաջնահերթ խնդիր է Սուրիայէն թրքական ուժերուն դուրս բերելը: Եւ ինչպէս արդէն դուք իրաւամբ հաստատեցիք, Սուրիոյ հայութիւնը այս տագնապին մէջ ցոյց տուաւ եւ կը շարունակէ ցոյց տալ իր կենսունակութիւնը: Վստահ եմ, այդ կեցուածքին պիտի շարունակէ նեցուկ կանգնիլ համայն հայութիւնը՝ Յայաստանի Յանրապետութենէն մինչեւ Սփիւռքի բոլոր անկիւնները:

Ամանորի առիթով, ամբողջ հայութեան, եւ այս պարագային՝ յատկապէս Սուրիոյ հայութեան կը մաղթեմ խաղաղութիւն եւ բարեկեցութիւն, որպէսզի առաւել մեծ թափով ու նպատակասլացութեամբ շարունակենք առաջ տանիլ մեր համազգային մարտահրաւերները յաղթահարելու գործը:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՈՒԺՆ ՈՒ ՊԱՏՄԱԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՆՊԱՐԱԳԻԾ ՎԱՍՏԱԿԸ

Խաչիկ Շահինեան


Թէեւ ՅՅ Դաշնակցութիւնը ծնաւ երեւոյթները խորագացող, խորաչափող եւ ապագան նախատեսելու ու զայն տեսլականով օժտելու ընդունակ մտաւորական բարձրագոյն խաւի մը երկունքէն, սակայն անոր վիճակուեցաւ բացառիկ բախտը ըլլալու բոլոր խաւերուն կուսակցութիւնը: Հայրենի հողին թէ օտար ափերուն վրայ հայրենիքի կարօտով տանջահար մարդիկ մէկ օրէն միւսը Դաշնակցութեան մէջ զգացին իրենց խորագոյն եութեան թէ իրաւ ինքնութեան արտայայտութիւնները եւ փութացին իրենց ճակատագիրը կապելու գաղափարական այս շարժումին հայաշունչ եւ մարդկայնաշունչ առաջադրանքներուն: Կար բռնագրաւուած հայկական հող մը, որ իր տիրոջ տիրական յայտնութեան կը սպասէր, այդ հողին վրայ կար հոգեպէս եւ ֆիզիքապէս հարստահարուած հայ ժողովուրդ մը, որ այլեւս պէտք է նուաճէ՛ր կորուսեալ արդարութիւնը. հայութեան սրտին բացուած էր հազար վերք եւ հազար այդ վերքերէն առաջացած էին բազմահազար կսկըծանքներ, որոնց ձայնը եղաւ Դաշնակցութիւնը, եղաւ հայութեան պատմական իրաւունքներու վերատիրացման հնչեղ կոչը, մարդկային արժանապատուութեան արևակարմիր այնպիսի աղաղակ մը, որ մոգական ոգոտանքի մը պէս հնչեց եւ արձագանգեց նոյն վերքերով խոցուած, արդարութեան նոյն պապակով տոչորող, նոյն կարօտով տենդահար բոլոր հոգիներու մէջ եւ հայկազուն այդ հոգիները իրարու քով բերելով, միագանգելով կռանեց ցեղին միաձոյլ կամքը:

Գաղափարական նորայայտ այս շարժումը շատ կարճ ժամանակամիջոցի մը մէջ հարթեց, շնչեց իր դրօշին տակ խմբուած

մարդոց բոլոր տարբերութիւնները, տարիքի, սեռի, մտքի, ինչքի, դասակարգերու եւ այլ տեսակի զանազանութիւնները եւ բոլորին տրա-

“Մեր ուղղութիւնը պարզ էր՝ ծառայել մեր ժողովրդին, թեթևացնել նրա կրած ծանր բեռը, բանալ նրա աչքերը, կուլիլ նրա կեղեքողների, խաբողների դէմ: Սակայն կեանքի հրապոյրները մեծ էին, իսկ ազատութեան ճանապարհը փշոտ...”

Սիմոն Զաւարեան
-Յանգ- - Թիֆլիս, 1906 թ.



մարդութիւնը, ուշադրութիւնս ու կամքը լարեց նոյն ուղղութեամբ, սխրալի դարձուց ապրելու եւ մեռնելու նոյն ոճը, դաշնակցական ոճը: Այսպէս, քով-քովի եկան, դաշնակցեցան եւ Դաշնակցութիւն կազմեցին մտաւորականը՝ անուս մարդուն հետ, հողամշակը՝ մշակոյթի ներկայացուցիչին հետ, հարուստը՝ աղքատին հետ, զինուորականը՝ վարժապետին հետ, վանականը՝ անիշխանականին հետ եւ բանաստեղծը՝ անլեզու կեղեքեալին հետ. ծերունին եկաւ՝ ցուպը ձեռին, կինը եկաւ՝ իր ամուսինը կռիւի ճամբելու ստիպումով, աղջիկը եկաւ՝ քնքոյշ կեանքը ծանր համարելով իրեն համար, եկան բոլորը՝ թունդ-թունդ ելած սրտերով, վերք տալ-ստանալու յանձնառութեամբ եւ վճռականութեամբ, հայրենիքի ազատութիւնը տեսնելու-մեռնելու անզուսպ տենչանքով, անկախութեան անմար, անյագ պապակով:

Իրաքանչիւր հայ, իր մէջ կուտակուած

դարաւոր զրկանքներու եւ հասունցած տառապանքի խմորումներով վերածուած էր յեղափոխութեան հանքի մը, որը հայութիւնը հրաբուխ մըն էր, որուն յայտնութիւնը ըրաւ Դաշնակցութիւնը, տարերային ուժին ելք ու ձեւ տուաւ, ընդդէմ կարողութիւններն ու հրայրքը թռիչքով օժտեց եւ յախուռն խառնուածքները գետեղեց նպատակասլաց հունի մէջ:

Հայ մարդը, այսպէս, ենթարկուեցաւ յանկարծական այլակերպութեան մը, կախարդական պայծառակերպումի մը, ո՛չ մէկուն հոգիին մէջ նստած մնաց երեկուան ճակատագրապաշտը, տարբեր նկարագիր մը պարզեց հանդիպողին առջեւ գլուխ ծռող հպատակը, իրենց ազգային եւ մարդկային իրաւունքներուն ամէնօրեայ փլուզումը համակերպումով դիտող խլեակներուն մէջ խլըրտաց նոր զօրութիւն մը եւ սակաւութիւններ միայն խլեակ մնացին, ստուարութիւններ աւելի՛ մարդացան, աւելի՛ հայացան, արիացան եւ առնականացան, ներքին յեղաշրջումով ու վերափոխութեամբ մաքրեցին իրենց հոգիներուն նստած ստրկութեան ժանգը եւ վերափոխումը ընդհանրացաւ բոլոր բնագաւառներուն վրայ, թէ՛ մարտական սիրանքի եւ թէ՛ մտաւորական սլացքի ճակատներուն վրայ, հազուադէպ ներդաշնակցութեամբ եւ դաշնակցութեան առաջնորդութեամբ:

Օսմանեան կամայապետութեան բուրբ եւ կեղեքիչ դանակը հասած էր հայութեան ոսկորին, եւ այլեւս վերապրումի ոչ մէկ ելք կը մնար հայ ժողովուրդին, բացի Դաշնակցութեան մատնանշած ուղիէն՝ ապստամբութենէն:

«Ռայեա» կոչուած հայը, դարերու անխօս, անմռունչ ստրուկը վերջապէս արթնցաւ իր գերութեան թմբիւրէն եւ ուզեց ցոյց տալ աշխարհին, որ ինք անարգ արարած մը չէ, այլ արժանապատուութեան տեր մարդ-եակ մը, եւ, ինչպէս Հայ Յեղափոխութեան Պատմահայրը եւ ՀՀ Դաշնակցութեան Խորենացին՝ Միքայէլ Վարանդեանը վաւերագրած է, յեղափոխուած այդ ստրուկը, ի լուր բովանդակ աշխարհին, գոչեց. *«Կ'ապստամբիմ, ուրեմն կա'մ»...*

Այսինքն՝ կ'ապստամբիմ, ուրեմն կը գոյատեւեմ...

Այլ խօսքով՝ կ'ապստամբիմ, ուրեմն կը գոյատեւեմ մարդկօրէն եւ հա՛յօրէն:

Բայց ո՞ր է գաղտնիքը այս վերափոխութեան:

Եան: Այդ ինչպէ՞ս եղաւ, որ երեկուան ստրուկները դարձան ասպետներ, եւ ճիտը ծածու անտրտուն «ռայա»ներէն այդքան արագ կերպով կազմուեցան ֆիտայական խումբեր, կուսակցական եւ հասարակական գործիչներու ժրաջան պարսեր եւ ազգային ազատագրական բանակ:

Ո՞ր է գաղտնիքը մարդակերտումի, հայակերտումի եւ հայրենակերտումի այն եռեակ նուաճումներուն, որոնց միահիւսումով Դաշնակցութիւնը հոյակերտեց նոր ժամանակներու հայ ժողովուրդի դիւցազնական վերածնունդը, ինքնացման եւ հայրենացման տարերային բայց նպատակասլաց բարեշրջումը: Ո՞ր է գաղտնիքը...

Գաղտնիքը, առաջին հերթին, Գաղափարի ուժին մէջ կը կայանայ անկասկած: Ա՛յն կենսատու եւ ճառագայթող գաղափարին, որ Հայ Յեղափոխութիւնը նախապատրաստող առարկայական գործօններու իբրեւ լրացուցիչ, եկած էր վայելչօրէն կամարուելու եւ տիրապետելու հայ մարդոց ենթակայական աշխարհին վրայ:

Հայ ժողովուրդի վերափոխման մէջ Դաշնակցութեան Գաղափարի ուժին չափ հիմնական, նոյնքան շինիչ տեղ ունի նաեւ գաղափարական այս շարժումի հիմնադիրներուն եւ սկզբնական շրջանի ղեկավարներուն նկարագրին եւ գործելակերպին վարակիչ օրինակը, այսինքն՝ դաշնակցական մարդու բարոյական ա՛յն տիպարը եւ դաշնակցականի այն խառնուածքը, որոնք ուրիշ բան չէն եթէ ոչ Զրիստափորի, Չաւարեանի, Ռոստոմի եւ անոնց անմիջական շունչէն ներշնչուած բազմահարիւր տիպարներու յաւերժացումը՝ իրարայաջորդ սերունդներու բնական հաղորդութեամբ: Ամէն մէկ նահատակի, ամբողջական եւ անսակարկ ինքնանուիրման իւրաքանչիւր կենդանի օրինակի, հերոսական իւրաքանչիւր խոյանքի հետ՝ հետզհետեւ բարձրացաւ դաշնակցութեան բարոյական վիթխարի շէնքը: Դիզուեցաւ պատմաբարոյական անչափելի վաստակ՝ իբրեւ մնայուն եւ անքայքայելի ներշնչարան, իբրեւ մարդակերտ ու տիրապարկերտ սրբութիւն՝ դաշնակցական յաջորդական սերունդներուն համար:

Մարդակերտումի գծով Դաշնակցութեան իրագործած նուաճումին մէջ ընդգծելին եւ ուսանելին այն ճշմարտութիւնն է, զոր իբրեւ առաջնորդող սկզբունք կենսագործեցին Դաշնակցութեան հիմնադիր թէ յաջորդական սե-

րունդներու ղեկավարութեան ընտրանիները: Ա՛յն փորձարկուած եւ պայծառատես ճշմարտութիւնը, ըստ որուն, քարոզչական տասնեակներով հատորներ եւ բոցեղէն ճառեր, ամբողջ սերունդներ յեղափոխելու ուղղութեամբ չեն կրնար տալ այն արդիւնքը, զոր կարելի է առաջացնել ղեկավարներու անձնական կենդանի օրինակով: Եւ այդպիսի օրինակներ պակասած չեն դաշնակցական սերունդներուն: Այսպէս, անկուն հաւատքի եւ անմնացորդ ինքնանուիրման ապրող օրինակ եղաւ ինքը՝ Զրիստափո՛րը, որ ոչ միայն անձամբ գլխաւորեց Սուլթանի ահաբեկումը եւ Իզմիրի դաւադրական ձեռնարկները կազմակերպելու կոչուած Ցուցական Մարմինը, այլ նաեւ անձնապէ՛ս տարաւ գործնական բազմաթիւ աշխատանքներ, որոնց կարգին՝ Սոֆիայի ռումբերու փորձարկումը, ինչ որ դաշնակցութեան արժեց իր գլխաւոր հիմնադիրին եւ գերագոյն հեղինակութեան կեանքը: Իր կարգին՝ Գաղափարապաշտ նուիրումի, բարոյական անբասիր դիմագծութեան, պարկեշտութեան եւ խոնարհութեան օրինակելի կատարելութիւն եղաւ Չաւարեանը, որ թէեւ չեղաւ վտանգաւոր ձեռնարկներու մարդը, կամ մարտի մէջ չնահատակուեցաւ, բայց ամբարիշտներն ու զեղծարարները վտարեց Դաշնակցութենէն, իր անձին նկատմամբ միշտ ըլլալով նոյնքան խստապահանջ՝ որքան ուրիշներու: Եւ իր կուսակցութեան վրայ նուազագոյն չափով բեռ չդառնալու համար, ընկերային այս Նազովրեցին գիւղէ գիւղ հետիոտն շրջեցաւ, կամ Պոլսոյ մէջ ուսուցչական մաշեցնող պաշտօններ ստանձնեց, դանդաղ շիջումի գնով:

Իսկ Ռոստոմը եղաւ Դաշնակցական գործելակերպի տեղատուութիւն չճանչցող անճշկելի կամքի, աշխուժութեան եւ ուժականութեան անզուգական այն տիպարը, որ հո՛ն էր միշտ, ուր գործ կար ու պայքար եւ որուն անունին կապուած է դաշնակցութեան առաջին երեսնամեակի գործերուն մէկ կարելոր մասը, սկսելով «Դրօշակ»ի խմբագրութենէն եւ անցնելով եկեղեցական կալուածներու գրաման ցարական որոշումին դէմ համաժողովրդական ցոյցի կազմակերպումէն, հասնելու համար Բագուի հերոսամարտին, ներառեալ ուրիշ բազմաթիւ մեծակշիռ ձեռնարկներ: Հիմնադիրներու ընդմիշտ խոռովիչ օրինակներով, բարոյականութեան եւ նուիրումութեան մարմնացումներ բնաւ պակասած չեն դաշնակցական սերունդներուն եւ անձըն-

դիր այդ տիպարներու ստուար մասը միշտ ալ եղած է առնուազն Կեդրոնական Կոմիտէի մը կամ Պատասխանատու Մարմնի մը անդամ, հայդուկապետ կամ զօրապետ, նահատակուած է պարտականութեան ճամբուն վրայ, կռուի մը ընթացքին կամ թրջական բանտի մը բակին մէջ կախաղան բարձրացած: Ահա թէ ո՛ւր է Դաշնակցութեան մարդակերտումի առաքելութեան գլխաւոր լծակը:

Դաշնակցութեան առաջին երեսնամեակի դիւցազներգութիւնը դաշնակցական մարդու ինքնուրոյն եւ պատուաբեր տիպարի կողքին՝ վերակերտեց նաեւ հայու տիպարը, այս տիպարին դրական բովանդակութեան պարփակած բոլոր ստորագելիներովը: Դաշնակցութեան վերափոխիչ շունչով վերստին շունչ առաւ իր մարդկային եւ ազգային իրաւունքներուն գիտակից, անոնց պահանջատեր, անոնց համար ի հարկին կռուիլ եւ մեռնիլ գիտցող հայը:

Հայաստանի Հանրապետութեան դաշնակցական իրարայաջորդ կառավարութիւններուն կողմէ թափուած լեզուական, հոգեկան եւ մշակութային հայացման ճիգերու դրական արդիւնքը ինքնին, երբ նկատի կ'ունենանք յատկապէս կարճ տեւողութիւնը անկախութեան ժամանակաշրջանին, հայակերտումի առանձին եւ գնահատելի վաստակ մըն է: Քաղքէնի ժողովուրդը, մասնաւորապէս պաշտօնեութիւնն ու սպաները, որոնք կարելոր մասով տակաւին ռուսախօս էին եւ ռուսական մշակոյթով ու մտածողութեամբ սնած, տոգորուած էին, իրենց վերահայացման արագ եղելոյթը կը պարտին որքան սեփական եւ անկախ հայրենիքի ստեղծման խանդավառութեան, նոյնքան ալ՝ այդ օրերու պետական օրէնքներու վերահայացման ուղղութեամբ գործադրուած շնորհակալ ճիգերուն եւ խստապահանջութեան:

Այլապէս հետեւողական բծախնդիր եւ երկարատեւ եղան ԶՅ Դաշնակցութեան հայակերտումի ճիգերը՝ սփիւռքեան ժամանակաշրջանին: Օտար, յաճախ շլացուցիչ եւ այլասերիչ միջավայրերու մէջ անտեղիտալի յամառութեամբ մը ազգային դիմագծութեան անաղարտ պահպանման եւ ազգային մշակոյթի բիւրեղացման ու զարգացման ի խընդիր ծաւալած հայկական կազմակերպութիւններու եւ միութիւններու համագազային ջանքերը միայն պատիւ կը բերեն քաղաքակիրթ ոեւէ ժողովուրդի:

Լեզուական, մշակութային եւ ազգային, գաղափարական համընդհանուր այդ պայքարին մէջ, Դաշնակցութիւնը ունի իր պատուոյ տեղը: Անոր նախաձեռնութեամբ եւ մղումով գործած են ու կը գործեն ազգային մարմիններ, դպրոցական ցանց, մամուլ եւ քարոզչութիւն, գաղափարակից եւ ուղեկից կազմակերպութիւններ, ուսանողական եւ երիտասարդական միութիւններ: Ան կը մնայ գլխաւոր դրօշակիրն ու ռահվիրան համախումբ կեանքի եւ հայեցի անխարդախ մթնոլորտի, մայուն պահանջի վերածելով այս գծով իր առաջադրանքները: Եւ այս բոլորը՝ հայրենագուրկ վիճակի, բոլորովին տարբեր միջավայրերու մէջ ցրուածութեան, ուժացնող մթնոլորտի, տնտեսական, քաղաքական եւ այլ բազմապիսի դժուարութեանց ու խոչընդոտներու ամէնօրեայ սպառող, վիատեցնող իրականութեան մէջ: Հայակերտումի մաշեցնող եւ ապերախտ այս մաքառումը, զոր, անյարիր յորջորջումով մը յաճախ կոչած ենք «հայապահպանում» կամ «ազգապահպանում» տափակ եւ անուժական եզրերով, տեւաբար ծաւալած է եւ կը ծաւալի հայոց պատմութեան շրջադարձային ազատամարտերու ներքին այն սրբազան արբեցումով եւ խթանիչ այն տազնապանքով, որոնք անբաժան յատկանիշները եղած են դաշնակցական իւրաքանչիւր արարքի եւ իրագործումի: Ահա այսպէս ընթացաւ եւ կը շարունակէ ընթանալ Դաշնակցութեան հայակերտումի նուիրական առաքելութիւնը:

Հայակերտումի անհրաժեշտ յենարանն ու պատուանդանը պիտի ըլլար հայրենակերտումը, անկախ պետականութեան հաստատումը: Արդարեւ, մեր ազգային ժամանակակից իրականութիւնն ու պայմանները բոլորովին պիտի ըլլային եւ շա՛տ անելի բացասական ու դժբախտ բովանդակութիւն պիտի ունենային, եթէ 1918-ի Մայիսեան առաւօտ մը, Հայ Յեղափոխութեան շղթայազերծած եւ ՀՀ Դաշնակցութեան ղեկավարած ազգային ազատագրական պատերազմը յանգած չըլլար պատահ մը Հայաստանի անկախութեան: Բայց մանաւանդ, իր իսկական բովանդակութեան պարպուած եւ իր հիմնական խարիսխէն զրկուած պիտի ըլլար հայակերտումը՝ առանց հայրենակերտումի:

Արցախեան ազատամարտէն ու Հայաստանի վերանկախացումէն ետք Դաշնակցութեան գործը բազմապատկուեցաւ, զայն դնե-

լով նորանոր մարտահրաւերներու եւ յաւելեալ պարտաւորութեանց առջեւ:

Դաշնակցութեան հետեւողական ջանքերուն շնորհիւ Հայոց Յեղասպանութեան հարցը բաժին դարձաւ Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան: Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, որ Հայասպանութեան հարցի հետապնդումը մեր երկրին ապահովեց միջազգային ճանաչողութիւն, վարկ եւ ազդեցութիւն:

130-ամեայ ՀՀ-ն այսօր լծուած է հայրենաշինութեան, Արցախի անկախութեան ամրակայման, ջաւախքահայութեան տարրական իրաւունքներու ձեռքբերման, սփիւռքահայ գաղթօճախներու յանձանձումին, նորահաս սերունդներու ազգային ինքնութեան պահպանման... բազմաբնոյթ եւ բազմաշերտ աշխատանքներուն: Դաշնակցութեան խօսքը պայմանաւորուած է կենդանի գործով, վճռականութեամբ եւ հիմնաւոր համոզումով:

Դաշնակցութիւնը սոսկական կուսակցութիւն չէ, այլ իր ընդհանրութեան մէջ նոյնինքն ազգի խտացումն է, որ դարաւոր գերութենէ ետք հայութեան վերադարձուց իր ազգային, բարոյական, քաղաքական եւ մշակութային ճշմարիտ դիմագիծը, անաղարտ նկարագիրը:

ՀՀ Դաշնակցութիւնը իրեն յատուկ անվրկանդ հաւատքով ցայսօր կը շարունակէ իր պայքարը, տեւաբար վերանորոգելով հայ ժողովուրդի ամբողջական ազատութեան եւ Հայաստանի ամբողջացման համար կատարած իր ուխտը: Անխախտ համոզումով ան սփիւռքահայ զանգուածները հետզհետէ աւելիով եւ բոլոր խաւերով ու կազմակերպութիւններով մասնակից կը դարձնէ նուիրական այս պայքարին, այն յանկուցիչ հեռանկարով, որ հաւաքական կամքով գօտեպինդ այսօրուան հայութիւնը ապագայ սերունդներուն համար պիտի կարենայ հարթել հայրենիք վերադարձի, հայրենական հողի ամբողջացման եւ հզօր Հայաստանի կառուցման, յաւերժատեսիլ ճանապարհը:

ՀՀ Դաշնակցութիւնը եղած է ու կը մնայ մտքի, խռովքի, ազնիւ կիրքի, խստապահանջ եւ իտեալապաշտ մարդոց հաւաքականութիւն ու պիտի շարունակէ ապրիլ, տազնապիլ, զոհաբերել ու գործել ազգային ամբողջական յանձնառութեամբ, անջնջելի իր դրոշմը դնելով հայ կեանքին վրայ:

ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ ՆՈՐԱԶԱՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՅՍՕՐՈՒՄԱՆ ԺԽՈՐԻՆ ՄԷՋ

Վաչե Բրուտեան

Սկսինք հիմնականէն, սկիզբէն:

Նորագատականութիւնը դրամատիրական համակարգի նորագոյն գաղափարախօսական «գիւտ»ն է: Դրամատիրութիւնը միշտ ձգտած է հարստութեանց անյագ կուտակումին: Այդ հարստութիւնը կրնայ կանխիկ դրամի ձեւով ըլլալ, կրնայ նաեւ յառաջանալ բնական պաշարներով՝ քարիւղով, բնական կազով, հանքային զանազան պաշարներով (մետաղներ եւ այլն), առանց մոռնալու... ջուրը:

Բանակներով գաղութատիրութիւնը, ճնշումը, զինուորական գրաւումը, մէկ խօսքով՝ բռնամիջոցներու օգտագործումը այսօր միակ ձեւը չէ այլ ժողովուրդներու հարստութիւններուն տիրանալու համար:

Կան նաեւ «խաղաղ» միջոցներ, որոնք առաւելաբար կ'առնչուին գաղափարներու, այսինքն՝ մարդկային համընդհանուր գաղափարներ շահագործելով, կամային կերպով զանոնք մեկնաբանելով: Այս գաղափարներէն են ժողովրդավարութիւն, մարդկային իրաւունքներ՝ խօսքի, խղճի եւ մամուլի ազատութիւն, կենսոլորտի պաշտպանութիւն եւ այլն:

Մէկ խօսքով, հարստութեան կուտակումի ձեւերը կրնան փոխուած ըլլալ ըստ պահու կամ պարագայի, սակայն նպատակը չէ փոխուած:

Համամարդկային վերոնշեալ բոլոր ազնիւ գաղափարները կեանքի վերածելու համար, մարդկային հասարակարգը դիմած է յեղափոխութիւններու, քաղաքական անդուլ պայքարներու: Շատ յաճախ ալ մեծ գին վճարելով այս ազնուագոյն գաղափարները, իտեալները կեանքի վերածելու համար: Բոլորս ալ գիտենք եւ օրինակներ տալու կարիքը

չկայ հոս:

ՀՀ Դաշնակցութիւնը, իր կարգին, մեր ժողովուրդի պատմութեան վերջին անելի քան 130 տարիներուն ընթացքին, ինք եւս մղած է



այս պայքարը՝ յանուն հայութեան ազատագրումին, ֆիզիքական ապահովութեան, իրաւունքներու տիրացման եւ բարգաւաճման: Մեր պայքարը այսօր եւս կը շարունակուի:

ԺԽՈՐԸ ԵՒ ԱՆՈՐ ՆՊԱՏԱԿԸ

Եւ ուրեմն, Արեւմուտքը, իբրեւ յառաջապահը դրամատիրական կարգերուն, իր նպատակներուն հասնելու համար, տասնամեակներու ընթացքին արդէն իսկ ստեղծած էր իր լծակները՝ զինուորական (ՆԱԹՕ), ելեւմտական (Համաշխարհային դրամատուն, Սիջազգային Դրամական Հիմնարկ (ՄԴՀ), դրամատնային փոխանցումներու SWIFT դրութիւն) եւ մանաւանդ՝ քարոզչական (թերթեր, լսատեսողական սփռումի կայաններ, ընկերային ցանցեր, կայքէջեր եւ այլն):

Հարստութեան կուտակումի համար, դրամատիրական աշխարհը, հոն ուր կարիքը

կար, չվարանեցաւ դիմելու զինուորական միջոցներու. ինչպէս Իրաք, Լիպիա, Սուրիա, Եմեն եւ այլն: Սակայն այս զինուորական քայլերուն նախորդեց քարոզչական այնպիսի աղմուկ-աղաղակ մը, զոր դժուար էր կասեցնել:

Այսօր, Նորագատականութեամբ «զինուած» դրամատիրական հասարակարգը ամբողջ աշխարհը կը նկատէ մեծ «շուկայ» մը պարզապէս, ուր կարելի է գնել (շատ յաճախ ալ պարզապէս կողոպտել) այլ երկիրներու-ազգերու բնական հարստութիւնները ու անոնց վաճառել իրենց արտադրութիւնները՝ սննդեղէնէն սկսեալ մինչեւ համակարգիչներ եւ այլն:

Նորագատականութեան համար գոյութիւն չունին ազգային-մշակութային առանձնայատկութիւններ, չկան հոգեմտաւոր արժեքներ, չկան Նարեկացի կամ Շէյքսպիր, չկան, պէտք չէ գոյութիւն ունենան ազգ-պետութիւններ ու սահմաններ: Աշխարհը պէտք է համահարթեցուած «շուկայ»ի վերածել, որպէսզի դիրանայ դրամազլուխի ու հարստութեան կուտակուիմը:

Մրցակիցներ... Ռուսիա՞ն, Չինաստան՞ը: Անո՞նք եւս պէտք է դուրս մղուին, որպէսզի չփորձեն անարին տիրութիւն ընել: Ասկէ կը բխի նաեւ Ռուսիան ՆԱԹՕ-ի երկիրներով շրջապատելու, անոր ազդեցութեան գոտիները «նեղցնելու» Արեւմուտքի քաղաքականութիւնը: Ասկէ նաեւ՝ Յայաստանէն ռուսական ռազմախարիսխը դուրս հանել փորձելու Արեւմուտքի ծածուկ ու բացայայտ ճիգերը, իրենց տեղական մանր-մունր գործակալներուն միջոցով:

Իսկ եթէ կան դիմադրողներ, անոնք պէտք է պարզապէս վերացուին ու փոխարինուին իրենց կամակատարներով: Մտաբերեցէք, թէ ի՞նչ պատահեցաւ Պրագիլի մէջ Տիլմա Ռուսէֆի պարագային, կամ Պոլիվիոյ մէջ Էւօ Մորալեսին:

Փակագիծ.- ինչո՞ւ Պոլիվիան: Համակարգիչներու կամ էլեկտրական ինքնաշարժներու բարդերու հիմնական բաղադրամասը լիթիումն է, որուն համաշխարհային պաշարներուն 70 տոկոսը կը գտնուի Պոլիվիոյ մէջ... Յստակ է, չէ՞, թէ ինչո՞ւ Պոլիվիան:

Որո՞ւ հոգը, որ հայութիւնը ցեղասպանութեան ենթարկուած ըլլալուն հետեւանքով կորսնցուցած է հող, նիւթական եւ հոգեմտաւոր, մշակութային հսկայական հարստու-

թիւն: Նորագատականութեան համար ի՞նչ արժէք ունին հայութեան (կամ որեւէ ուրիշ ազգի մը) ազգային առանձնայատկութիւնները, կամ հողային-նիւթական հարստութիւնը: Ոչ մէկ արժէք: Իսկ եթէ Արցախի հարցի անլոյծ մնալը պիտի խանգարէ բնական հարըստութիւններու ապահով բաշխումը, պէտք է ձերբազատիլ նաեւ այդ «գլխացաւանք»էն: Դիմադրողներ կան. անոնցմէ՛ ալ պէտք է «ձերբազատիլ»: Այս է Նորագատականութեան դաւանանքը:

ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հետեւաբար (եւ հոս թաղուած է շան գլուխը), կը տրամաբանէ դրամատիրական համակարգը, եթէ կան ազգեր, որոնք կը դիմադրեն, անհրաժեշտ է տկարացնել-կոտրել անոնց դիմադրական ոգին: Ինչպէ՞ս... այդ երկիրներէն ներս ազդեցութեան գոտիներ եւ լծակներ ստեղծելով: Ժողովրդավարութեան անունին ու ծածկոյթին տակ ստեղծելով եւ ֆինանսաւորելով կազմակերպութիւններ, որոնք առաջ պիտի մղեն աշխարհաքաղաքացիական՝ ոչ-ազգային գաղափարներ. քաջալերել ոչ-կառավարական կազմակերպութիւններ, որոնք առաջ մղեն աղանդաւորական եւ տուեալ մարդկային ընկերութեան կողմէ անընդունելի երեւոյթներ, կոտորեն ամեն տեսակի *թապալուներ*, ու այդ ձեւով ներքապէս տարբաղադրեն տուեալ հաւաքականութիւնը՝ ազգը, տկարացնեն անոր ներքին դիմադրականութիւնը, որպէսզի դիրանան Արեւմուտքին կողմէ ջատագովուած դրամատիրական կարգերու շահատակութիւնները: Անցանք:

Սուրիոյ պարագային, Արեւմուտքի մէջ ղեկավար չմնաց, որ թութակի պէս չկրկնեց «Պաշար ալ Ասատը բռնատեր է, պէտք է մեկնի» յանկերգը (անկախ անկէ որ այս յանկերգը կրկնողները մեկնեցան քաղաքական թատերաբեմէն): Այսպէս՝ գոռում-գոչումով համաշխարհային հանրային կարծիքը փորձեցին համոզել, որ տեսա՞ք, Տերասի մէջ «խաղաղ ցուցարարներ»ուն ղեմ ինչպէս բռնամիջոցներու դիմեց «սուրիական բռնատիրութիւն»ը եւ այլն: Այսինքն, խաղցուեցան (աւելի ճիշդ՝ շահագործուեցան) համամարդկային արժէք հանդիսացող ժողովրդավարութեան եւ մարդկային տարրական իրաւունքներու խաղաքարտեր, պարզապէս որովիտեւ Արեւմուտքը աչքը դրած էր Սուրիոյ բնական հարստութիւններուն (գլխաւորաբար

քարիւղին) եւ բնական կազի փոխադրութեան գիծ հանդիսանալու ռազմագիտական դիրքին վրայ: Մնացածը՝ «բռնատիրութիւն» եւ այլն, կեղծիք էր, Արեւմուտքին համար քա-

վարութիւն-ժողովրդավարութիւն չկայ»: Այս-քան լկտի:

Յետեւաբար, ազդեցութեան գօտիներ ստեղծելու, պահպանելու ու այդ գօտիներուն



րոզգական մանրադրամ, ուրիշ՝ ոչինչ:

Այլ խօսքով, եթէ Իրաքը, Լիպիան կամ Սուրիան չունենային քարիւղ ու նման ռազմավարական արժէք ունեցող հարստութիւն կամ աշխարհագրական դիրք, որո՞ւ հոգը պիտի ըլլար, թէ նոյն այդ երկիրները ժողովրդավա՞ր, թէ հակաժողովրդավար կարգերով կը կառավարուին... : Որո՞ւ հոգը, թէ տուեալ երկրի մը մէջ «մարդկային իրաւունքները» (անշուշտ այնպէս ինչպէս կը սահմանէ նոյնիւնքն Արեւմուտքը) կը յարգուի՞ն, թէ՛ ոչ: Որո՞ւն հոգը, եթէ տուեալ երկրին մէջ սեռային տարբեր ճաշակ ունեցողներ կա՞ն, թէ՛ ոչ...

Նոյն Արեւմուտքը մոռցած էր ժողովրդավարութիւնը նոյնիւնքն ԵՄ-ի անդամ Սպանիոյ մէջ, երբ կեդրոնական իշխանութիւնը բառացիօրէն փորձեց բռնութեան մէջ խեղդել քաթալաններու հանրաքուէն քանի մը տարի առաջ (այդօրը արձանագրուեցան աւելի քան 800 վիրաւորներ, հազարաւոր ձերբակալութիւններ):

Աւելի ցայտուն էր Յունաստանի պարագան, երբ յոյն ժողովուրդը հանրաքուէի դիմեց եւ քուէներու երկու երրորդով մերժեց Եռապետութեան կողմէ (Եւրոպական Կեդր. դրամատուն, ՄԴՅ եւ Եւրոպական Յանձնաժողով) իրեն պարտադրուած էլեւմտական ծանր պայմանները: Եռապետութիւնը յոյն ժողովուրդին պատասխանեց՝ «չէ, ձեր քուէարկութիւնը ձեզի պահեցէք, հոս ժողովրդա-

մէջ գտնուող բնական հարստութիւնները կողպտելու համար, Արեւմուտքին համար, քարոզչականօրէն, պարզապէս շահագործելի նիւթեր են թէ՛ ժողովրդավարութիւնը, թէ՛ մարդկային իրաւունքները, թէ՛ տարբեր տեսակի մարդկային ազատութիւնները, ինչքան ալ օրէնքներով սահմանուած ըլլան անոնց տարողութիւնն ու ծիրը տուեալ երկիրներէն ներս՝ ըստ նոյն ժողովուրդի անցեալին, բարքերուն, սովորութիւններուն ու հոգեկերտուածքին:

ԵՒ ՄԵՐ ԽՕՍԵԸ

ՅՅ Դաշնակցութեան խօսքը իր գաղափարաբանական սկզբունքներէն կը բխի: Մեզի համար անընդունելի է ազգի մը շահագործումը ուրիշ ազգի մը կողմէ: Ներագային իմաստով ալ՝ ժողովուրդի մէկ խաւին շահագործումը այլ խաւի մը կողմէ: Այլ խօսքով, մեզի համար անընդունելի է շահագործումը թէ՛ ներագային, եւ թէ ազգամիջեան յարաբերութիւններու մէջ:

Մենք համոզուած ենք, որ իւրաքանչիւր ազգ իրաւունք ունի ապահով ապրելու եւ բարգաւաճելու իր հայրենիքի սահմաններէն ներս: Նոյն տրամաբանութեամբ ալ, անընդունելի կը համարենք ուժեղին կողմէ «տկար» համարուածին ունեցուածքին բռնագրաւումն ու իւրացումը:

Ա՛յս պատճառով է որ Դաշնակցութիւնը մղեց ազատագրական պայքար օսմանեան բռնատիրութեան դէմ: Նոյն պատճառով էր,

ԳԱՆՁԱՍԱՐ

որ մենք ամեն կերպով սատարեցինք ու մասնակցեցանք Արցախի ազատագրության պայքարին: Նոյն տրամաբանությամբ այլ, ՅՅ Դաշնակցության համար ծրագրային առաջադրանք է Միացեալ, Ազատ ու Անկախ Հայաստանի մը ստեղծումը, Ուիլսընեան սահմանագծումով:

Դաշնակցությունը 1907-ին արդեն, իր վերամշակուած Ծրագիրով կը յայտարարեր, որ ինք՝ «կը պաշտպանէ հայութեան բովանդակ շահերը»: Բովանդակ՝ այսինքն համալիր, ամբողջական: Սահմաններու ապահովութիւն, ներքին ապահովութիւն, սերունդներու համերաշխութիւն, առողջ կենսոլորտ, ներառական տնտեսութիւն, ազատ քաղաքացիի կերպարով կառուցուած պետական համակարգ եւ հաստատութիւններ: Ու այս բոլորը՝ պաշտպանուած արտաքին ոտնձգութիւններու դէմ:

Հայաստանի մէջ աւելի քան երկու տասնամեակէ ի վեր կը գործեն քանի մը հազար ոչ-կառավարական կազմակերպութիւններ, որոնք մեծ մասը կը ֆինանսաւորուի դուրսէ՝



Եւրոպական Միութիւն, Ամերիկեան Ժողովրդավարութեան Ազգային Հիմնադրամ (National Endowment for Democracy, NED), USAID, Բաց Հասարակութեան Հիմնադրամ (Սորոս) եւ այլն: Հաւատացէ՛ք, ասոնցմէ ոչ

ոք իր քունը փախցուցած է Հայաստանի մէջ ժողովրդավար կարգեր տեսնելու համար. ո՛չ ոքի տարտն է Հայաստանի մէջ կանանց կարգավիճակը, բռնութիւնը եւ այլն (ի դէպ՝ ՅՅ-ի մէջ մշակուած ամբողջ օրէնսդրութիւն մը կայ ընտանեկան բռնութեան վերաբերող հարցերու մասին. այնպէս չէ, որ քարայրներու մէջ կ'ապրի մեր ժողովուրդը): Ո՛չ ոքի մտահոգութիւնն է թափանցիկութեան ապահովումը Հայաստանի պետական կառավարման համակարգէն ներս. կը տեսնեք «թափանցիկութեան» աստիճանները՝ մեզմէ «թափանցիկութիւն» պահանջող Արեւմուտքի գանազան երկիրներուն մէջ: Կոյր չենք:

Եւրոպական Միութիւնը, Մ. Նահանգները ո՛չ հողային հարցեր ունին, ոչ ալ գոյատեւման խնդիրներ: Պէտք չունին աղանդներու դէմ դիրքորոշուելու. անոնք ոչ մէկ ձեւով սպառնալիք են իրենց հողային ամբողջականութեան, ժողովուրդի մարտունակութեան: Նոյն այս երկիրները կարիքը չունին ազգ-բանակ գաղափարին: Իրենք ստեղծած են իրենց արժեքային համակարգը եւ կը փորձեն ուրիշներու եւս (ներառեալ մեզի) պարտադրել զայն, «բացատրելով», թէ ազգ-բանակ գաղափարը «ռազմամոլութիւն» է: Մեզի՝ «տգէտներուս», «յետամնացներուս» «բացատրելու» համար այլ, ստեղծած են եւ առատօրէն կը ֆինանսաւորեն գանազան կազմակերպութիւններ, որոնք իւրի նման շուրի երեսը ելան Ապրիլեան քառօրեայէն վերջ, երբ Հայաստանի մէջ շեշտուեցաւ ազգ-բանակի կարեւորութիւնը:

Այս բոլորը լուրջ սպառնալիք է մեր երկրի ազգային ապահովութեան համար եւ Դաշնակցութիւնը յստակ ըսելիք ունի այս ուղղութեամբ, որ կրնայ մէկ բառով բացատրուիլ՝ ԿԱ՛Տ. STOP!

ՅՅ Դաշնակցութիւնը կը ձգտի հայ ժողովուրդի ամբողջական իրաւունքներու ձեռքբերման, Հայաստանի ապահովութեան, հայութեան բարգաւաճումին՝ իր ամբողջական սահմաններէն ներս: Այս նպատակին համար ալ, Դաշնակցութիւնը կոչ կ'ուղղէ համախըմբուելու այս համազգային իտեալներուն շուրջ, կոչ կ'ուղղէ չխաբուելու օտար ազդեցութիւններու խայծերէն, կոչ կ'ուղղէ վերջ տալու «սիրոյ եւ համերաշխութեան» լոգունգին տակ առաջ տարուող ներքին պառակտուածութեան:

Միացէ՛ք Դաշնակցութեան ճիգերուն:

ՆԱՅՈՒՆ ԵՐԱԶՐ ԵՒ ՆՐԱՇԱԳՈՐԾ ԱՐԱՄԸ

Պարգև Աւագեան

28 Մայիսը հայ ժողովուրդին համար պարզապես անկասխտաբար տօն է, ինչպես որ է պարագան օտար բռնատիրությանց դեմ ազատագրական պայքարները յաղթական դուրս եկած քաջ ժողովուրդներուն համար:

Թրքական ցեղասպանական հալածանքներէն ճողոպրած հայութեան մնացորդացը նահանջած էր անբացատրելի տառապանքով ու յուսալքումով ու հասած՝ ամբողջական բնաջնջումի սեմին. անոր առջեւ դրուած էր իբրեւ ամբոխ ոչնչանալու կամ իբրեւ ազգ վերապրելու գոյութենական ընտրանքը:

Բայց կա՛ր Արամ Մանուկեանը, հայ ազատագրական շարժումին մէջ թրծուած, ՅՅ Դաշնակցութեան գաղափարներով եւ բարոյականով կազմաւորուած գործիչ-ղեկավարը:

Ան հանդիսացաւ ժողովուրդի տենչերուն եւ կամքին կիզակետը, պայքարի կազմակերպիչը եւ միասնական դիմադրութեան կերտիչը:


Հայաստանի Հանրապետութիւնը հիմնուեցաւ արհաւիրքի, բայց պայքարի երկունքէն:

28 Մայիս 1918-ին, վեց դարերու նահանջէն ետք, հայերը կանգ առին, անոնք մերժեցին դէպի մահ ընկրկումը եւ վերադարձան ազգերու պայքարի ասպարէզ: Հայ ժողովուրդը վերագտաւ իր ազգային գիտակցութիւնը եւ նպատակներու իրականացման յստակ ուղին, Հայաստանի Հանրապետութեան հիմնումով ան ձեռք բերաւ իր գոյութեան եւ վերելքին միակ երաշխիքը՝ ուրոյն տարածք եւ պետութիւն:

Հայ ժողովուրդի կազմակերպուածութիւնը, միանգամայն հարուածող բռունցք

դառնալու հրաշագործ ներուժը թերեւս պատմութեան ոչ մէկ շրջանին արտայայտուած ըլլան այդքան ուժգնութեամբ եւ առիւքնող խոյանքով, որքան Սարդարապատեան օրերուն:

1913-էն 1920 հայ ժողովուրդին համար այնքան ճակատագրական նշանակութիւն ունեցող այդ տարիներուն, Ռուբէն իր այնքա՛ն



սիրած ընկերոջ՝ Արամ Մանուկեանի հետ պատմութիւն կերտեց. հրաշքի համազօր գործեր իրականացուցին անոնք ու արդարօրէն կոչուեցան հսկաներ:

Հայաստանի Ա. Հանրապետութիւնը կ'անուանենք մեր նորագոյն պատմութեան ամենէն հետաքրքրական եւ լուսաւոր շրջանը,

ԳԱՆՁԱՍԱՐ

գիտնալով հանդերձ որ այդ եղաւ սովի, համաճարակի, սահմանափակումներու, ներքին կռիւներու եւ պատերազմներու շրջան:

Մեր հաստատումները հաւանաբար կըրկ-նութիւն նկատուին: Բայց եթէ չկրկնենք յաղ-



թանակին վկայութիւնը, նորագոյն սերունդներուն չփոխանցենք պատմական ու անկիւնադարձային մեծագոյն գոհաբերումին ԴԱՍԸ, մեղաւորներ պիտի նկատուինք ապագայի մեր պատմութեան դիմաց:

Արամները, Սիլիկեանները եւ Դրօսները փոխարինուած են Արթիւրներով, Շահէններով, Վարդաններով եւ Վաշոներով: Թող ոչ ոք կասկածի, թէ հայրենիքի ու Սփիւռքի հայրութեան համար նոր Սարդարապատներ չեն մղուիր այսօր, Արցախի մէջ: Եթէ առաջին անկախութեան ծնունդը կանխող ահեղ ու ճակատագրական պատերազմները տեսցին մօտաւորապէս տասը օր, Արցախի պայքարը ահաւասիկ բոլորած է 30 եւ անլի տարիներ եւ գործնապէս կ'ապրի Զրիստափորեան «Յարատեւ կռիւ, մինչեւ յաղթանակ» նշանաբանը, կը մարմնաւորէ զայն, ցոյց տալով որ նշանախօսքերը գիրքերու կամ մամուլի մէջ արձանագրուած նախադասութիւններ չեն միայն, գարմացնելով ու գայրացնելով խուժանային ու վարձկան ցեղախումբերը:

Ու մեծ են այն ժողովուրդներն ու երկիր-

ները, որոնք կ'ըմբռնեն իրենց պատմութեան լուսաւոր էջերուն իմաստը եւ կը պայքարին անոնցմէ բխած պատգամով:

Ժամավաճառութեամբ եւ միջազգային պատեհ առիթի մը սպասումով չէ որ կարելի պիտի ըլլայ պետութիւն գոյացնել:

Պատեհապաշտ մօտեցումը նուազագոյն հեռատեսութիւն եւ առաւելագոյն անկազմակերպութեան դուռ կը բանայ:

Իրողական նուաճումներն ու ձեռքբերումներն են միայն, որոնք իրաւական քայլ մը կը յաջողին պարտադրել ու հիմնաքար կը ծառայեն անոնց:

28 Մայիսով ծնունդ առած հայկական անկախ պետութիւնը, թէեւ ունեցաւ կարճատեւ կեանք, սակայն ունեցաւ հայկական պետականութեան ամբողջական հիմնաքարի դեր եւ արժէք:

Կարճատեւ այդ ժամանակաշրջանին եր, որ մարմին առին հայ քաղաքական, դիւանագիտական, զինուորական, մշակութային, գիտական եւ բոլոր այն հաստատութիւնները, որոնք կը կազմեն պետականութեան ստորագելիներն ու բաղկացուցիչ մասնիկները:

Անցնող տարիներուն Սփիւռքի հայութիւնը իր հայապահպանման ճիգը, Հայ Դատի պահանջատիրութիւնը խարսխեց 28 Մայիսի գաղափարական եւ քաղաքական հանգանակին վրայ:

Մեր նահատակներն ու հերոսական Արցախը կը վկայեն որ այդ պատգամը այսօր կ'ապրի բոլոր հայերու մտքին ու խղճին մէջ: Այսօ՛ր...

Այսօր վերադարձն է Ազատութեան:

Այն ազատութեան, որուն համար հայ իրարայաջորդ սերունդները երազեցին, պայքարեցան ու զայն որպէս ոսկեղնիկ իրականութիւն փոխանցեցին մեզի:

Թուրանական ցեղին ծաւալապաշտական տենչերը փուլ եկան անգամ մը եւս:

28 Մայիսը հանդիսացաւ հրաշափառ յարութիւնը հայ ժողովուրդին, երբ ծածանեցաւ յաղթանակի դրօշը:

Բայց զգոյ՛ք...

Անլռելի գանգակներու դողանջով տօնախմբուած ձեռքբերումը միշտ մեր յիշողութեան մէջ թարմ պետք է պահէ այն անվիճելի ճշմարտութիւնը, որ անկախութեան դրօշը ճակատամարտերուն թանկագինը գոհաբերած ու նահատակուած զինուորին Արիւնոտ Շապիկն է...:

100-ՎՍԵՎԿ ՍԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԻՆ

ԹՈՒՐՔԻԱՅԷՆ ՈՒ ԱՇԽԱՐՅԷՆ ԱՆԺԱՄԱՆՑԵԼԻ ՊԱՐՏԱՄՈՒՐՅԱԿ ՄԸ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՁԵՌՔԻՆ

Ս. Սահակյան

ՍՈՒՏԵ

Ամեն տարի, 10 Օգոստոսին, հայութիւնն ու մասնաւորաբար մեր դատին արդար լուծման հետամուտ քաղաքական գործիչները կը յիշատակեն Սերի դաշնակցական դաշնագիրը, որ շատ մը բաներու շարքին, ու նախ եւ



Ահարոնեան եւ Ռիլսըն

առաջ, մեր ձեռքին հասած անժամանցելի պարտամուրհակ մըն է, որ կը սպասէ Թուրքիոյ կողմէ արդար հատուցման:

Սերի դաշնագիրը կը կարօտի լիակատար վերարժեւորման ու գործադրութեան, անկախ անկէ, թէ զանազան հաշուարկներով ու արդարութիւնը խեղաթիւրող խաղերով՝ անիկա մերթ ընդ մերթ կը դրուի «ժամանցուած»ի, «անվաւեր»ի, «անիրականանալի»ի եւ նման սնանկ խորագիրներու տակ, բոլորն ալ ի վնաս եւ ի հեճուկս մեր իրաւունքներուն ու արդար սպասումներուն: Նման մտածողութեան կը յարին նաեւ հայկական որոշ հոսանքներ, ընդառաջելով արդի աշխարհի քաղաքական-դիւանագիտական ուսուցումներուն, մոռնալով, որ որեւէ համաձայնագիր կամ դաշնագիր պէտք է դիտել ու գնահատել անոր ծնունդ տուող պայմաններուն մէջ, ստո-

րագրող կողմերուն յանձն առած պատասխանատուութեանց լոյսին տակ. իսկ երբ պայմանագիր մը ամբողջացած է ու ՄՏՌ-ՐԱԳՐՈՒՄԾ, անկէ ետք մասնակի շահերէ ու շահակցութիւններէ բխող խաղեր, կողմակի համաձայնութիւններ չեն կրնար նշուել պատմութեան մէջ սեւով ճերմակի վրայ արձանագրուած փաստաթուղթին վաւերականութիւնն ու անժամանցելի արժէքը: Ահա թէ ինչո՞ւ կ'ըսենք, որ Սերի դաշնագիրը Թուրքիոյ ու աշխարհին դիմաց պարտատէր հայուն ձեռքին պահուող անժամանցելի պարտամուրհակ է:

Երբ կը մտաբերենք Սերի դաշնագիրը, անմիջապէս քանի մը սեղմ սահմանումներ կը տարագուին մեր աչքերուն առջեւ:



Դաշնագիրին ստորագրումը

Կ'ըսենք. Սերը Ա. Աշխարհամարտի հաշուեփակը ընող հիմնական համաձայնագիր մըն է, Հայաստան, իր ներկայացուցիչին՝ Աւետիս Ահարոնեանի գրիչով ստորագրած է զայն՝ իբրեւ «փոքր դաշնակից», համաձայնագիրը ստորագրուած է պարտեալ Թուրքիոյ (Օսմանեան Կայսրութիւնը ժառանգած իթթիհատականներուն) եւ յաղթական դաշնակիցներ

ԳԱՆՁԱՍԱՐ

րուն կողմէ եւ գործնապէս վերջակէտի մը կը հասցնէ թրքական կայսրութիւնը (թէւս մինչեւ այսօր ալ ականատես եւք, որ Թուրքիա չէ հրաժարած իր կայսերական երազներէն ու ծրագիրներէն), կը ճշդէ Թուրքիոյ եւ դրացիներուն միջեւ սահմանները, յարաբերութեանց պայմանները, կը տարածուի նաեւ դաշնակիցներուն հետ Թուրքիոյ հետագայ յարաբերութեանց ոլորտներուն վրայ: Մեզի՝



հայերուն համար, գիտեմք, որ համաձայնագիրը ունի 6 յօդուած, 88-րդէն 93-րդ յօդուածները (Սան Սթեֆանոյի ու Պերլինի համաձայնագիրներուն մէջ ունեինք մեկական յօդուած, թիւ 16 եւ թիւ 61):

Այս ու նման հաստատումներ ճշմարիտ են, փաստագրուած են պատմութեան մէջ: Սակայն եթէ պահ մը քննարկենք, թէ իսկապէս ի՞նչ տարողութիւն ու միջազգային արժէք ունի Սեւրի դաշնագիրը, դժուար պիտի չըլլայ ըմբռնելը, թէ անիկա չի վերաբերիր միայն հայ-թրքական հակամարտութեան, այլ ունի համաշխարհային ծիր, նա՛եւ ուրիշներու համար անժամանցելի եւ ուսանելի երեւներ:

ԴԱՇՆԱԳԻՐԸ՝ ԶԱՆԻ ՄԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՃԵՐՈՎ

Սեւրի դաշնագիրը շատ անելի համապարփակ պայմանագրութիւն մըն է, քան պարտեալ Թուրքիոյ կողմէ յաղթական Հայաստանի՝ իբրեւ անկախ պետութիւն գոյութեան ճանաչումն ու յարաբերութեանց շրջագիծին ճշդումը, ներառեալ՝ պատմական մեր հողերուն վերադարձի ընդունումը: Համաձայնագիրը ծաւալուն փաստաթուղթ մըն է, ինքնին՝ լիարժէք պատմութիւն: Կարելի է կայքէջի ճամբով գտնել անոր ամբողջական բնագիրը. մեր աչքին առջեւ եղող բնագիրը

103 էջ է, ունի 13 գլխաւոր բաժիններ, հիմնական 433 յօդուածներ, նաեւ՝ եւթաբաժիններ, յաւելումներ. համագումարը կը հաշուէ 97 բաժին եւ ընդամենը 578 յօդուած: Անոր հիմքն ու մեկնակէտերը կը նկատուին Սայքս-Փիքոյի, Սան Ռեմոյի եւ Վերսալի դաշինքներուն նման պայմանագրութիւններ. Սեւրի համաձայնագիրին մէջ յաճախ ստորագրող կողմերուն թելադրանք կ'ըլլայ վերադառնալու Վերսալի դաշնագրի պայմաններուն եւ Ազգերու Լիկային որդեգրած սկզբունքներուն:

Թուրքիոյ 3 ներկայացուցիչներուն դիմաց, դաշնագիրը ստորագրած են դաշնակից 12 պետութիւններէ 22 ներկայացուցիչներ (Բրիտանական Կայսրութիւնը կը ներկայանայ իր բաղկացուցիչներով՝ Քանադայէն մինչեւ Հարաւային Աֆրիկէ, Յոլանտան, Նոր Զելանտա եւ Աւստրալիա. Սերպիա, Խրուաթիա եւ Սլովենիա կը ներկայանան մէկ պատուիրակութեամբ, նմանապէս՝ Չեխոսլովակիա): Յիշեալ եւ այլ երկիրներու կողքին է Աւետիս Ահարոնեանը՝ իբրեւ Հայաստանի Հանրապետութեան լիազօր ներկայացուցիչ:

Դաշնագիրը մեկնակէտ ունի Աւստրո-հունգարական Կայսրութեան կողմէ Սերպիոյ վրայ 28 Յունիս 1914-ին շղթայազերծուած



յարձակողականը, որ պայթեցուց Ա. Աշխարհամարտը եւ շուտով ներգրաւեց Գերմանիոյ զինակից ու անոր հակադրուած՝ դաշնակից ուժերը. Թուրքիա Գերմանիոյ կողքին պատերազմին մասնակից դարձաւ 29 Հոկտեմբեր 1914-ին: Պատերազմը տւեց մինչեւ 1918. 30 Հոկտեմբեր 1918-ին, Թուրքիա ընդունեց պարտութիւնը եւ զինադադարը, որուն հիմամբ է որ տեղի ունեցաւ Սեւրի ժողովն ու

անկէ բխեցաւ նոյնանուն դաշնագիրը՝ 10 Օգոստոս 1920-ին ստորագրուած:

Նման ուրուագծային ծանօթութենէ ետք, արձանագրենք նաեւ, որ Թուրքիոյ ներկայացուցիչներուն հետ դաշնակիցներուն տարածուն պայմանագիրը կ'ընդգրկէ բոլոր այն հարցերը, որոնք ծնունդ են պատերազմին ու անկէ առաջ ալ գոյութիւն ունեցող տարակարծութիւններու, վիճելի ու անորոշ կէտերու: Ամէն բանէ առաջ, կը հաստատուի, թէ հարցերը պատերազմով պէտք չէ լուծել (Թուրքիա մինչեւ այսօր ալ չէ կրցած լաւ ըմբռնել այս ճշմարտութիւնը այն ուղին ցոյց կու տայ իր «եղբոր»՝ Ատրպէյճանին): Համաձայնագիրը մանրամասնօրէն կը ճշդէ դրացիներուն հետ Թուրքիոյ սահմանները, սկսելով արեւմուտքէն՝ Յունաստանէն, անցնելով հարաւ՝ Սուրիա, Իրաք (յստակօրէն արձանագրուած է, որ սահմանը Մուսուլ նահանգին հիւսիսի սահմանագիծն է, գօտի մը՝ որմէ ներս, վերջին տասնամեակներու թրքական թափանցումներն ու ախորժակները ծանօթ են), Իրան եւ Հիւսիս (որ, ինչպէս ծանօթ է, անկախ կը հռչակուի, իսկ արաբական երկիրները կը մտնեն արեւմուտքի դաշնակիցներու հոգատարութեան տակ), արեւելքէն՝ Հայաստան, իսկ հիւսիսէն՝ Ռուսիա եւ Սեւ ծով: Բաժին առ բաժին, կ'արձանագրուին երթեւեկութեան, նաւահանգիստներու, ճամբորդութեանց, առեւտրական եւ այլ յարաբերութեանց-գործակցութեան, իսլամական ուխտավայրեր այցելութեանց պայմանները եւ այլն:

Կ'արժէ հոս բանալ փոքր փակագիծ մը, յիշատակելու համար, որ յատկապէս Սուրիոյ հետ Թուրքիոյ սահմանագծումը ունի շահեկան կէտեր: Օրինակի համար, Միջերկրականի հիւսիս-արեւելեան անկիւնէն ծայր առնող սահմանը կը գծուի այնպէս մը, որ Այնթապը, Պերեճիկը եւ Ուրֆան (նաեւ այլ շրջաններ) կը մտնեն... Սուրիոյ սահմաններուն մէջ: Այսօր այս կէտն ալ մոռցուած է, իսկ Էրտողանի նորագոյն ծրագիրները կը մատնեն կայսերական երազներու վերականգնումի հետամտութիւնը, արեւմուտքի դաշնակիցներուն եւ Ռուսիոյ միջեւ լարախաղացութեան մէջ զանոնք «շահող խաղաքարտ»ի վերածելու փորձ կը կատարուի...: Փակենք փակագիծը:


Այս սիւնակներուն նպատակը չէ ամբողջական ու մանրամասն վերաքաղը ընել Սեւրի դաշնագիրի բաժիններուն ու այն պայ-

մաններուն, որոնց շուրջ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ԳՈՅԱՑԱԿ պետութիւններու պաշտօնական ներկայացուցիչներու ստորագրութեամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԿԵՏԵՐԸ

Այսպիսի լայնածիր համաձայնագիրի մը մէջ է, որ Հայաստանին կը յատկացուին 6 յողուածներ, որոնց հիմական գիծերը հետեւեալներն են.

- Թուրքիա պաշտօնապէս կը ճանչնայ 28 Մայիս 1918-ին (Սարդարապատի ու զու-



գահեռ հերոսամարտերուն մէջ իր կրած պատմական պարտութիւններէն ետք) ծնունդ առած՝ Հայաստանի անկախ Հանրապետութիւնը:

- Իրողապէս՝ սեւով ճերմակի վրայ գրութեամբ, կ'ընդունի, որ Տրապիզոնէն մինչեւ Էրզրում, Պիթլիս եւ Վան տարածուող՝ Արեւմտեան Հայաստանի հողերը կը պատկանին հայութեան, պէտք է կցուին անկախ Հայաստանի Հանրապետութեան. հողատարածքներու վերջնական պատկերին ու սահմաններու մանրամասնութեանց ճշդումը կը վստահուի Միացեալ Նահանգներու նախագահ Վուտրօ Ուիլսընի: Հայաստան դաշնագիրը ստորագրող կողմերուն ներկայացած էր մեր իրաւունքները սահմանող քարտեզով, որ պէսզի անիկա դրուի Ուիլսընի իրաւարարութեան տակ: Ըստ էութեան, այդ հողատարածքներուն հայկական պատկանելիութիւնը վիճելի հարց չէ համաձայնագիրին բառերով, ալ սահմաններուն մանրամասնութեան

ճշդումն ու վերջնական պատկերին յստակացումն է, որ կը վստահուի ամերիկեան իրաւարարութեան:


Արձանագրեւք, որ Յայաստանի պատուիրակութիւնը խորհրդաժողովին ներկայացած էր հայութեան իրաւութեան մէկ մասը մարմնաւորող քարտեզով մը, որ իրողապէս որդեգրուեցաւ դաշնագիրը ստորագրողներուն կողմէ: Անիկա կ'ընդգրկէր Արցախը, Նախիջեւանը, Ախալքալաքը, Արեւմտեան Յայաստանի ծանօթ նահանգները՝ Սեւ ծովուն վրայ ելքով. ընդամենը՝ աւելի քան 161 հազար քառ. քմ. տարածութեամբ. ներառեալ չէին պատմական Յայաստանի այլ տարածքներ ու Կիլիկիան:

- Թուրքիա կը համաձայնի հայ ժողովուրդին փոխանցել Ուիլսոնեան իրաւարարութեամբ վճռուելիք հողերը, կ'ընդունի, որ պիտի ապագինէ սահմանակից գօտին (իսկ դաշնագիրին մուտքի բաժինը, ինչպէս նշեցին քիչ առաջ, յստակօրէն կը հաստատէ, որ զինեալ յարձակումներ ու գրաւումներ ընդու-

տառին եւ ոգիին: Սահմաններու մանրամասնութեանց ճշդումին համար կը նախատեսուի յատուկ յանձնախումբ, որուն կը տրուի աշխատանքի երեք ամիսներու պայմանաժամ (պատմութիւնը ծանօթ է. այդ պայմանաժամին լրումէն առաջ, Թուրքիա պատերազմի անցաւ Յայաստանի Յանրապետութեան դէմ, իսկ 2 Դեկտեմբերին, Յայաստանի մէջ հաստատուեցան համայնավար կարգեր):

- Վրաստանի եւ Ատրպէյճանի հետ Յայաստանի սահմաններու ճշդումը կը ձգուի ինդրոյ առարկայ երեք պետութեանց, որպէսզի բանակցութեան ճամբով հասնին վերջնական համաձայնութեան (հոս ալ պատմութիւնը կը յուշէ, որ թէ՛ Վրաստան եւ թէ՛ մանաւանդ, Թուրքիոյ իրողական դաշնակից Ատրպէյճան նախընտրեցին զէնքի լեզուն, իսկ համայնավարները անոր ձեռքին մէջ դրին՝ Թուրքիոյ հետ զինակցաբար՝ Յայաստանը բնաջնջելու նոր զէնքեր: Կարճ ատեն ետք, Կարսի ու Մոսկուայի համաձայնագիրները՝ համայնավար Ռուսիոյ ու քեմալական Թուրքիոյ միջեւ, արդէն բաց-պատարագի վերածեցին Յայաստանի Յանրապետութեան ու անկէ մնացած ժառանգութեանց դէմ եռեակ դաւադրութիւնը. Արցախի ու Նախիջեւանի մասին Ստալինի որոշումները պարզապէս նոր «նուաճումներ» եղան այդ ճամբուն վրայ: Այդ փուլերուն, հայութեան ինքնուրոյն կամքն ու համաձայնագիրներու մէջ համապատասխան ներկայութիւնը չգոյ էր...):

- Կարելոր կէտ է նաեւ, որ Յայաստան այս համաձայնագիրով կ'ընդունի պաշտպանել իր հողերուն վրայ ապրող ոչ-հայերու իրաւունքները եւ հոգածութիւն ցուցաբերել անոնց նկատմամբ: Յայաստան թէ՛ խորհրդային տարիներուն, թէ՛ մինչեւ այսօր, հաւատարիմ է այս պայմանին:



ՍԵՐԸ՝ ԿԱՐԵՒՐ ՀԱՆԳՐՈՒՄ, ՆԱԵՒ ՅԵՆԱՐԱՆ

Ա. Աշխարհամարտէն ետք, նախապէս Օսմանեան Կայսրութեան ենթակայ երկիրներու եւ ժողովուրդներու, ինչպէս Յունաստանի, Կիպրոսի պէս դրացիներու եւ ընդհանրապէս աշխարհին հետ պարտեալ Թուրքիոյ յարաբերութեանց պայմանները ճշդող՝ ահա այսպիսի համաձայնագիր մըն է Սելըրը, որուն նկատմամբ հայկական հայեցակետը պէտք է ըլլայ համապատասխան

Նելի պիտի չըլլան): Կը նշուի, որ եթէ անլոյծ հարցեր մնան, կարելի է նոր դաշինքներ-համաձայնագիրներ կնքել. այս բաժինը լռելեայն կը հասկնէ, որ յաջորդելիք համաձայնագիրները պէտք է համապատասխան ըլլան Սելրի

չափով լայնածիր, վաւերական՝ անոր անժամանցելիութիւնը, մանաւանդ, որ Սելըն անմիջապէս ետք եւ յաջորդ տասնամեակներուն, այս պատմական դաշնագիրէն շատ բան իրագործուած է, վերատեսութիւններ եղած են այլապէս, իսկ հայկական թղթածրարը մնացած է չիրագործուածներու ցանկին վրայ: Անմիջապէս արձանագրեց Նաեւ, որ Լոզանի դաշնագիրը ըստ էութեան չի կրնար փոխարինել Սելընը, պարզ այն հասկացութեամբ, որ հայութիւնը ինքնուրոյն ներկայութիւն չէր հոն, ինչպէս ակնարկեցինք արդէն:

Սելընի արժէքն ու անժամանցելի հանգամանքը ո՛չ միայն անվիճելի են, այլ մեր պարտականութիւնն ու իրաւունքն է գայն յիշեցնել բոլոր ստորագրողներուն, մասնաւորապէս Թուրքիոյ, Նաեւ՝ չստորագրողներուն:

Սելընի դաշնագիրին արժէքը չի սահմանուիր միայն յետ-պատերազմեան հաշուեփակի անոր յատկանիշներով, այլ, խոր-

մէկ գագաթնակետը ու հանգրուանային նուաճում է Սելընը, որուն իրաւական-վաւերական ըլլալու-չըլլալու բանավեճը կը դառնայ երկրորդական կամ չորրորդական:

Սելընը եղաւ ու կը մնայ կարեւոր յենարան մը՝ մեր ազգային, հողային ու պատմական այլ իրաւունքներու հետապնդման դիտանկիւնէն: Ճիշդ է, որ Հայաստանի Հանրապետութիւնը պատմութեան անցաւ 1920-ի վերջերուն, սակայն Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչները, անկախութեան անկումէն ետք, տասնամեակներ շարունակ իրողական ճանաչում վայելեցին դաշնակիցներուն մօտ, Սելընի պայմանները մնացին բանակցութեանց սեղանին վրայ (երկար պիտի ըլլայ մտնել այդ փուլին կարգ մը մանրամասնութեանց մէջ, ուր տեսանելի կը դառնան ազգայնական անկախ Հայաստանը ամէն ձեւով նսեմացնելու եւ անոր ձեռքբերումները չիք դարձնելու համայնավար Ռուսիոյ ճիգերը): Պետք է փոշիներուն տակէն դուրս բերել հայ պատուիրակներու եւ ներկայացուցիչներու բանակցութեանց ստուար թղթածրարը, որ ո՛չ միայն իբրեւ հիմք կը գործածէ Սելընը, այլ նոր եւ իրաւացի, արդար թղթածրարներով կը հարստացնէ մեր իրաւունքներուն հետապնդման արխիւը:

Հայաստանի անկախութեան վերականգնումէն սադին, անդրանիկ Հանրապետութեան արժէքն ու ժառանգութիւններէն շատ բան վերականգնած ենք ու վերահաստատած՝ անոնց հանդէպ մեր հաւատարմութիւնը: Այսօր այլեւս վեճ չկայ, թէ Եռագոյնը Դաշնակցութեան դրօշը չէր, այլ կը խորհրդանշէր հայկական անկախ պետութիւնը, նմանապէս՝ Չինանշանն ու Քայլերգը, նմանապէս՝ բանակին, իրաւական, դիւանագիտական համակարգերուն, համալսարանին պէս հաստատութիւններու գոյառումը: Ի՞նչ բան, ո՞վ կ'արգիլէ, որ տիրութիւն ընենք Նաեւ Հայաստանի անդրանիկ Հանրապետութենէն մեզի ժառանգ ու պայքարի աւանդ հասած Սելընի՝ դաշնագիրին ու նման յենարաններու, որոնք, խորքին մէջ, լիարժէքօրէն համապատասխան են ոգիին ու տառին այն հռչակագիրին, որ որդեգրուեցաւ 28 Մայիս 1919-ին, անկախ եւ գերիշխան Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանին կողմէ, որ նոյն օրը ինքզինք ամբողջականացուց Հայաստանի արեւմտեան գօտիի պատգամաւորներով, պատմութեան մէջ արձանագրեց



քին մէջ, մեզի համար անիկա կը հանդիսանայ համագումար մը, արդիւնքն ու պտուղը՝ քաղաքական, դիւանագիտական ու ռազմական այն պայքարներուն, որոնք ծնունդ առած են 19-րդ դարու կեսերէն, կտրած են Սան Սթեֆանոյի, Պերլինի, Օսմանեան ու Ցարական կայսրութիւններուն մէջ հայութեան տարրական իրաւունքներու հետապնդման, ազատագրական շարժումի շրջագիծին մէջ բազում ճակատումներու, ցեղասպանութեան նախօրեակին՝ Արեւմտեան Հայաստանի ինքնավարութեան (եւրոպացի կառավարիչներու նշանակումի պարագան), մեր մեծ ու փոքր հերոսամարտերուն, Նաեւ Արարայի նման յաղթանակներուն, Կիլիկիոյ ինքնավարութեան-անկախացման պահանջին, նոյն-ինքն Հայաստանի Հանրապետութեան ծնունդի փուլերը: Բազմաճիւղ պայքարներու

ԱՁԱՏ, ԱՆԿԱԽ ԵՆ ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆՆԵՐ՝ որպես իրագործելի քաղաքական-ազգային ծրագիր:

ԵՉՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Սերի դաշնագիրը միակ յենարանը չէ, որուն հիմամբ կրնանք այսօր եւ վաղը նոր քարեր գետեղել մեր իրաւունքներու պաշտպանութեան բերդին պատերուն, կետեր նշանակել մեր դարաւոր թշնամիին դէմ: Կը մնայ, որ պատմութենէն մեզի հասած՝ անժամանցելի այդ հիմնաքարերը օգտագործենք ճիշդ ձեւով, փոշիներու տակ չձգենք այն փաստերն ու վաւերաթուղթերը, որոնք կամայ թէ ակամայ կը լուսանցքայնացնենք կամ մոռացութեան կը մատնենք՝ մերթ անտարբերութեամբ, յաճախ նաեւ... զանոնք ուսումնասիրելէ հրաժարելով:

Նման աշխատանքի փոխարէն, ի՞նչ կ'ընենք այսօր, ի՞նչ կ'ընենք վերջին տարիներուն, ընդհանրապէս՝ Հայաստանի անկախութեան վերականգնումէն ասդին, երբ միջազգային բեմին վրայ մեր արդար իրաւունքները հետապնդելու համար, նուազ կապանքներ ունինք մեր ձեռքերուն եւ սակայն, շատ քիչ կը նայինք այդ կողմերը, կը բաւականանանք այսօրուան սեղաններուն վրայ արծարծուող հարցերով, բոլորն ալ ոչ-արհամարհելի, մասնաւորաբար անոնք՝ որ կը վերաբերին Արցախի ճակատագիրին:

Այո՛, շատ բան կ'ընենք. օրինակ, մեր ճիգերն ու կարողականութիւնները մեծ մասամբ կը լարենք... հայկական-Հայաստանի բեմին վրայ հակառակորդներ որոնելով, յանցաւորներ հետապնդելով եւ մասնակի հաշուեյարդարներու հետամուտ ըլլալով: Անշուշտ որ կարելոր է հաշուետուութեան բերել անցեալի չարաշահներն ու պահանջել արդար հատուցում, սակայն նաեւ կենսական է, որ խուսափինք երկփեղկումներէ, բազմափեղկումներէ, բազմակարծութիւն խեղդելէ, այլ ընդհակառակն իրականացնենք միասնութեան ու միակամութեան այն ուղիները, որոնք պիտի դրոյնն ի նպաստ հայրենիքին ու ժողովուրդին զարգացման, յառաջդիմութեան, զանոնք պիտի ձեռքբազատեն անցեալի կարգ մը «վիուկներուն» պատանդ մնալու վիճակէն: Իսկ մեր Դատին՝ հողային ու ազգային արդար իրաւունքներուն հետապնդման համար, միասնութենէ այլ ուղի չի կրնար երկար կեանք ունենալ:

Մեր ապագային պէտք է նայինք՝ անցեալի գանձերէն, քաղաքական ու դիւանագիտական իրագործումներու աւանդներէն օգտուելու տրամաբանութեամբ: Սերի դաշնագիրն ու համազօր իրագործումներ պէտք չէ թողունք միայն պատմական ուսումնասիրութիւններու ոլորտին մէջ, այլ անհրաժեշտ է, որ անոնք վերածուին ապրող գործի, այսօրուան ու վաղուան մեր արդար պահանջատիրութեան ատաղձներուն: Մեր թշնամին ու անոր ձայնակցող «իմաստուններ» յաճախ մեզ կը խրատեն, թէ ցեղասպանութեան ու նման հարցերու ուսումնասիրութիւնը պէտք է թողունք պատմաբաններուն, թէ՛ այսօրն ու վաղը պէտք է դիտենք առեւտրական եւ այլ ոլորտներու մէջ գործակցութեան հետամտութեամբ: Իսկ մենք գիտենք, որ դրական եւ արդիւնաւոր գործակցութիւն կարելի չէ ստեղծել, եթէ անցեալի պարտամուրհակները մնան անհատոյց:

Բնականաբար կարելի չէ արհամարհել քաղաքական ու դիւանագիտական աշխատանքներուն նպաստող՝ ուժական պայքարը: 2020-ը այս իմաստով այլ տարեդարձ մը կը նշէ. 45 տարի առաջ, 1975-ին, պահանջատեր հայ երիտասարդներ ալիք-ալիք սկսան հարուածել Թուրքիոյ պետութեան ներկայացուցիչներն ու խորհրդակիշները: Անոնց ներշնչումի անմիջական աղբիւրը եթէ թեւ լիբեաններու եւ Շիրակեաններու պատժական շանթահարող արարքներն էին, անոնք նպատակ ունէին նաեւ Սերին ու այլ համաձայնագիրներու կենսագործումը: Այսօր, տասնամեակներու հեռաւորութենէն, նաեւ հաւաքաբար մեր ձեռք բերած փորձառութիւններէն, կրնանք հաստատել, որ ուժական այդ նախաձեռնութիւնները վերածուեցան քաղաքական-դիւանագիտական պայքարի հզօրանքի: Յետոյ, Արցախեան պայքարը եկաւ անգամ մը եւս ամրագրելու ուժի գործածութեան կենսական կարելորութիւնը՝ քաղաքականին կողքին: Այդ երթը այսօր ալ կենդանի է մեր իրական կեանքին մէջ...


Սերի դաշնագիրը բաց պարտամուրհակ մըն է, որուն համար Հայաստան եւ հայ ժողովուրդը կը սպասեն արդար հատուցման: *Փրոթոքոլներ* ու նմանօրինակ շինծու «ընտրանքներ» չեն կրնար ընդունելի ըլլալ հայութեան համար, չեն կրնար ու պէտք չէ նստմացնեն մեր իրաւունքներուն հիմ ծառայող փաստաթուղթերը:

ՍԵԼԻ «ՄԻՆՏՐՈՄԸ»¹

Չեղոզ Յակոբճեան

Սելի դաշնագրի ստորագրութենէն հա-
րիւր տարի անց, չվաւերացուած ու չգոր-
ծադրուած այս փաստաթուղթը տակաւին
անհանգստութիւն, վախ ու մտահոգութիւն
կը տարածէ թրքական վերնախաւին մօտ:
Ի՞նչ է Սելի «Սինտրոմ»ը, Սելի ախտա-
նշաններու համընթացութիւնը:
Ըստ թուրք գրող Պասքըն Օրանի
2014 - ի ն հ ր ա տ ա ր ա կ ած
«Azinliklar Nasil Azinlik Oldu»
(Փոքրամասնութիւնները ինչ-
պէ՞ս Փոքրամասնութիւն Դար-
ձան) գործին, «Սելի Սինտ-
րոմ» հասկացութիւնը Սելի
դաշնագիրին յառաջացուցած
վախի դրսեւորումն է: Ինչպէս
Սելի դաշնագիրը Օսմանեան
Կայսրութեան քայքայման իրա-
ւական սկիզբն էր, այնպէս ալ
շատեր թուրքիոյ մէջ կը համա-
րեն, թէ մեր օրերու թուրքիան
մասնատելու ու քայքայելու
վտանգներ կան: Հիմնական
մտավախութիւնը կը յառաջանայ այն իրո-
ղութենէն, որ թուրքիա ներքին ու արտաքին
վտանգներով շրջապատուած է: Այդ վտանգ-
ներու շարքին մէջ կը մտնեն Արեւմուտքին
թուրքիան մասնատելու ծրագիրները, քիւր-
տերու անջատողական քայլերը, ծայրայեղ
իսլամիստներու իսլամական իշխանութիւն
հաստատելու հաւանականութիւնը եւ մանա-
ւանդ՝ հայերուն հողերու ու կալուածներու
պահանջքը: Այս պատճառով, ինչպէս թաներ
Աքչամ կը բնութագրէ իր «From Empire to

Republic: Turkish Nationalism and the Armenian
Genocide» (Կայսրութենէն Հանրապետու-
թիւն: Թրքական Ազգայնականութիւնը եւ
Հայկական Ցեղասպանութիւնը) գիրքին մէջ՝
Սելի սինտրոմը այն ըմբռնումն է, ըստ որուն
ուժեր կան, որոնք անընդհատ կը ձգտին բաժ-



նել ու ոչնչացնել թուրքիան, եւ անհրաժեշտ է
պետութիւնը պաշտպանել այս վտանգնե-
րին:

Ըստ թրքական ազգայնական ու ապա-
հովական շրջանակներուն, այս վտանգնե-
րուն վրայ կ'աւելնայ այն հաւանականու-
թիւնը, որ օտար ուժեր, թուրքիան մասնա-
տելու համար կը համագործակցին, կը դաշ-
նակցին թուրքիոյ այսօրուան փոքրամասնու-
թիւններուն հետ, ինչպէս որ Սելի դաշնագրի
օրերուն դաշնակցած էին Օսմանեան

¹Syndrome: Ախտանշաններու համընթացութիւն:

Կայսրության փոքրամասնություններուն հետ ու կայսրութիւնը փլուզումի առաջնորդած:

Վերոնշեալ վախը առաւել պարարտ հող ստացաւ ու զարգացաւ 1975-85 թուականներուն հայերու կողմէ ծրագրուած գինեալ գործողութիւններով ու նաեւ քրտական Աշխատաւորական Կուսակցութեան գինեալ պայքարով:

Այս ծիրին մէջ, 2004 թուականին, Սելրի *Սիւտրոմէն* ազդուած հանրային դժգոհութիւնը նկարագրող եւ հասարակութեան մէջ ազգայնականութեան մագլցումին առաջնորդող գիրք մը լոյս տեսաւ «Metal Firtina» (Մետաղէ Փոթորիկ) անունով, որ ամենէն շատ ծախուած գիրքերէն հանդիսացաւ ու երկու տարուան մէջ տասը անգամ վերատպուեցաւ: Գիրքը կը պատմէ Ամերիկայի եւ Թուրքիոյ միջեւ առասպելական պատերազմի մը մասին, որ տեղի պիտի ունենայ մօտիկ ապագային, «Սելրի Գործողութիւն» կոչուած գաղտնի գինուորական գործողութեան մը զուգորդութեամբ, որ Թուրքիան պիտի բաժնէ Յայաստանի եւ Յունաստանի միջեւ, ինչպէս նաեւ քիւրտերուն պետութիւն կառուցելու հնարաւորութիւն պիտի տայ: Այս գիրքը լաւագոյնս ցոյց կու տայ, թէ ինչպէ՛ս Թուրքիան Սելրի *սիւտրոմը* օգտագործելով մոլեռանդ ազգայնականութեան աճը կը սնուցանէ: Թրքական ակադեմիական շրջանակներ Նոյնիսկ կը քննարկեն, որ 2007-ին Յրանդ Տիւքի սպանութիւնը այսօրինակ գիրքերու եւ Սելրի Դաշնագրէն բխած վախերու շահարկման պատճառով տեղի ունեցաւ: Աւելին, Նոյնիսկ 2016-ի ձախող գինուորական յեղաշրջումի փորձը շատեր Սելրի *սիւտրոմ*ին, այսինքն՝ օտար, արեւմտեան ուժերու անմիջական գործակցութեան եւ դերակատարութեան վերագրեցին:

Այս պարունակին մէջ աւելի հասկնալի կը դառնայ, թէ ինչո՞ւ Թուրքիոյ մէջ փոքրամասնութիւններու իրաւունքներուն հարցը գերզգայուն ու «վտանգաւոր» կիւթ է: Ըստ քեմալական գաղափարախօսութեան նեղ սահմանումին, թրքական ազգային ինքնութիւնը կը հիմնուի պետութեան եւ ազգի համասեռութեան (homogeneity) եւ անբաժանելիութեան վրայ: Իսկ այս երկուքը կարելի է ապահովել, թէ՛ փոքրամասնութիւններուն բացառմամբ եւ թէ՛ անոնց իրաւունքները ժխտելով: Այս է պատճառը Թուրքիոյ փոքրամասնութիւններուն

նկատմամբ իշխանութիւններուն բիրտ քաղաքականութեան, որուն վրայ կ'աւելնայ Սելրի *սիւտրոմը*, ուր փոքրամասնութիւնները պատմականօրէն որպէս «վտանգ» ներկայացուած են «պետութեան եւ ազգին անբաժանելի միասնութեան» համար:

Վերոնշեալները կու գան հաստատելու, որ թէեւ շատեր կը կարծեն, թէ Սելրի դաշնագիրը պատմութեան դարաններուն մէջ նետուած անգործածելի փաստաթուղթ մըն է, սակայն ան իր ունեցած եւ ունենալիք քաղաքական, աշխարհաքաղաքական եւ տարածաշրջանային կարելորութեան կողքին, մինչեւ այսօր մեծ ազդեցութիւն ունի թրքական իշխանական ու քաղաքական մտածողութեան, գիտակցութեան եւ ենթագիտակցութեան վրայ: Ֆաթիմա Կեօճէքը Սելրի Սիւտրոմին պատմական զարգացումը հետեւեալ ձեւով կ'ամփոփէ՝

ա. Թրքական հանրապետական-քեմալական վերնախաւը Սելրի Դաշնագիրը ներքին եւ արտաքին թշնամիներ պարունակող խելացնոր (paranoid) տեսլականի վերածեց:

բ. Շարք մը քաղաքական դերակատարներ, ինչպէս օրինակ թրքական բանակը (որ նախորդ դարուն բաւական ծանր քաղաքական ազդեցութիւն ուներ), վերարտադրեցին սիւտրոմը:

գ. Սիւտրոմը ժամանակ առ ժամանակ կորսնցուց իր ծանրութիւնը, բայց շարունակեց նշանակալից մնալ:

Այսօր աշխարհաքաղաքական զարգացումները ի նպաստ Թուրքիոյ չեն ընթանար: Այլ խօսքով, Սելրի սիւտրոմը, որպէս թրքական իշխանական վերնախաւին հաւաքական ընկերահոգեբանական բարդոյթ, նուազելու կամ մեղմանալու հեռանկար չունի, ընդհակառակը՝ ենթակայ է Նորագոյն դրսեւորումներու, ինչպէս օրինակ՝ վերջերս շղթայագերծուած թրքական անօրինական ներխուժումը Սուրիա: Այս պատճառով, պետք է կանխատեսել Սելրի սիւտրոմին հետեւանքով յառաջացած թրքական «թանկթումները» (անսպասելի հակազդեցութիւնները), ինչու չէ նաեւ հայկական ճակատին վրայ, ու պատրաստ ըլլալ ամեն հաւանականութեան: Այստեղ որպէս օրինակ կարելի է վկայակոչել նաեւ վերջերս շուէտական «Nordic Monitor» պարբերականին գաղտնագերծած Թուրքիոյ Յայաստանի վրայ յարձակումի «Ալտայ» ծրագիրը:

ՀՐԱՊԱՐԱԿԱԳՐԱԿԱՆ

ՍԱՍՈՒՆ 1938. ՉԼՍՈՒԱԾ ՈՒ ՉԳՐՈՒԱԾ ԱՊՍԱՍԲՈՒԹԻՒՆԸ

Սոֆիա Յակոբեան



Սասունի 1937-38 թուականների ապրտամբությունը պատմական այն կարեւոր իրադարձություններից է, որը, ցաւօք, դուրս է մնացել մեր պաշտօնական պատմագրութեան էջերից՝ դժուարացնելով մեր յստակ պատկերացումները ժամանակակից Սասունի ու դրա ներկայի բնակիչների մասին: Այնինչ՝ Սասուն գաւառի յետցեղասպանական շրջանի պատմությունը նոյնպէս լի է վայրիվերումներով, որոնք ցեղասպանութիւնից յետոյ էլ շարունակել են ոչ միայն ազդել տեղի քաղաքական ու հասարակական զարգացումների վրայ, այլեւ փոխել գաւառի տեմոկրաֆից (ազգագրական-«Գ.») պատկերը:

Չենք սխալուի, եթէ նշենք, որ Սասունի՝ 1937-38 թթ.-ի ապստամբությունը Հայոց Տեղասպանութիւնից յետոյ Սասունում տեղի ունեցած ամենախոցելի ու խնդրայարոյց շրջանի մը դէպքն է, իրադարձութիւն, որը կրկին փոխեց հազարաւոր ճակատագրեր, այդ թւում՝ հայերի:

ԷՐՏՈՂԱՆԸ՝ ՍԱՍՈՒՆԻ ԱՊՍԱՍԲՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Յատկանշական է, որ Թուրքիայում 1937-38-ի իրադարձությունների հետ կապուած լայնածաւալ քննարկումներ ծաւալուեցին նոյն ժամանակաշրջանում Տերսիմի ալեւիների զանգուածային կոտորածների ուսումնասիրման մեկնարկի ֆոնին: Իր հերթին, Տերսիմի դէպքերի շուրջ աննախադէպ աղմուկ առաջացրեց Թուրքիայի՝ այն ժամանակուայ վարչապետ, ներկայի նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի պաշտօնական յայտարարութիւնը, որով նա պետութեան անուկից ներողութիւն խնդրեց Տերսիմի կոտորածների համար: Շեշտելով, որ ոճրագործութիւնը իրականացուել է նախկին իշխանութիւնների՝ այսինքն քեմալական կառավարութեան կողմից, Էրտողան յայտարարեց, որ եթէ կարիք կայ պետութեան անուկից ներողութիւն խնդրելու՝ նա կ'անի դա: Հետագայում Տերսիմի կոտորածը պարբերական շահարկման


առարկայ դարձաւ Էրտողանի հռետորաբանութեան մէջ, որով նա յաճախ առիթ էր ունենում յիշեցնելու ներկայում արդէն ընդդիմադիր ուժի դիրքերից հանդէս եկող, Թուրքիայի առաջին նախագահ Մուսթաֆա Զեմալ Աթաթուրքի հիմնած ժողովրդահանրապետական Կուսակցութեան դէմ:

Տերսիմի ապստամբութեան ու դրան հետեւած կոտորածների թեմայի նման շահարկումն անշուշտ պատմական էր ու բեկումնային, ինչը առիթ դարձաւ թեմայի նորանոր շահարկումների, բազմաթիւ նոր ուսումնասիրութիւնների ու լայնածաւալ քննարկումների: Տերսիմցիների կրօնական պատկանելիութիւնը՝ ալեւիզմի հետեւորդ լինելը է՛լ աւելի սուր բնոյթ հաղորդեց թեմային, իսկ նոյն տարածքում բազմաթիւ ծպտեալ հայերի առկայութիւնը չէր կարող թեմայից հեռու պահել նաեւ հայ հասարակութիւնը:

Սակայն Էրտողան նոյն օրը միայն Տերսիմի մասին չէր, որ խօսել էր:

«27-ը Սեպտեմբերի 1938 թ., Տերսիմի գործողութիւնից անմիջապէս յետոյ Սասունում արուած գործողութիւնների մասին արխիւային փաստաթուղթն իմ ձեռքում է: Արձանագրուած է Սասուն գաւառում 384 հոգու սպանուելու եւ բոլոր յանձնուածների՝ դէպի Արեւմուտք արտաքսման մասին: Ո՞վ է ստորագրել, գիտե՞ք: Ներքին գործերի նախարար Շիւքրի Բայայ, կրկին ժողովրդահանրապետական»:

Էրտողանի՝ 2011 թ.-ին արած այս յայտարարութիւնը պատմական է եւ Թուրքիայի Զանրապետութեան պատմութեան մէջ բա-



ցառիկ: Սա Սասունի՝ 1937-38 թթ.-ի դէպքերի մասին առաջին պաշտօնական յայտարարութիւնն էր, սակայն Սասունի մասին այդպէս էլ նոյն ակտիւութեամբ չխօսուեց եւ չուսումնասիրուեց, իսկ պատճառներից մէկը հենց ճշուած ապստամբութեան հետեւանք-

ներն էին, որոնք Տերսիմի համեմատ մի փոքր աւելի տարբեր էին:

Սասունի ապստամբութիւնը բեկումնային էր գաւառի պատմութեան մէջ. եթէ Տերսիմում հայերը, քրտերն ու զազաները ռմբակոծուեցին, աքսորուեցին կամ առեւանգուեցին եւ մինչ օրս պետութեան հետ շարունակում են մնալ լարուած յարաբերութիւնների մէջ՝ մնալով Թուրքիայում ամենախիստ ընդդիմադիր դիրքով յայտնի շրջաններից մէկը, ուր թուրքական բանակը այժմ էլ հսկողութիւն է իրականացնում լարուած ռեժիմով, ապա Սասունն այսօր համարում է ամենաիշխանամետ, ամենապահպանողական գաւառներից ու քրտական շարժման դէմ պայքարում պետութեան ամենայուսալի յենարաններից մէկը:

Այսօր Սասունի գիւղերի զգալի հատուածում պետութիւնն ունի իր յատուկ վարձկանները՝ իշխանամետ գիւղական պահակախումբերի զինուած անդամներ, որոնք պայքարում են քուրտ զինեալների դէմ, աւելին՝ հենց իշխանամետ գիւղական պահակախումբերի անդամակցութիւնն էլ ապահովում է Սասունի բնակիչների զգալի հատուածի հիմնական եկամուտը: Սասուն գաւառում լեռնային գիւղերի՝ երկար տարիներ դիտաւորեալ մեկուսացումը, անտոճանապարհների բացակայութիւնը, կրթական համակարգի՝ բաւականին ուշ շրջանում զարգացումը, կրօնական մոլեռանդ քարոզչութեան տարածումը, բնակիչների՝ աղքատութեան մէջ ու պետութեան տուած վերոնշեալ աշխատավարձին կարօտ պահելը այն հիմնական գործօններն էին, որոնց շնորհիւ իշխանութիւնները ըմբոստ Սասունը դարձրին առաւել վերահսկուող, հարցեր չտուող, կիսագրագետ ու իրենց իրաւունքներից քիչ տեղեակ հասարակութիւն: Մինչդեռ այս լեռնային կղզեակը միշտ ունեցել է իր կանոնները. ժամանակակից Սասունում թէ՛ Զայոց Յեղասպանութիւնը, թէ՛ 1937-ի ապստամբութիւնը այսօր ոչ միայն սկսել են քննարկուել, այլեւ երիտասարդութիւնը հասցրել է դնել հարցադրումներ. ո՞վ, ինչո՞ւ եւ ինչպէ՞ս: Այս հարցադրումները միանշանակ կապուած են նաեւ վերջին տարիներին Թուրքիայում սաստկացած «ինքնութեան ճրգնաժամի» հետ, որը Սասունում չէր կարող չգտնել իր արտացոլումը. մի գաւառ, ուր մինչ օրս շատերը չգիտեն՝ հա՞յ են, քո՞ւրտ, թէ արաբ: Զանի որ ակնյայտ է. իրար պար-

գապէս «սասունի» կոչելն այլեւս ծնուած հարցերը չի բաւարարում:

ՍԱՍՈՒՆԻ ՎԵՐՁԻՆ ԱՊՍՏԱՍԲՈՒԹԻՒՆԸ՝ ԶԱՆԳՈՒՄԾԱՅԻՆ «ԱՐԱՔԱՅՄԱՆ» ՊԱՏՃԱՌ

Այո՛, Սասունում 1937-38-ի ապստամբութիւնը ոչ միայն ճնշուել, այլեւ փոխել է գաւառի հետագայ ճակատագիրը, եւ խօսքը միայն քաղաքական կողմնորոշման մասին չէ:

Ի տարբերութիւն Տերսիմի՝ Սասունում բացի հայերից ու քրտերից կար եւս մէկ՝ երկու ժողովուրդների հետ իւրայատուկ յարաբերութիւններ ունեցող էթնիկ տարր, որը զգալի դեր խաղաց գաւառի հետագայ պատմական զարգացումներում:

Սասունի արաբները եւ արաբերէն լեզուն ապստամբութիւնից յետոյ պետութեան համար դարձան այն միջանկեալ գիծը, որի ծայրից բռնած իշխանութիւնները փորձում են պահել իրենց ձեռնտու հաւասարակշռութիւնը գաւառում մինչ օրս՝ բացառելով հայքրտական հնարաւոր համագործակցութիւնը, քուրտ *ֆեոտալիտ*ի գրկելով նախկին գրեթէ բացարձակ ուժից, ինչպէս նաեւ արհեստականօրէն նահանջեցնելով հայերէնի ու քրտերէնի դիրքերը գաւառում: Ահա թէ ինչո՞ւ է 1937-ը Սասունի պատմութեան մէջ այն բեկումնային կետը, երբ «քրտացուած» Սասունը այլեւս կարող ենք կոչել «արաբացած» Սասուն:

Սակայն մեզ՝ հայերիս մօտ լիովին բնական հարց է առաջանում, թէ որտեղի՞ց Սասուն եկան այս արաբները: Չէ՞ որ մեր պատմագրութեան մէջ նրանց մասին գրեթէ լսած չկայինք:

Այն, որ Սասունի արաբները, որոնք այստեղ ապրում էին նոյնիսկ քրտերից ել անելի վաղ՝ 9-րդ դարից, սակայն ընդհուպ մինչեւ 20-րդ դարի սկիզբ գրեթէ չէին յիշատակում հայ ազգագրագետների կողմից որպէս հոծ բնակչութեամբ ազդեցիկ տարր, առաւել նկատելի դարձան հենց 1937-38-ի ապստամբութիւնից ու աքսորից յետոյ եւ այսօր հենց արաբախօսները կազմում են Սասունի բնակչութեան հիմնական հատուածը, կարելի է բացատրել ապստամբութիւնից յետոյ ձեւաւորուած թէ՛ տնտեսական, թէ՛ քաղաքական մի շարք դրոյապատճառներով:

Նախ, ապստամբութիւնից յետոյ քրտական *ֆեոտալիզմ*ը ի սպառ տապալուեց Սասունում եւ հիմնական ու կարեւոր հողատարածքներին տիրած քուրտ աղաներին պար-

տադրուեցին խաղի նոր, ընդհանուր կանոններ, իսկ դա միանշանակ խախտեց Սասունում մուսուլման բնակչութեան հասարակական դիրքի նախկին հաւասարակշռութիւնը: Ի վերջոյ՝ նախկինում բացարձակ մեծամասնութիւն կազմող ու պետութեան կողմից մի շարք առաւելութիւններից օգտուող քրտերի ֆոնին տեղի արաբները գրեթէ լսելի չէին, իսկ այժմ պետական հարկահաւաքութեան, ինչպէս նաեւ քրտերի դեմ որդեգրուած ճնշումների քաղաքականութիւնը բոլորովին այլ հասարակական պատկերի ստեղծման պատճառ դարձան:

Երկրորդը՝ եթէ երկար ժամանակ Օսմանեան Կայսրութիւնում յատկապէս մուսուլման խմբերը դժուարանում էին էթնիկ պատկանելիութիւնից ելնելով յստակ անուններ տալ



իրենք իրենց, ապա 19-րդ դարի վերջից 20-րդ դարի սկզբներ երկրում տեղի ունեցած բազմաթիւ քաղաքական ու հասարակական իրադարձութիւններ առիթ դարձան, որպէսզի այս էթնիկ խմբերը յստակ տարանջատուեն իրարից, զգան միմեանց տարբերութիւններն ու առանձնաան հասարակութեան մէջ: Չենք սխալուի, եթէ ասենք, որ Սասունում այս գործընթացը սկիզբ է առել 1890-ականներին հայ-քրտական առաջին բախումներով, ապտուլիամիտեան կոտորածներով, շարունակուել Զայոց Տեղասպանութեամբ, եւ իր տրամաբանական աւարտին հասել 1937-ի ապստամբութեամբ, որից յետոյ արաբները ոչ թէ նոր եկան, այլ առաւել նկատելի դարձան՝ այլեւս կոչուելով ոչ թէ «մուսուլման», այլ հենց արաբ՝ քրտերի հետ ընդհանուր որակումների տակից դուրս գալով:

ԱՔՍՈՐ, ԶԱՄԱՆԵՐՈՒՄ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁ ԱՐԴԵՆ ՆՈՐ ՍԱՍՈՒՆ

Սասունում բախումները ընդհանուր առմամբ սկսուել են դեռ 1925 թուականից՝ ընդ-

հույ մինչեւ 1938-ի աքսորի հրամանը: Դրանից յետոյ էլ, սակայն, բազմաթիւ զինուած տղամարդիկ շարունակել են չյանձնուել ու երկար ժամանակ թափառել Սասունի լեռներում:

Յանձնուած զինեալները իրենց ամբողջական ընտանիքներով աքսորուել են հիմնականում Թուրքիայի արեւմտեան այնպիսի քաղաքներ, ինչպիսիք են Բալըքեսիրը, Զոչաեւիհն, Աֆիոնը, Չոնգուլդակը, Բուրսան, Մանիսան, Մուղլան, Տենիզլին, Այտընը եւ բազմաթիւ այլ բնակավայրեր, որտեղի բնակչութեան զգալի հատուածը թուրքախօս էր. լեզու, որը մինչ այդ սասունցիներին ամբողջովին անծանօթ էր:

Առնուազն 5-6 տարի տեւած աքսորից յետոյ մի շարք ցեղախմբեր որոշեցին օգտուել համաներումից եւ վերդառնալ Սասուն, սակայն, անշուշտ, հարկադրուած լինելով ընդունել խաղի նոր կանոնները: Յատկանշական է այն փաստը, որ աքսորից վերադարձած եւ նախկինում քրտախօս բազմաթիւ ցեղախմբեր ժամանակի հետ իւրացրին արաբերէնն ու Սասունի նոր՝ «միջանկեալ» ինքնութիւնը, որը Հայոց Յեղասպանութիւնից ու քրտերի հետ լայնածաւալ բախումներից յետոյ ամենաձեռնտու ինքնութիւնն էր այստեղ:

Ասել, թէ արաբները բնաւ մասնակից չեն եղել ապստամբութեանը՝ սխալ կը լինի, սակայն նրանց դէպքում տեմոկրաֆիկ պատկերի առումով դա էական դեր չխաղաց, քանի որ նախկինում էլ *Ֆեռտալիզա* օրէնքներով ապրող Սասունում արաբները, ինչպէս նշեցինք, քրտերի կողքին գրեթէ «չէին երեւում»:



Փրկուած հայերը մասնակից էին արդեօք Սասունի ապստամբութեանը: Հարցը, երեւի թէ անելորդ է: Շարունակելով ապրել գաւառում՝ ցեղասպանութիւնից փրկուած

հայերը Սասունի նորագոյն պատմութեան անքակտելի մաս են կազմել, իրենց մաշկի վրայ զգացել տեղի բոլոր քաղաքական զարգացումների հետեւանքները, զգացել փոփոխութիւններն ու զրկանքները: Աւելին՝ Սասունի ապստամբութիւնը կարելոր դեր խաղաց տարբեր քրտական ցեղախմբերի հովանուները յայտնուած փրկուած հայերի ճակատագրում, որոնք գաւառի մնացեալ բնակչութեան հետ միասին յայտնուեցին «արաբացման» ալիքի տակ ու դարձան արաբախօս: Այսպիսով՝ Սասունի արաբացած հայերի ուսումնասիրման համատեքստում 1937-38-ի ապստամբութեան ուսումնասիրութիւնը չափից դուրս կարելոր դեր ունի:

ԻՆՉՈՒՐ ԱՊՍՏԱՄԲԵՏ ԼԵՆԻՆՅԻՆ ՍԱՍՈՒՆԸ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԻՑ ԿԱՐՃ ԺԱՄԱՆԱԿ ԱՆՑ

Սասունի ապստամբութեան պատճառների մասին խօսելիս պիտի նշենք, որ գրական աղբիւրների խիստ սակաւութիւնը, իսկ բնակչութեան շրջանում մօտիկ անցեալի վերաբերեալ կարծիքների ու պատմութիւնների խեղաթիւրուածութեան լուրջ մակարդակը իսկապէս մեծ արգելք են պատմական այս իրադարձութիւնն ուսումնասիրողների առաջ:

Սասունի վերջին ապստամբութեան վերաբերեալ կայ մի քանի կարծիք, նրանցից ամենատարածուածը խիստ կենցաղային, Սասունում մեծ տարածում գտած մի պատմութիւն է, թէ ամբողջ «աղմուկ աղաղակը» բարձրացել է թուրք մի բարձրաստիճան զինուորականի՝ տեղի կանանցից մէկին անպարկեշտ առաջարկութեամբ ու դրանից յետոյ տուեալ ցեղախմբի տղամարդկանց կողմից սպանուելուց յետոյ: Ըստ պատմուածի՝ ի պատասխան պետութիւնը զօրք է ուղարկում Սասուն եւ սկսում են երկարամեայ բախումները:

Յատկանշական է, որ այս պատմութիւնը պատմում են հիմնականում այն քրտական ծագմամբ ու այսօր արդէն արաբախօս ցեղախմբերի ներկայացուցիչները, որոնք միանշանակ հերքում են իրենց՝ իրականում քուրտ լինելն ու այսպիսով փորձում են ապստամբութեանն ու դրա պատճառներին հաղորդել խիստ կենցաղային բնոյթ: Վերջիններս նաեւ պնդում են, որ մինչ ապստամբութիւնն արդէն խօսել են արաբերէն, մինչդեռ Սասունի հայերը մինչ օրս այս ցեղախմբերի ներկայացուցիչներին անուանում են «քրտի լամուկ»

Եւ պնդում՝ «Էն հին գամաններուն /ժամանակներուն/ արաքի /արաքերէն/ չկար, հըմէն քուրմանջի /քրտերէն/ իսկ հայերէն կը խօսէին օղանաւին մէջ /այստեղ/»:

Սասունի ապստամբութեան պատճառների վերաբերեալ միւս՝ իրականութեանն առաւել մօտ, սակայն ծայրայեղացուած կարծիքը այն է, թէ ապստամբութիւնը գուտ քրտական էր եւ թուրքական բանակի գործողութիւնները ուղղուած էին հէնց քրտերի դէմ: Այս թեզը առաջ քաշող շրջանակները չեն ընդունում Սասունում բացի քրտերից որեւէ այլ իրական ու ազդեցիկ էթնիկ տարրի գոյութիւնը՝ համարելով Սասուն գաւառը պատմական քրտտանի մի մաս, իսկ տեղի անխըտիր բոլոր արաքները՝ արաքացած քրտեր:

զանգուածային հարկահաւաքութեան օրերին՝ կարող ենք արձանագրել, որ հէնց այս թեզը իրաւունք ունի առաւել լուրջ ընկալուելու ու նոր ուսումնասիրութիւնների ենթարկուելու:

Յաշուի առնելով Յայոց Տեղասպանութիւնից յետոյ գաւառում սովի ու ջքաւորութեան բարձր մակարդակը, զանգուածային կողոպուտի մասշտապներն ու քրտերին խոստումներ տուած, բայց դրանք այդպէս էլ չկատարած պետութեան ու տեղի քրտական աշիրեթների միջեւ դեռ չհանդարտուած կրքերը՝ լիովին տրամաբանական է իրադարձութիւնների նման զարգացումը:

Սասունի վերջին ապստամբութեան մասին եզակի աղբիւրներից հանդիսացող հա-



Այս կարծիքը առաջ քաշող զանգուածը Թուրքիայի ձախակողմեանների այն մասնիկն է, որը վստահ է՝ բացի քրտական շարժումից այլ իրական յեղափոխական շարժում Թուրքիայում չկայ եւ չի եղել՝ մոռացութեան տալով նաեւ մինչ քրտական յուզումները ոտքի ելած հայ յեղափոխականներին:

Եւ վերջապէս Սասունի ապստամբութեան վերաբերեալ երրորդ՝ քիչ թէ շատ բնական թեզը այս իրադարձութիւնները կապում է գաւառի բացառապէս տնտեսական ծանր վիճակին՝ ապստամբութեան պատճառները բնութագրելով գուտ ընկերային: Յաշուի առնելով, որ բախումները «պայթեցին» հէնց Թուրքիայի Յանրապետութեան հռչակումից յետոյ, Սասուն գաւառում պետութեան կողմից մշակուած նոր *մեխանիզմ*ով առաջին

յազգի Ֆերման Թորոսլարի՝ «Աքսոր» թուրքալեզու գրքում հեղինակը նոյնպէս շեշտը դնում է սոցիալական պատճառների վրայ՝ հիմնականում չշեշտադրելով անգամ ապստամբութեան մասնակիցների ազգութիւնը:

Տաւօք, հայերը այս իրադարձութիւններում կրկին կրել են «ուժեղի մօտ միշտ թոյլն է մեղաւոր» կանոնի բոլոր անդամնալի հետեւանքները՝ քսորուել ու ճնշուել երբեմն իսկապէս զէնք բարձրացրած լինելով, երբեմն էլ առանց որեւէ պատճառի: Բազմաթիւ հայ որբեր, որոնք յայտնուել էին քրտական աշիրեթների ներսում, դեռ ցեղասպանութեան տարիներին՝ քսորուեցին նրանց հետ միասին կամ յայտնուեցին երկու հակամարտող կողմերի մէջտեղում՝ տուժելով թէ՛ նիւթապէս եւ թէ ֆիզիքապէս:

ՄԵՐ ԱՐՏԱՀԱՅԱՏՄԱՆԸ

Վրեժ-Արմեն

Սփիւռք, արտերկիր, գաղթաշխարհ, տարաշխարհ...

Որքան բառ, այնքան ալ տարբեր պատկերացումներ մեր իրավիճակին, որ անկասկած իւրայատուկ է, որքան ալ գաղթերն ու տարագրութիւնները համաշխարհային երեւոյթ ըլլան, որքան ալ բազմաթիւ ժողովուրդներ տակաւին հեռանան իրենց բնակավայրերէն, արտաքսուին իրենց հայրենիքներէն:

Արդարեւ, պատմութեան սկիզբէն ի վեր ցեղեր, ցեղախումբեր տեղափոխուած են

Տիրապետող սկզբունքը եղած է «ուր հաց՝ հոն կա՛ց»: Այդպէ՛ս է, որ մարդկութիւնը տարածուած, շէնցուցած է երկրագունդը: Այդպէ՛ս է նաեւ, որ հետզհետէ կազմուած են ժողովուրդներ, ազգեր եւ պետութիւններ:

Մենք ալ, ինչքան ալ վաղեմի ըլլայ մեր ներկայութիւնը Հայկական բարձրաւանդակին վրայ, արդիւնքն ենք տեղաշարժերու, միաձուլումներու, բաժանումներու: Եթէ Զրիստոսէ հազարամեակներ առաջ այնտեղ մեր ուրոյն քաղաքակրթութիւնը սկսած է կերտուիլ, արտագաղթեր տեղի ունեցած են նաեւ մեր երկրէն, յատկապէս ԺԱ. դարէն սկսեալ՝ Բագրատունեաց իշխանութեան անկումէն ետք, երբեմն անկէ ալ առաջ: Այս բոլորը՝ նման բազմաթիւ այլ հաւաքականութիւններու:

Ինչ որ ուրիշներէ կը տարբերէ այսօրուան մեր Սփիւռքը՝ անոր ընդհանուր բնոյթն է, որ հետեւեանքն է քանի մը ազդակներու.

1. Ան առաւելաբար կազմուած է Օսմանեան պետութեան կողմէ հայոց դէմ գործուած ցեղասպանութեան պատճառաւ: Ճիշդ է, 1915-էն, Նոյնիսկ 1895-էն ալ առաջ հայութիւնը կ'ապրէր հայկական հողերէն դուրս՝ Կ. Պոլիս, Թիֆլիս, Պարսկաստան (բռնի արտագաղթի հետեւանք), Հնդկաստան, Եւրոպա եւ այլուր, սակայն հայութեան բուն զանգուածը կը գտնուէր պատմական Հայաստանի ու Կիլիկիոյ տարածքներուն վրայ, եւ միայն Մեծ Եղեռնի պատճառաւ է, որ ցրուեցանք աշխարհով մէկ: Ներկայ գաղթաշխարհի այս հատուածը ճանչցուած է որպէս Դասական Սփիւռք՝ Միջին Արեւելքի եւ Արեւմուտքի մեր գաղթածախներով: Սա մեր վերապրած մեծ ծնողներուն եւ ծնողներուն Սփիւռքն էր, որ




ի որոնումն աւելի լայն տարածքներու, աւելի հարուստ բուսականութեան եւ արգասաբեր հողերու, աւելի հանգստաւետ պայմաններու:

կրնանք ըսել, թե գործնականին մեջ անոնց հետ ալ անցած է պատմութեան: Պիտի կոչեմ զայն **Վերապրումի տարաշխարհը**:

2. Այդ տարաշխարհը սկսաւ ձեւափոխուիլ անցեալ դարու 50-ական ու 60-ական թուականներուն, երբ Միջին Արեւելքի երկիրներու քաղաքական ու տնտեսական պայմանները վատթարացան ու հայերը, ուրիշներու նման, աւելի ապահով ու հանգիստ վայրեր փնտռեցին որպէս կայք: Այդ հայերը արդէն Մեծ Եղեռնէն վերապրողներու յաջորդ սերունդներն էին՝ մե՛նք, որ ոչ թէ վերապրելու, այլ աւելի լա՛ւ ապրելու նպատակով կը տեղափոխուէինք: Ընդհանրապէս՝ մե՛ր իսկ կամքով եւ ոչ ուրիշին պարտադրանքով. գուցե՛ պայմաններո՛ւն պարտադրանքով: Սա արդէն **Բարեկեցութեան տարաշխարհն** է, անոր առաջին տարբերակը, որ տակաւին կ'ընդլայնի: Անո՛ր մաս կը կազմէ այլեւս Դասական Սփիւռքը, այնքան ատեն, որ կրնայ ապահով երդիք մը ու կեցութիւն մը շնորհել իր բնակիչներուն:

4. Բարեկեցութեան տարաշխարհի երկրորդ տարբերակը սկսաւ կազմաւորուիլ 1975-էն ետք, երբ Խորհրդային Յայաստան ապրող հայեր սկսան գաղթել, արտօնութիւն ստացա՛ն, որ գաղթեն: Այս պարագային ալ նպատակը նոյնն էր՝ կեանքի աւելի լաւ պայմաններ գտնել, ոչ միայն նիւթական իմաստով, այլեւ ընկերային: Ուրեմն ա՛լ աւելի ընդլայնեցաւ Սփիւռքը, եւ այս պարագային նորանոր գաղթածախներ սկսան յառաջանալ: Վերելը նշուած ներքին Սփիւռքն ալ մաս կազմեց այս տարբերակին: Այս գործընթացը շարունակուեցաւ եւ աւելի մեծ թափ ստացաւ Յայաստանի վերանկախացումէն ասդին:

5. Այսօր սակայն Բարեկեցութեան տարաշխարհը նոր տարբերակ մը սկսած է ունենալ: Այդ՝ **Սահմանազերծ տարաշխարհն** է, որ, ինչպէս ըսուեցաւ, մարդկութեան պատմութեան սկիզբէն ի վեր գլխաւոր շարժառիթը եղած է գաղթերուն-տեղափոխութիւններուն: Սա արդէն մեր զաւակներուն եւ մեր թոռներուն Սփիւռքն է, որ դժուարաւ կարելի է



3. Կար սակայն զուգահեռ երկրորդ Սփիւռք մը, որ կազմուիլ սկսած էր հինէն, հաւանաբար ԺԹ. դարու երկրորդ կիսուն, կամ անկէ ալ առաջ, երբ Ռուսաստան Կովկաս իջաւ: Ամբողջ կայսրութիւնը մատչելի սկսաւ դառնալ արեւելահայութեան: Եւ չմոռնանք նաեւ համայնավար իշխանութեանց քաղաքականութիւնը՝ բռնագաղթի ու արքայի մարգերուն մէջ: Այս մէկն ալ կը ճանչցուէր որպէս Ներքին Սփիւռք, որ չունէր Դասական Սփիւռքի կազմակերպական կեանքը:

պարփակել որեւէ կազմակերպական յղացքի մէջ: Սա նաեւ հայրենաբնակ հայութիւնը իր հողերէն հեռացնող տարաշխարհն է: Աշխարհի քարտէզին վրայ որեւէ երկիր, որեւէ քաղաք կամ գիւղ ընդունելի վայր է բնակելու համար՝ եթէ կ'ապահովէ կեանքի ապահովութեան նուազագոյն պայմաններ ու... առաւելագոյն հասոյթ: Սկզբունքը՝ «ո՛ւր աւելի հաց, հո՛ն կաց», թէկուզ առժամաբար...: Այս Սահմանազերծ տարաշխարհը կրնայ արագ ու անչափելի թափով ընդլայնիլ:

Տարաշխարհի այս տարբերակները, բացի առաջինէն, այսօր գուհահեռաբար գոյութիւն ունին եւ գոյութիւն պիտի ունենան հաւանաբար դեռ երկար ժամանակ, քանի որ հայութիւնը իր սեփական հողերուն վրայ՝ իր հայրենիքին մէջ համախմբելու կարելիութիւնը տակաւին հեռու է իրականութիւն դառնալէ:

Կայ այսօր նաեւ տարաշխարհի այլ տարբերակ մը, որուն մասին խօսելէ առաջ, սակայն, կ'ուզեմ հարց տալ, թէ ի՞նչ են մեր ակընկալութիւնները Սփիւռքէն: Միանշանակ չեն անոնք, եւ կան տարբեր մօտեցումներ, երբեմն հակոտնեայ, որոնք շատ դժուար կը դարձնեն մեր ներկայ իրավիճակի ըմբռնումը:

Նախ՝ ամենէն բացասական, ամենէն յոռետես մօտեցումը: Այդ՝ իբր հայութեան անբաժանելի մաս՝ Սփիւռքի վրայէն գիծ քաշելն է: Այդպէս չէ՞ր խորհրդային տարիներու իշխանութիւններուն պաշտօնական կեցուածքը, մինչեւ որ հասկցան, թէ կրնային նաեւ օգտուիլ Սփիւռքի ներուժէն: Որքան ալ անկախութենէն ետք հայրենի նոր իշխանութիւնները հակառակը ուզեցին ցոյց տալ, մինչեւ հիմա քիչ չեն Սփիւռքը ժամանակաւոր ու ի վերջոյ անհետանալու դատապարտուած դաւանողները: Եւ շատ սփիւռքահայեր ալ կարծեք համակերպած են այդ պարտուողական ոգիին, ի գուր կը նկատեն ինքնութիւն պահելու ամէն ճիգ:

Ապա՝ ամենէն դրական, ամենէն լաւատեսական մօտեցումը. թերեւս «դրական» կամ «լաւատեսական» եզրերուն տեղ պետք է ըսել Սփիւռքէն ամենէն աւելի ակնկալիքներ ունեցող մօտեցումը: Այն, որ Սփիւռքը կը նկատու մնայուն երեւոյթ, իր սեփական ինքնութեամբ, իր մեծ ներուժով եւ կարելիութիւններով, իր հարցերը լուծելու մեծ կարողութեամբ, հայ ժողովուրդի քաղաքակրթական երթը շարունակողի դերով, ինչպէս եղած է անցեալին: Չմոռնանք, հայութեան մեծամասնութիւնը՝ երկու երրորդը, թէ՞ երեք չորրորդը հայրենաբնակ չէ այլեւս:

Եթէ միայն այս երկու ծայրայեղ մօտեցումները ունենային գոյութեան իրաւունք, ես երկրորդին հաւատացողներուն մէջ պիտի ըլլայի ի հարկէ: Սակայն այդ մէկը կ'ենթադրէ, թէ տարաշխարհի հայութիւնը գոյութիւն ունի իբր մէկ ամբողջութիւն, մէկ հայկական ամբողջութիւն, ինչ որ չի համապատասխաներ իրականութեան:

Այստեղ կ'ուզեմ ընել մէջբերում մը 2019-ի Յունուարին Արցախի մէջ գումարուած 337-33-րդ Ընդհանուր ժողովի որդեգրած ռազմավարական բանաձեւումներէն: Խօսքը կը վերաբերի Սփիւռքին.

«Ազգին համար սփիւռքահայութիւնը ունի բարոյական եւ քաղաքական անժամանցելի արժէք ու կարեւորութիւն: [...] Սփիւռքեան համայնքները կերտած են քաղաքական, տնտեսական եւ կազմակերպական իւրայատուկ ներուժ, որ պետք է հունաւորուի դէպի Հայաստանի հզօրացումը եւ համայն հայութեան ինքնահաստատումը: [...] Ռազմավարական նպատակ է Սփիւռքի հզօրացումը աւանդական եւ նոր համայնքներու մէջ [...]՝ հայկական իրականութենէն հեռացող, բայց տակաւին յուսալի բազմութիւններն եւ երիտասարդութիւնը հայկական ինքնութեան եւ հայութեան լինելութեան պայքարին շողկապուած պահելը»:

Այստեղ է, որ կ'ուզեմ աւելցնել վերելը նշուած՝ հայկական տարաշխարհի վերջին տարբերակը, որ պիտի կոչեմ **Պայքարի տարաշխարհը**, որ գոյութիւն ունի Բարեկեցութեան տարաշխարհին առընթեր, եւ որուն մաս կը կազմենք հայութեան ճակատագրով մտահոգուողներս, մեր այլազան կազմակերպութիւններուն մէջ եւ շուրջ համախմբուածներս, կուսակցութիւններուն մէջ թէ անոնցմէ դուրս՝ հաւաքաբար թէ անհատապէս հայ կեանքին մէջ մեր նիւթական թէ բարոյական մեծ թէ փոքր ներդրումը կատարողներս: Այո՛, փոքրամասնութիւն մըն ենք, բայց որքան Բարեկեցութեան տարաշխարհի հայութիւնը դառնայ Պայքարի տարաշխարհի հայութիւն՝ այնքան զօրաւոր կ'ըլլայ թէ՛ Սփիւռքը եւ թէ՛ Հայրենիքը:

Սփիւռքի գոյութիւնը ինքնանպատակ չէ՛, չի՛ կրնար ըլլալ: Սփիւռքը հայութեան անբաժան մասն է, Հայրենիք եւ Սփիւռք մէկ ամբողջութիւն ենք, մեր տարբերութիւններով հանդերձ, մեր տարակարծութիւններով հանդերձ: Այդպէս եղած է ի սկզբանէ, Մեծ Եղեռնէն առաջ, ետքը, Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան օրերուն, խորհրդային տարիներուն եւ ներկայիս:

Մեր մարտահրաւերը անսասան պահելն է այդ ամբողջականութիւնը՝ Հայաստանի եւ Արտահայաստանի ամբողջականութիւնը: Ահա այդ մարտահրաւերը ունենալով է, որ մենք կը տարբերինք բոլոր միւս սփիւռքներէն:

ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Շողիկ Աշղգեան

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Սփիւռքահայ մանկավարժական տեսական եւ փորձագիտական մտքի արգասիքը ցիրուցան վիճակ կը պարզէ: Ուսումնասիրուած չէ աւելի քան մէկ դարու սփիւռքահայ մանկավարժութեան պատմութիւնը եւ անոր նուաճումները:

Ի՞նչ հարցում պէտք է քննարկենք եւ անոր լուծումը գտնենք, երբ քննարկման կ'ենթարկենք արեւմտահայերէնի ուսուցման կարելորութիւնը:

Արեւմտահայերէնը Սփիւռքի լեզուն ըլլալով՝ պէտք է անոր առնչուող հարցերը քննարկել սփիւռքեան աշխարհայեցողութեամբ: Ի՞նչ է **խնդիրը**, եւ թէ ինչպէս կը **բանաձեւենք** զայն, ատկէ կախեալ կ'ըլլայ անոր լուծումը:

Վերնագրի նման սահմանումով, ի յառաջագունէ, հարցը չի վերաբերիր արեւմտահայերէնի ներկայ իրավիճակին, դպրոցին մէջ անոր կարգավիճակին ու ուսուցման խնդիրներուն: Հոս դրուած հիմնախնդիրը արեւմտահայերէն սորվեցնելու նպատակային իմաստն է: **Ինչո՞ւ**, կարելոր է արեւմտահայերէնի ուսուցումը:

Բայց եւ այնպէս հիմնահարցը կը քննարկուի սուրիահայ գաղութի Հայ դպրոցի կարգավիճակէն, ընդհանրապէս հայեցի կրթութեան պայմաններէն ու պահանջներէն մեկնած եւ անոնց լոյսին տակ՝ առաւելաբար խորքային եւ հեռապատկերային ընդգրկումով:

Հիմնահարցի քննարկման հիմունքները կը կազմեն՝ արեւմտահայերէն ուսուցանելու, հայեցի կրթութիւն ջամբելու, երկրորդական բաժնի դաստիարակի երկարամտայ անձնական փորձը (փորձառական հիմունք), տեղա-

կան կրթական պայմաններէ բխող մանկավարժական էաբանական հայեցողութիւն մը (տեսական մօտեցում) եւ սփիւռքահայ դպրոցինպատակային-հեռանկարային աշխարհայեացք մը (սփիւռքահայ մանկավարժական աշխարհայեցողութիւն):



Ա. ԵՆԹԱԽՈՐԸ. ՊԱՏՄԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՍԱՓՈՐՁԷՆ ՈՐՈՇԱԿԻ ՓԱՍՏԵՐ
Պոլիսը՝ Արեւմտահայերէնի եւ Արեւմտահայ Գրականութեան Օրրան
Կազմաւորումէն մինչեւ Եղեռն արեւ-

մտահայերենը զարգացման ընթացք մը ապրեցաւ Պոլսոյ մէջ, ուր յաջորդաբար ծնունդ առին ու ծաղկեցան վիպապաշտ, իրապաշտ արեւմտահայ գրական դպրոցները, ուր արեւմտահայերէնն ու արեւմտահայ գրականութիւնը 1900-1915-ին նուաճեցին բարձրունքներ գեղապաշտ-խորհրդապաշտ սերունդի օրով: Պոլիսը սակայն Հայաստան չէր, այլ քաղաքական, կրթական, մշակութային, եկեղեցական, հասարակական բեղուն կեանքով ապրող **հայահոծ** ծաղկուն միջավայր մը, ուր մանաւանդ **կեդրոնացած** էր արեւմտահայ **մտաւորական ներուժը**, եղեռնով խորտակուեցաւ այդ բոլորը, դադրեցաւ հայ գրականութեան զարգացման ընթացքը եւ արեւմտահայերէնը արմատախիլ եղաւ պատմական միջավայրէն: Ժամանակի եւ տարածքի առումներով մշակութային-քաղաքակրթական այդ խզումին հետեւանքները կը կրենք ցարդ, մինչ յաղթահարած ենք եղեռնի խոցին ֆիզիքական ու հոգեբանական անդրադարձները:

Կենաց ու Մահուան Ճամբուն Վրայ՝ Արեւմտահայերէնը Փրկութեան Միջոց

Եղեռնին յաջորդող առաջին մէկ երկու տասնամեակներէն մեզի հասած արաբական անապատի աւազներուն վրայ իր գաւազին Այբուբեն սորվեցնող հայ մօր հաւաքական կերպարին կերտումը՝ արքայական ու թափառական, անեացման սեմին հասած եւ անոր դէմ մաքառող ազգի մը ցիրուցան խլեակներու կողմէ, չէր կրնար ինքնանպատակ ըլլալ եւ կամ ըլլալ սոսկ հոգեկան անդոհանքի մը մղումէն ծնած բնագոյային հակազդեցութիւն, տրուած ըլլալով որ լեզուն մշակութային երեւոյթ է: Այս պարագային լեզուի ուսուցման նպատակը եապէս **ինքնութիւնը պահպանելու նպատակին կը հետամտի**. «Յեղասպանութենէն ետք մեզի մնացած կենդանի միակ բանը **լեզուն է, եւ անով է որ կրնանք պահպանել մեր ինքնութիւնը**»:

Ազատ ու ապահով Միջավայրի մէջ՝ Արեւմտահայերէնի Նահանջ

Նոյն այդ տասնամեակներուն բայց, անապատէն շատ հեռու եւ ազատ պայմաններուն մէջ ականատեսը կը դառնանք այդ հարցին՝ գրականութեամբ բարձրացուած:

«(...) ոչ թէ որովհետեւ այժմ ճակատամարտ կայ ու կենսապայքար, այլ որովհետեւ կայ բան մը աւելի ճակատագրական, աւելի անհեղ, որ իր անունը կ'ոռնայ բոլոր քառուղի-

ներէն, **Նահանջն է, Նահանջը, Նահանջը հայերուն: Կռիւր սրբազան բան է, ճակատամարտը՝ երբեմն նոյնիսկ օգտակար**. Անոնցմէ ազգ մը դուրս կու գայ պարտուած կամ յաղթական, սակայն երկու պարագային ալ դուրս կու գայ: Բայց **Նահանջը հոգիներուն՝ կը ջնջէ, կը ձուլէ, կ'անհետացնէ ամէն բան**»:

«Կը **Նահանջեն ծնողը, որդի, քեռի, փեսայ, կը Նահանջեն բարք, ըմբռնում բարոյական, սեր: Կը Նահանջէ լեզուն, կը Նահանջէ լեզուն, կը Նահանջէ լեզուն: Եւ դեռ մենք կը Նահանջենք բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, մեղայ, մեղայ Արարատին»»: (Շ. Շահնուր, «Նահանջը Առանց Երգի», Փարիզ, 1929):**

Յղումը կ'երթայ Փարիզի օրինակին իբրեւ սփիւռքահայ գրականութեան մէջ աւանդական գիծէն անկիւնադարձ արձանագրող առաջին կեդրոն: Ուշադիր ընթերցումը վերելի տողերուն ցոյց կու տայ բացայայտ ճշմարտութիւն մը, որ **հայ հոգիներու** համընդհանուր **Նահանջին** մէջ կը **Նահանջէ լեզուն**: Փարիզի նոր ու ազատ միջավայրի մէջ հայ գանգուածներու **ինքնութեան կորուստին** ականատես Շահնուր կ'ահագանգէ բուն ա՛յդ վտանգը եւ ոչ թէ սոսկ լեզուին **Նահանջը**՝ ինչպէս յաճախ կը բացատրուի մասնակիօրէն: 25-26 տարեկան, Պոլսոյ Պերպերեան վարժարանի շրջանաւարտ Շ. Շահնուր կասկած վեր է որ **իրական կացութենէն** մեկնելով այսպիսի գորշ գոյններով կը նկարագրէ ֆրանսասահայ կեանքի իրավիճակը, բայց ան այդ մէկը կրնար կատարել բաղդատաբար ճիշդ նախաեղեռնեան շրջանին Պոլսոյ հայատրոփ կեանքին: Նոյն ա՛յն միջավայրէն ուրկէ Շահնուր ահագանգ կը հնչեցէր լեզուի **Նահանջին**՝ հոն լեզուն կը նորոգուի ժամանակագրական հեռաւորութեամբ (Սարաֆեան, Պըլտեան երեւոյթ), բանաստեղծութեամբ ու արձակով՝ ապացուցելով արեւմտահայերէնի զարմանահրաշ կարելիութիւնները:

Կրկին Պոլիս. Շրջադա՛րձ, թէ՞ Յառաջընթաց

Մինչ Շահնուրի մեկնած վայրէն՝ ցեղասպանութենէն ետք, 1920-1924-ին հայ գրականութեան Մաթեոս Չարիֆեան տուած Պոլիսէն, Ռ. Հատտեճեան Շահնուրի պէս, 2011-ին կը հնչեցնէ, թէ Պոլսոյ մէջ «**Մեր Մայրենի Լեզուն Մահամերձի Անկողիկին մէջ**» է: (Տէ՛ս, Ռ. Հատտեճեան, «**Մեր Մայրենի Լեզուն Մահամերձի Անկողիկին մէջ**» Պէյրուս, 2011):

Գրքոյկը կը պարունակէ Յունիս-Յուլիս 2011-ին, «Մարմարա» օրաթերթին մէջ լոյս տեսած հեղինակին 12-ը յօդուածները): Ռ. Յատտեճեանի Պոլիսը այն չէր, ինչ որ եղած էր քսաներորդ դարու առաջին տասնամեակին: Այս պարագային ալ սակայն, ինչպէս Շահնուրի մօտ, Ռ. Յատտեճեանի համար խնդրոյ առարկան ըստ ինքնեան լեզուն չէ, այլ սեռման առարկան **հայ հոգիներու** նահանջողական վիճակն է, որուն հետեւանքով կը խամրին ինքնութիւն ու լեզու:

Միւս կողմէ սակայն, մինչ այդ, Նոյն Պոլսոյ մէջ Ռ. Յատտեճեանի հասակակից գրչակիցները Չարհատ եւ Չարեհ Էրախունի բաւաստեղծական կալուածին մէջ մտածողական ու գրական արուեստի Նորարարական շարժումի ջահակիրներն էին եղած:

Վրեմտահայերէնը՝ Վտանգուած Լեզու
ԵՌՒՆԵՍԶՕ-ն, 1950-ական թուականներէն սկսած էր խոցելի, վտանգուած լեզուներու քարտեզի պատրաստութեան: Լեզուներու դասակարգման հետեւեալ վեց աստիճանները ճշդուած են. **Ապահով, խոցելի, որոշակիօրէն վտանգուած, խիստ վտանգուած, ճգնաժամային կերպով վտանգուած, մեռած:** Հիմնուելով 2008-ին կատարուած ուսումնասիրութեան մը արդիւնքներուն վրայ՝ 2010-ին, քարտեզին վրայ արեւմտահայերէնը աւելցաւ իբրեւ **որոշակիօրէն վտանգուած** լեզու: Լեզու մը այդ կարգավիճակը կը ստանայ, երբ **մանուկները այլեւս տան մէջ լեզուն չեն սորվիր իբրեւ մայրենի լեզու:** Նկատողութեան արժանի երկու պարագայ. ա) արեւմտահայերէնի միայն **խօսակցական** վիճակը ուսումնասիրուած է եւ անոր արդիւնքն է որ նկատի առնուած է, բ) ինչ որ աւելի հետաքրքրական է, ուսումնասիրութեան առարկայ դարձած գաղութները Միջին Արեւելքի եւ ընդհանրապէս Սփիւռքի ամենէն հայախօս գաղութներն են. Լիբանան, Սուրիա, Եգիպտոս, Իրաք, Նաեւ Պոլիսը եւ Վազըֆ հայկական գիւղը Թուրքիոյ մէջ:

Սուրիահայ Գաղութի Հայ Դպրոցը

Նկատի ունենալով ուսումնասիրուած գաղութներուն մէջ Սուրիոյ ներառնուած ըլլալը, բնականաբար ԵՌՒՆԵՍԶՕ-ի ուսումնասիրութեան արդիւնքն ալ կը տարածուի անոր վրայ: Այս հաշուով **Սուրիահայ գաղութին մէջ եւս արեւմտահայերէնը որոշակիօրէն վտանգուած է:** Անկախ անկէ, ունի՞նք վերապահումներ, թէ չունինք, համաձայն ենք

կամ՝ ոչ նման բանաձեւումի, եւ կամ նման եզրակացութիւն որչափո՞վ կը համապատասխանէ կամ ոչ իրականութեան, գիտական ուսումնասիրութեան մը արդիւնքները անառարկելի են, այնքան ատեն որ Նոր արդիւնքներ չկան: Լաւ կ'ըլլայ անշուշտ սուրիահայ գաղութի կարելիութիւններով ուսումնասիրել, թէ ի՞նչ վիճակ կը պարզէ արեւմտահայերէնը, եւ ապա ըստ այնմ ալ ճշդել իսկական հարցերն ու գտնել զանոնք լուծելու միջոցները:

Մէկոյի դնելով հայեցի կրթութեան նպաստող տեղական բարենպաստ առարկայական պայմաններու թուարկումը, ներգաղութային դրական տուեալներով կարելի է ապացուցել, որ սուրիահայ գաղութը կը շարունակէ մնալ արեւմտահայերէնի կենսունակ միջավայրերէն մէկը, եթէ ոչ ամենէն կենսունակը՝



Նոյնիսկ տագնապի այս ժամանակաշրջանին, երբ գաղութը կորսնցուցած է իր որակական ու քանակական ներուժի մէկ որոշակի տոկոսը: Անսխադէպ իր կոտորակումով հանդերձ գաղութը կը շարունակէ պահպանել իր աւանդական կառուցուածքը՝ կը գործեն դպրոցները, բոլոր հաստատութիւններն ու միութիւնները:

Լեզուի տեսակետէն ներկայիս ալ գաղութը հայախօս է, ազգային կեանքին մէջ պաշտօնական բանաւոր խօսքը եւ բոլոր տեսակի գրաւոր գործառնոյթները կը կատարուին հայերէնով: Առաջին հերթին գաղութը այս բոլորը կը պարտի իր դպրոցական խիտ ցանցին: Եւ ինչպէս ցոյց կու տան փաստերը, դպրոցականներուն բացարձակ մեծամասնութիւնը կը յաճախէ հայկական վարժարան եւ Նոյնպէս անոնց մեծամասնութիւնը կու գայ երկկողմանի հայ ծնողներէ: Հակառակ ուղ-

ղակի Հայերենի կարգավիճակին առնչուող որոշակի սահմանափակումներուն, այնքան ատեն որ գերակշռող կը մնան վերջին այս ցուցանիշները, ապահովաբար գաղութը կրնայ պահել իր հայեցի դիմագիծը:

Ընդհանրապէս Հայ Դպրոցը Առնչաբար Քննարկման Դրուած Հիմնախորին

Մնալով Պոլիս- Փարիզ գիծին վրայ՝ պարտաւորիչ մէկ հարցում. Պիտի ունենայի՞նք Շ. Շահնուր, Չահրատ, Չարեհ Խրախունի, Պըլտեան եւ այլք, եթէ գոյութիւն չունենար հայ դպրոցը: Բնականաբար՝ ո՛չ, այնքան ատեն որ տակաւին կը պակսին հակառակը ապացուցող մէկէ աւելի փաստեր: Եթէ իրենք զիրենք հաստատող հայագիր գրագետներ պիտի ունենանք ասկէ ետք ալ՝ անոնք անցած պիտի ըլլան հայկական դպրոցներէն:

Եզրակացութիւն

Վերոնշեալ շարադրանքի լոյսին տակ, կարելի է կատարել հետեւեալ եզրակացութիւնները:

- Հայեցի դիմագիծի տեսակէտէն, Սփիւռքին յատուկ եղած է խամրող եւ ճառագայթող կեդրոններու երեւոյթը, պայմանաւորուած արտաքին եւ ներքին գործօններով:

- Եթէ լեզուն ըլլար նահանջողը՝ պիտի պարտուէր. հետեւողական նահանջին վախճանը անխուսափելիօրէն պարտութիւն է: Եթէ լեզուն ըլլար մահամերձը՝ պիտի մահաւար: Մինչդէռ մէկ դարու սփիւռքեան կենսափորձը հակառակին ապացոյցը կու տայ. արեւմտահայերէնը, հակառակ պատմական միջավայրէն արմատախլուած ըլլալուն, տեղ-տեղ կենսունակ, տեղ-տեղ խամրած, բայց կենդանի է, կը գոյատեւէ (խօսակցական եւ գրաւոր ձեւերով), գրագետներու գրչին տակ կը վերանորոգուի՝ ինչորկը փաստէ մեր մայրենիին ճկունութիւնը, կենսունակութիւնը, վերանորոգուելու անսահման կարելիութիւնները:

- Վտանգուածը եւ հիմնախնդիրը հայ հոգիներու **ինքնութիւնն** է: Շահնուրի «Նահանջ»էն Հատտեճեանի «Մահամերձ»ը հաւասարապէս կը դրուի ինքնութեան ու անոր պահպանման խնդիրը եւ ամբօրէն անոր առնչութիւնը լեզուին հետ:

- Սփիւռքահայը կը շարունակէ մնալ Եղեռնի մշակութային հետեւանքներուն ենթակայ, զանոնք կրողն ու յաղթահարել փորձողը:

- Լեզուն **բանալին է հայ ինքնութեան:**

Անոր պահպանման եական երաշխիքը:

- Ըստ ինքեան Արեւմտահայերէնը **խնդիր չէ**, այլ ընդհակառակը լուծումի միջոց մըն է ինքնութեան հարցերուն: Հետեւաբար պետք չէ հոգիներուն նահանջը լեզուին վրայ տարածել:

- ԵՌՆԵՍԵՕ- ի որոշումը արեւմտահայերէնի կարգավիճակին որոշակի կերպով չի դնէր Հայ հոգիներու **ինքնութեան** կորուստի հարցը, այլ առաւելապէս կը բարձրացնէ մշակութա-քաղաքակրթական խնդիր մը հետեւեալ եզրայնագումով. Լեզու մը եթէ կորուստի մատնուի՝ համաշխարհային քաղաքակրթութենէն բան կը պակսի:

- Սուրիահայ գաղութը՝ արեւմտահայերէնի կենսունակ միջավայր է:

- Անցեալի փորձը կրնայ օրինակի դեր կատարել, երբ կը քննենք ներկայ իրավիճակը:

Բ) ՀԻՄՆԱԿՆՆԴՐԻ ՎԵՐԼՈՒԾՄԱՆ ՄԵԹՈՏԱԿԱՆ ՄՕՏԵՑՈՒՄԵՐ (ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏ)

Նպատակային պատասխաններ փնտռելու եւ գտնելու համար մեթոտական մօտեցումը կը դառնայ անհրաժեշտութիւն:

- Աշակերտի Ամբողջական Բնութագրում Հաւասարաչափ Էռանկին. (Մարդակեդրոն, Էաբանական մօտեցում).

Ո՞վ է հայկական դպրոց յաճախող աշակերտը: Ինչպէ՞ս կրնանք մտածել սորվող-աշակերտին մասին: Ան անքակտելի ամբողջութիւնն է **աշակերտ-մարդ-հայ** հասկացութիւններուն: Սորվողին մասին կարելի է մտածել միայն այս երեքը միաժամանակ: Անկէ դուրս որեւէ այլ բնորոշում կը դառնայ մասնակի: Հակասութիւն չկայ այս երեքին միջեւ: Եթէ հակասութիւն դնենք եւ կամ մէկն ու մէկը գերադասենք կամ թերգնահատենք խախտում առաջացուցած կ'ըլլանք աշակերտին բնական, լիարժէք զարգացման առջեւ:

Երեք բաղադրիչներն ալ կը յղուին մեկնակետային յղացքի. Էակ=Էութիւն=Ինքնութիւն: Ամէն էակ ինքնին էութիւն է եւ ունի ուրոյն ինքնութիւն: Աշակերտը էակ մըն է, այսինքն ունի էութիւն մը, որ իր իսկ ինքնութիւնն է: Ամէն աշակերտ մարդ է, բայց ամէն աշակերտ հայ չէ: Աշակերտ ըլլալը ժամանակաւոր վիճակ մըն է, Հայ ու մարդ ըլլալը՝ տեւական իսկութիւն մը: Աշակերտը ներգոյական կարողութիւն մըն է, որ լիարժէք աճելու, ինքզինք իրագործելու արտագոյ կարելիութիւններու, նպատակայարմար միջավայրի ու մթնոլորտի պետք ունի, որ աճի, ինքզինք իրա-

գործե, իր կարողություններն ու կարողականությունը ի կատար ածե: Հայեցի կրթության համար անհրաժեշտ են այդ բոլորը: Դպրոցին դերը աշակերտ-սորվող ներգոյական կարողականության հետ վարուիլն է իբրև ամբողջականություն: Երբ մեկդի դնենք **մարդ** բաղադրիչը աշակերտի մասին մեր մտեցումը կը մնայ թերի, իսկ մեր ջամբած կրթությունն ու դաստիարակությունը՝ ոչ լիարժեք: Մինչ աշակերտին **հայ** ըլլալու հանգամանքն է, որ հայ դպրոցը, հայեցի կրթությունը, արեւմտահայերէնի ուսուցումը, հայ մաշկոյթի փոխանցումը կը դարձնէ նպատակային, իսկ այլապէս՝ անիմաստ: Աշակերտին պէտք է տալ կարելիութիւն, իրաւունք եւ միջավայր՝ ըլլալու այն **կերպը, որ իր ինքնութիւնն է:**

- Բուրգի Տեսութիւն (Լեզուաբանական Մօտեցում)

Այստեղ լեզուի ուսուցման **ձեւական** երեսը, դասաւանդման մեթոտական հարցերը մեր նիւթէն դուրս կ'իյնան: Անոնք կ'առնչուին «սորվեցնել **ի՞նչ**» եւ «սորվեցնել **ինչպէ՞ս**» հարցերուն եւ ոչ թէ «**ինչո՞ւ** սորվեցնել»ուն, որուն պատասխանը գտնելը մեր նպատակն է ա՛յս պարագային: «**ինչպէ՞ս**»ը նուազագոյն հարցադրելին ըլլալու է եւ առաւելագոյն դիւրաւ յաղթահարելի մարտահրաւերը արեւմտահայերէնի (իբրև լեզու) ալ պարագային, տրուած ըլլալով որ դասագիրքերու հետ «Ուղեցոյց» չըլլալու պարագային իսկ, կարելի է օգտուիլ ուսուցման արդի մեթոտներու մասին հրատարակուած բազմակրթանք եւ դիւրամատչելի գիտական գրականութենէն:

Շատ կարելոր է անշուշտ լեզուի ուսուցման նուազագոյն եւ առաւելագոյն չափորոշիչներու ճշդումը, անոնց կիրարկումն ու իրագործումը դասարան առ դասարան, հետեւողականութեան, համալրման, ընդլայնման, խորացման եւ ամբողջացման սկզբունքներով:

Լեզու մը իւրացուած կը նկատուի, երբ անհատ մը գայն կը հասկնայ, կը խօսի, կը կարդայ, կը գրէ: Դիւրինէն դէպի դժուար որելէ լեզու իւրացնելու բուրգը քառաստիճան է՝ **հասկնալ-խօսիլ- կարդալ-գրել**: Հայ դպրոցը պարտի հետամուտ ըլլալ իրագործելու՝ **ճիշդ** խօսիլ, **սահուն** կարդալ, **անսխալ** գրել չափորոշիչը: Գիտական ուսումնասիրութիւններ կ'անայս չափորոշիչի ցուցանիշներու մասին:

Հայ իրականութեան մէջ ընդհանրացած

մտայնութիւն մը կայ, որ լեզուն անպայմանօրէն ինքնութեան էական բաղադրիչ չի նկատեր, առանց սակայն մերժելու լեզուի կարելորութիւնը: Այս մտայնութեան կրողներուն համար օրինակը Արեւմուտքի հայկական գաղութներու մէջ հայ կեանքին գործուն մասնակցութիւն բերող, սակայն հայերէն չիմացող երիտասարդ տարրն է: Հայ դպրոցը, աշխարհագրական ո՛ր գօտիին մէջ ալ գտնուի, չի կրնար ընդունելի համարել այս տեսակետը, որովհետեւ այդ պարագային ընդհանրապէս հերքած կ'ըլլայ իր գոյութեան իմաստն իսկ:

Շատ կարելոր է, թէ մեր դպրոցները ի՞նչ մօտեցում ունին արեւմտահայերէնի ուսուցման, անոր կարելորութեան եւ նպատակին մասին: Խօսքը չի վերաբերիր քարոզչական նպատակներով ամեն առիթով հնչող հռետորաբանութեան, այլ դպրոցական հիմնական ուղղութեան: «Հայը հա՛յ պահելու» հասարակաց տեսակետը արդեօք բաւարա՞ր բացատրութիւն է:

Արեւմտահայերէնի ուսուցման կարելորութիւնը կը կայանայ ամբողջական համակարգ մը ըլլալուն մէջ, որ մեկնակետէն նպատակ համաժամանակեայ կիրարկում կ'ենթադրէ. այսպէս՝ **լեզու-լեզուամտածողութիւն-արժեհամակարգի իւրացում-աշխարհայեացքի ձեւաւորում-ինքնութեան կերտում, եւ անոր ամրապնդում**: Շրթայական այս իրողութեան ըմբռնումով միայն կարելի է իմաստաւորել եւ արժեւորել հայերէն դասանիւթը, հայեցի կրթութիւնն ու հայ դպրոցը: Այսպիսով միայն արդարացուած կ'ըլլայ Հայ դպրոցին պահպանումը՝ այնքան զոհողութիւններու գնով: Այլապէս ինչո՞ւ Հայ դպրոց, եթէ պիտի չծառայէ բո՛ւն իսկ իր նպատակին: Այսպիսով՝ «**Հայերէն սորվեցնել**»ը իր նպատակով եապէս կը տարբերի, այլ լեզուներու ուսուցումէն:

Արեւմտահայերէնի Ուսուցման Կարելորութեան Դիտանկիւնէն Սփիւռքահայ Դպրոցի Արժեւորման Փորձ (Աշխարհայեացքային Մօտեցում)

Թէ Սփիւռքը ինչպէ՛ս կը պատկերացնենք, անոր դերը ինչպէ՛ս կը սահմանենք, այդ կետէն ալ կը սկսի Հայ դպրոցին գոյութեան արժեւորումը, անոր նպատակին ճշդումը:

Նոյնիսկ եթէ պնդենք, թէ գուտ համայնքային կեանքով կ'ապրինք, չենք կրնար գանց առած ըլլար այն իրողութիւնը, որ սփիւռքա-

հայ կեանքը ընդհանրական բնորոշումով օտարին հետ ամենօրեայ եւ անմիջական շփումի երես ունի: Սփիւռքահայը իր ինքնութեամբ ամեն օր կը հանդիպի օտարին, կը շփուի անոր հետ, կը բախի անոր, կ'ազդէ ու կ'ազդուի անկէ: Այս ընթացքին երկկողմանի կերպով տեղի կ'ունենայ բարք ու վարքի, կենցաղի փոխանցում: Կարելի չէ պատկերացնել ինքնամփոփ, ինքնաբաւ ու կղզիացած սփիւռքահայ կեանք:

Արեւմտահայերէնը Սփիւռքի լեզուն է: Զայ դպրոցը սփիւռքեան իրավիճակին պարտադրանքով իսկ չի կրնար չդնել ու չհետապնդել գոյութեանական, լինելութեան նպատակ, որովհետեւ իր այսօրուան աշակերտը վաղուան սփիւռքահայ մարդն է: Անոր ոտքին տակ ամուր հող պատրաստելու համար՝ զայն պետք է պատրաստել այդ կեանքին համար:

Ինչպէս կը մտածենք, այնպէս ալ Սփիւռք իր տարածքին պարտինք այդ հիման վրայ հայեցի կրթութեան ռազմավարութիւն ուրդեգրել: Արտաքին խոչընդոտներ, հասարակական սխալ մտայնութիւններ, ճնշումներ, դպրոցական դժուարութիւններ կան, ըլլալու են: Զայ դպրոցը պարտի սակայն տուրք չտալ այդ բոլորին, չգիշիլ, չշեղիլ ազգային արժեհամակարգի վրայ հիմնուած հայեցի կրթութեան բովանդակութենէն, ռազմավարութենէն, այլ ընդհակառակը ինք դառնայ հակակըշուողը, հասարակական գիտակցութիւնը ուղղորդողը՝ հաւատարիմ մնալով **դպրոց=ուղղութիւն** եական բնորոշումին: Զայ դպրոցը պարտի գործել ազգային աշխարհայեցողութեամբ եւ անկէ բխող հրամայականներու թելադրականութեամբ: Դպրոցի յստակ, վճռորոշ եւ նպատակային դիրքորոշումը այս պատկերացումով որոշիչ է արեւմտահայերէնի ուսուցման յաջող իրագործման համար:

Մեկնելով Սփիւռքի պայմաններէն՝ պետք է ջամբել այնպիսի հայեցի կրթութիւն, որ իբրեւ անփոխարինելի մոզական բանալի, սփիւռքահայու խնդիրներուն լուծման ծառայէ: Ասկէ՝ կը ծագի ընդլայնելու պատասխանը ա՛յն հարցումին, թէ որո՞ւն համար, ի՞նչ բանի համար հայ դպրոցը կը պատրաստէ իր աշակերտները, միայն համալսարանի՞ համար, բացառապէս ազգի՞ն նպատակներու համար, թէ՞ նաեւ **Կեանքին** համար: Զայ դպրոցէն ներս է, որ պիտի յաղթահարուին

սփիւռքահայու այն հարցերը, որ ինքնութեան կը վերաբերին, եւ որոնց աշակերտ-սորվողը պիտի հանդիպի ապագային: Ան անոնց պատասխանը նախապէս գտած պետք է ըլլայ, որ իր ինքնութեան մէջ դառնայ անկոտրում, որպէսզի օտարին դէմ յանդիման, անոր հետ գործի թէ իմացական ոլորտի հաղորդակցութեան պարագային, իր ինքնութեան մէջ ինքզինք զգայ հանգիստ, հարազատ, հպարտ, համարձակ ու հաստատուն: Այդ պարագային ան կեանքին մէջ չի պարտուիր իր հայութեան մէջ, իր պատկանելիութեան կը մնայ հաւատարիմ: Արեւմտահայերէնի ուսուցման կարելորութիւնը ահաւասիկ նման կալուածի հրամայականներուն կը պատասխանէ: Իր հարազատ մշակոյթի հենքին վրայ կրթուած մարդը կրնայ անվարան բացուիլ օտարին, իբրեւ քաղաքացի ու մարդ:

Կարելորագոյն Առանցքը (Մարդաբանական Սօստեցում)

Զայ դպրոցին առաքելութիւնը աւելի հեռու կ'երթայ ուսումնական մարդ պատրաստելէն, ինչ որ որեւէ դպրոցի բնական գործառոյթն է: Զայ դպրոցին մթնոլորտը, առարկայական շրջագիծը, հայեցի շունչով յագեցած ըլլալու է՝ որպէս նպաստող գործօն եւ եական բաղադրիչ դպրոցի բուն առաքելութեան հեզասահ իրագործման:

Դպրոցէն ներս կրթութեան հիմնական միջավայրը դասարանն է, իսկ առանցքը՝ **ուսուցիչ-աշակերտ (սորվեցնող-սորվող) հորիզոնական** կապը: Այս իմաստով դասարանը մասնաւորապէս իւրայատուկ իմաստաւորում կը ստանայ հայերէնի դասապահին՝ հարազատ մշակոյթի շրջագիծին մէջ հոգիէ հոգի երկարածագուող, մարդկային կախարդական ոգեղէն կապով: Զգողական-քաշողական ուժերու օրինաչափութեան նմանողութեամբ՝ դասարանը կը դառնայ **միկրո-աշխարհ եւ տիեզերք** միաժամանակ:

Յոն է որ փուլ կու գան դուրսէն խուժող թէ ներսէն բարձրացող հայերէն դասանիւթի մասին բոլոր պատճառաբանութիւնները: Սորվելու թութակաբան կերպ, կեղծ լօզունքներ, գրքունակութիւն, կը փոխարինուին ստեղծագործ մտածողութեամբ:

Դասաւանդման համագործակցային մեթոտով իր մայրենի լեզուով հարազատ մշակոյթին հետ մտերմաբար առնչուելու միջոցով, աշակերտ-սորվողը կը սորվի ոչ միայն լեզու, այլեւ կ'իւրացնէ մշակոյթ, արժեք, աշ-

խարհայեցողություն, արժեհամակարգ: Այսպիսով տարուէ տարի իր մէջ կը ձեւաւորուի հայ մարդու հոգեկերտուածքը, կ'ազնուանայ անոր ներաշխարհը, միտքը կ'ազատագրուի կապանքներէ ու կարծրատիպերէ. կը ձեւաւորուի ու կը կերտուի մտքով եւ հոգիով ազատ հայ մարդը: Եւ ա՛յս իտեալին մէջ կը խտանայ ե՛ւ քրիստոնէական ե՛ւ ազգային մեր աշխարհայեացքին ու արժեհամակարգին եւութիւնը, իմաստն ու նպատակը: Ահա թէ ինչ բանի մէջ կը կայանայ արեւմտահայերէնի ուսուցման ամենէն հեռակայ նպատակը:

Նման գործընթաց մը կեանքի կոչելն ու իրականացնելը այնքան ալ հեշտ աշխատանք չէ: Այս պարագային, ուսուցիչ-սորվեցնողին համար մեթոտ, դասագիրք, մանկավարժական տեսութիւններ անհրաժեշտ **օգնական** միջոցներ են միայն. գիտական պատրաստութիւնը կարելոր է, բայց ոչ բաւարար: Եականը այս բոլորէն անդին կ'անցնի: Շատ կարելոր է, որ հայեցի կրթութեան նուիրուածը **իսկական մշակ ըլլայ**, եւ նամանաւանդ ինքնութեան հարցեր չունենայ:

Արեւմտահայերէնի ուսուցման կարելորութիւնը՝ հեռապատկերային առումով

Ինչո՞ւ հայ դպրոց, ինչո՞ւ արեւմտահայերէնի ուսուցում, ինչո՞ւ հայեցի կրթութիւն, ինչո՞ւ հայեցի դաստիարակութիւն: Այս բոլորը միջոցներ են կերտելու համար 21-րդ դարու ամբողջական սփիւռքահայը, որ ինքնութեամբ երկփեղկուած չէ:

Անի-ժամայոյց.

Արեւմտահայերէնի ուսուցման հայեցի կրթութեան հոլովութիւն-իրավիճակը գնահատող գործիքակազմ

Արեւմտահայերէնի կարելորութեան եւ հայ դպրոցին արժեքին ու առաքելութեան մասին սփիւռքահայ մամուլին եւ գիտական պարբերաթերթերուն մէջ լոյս տեսած յօդուածները կրնան հատորներ լեցնել: Չհաշուած տակաւին առանձին ուսումնասիրութիւնները: Սակայն ո՞ր է անոնց անդրադարձը մեր կրթական հաստատութիւններուն վրայ, անոնց ազդեցութիւնը հասարակական կարծիքը բարեփոխելու տեսակէտէն: Կրցա՞ծ են այդ բոլորը բան մը փոխել իրականութենէն: Տակաւին, ո՞ր է սփիւռքահայ մանկավարժական մտածողութիւնը, հայեցի կրթութեան ի՞նչ տեսութիւն մշակած ենք, ո՞ր են կրթական մեր հաստատութիւններուն յաջո-

ղութիւններուն ու բացթողումներուն որակական եւ քանակական հաշուեկշիռը: Յայ դրպրոցի առաքելութիւն ըսելով այսօր ի՞նչ կը հասկցուի:

Ինչո՞ւ արեւմտահայերէն սորվեցնել:

Մօտեցում եւ մտայնութիւն ժամանակի հետ կը փոխուին: Կը փոխուին նաեւ պայմանները, պահանջներն ու մարտահրաւերները: Մտայնութիւն եւ տեսակէտ չենք կրնար անաջատել իրականութենէն, առարկայական իրավիճակէն:

Յայեցի կրթութեան ռազմավարութիւնը անպայմանօրէն վերատեսութեան ենթարկուելու է պարբերաբար, որպէսզի վերանորոգուի ժամանակին հետ՝ պայմաններու ու պահանջներուն համաձայն: Այդ նպատակին համար կարելոր է ունենալ բանող գործիքակազմ, հետեւեալ բաղադրիչներով.

- 1- Ներկայ իրավիճակ. (պատասխանը գտնել «Ի՞նչպիսի» հարցումին)
- 2 -Մարտահրաւերներ. (պատասխանը գտնել «Ի՞նչ» հարցումին)
- 3- Կարելիութիւններ (քանակական եւ որակական). (պատասխանը գտնել «Ի՞նչքան» եւ «ո՞րքան» հարցումներուն)
- 4 - Նպատակ (պատասխանը գտնել «Ի՞նչու» հարցումին)

1. Ներկայ իրավիճակը քննարկման պէտք է ենթարկել բազմակողմանի եւ գիտական մօտեցումով, քանակական եւ որակական տուեալներ հաւաքագրելով եւ անոնց արդիւնքներու վերլուծումը կատարելով: Այսպիսով կրթական ռազմավարութիւն, գնահատական, որոշում ու վճիռ կը դառնայ աւելի արդիւնաւետ:

2. Պէտք է առաջնահերթութիւններու կարգով ճշդել մարտահրաւերները՝ եւ պատրաստել զանոնք յաղթահարելու ճամբու քարտեզը:


3. Ի մի բերել որակական եւ քանակական կարելիութիւնները, որոնցմով յաղթահարուելու են մարտահրաւերները:

4. Ճշդորոշել մօտակայ եւ հեռակայ նպատակները, պատասխանելով «Ինչո՞ւ» հարցումին:

Վերահսկողութիւն սահմանել գործընթացին վրայ: Արձանագրել բոլոր դրական եւ ժխտական տեղաշարժներն ու, արդիւնքները: Նոր դրական կացութիւն յառաջանալու պարագային՝ կրկնել այս անի-ժամացոյց գործիքակազմի գործարկումը:

Գ. ԵՐԱՎԱՑՈՒԹԻՒՆ

Սփիւռքեան պայմաններուն մէջ Շահնուրի մատնանշած **Կռիւր**՝ ի խնդիր ինքնութեան պահպանման, անժամանցելի մարտահրաւեր է: Եւ ինչպէս կ'ապացուցուի սփիւռքեան հարիւրամեայ կենսափորձով, ո՛չ անպայմանօրէն պարտութեամբ կ'աւարտի եւ ոչ ալ վերջնական վճռորոշ յաղթանակի կը հասնի: Մայրենի լեզուն առաջին իւրացուող «ժա-



ռանգուող» բաղադրիչն է ինքնութեան, եւ վերջինը, որ կը կորսնցնենք կեանքին հրաժեշտ տալով, երկու պարագային ալ անզգալաբար, մեր կամքէն եւ գիտակցութենէն անկախ: Մանուկ մը երբ լեզու կ'ելլէ, կ'ըսեն, թէ մանուկը «խօսիլ սկսաւ» եւ ոչ թէ՛ «լեզուն սորվեցաւ»: Երբ մահամերձի մը համար կ'ըսուի՝ «այլեւս չի խօսիր» ընդհանրապէս կը հասկցուի, որ այլեւս ապրելու յոյս չկայ, պիտի մահանայ: Լեզուն ոչ ոք կրնայ խլել մեզմէ: Ան կենդանի օրկան է, չի մեռնիր, եթէ «չմեռնի» գայն կրողը: Իսկ կը մեռնի եթէ չժառանգուի բնական կարգով, եւ կամ կը լքուի կամաւոր կերպով եւ կամ չիւրացուի արտաքին հանգամանքներու բերումով:

Կռիւ տալու պարտաւորութեան մէջ կը գտնուինք Սփիւռքի տարածքին՝ տեր կանգնելու համար Յայ ինքնութեան՝ փրկելով հայ հոգիները ձուլումէ: Այս է Սփիւռքի գերագոյն մարտահրաւերը:

Եւ Կռիւ տուող յառաջապահը հայ դպրոցն է: Ամենէն առաջ ա՛ն է որ Կռիւ տալու պարտաւորութեան տակ կը գտնուի, որովհետեւ սերունդներու կրթութեան եւ դաստիարակութեան պատասխանատուութիւնը անոր ուսերուն վրայ դրուած է: Կարելոր է, թէ հայ դպրոցը ի՛նչ պատկերացումներով

կը բացուի ապագային, երբ անոր գերագոյն նպատակը հայ հոգիներու ինքնութիւնը պահպանելն է: Յայու զգացողութիւն կարելի է ունենալ, բայց հայ ըլլալ կարելի է միայն մայրենի լեզուի միջոցով: Լեզուն որովհետեւ լեզուամտածողութիւն, մշակոյթ, ինքնութիւն եւ արժեհամակարգ է, իսկ օտար լեզուով ինքնութիւն չի՛ կերտուիր ու չի՛ պահպանուիր, Յայ մշակոյթ չի՛ ստեղծուիր, ու հայ հոգին չ'ապրիր: **Յայ հոգին հայ մշակոյթին մէջ է. իսկ մշակոյթի բանալին լեզուն է:**

Եթէ կ'ուզենք ազգային արժեքներ, մտածողութիւն եւ աշխարհայեցութիւն իւրացուցած, իրենց ինքնութեան հաւատարիմ սերունդներ պատրաստել, պիտի ապահինիք Յայ Դպրոցին՝ ինքնութեան դարբնոցին: Յայ դպրոցի բովէն անցնող ամէն աշակերտ բնականաբար գրագետ դուրս պիտի չգայ, բայց ան անհրաժեշտաբար եւ անպայմանօրէն հայեցի բաւարար կրթութիւն ստացած պէտք է ըլլայ: Շուրջ կէս դարէ աւելի քաղաքականապէս ստանձնած ենք Սփիւռքը, բայց կը շարունակենք կրել Եղեռնի մշակութային անդարմանելի, - հետեւաբար տեսական, - հետեւանքները: Արեւմտահայերէնը փրկութիւն է այդ իմաստով ալ, որովհետեւ հայեցի կրթութիւն ստացած սերունդներն են, որոնք կրնան արժանապատիւ կերպով կրել սփիւռքահայու ինքնութիւնը, գիտակցաբար նուիրուիլ հայ կեանքին, եւ ի հարկին խիզախութեամբ վերանորոգել գայն:

Սուրիոյ շարունակուող տագնապի պայմաններուն մէջ, սուրիահայ գաղութի վերականգնումի համընդհանուր այս փուլին, հայ դպրոցը կը դիմագրաւէ այլեւայլ դժուարութիւններ, որոնք քաղաքէ քաղաք կը տարբերին: Յետեւաբար ձեւի եւ բովանդակութեան տեսակետէն բարեփոխման ու վերանորոգման ամէն մօտեցում եւ ամէն փորձ կատարուելու է ընդհանրական չափանիշներու հիման վրայ, իսկ լուծումները՝ ըլլալու են ըստ տեղական պայմաններուն եւ պահանջներուն:

Սուրիոյ մէջ հայ դպրոցը ներկայ պայմաններուն դրութեամբ, իր մարդկային որակական ներուժին վստահած՝ կրնայ բացուիլ ապագային, եթէ ոչ հուժկու թափով, բայց անանդական աւիւնով, հարուստ փորձառութեամբ եւ նպատակասլաց ընթացքով: Եւ այս փուլին ա՛յս է եականը:

ՀԱՅՈՒՆ ՀԱՖԱՔԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ ԵՒ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ

Մարուշ Երամեան

Աշխարհի տարբեր երկիրներու մեջ հայ արուեստագետներ ապրած են եւ կը շարունակեն ապրիլ ու ստեղծագործել. անոնց անունը դուրս կու գայ իրենց ապրած երկրին սահմաններէն, հասնելու համար տարբեր երկիրներ ու ցամաքամասեր: Անոնք ոչ միայն չեն ժխտեր իրենց ազգութիւնը, այլ հպարտօրէն կը նշեն իրենց արմատները եւ կը սատարեն ՀԱՅ մարդու կերպարին բիրտդացման.

Քիմ Զարտաշեան ու շատ ուրիշներ հայ են, կամ ծագումով հայ են: Այս գիտնալը ինչպէ՞ս կ'օգնէ մեզի, ի՞նչ կու տայ: Խորքին մեջ՝ պէ՞տք է բան մը տայ:

Թերեւս փոքր ազգի մը զաւակը ըլլալու բարոյյթն է ասիկա, որովհետեւ նման հարցադրում՝ նոյնիսկ ձեւաբանել պիտի չմտածէին ֆրանսացին, անգլիացին, գերմանացին կամ ճաբոնցին:



օտարներուն համար: «Հայը» անծանօթ, լաւագոյն պարագային՝ մշուշոտ կերպար մը չէ ա՛լ, այլ յստակօրէն ուրուագծուող պատկեր մը ստեղծագործ, հնարամիտ, ազնիւ եւ աշխատասեր անհատի:

Աշխարհն ամբողջ այսօր գիտէ, որ Շարլ Ազնաւուր, Արշիլ Կորքի, Ուիլիլմ Սարոյեան,

Իսկ «փոքր» ըլլալը բնաւ կապ չունի ազգի մը զաւակներուն թիւին հետ, որովհետեւ արաբներն ալ, հակառակ իրենց մեծ թիւին, ունին նո՛յն բարոյյթը. օրինակ երբ արաբ մը մեծ հպարտութեամբ դիմատետրի իր էջին վրայ կը դնէ Անգլիոյ թագուհիին նկարը, որ կը շնորհաւորէ եգիպտացի արաբ դասախօսը,

ԳԱՆՁԱՍԱՐ

Անգլիոյ համալսարաններէն մէկուն տնօրէն նշանակուած ըլլալուն առիթով, չենք կրնար չմտածել նոյն՝ «փոքր» ազգի գաւազն ըլլալու բարդոյթին մասին:

Անհատները, բացի արդար հպարտութենէն շատ բան չեն անելցնէր ազգին: Սակայն հաւաքական կերպարը այլ հարց է:



Սփիւռքահայուն մեր հաւաքական կերպարին համար դժբախտաբար չենք կրնար ըսել այն, ինչ կ'ըսենք մեր աշխարհահռչակ արուեստագէտներուն մասին: Սփիւռքահայուն համար ըսի, որովհետեւ հայաստանաբնակ հայերը ունին իրենց հաւաքական կերպարը, որուն մէջ յստակօրէն կը զգացուի երկրին դրոշմը:

Սակայն կարելի՞ է խօսիլ «հաւաքական» կերպարի մասին Սփիւռքի մէջ, որ ընդհանուր պատկեր մը չի պարզեր, այլ խճանկար մըն է, բազմաթիւ եւ տարբեր «հաւաքական ինքնութիւն»ներէ կազմուած:

Կ'անդրադառնանք որ հարցը շատ բարդ է. հայրենիք չկայ, որ իր դրոշմը դնէ անհատին վրայ. ընդհակառակը՝ իւրաքանչիւր օտար երկիր իր դրոշմը կը դնէ սփիւռքահայուն

վրայ, բան մը, որ թէեւ խճանկարը հետաքրքրական եւ բազմազոյն կը դարձնէ, միաժամանակ սակայն կը հեռացնէ կարծես համայնքները իրարմէ, նախ տեղական լեզուի ազդեցութեան, ապա ապրած երկիրներէն ստացուած դրոշմին պատճառով:

Վերը կը հարցադրեինք, թէ աշխարհահռչակ արուեստագէտներու հայ ըլլալուն աշխարհի գիտակցութիւնը ի՞նչ կու տայ մեզի, կամ՝ պէ՞տք է բան մը տայ: Այս հարցադրումը անհատներու պարագային եթէ ժխտական պատասխան ունի, ապա հաւաքական կերպարի պարագային կարելոր, նոյնիսկ էական կը դառնայ անոր դրական պատասխանը, որովհետեւ այո՛, հաւաքական յստակ կերպար մը շատ բան կրնայ տալ սփիւռքահայերուն:

Նախ իրարու նման ըլլալով, կարելի կ'ըլլայ զգալ, որ մեծ խմբաւորում մըն ենք (Սփիւռքի տարածքին տասը միլիոնը քիչ թիւ չէ), հետեւաբար որոշ ուժ մը կը ներկայացնենք գոնէ մեր կեցուածքներով, մինչ այսպէս՝ իրարմէ անջատ եւ «տարբեր», օտարին դէմ միշտ «անկարող» ըլլալու լուռ համոզում մը ունինք:

Երկրորդ՝ մեր հաղորդակցութիւնը, - որ բոլորս ալ գիտենք թէ չէ այնպէս, ինչպէս պարտ էր ըլլալ տարբեր գաղութներու միջեւ, - կրնայ անելի շերմ, հետեւաբար՝ անելի արդիւնաւետ ըլլալ:

Երրորդ՝ կը հեշտանայ հայուն ինքնութեան գիտակցութիւնը, որ այսօր տարօրինակ շփոթ մը կը պատճառէ երիտասարդ սփիւռքահայերուն, մանաւանդ երբ ա՛յլ չեն տիրապետեր արեւմտահայերէնին:

Յետեւաբար որքան լեզուն կարելոր է մեզի, սփիւռքահայերուս համար, նոյնքան կարելոր է մեր հաւաքական կերպարին գիտակցութիւնն ու զայն կերտելու ճիգը: Այս ճիգն է, որ պէտք է դառնայ մեր ուշադրութեան առարկան, լեզուին՝ արեւմտահայերէնին տրուած ուշադրութեան կողքին, հաւասարապէս:

* * *

Այսքանը՝ դուրսին, արտաքին աշխարհին հանդէպ:

Իսկ մե՛ր աշխարհին մէջ, մեզի, մանաւանդ սփիւռքահայերուս համար սկսած է ահարկու չափերու հասնիլ շատ էական վտանգ մը, զոր ո՛չ միայն չենք մտածեր կանխել, այլ որուն գոյութիւնն իսկ կ'անգիտանանք

յաճախ՝ ինքնութեան հարցը:

Երբ կը վտանգուի լեզուն, ինք մինակը չէ որ կը վտանգուի, այլ իր հետ կը վտանգէ ամբողջ համակարգ մը անհնարաբար, կենսահայեացքի եւ կենսաձեւի ու մանաւանդ՝ ինքնութեան: Որովհետեւ այդ պարագային կը բիրտղանայ հարցը՝ երբ ա՛լ չկայ լեզուն, ի՞նչն է որ մեզ «հայ» կը պահէ:

Ասիկա թերեւս անհերթէթ թուի Միջին Արեւելքի այն քանի մը գաղութներուն համար, որոնք տակաւին իրենց առօրեան հայերէնով կ'ապրին, որոնց համար հայ ըլլալը երբեք հարցադրումի առարկայ չէ: Բայց արեւմուտքի մէջ, ուր յստակ կեցուածք մը կայ լեզուն շրջանցելու, զայն ոչ անհրաժեշտ նկատելու, որուն հետեւանքով է անշուշտ որ հայկական դպրոցներ մէկը միւսին տեսնեն կը փակուին, այս հարցը խորապէս էական է:

Երբ հայագիտական համագումարի մը ընթացքին ԱՄՆ-ի համալսարաններէն մէկուն յարգելի դասախօսը իր ելոյթը ոչ հայերէն ըրաւ, չվարանեցայ իրեն ուղղելու զիս չարչոկող հարցը.

- Գիտեմ որ, - ըսի, - ԱՄՆ-ի մէջ հայագիտական ամպիոններու դասախօսութիւններն իսկ անգլերէնով կ'ըլլան, գիտեմ նաեւ, որ ԱՄՆ-ի մտաւորականները շրջանցած են հայերէնին՝ արեւմտահայերէնին հարցը. հոսկէ կը ծագի հարցումը՝ արեւմտահայերէնի նահանջին հետ, սփիւռքահայը ո՞ր կը գտնէ, կամ պետք է գտնէ իր ինքնութիւնը. ո՞ր պետք է փնտռել հայուն ինքնութիւնը, երբ լեզուն ա՛լ չըլլայ:

Երկար պահ մը մտածեց. յայտնի էր, որ հարցը նորութիւն էր իրեն համար եւ երբեք մտածած չէր անոր մասին: Յետոյ ըսաւ, թէ կարելորդ տիպարներ (role models) ունենալն է, տիպարներ, որոնք կարենան ներշնչել նոր սերունդը. եւ տուաւ շատ անհերթէթ օրինակ մը՝ Զիմ Զարտաշեան:

Անշուշտ բնաւ համոզիչ չէր: Զետեւաբար պատասխաններ գտնելու ձեռնարկեցի, այլ մտաւորականներու նոյն հարցումը ուղղելով:

Ամերիկաբնակ մտաւորական մը, որուն արմատները խրած են Միջին Արեւելքի մէջ, գրեց.

«Լեզու եւ ինքնութիւն կը ձեւաւորուին մարդուն կողմէ, որ կ'ընտրէ իր ուղածը եւ կը լքէ իր չուղածը. նոյնիսկ լեզուի պարագային»:

Այս կարճ նախադասութեան մէջ քանի մը

կետեր կ'ուրուագծուին.

Ա. լեզու եւ ինքնութիւն կը նոյնանան.

Բ. ընտրութեան կարելիութիւնը այս երկուքին պարագային.

Գ. լեզուն կը դասուի «ընտրուելիք» սիրտերու կողքին՝ «նոյնիսկ լեզուն»:

Ընտրութեան հարցը, որ կրնայ մարդ արարածին ամենէն հիմնական ազատութիւններէն մէկը ըլլալ, հայ մարդուն համար որոշ սահմանափակումներ ունի (թէեւ նոյն սահմանափակումները կան բոլորին համար, երբ իր կամքէն անկախ կը ծնի այս կամ այն երկրին, քաղաքին, ընտանիքին, լեզուին եւ կրօնքին մէջ). հայ մարդը չի կրնար, կամ պետք չէ որ ընտրութեան վերածէ իր ինքնութիւնն ու լեզուն, որովհետեւ այդ պարագային ոչինչ պիտի մնայ զինք պահող, այսինքն՝ հայ պահող:

Նոյն մտաւորականը կը շարունակէ գրել.

«Ո՞ր է գրաբարը մեր հայկական ինքնութեան եւ իրականութեան մէջ»:

Գրաբարը ենթարկուած է կեանքին պահանջը եղող եղափոխութեան եւ հասած, բազմաթիւ գրագետ-մտաւորականներու ճիգերով, Ջարդէն անմիջապէս առաջ նուաճած իր բարձունքին: Այսօր գրաբարը թէեւ մեր առօրեային մէջ չէ, սակայն կը շարունակէ ծառայել որպէս ուսումնասիրութիւններու միջոց, պատմութիւնն ու մատենագրութիւնը հասկնալու եւ նորովի մեկնաբանելու համար:



Տակաւին՝ *«Անշուշտ պայման չէ որ նոյն լեզուն խօսինք, որպէսզի հաղորդակցինք ու պահենք մեր հայ ըլլալը կամ լինելը»* (այս երկու բառերուն տարբերութիւնը չկրցայ հասկնալ):

Ուրեմն ինչպէ՞ս պահենք մեր ինքնութիւնը:

ԳԱՆՁԱՍԱՐ

«Ինքնութիւն ունենալու եւ պահելու գլխաւոր գործօններէն մէկը գիտնալն է քու ունեցածիդ արժէքը, եղեր է այդ լեզու կամ ինքնութիւն»:

Այսինքն՝ հայու գիտակցութի՞նը, որ այսօր նուազագոյնի իջած է ԱՄՆ-ի, Բանաստեղծի եւ Եւրոպայի հայութեան մօտ:

«Այսինքն Յայաստանի մէջ կա՞յ այդ գիտակցութիւնը»:

Յայաստանը մեր գրոյցէն դուրս է, որովհետեւ:

Ա. իր հողին վրայ ապրող ժողովուրդը կարիք չունի իր ինքնութեան հարցերով զբաղելու, հողը կը պահէ զինք

Բ. այս գիտակցութիւնն է, որ հողի դեր պիտի կատարէ Սփիւռքի համար: Նախապէս այդ դերը լեզուն կը կատարէր՝ *«Լեզուն իմ հայրենիքս է»*, ըսեր է սփիւռքահայ բանաստեղծը:

«Պէտք է խօսինք, պէտք է գրենք եւ երիտասարդները ստիպենք որ խօսին ու գրեն»:
ԻՆՉՊԵՍ:

Եւ հոս մեր գրոյցը տուեալ մտաւորականին հետ դադրեցաւ, հակառակ քանի մը անգամ յուշելուս:

Ամերիկաբնակ այլ բանաստեղծ մը պատասխանեց.

«I thought about your question long and hard, and did not find a new answer. It remains clear to me that language is paramount in defining (not to others necessarily, but to ourselves) who we are».

ԻՆՉՊԵՍ:

Յայաստան ապրող սփիւռքահայ մտաւորական տիկին մը կը գրէ.

«Ինծի համար լեզուն անփոխարինելի է, եւ եթէ զայն կորսնցնենք, միայն հողի՞ն վրայ պահպանուած մշակոյթը մեր ինքնութիւնը պիտի ապահովէ, կարծեմ: Օրինակ՝ Յամլէնն ու Արեւմտեան Յայաստանը, ուր լեզու (եւ կրօն) չկայ, բայց քանի որ հողին վրայ են՝ կը յիշեն իրենց արմատները եւ կը պահպանեն իրենց ինքնութիւնը...»

Ստացած պատասխաններուս մէջ երկու կէտեր յստակ էին.

ա- հայերէնը եւ անոր իմացութիւնը գերակայ են մեր ինքնութեան մէջ.

բ- այս կարծիքը կը պատկանի միջին տարիքի սահմաններուն կեցած մտաւորականներուն, եթէ նոյնիսկ անոնց աշխատանքային առօրեան հայերէնով չէ:

Բայց ի՞նչ կը մտածէ ՆՈՐ սերունդը, այն տղաքը, որոնք օտար վարժարաններ յաճախած են, յետոյ օտար համալսարաններէ շրջանաւարտ եղած են եւ իրենց աշխատանքային առօրեան – երբեմն նաեւ տունը – ոչ հայերէնով կ’ընթանայ:

Երբ հարց տրուի իրենց, մեծ մասին համար անվարան եւ ճշգրիտ է պատասխանը՝ *«Անշուշտ հայ եմ»:* Բայց՝

Ինչո՞վ. ինչպէ՞ս:

Անշուշտ կան մտաւորականներ, որոնք թէւ օտար լեզուներով կ’արտադրեն, սակայն անոնց բանասիրական-ուսումնասիրական-պատմական ամբողջ արտադրութիւնը կը բեւեռուի հայութեան շուրջ. հետեւաբար անոնց համար երբե՛ք հարց չի կրնար դառնալ ինքնութիւնը, առանց լեզուի: Բայց քանի՞նք մտաւորական ունինք: Եւ ի վերջոյ, ինչ որ կը գրուի, նկատի կ’առնէ մեր հասարակութիւնը իր խաւերով եւ ոչ՝ մտաւորականութիւնը:



Այս գրութիւնը կը ծնի տագնապէ մը եւ զայն դարմանելու ջանքերէն. երբեք մտադրութիւն չունի պատասխաններ գտած ըլլալու, կամ թելադրութիւններ ընելու, բայց կը ձեւաբանէ այսօր ահագանգող չափերու հասած վիճակ մը՝ ի՞նչն է որ մեզ հայ կը պահէ, երբ չըլլայ լեզուն:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ-ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

**ՆԱԼԷՊԻ ՍՐԲՈՑ ՔԱՌ-ԱՄՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԸՆԴԱՐՉԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ
ՄԱՍԻՆ**

Դոկտոր Դուրի Ազեղեան

Սուղք

Բերիոյ Զայոց Թեմը կը հանդիսանայ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռին պատմական թեմերէն մէկը: Թեմին կազմաւորման եւ կազմակերպման հոլովոյթը սերտօրէն աղերսուած է նստավայր Զալէպի հայ համայնքին պատմութեան հետ, որ իր կարգին առնչուած է Սուրիոյ տարածքին հայերու ներկայութեան հետ, պատմութեան բոլոր փուլերուն, հնագոյն ժամանակներէն մինչեւ մեր օրերը:



Արդ, Բերիոյ Զայոց Թեմի նստավայր Զալէպի Սալիպէ թաղամասի Սրբոց Քառասնից Մանկանց Մայր եկեղեցին, ԺԴ դարէն առ այսօր Թեմի առաջնորդանիստ եկեղեցին է, անցեալին եղած է նաեւ կաթողիկոսանիստ եկեղեցի, ուր կատարուած են կաթողիկոսական ձեռնադրութիւններ եւ սրբալոյս միւռնի օրհնութիւններ¹: Ինչպէս նաեւ, եկեղեցւոյ

նախնական մատուռ-աղօթատեղին որպէս դամբարան ծառայած է կաթողիկոսներու, առաջնորդներու, բարձրաստիճան եկեղեցականներու եւ ականաւոր աշխարհականներու: Այդտեղ թաղուած են Սիսի Ս. Աթոռի երջանկայիշատակ գահակալներէն Ազարիա Ջուղայեցի (1601թ.), Պետրոս Կարկառեցի (1608թ.), Մկրտիչ Զէֆսիգեան (Մարաշցի) (1894թ.) եւ Բաբգէն Ա. Կիլիկեցեան Աթոռակից (1936թ.) կաթողիկոսները: Վերջնոյն աճիւնները, Երանաշնորհ Խորէն Ա. Բարոյեան Կաթողիկոսի հայրապետական տնօրինումով, 29 Սեպտեմբեր 1966-ին փոխադրուած են Անթիլիասի Չարեհեան Դամբարանը²:

Արդարեւ, Զայաստանէն դէպի Պաղեստին ուխտագնացութեան զարգացումով, հայ ուխտաւորներուն համար Զալէպը սկիզբը հանդիսացած է հոգեւոր կայան մը, յետոյ դարձած է ազգային-եկեղեցական կենսունակ կեդրոն, մինչեւ առանձին թեմի մը վերածուիլը: Այս պարագային 2020-ի վկայութիւն կարելի է նկատել Զալէպի երուսաղէմապական հայկական Զոգետունը, կառուցուած՝ 1624 թուականին, Երուսաղէմի Գրիգոր Է. Գանձակեցի Պատրիարքին (Պարոնտեր) (1613-1645թթ.) կողմէ, որպէս Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքին «տուն» կամ «օթեւան», Մերձաւոր Արեւելքէն դէպի Երուսաղէմ գա-

¹ Սիւրմէան, Արտաւազդ Արք., *Պատմութիւն Զալէպի Զայոց (1355-1909)*, Փարիզ, 1950, 3: 491, 634, 782:

² Յաւելեալ մանրամասնութեանց համար, տե՛ս, - Տեմիրճեան, Վարդան Եպսկ., *Գաւազանագիրք*, Անթիլիաս, 1980, 1:412:

ցող հաւատացեալներուն համար³: Յալէպի Յոգետունը առաջին անգամ նորոգուած է 1721-ին, Գրիգոր Շիրաւանցի Շղթայակիր Պատրիարքի (1715-1749թթ.) օրօք, որուն մասին կը վկայէ յատուկ արձանագրութիւն մը⁴:

Պատմական տարբեր հանգրուաններուն, հայերը կայք հաստատած են Սուրիոյ տարածքին, Միջերկրականի ծովեզերքը եւ Միջագետք: Յալէպի, Անտիոքի, Եդեսիոյ եւ Պաղտատի մէջ գրչագրուած ձեռագիրներուն յիշատակարանները այն կարելորագոյն աղբիւրներն են կը նկատուին, որոնք հաւաստի տեղեկութիւններ կը փոխանցեն այդ շրջաններու հայկական համայնքներուն մասին⁵: Այս շրջագիծէն ներս, յիշարժան է որ հայոց Մեծն Տիգրան թագաւորի հայկական տերութեան (83-69, Բ.ա.) սահմանները հասած էին մինչեւ Պաղեստին, եւ Անտիոք դարձած էր հայոց թագաւորին մայրաքաղաքներէն մէկը⁶:

Սրբոց Բառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ Պատմական Առաջին Յիշատակութիւնը

Յալէպի մէջ գրչագրուած հայերէն ձեռագիրներու հին յիշատակարաններուն մէջ, հայոց Ս. Աստուածածին եկեղեցին նախ յիշատակուած է եւ յետոյ՝ Սրբոց Բառասնից Մանկանց եկեղեցին:

Ս. Աստուածածին եկեղեցւոյ պատմական վաւերական առաջին յիշատակութեան կը հանդիպինք 1429 թուականին Ստեփանոս

քահանայ Կրակեցիի կողմէ՝ Յալէպի մէջ գրչագրուած ժողովածուի մը յիշատակարանին մէջ⁷:

Նոյն շրջափակէն ներս, իրարու կից գտնուող Ս. Աստուածածին եւ Սրբոց Բառասնից Մանկանց եկեղեցիները միասին յիշատակուած են 1476 թուականին, ըստ Յալէպի Դասատան մէջ «Մելքիսեդ կրօնաւոր»ի կողմէ գրչագրուած եւ Կարապետ Վարդապետ Բերկրիցիի կողմէ ծաղկուած՝ պատկերազարդ Աւետարանի մը յիշատակարանին⁸:

Ձեռագիր մատենանքը եւ յիշատակարանը մեծապէս անընթեռնելի են:

Յալէպի սկզբնական հայ համայնքը սկսած է ընդարձակուիլ, նաեւ եկուոր ազգակիցներով եւ հայ եկեղեցականներով, այս մէկուն սատարած է քաղաքին առեւտրական կարելոր դիրքը, որուն շրջագիծէն ներս համայնքին զաւակները ձեռնամուխ եղած են տեղւոյն առեւտուրին եւ արհեստներուն, աւելի ծաղկած է հայ համայնքին մանաւանդ եկեղեցական կեանքը, եւ պատմական Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակն ու Սրբոց Բառասնից Մանկանց նախնական մատուռը՝ գործուն վանքի մը պատկերը պարզած են:

Սրբոց Բառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ Պատմական Առաջին Ընդարձակումը

Աւանդութեան մը համաձայն, Սրբոց Բառասնից Մանկանց եւ նախկին Ս. Աստուածածին եկեղեցիներու վայրը քրիստոնէական գե-

³ Սիւրմէեան, Արտաւազդ Արք., *Պատմութիւն Յալէպի Յայոց (1355-1909)*, 3: 95:

- Կը կարծուի թէ նախնական Յոգետունը օգտագործման իր նպատակներով, անպայման գոյութիւն ունեցած է շատ աւելի հին ժամանակներէն ի վեր, Սրբոց Բառասնից Մանկանց եկեղեցւոյ շրջափակէն ներս, եւ 1616 թուականի եկեղեցւոյ երկրորդ ընդարձակումէն ետք է որ, կառուցուած է ներկայի վայրին մէջ: Այսօր արդէն աղաւաղուած է անոր հայկական դիմագիծը:

⁴ Սիւրմէեան, Արտաւազդ Արք., *Պատմութիւն Յալէպի Յայոց (1355-1909)*, 3:97-98: Սաւալանեան, Տիգրան, Պատմութիւն Երուսաղէմի, գրաբար բնագրէն աշխարհաբարի վերածեց՝ Մետրոպ եպս. Նշանեան, Տպարան Սրբոց Յակոբեանց, Ա. հատոր, Երուսաղէմ, 193, 11:574: Աղաւնունի, Մկրտիչ Եպիսկոպոս, *Միաբանք եւ Այցելութիւն Յայ Երուսաղէմի*, Տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1929, էջ 84:

⁵ Աբրահամեան, Աշոտ Գ., *Համառօտ Ուրուագիծ Յայ Գաղթավայրերի Պատմութեան*, Երեւան, 1964, 1:425:

⁶ Նոյնը, 1:428: Յովհաննէսեան Պետրոս Յ. եւ Աբրահամեան, Աշոտ Գ., *Յայ Ժողովրդի Պատմութեան Զրեւտումատիւ - Հնագոյն Ժամանակներից Մինչեւ IX Դարի Կեսերը*, Երեւան, 1981, 1:256:

1) Յայաստանի եւ Սուրիոյ միջեւ տնտեսական ու մշակութային յարաբերութիւնները շարունակուած են, նոյնիսկ երբ Մեծ Տիգրան քաշուած է սուրիական շրջաններէն:

- Թովմազեան, (Յովհաննէս) Խ., *Սիրիայի եւ Լիբանանի Յայկական Գաղթածախների Պատմութիւն (1841-1946)*, Երեւան, 1986, էջ 8:

⁷ Սիւրմէեան, Արտաւազդ Արք., *Պատմութիւն Յալէպի Յայոց (1355-1909)*, 3:24-26:

⁸ Նոյնը, 3: 27-28: Սիւրմէեան, Արտաւազդ Արք., *Յուցակ Յայերէն Ձեռագրաց Յալէպի Ս. Բառասուն Մանկունք եկեղեցւոյ եւ Մասնաւորաց*, Սրբոց Յակոբեանց Տպարան, Երուսաղէմ, 1935, 1:94-95:

րեզմանատուն մը եղած է, իր փոքր մատուռով, հաւանաբար ասորական, եւ մինչեւ 1500-ական թուականները ներկայացած է որպէս մատուռ-աղօթատեղի մը, Հալէպի կեդրոնէն հեռու եւ պարիսպէն դուրս, հազիւ հարիւր հաւատացեալ պարփակող:

Սրբոց Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ 1476 թուականի պատմական առաջին յիշատակումէն ետք, 1499-1501 թուականներուն, Հալէպի հայ համայնքի երեսելիներէն «Ըռէյիս պարոն Յիսէ» ի բարերարութեամբ, մատուռ-աղօթատեղին դէպի արեւելք-արեւմուտք ուղղութեամբ ընդարձակուած է:

Այս ընդարձակումը հաստատող պատմական արձանագիրը յայտնաբերուեցաւ 2000 թուականին, եւ մինչեւ սուրիական տագնապը ցուցադրուած էր Սրբոց Քառասնից Մանկանց շրջափակին մէջ գործող Հալէպի Չարեհեան գաճատան մէջ⁹:

Վերոյիշեալ արձանագիրին մէջ կը կարդանք.

«Յանուն Աստուծոյ ի թուին ԶԱ-ԶԾ [?] [+551=1501] ի պարունութեան Իւզտեմուռին եւ յառաջնորդութեան Տէր Յովհաննէս կաթողիկոսին [Յովհաննէս Բ. Թլկուրանցի (1489-1529թթ.)] եւ Ըռէյիս Յիսէ շինել տուի զեկեղեցիս յանուն Սուրբ Քառասնիցն յիշատակելոյս հոգուն եւ տնօրէքս [?], ինձ եւ կենակցուն իմ Ահալին եւ որդոցն իմ ճուրճոսին եւ Սարգիսակին եւ [Յ] ուսեփին եւ զնացելոցն ի Զրիստոս Նոր փեսայ Թումայ ի՞ն»¹⁰:

Նորակառոյց եկեղեցին անուանուած է՝ Սեբաստիոյ մէջ Դ. դարուն քրիստոնէական հաւատքին համար նահատակուած քառասուն զօրականներուն ի յիշատակ:

Անտարակոյս որ այդ օրերուն «Ըռէյիս պարոն Յիսէ» ներկայացած է իբրեւ ԺԵ. դարու վերջին քառորդի եւ ԺԶ. դարու սկզբնական շրջանի Հալէպի հայ համայնքի յայտնի դէմքերէն մին, որ մասնակի կերպով նորոգած է նաեւ Նոյն սրբավայրի շրջափակին մէջ գրտնուող՝ Մարոնիթ համայնքի Ս. Եղիա եւ Յոյն օրթոտոքս համայնքի Ս. Գեորգ մատուռ-եկեղեցիները¹¹: Նոյն բարերարը միաժամանակ

եկեղեցւոյ շրջափակէն ներս ձեռնարկած է կարեւոր այլ շինութիւններու, հեռու տեղերէ Հալէպ ժամանող իր ազգակից հիւրերուն եւ մասնաւորապէս իրենց ճանապարհը դէպի Երուսաղէմ շարունակող ուխտաւորներուն հանգիստին համար, ան կառուցած է **«հանգստեան խուցեր»**, երբ Երուսաղէմ-պատկան հայկական Հոգեւորական տակաւին չէր իրագործուած, ինչպէս նաեւ կառուցած է **«Թագաւորական Դարպաս»**, այլ խօսքով՝ **«Վայելուչ Առաջնորդարան»**, որպէս ամառնային ժամատեղ, որ ԺԶ. դարու վերջին քառորդին ընդարձակուելով ծառայած է Սիսի Ս. Աթոռի գահակալներուն իբրեւ ժամանակաւոր նստավայր, ուր եւ ծաղկած է Հալէպի նշանաւոր Դասատունը¹²:



Ընդհանրապէս Հալէպ քաղաքը, ԺԶ. դարու սկիզբը պարզած է բարեկեցիկ ոստանի մը պատկերը, ինչ որ քաջալերած է որպէսզի յատկապէս Լեռնային Կիլիկիոյ զանազան շրջաններէն, մասնաւոր Զէյթունէն եւ Մարաշէն, հայեր գաղթելով կայք հաստատեն Հալէպի մէջ, սատարելով տեղւոյն հայ համայնքին հանգրուանային բարգաւաճումին: Նշելի է որ հայ թէ օտար աղբիւրներ ընդհանրապէս ժլատ են Հալէպի հայ համայնքին ԺԶ. դարու վերջին քառորդի կեանքին եւ գործունեութեան մասին տեղեկութիւններ հաղորդելու պարագային:

⁹ Գանձատունը փակուեցաւ սուրիական պատերազմին պատճառով, առ այսօր փակ է մինչ նորոգութիւն:

¹⁰ Արձանագրին փակագիրը անձամբ մենք կարդացած ենք:

¹¹ Սիւրմէեան, Արտաւազդ Արք., *Պատմութիւն Հալէպի Հայոց (1355-1909)*, 3:31-32:

¹² Նոյնը, 3: 32-33, 37:

Սրբոց Քառասնից Մանկանց Եկեղեցույ Պատմական Երկրորդ Ընդարձակումը

Միսի Կաթողիկոսութիւնը դէպքերու բերումով եւ ընդառաջելով ժամանակի պահանջներուն, 1600-ական թուականներուն իր վարչական եւ հոգեւոր գործունեութիւնը մասնակի փոխադրած է Զալէպ, ուր կը տիրէր մեծ ոգեւորութիւն, երբ տեղւոյն «Կաթողիկոսարան»ին, Առաջնորդարանին, Դասատունին եւ Զոգետունին մէջ համախմբուած էին կարող եկեղեցականներ: Բնականաբար այս դրութեան նպաստած է Զալէպի միջազգային կարեւոր դիրքը:

Միւս կողմէ, պատմա-աշխարհագրական Սուրիան եղած է այն երկիրը, ուր շուրջ տասնեակ մը տեղաբնիկ քրիստոնէայ եւ գլխաւորաբար Պաղեստինի սրբավայրերուն պատճառով խաչակիրներուն եւ անլի ուշ՝ քարոզչական առաքելութիւններուն միջոցաւ, յատկապէս ամբողջ միջնադարուն, շարունակականօրէն եւրոպական իրականութեան հետ շփման մէջ մնացած է¹³: Թերեւս այստեղ հետաքրքրական է յիշել Զայր Մըթրի Զահի Ասանասիոսի հետեւեալ կարծիքը.

«Կարելոր է յիշել քրիստոնէայ Զալէպի ունեցած դերը ժ. դարուն Միջին Արեւելքի բեմահարթակին վրայ: Շնորհիւ Զալէպի տաղանդաւոր գաւաակներուն եւ Չարթօնքի յառաջապահներուն, արաբական գրական-իմացական Չարթօնքը ծլարձակած է եւ ապա Զալէպէն՝ անցած է Լիբանան, մինչեւ Եգիպտոս եւ այլուրք...»¹⁴:

Անվիճելիօրէն Արաբական Չարթօնքի կերտիչները հանդիսացած են Զալէպի հայազգի գործիչները¹⁵:

Այդ օրերուն Զալէպի բնակչութեան հոծ արաբներուն կողքին, շօշափելի թիւ կազմած են

թուրքերը, պարսիկները, հրեաները եւ հայերը, նաեւ իտալացի, ֆրանսացի, սպանացի եւ այլ արեւմտաեւրոպացի առեւտրականներ, հոգեւորականներ, դիւանագետներ: Օսմանցիք քաջալերած են եկուորներու ընթացքը, գլխահարկի նպատակներով:

Զետեւաբար Սուրիոյ հայութեան կեդրոնը դարձած է Զալէպ քաղաքը: Ճանապարհորդ Սիմէոն Լեհացի 1616-ին երբ առաջին անգամ Զալէպ այցելած է, դէմ հանդիման



գտնուած է «բարգաւաճ» համայնքի մը հետ եւ յատուկ հիացումով պատմած է տեղւոյն հայ վաճառականներուն, անոնց հարստութեան ու ազդեցիկ դիրքին մասին¹⁶:

Յատկանշական է, որ Զալէպի հայ համայնքի ազգային-եկեղեցական կեանքէն ներս, (ժՁ.-ժԸ.դդ.) ջուղայեցիք իրենց մեծատուն վաճառականներով եւ ազդեցիկ խոճաներով խիստ որոշադրիչ, նոյնիսկ առաջնորդող դեր ունեցած են: Աւելին, 1600-1605 թուականներուն, Զալէպի տուները եղած են քարաշէն ու գեղակերտ, իշխաններ եւ բարձրաստիճան պաշտօնատարներ ընդունելու յարմարութիւններով օժտուած, որոնց սեփականա-

¹³ Այս շրջագիծէն ներս, Յիսուսեանները առաջինը հանդիսացած են որ, 1625 թուականին կապեր հաստատած են Զալէպի հետ, դրսեւորելով աշխոյժ գործունեութիւն, դիմագրաւուած շարք մը դժուարութիւններով հանդերձ:

¹⁴ حاجي انناسيو، الأب مغربي، موسوعة بطريركية أنطاكية التاريخيّة والأثرية، الجزء الثاني، لبنان المسيحي في تاريخه، المحضاري، عمير العاصمي، المجلد التاسع، ضمن النقصية العربية الكبرى، بيروت، دمشق، طبع 2001، 2:936، دمشق، 2002.

¹⁵ Տե՛ս, Ազեզեան, Զուրի, Արաբական Չարթօնքը եւ Զայ Գործիչները, Զալէպ-Սուրիա, 2008:

«... في زحلة، في عهد بطريرك أنطاكية، في عهد بطريرك أنطاكية، في عهد بطريرك أنطاكية...»

¹⁶ Սիմէոն Դարի Լեհացույ, Ուղեգրութիւն, ուսումնասիրեց եւ հրատարակեց՝ Զ. Ներսէս Վ. Ալիսեան, Մխիթարեան Տպարան, Վիեննա, 1936, էջ 318:

¹⁷ Սիւրմեան, Արտաւազդ Արք., Պատմութիւն Զալէպի Զայոց (1355-1909), 3:271: Նաեւ, տե՛ս,

- Առաքելեան, Զամբարձում, Պարսկաստանի Զայերը - Նրանց Անցեալը, Ներկան եւ Ապագան, Մասն Ա., Մխիթարեան Տպարան, Վիեննա, 1911:

¹⁸ Սիւրմեան, Արտաւազդ Արք., Պատմութիւն Զալէպի Զայոց (1355-1909), 3: 272-273, 288:

տերերը ի շարս այլոց եղած են հայերը¹⁷: Բացի այդ, նոյն շրջանին եւրոպական շարք մը երկիրներու ներկայացուցիչները, մանաւանդ Յոլանտայի, Ֆրանսայի, Իտալիոյ, Սպանիոյ, վաճառականական նպատակներով սկսած են հաստատուիլ Յալէպ, հիմնած են իրենց հիւպատոսութիւնները եւ գործակցած են հայ վաճառականներուն հետ¹⁸:

Այս խրախուսիչ պայմաններուն մէջ, 1616-ին, Յալէպի հայ համայնքի երեւելիներէն՝ իշխան Պետիկ Չէլէպիի բարերարութեամբ, եւ եղբօրը Սանոս Չէլէպիի վերակա-



ցութեամբ¹⁹, Սիսի Յովհաննէս Դ. Անթէպի Կաթողիկոսի (1602-1621թթ.) եւ Յալէպի Առաջնորդ Խաչատուր Արքեպիսկոպոս Կարկառեցիի օրօք (1603-1620թթ.), Սրբոց Զառասնից Մանկանց եկեղեցին երկրորդ անգամ վերաշինուած եւ ընդարձակուած է՝ դէպի հարաւ-արեւմուտք ուղղութեամբ, կառուցուած է ներկայի սիւնազարդ բաժինը, միաժամանակ անաղարտ պահուած է նախնական սրբավայր մատուռը եւ Ըռայիս Պարոն Եսայիի կողմէ իրագործուած առաջին ընդարձակումը:

Այս մասին կը վկայէ Յալէպի մէջ Վարդան Լեհացիի կողմէ գրչագրուած եւ «Ամթեցի Իսրայէլ»-ի կողմէ ծաղկուած՝ Աւետարանի մը յիշատակարանը²⁰:

Թանկագին յիշատակարան մը, որ ոչ միայն կը հաստատէ եկեղեցւոյ վերաշինու-

թիւնն ու բարերարները, այլ կարելոր ապացոյց է այդ օրերուն Յալէպ քաղաքին եւ տեղւոյն հայ համայնքին պարզած կազմակերպուած եւ կենսունակ վիճակին մասին:

Եկեղեցւոյ նորակառոյց բաժինը ունեցած է (20x14 քառակուսի մէթր) տարածութիւն, կառուցուած է վեց հաստ հիմերով սիւներու վրայ, հողածածկ տանիքով: Սակայն եկեղեցին գմբէթ չունի, կը կարծուի թէ՛ 1633 թուականին, խուսափելու համար օսմանցիներու եւ ընդհանրապէս տեղացիներու կրօնական մոլեռանդութենէն, համայնքին երեւելիները խոհեմութիւն համարած են գմբէթը վար առնել: Եկեղեցին ունի երեք գեղակերտ խորաններ:

Եկեղեցւոյ աջակողմեան դասուն մէջ տեղադրուած է Առաջնորդական փայտեայ գահը, մեծադիր եւ գմբէթաւոր (1733թ.):

Վերնատունը իրագործուած է՝ 1874-ին:

Եկեղեցւոյ հիւսիսային պատին մէջ, 1888 թուականին շինուած է մկրտութեան անազանը: Այնուհետեւ Եկեղեցին յաճախակիօրէն նորոգուած եւ բարեգարդուած է:

Սրբոց Զառասնից Մանկանց եկեղեցւոյ 1616 թուականի պատմական երկրորդ վերաշինութեան եւ ընդարձակման զուգահեռ, Առաջնորդարանին յաճախակի յիշատակութիւններն ու նորոգութիւնները, կարելի է նկատել Թեմին եւ Յալէպի հայ համայնքին կենսունակութեան յայտարարներէն:

Մինչեւ 1911 թուական Սրբոց Զառասնից Մանկանց եկեղեցին զանգակատուն չէ ունեցած, 1912-ին կառուցուած է լայնանիստ եւ բարձրադիր զանգակատուն-աշտարակը, որուն շինութիւնը ամբողջացած է 1929-ին, բարերարութեամբ պրագիլաբնակ Րըզըք Ալլահ Թահհանի:

Չանգակատուն-աշտարակը երկու անգամ վերանորոգուած է՝ 2005-ին եւ 2019-ին (արդեամբ՝ յաջորդաբար մայր եւ դուստր Բենելոբ եւ Անի Տնկիկեաններու, ի յիշատակ իրենց զաւկին եւ եղբօր Արտաւազդ Տնկիկ-

¹⁹- Պետրոս եւ Սանոս Չէլէպի եղբայրներուն մասին, տե՛ս, - Սիւրմէան, Արտաւազդ Արք., *Պատմութիւն Յալէպի Հայոց (1355-1909)*, 3: 569-382: Կարապետեան, Պերճ Ս., *Մահտեսի Մեծագործ Տոմար Պետիկ եւ Սանոս Չէլէպիներ Յալէպի եւ Կարինի Մէջ*, «Գեղարդ» Սուրիահայ Տարեգիրք, Յալէպ, Գ. Գիրք, 1985, էջ 188-232:

²⁰- Conybeare, Frederick Carnwallis, *A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum*, 1934, London, p. 46.

եանի):

Եկեղեցւոյ Նորոգութիւնները պարբերաբար շարունակուած են: Կարելի է յիշել որ եկեղեցւոյ շրջափակին հիւսիսակողմը, 28 Մայիս 1989-ին իրագործուած է Մեծ Եղեռնի Նահատակաց Յուշարձան-Որմնաքանդակը (արդեամբ՝ Կարօ եւ Տիրան Գլըճեան եղբայրներու, Նախագիծ՝ հալէպահայ ճարտարապետ



Սարգիս Պալմանուկեանի, իրագործում՝ հալէպահայ ճարտարապետ Գեորգ Երամեանի): Ապա, 8 Մայիս 1990-ին, պատմական Ս. Աստուածածին եկեղեցին վերածուած է Չարեհեան Գանձատան (բարերարութեամբ՝ ֆրանսահայ Գեորգ Պագրըճեանի, Նախագիծ եւ իրագործում՝ հալէպահայ ճարտարապետ Գեորգ Երամեանի, Գանձատան առաջին կազմակերպումը եւ դասաւորումը կատարուած է Դոկտոր Յուրի Ազեգեանի կողմէ): Իսկ 6 Յոկտեմբեր 1996-ին, Նախաձեռնութեամբ Յալէպի Տարօն-Տուրուբերան Յայրենակցական Միութեան, շրջափակի արեւելակողմը իրագործուած է՝ Տարօն Աշխարհի Ու Նահա-

տակներուն նուիրուած Յուշարձան-Որմնաքանդակը (Նախագիծ՝ հալէպահայ արուեստագետ Վիգէն Պերթիզլեանի, իրագործում՝ հայրենի արուեստագետներ Մկրտչեան եղբայրներու): Աւելի ուշ, 2005-ին, եկեղեցւոյ հարաւային մուտքի հանդիպակաց պատին իրագործուած է Խաչքար-Որմնաքանդակը (արդեամբ՝ հալէպահայ Մկրտիչ Չափանեանի զաւակներուն, ի յիշատակ իրենց ծնողաց):

Սակայն անվիճելիօրէն բոլոր Նորոգութիւններուն պսակը հանդիսացաւ, 2018-2019 տարիներու Սրբոց Բառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ հիմնական վերաշինութիւնը, յետ սուրիական պատերազմին, բծախնդիր հսկողութեամբ օրուան Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեանի (2004-2019 թթ.): Եկեղեցին Նորոգուեցաւ եւ բարեզարդուեցաւ Նախկին հնագիտական շքեղ ոճով: Շինարարական աշխատանքներուն մեկնարկը սկսաւ յատուկ աղօթքով, 31 Մայիս 2018-ին, հանդիսաւոր սրբագործումն ու վերաբացումը կատարուեցան, 30 Մարտ 2019-ին, Ձեռամբ ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ (բարերարութեամբ՝ նուիրատուներու եւ հաւատացեալ ժողովուրդին):

Սրբոց Բառասնից Մանկանց Մայր եկեղեցին²¹, աւելի քան 500 տարիներու իր դարարմատ պատմութեամբ եւ ժողովրդամատոյց առաքելութեամբ՝ պիտի շարունակէ ներկայացնել քրիստոնեական համաշխարհային բացառիկ խորհրդանիշ մը, մինչ Յալէպի հայ համայնքին, ինչու չէ սուրիահայութեան՝ կազմակերպումին, ծաղկումին, տառապանքին, վերածնունդին ու վերընձիւման, եւ ստեղծագործ հանճարին հնչեղ վկայարանը:

²¹Սրբոց Բառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մասին, Նաեւ տե՛ս,

- Ազեգեան, Յուրի, 1) «*Բերիոյ Թեմի Շինարարական Իրագործումները Յալէպի Մէջ Վերջին Տասնամեակին*», «Օջական» Պարբերաթերթ (Պաշտօնաթերթ Բերիոյ Յայոց Թեմի Ազգ. Առաջնորդարանի), ԺԲ. Տարի, թիւ 3-4 (37-38), Նոյեմբեր-Դեկտեմբեր, 1989, էջ 36-40, 2) «*Բերիոյ Թեմը եւ Իր Եկեղեցիները*», «Յասկ» Յայագիտական Տարեգիրք, Նոր Շրջան, Թ. Տարի, Անթիլիաս, 1997-2001, էջ 399-402, 3) «*Յալէպի Սուրբ Բառասնից Մանկանց Մայր Եկեղեցին*», «Գանձասար» Պաշտօնաթերթ Բերիոյ Յայոց Թեմի Ազգ. Առաջնորդարանի, Բացառիկ 2001, էջ 70-79, 4) «*Սուրիոյ Յայց. Առաք. Եկեղեցիները*», «Գանձասար» Պաշտօնաթերթ Բեռիոյ Յայոց Թեմի Ազգ. Առաջնորդարանի, Բազառիկ 2004, էջ 46-49:

- عزازيان، المهندس هوري، نبذة تاريخية موجزة عن الجاليات الأرمنية في البلاد العربية، منشورات نادي التأسيسية السورية - اللجنة الثقافية، دار السحار للنشر والتوزيع، الدامقية - سورية، 1993، ص 53-63. حجنان عبد اللطيف معالي، حلب الأثرية والطبيعة الثالثة، حلب، 2010، ص 103-104.

ՅԱԽԵՐԺԱԿԱՆ ՀՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆԸ


*Յակոբ Մկրտիչեան
Նայիրի Մկրտիչեան*

Երջանիկ եմ ու հպարտ, որ դուստրն եմ այն արժանաւոր հայուն, որ ողջ կեանքը անսակարկ նուիրումով բոցավառեց յանուն իր գաղափարներուն ու սկզբունքներուն եւ իր գործով ու կեանքի ուղիով յաւերժական հպարտութիւն առթեց ո՛չ միայն իր գաւակներուն եւ հարազատներուն հոգւոյն խորերը, այլեւ՝ բազում աշակերտներու, ողջ համայնքի եւ բոլոր անոնց, որոնք գէթ մէկ անգամ առիթ ունեցած են անոր հետ հանդիպելու:

Գիւղի մէջ ծնած Հայրս, 7 տարեկան հասակին սկսած է թոթովել իր մայրենին: Առաջին դասարանին (9 տարեկանին) ինք գիւղէն քաղաք՝ Գամիշլի ուղարկած են՝ զինք յանձնելով հարազատ ընտանիքի մը խնամքին, որպէսզի այնտեղ դպրոց յաճախէ: Երկրորդ տարին ինք միացած է նաեւ հօրեղբայրս, որ մանկութեանս յիշողութիւններուն մէջ ամենաընթացաւոր մարդն էր, զոր երբեւէ տեսած էի: Հետագային, երբ հայրս աւարտած է 6-րդ դասարանը, մեծ հայրս, որ գիւղին մէջ քիչ թիւ կազմող գրագետ հեղինակութիւններէն մէկն էր եւ իբրեւ այդպիսին՝ դարձած էր գիւղի «հեքիաթասաց»ը (ան գիրքեր կը կարդար յետոյ կարդացածը կը պատմէր հաւաքուած գիւղացիներուն), որոշած է հայրս ուղարկել Լիբանան՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Չարեհեան դպրեվանք, կրթութիւնը այնտեղ շարունակելու համար:

Հայրս Անթիլիաս հասնելուն, դպրեվանքի տեսուչը զինք կը կանչէ՝ գիտելիքները ստուգելու համար, առաջին հարցին թէ՛ ի՞նչ երգ գիտէ, հայրս իր խրոխտ եւ անկաշկանդ ձայնով հնչեցուցած է «Արիւնտ Դրօշ»ը: Օրուան տեսուչը, որ ըստ երեւոյթին թունդ

հակադաշնակցական մը եղած է, ըսած է՝ «Տղաս, մենք տեղ չունինք քեզի համար»: Յետոյ, միջնորդութեամբ մը շարունակած են ստուգել ինքնուրուի գիտելիքները, ու ի վերջոյ «տեղ գտնուած է» եւ հայրս դարձած է դպրեվանքի սան՝ դասընկերն ըլլալով Մեծի Տանն Կիլի-



կիոյ Գարեգին Բ. Կաթողիկոս Սարգսեանին: Տարիներ ետք, երբ ինքնուրուի դասընկերը, իբրեւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս այցելեց Գամիշլի, ինքնուրուի բարձրացանք աշակաւորի: Խումներամ բազութեան մէջ, մեր պատ-

կառելի կաթողիկոսը ձեռքը երկարած էր եւ կարգավիճակէն յոգնած, չէր նկատեր թէ ուր քեր են մօտեցողները. հայրս յառաջացաւ, որ աջը համբուրէ, կաթողիկոսը մեքենաբար ձեռքը երկարած էր, երբ հայրս կռացաւ, վեհափառը անդրադարձաւ ու մէկ անգամէն ձեռքը ետ քաշեց, «*ի՛նչ կ'ընես Յակոբ*», ըսաւ եւ թոյլ չտուաւ, որ իր երբեմնի դասընկերը իր ձեռքը համբուրէ...

Դպրեվանքի կրթութեան տարիներէն ետք եւ սարկաւագ ձեռնադրուելէն առաջ, մեծ հայրս տուն կանչած է իր անդրանիկ գաւազը՝ ըսելով, որ վանականի կեանքը անոր համար չէ եւ այնտեղ ձեռք բերած գիտելիքները բաւարար են իրեն: Հայրս վերադարձած է Գամիշլի եւ մօտակայ Ամուտա շրջան գործուղուած՝ հայերէն դասաւանդելու համար: Ուսուցչութեան գործունեութեամբ տարուելով՝ ան նոյնիսկ մոռցած է, որ պետք է սուրիական բանակին ծառայէ: Ուսուցչական առաքելութիւնը կատարելու պահուն՝ հօրս ձերբակալած են, որպէս իր պարտականութենէն թերացած քաղաքացի եւ քանի մը օր բանտարկելէ ետք՝ զօրակոչած են: Բանտարկութեան օրերուն մեծ մայրս գետին քնացած է՝ սպասելով զակին ազատ արձակուելուն...

Հօրս բանակի ծառայութեան օրերէն լուսանկար մը դրոշմուած է յիշողութեանս մէջ. ան՝ պայծառ ու հպարտութեամբ շաղախուած ծախտով այդ նկարը ցոյց կու տար ու կ'ըսէր՝ «*Չիտուոր էի (1951 կամ 1952 թ.), ըսին Դրօն Հայէպ եկած է, ձգեցի ՅՄԸՄ-ի ակումբ գացի Դրօն տեսնելու, հոն նկարուած եմ*»:

Բանակի ծառայութիւնը աւարտելէն ետք, հայրս իր ողջ կեանքը նուիրեց ազգային եւ կրթական գործերուն: Ուսուցչական առաքելութիւնը շարունակուեցաւ Ամուտա, Ճուխա, Հասիչէ եւ վերջապէս Գամիշլի: Թէ ի՞նչ տուած է հայրս իր պաշտօնավարման 53 տարիներուն ընթացքին, այդ մասին կը վկայեն ի՛ր իսկ դաստիարակած տասնեակ սերունդները, որոնք իր մասին միայն խոնարհումով ու ակնածանքով կը խօսին...

* * *

1961-ին Սուրիոյ մէջ տիրող քաղաքական իրավիճակի հետեւանքով՝ դաշնակցականները սկսած են հալածուիլ եւ մէկ առ մէկ ձերբակալուիլ: Այդ դէպքերուն մասին գրեթէ գրի առնուած ու հրապարակուած մանրամասն տեղեկութիւններ կամ յուշագրութիւններ

չկան: Ուրախ եմ, որ հայրս, ժամանակին, տեղի տալով պնդումներուս՝ գրի առաւ այդ օրերուն կատարուած իրադարձութիւնները, զորս հատուածաբար եւ որոշ խմբագրումներով կը ներկայացնեմ:

ՅԱԿՈԲ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՅՈՒՅԵՐ

1961-ի Յուլիսի առաջին օրերն էին, օդի շերմաստիճանը 45, երեւոյթ մը, որ բնական էր Գամիշլիի ամրան եղանակին: Արձակուրդի օրերուս հանգիստը կը վայելէի, երբ կարծես բնագոյր կամ թմրածութիւնս թօթափելու մղումը զիս քաղաք առաջնորդեց՝ ոչինչ ընելու անորոշութեամբ:

Դէպի Առաջնորդարան տանող մայթին, պատահաբար հանդիպեցայ երիտասարդ ընկերոջ մը՝ Ս. Սիմոնեանին: Անոր դէմքը մէլամաղձոտ էր ու շփոթահար.

-Ձերբակալութիւններ կան,- ըսաւ ան: Մեր ընկերներէն Ս. Մանուկեանը ձերբակալուած է, պատճառը յայտնի չէ:

Ես ալ անտեղեակ էի ձերբակալութեան շարժառիթէն. մտահոգութիւնը պատեց ներաշխարհս: Արդեօք ձերբակալութիւնը կուսակցական հարցով էր, թէ՛ անձնական բնոյթի: Այդ մէկը կը մնար անորոշ:

Ս. Մանուկեան ամիս մը առաջ ինքնաշարժի արկած մը ունեցած էր եւ տակաւին չէր ապաքինած: Այդ պայմաններուն մէջ անոր բանտարկուիլը անբնական կը թուէր, բայց իրողութիւն էր: Իրավիճակը առաւել քան մտահոգիչ էր:

Մղձաւանջային ժամերը իրարու յաջորդեցին: Շուտով Ա. Հեքիմեան ձերբակալուեցաւ իր աշխատանոցին մէջ, ձերբակալուեցան նաեւ ուրիշներ:

Լարուած մթնոլորտ մը կը տիրէր գաղութէն ներս, իսկ օտար շրջանակներ, զուսպ հետաքրքրութեամբ կը հետեւէին այս անսահման ընթաց դէպքի հոլովոյթին:

Անհանդարտ հոգեվիճակով, անքուն գիշեր մը անցուցի՝ արեւածագը երազելով: Միտքս խճողուած էր անպատասխան հարցադրումներով ու հոգիս անորոշութեան մղձաւանջէն հիւանդ: Արդեօք ի՞նչ պիտի բերէր մեզի վաղուան արեւը:

Վաղ առաւօտեան ոտքի վրայ էի արդէն: Ի՞նչ ընելու, չէի գիտեր: Զաղաք իջայ, զգուշութեամբ անցայ Ս. Սիմոնեանեց տան փողոցէն, որ լեցուած էր հետաքրքիր բազմութեամբ, ու այդ տխուր հանդիսաւորութեան

դիմաց կեցայ շղագրգիռ հոգեվիճակով:

Ս. Սիմոնեանի տունեն ներս կը գործեր ապահովութեան գրասենեակի սպան՝ իր գործակատարներով: Տան խոհանոցի պէտքերն ածածկ յատակը կը փորուէր, հոնկէ բան մը հանելու ինքնավստահութեամբ: Հոն էր նկարիչը՝ իր նկարահանման սարքերով: Աւելի ուշ, ահա խորունկ փոսէն դուրս կը բերուէր տասնամեակներէ ի վեր անգործածելի դարձած ու թաղուած լրահաղորդման յատուկ կազմածը, եւ՝ վերջ: Լրատուական անթել կազմածին հետ միասին, շփոթած համակերպութեամբ մը բանտ տարուեցաւ Ս. Սիմոնեանը՝ անուս, սակայն ընտանիքի պատուական հայրն ու հաւատաւոր դաշնակցականը:

Նոյն օրը, երեկոյեան, ազգային վարժարանի փողոցն ու շրջափակը լեցուած էին հետաքրքիր բազմութեամբ: Աշխատակցի վրայ էր ապահովութեան գրասենեակի սպան՝ իր գործակատարներով: Անոնց հետ էր նաեւ ազգային վարժարանի ձերբակալուած տնօրէն՝ ընկ. Կ. Պետրոսեանը եւ նկարիչը՝ իր գործիքներով: Պետական յատուկ բռնամիջոցներով տնօրէնէն կը պահանջուէր դպրոցի պատուհանէ մը ներս թաղուած պայթուցիկ կազմածները հանել: Տնօրէնը անելի առջեւ էր, դասարանի մը պատուհանին խորութեան մէջ թաղուած էին պայթուցիկ կազմածները: Նոյն պահուն, անսահման էր ներկայ հայ հասարակութեան յուզումն ու յուսալքութիւնը: Ապահովութեան կեդրոն տարուեցան տնօրէնն ու պայթուցիկ կազմածները:

Յաջորդ օրը արաբական թերթերը լայնօրէն կ'անդրադառնային դաշնակցական ընկերներու ձերբակալութեան եւ անոր առընչուող հոլովոյթին: Հոգեմաշ էր այն երեւոյթը, երբ լրագրավաճառ լաճերը իրենց գիլ ձայնով կը կանչէին՝ «Դաշնակներ, երկու ֆրանկի» (այդ օրերուն օրաթերթի սակը երկու ֆրանկ էր): Պատկերազարդ այդ օրաթերթերուն մէջ կ'երեւէին տխրադէմ նկարները ընկ. Ս. Սիմոնեանին եւ Կ. Պետրոսեանին:

Իրարայաջորդ երկու օրերու ընթացքին ձերբակալուած էին տասնեակ ընկերներ, որոնց կարգին էին Ս. Մանուկեան, Ա. Հէքիմեան, Ս. Սիմոնեան, Կ. Պետրոսեան, Կ. Գալայճեան, Գ. Սիսեռեան, Ն. Թովմասեան, Ս. Կարապետեան, Յ. Գալուստեան, Լ. Առաքելեան, Յ. Մկրտիչեան, եւ հաւատաւոր այլ ընկերներ: Բանտարկուած ընկերները Դամասկոս տարուեցան ներկայանալու գիւղութեան:

կան դատախազութիւն:

Գաղութը կ'եռար: Վախի զգացումը կը տիրակալէր հայ հոգիները՝ գալիք վտանգներու կանխագուշակութիւններով: Հայկական տուններէն ներս թէ դուրս աննախընթաց այս ձերբակալութիւններուն նիւթն էր, որ կը ծեծուէր զգոյշ, կը վերլուծուէր, կը մեկնաբանուէր եւ կը յանգէր անորոշ եզրակացութիւններու:

ԺՈՉԷՑ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ ՓԱՆՈՒՍՏԻ ՈՂԻՍԱԿԱՆԸ

Պետական հետախուզական գրասենեակի գործակատարները կը գործէին եռանդով: Անոնց ինքնաշարժները սուրալով կ'անցնէին թաղէ թաղ՝ տենդոտ ջանասիրութեամբ որոնումներ կատարելով: Մտավախութեան ամպերը հետզհետէ անելի կը կուտակուէին, կը խոժոռէին՝ դառնալով անձրեւաբեր: Կը փնտռուէր մէկը, կարելոր անձնաւորութիւն մը, որուն կ'ուղղուէին կարգ մը կենսական հարցերու բացայայտման շառաւիղները: Եւ այդ գրութեան հանգոյցը աներեւութացած էր՝ տագնապեցնելով շղագրգիռ գաղտնի ոստիկանութիւնը:

Այդ հանելուկային անձնաւորութիւնը Ժ. Տեմիրճեանն էր, յառաջացած տարիքով, բայց ամուր կազմուածքով՝ հանգստեան կոչուած հայ սպայ մը, որ շրջահայեաց, սակաւախօս եւ ընկերային անձնաւորութիւն մըն էր, յարգուած իր շրջապատէն: Ան Հայկական ակումբին դիմաց նպարավաճառի փոքր խանութ մը ունէր:

Ձերբակալութիւններու չորրորդ օրն էր: Ուշ երեկոյեան նստած էի ակումբի ամառանային տանիքը, սուրճի մը մտերմութեամբ՝ օրուան դէպքերէն բխած մտածումներուն մէջ մխրճուած: Ինձի մօտեցաւ առաջնորդարանի բարապան ընկ. Ս. Պետրոսեան եւ զգուշութեամբ յայտնեց:

– Ընկեր Տեմիրճեանը զիս դրկած է ձեր մօտ, խնդրելով, որ այս գիշեր անյապաղ զինք քաղաքէն հեռացնէք:

– Ան հո՞ս է տակաւին, ո՞ր է հիմա, հարցուցի զարմացած:

– Այո՛, հոս է, երբ որոշէք զինք փախցնել, գտնուելու վայրը կը յայտնեմ:

Գործելու ժամանակամիջոցը կարճ էր եւ կարճ տեւեց նաեւ մեր խորհրդակցութիւնը: Պահ մը մտքերս ամփոփելով՝ դասաւորեցի «փախստականը» քաղաքէն դուրս հանելու ծրագրի իրագործման նախագիծը: Ապա,

թելադրեցի խորհրդակցիցիս, որ Տեմիրճեանը պատրաստ ըլլայ գիշերուան ժամը 11:30-ին, իսկ ինք՝ իր հերթին, ակումբ ներկայանայ նոյն ժամուսն, խիստ գաղտնապահութեամբ: Նախագագացումով կռահեցի, որ Տեմիրճեանը կրնայ Առաջնորդարան պատասպարուած ըլլալ:

Ս. Պետրոսեան մեկնելէն ետք, քովս կանչեցի ընկեր Ա. Կենճոյեանը, որ ինձմէ երեք սեղան անդին նստած՝ ընկերոջ մը հետ կը զրուցէր: Վերջինս հայ հողագործի մը մօտ կ'աշխատէր, իբրեւ մեքենիստ եւ իր տրամադրութեան տակ ունէր իրենց գործին յատուկ «փիքափ» տիպի ինքնաշարժ մը:

Երբ ծրագիրս բացատրեցի ընկերոջ, ան անվարան ընդունեց գործին մասնակցից ըլլալ՝ հոգեկան գոհունակութեամբ: Կենճոյեանը իր աշխատանքին բերումով ծանօթ էր քաղաքի հեռաւոր շրջաններու արաբական գիւղերուն եւ գիւղական ճամբաներուն: Պայմանաւորուեցանք, որ ան երկու ժամուան ընթացքին կարգի դնէ ինքնաշարժի մը անհրաժեշտ կարիքները եւ ժամը 11:00-ին ակումբ գտնուի:

Գիշերուան ժամը 11:30-ին, Կենճոյեանի եւ Պետրոսեանի հետ զգոյշ կերպով իջանք: Պետրոսեան գնաց Առաջնորդարան, ուր պատրաստ պիտի ըլլար Տեմիրճեանը: Ինքնաշարժ բարձրացանք սրտատրոփ: Անցանք Առաջնորդարանի փողոցէն: Մեր առջեւէն սուրալով անցաւ պետական «ճիփ» մը: Երբ պահ մը փողոցը ամայացաւ, մեր ինքնաշարժը կանգ առաւ եկեղեցւոյ նայող Առաջնորդարանին փոքր դրան առջեւ, որ կիսով բաց էր: Տեմիրճեանը արագ ինքնաշարժ բարձրացաւ:

Անցնելով մութ եւ ամայի փողոցներէն, քաղաքէն դուրս ելանք՝ սպանդանոցի բանուկ ճամբայէն: Շուրջ քսան ք.մ. կտրելէ ետք, Կենճոյեանի թելադրութեամբ՝ շեղեցանք զլիակաւոր փողոցէն, եւ «ճնուպ ալ Ռատ» կոչուած շրջանի գիւղերը իրարու կապող հողէ ճամբաներէն շարունակեցինք յառաջանալ:

Մենք երկուքով թելադրեցինք Տեմիրճեանին, որ Զասիչէի գիծով գինք տանինք Զալէպ, որ անելի ապահով կը համարուէր: Բայց ինք՝ հաստատ մնալով իր որոշումին վրայ՝ յայտնեց, թէ Սուրիա եւ Իրաք ներկայիս հակադիր քաղաքականութիւն կը վարեն, ուստի որոշած է իբրեւ քաղաքական ապաստանեալ Իրաք անցնիլ:

Մեզի կը մնար ճանապարհը շարունակել

Իրաքի ուղղութեամբ: Առաւօտեան ժամը 4:00-ին հասանք Իրաքի սահմանամերձ արաբական գիւղ մը, որուն մէկ բնակիչը ծանօթ էր Կենճոյեանին: Զամիտ մեզ ընդունեց արաբական յարգանքով եւ հիւրասիրութեամբ: Իր քնաթաթախ կինը մեզի հրամցուց լաւաշ հաց, պանիր, սեր եւ կարագ: Այդ պահուն յիշեցի Մեծարեցի հետեւեալ տողերը. -

**«Ու բարեւի մը փոխան
Յազար բարիք ես տայի,
Յազար բարիք ես տայի
Գոյը կրակին ճարճատուն,
Կուրքը բերրի դաշտերուն,
Բոլոր միրգերն աշունի,
Ու մեղր ու կաթ ու գինի...»**

Զիւրընկալ Զամիտին ըսինք, որ մեզի ընկերակցող մարդը մեր հօրեղբայրն է, թէ ինքնաշարժով մարդ կոխած է եւ իբրեւ փախըստականի Իրաք պիտի անցնի, կը խնդրէք իր օժանդակութիւնը: Զիւրընկալը սիրով ընդառաջեց մերխնդրանքին եւ ընկերակցեցաւ մեզի:

Շուրջ տասնհինգ վայրկեանէն արդէն մտած էինք Իրաքի սահմանը եւ կանգ առած՝ հովիտի մը մէջ: Արեւածագ էր արդէն եւ տխուր էր բաժանումը: Յուզումով ողջագուրուեցանք Տեմիրճեանին հետ եւ բաժնուեցանք:

Ահա ան դանդաղօրէն կ'ուղղուէր հեռունէն երեւցող իրաքեան սահմանային պահակաւոցը, նետուելով տխուր անորոշութեան գիրկը:

Զիւրընկալ Զամիտը իր գիւղը տարինք ու բռնեցինք վերադարձի ճամբան՝ հոգեկան ինքնագոհութեամբ:

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ ԴԵՊԻ ԶԱԼԷՊ

Ձերբակալութիւններուն յաջորդող օրերուն գաղութահայութիւնը կը մնար տագնապահար, անորոշութեան մէջ մտամուլոր: Մեր կապերը խզուած էին կեդրոնին հետ եւ անգիտակ էինք այս անսախընթաց ձերբակալութիւններու խոր ակունքներէն եւ տարողութենէն: Երեկոյեան հանդիպեցայ ազգային կեանքէն ներս դերակատար բժիշկներ՝ Ս. Սիսեռեանին եւ Խ. Ռշտունիին (այս վերջինը կուսակցական) եւ անոնց հետ երկար խորհրդակցեցայ շարունակուող ձերբակալութիւններուն, անոնցմէ բխած գաղութահայութեան տագնապին ու անոր յաղթահարման միջոցներուն շուրջ: Երկու բժիշկներն ալ անվերապահ գործակցութիւն ցուցաբերելով հան-

դերձ՝ թելադրեցին, որ անյապաղ հաղորդակցինք Հալեպի մեր կեդրոնին հետ, հասկնալու համար, թե եղած տագնապը մե՞ր շրջանին յատուկ է միայն, թե՞ երկրեն ներս համատարած բնույթ ունի:

- Իսկ մենք, - ըսին անոնք, - ազգային յատուկ պատգամաւորութեամբ մը պիտի ներկայանանք տեղւոյս պետական պատկան մարմինին, անոր ներկայացնելու մեր համայնքի տագնապահար իրավիճակը՝ շարունակուող ձերբակալութեանց պատճառով:

Առաջադրանքը յստակ էր ու տրամաբանական:

Ուստի պետք էր Հալեպ մեկնելի: Բժիշկներէն բաժնուելէս ետք անմիջապէս տեսնուեցայ ինծի մօտիկ եւ հաւատարիմ երկու ընկերներու՝ Կ. Ղազարեանի եւ Կ. Պօղոսեանի հետ: Այս վերջինը կ'աշխատէր հայ հողագործի մը մօտ, որ ուներ իրենց գործին յատուկ ինքնաշարժ մը:

Երբ ճամբորդութեան անհրաժեշտ բոլոր պատրաստութիւնները աւարտեցան, ուշ գիշերին Հալեպ մեկնեցանք: Հասիչէ նահանգի ճամբուն վրայ ոստիկանութիւնը կեցուց մեզ եւ քննելով մեր անձնաթուղթերը՝ հարց ու փորձեց: Նախազգացումը ունեցանք, որ Տեմիրճեանը կը փնտռէին:

Կանուխ առաւօտուն Հալեպ էինք արդէն: Սրճարանէ մը ներս սուրճ խմելու արարողութիւնը երկարեցինք՝ եղած դէպքերուն շուրջ գրուցելով մինչեւ ժամը ինը, ապա բաժնուե-



ցանք իրարմէ: Երկու ընկերակիցներս մէկ օր Հալեպ պիտի մնային, իսկ ես կեդրոնին հետ տեսնուելէն ետք, անմիջապէս Գամիշլի պիտի վերադառնայի:

Աւելի ուշ հանդիպեցայ ինծի ծանօթ ընկեր Գ. Թարխանեանին եւ անոր յայտնեցի մեր շրջանի կացութիւնն ու Հալեպ գալուս նպա-

տակը: Թարխանեանի զեկոյցէն ի յայտ կու գար, որ Հալեպի մէջ եւս ձերբակալութիւններ եղած են, եւ տագնապալի կացութիւնը նման է Գամիշլիին: Ան զիս առաջնորդեց օրուան պատասխանատու՝ ատամնաբոյժ Յ. Գասապեանի աշխատատեղին: Երբ բժիշկին յաճախորդները մեկնեցան, Թարխանեան զիս ներկայացուց անոր եւ յայտնեց այցելութեանս նպատակը: Յ. Գասապեան նախ տատամսելով՝ ոչ գոհացուցիչ բացատրութիւն տուաւ ինծի, բայց վստահութիւն ներշնչող զեկուցումիս եւ պահանջիս դիմաց՝ ան ներկայացուց եղած դէպքերուն յստակ պատկերը: Ձերբակալութիւններ տեղի ունեցած էին նաեւ Զեսապի եւ Լաթաքիոյ հայահոծ շրջաններուն մէջ: Հալեպէն ձերբակալուած էին՝ Յ. Պազարպաշեան, Կ. Աղճեան, սրճարանապետ Սահակը, ոսկերիչ Ս. Տանայեան եւ ուրիշներ:

Տոքթ. Գասապեանին հրաժեշտ տալէս ետք, Հալեպ ոչինչ ունեի ընելիք: Ուշ երեկոյեան հանրային փոխադրակառքով Գամիշլի վերադարձայ: Գոհ էի ստացած տեղեկութիւններէս, բայց խիստ մտահոգ՝ համատարած ձերբակալութիւններուն պատկերին ընդառաջ:

Գամիշլի վերադարձես ետք ներկայացայ հաւատարիմ մեր երկու բժիշկներուն եւ անոնց զեկուցեցի քաղած տեղեկութիւններս՝ եղած դէպքերուն շուրջ:

Յաջորդ օրը երեկոյեան բժիշկները ազգայիններէն կազմուած պատգամաւորութիւն մը գլխաւորելով՝ այցելեցին Գաղտնի Սպասարկութեան պետին գրասենեակը, անոր ներկայացնելով գաղութահայութեան մտավախութիւններն ու ծանր հոգեվիճակը: Գրասենեակի պետը փարատելու համար ազգայիններու մտահոգութիւնները, ըսաւ անոնց, «Տրամադրութեանս տակ ունիմ անուններու շարք մը եւ զանոնք ձերբակալելու պարտականութիւնը, սակայն ձեր այս այցելութենէն ետք, պիտի դադրեցուն ձերբակալութիւնները: Յարգանք ունինք հայ համայնքին նկատմամբ, բայց պարտականութիւն ունեինք ձերբակալելու ձեր համայնքէն ներս գործող կարգ մը յանցապարտներ: Ուրախ եմ ձեր այցելութեան համար»:

Տրուած խոստումը յարգուեցաւ: Ժամանակի մը համար դադրեցան հետապնդումները:

Երկրի չորս նահանգներէն ձերբակա-


ԳԱՆՁԱՍԱՐ

լուած ընկերները մեկտեղուած էին մայրաքաղաքի գինուորական բանտը՝ Մեզզե եւ գինուորական դատախազին կողմէ տեղի կ'ունենային նախաքննական հարցաքննութիւնները, որոնք երկար տեւեցին, մինչեւ Փետրուար 1962 թուականը:

Մեր մտքերն ու նայուածքները կեդրոնացած էին դէպի մայրաքաղաք՝ լուրերու փշրանքներ սպասելով:

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆ ՈՒ ԱՎԱՆՆԵՐԸ

Համեմատաբար խաղաղած էր տազնապալի մթնոլորտը: Ակումբի ամառնային տանիքը եռուզեռի մէջ էր: Երաժշտութիւն կը հրնչէր, ոչ այնքան ուրախութիւն սփռելու նպատակով, այլ հասարակութիւնը յուսադրելու, անոնց վախի զգացումը մեղմացնելու, ցոյց տալու, թէ ամէն բան վերջացած է եւ գաղութը վերաշխուժանալու իր նոր փուլը կը թե-



ւակոխէ: Գալիքի հանդէպ հաւատք ներշնչելու միջոցներ կը կիրարկուէին: Երեկոյեան ինծի հանդիպեցաւ ընկեր Մ. Պետրոսեան (եղբայրը վարժարանի տնօրէնին) եւ բացայայտ տազնապով հաղորդեց.

- Եղբայրս մայրաքաղաք փոխադրուելու պահուն գաղտնօրէն իմացուց ինծի, թէ դպրոցի պատուհանէ մը ներս թաղուած կը մնան ականներ եւ հարկ է զանոնք անհետացնել:

- Ուրիշը տեղեա՞կ է այս գաղտնիքէն:

- Այո՛, Տաճատ սրբազանն ու քանի մը թաղականներ:

- Ո՞ր թաղուած են այդ ականները, - հարցուցի:

- Ես չեմ գիտեր, միայն տնտես Առաքելը տեղեակ է:

- Լաւ, բան մը կ'ընենք, - ըսի Պետրոսեանին ու բաժնուեցանք:

Սրբազանն ու հարցին տեղեակ ազգայիւնները համակուած էին արդար վախով:

Ուրբաթ օր նոյն ընկերը դարձեալ հանդիպեցաւ ինծի՝ հարցական նայուածքով ու մտահոգ: Ես յայտնեցի անոր, թէ ամէն ինչ վերջացած է, դպրոցը մաքրուած է ականներէն: Ան անհոգ բաժնուեցաւ ինձմէ:

Անկեղծօրէն ես տակաւին ոչինչ ըրած էի: Այդ ձեւով կրցայ միայն կապս խզել անորմէ եւ միջոց ստեղծել չափով մը խաղաղեցնելու Առաջնորդարանի մթնոլորտը:

Կիրակի երեկոյեան քովս կանչեցի տնտես Առաքելը եւ միասին, զգոյշ դպրոց մտանք:

- Ամմօ Առաքել, ես քեզի բան մը պիտի հարցնեմ եւ դուն պիտի երդնուս, որ գաղտնի պիտի մնայ մեր միջեւ:

- Չաւակներովս կ'երդնում, պարոն:

- Ո՞ր թաղուած են տինամիթները:

Առաքելը նախ շփոթած՝ ապա ինքնավստահ նշան ըրաւ, որ իրեն հետեւիմ: Կանգ առիւք դասարանի մը ներքին այն պատուհանին առջեւ, ուր թաղուած էին տինամիթները: Առաքելին բերած մուրճով, հերթափոխութեամբ սկսանք հարուածել պէթոնապատ պատուհանը: Միեւնոյն հերթականութեամբ նաեւ կը հսկէիւք փողոցի անցուդարձին, ուրկէ կ'անցնէին զբօսասերներ իրենց կիրակնօրեայ զգեստներով:

Շուրջ կէս ժամուան աշխատանքէն ետք, մեր դիմաց բացուեցաւ խոռոչ մը, ուրկէ դուրս բերիւք մեծաքանակ ականները: Ապա խոռոչը խնամքով լեցնելէ ետք՝ Առաքելը պէթոնի շաղախով ծեփեց պատը՝ պահանջուած բծախնդրութեամբ: Հիմա մեր սրտերուն տրոփումները դարձած էին բնականոն: Երբ մութը կոխեց, դուրս ելանք դպրոցէն՝ անհետացնելու մեր «կողոպուտը»:

ՓԱԽՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՋ ՄԸ ՀԵՏ

Ձերբակալութիւններուն ծանօթ տազնապի եօթնօրեքը հասած էր իր աւարտին: Համեմատաբար խաղաղած էր մթնոլորտը: Կեսօրին մօտս եկաւ ոչ-կուսակցական յանդուգն երիտասարդ մը եւ հաղորդեց ինծի.

- Ձեր ընկերներէն Յ. Թաթարեանը վեց օր է ի վեր թաքնուած է մեր տունը: Մեր թաղէն անդադար կ'երթեւեկեն պետական ինքնաշաժներ: Մտավախութիւն ունինք որ կրնայ անակնկալ ձերբակալուիլ:

Ան խնդրեց, որ զինք հեռացնենք իրենց թաղամասէն:

Չաւենի ընկերակցութեամբ հանդիպեցայ անոր: Փորձեցի համոզել զինք, որ իմ ընկերակցութեամբ Հայլէպ փոխադրուի եւ ապա հոնկէ Լիբանան: Չգացի իր դժկամութիւնը: Ան փափաք յայտնեց, որ զինք փոխադրեմ ընկեր Կ. Ղազարեանին տունը: Ընդառաջելով իր փափաքին, անմիջապէս հանդիպեցայ Ղազարեանին եւ անոր յայտնեցի Յ. Թաթարեանի փափաքը: Ղազարեան անվարան ըսաւ ինծի.

- Հակառակ որ ես ու Թաթարեանը համախոհներ չենք եղած, բայց քանի որ ինք կը փափաքի, ես եղբօր մը հարազատութեամբ պատրաստ եմ զինք ընդունելու:

Ահա թէ ինչպէ՛ս արտաքին վտանգը աւելիով կ'եղբայրացներ նոյնիսկ ոչ-համախոհ գաղափարի ընկերները:

Թաթարեան երկու շաբթուան ընթացքին յաջորդաբար քանի մը տուն փոխադրուելով՝ վերջին երկու օրերուն ընկեր Պ. Մարտիրոսեանի տունը ապաստանած էր: Վերջին օրը վճռական յայտնեցի իրեն.

- Ինծի լսէ՛, ընկե՛ր Թաթարեան, եթէ չես ուզեր գառնուկի պէս ձերբակալուիլ, պետք է քեզ քաղաքէն հեռացնենք:

Ան ընդունեց Հայլէպ փոխադրուելու առաջարկս: Իրմէ բաժնուելէս ետք անմիջապէս հանդիպեցայ ընկեր Կ. Ղազարեանին եւ անոր պարզեցի Թաթարեանը Հայլէպ փոխադրելու ծրագիրը: Ղազարեան առանց տատամսելու, մեկնեցաւ իր մէկ ընկերոջ ինքնաշարժը ապահովելու, ես իմ կարգիս հանդիպելով Թաթարեանին յայտնեցի, որ այդ գիշեր իր հիւրընկալ տնեցիներէն գաղտնի եւ ծպտուած՝ ժամը 12:00-ին մեզի սպասէ քաղաքին ծայրամասը, սպանդանոցի ճամբուն վրայ:

Ճշդուած ժամանակին՝ Ղազարեանի ընկերակցութեամբ՝ Թաթարեանի քովն էինք արդէն: Երեքով դէպի Հասիչէ ուղղուեցանք, գիւղերը իրարու կապող հողէ ճամբաներէն, Զաուքապ լեռան ճամբով Հասիչէ մտանք: Ժամանակի մը համար Ղազարեանին ծանօթ հայ ընտանիքի մը մօտ հիւրասիրուեցանք: Երբ ճամբորդութեան անհրաժեշտ պատրաստութիւնները աւարտեցան, յայտնեցի Ղազարեանին.

- Վաղը երեկոյեան ժամը 6:00-ին աշխատանոցդ՝ հեռաձայնիդ կը սպասեմ: Երբ ապահով տեղ հասնիք ինծի հաղորդէ, որ «ռատիաթոր»ները ապահով տեղ հասան:

Ընկեր Ղազարեան արհեստով ինքնաշարժներու «ռատիաթոր»ներու ծանօթ վարպետ էր:

Երկու ընկերները՝ նոյն ինքնաշարժով Հայլէպ մեկնեցան, իսկ ես բռնեցի տուն դարձի ճամբան:

Յաջորդ օրը, պայմանաւորուած ժամուն Ղազարեանը հեռաձայնեց, որ «ռատիաթոր»ները ապահով տեղ հասած են:

Հոգեկան խաղաղութիւնը պատեց ներաշխարհս:

ՆՈՐ ՁԵՐԲԱՎԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Տագնապալի օրեր իրարու կը յաջորդէին, հայկական եւ օտար մամուլը կը շարունակէր լայնօրէն անդրադառնալ դէպքերուն: Եւ այսպէս՝ օրեր շարունակ:

Օգոստոսի առաջին օրերն էին: Երեկոյ մը առանձնութեանս մէջ մտամոլոր, գաւաթ մը օդիի մտերմութիւնը կը վայլէի: Այդ օրերուն՝ ծիւելն ու խմելը հրամայական պահանջք դարձած էին իմ անհանդարտ առօրեայիս: Մենութեանս մէջ անէացած՝ Լոնտոնի ձայնասփիւռի օրուան լուրերը կ'ունկնդրէի: Յանկարծ լուր մը տագնապեցուց զիս:

- Դաշնակցական հայկական կուսակցութեան ղեկավար մէկ անդամը՝ Ժոզէֆ Տեմիրճեան, որ հանգստեան կոչուած երկաստղանի սպայ մըն է եւ ամիս մը առաջ քաղաքական ապաստանեալի կարգավիճակով Իրաք կը գտնուէր, Իրաքի իշխանութիւններու կողմէն յանձնուեցաւ սուրիական պետութեան:

Լուրը ցնցիչ էր իր տարողութեամբ՝ այն իմաստով, որ Տեմիրճեանի Սուրիոյ յանձնուիլը մեզ պիտի առաջնորդէր դէպի անբաղձալի նոր հորիզոններ:

Անմիջապէս քաղաք ուղղուելով՝ կարգ մը ընկերներու իմացուցի Լոնտոնի ռատիոհաղորդումը Տեմիրճեանի կապակցութեամբ եւ զգուշաւորութիւն թելադրեցի անոց:

Յաջորդ օրը՝ երեկոյեան, երբ կ'անցնէի հայկական թաղի կամուրջէն, մօտէս դանդաղօրէն կ'անցնէր ընկեր Ա. Հեքիմեանէն գրաւուած կարմիր ինքնաշարժը, որուն մէջ էին հայ համայնքի մուխթար Սամօն՝ երկու գաղտնի ոստիկաններուն հետ: Մուխթարը զիս տեսնելով՝ առիթը գտաւ գաղտագողի աչքով-յօնքով ազդանշան մը տալու, ինչ որ մտքիս մէջ անմիջապէս ստացաւ հետեւեալ իմաստը. «գգոյշ եղէ՛ք, ձերբակալութիւնները սկսած են»:

Նախագագացումիս թելադրութեամբ համոզուեցայ, որ Իրաքէն բերուած ՏԵՄԻՐԾԵԱՆԻ առաջին հանգրուանը Գամիշլի եղած պիտի ըլլայ: Զապա ինչո՞ւ այս նոր հետախուզութիւնը:

Ուշ գիշերին տուն վերադարձայ, անխուսափելի ձերբակալութեան կասկածը սրտիս մէջ: Կրնայի այդ գիշեր տուն չվերադառնալ, բայց ո՞ր երթայի եւ ի՞նչ ընելու համար: Տուն վերադարձայ՝ ոչ այնքան երիտասադական իմ անվախութեան կամ յանդգնութեան ապահինելով, որքան այն ինքնահամոզումով, որ կուսակցական այս աննախընթաց փորձաքարի ծիրէն ներս չէի ունեցած պատասխանատու դերակատարութիւն եւ ուստի՝ չունէի ծանր յանցագործութիւն: Թերեւս թեթեւ յանցանքի մը մեղանշումով բանտարկուելու հեռանկարը չէր սարսափեցներ զիս:

Ուշ գիշերին, որքան կը յիշեմ շուրջ ժամը երկուքին, մեր դուռը զարնուեցաւ: Եղբայրս քովի սենեակէն ելլելով բացաւ դուռը: Անվտանգութեան գրասենեակի ոստիկանութիւնն էր: Գաղտնի սպասարկութեան սպան եղբայրս կը հարցուփորձէր՝ իմ մասին: Չգացի որ եղբայրս կը տատամսի՝ անելի մատուցելով: Անմիջապէս դուրս ելայ ննջարանէն եւ յարգալի բարեւէ մը ետք տուի անուս:

– Կը ներք, որ ձեզ անհանգստացուցինք, ըսաւ սպան:

– Տասնհինգ վայրկեանուան համար մեզի պիտի ընկերանաք: Ընկերացայ իրենց: Նոյն եւ յաջորդ գիշերները վայելեցի գաղտնի ոստիկանութեան հիւրընկալութիւնը, յանցապարտներու յատուկ մենախուցէ մը ներս, առանց նախաքննութեան: Մայրաքաղաքի գիւղութեան դատախազութեան պահանջքով ձերբակալուած էի, երրորդ օրը երեկոյեան դուրս բերուեցայ մենախուցէն ու կծկուեցայ սպասման սրահի չոր նստարանի մը վրայ: Զիչ ետք ուրիշ մենախուցերէ քովս բերին ինծի ծանօթ երկու երեց ընկեր՝ Յ. Կարապետեանն ու Խ. Խաչատուրեանը: Անխօս եւ բանտարկեալի մը նկատմամբ յատուկ կոպտութեամբ, մեր ձեռքերուն անցուցին երկաթ կալանքներ, ապա գաղտնի ոստիկանի մը ընկերակցութեամբ դուրս տարուեցանք եւ սպասեցինք փողոցի մայթին վրայ՝ գառնուկի մը համակերպութեամբ:

Աւելի ուշ, մեր դիմաց կեցաւ հնաբոյր մարդատար ինքնաշարժ մը՝ ճամբորդներով լի: Ոստիկանի ընկերակցութեամբ բարձրա-

ցանք ու կողմնակի աթոռներուն վրայ գրաւեցինք մեր տեղերը:

Տխուր իրականութիւն, Զալեպի ճամբով մայրաքաղաք կը տարուէինք:

Յաջորդ առաւօտ, չեմ յիշեր ո՞ր ժամուն, արդէն ընդհանուր դատախազի կեդրոնի սպասման սրահն էինք, քնատ, յոգնած ու անօթի զգացումներ, որոնց վրայ կու գար աւելնալու վախի զգացումն ու անկէ բխած դասալքութիւնը:

Պահ մը ետք, քակեցին մեր ուռած եւ կիսով կապուտցած ձեռքերուն երկաթեայ կալանքները: Սպասման սրահն էին նաեւ մեր ղեկավար ընկերներէն՝ Լուսեր Մասպանաճեան, Տոքթ. Գասպար Գասպարեան, Տոքթ. Յակոբ Գասապեան եւ ուրիշներ, ըստ երեւոյթին՝ նոր ձերբակալուած:

Արձակելէ ետք մեր կալանքները, հերթով վեր հանեցին մեզ՝ նախնական հարցաքննութեան համար:

Զիմա դատախազի դիմացն էի՝ վեհերոտ ու յանցագործի երեւոյթով: Ինքնութիւնս հաստատող կարգ մը հարցումներէն ետք գիւղութեան դատախազ՝ Եասին Առաքիլը հարցուց ինքնավստահ շեշտով մը.

– Ի՞նչ պայմաններու բերումով ծանօթացած ես ՏԵՄԻՐԾԵԱՆԻՆ եւ ինչպէ՞ս զինք Իրաք փախցուցիր:

– Ես ՏԵՄԻՐԾԵԱՆԸ ճանչցած եմ ժամանակէ մը ի վեր, երբ ան նպարավաճառի խանութ մը ունէր հայկական ակումբին մօտ: Յաճախ անկէ գնումներ կ'ընէինք: Ան լուրջ եւ ընկերային մարդ մըն էր եւ յարգուած՝ իր լայն շրջանակէն: Օր մը գիւղ կ'երթայի, մեր ցորենի փոքր արտը հնձելու, ան խնդրեց, որ ընկերանայ մեզի, մօտակայ գիւղէն իր խանութին յատուկ՝ հաւ, հաւկիթ եւ մածուն գնելու, պիտի վերադառնար իր միջոցներով: Սիրով ընդունեցինք ու ճամբայ ելանք: Մեր գիւղը չհասած՝ շնորհակալութիւն յայտնելով իջաւ ինքնաշարժէն եւ ուղղուեցաւ ճամբու եզրին գտնուող գիւղը:

– Վարորդին անունը Անդրանիկ էր, հարցուց ան:

– Վարորդին անունը չեմ յիշեր: Ինք եւ հնձիչ մեքենայի (փաթոզ) միւս բանուորները Ռաս ու Այնի շրջանէն եկած էին, մեր շրջանին հունձքը քաղելու:

– Ուրի՞շ:

– Ուրիշ ոչինչ գիտեմ:

– Դուն գիտե՞ս, թէ ՏԵՄԻՐԾԵԱՆԸ ուրկէ բե-

րած ենք, հարցուց դատախազը փոթորկոտ ձայնով. Չինք բերած ենք Իսրայելէն, Թէլ Աւիւէն:

- Բայց հետը չէի՛, բացականչեցի գրեթէ պոռթկալով, ոչ այնքան յանդգնութենէ մղուած, որքան զիս պատած յանկարծահաս սարսափի մը զգացումէն:

Կարճ տեւեց նախաքննութիւնը: Դատախազը ձեռքի արհամարհոտ շարժումով մը զիս դուրս հանեց սենեակէն: Դրան ետեւ ինծի սպասող ոստիկանը անյարգալիք վերաբերմունքով եւ հրմշտկելով, զիս տարաւ երկրորդ յարկի մենախուցը եւ ներս հրելով՝ արմկոտ շարժումով դուռը փակեց ետեւս:

Նոյն մենախուցին մէջ կար երիտասարդ մը: Ծանօթացանք Մաճըտին հետ: Նեղութիւնը արագօրէն կը մտերմացնէ անծանօթները: Ան եգիպտացի համալսարանական ուսանող էր եւ ամիսէ մը ի վեր կը գտնուէր նոյն մենախուցին մէջ: Պատմեց իր պատմութիւնը, ես ալ իմս: Հաւատացի՞նք իրարու, կը մնայ կասկածելի:

Բանտակիցս բժախնդիր օրինապահութեամբ կ'աղօթէր:

- Դուն ալ աղօթե՛, ըսաւ ինծի, աղօթքը կը խաղաղեցնէ մարդու հոգին:

- Չեմ աղօթեր, պատասխանեցի, որովհետեւ ընդհանրապէս աղօթող մը չեմ եղած ու եթէ հիմա աղօթեմ, Աստուած պիտի չըսե՞, - «Կեղծաւոր, նեղութեան մէջ զիս յիշեցիր»:

Խնդացինք մենախուցի յատուկ զսպուածութեամբ:

Երրորդ օրը դուրս բերուեցայ մենախցիկէն ու փոխադրուեցայ առաջին յարկի բազմամարդ եւ ընդարձակ բանտասրահը: Հոն էին ինծի ծանօթ բոլոր բանտարկեալ ընկերները: Խոր շունչ մը քաշեցի գոհունակ:

- Հիմա բացուած կը յայտարարուի շրջանային ժողովը, կատակեց ընկերներէն մէկը եւ խնդացինք համախումբ:

Տեմբրճեանը կը մնար բանտախուցի բանտարկեալ եւ դուրս կը բերուէր միայն զբօսանքին: Երբ բանտարկեալներու զբօսանքի զանգը հնչեց, բոլորս բանտի շրջափակը ելանք: Հոն էր եւ Տեմբրճեանը: Սօսեցանք իրարու:

- Իմ խիղճս անհանգիստ է միայն քեզի համար, ըսաւ ան զգուշաւոր եւ աւելցուց, - Երբ զիս Իրաքէն բերել տուին, ունեցայ այն ինքնահամոզումը, որ դուրսը կուսակցական ընկեր չէ մնացած, ուստի ի՞նչ օգուտ ոչխարի

պէս ծեծուիլը: Չիս շատ չարչարեցին, ըսաւ ան:

- Չգացումներս չեն փոխուած քեզի հանդէպ, պատասխանեցի անկեղծ մտերմութեամբ:

ԲԱՆՏԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐԷՆ.

Ժամանակը կը սահէր ու մենք կը մնայինք բանտարկեալ: Հոն էին հայահոծ չորս շրջաններէն բերուած դաշնակցական ընկերներ՝ ղեկավար ու ինծի նման պարզ շարքայիներ: Բանտէն ներս ընկերներուն մեծմասնութեան կորովը կը մնար բարձր: Ղեկավար կարգ մը ընկերներուն մօտ բացայայտ էր յուսալքութիւնը: Մեզի հետ էին «Քաումի» հակապետական կուսակցութեան ղեկավար անդամները, իրաւաբան, բժիշկ եւ քաղաքագետ: Այլ բանտասրահի մը մէջ կային Համայնավար կուսակցութեան ղեկավար տարրեր: Այդ երիտասարդ տարիքիս կը զգայի, որ մեր եւ մեր ղեկավարութեան մօտ նուազ էր քաղաքական իմացականութիւնն ու հոտառութիւնը, բայց զօրաւոր՝ կուսակցական հաւատքն ու հայրենասիրական ոգին:

Բանտի կեանքը խաղաղ էր ու միապաղաղ, տրուած սնունդը գոհացուցիչ: Հսկիչ ոստիկանները խիստ էին եւ անպատկառութեան բոլոր սահմանները նուաճող:

Ուրբաթ օրերը իսլամ բանտարկեալներու հաւաքական աղօթքի օրն էր, իսկ Կիրակին՝ քրիստոնեայ բանտարկեալներուն: Մեզի այցելող զոյգ կրօններու կրօնաւորները, հաւաքական աղօթքէն ետք, բարոյախօսական քարոզ մը կու տային բանտարկեալներուն: Յատկանշական էր, որ աղօթքի կը մասնակցէին նոյնիսկ անոնք, որոնք աղօթելու սովորութիւն չունէին: Անոնք բացօթեայ ազատ շունչ քաշելու առիթը կ'օգտագործէին: Աղօթավայրը բանտի շրջափակն էր:

Ամենամտահոգիչը պարտադրական լոգանքի օրն էր: Նախիրի նման կ'առաջնորդուէինք բաղնիքի խուցերէն ներս: Պէտք էր աճապարել: Կարճ ժամանակ յատկացուած էր «լոգանք»ին: Երբեմն բանտարկեալը բարոյալքելու յատուկ մտադրութեամբ՝ յանկարծ տաք ջուրի հոսանքը կը կտրուէր: Երբ լոգանքի արարտին զանգը կը հնչէր, շատեր դուրս կ'ելլէին անմասն մնալով լոգանքէն:

Բանտասրահները ունէին պէթոնաշէն միազանգուած պատուանդաններ, որոնց վրայ, քով-քովի կը քնանային բանտարկեալները:

Իրաքանչիւրին՝ իբրեւ անկողին տրուած էր բարձ մը եւ բամպակեայ չորս ծածկոց:

Ամենածիծաղելին արտաքնոցի սահմանուած օրինապահութիւնն էր: Բանտարահը ուներ ներքին մեծ արտաքնոց, որուն իբրեւ դուռ կը ծառայէր հաստ կարպետ մը: Հոն այցելողը նախքան կարպետը վերցնելը, պարտաւոր էր երկու անգամ ձեռքով թմբկահարել պատի կողին, իսկ ներսինը (եթէ կար), իբրեւ պատասխան՝ պարտաւոր էր երկու անգամ հազալու «ըհը՛, ըհը»:

Անտանելին դատախազութեան մեծաւորներու գիշերային յաճախակի այցելութիւնն էր: Ուշ գիշերին բանտարահի դուռը մեծաշնչիկ կը բացուէր ու ներս կը մտնէր բարձրաստիճան սպան, ընկերակցութեամբ քարտուղարին եւ հսկիչ ոստիկանին: Անչափելի աղմկարարութեամբ եւ հրմշտուքով կ'արթննէին մեզ: Քանի մը վայրկեանէն ոտքի վրայ էինք արդէն, զինուորական կարգապահութեամբ շարուած, անխօս ու անշաժ: Սպան մէկ-մէկ կը հարցնէր իրաքանչիւրին անունը եւ ո՞ր կուսակցութեան պատկանիլը, ապա կը կատարէր խիստ թելադրութիւններ, որոնց վարժ էին այլեւս մեր ականջները: Այս արարողութիւնը կը ծառայէր բանտարկեալին անհատականութիւնը նսեմացնելու եւ գայն բարոյալքելու նպատակին:

Օր մը հսկիչ ոստիկանը, իրեն յատուկ անբարտաւանութեամբ, ծանրօրէն պախարակեց ընկեր Ս. Տանայեանը, հայերէն խօսած ըլլալուն համար: Ոստիկանի մեկնելէն ետք, ընկեր Տանայեանը հոգեկան բեկում ունեցաւ, ջղագրգիռ վիճակով մազերը քաշեց, բռունցքներով գլուխը հարուածեց, բացականչելով՝ «Այսքա՛ն պիտի ստորանայիսը, որ մեր լեզուով ալ չխօսիսը»: Յուզուած էինք բոլորս:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Սեպտեմբերի կիսուն ուշ գիշերին, երբ բանտի վրայ իջած էր մեռելային լռութիւնը, արտասովոր եռուզեռ մը զգացիսք բանտէն ներս: Միջանցքներուն բացուող մեր բանտարահներուն դռները մէկ-մէկ կը բացուէին: Ներս մտնող հսկիչ ոստիկանները տագնապալի աճապարանքով իրաքանչիւր բանտարկեալէն բամպակէ մեկական ծածկոց եւ յաւելեալ բարձեր կը հաւաքէին: Ի՞նչ պատահած էր, հարց կու տայինք իրարու եւ հետաքրքրախառն անհամբերութեամբ կը հետեւէինք ոստիկաններու հեւքոտ շարժումներ:

րուն: Ձայնասփիւռի եւ մամուլի մուտքը արգիլուած էր ու մենք անհաղորդ էինք արտաքին աշխարհի անցուդարձէն:

Եռուզեռը կը շարունակուէր ու մենք անքուն կը սպասէինք այս տեսնողտ հանդիսութեան վախճանին: Չէ՞ որ ծայրայեղ հետաքրքրութիւնը կրնայ բացայայտել ամենախորունկ գաղտնիքները: Լուսաբացին շուկները ծաւալեցան խուցէ խուց, մեծաթիւ նոր ձերբակալուածներ բերին, բայց ինչո՞ւ, մեզի համար կը մնար անորոշ:

Աւելի ուշ, բոլորին համար յստակացաւ ուրախալի եղելութիւնը: Սուրիան անջատուած էր Եգիպտոսի հետ միացեալ միութենէ եւ մեզի բախտակից նոր բանտարկեալները քաղաքական այդ փոփոխութեան եւ անջատման ընդդիմադիր տարրերն էին:

Քաղաքական այս յուսալի բարեշրջումը մեզի պիտի բերէր բարենպաստ պայմաններ՝ դատական օրինական եւ իրաւական գործընթաց, անոր կը հաւատայինք բոլորս:

Նոր ձերբակալուածներուն մէջ էին նախորդ վարչակարգի ղեկավարներ, որոնց կարգին՝ Անվտանգութեան Գրասենեակի ընդհանուր պետ՝ Ապտուլ Համիտ Սարրաճ, որ եղած էր ՀՅԴ-ն հաշուեյարդարի եկթարկող գլխաւոր դէմքը: Օրեր ետք մեր ընկերներէն ոմանք տեսած էին Սարրաճը, որ մեզի բախտակից բանտարկեալներուն հետ կ'առաջնորդուէր դէպի բաղնիք:

Քաղաքական այս փոփոխութենէն ետք, զինուորական դատախազութեան ներկայացուցիչ փրկագինով ազատ արձակուելու մեր խնդրագիրները: Առաջին անթիւ ինծի հետ ազատ արձակուեցաւ մեր երեց ընկերներէն Խ. Խաչատուրեան, 150 սուրիական ոսկիի փրկագինով:

Որքան կը յիշեմ Երեմիա մարգարէն է որ ըսած է՝ «Ես այն մարդը եղայ, որ տառապանքը տեսաւ»: Իսկ ես իմ կարգիս կրնամ ըսել, թէ ես այն բախտաւոր դաշնակցականը եղայ, որ ուշ բանտ առաջնորդուեցաւ եւ կանուխ դուրս ելաւ անկէ:

Այո՛, բանտէն արձակուեցայ միայն ֆիզիքապէս, բայց սրտի ու հոգեկան կապերով կապուած մնացի ընկերներուս հետ: Աւելի ուշ՝ ընկերներուն մեծ մասը ազատ արձակուեցաւ փրկագինով:

Ահա անցեալի տխուր յիշատակներ, ներկայի լաւ օրերու յիշողութեամբ պայծառացած ու անմոռանալի:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑՆԵՐ

«ԳԱՆՁԱՍԱՐ»Ի «ԿԿՈՒ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՆԵՐՔԻՐԸ ԴԱՍՏԻԱՐԱԿԻՉ ԴԵՐ ՈՒՆԻ

Հարցազրույցը վարեց Սեանայ Հալլաճեան

«Կկու»ն սուրիահայ մանուկներուն եւ պատանիներուն սիրելի բարեկամն է: Ան միշտ ներկայ է իրենց առօրեային մէջ, մերթ թերթին տպագիր տարբերակով, մերթ՝ առցանց, կը յուշէ ազգային տօներն ու պատմական կարեւոր դէպքերն ու դէմքերը, խաղերով կը հարստացնէ փոքրիկներուն յիշողութիւնն ու գիտելիքները, գիտական նորութիւններուն մասին տեղեկութիւններ կը հրամցնէ եւ հաճելի հեքիաթներ կը պատմէ:

Մամուլի տարուան առիթով «Գանձասար» Բացառիկի նախորդ համարի էջերուն մէջ հարցազրույց զետեղուած էր թերթիս

ղենք «Կկու»ի խմբագիր Ռիթա Կաղեան-Տիքալիքեանին:

«Գանձասար».- Ո՞ր թուականին հիմնուեցաւ «Գանձասար»ի «Կկու» մանկապատանեկան ներդիրը եւ ի՞նչ նպատակ կը հետապնդէր:

Ռիթա Կաղեան.- «Գանձասար»ը որպէս Բերիոյ Հայոց Թեմի շաբաթական հեղթականութեամբ հրատարակուող պաշտօնաթերթ, իր մէջ ներառած է բոլոր մարզերէն բաժիններ, ինչպէս քաղաքական, գաղութային, Սուրիոյ հայ համայնքներու լուրեր, մարզական, կնոջական, եւ մանկապատանեկան նկատի առած,



նախկին խմբագիրներուն հետ, լոյսին բերելու հիմնադրութեան օրերու մթնոլորտն ու թերթին հետագայ զարգացումներու տարբեր փուլերը:

Այս համարով լուսարձակի տակ կ'առնենք «Գանձասար»ի մանկապատանեկան ներդիրը՝ «Կկու»ն, եւ քանի մը հարցում կ'ուղ-

որ երեխաները կը հետեւին միայն դպրոցի դասաւանդուած գիրքերուն, որոնց պարտաւորութեան մօտեցում ունին: Հետեւաբար հարկ էր, որ հայ աշակերտը ունենար էջ մը, զոր որպէս ժամանց ընթերցէր, գիտելիքներ ամբարներ, իր հայերէնը բարելաւէր, ազգային պատմութեան ծանօթանար եւ մամուլին

մօտ զգար: Անպայման պետք էր աշակերտին հետաքրքրությունը գրաւող բաժին մը ըլլար:

«Գ.» – Տիկ. Ռիթա, ո՞ր թուականէն սկսեալ ստանձնած էք «Կլու»ի խմբագրութիւնը եւ մինչեւ օրս ի՞նչ նորութիւններ բերիք մանկապատանեկան ներդիրին բովանդակութեան եւ մատուցման իմաստներով:

Ռ. Կ. – 1997-էն ստանձնած եմ «Կլու» մանկապատանեկան ներդիրի խմբագրութիւնը: Օրուան խմբագրող արև. Խաճակ Մկրտիչեանն էր: Գործի առաջարկը ինծի համար անակրնկալ էր, նկատի առած, որ ես դիմում չէի կատարած նախօրօք: Նախորդ «Կլու»ի խմբագիր տիկ. Այտա Միլասեանի ճամբորդութեան պատճառով հրաւիրուեցայ գործի: Երկմտանքով ընդունեցի առաջարկը, պահ մը մտավախութիւն ունեցայ, թէ պիտի կրնամ այս պատասխանատուութիւնը շալկել, սակայն խմբագիրին քաջալերական խօսքերը ինծի ուժ տուին ու սկսայ աշխատանքի:

Խմբագիրին օրուան մտահոգութիւնը այն էր, որ «Կլու»ն չպարունակէ պարզապէս փոքրիկներուն մանկական ներաշխարհը թափանցող գրութիւններ ու ժամանց, այլ ըլլայ անոնց դպրոցական դասագիրքերը ամբողջացնող օղակ մը, անդրադառնայ ազգային տօներու եւ հայոց պատմութեան դէպքերու, այսինքն՝ մանկական մակարդակէն աստիճան մը բարձրանալով ունենայ մանկապատանեկան բնոյթ: Հակառակ որ, երբ կլու բառը կը լսենք, զուտ մանկական ըլլալը կ'ենթադրենք, սակայն այդպէս չէ իրականութիւնը, անոր թիւերուն մէջ տեղադրուած նիւթերը կը հետաքրքրեն մեծերն ալ: Մանկականէն մանկապատանեկանի վերածելը նորութիւն մըն էր, այս ուղին բռնեցինք ու յաջողեցանք:

«Գ.» – Նիւթերու ընտրութիւնը ի՞նչի հիման վրայ կը կատարէք:

Ռ. Կ. – Ազգային, կրօնական տօներ, որոնց անկարելի է չանդրադառնալ օրին ու բացատրութիւն չտալ, ընդհանուր զարգացման գիտելիքներ, որոնց ներկայացման ձեւը կը փոխուի մերթ ընդ մերթ, երբեմն «դու հարցուր, «Կլու»ն թող պատասխանէ», երբեմն՝ հարց-պատասխանի եւ այլ ձեւերով: Ունինք «անհաւատալի, բայց իրաւ» վերնագրով, բաժին մը, որ շատ կը հետաքրքրէ պատիկները: Այս բաժինին մէջ կ'անդրադառնանք

աշխարհի գանազան նորութիւններու, լուրերու, որոնք անահաւատալի են, բայց եւ պատահած են: «պատմեմ, լսէ» բաժինին մէջ պատմուածքի տիպարները կ'ըլլան իսկական, մեր առօրեայէն առնուած, անոր մէջ կ'ըլլայ դաստիարակիչ նամակ մը, մատուցելով երեւոյթ մը: Բաժին մըն ալ ունինք կենդանական աշխարհի մասին, որ շատ կը հետաքրքրէ մանուկները: Իրենց համար այդ աշխարհին գաղտնիքները բացայայտելը մեծ ուրախութիւն է: Ունինք հեքիաթներ՝ հայկական կամ համաշխարհային գրականութենէն, երբեմն ալ հայոց պատմութենէն դէպքեր հեքիաթի ձեւով կը ներկայացուին: Երեխաներուն ալ տրամադրուած է բաժին մը, որուն մէջ կը տեղադրուին անոնց գրութիւնները, գծագրութիւնները կամ նոյնիսկ ինքնաշխատութիւնները (օրինակ՝ անոնց քաղած գիտելիքները), որոնք կրնան ուղարկել մեզի իրենց դպրոցին կամ անձնական միջոցներով: Այս բաժինը մեծ դեր ունի աշակերտին ձիրքերը խթանելու իմաստով՝ ըլլայ շարադրական, գծագրական կամ այլ կարողութիւններ: Մեր նիւթերը միշտ կարճ-կարճ կը ներկայացնենք, որպէսզի փոքրիկին զգուելի չթուին: Տեսաբար կը փորձեմ, որ անոնք ըլլան ո՛չ շատ պարզ, ոչ ալ բարդ, որովհետեւ լաւապէս կը հասկնանք փոքրիկին ներաշխարհը, գիտենք որ պզտիկը միայն ընթերցանութեան կարիքը չէ որ ունի, այլ նաեւ խաղերու: Խաղերու եւ հեքիաթներու բաժինները շատ եզակի պարագաներու լոյս չեն տեսներ: Մտային, թուաբանական, բառապաշար զարգացնելու «գըտնել հոմանիշ, հականիշ», դիւրին խաչբառեր, միացնել, գունաւորել եւ այլ ժամանցի խաղերով լեցուն բաժինին մեր փոքրիկ հետեւողը անհամբեր կը սպասէ:

«Կլու»ն ունի նաեւ իր առցանց տարբերակը, որ կ'ըլլայ գունաւոր ու համացանցի վրայ տրամադրելի: Մանուկը կամ ծնողքը կրնան դիւրութեամբ ընթերցել՝ զայն, իսկ եթէ փոքրիկը գրութիւն ունի այդ թիւին մէջ, անելի մեծ հետաքրքրութեամբ կ'ընթերցէ: Ներկայ սերունդը փոխուած է, ոմանք կը նախընտրեն առցանց տարբերակը, սակայն ես կը նախնտրեմ տպագիր թերթը: Հայերէն թերթը պետք է մտնէ ամեն հայ տուն:

«Գ.» – Էջերուն տեսքը, գոյները եւ ձևաւորումը մեծ դեր ունին փոքրիկ ընթերցողին ուշադրութիւնը գրաւելու մէջ: Որո՞նք եղած են

«Կկու»ի գծագրիչները, ձեւաւորողները եւ ինչպէ՛ս կ'ընթանայ աշխատանքը ձեր եւ ձեւաւորողին միջեւ:

Ռ. Կ.- Իմ աշխատանքի 22 տարիներուն ընթացքին հետս աշխատած են զանազան ձեւաւորող-գծագրողներ՝ Վրէժ Քասունի, Ծովակ Պաղտասարեան, Դալար Արուս, Սաղաթէլ Պասիլ, Գաբո Պերպերեան, Յովհաննէս Փամփալեան ու Ներկայիս՝ Ռաֆֆի Քէշիշեան: Անոնցմէ իւրաքանչիւրը իր տեսակին մէջ նորութիւն մը բերած է, բոլորն ալ սիրալոյսով աշխատած են, ու ստիպուած դադրած են գործէն՝ ճամբորդութեան պատճառով:

Գծագրութիւնն ու ձեւաւորումը երբ փոխուին ու միօրինակութենէն դուրս ելլեն, աւելի կը գրաւեն մանուկներն ու պատանիները: Յատկանշական է այն գծագրիչը, որ հեք-

ներ: Տեսաբար նախօրօք պատրաստ կ'ըլլայ մեր մանկապատանեկան էջը, չէ եղած «Գանձասար»ի թիւ մը, որուն հետ չըլլայ «Կկու»ն: Նոյնիսկ պատերազմի շրջանին, երբ 5 տարի ճամբորդ էի, ամիսներ առաջ կ'ուղարկէի թիւերը համացանցի դժուարութեան հետ մէկտեղ: «Կկու»ն շաբաթ մը իսկ չդադրեցաւ հրատարակուելէ:

«Գ.»- Ի՞նչ միջոցներու կը դիմէք ընթերցանութիւնը քաջալերելու եւ փոքրիկներուն համար աւելի հաճելի դարձնելու համար:

Ռ. Կ.- Երբեմն հեքիաթները անաւարտ կը ձգենք, որպէսզի ընթերցողը ինք պրպտե անոր աղբիւրը, կամ իր երեւակայութիւնը շարժէ: Կը կազմակերպենք հարց-պատասխանի մրցումներ, որոնք նոյնպէս կը մղեն պրպտելու,

ԱՌՈՂՋ ԵՆՔ

Յամեղ չի նշանակեր օգտակար

Յաւանաբար ձեզմէ շատերը նոյն իրավիճակի մէջ կը գտնուին. ամէն օր մաման կը ստիպէ կար խմել, հսկիթ, մեղր, պտուղ, բանջարեղէն, մածոն ուտել, բայց երբ ուտել չուզուս. նմանեման կամ շատուս գտնուելու ձեռք չենք:

Ի՞նչ է ամէնօրեայ կենսակարգն ու ինչո՞ւ ան անհրաժեշտ է

Կենսակարգ մեր ամէնօրեայ կատարած գործողութիւններու հերթականութիւնն է, օրինակ բուք, սննդը, մարզանք ընելը, հանգիստը, եւ այլն:

Ոմանք կը գանգատին, թէ ոչինչ կը հասնին ընելու, ոչ կը քնանան, եւ բնականաբար, բաւարար չափով չունը չեն ստեր, ժամանակ չունին նախաճաշելու, ճաշելու կամ ընթրելու եւ հանգստանալու:

Մարդիկ այս կացութեան կը մատնուին, երբ չեն կրնար իրենց ժամանակը ճիշդ ձեռով դասաւորել:

Օրուան կենսակարգին շնորհիւ շատ վնասակար է մեզի համար, որովհետեւ յոգնածութիւնն էւ ջանք խանգարում կ'ունենանք: Դեռք է քնանալը ու պրթնանք նոյն ժամուկ: Թելադրելի է 8-9 ժամ տեղողութեամբ քնանալ:

Բժիշկները խորհուրդ կու տան օրական 3-4 անգամ սնունդ ընդունիլ:

Մնշուշտ օրուան կենսակարգին մէջ անհրաժեշտ է ժամանակ տրամադրել նաեւ մարզանքի եւ հանգիստի:

Յիշեցէ՛ք, որ օրուան կենսակարգին հետեւիլը առողջութեան երաշխիք է:

Ինչո՞ւ պետք է յաճախ լուանք մեր ձեռքերը

Երբ դպրոցէն տուն կը վերադառնաք մաման ամէն օր նոյն խօսքը կը կրկնէ՝ «Ձեռքերդ լուա»:

իաթները իր տիպարներով կը գծէ: Կարելի չէ, որ հայկական հեքիաթի մը տիպարները ներկայացուած չըլլան հայկական տարազներով, շատ ուշադիր կ'ըլլանք որ կերպարը պահէ իր բնոյթը եւ ոչ թէ մեր պատմական տիպարները ներկայացուին օտարազգի կերպարանքով: Վերջին շրջանին կ'աշխատակցիմ Ռաֆֆիին հետ, որ թէ՛ գծագրիչն է, թէ՛ «Կկու»ի ձեւաւորողը: Ան աշխատասեր, նախաձեռնող ու հետեւող է, նոր միտքեր ունի: Մեր կապերը սերտ են ու միշտ կը խորհրդակցիսք՝ աշխատանքին մէջ նորութիւններ մուծելու համար: Իսկ աշխատանքի ընթացքը հետեւեալն է՝ ես 15 օր առաջ գծագրիչին կը դրկեմ՝ գրաշարուած պատրաստ նիւթերը, որոնց հիման վրայ ան կը պատրաստէ յարմար, գրաւիչ ձեւաւորում ու գծագրութիւն-

մէնք հարցումները կը տպենք մեր թիւով, աշակերտներն ալ պատասխանները կ'ուղարկեն խմբագրատուն եւ աւարտին պարգեւատրում տեղի կ'ունենայ: Շրջան մը նոյնպէս մրցոյթ յայտարարեցինք որոշ քանակ մը «Կկու»ի թիւեր հաւաքող ընթերցողներու: Խմբային ընթերցանութեան հաւաք կազմակերպեց ինք: Ն պ ա տ ա կ ու ն է ի ն ք խմբագրատան մէջ մանկականգրադարան մը հիմնել՝ գրական, գիտական աշխարհագրական եւ զանազան թեմաներով գիրքերու, որպէսզի պզտիկը այստեղ գայ կարդայ ու նաեւ իր ընթերցածը փորձէ վերապատմել, համադրել, գրի առնել: Դժբախտաբար այս չիրականացաւ, քաղաքի պայմաններուն, մեր խմբագրատան հեռաւորութեան եւ աշակերտներու ու ծնողներու բազմազբա-

դուրեան պատճառով:

Աշակերտին գրութիւնը «Կկու»ին մէջ հրատարակելով արդէն իսկ քաջալերած կ'ըլլանք զինք, որովհետեւ ինք կը զգայ, թէ ինք ալ կարելիութիւն ունի մանկապատանեկան ներդիրին բաժին մը բերելու եւ կ'ուրախանայ յատկապէս, երբ իր յղած գրութիւնը, զծագրութիւնը իր անունով ու լուսանկարով լոյս տեսնէ:

«Գ.» - Ներկայիս «Կկու»ն ո՞րքանով հետաքրքրութիւն ստեղծած է մանուկներուն մօտ: «Կկու»ն ո՞րքանով կը հասնի իր նպատակին:

Ռ. Կ. - Աշխատանքը առ աւելի իր նպատակին հասցնելու համար մեծ դեր ունին դպրոցներն ու ուսուցչուհիները: Դասապահու ընթացքին կարճ բաժին մը ընթերցելով աշակերտներուն մէջ փափաք կ'արթննայ ընթերցանութեան: Երբ աշակերտներէս կը լսեմ՝ «Օրհորդ, ես պահած եմ «Կկու»ին բոլոր թիւերը ու անոնցմով գրքոյկ կազմած եմ», «Երբ որ «Գանձասար»ը գայ ես անմիջապէս «Կկու»ն կը յափըշտակեմ մէջէն», «Դասախօսութիւն պատրաստելու համար «Կկու» ի թիւերէն կ'օգտուիմ» արտայայտութիւնները, կը նշանակէ, որ իրենք հետաքրքրուած են թերթով, ու մանկապատանեկան էջը կը ծառայէ իրենց որպէս աղբիւր, նկատի առած, որ ամէն տեսակի նիւթ կայ անոր մէջ: Անցեալին «Կկու»ն «Գանձասար»ի էջերուն մաս կը կազմէր, խմբագրութիւնը անջատեց զայն, եւ սկսաւ հրատարակուիլ որպէս ներդիր, որպէսզի փոքրիկը կարենայ ինք իր թերթը առնել, մօտը պահել եւ չստիպուի սպասել ծնողքին թերթի ընթերցանութիւնը ակարտելուն:

Իսկ «Կկու» Բացառիկը յատուկ տեղ ունի մեր փոքրիկ ընթերցողին մօտ, որովհետեւ ան գունաւոր գրքոյկ է, իր նիւթերէն զատ հոն լոյս կը տեսնեն հայկական բոլոր վարժարաններու աշակերտներուն Ամանորի ամիսը կազմող Պապային նամակները: Անթիւ, անհամար նամակներ կը ստանանք Կաղանդին, կարելիութիւն չունինք բոլորը Բացառիկով հրատարակելու եւ աշակերտ մը չնեղացնելու համար Դեկտեմբեր եւ Յունուար ամիսներուն ընթացքին կը տպենք զանոնք «Կկու»ի ընթացիկ թիւերով:

Միութիւններու, ակումբներու մէջ մամուլի ընթերցանութիւնը երբ քաջալերուի, մեր ներդիրն ալ աւելի մեծ թիւով ընթերցողներու կը հասնի:

«Գ.» - Դետաքրքրական դէպք մը պատահած է ձեր աշխատանքի ընթացքին, որմով կ'ուզէք փակել մեր գրոյցը:

Ռ. Կ. - Տազնապին Լաթաքիա մեկնելէս ետք, տեղւոյն Ազգ. Նահատակաց վարժարանը դասաւանդութեանս սկիզբը, երբ ուսուցչուհիին հետ դասարան մտայ, զիս ծանօթացնելով աշակերտներուն հարցուց՝ «Գիտե՞ք ով կ'ըլլայ»: «Այո, օրհորդ, «Կկու» պատրաստողն է», ըսին: Աշակերտներէն մէկը ոգելորուած արձագանգեց՝ «Ամա՛, «Կկու»ին մաման եկեր է մեր քով»: Ուսուցչուհին խնդաց ըսելով՝ «Ինչպէ՞ս թէ «Կկու»ին մաման», աշակետը պատասխանելով ըսաւ, թէ ինչպէս իր մայրը տունը կարկանդակ կը պատրաստէ, նոյնպէս ալ այս մաման «Կկու» կը պատրաստէ: Մանկական անմեղ արտայտութիւն մը, որ չեմ մոռնար:

Հաճելի դէպք մը եւս պատահած է Հալէպի վարժարաններէն մեկուն մէջ դասաւանդած շրջանիս: Վեցերորդ կարգի դասս մամուլի մասին էր: Մէկ օր առաջ տպարան այցելած էինք (տպարան այցելութիւնն ու ակաւնատես ըլլալը, մանաւանդ «Կկու»ի տպագրութեան, շատ կը քաջալերէ թերթին ընթերցումը): Յաջորդ պահը տրամադրած էի մամուլի ընթերցանութեան: «Գանձասար»ի եւ «Կկու»ի զանազան թիւեր բաժնեցի անոնց ու սկսանք բաժիններ ընթերցել անոնցմէ: Մանկապատանեկանը ընթերցած պահուն աշակերտներէն մէկը «Կկու»ին էջին վարը անունս կարդալով ըսաւ՝ «Օրհորդ, ձեր անունը հոս տպուած է», ուրիշ մը պատասխանեց՝ «Հապա, չե՞ս գիտեր, «Կկու»ն մեր օրհորդը կը պատրաստէ», «Օրհորդ, դուք ամէն օր դպրոցն էք, ինչպէ՞ս կը հասնիք պատրաստելու այս ամէնը»: Անոնց պատկերացումով դուն այս գործը կատարելու համար առտուրնէ իրիկուն պէտք է ժամանակ տրամադրես: «Օրհորդ, այսքան նիւթ ինչպէ՞ս կը հաւաքէք, դադար չունի՞ք...»:

Իմ ուսուցչուհի ըլլալս կ'օգնէ առ աւելի հասկնալու իրենց հոգեբանութիւնը, գիտնալու դժուարութիւնները, նախասիրութիւնները, լսելու անոնց առաջարկները եւ զրուցելու ծնողներուն հետ այս կետերուն շուրջ:

Կեանքիս կետր այս գործին մէջ անցուցած եմ, հաճոյքով կատարած ու փորձած եմ կապ պահել նորութիւններուն հետ: Յոյսով եմ որ ինծի յաջորդող խմբագիրներն ալ կը նպաստեն «Կկու»ի վերելքին:

**ԲԺՇԿԱԿԱՆ ՆԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՕՐԷՆ,
ԴԵԿԱՆ ՍԻԼՎԱ ԻՇԽԱՆԵԱՆ.
«ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ Է,
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ԱՅԼ ԽՕՍՔՈՎ՝
ԳԻՏՈՒԹԻՒՆ, ԱՇԽԱՏԱՆՔ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ»**

*Հարցազրույցը վարեց
Մարինա Պողիկեան*

Այս տարի Հալեպի Պետական Համալսարանի բժշկագիտական ճիւղի տնօրէն Աշխատակուցի հալեպահայ բժշկի., դեկան Սիլվա Իշխանեան: Այս առիթով «Գանձասար» հարցազրույց մը ունեցաւ բժշկուհիին հետ՝ ծանօթանալու անոր աշխատանքին ու համալսարանի պարզած վիճակին:

Ստորեւ կը ներկայացնենք հարցազրույցը:

«Գանձասար»- Խնդրեմ ներկայացնէք ձեր կենսագրական տուեալները եւ համալսարանէն ներս տարած տարիներու աշխատանքը:

Սիլվա Իշխանեան- Ծնած եմ Լաթաքիա 1961-ին: Համալսարանական ուսումն ստացած եմ Լաթաքիոյ Բժշկագիտական Համալսարանէն, ապա Հալեպի Պետական Համալսարանի Բժշկագիտական բաժինէն, աւարտելով զայն 1986-ին: 1990-ին ստացած եմ բարձրագոյն ուսման վկայական մասնագիտանալով մորթաբանութեան հիւանդութիւններու մէջ: 1992-ին պետութեան կողմէ ուղարկուեցայ Գերմանիա, Ալպերթ Լութֆիլք համալսարանէն ստացայ դոկտորական ուսումն, վկայուեցայ մորթաբանութեան վիրահատութիւններու եւ LASER-ի մասնագիտութեամբ, ինչպէս նաեւ մորթաբանութեան հիւանդութիւններու մասնագիտութեամբ: Հալեպ վերադառնալով,

1996-ին Աշխատակուցի Հալեպի Բժշկագիտական Համալսարանի դասաւանդութեան խորհուրդի անդամ, ապա 2004-ին՝ օգնական դասատու: Դասաւանդած եմ նաեւ Հալեպի Պետական Համալսարանի ատամնաբուժական բաժինին եւ հիւանդապահութեան դպրոցին մէջ, ինչպէս նաեւ «Շահպա» անձնական համալսարանի ատամնաբուժութեան բաժինին մէջ:

2008-2009 եւ 2015-2018 ստանձնած եմ Հալեպի Պետական Համալսարանի մորթաբանութեան հիւանդութիւններու բաժնի տնօրէնութիւնը: 2009-2013 վարած եմ Բժշկական Համալսարանի վարչական եւ ուսանողական հարցերու փոխդեկանի պաշտօն, ապա մին-



չեւ 2017 վարած եմ նոյն համալսարանի գիտական հարցերու փոխդեկանի պաշտօն: 2015-2017 ստանձնած եմ տնօրէնութիւնը

հիւանդապահութեան դպրոցի յանձնախումբին: Լաւ փորձառութիւն ձեռք ձգելով բժշկագիտական համալսարանի աշխատանքները կառավարելու մէջ, 2018-ին Հալեպի Պետական Համալսարանի կուսակցապետին եւ համալսարանի տնօրէնութեան առաջարկով եւ Սուրիոյ բարձրագոյն կրթութեան նախարարին որոշումով նշանակուեցայ բժշկագիտական համալսարանի դեկան եւ մինչեւ օրս կը գործեմ:

Անդամ եմ մորթային հիւանդութիւններու արաբական-սուրիական կազմակերպութեան: Անդամ եմ Արաբական Պորտի Խորհուրդին պատկանող փորձառական յանձնախումբին՝ մորթային հիւանդութիւններու մասնագիտութեամբ: Հալեպի Բժշկական Սենտիքայի մորթային հիւանդութիւններու յանձնախումբի պատասխանատուն եմ:

Գիտական շարք մը յօդուածներ գրած եմ միջազգային թերթերու մէջ եւ հրատարակած բժշկագիտական արաբերէն գիրքեր, ինչպէս՝ «Մորթային Հիւանդութիւններու Ընդարձակ Աղբիւր», «Արաբական Բժշկութեան Հանրագիտարան» եւ «Մորթային Հիւանդութիւններ»:

Հսկած եմ 30-է աւելի բարձրագոյն կրթութեան վկայականի աւարտաճառերու պատրաստութեան: Մասնակցած եմ տեղական եւ համայնքային զանազան համագումարներու եւ գիտաժողովներու:

1998-էն սկսեալ կը գործեմ նաեւ բժշկական անձնական գրասենեակէս ներս:

«Գ.»- 2018-ին ուրախութեամբ տեղեկացանք բժշկագիտական համալսարանի տնօրէնութեան պաշտօնը ստանձնելնուդ լուրը: Ի՞նչ հիմնական աշխատանք կը տանիք բժշկագիտական համալսարանէն ներս եւ ի՞նչ հեռանկարներ ունիք զարգացնելու այս ճիւղը:

Ս.Ի. - Նախքան բժշկական համալսարանի դեկան նշանակուիլս, չորս տարի է արդէն նշանակուած էի ուսանողական հարցերու փոխդեկան, ապա չորս յաւելեալ տարի՝ գիտական հարցերու: Փորձառութիւն ձեռք ձգելով բժշկական համալսարանի գործերու կառավարման մէջ դեկան նշանակուեցայ Սուրիական Պետական Համալսարանի բժշկական համալսարանի, համալսարանի կուսակցակապետին եւ տնօրէնին առաջարկով, Սուրիոյ Բարձրագոյն Կրթութեան Նախարար-

րութեան որոշումով:

Բժշկական համալսարանի զարգացման մէջ երկու տեսակ աշխատանք կը տանիմ: Կը հսկեմ համալսարանի ուսանողներուն անհրաժեշտ կարիքներու ապահովման, երեք մակարդակներով՝ նախ մագիստրոսի հետեւողներուն, ապա իրենց մասնագիտութիւնը կատարելագործողներուն եւ դոկտորականի հետեւողներուն: Կը հսկեմ համալսարանի պաշտօնեաներու աշխատանքներուն: Խորհուրդի նախագահն եմ բժշկական համալսարանին եւթակայ երեք հիւանդանոցներու՝ համալսարանի հիւանդանոցին, սրտի վիրահատութեան հիւանդանոցին եւ կնաբարձութեան եւ ծննդաբերութեան հիւանդանոցին, որոնք ունին նաեւ իրենց առանձին տնօրէնները:

Գիտական հետազօտութիւնները զարգացնելու հիմնական աշխատանք կը տանիմ համալսարանէն ներս, վարելով այդ ծրագրի կազմակերպչական աշխատանքները, եւ համալսարանէն ներս թէ այլ համալսարաններու մասնակցութեամբ համագումարներ եւ գիտաժողովներ կազմակերպելով:

Այս բոլորը բժշկագիտական համալսարանի դեկանին պարտականութիւններն են:

«Գ.»- Բժշկագիտական համալսարանի նախապատրաստական դասարանի հիմնումը ի՞նչ ազդեցութիւն ունեցաւ մասնագիտական ուսումնառութեան որակի բարձրացման վրայ:

Ս.Ի. - Հինգերորդ տարին է, որ կը գործէ բժշկական համալսարանի նախապատրաստական դասարանը, որուն առաւելութիւններն մէկը այն է, որ եթէ ուսանողը իսկապէս կը փափաքէր բժշկութիւն, ատամնաբուժութիւն եւ կամ դեղագործութիւն ուսանիլ. անցնող տարիներուն պաքալորիայի պետական քննութեան 1 կամ 2 նիշի տարբերութեամբ կը զրկուէր բժշկական համալսարան մուտք գործելէ: Ներկայիս նախապատրաստական դասարանը առիթ կ'ընծայէ քանի մը նիշ նուազ բերող աշակերտին բժշկական համալսարան մուտք գործելու, եթէ իր աշխատանքով փաստէ թէ իսկապէս արժանի է անոր: Նոյնպէս այն ուսանողները, որոնք պաքալորիային բարձր նիշ ապահոված են եւ կրնան բժշկական համալսարան մտնել, նախապատրաստական մէկ տարուան ընթացքին հաւանաբար հակում չունենան մասնագի-

տանալու այս ճիւղին մէջ եւ կամ չյաջողին, հետեւաբար առիթ կ'ունենան ատամնաբոյժ կամ դեղագործ դառնալու:

Նախապատրաստական դասարանի ժխտական կողմին անդրադառնալով, բժշկուհին մատնանշեց, թէ ուսանողը պաքալորիային գրեթէ երկու տարի գերճնշուած աշխատանք կը տանի, որպէսզի կարենայ մուտք գործել բժշկագիտական համալսարան: Նախապատրաստական դասարանը տարի մը եւս ճնշում կը պատճառէ ուսանողներուն եւ իրենց ծնողներուն, որովհետեւ յարատեւ աշխատանքով լաւ նիշեր պետք է ապահովեն, որպէսզի կարենան բժշկական համալսարան մտնել:

«Գ.»- Սուրիոյ Պետական Համալսարաններուն որակը, համեմատած միջազգային համալսարաններու մակարդակին հետ, ի՞նչ վիճակ կը պարզէ: Ինչպիսի՞ աշխատանք կը տարուի սուրիական համալսարանները առաւել մրցունակ դարձնելու համար:

Ս.Ի.-Սուրիական պետական համալսարանները, փառք Աստուծոյ, Նոյնիսկ պատերազմի տարիներուն կրցան պահել իրենց որակը: Միակ բանը, որ ազդեց անոն վրայ՝ համալսարաններու դասակարգումն է, որուն մէջ պատերազմի տարիներուն քիչ մը ետ մնացին, որովհետեւ դասակարգումը կը կատարուի համացանցին մէջ համալսարանի անունին յաճախակի յիշատակումին հիման վրայ: Աշխարհի համալսարաններու դասակարգումը կը հիմնուի գիտական հետազոտութիւններու կատարումով, գիտական յօդուածներու տարածումով, համալսարանը իր բոլոր մանրամասնութիւններով դուրսի աշխարհին ներկայացնելով: Մէկ խօսքով, համալսարանի կայքէջը որքան աշխոյժ եւ մանրամասնութիւններով լեցուն ըլլայ եւ որքան դասախօսները իրենց մասնակցութիւնը բերեն եւ իրենց անունները յաճախակիօրէն յիշուին՝ այդքան համալսարանի դասակարգումը յառաջ կ'երթայ: Պետական համալսարաններու պաշտօնական կայքէջն է www.alepuniv.edu.sy, որուն զարգացման ուղղութեամբ աչալուրջ աշխատանք կը տարուի:

Պատերազմէն առաջ թէ պատերազմի

տարիներուն, երբ շատ մը բժիշկներ պայմաններու բերումով գաղթեցին դէպի աշխարհի գանազան անկիւններ, բոլորն ալ իբրեւ բժիշկ կարողացան շարունակել իրենց Նուիրական աշխատանքը եւ այս մէկը ապացոյցն է Սուրիոյ համալսարաններու բարձր որակին:

Անդրադառնալով համալսարանին մէջ օգտագործուած արհեստագիտական միջոցներուն, կարելի է հաստատել, որ մեր համալսարաններն ու հիւանդանոցները բոլորն ալ անհրաժեշտ գործիքներով օժտուած են, հակառակ սղութեան եւ ապահովելու դժուարութեան: Համալսարանէն ներս կը գտնուին համակարգիչներ, տարրալուծարաններ եւ անհրաժեշտ արդիական բժշկական գործիքներ:

Մէկ դժուարութեան դէմ յանդիման կը գտնուինք, այն ալ ուսանողներուն թիւին մեծութիւնն է, որ գործնական դասերուն խճողուած վիճակ կը ստեղծէ:

«Գ.»- Հալէպի Պետական Համալսարանէն ներս որքանո՞վ ներգրաւուած են հայ պաշտօնեաներ եւ ի՞նչ ներդրում կ'ունենան անոնք համալսարանի զարգացման գործընթացին մէջ:

Ս.Ի.- Հայերը միշտ ալ կը գնահատուին պետութեան կողմէ եւ իրենց յարմար տեղերը կը դրուին: Սուրիահայ պաշտօնեաները իրենց պարտականութիւնը լիուրի կը կատարեն եւ իրենց մասնակցութիւնը կը բերեն դասախօսութիւններով, գիտական հետազոտութիւններով եւ համագումարներու մասնակցելով:

Իբր սուրիահայ, հաւատարիմ ենք եւ երախտապարտ՝ Սուրիական օրհնեալ Հայրենիքին եւ անոր իմաստուն ղեկավարութեան:

Բժշկուհին իր խօսքը ամարտելով ըսաւ.

«Բժշկութիւնը սուրբ առաքելութիւն է, մարդկային պարտականութիւն, այլ խօսքով՝ գիտութիւն, աշխատանք եւ բարոյականութիւն»:

Մեր տեղեկութիւններուն համաձայն, անցեալէն մինչեւ օրս, Հալէպի Պետական Համալսարանէն ներս գործած են եւ կը շարունակեն գործել ւելի քան 75 հայ պաշտօնեաներ, որոնք լաւ համբաւ թողած են ու բժախնդրութեամբ տարած են իրենց վստահուած գործը:

«Միև թուրք» կարմիր գիծն անդին

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԵՐՔՈՂՆԵՐՈՒ ԴԷՄ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ՆԱԽԱԳԱՐ ԱԼԻ ԷՐԹԵՄԻ ՀԵՏ

*Հարցազրույցը վարեց
Սալբի Գասպարեան*

«Մենք, կա՛մ կը մնանք ցեղասպանութիւն գործած եւ հայերուն ողջ ունեցուածքը բռնագրաւած ու թալանած ստորներ, կա՛մ կողոպտուածը իր տիրոջ վերադարձնելով կը դառնանք պատուաւոր մարդիկ: Մեզի համար երրորդ տարբերակ չկայ...»

ԱԼԻ ԷՐԹԵՄ

Ալի Էրթեմ ծնած է 1950-ին, Անգարայի «Շերֆլի» Քոչարիսի Կեօլլու գիւղը:

Ճնողներուն ծայրայեղ թշուառութեան պատճառով, 1964-ին, դեռ դեռահաս պատանի, կ'ուղղուի Տորթմուստ, Գերմանիա, ուր աշխատելուն զուգահեռ ձեռք կը բերէ ելեկտրագործութեան մասնագիտութիւն:

Կանուխ տարիքէն հեռացած ըլլալով Թուրքիոյ այլամերժութեամբ, ազգայնամիութեամբ եւ մանաւանդ հայատեացութեամբ բնորոշուող մթնոլորտէն, նախապաշարումներէ հեռու այլ շրջապատի մը մէջ, տակաւ կը ձեւաւորուին անոր քաղաքական աշխարհայեացքն ու հոգեմտաւոր արժէքներու ենթահողը, որուն արդիւնքով կը յաջողի ազատագրուիլ թուրք ցեղապաշտական մոլուցքի ճշող ազդեցութենէն:

1998-ին, Ալի Էրթեմ արդարութեան եւ պատմական ճշմարտութեան բացայայտումին հետամուտ խումբ մը լուսամիտ թուրքերու հետ, Ֆրանքֆուրթի մէջ կը հիմնէ Soykırım Karşıtları Derneği (SKD) - Յեղասպանութիւնը Հերքողներու Դեմ Միութիւնը, որպէս առաջնագոյն նպատակ հետապնդելով աշխարհի բոլոր պետութիւններուն, այդ կարգին Թուրքիոյ Հայոց Յեղասպանութեան

ճանաչումն ու դատապարտումը...:

1999-ին, գործնական քայլի դիմելով, Ալի Էրթեմ պատուիրակութեամբ մը կ'այցելէ Հայաստան, ուր որպէս խորհրդանշական հատուցում 300\$ կը նուիրէ Ծիծեռնակաբերդի ցեղասպանութեան թանգարանին, այնուհետեւ, ամեն տարի չնչին գումարով մը, իբրեւ ուսանելի օրինակ, աւանդութեան կը վերածէ հատուցումի իր պարտաւորութիւնը:

The California Courier շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր Յարութ Սասունեանի այս աննախընթաց իրադարձութեան մասին կատարած կոչ-հաղորդումը մեծ արձագանգ



գտնելով մանաւանդ ամերիկահայ մամուլին մէջ, անվերապահ անդրադարձ կը ստեղծէ թուրք յառաջապահ մտաւորականին տարած գործունեութեան մասին:

Աւելի քան երկու տասնամեակ առաջ ուշադրութեան արժանացած այս աննախադէպ շարժումը, իր կրած բազմաբովանդակ գարգացումներով, այսօր կը գտնուի Արեւմուտքի նմանօրինակ այլ շարժումներու յառաջապահ դիրքերուն վրայ:

«Ցեղասպանութիւնը Յերքողներու Դեմ» Միութեան հիմնադիր Նախագահ Ալի Էրթեմի հետ ստորեւ ներկայացուող հարցազրոյցին ընդմէջէն լուսարձակի տակ կը բերուին շարժումին ուղեգիծն ու խորքային նպատակները:

«Պանձասար»- Ի՞նչ դրդապատճառներ ձեզ մղեցին Յայոց Ցեղասպանութեան, հայ ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութեան եւ պահանջատիրութեան ուղղութեամբ Եւրոպայի մէջ հիմնելու «Ցեղասպանութիւնը Յերքողներու Դեմ Միութիւն»ը:

Ալի Էրթեմ- Ձեր հարցումին պատասխանելէ առաջ, հարկ կը համարեմ պատմական անժխտելի իրականութեան մասին հակիրճ նախաբանի մը ներկայացումը:

Թուրքիոյ Յանրապետութիւնը դեռ կեանքի չկողուած, երկրին համայնավար կուսակցութեան ծնունդին հետ սկիզբ առած ձախակողմեան ընդդիմութիւնը յեղաշրջումի իր երազները հիւսած առաջին օրէն ի վեր ենթակայ եղած է ցեղասպանական մոլուցքով առաջնորդուող երկրին բռնապետական կառոյցին անխնայ հարուածներուն, սակայն հակառակ իր կրած յաջորդական պարտութիւններուն, այս իրավիճակի պատճառներուն ուղղութեամբ ճիշդ վերլուծութիւններ չընելով, չէ յաջողած պատմութեան ընթացքին տեղի ունեցած զարգացումներուն արժեւորումը կատարել, հետեւաբար չէ կրցած, կամ չէ ուզած հասկնալ 1915-1916 տարիներուն Օսմանեան բռնապետութեան գլանին տակ ճգմուած մեր մարդկայնութեան լրիւ սնանկացումը, հետեւաբար չէ կրցած, կամ չէ ուզած հասկնալ գլխաւորաբար հայ ժողովուրդին եւ ընդհանրապէս Օսմանեան Կայսրութեան հպատակ քրիստոնեայ ժողովուրդներուն հանդէպ գործուած ցեղասպանութեան եւ տարագրութեան ոճիրներու յանցագործութիւններով ծանրաբեռն երկրին քաղաքական հիմնակառոյցին Էութիւնը, որ իր կողքին ունենալով տեղւոյն իսլամ հաւաքականութիւնները, ամբողջ տասնամեակներ ցեղասպանութեան եւ շարդերու ենթարկուած երկրին տեղաբնիկ ժողովուրդներու հանդէպ նախապաշարած, սնուցած ու հրահրած է թշնամանքի հիմք հանդիսացող թրքամոլութեան եւ ազգայնապաշտութեան սին զգացումներ:

Թուրքիոյ ձախակողմեաններու գաղափարախօսական առաջին բեկումը տեղի

ունեցաւ Թուրքիոյ Յամայնավար Կուսակցութեան-մարքսիստ/լենինիստ շարժումի հիմնադիր՝ Իպրահիմ Բայփաքայայի քեմալիզմի քննադատութեամբ:

1972-ի գինուորական բռնապետութեան ձախակողմեաններուն տուած ծանր հարուածը, անոնց արմատները կտրտեց, առ այդ՝ յեղաշրջումի ռահվիրաներէն ոմանք կախաղան բարձրացան, ոմանք տանջամահ եւ ուրիշներ հրապարակային վայրագութիւններով սպանուեցան, սակայն ինչ խօսք, որ Ի.Բայփաքայայի հետեւորդները, անոր սկզբնաւորած քեմալիզմի քննադատութիւնները, երկրին արիւնոտ եւ խաւարապատ անցեալին հետ առերեսուելու գործօնի չվերածեցին, հետեւաբար ցեղասպանութիւններու զոհ դարձած ժողովուրդներու «Արդարութեան» պահանջքը իրենց շարժումին դրօշը չդարձուցին, ընդհակառակը՝ քեմալիզմի բացթողումներուն եւ կարգ մը սխալ ըմբռնումներուն փարելով, զանոնք հրամանակարգի վերածեցին... այս ընթացքին, չբաւարարուեցան ուրացումի քաղաքականութեան յանցագործութեան կողմնակից ըլլալով, այլ նաեւ ի պահանջել հարկին հակազդեցին ընդդիմադիր այլ շարժումներու... եւ պատահական չէր որ գինուորական բռնապետութեան

Սեպտ. 12-ի դահիճները երբ փորձեցին հայ ժողովուրդին երկրորդ ցեղասպանութեամբ մը սպառնալ, ձախակողմեան բոլոր կազմակերպութիւնները, օրուան բռնապետ՝ Բենան Էվրէնի հայ ժողովուրդը Թուրքիոյ թըշնամի ներկայացնող խօսքերը վանկարկեցին: Մէկ խօսքով՝ Ի.Բայփաքայայի հիմնած ձախակողմեան կազմակերպութեան հետեւորդ բոլոր կառոյցները, առանց բացառութեան թուրք շովինիստական դատապարտելի ընթացք ցուցաբերեցին:

Սակայն, հայկական գինեալ շարժումներու կրակոցներուն ձայները ո՛չ միայն Թուրքիոյ հանրային կարծիքի ուշադրութիւնը կեդրոնացուցին Յայոց Ցեղասպանութեան իրականութեան վրայ, այլ ուրացումի եւ լռութեան իր խոր թմբիրէն գարթնեցուցին երկրին քաղաքացիական խաբուած հասարակութիւնը ... ընդհուպ, մեծ ոճիրը քօղարկելու համար, հակառակ ցեղասպան վարչակարգին ի գործ դրած ռազմավարական բոլոր միջոցներուն, Ցեղասպանութիւնը Թուրքիոյ առաջնագոյն օրակարգը հանդիսացաւ:

Ցեղասպանութիւնը Յերքողներու Դեմ

Միութիւնը հիմնելու գաղափարը յղացայ, երբ յոյս ու հաւատք կորսնցուցած էի ձախակողմեան յեղափոխական հատուածին հանդէպ, որ տիրող ներկայութիւն էր այնպիսի միջավայրի մը մէջ, ուր ցեղասպանութեան ուրացումը հաւաքական վարքագիծ էր, այդուհանդերձ, որպէս առաջին փորձ, ջանք թափեցի ձախակողմեան կառոյցներու մասնակցութեամբ, Ապրիլ 24-ին, ցեղասպանութեան ոգեկոչման ձեռնարկի մը կազմակերպումին, սակայն արդիւնքը դրական չէր, որովհետեւ մասնակցութեան համամիտ գտնուած կառոյցները ոգի ի բռին սկրտեցան ցեղասպանութիւնը իրենց քաղաքական նպատակներուն ծառայեցնելու: Պետք է ըսել, որ գայթակղեցուցիչ է ձախակողմեաններուն ցուցաբերած վարքագիծը: Անոնք, հակառակ ցեղասպան վարչակարգին երկրին բոլոր հատուածներուն հանդէպ ի գործ դրած բռնութիւններուն եւ յատկապէս իրենց դէմ շղթայագերծուած հալածանքին, չկրցան երկրին ճնշուած հատուածներուն, վտարանդիներուն եւ գլխաւորաբար ցեղասպանութեան զոհ հայ ժողովուրդին ճակատագրերու նոյնութեան հանդէպ գիտակցութիւն գոյացնել, պարզապէս արդարութեան համար մղուող պայքարներու մէջ պատուաբեր դեր չունեցան...:

Այս իրավիճակին գիտակից մարդու մը հոգեմտաւոր աշխարհայեացքով, լուրջ քայլեր առնելու մասին մտածեցի եւ ահա 26 Սեպտ. 1998-ին, գաղափարակից խմբակի մը հետ առաջին քայլը առնելով, Գերմանիոյ Ֆրանքֆուրթ քաղաքին մէջ, 24 հոգիի միասնական ջանքերով կեանքի կոչեցի Յեղասպանութիւնը Յերքողներու Դէմ Միութեան հիմնադիր մարմինը: Պետք է ըսել, որ այս մարդոցմէ գրեթէ ոչ մէկը ցեղասպանութեան մասին սպառնիչ տեղեկութիւն ուներ, եւ դեռ աւելին, նորաստեղծ կառոյցէն ներս սպրդածներէն ոմանք նոյնիսկ փորձեր կը կատարէին իրենց պատկանած ձախակողմեան կազմակերպութիւններու հիւանդագին մտայնութիւնները մեր միութեան մէջ ներմուծել, սակայն հետեւողական աչալրջութեամբ յաջողեցանք մեր շարքերէն հեռացնել միութեան հիմնական նպատակին հանդէպ համոզում չգոյացուցած, սնտի ազդեցութիւններ կրող ունայնամիտ տարրերը...:

Համոզուած էի, որ այս դժուարութիւնները յաղթահարելու պայմանը կը կայանար, ցեղասպանութեան մեղքը կրող Թուրքիոյ պե-

տութեան ուրացումի քաղաքականութեան հակադրուող մեր մտածումները գործնական պայքարով արտայայտելու միջոցներ գտնելուն մէջ: Մեր առած որոշումները օրինականացնելու համար, պետք էր մեր դիմաց ծառայած պարտաւորութիւնները գործնական հունի մէջ դնել: Այս ուղղութեամբ, միութեան ղեկավար մարմինի առաջին ժողովին առնուեցան հետեւեալ առարկայական որոշումները՝

ա) Յեղասպանութեան ընդունման համար, առաջնակարգ կարեւորութեամբ, արտերկրի թրքահպատակ գաղթականներու շրջագիծին մէջ կազմակերպել ստորագրահաւաք մը, նպատակ ունենալով նուազագոյնը 10.000 ստորագրութիւններով ցեղասպանութեան ընդունումը պահանջող նամակ մը յղել Թուրքիոյ Հանրապետութեան խորհրդարանին:

բ) Միութեան անունով, Երեւանի մէջ ցեղասպանութեան զոհերու յիշատակին կառուցուած Ծիծեռնակաբերդի մէջ ծաղկեպսակի մը զետեղումով, թե՛ միջազգային թե՛ Թուրքիոյ հանրային կարծիքին մեր ցաւի ու ամօթի զգացումները յայտնելու:

գ) Արդարութեան եւ ճշմարտութեան բացայայտումին համար մեր մղելիք պայքարը մշտական օրակարգ դարձնելու համար ձեռնարկել այլազան բնոյթի գործունեութանց, ինչպիսիք են՝ պատմական լուսանկարներու ցուցադրութիւն, յառաջադէմ մտաւորականներու մասնակցութեամբ համաժողովներու կազմակերպում, ցեղասպանութեան նիւթը լուսարձակի տակ բերող կարեւոր հրատարակութիւններու ներկայացում, ցեղասպանութեան յիշատակումի ձեռնարկներու եւ մամլոյ ասուլիսներու կազմակերպում: Մէկ խօսքով՝ համապատասխան հակազդեցութեամբ քօղազերծելով սուտի եւ զրպարտութեան հիմքերէն մեկնող Թուրքիոյ ուրացումի քաղաքականութիւնը, ճիշդ կողմնորոշել ապատեղեկութեան եւ ապատեղեկատուութեան ենթակայ ընդհանրապէս միջազգային եւ յատկապէս Թուրքիոյ հանրային կարծիքը:

«Գ.» - Դրական թե ժխտական ինչպիսի՞ արդիւնքներ ունեցաւ ձեր Հայաստան առաջին այցելութիւնը:

Ա.Է. - Պետք է ըսել, որ մեր առաջին այցելութիւնը Հայաստան բաւական խնդրայարոյց էր... մեր միութեան ենթակառոյցէն ներս

Թուրքիոյ գործուղած գործակալի մը սպորդու- մով, նպատակ կը հետապնդուէր ո՛չ միայն ձախողութեան մատնել այս գերազանցօրէն աննախադէպ նախաձեռնութիւնը, այլ հիմ- նայատակ կործանել մեր նորաստեղծ միութեան բովանդակ առաքելութիւնը:

Հակառակ մեր վարչակազմի անդամներու բարի կամեցողութեան, արդարասիրութեան եւ անկեղծ մօտեցումին, անոնց անգի- տութեան հանգամանքին օգտագործումով, այդ գործակալները «Հայ Ժողովուրդին Նա- մակ» վերնագիրով, յիմար յայտարարութեամբ մը հանդէս եկան, այս քայլը արգելա- կելու բոլոր ջանքերս ապարդիւն մնացին, 24 Ապրիլի սգոյ յիշատակութեան օրը, մեր վար- չական կազմին մեծամասնութեան հաւանութեամբ, յիշեալ նամակ-յայտարարութիւնը Ծիծեռնակաբերդին մէջ ցրուեցին, սակայն միութեան նախագահի հանգամանքովս, լրատուամիջոցներու եւ կարեւոր հեղինակու- թիւներու հետ ուղղակի կապի մէջ ըլլալով, յաջողեցայ ինչ որ չափով կատարուածին ազ- դեցութիւնը մեղմացնել...:

Հայաստանէն վերադառնալնէս ետք, հաշուետուութեան եւ համապատասխան դատապարտումի պահանջքը առիթ հանդի- սացաւ Թուրքիոյ գաղտնի սպասարկութիւն- ներու գործակալին հեռացման, ինչպէս նաեւ վարչակազմի անդամներէն հիւանդագին մտայնութեամբ «ձախակողմեան»ի մը ար- տաքսումին, եւ ահա այսպիսով մեր պայքարը հեզասահ ուղի մտաւ, սակայն պէտք է ըսել նաեւ, որ հարցին լրջութիւնն ու համապա- տասխան պարտաւորութիւններու ահագ- նութիւնը պատճառ հանդիսացան, որ ան- խուսափելի դժուարութիւններու չտոկացող կարգ մը անդամներ, տարբեր փուլերու մէջ լքեն մեր «արդարութեան շոգեկառքը»: Այդու- հանդերձ, առողջ հունտ մը, ամբողջ քսան տարի յամառօրէն յաջողեցաւ ցեղապաշտութեան եւ ուրացումի դէմ իր անկոտորում պայ- քարը տանիլ եւ, մեկնելով քաղաքացիական առողջ հասարակութեան մը ենթահողէն, այդ պայքարին թիրախ ու նպատակ դարձուց Թուրքիոյ պետական պաշտօնական գաղա- փարախօսութեան թապուներու փլուզումը, ձգտելով ուրացումի քաղաքականութեան դէմ տարուող պայքարը աննդոյթի մը վե- րածել...: Այս բոլորին մէջ մեծ դեր եւ կարե- ւոր ներդրում ունի միութեանս համանախա- գահ Պիւլէնթ Կիւլը, որուն հետ ուս-ուսի

տուած տարիներէ ի վեր անկոտորում կամքով եւ հետեւողական աշխատանքով կը շարու- նակենք յանուն ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ մղած մեր պայքարը...:

«Գ.»- Դուք ձեր նախագահած Տեղաս- պանութիւնը շերտողներու Դեմ Միութեան որ- դեգրած ուղեգիծով եւ ձեր անձնական վար- քագիծով ցարդ եզակի օրինակ մըն էք, որ ամէն տարի Հայաստանի ցեղասպանութեան թանգարանին խորհրդանշական գումար մը վճարելով, ձեր ազգակիցներուն կը յիշեցնէք հայ ժողովուրդի նիւթական իրաւունքներուն մասին: Ի՞նչ կ'ըսէք այս ուղղութեամբ:

Ա.Է.- Հայաստանի ցեղասպանութեան թանգարանին ամէն տարի խորհրդանշական գումար մը փոխանցելու որոշումէս արդէն անցած է 20 տարի: Կը մտածէի այս ձեւով պատասխան տուած ըլլալ՝ «Թուրքիա կո- չուող երկրէն նոյնիսկ մանրախիճ մը չենք տար...» ըսողներուն, որոնց երկիրը կքած է ո՛չ միայն գլխաւորաբար հայերու ցեղասպանութեան ոճիրի բեռն տակ, այլ կը մեղադրուի տարաբնոյթ բարբարոսութիւններու ենթար- կուած շարք մը ժողովուրդներու, ինչպէս քիւր- տերու, ասորիներու, յոյներու եւ այլոց հան- դէպ գործուած յանցագործութիւններով...:

Տեղասպանութեան ոճիրին գիտակից, լռութեամբ անոր մեղսակից-մասնակից ըլլալը մերժող անհատս, 1999-ին, Հայաստան տուած առաջին այցելութեանս ընթացքին, որոշումս յայտնած էի Հայոց Տեղասպանութեան ինստիտուտ-թանգարանի օրուան տնօրէն դոկտ. Լաւրենտի Բարսեղեանին:

Որոշումս կը մեկնէր այն գիտակից համո- գումէն, որ Թուրքիա չբաւականացաւ հայ ժո- ղովուրդը իր տուն ու տեղին մէջ ոչնչացնելով եւ տեղահանելով, այլ բռնագրաւեց եւ իւրացուց անոր շարժուն եւ անշարժ կալուած- ներն ու ողջ ունեցուածքը, հետեւաբար կը հա- ւատամ, որ ոճրագործին եւ անազակին յափըշ- տակած բոլոր արժէքները իրենց սեփակա- նատերերուն վերադարձնելը նախ եւ առաջ բարոյական ինդիր է, այլապէս մե՛նք ալ ցեղասպանութեամբ մեղադրուող մեր ազգա- կիցներուն նման, կամ աներեսաբար ու անա- մօթաբար պիտի շարունակենք մեղսակից դառնալ հայ ժողովուրդի բռնագրաւուած ունեցուածքի իւրացման եւ ուրացումի արար- քին, կամ հայ ժողովուրդի պահանջատիրութեան պայքարին մեր մասնակցութիւնը բե-

րելով, պիտի հետապնդենք անոր կրած վնասներու հատուցումին դատը: Մեզի համար երրորդ տարբերակ չկայ...:

Հատուցումը ո՛չ միայն բարոյական, այլ նաե՛ւ իրաւական հարց է ... բարոյական տեսանկիւնէ ներողութիւն խնդրելը, իսկ իրաւական տեսանկիւնէ վնասներու հատուցումը ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ...:

20-րդ դարու առաջին եւ մեծագոյն ցեղասպանութեան անպատիժ մնացած ըլլալը ինքնին կ'ապացուցէ, որ հայ ժողովուրդի արդարութեան պահանջքին արգելք հանդիսացող «քաղաքակիրթ աշխարհը» մեղսակից է ցեղասպանին գործած ահեղ յանցագործութեան, հայ ժողովուրդի ոչնչացման գործընթացին ականատես եղած եւ կարելի միջամտութիւնը գիտակցաբար չըրած մեծ պետութիւնները, իրենց սեփական շահերուն համար անտեսած են ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ, հետեւաբար, այս պատճառով իսկ հայ ժողովուրդի ցեղասպանութեան վերջը կը շարունակէ արիւնիլ...: Անպատիժ մնացած ցեղասպանութիւնը պատճառ հանդիսացած է նաե՛ւ, որ 20-րդ դարը յատկանշուի իբրեւ ցեղասպանութիւններու հարիւրամեակ, որ թատերաբեմ դարձած է նոյնքան տարողունակ այլ բարբարոսութեան մը, որ հրեաներու ողջակիզումն է...:

Այստեղ հարկ կը համարեմ ցեղասպանութեան ականատես վկայ վերապրողներէն, եւրոպաքնակ Արմինէ Միլասեան-Շատուորեանի եւ Սարգիս Արթին Եափուճեանի ինծի գրած «Մեզ Լացնող Նամակներ»-ու յիշատակումը, որոնց տուած պատասխաններս, (թարգմանաբար լոյս տեսած եւ քանիցս արտատպուած արեւմտահայ մամուլին մէջ), անգամ մը եւս լոյս կը սփռեն հայ ժողովուրդի ցեղասպանութեան մասին ունեցած մտածումներու եւ կարծիքներու վրայ...:

«Գ.»- Ձեր միութեան սկզբունքային ուղեգիծով եւ համապատասխան նպատակներով, թե՛ Թուրքիոյ, թե՛ արեւմուտքի մէջ ի՞նչ կառոյցներ կան, որոնք ձեր կողքին են եւ նմանօրինակ աշխատանք կը տանին:

Ա.Է.- Այս մասին պէտք է ըսել, որ մինչեւ Հրանդ Տիկնի սպանութեան ոճիրը, այդ օրերու պայմաններով, արդարութեան ո՛չ մէկ կառոյց, ո՛չ մէկ հաստատութիւն կամ աստեան կրցած է առերեսուիլ մարդկութեան հանդէպ Թուրքիոյ գործած ցեղասպանական յանցա-

գործութիւններուն հետ: Հրանդ Տիկնի իր կեանքին գնով իրականացուց մինչ այդ միջազգային աստեաններու մօտ անիրականանալի թուող արդարութեան հետապնդումը:

Բնականաբար կարելոր յառաջխաղացք մըն է Թուրքիոյ մարդկային իրաւանց պաշտպանութեան միութեան տարած աշխատանքը, որ հիմք ընդունելով ցեղապաշտութեան եւ խտրականութեան դեմ հակադիր գործունեութիւն ծաւալելու սկզբունքը, հակառակ առկայ դժուարին պայմաններուն, կը պահանջէ առերեսումը երկրին արիւնտ ու խաւարապատ անցեալին հետ, սակայն ինչ խօսք, որ արդարութեան ի խնդիր մղուող այս պայքարը, սահմանափակուած է Թուրքիոյ լոկ քանի մը քաղաքներու մէջ տեղի ունեցող տեղաշարժներով, մինչդեռ երկրի ողջ տարածքին մէջ գործող մարդկային իրաւանց պաշտպանութեան միութիւնը կազմակերպուած կառոյց ըլլալով, ըստ երեւոյթի, Հայոց Ցեղասպանութեան հարցին արծարծումը ընդունելութիւն չէ գտած անոր բովանդակ մասնաճիւղերուն մօտ:

Միւս կողմէն, ինչպէս նախապէս յիշեցինք, Թուրքիոյ ձախակողմեան ընդդիմութիւնը, իրական գետնի վրայ դեռ շատ հեռու է երկրին պատմութեան կիզակետային յանցագործութեան հետ առերեսուելու քաղաքական կողմնորոշում է:

Արեւմուտքի պարագային, Գերմանիոյ մէջ մեր մտածելակերպին ամենամօտ կառոյցը՝ «Die Arbeitsgruppe Anerkennung-Gegan Genozid, für Völkerverst andigung e.v» միութիւնն է, որուն մէջ գործուն ներկայութիւն ունի դոկտ. Թեսսա Յոֆմանը: Մեր միութեան հիմնադրութեան առաջին փուլէն մինչեւ այսօր, վերոնշեալ միութեան հետ ունինք համախոհութեան եւ միտքերու փոխանակման շարունակական ընթացք:

Ցեղասպանութիւնը Հերքողներու Դեմ Միութեան հիմնումէն անմիջապէս ետք, Ֆրանսայի Sur la Diaspora Armenienne (CRDA)-Հայ Սփիւռքի Գիտահետազօտական Կեդրոնին հետ միատեղ գործունեութիւն ծաւալեցինք, սակայն դժբախտաբար մեր կապերը խզուեցան, անոր հիմնադիր անդամներէն Րաֆֆի Հերմոն Արաքսի միութենէն հեռանալէն ետք:

Գերմանիոյ Զեօլն քաղաքին մէջ հիմնուած TÜDAY (Türkiye-Almanya İnsan Hakları Derneği)- Թուրքիա-Գերմանիա Մարդկային

Իրաւանց Միութիւնը նման բարենպաստ աշխատանք կը տանի, կարելի է ձեռքբերումներ ունենալով մանաւանդ Տողան Աքանլըի գործունեութեան շրջանին, սակայն իր գրական ստեղծագործութիւններուն նախապատուութիւն տալէն ետք, անոր թողած բացը բացասական ազդեցութիւն ունենալով, պատճառ հանդիսացած է միութեան անդամներուն մօտ կրաւորական մօտեցումի մը ստեղծումին...

Պերլինի մէջ, 2014-էն ի վեր Հայոց Յեղասպանութեան ճանաչումին ի խնդիր պայքար մղող այլ կառոյց մըն է «Irkcyljda, milliyetçilige, Ayrımcılığa Karşı Aktivist Eylem Birliđi» (AKBI) - ցեղապաշտութեան, ազգայնամոլութեան եւ խտրականութեան դէմ պայքար մղող միութիւնը, որուն հայ ժողովուրդի ցեղասպանութեան դատին հանդէպ ունեցած խիստ դրական մօտեցումները կասկածէ վեր են եւ կը սատարեն մեր միութեան սկզբունքային համոզումներու ամրապնդումին:

«Գ.» - Հայաստանի եւ սփիւռքի մէջ ի՞նչ տարողութեամբ արձագանգ գտած է ձեր միութիւնը:

Ա.Է. - Մեր միութեան գործունեութիւնը թէ՛ Հայաստանի, թէ՛ Սփիւռքի մէջ դրական արձագանգ գտած է եւ ուշադրութեան կ'արժանանայ: Բնականաբար հարկաւոր էր սկզբնական շրջանին ցուցաբերուած վերապահութիւնն ու զգուշաւոր մօտեցումները հասկացողութեամբ ընդունիլ... հայ ժողովուրդի վստահութեան արժանի դառնալու համար պարտաւոր էինք փաստարկներով ապացուցել մեր տարած պայքարին լրջութիւնը, այս դժուարին շրջանին, առանց դոյզն անձկութեան, մեր առաքելութեան սկզբունքներուն հաւատարիմ մնալով, յաջողեցանք դուրս գալ անխուսափելի փապուղիէն:

Մեր նուաճումներու օրինակներէն է ցեղասպանութեան ճանաչումին համար մեր միութեան կազմակերպած ստորագրահաւաքի արշաւին արդիւնքով՝ 11247 ստորագրութիւն կրող դիմումագիրի մը ներկայացումը Շուէտի խորհրդարան, որուն ընդունումով մեր հայցը անոր օրակարգերուն մաս կազմեց: Այս իրադարձութիւնը մամլոյ համատեղ ասուլիսով մը հանրային կարծիքին ներկայացնելէ ետք, անոր գարգացումներուն հետեւելու համար գործակցեցանք տեղւոյն համապատասխան գործունեութիւն ծաւա-

լող «Gesellschaft Schweiz-Armenien» միութեան անդամ մեր բարեկամներուն հետ եւ միասնական ջանքերով մեր հետապնդած նպատակը ունեցաւ բարեյաջող աւարտ:

Մեր միութիւնը, ի պահանջել հարկին, համագործակցած է Ֆրանսայի, Գերմանիոյ, Յոլլանտայի եւ Պելճիքայի հայկական միութիւններու հետ, նոյն պատրաստակամութեամբ սատարելով սփիւռքի Պոնտոսի յոյներու եւ ասորիներու յանուն արդարութեան մղած պայքարներուն, հաւատալով մանաւանդ հայ ժողովուրդին ուրացումի դէմ տարած պայքարի արդարացիութեան: Մեր միջեւ բարեկամութեան եւ զօրակցութեան իւրաքանչիւր հանդիպում, վերջ գտած է ձեռք բերուած նոր փորձի ու փորձառութեան յիշարժան արձանագրութեամբ:

Հայաստան մեր առաջին այցը յատկանշուեցաւ Ֆրանսայի «Հայ Սփիւռքի Գիտահետազօտական Կեդրոն»-ի հիմնադիրներէն Ժան Զլոտ Բեպապճեանի եւ Րաֆֆի Հերմոն Արաքսի ուղեկցութեամբ, աներեւակայելի ընդունելութեան արժանանալու հանգամանքը, ամրագրեց մեր բռնած ուղիին կեդրոնաձիգ նպատակակէտը:

Գերմանիա վերադառնալէ ետք, Հայաստանի պատկան մարմիններուն հետ մեր պատմական հանդիպումի տպաւորութիւնները մեր շրջապատին փոխանցելու նպատակով հաւաքներ կազմակերպեցինք, ըսելու համար, որ պատմական իրականութեան եւ ցեղասպանութեան զոհերու յիշատակը վառ պահող հայ ժողովուրդը, ցեղասպանութիւնը գործած ժողովուրդի ներկայացուցիչներու հանդէպ ցուցաբերեց ազնիւ կեցուածք եւ մտացի մօտեցում ... մենք յարգանքով եւ խոնարհումով շնորհակալութիւն կը յայտնենք Հայաստանի Հանրապետութեան եւ անոր ընդմէջէն բովանդակ հայութեան, մեր այցելութեան նպատակը թէ՛ Հայաստանի թէ՛ աշխարհատարած հայութեան ներկայացնելու լուսաւոր առիթը ընծայելու համար...

«Գ.» - Հրանդ Տիկի սպանութեամբ թեւ թուրքիոյ թապուները մեծ ցնցում կրեցին, սակայն ոչինչ փոխուեցաւ պետութեան դաւադիր քաղաքականութեան հիմնականոյցին մէջ: Ի՞նչպէս կը մեկնաբանեք այս իրավիճակը:

Ա.Է. - Անձնապէս համոզուած եմ, որ երեք գործօններ մեծ դեր կը խաղան թուրքիոյ պե-

տութեան «ուրացում»ի թեզը առ այսօր յաջողութեամբ պաշտպանելուն մէջ:

ա) Յեղասպանութիւնը գործադրող յանցապարտ պետութեան ուրացումի քաղաքականութեամբ յատկանշուող հիմնականոյցը:

բ) Յեղասպանութեան զոհ ժողովուրդներուն յիշողութիւնը:

գ) Հասարակական խիղճը:

Մեկնելով առաջին գործօնէն, որ յանցագործին ուրացումի մեղքն է, յստակօրէն ակընյայտ կը դառնայ հաւաքական համաձայնութեան մը իրապատկերը, որուն ձեւաւորման գլխաւոր պատճառը կը կայանայ, հայ ժողովուրդի բռնազաւթուած ողջ ունեցուածքին երկրին հասարակութեան մաս կազմող հատուածներու եւ անհատներու առաւել կամ նուազ չափերով իւրացումին մէջ, եւ ահա ճիշդ այս պատճառով երկրին քաղաքացիական յառաջադէմ ուժերը պետք է դատապարտեն ցեղասպանութեան քաղաքականութեան, իմա՝ մարդկութեան դէմ գործուած ոճիրը քօղարկող պետական վերնախաւին դէմ շարունակուող յանցագործութիւնը:

Միւս կողմէն՝ երկրին յառաջադէմ, իբրեւ թէ յեղափոխական ոգիով հրապարակ եկած հատուածը, դէռ կը փորձէ ինքզինք համոզել, որ ցեղասպանութեան զոհ ժողովուրդները համագործակցած են *իմփերիայիստական* ուժերու հետ, հետեւաբար հայրենիքի եւ ժողովուրդի պաշտպանութեան համար, իրենց պապերը երկրի խաղաղութեան սպառնացող ուժերուն դէմ, ակամայ *հակաիմփերիայիստական* պատերազմ մղած են... մինչ ձախակողմեան այլազան կառոյցներ, որքան ալ «ազատագրութեան պատերազմի հեքեաթը» իրենց երբեմնի կարծրատիպ հասկացութեամբ չվանկարկեն, այնուամենայնիւ «ցեղասպանութեան ճանաչումին» եւ անոր առնչակից գիտակցական ըմբռնումներուն հանդէպ դէռ չեն կրցած յստակ կողմնորոշում ունենալ:

Այլ խօսք, թէ Թուրքիա միշտ ալ ունեցած է մարդկութեան դէմ ոճիրներ գործելու յանդրանութիւնը, եւ որովհետեւ մինչեւ այսօր անոր գործած ցեղասպանական արարքները մնացել են անպատիժ, Հրանդ Տիկիւնի եւ Սեւակ Պալըքճըի քաղաքական ոճիրներու գուգահեռ՝ քիւրտերու բնակութեան տարածքները գետնին հաւասար դարձնող վարչակարգ մը, պարզապէս կը շարունակէ կայուն մնալ, հակառակ մարդկութեան դէմ ամէն օր գործուող

իր յանցագործութիւններուն:

Այնուամենայնիւ, Հրանդ Տիկիւնի սպանութեամբ թէեւ բեկում մը յառաջացաւ, սակայն այդ մէկը տեղի ունեցաւ ցեղասպանական վարչակարգի լոկ մտածողութեան միաբեւեռութեան հարթակին վրայ, հետեւաբար, պետք է ըսել, որ Թուրքիոյ մէջ դեռեւս գոյութիւն չունի, ո՛չ ցեղասպանութեան ճանաչումի ուղղութեամբ, ո՛չ ալ այս ոճրապարտ վարչակարգը վերացնելու կոչուած, յստակ կողմնորոշումի մը յանգած ընդդիմութիւն... պարզապէս մեր հաւաքական իրականութիւնը կը նմանի նացիներու քաղաքական երբեմնի խաւարամտութեան մէջ տուայտող, 1930-ականներու միապետական ժամանակներուն...:

Հարցին երկրորդ գործօնի քննարկումով, ցեղասպանութեան զոհ հայ ժողովուրդի յիշողութեան տեսանկիւնէն դիտուած խնդրոյ առարկայ հարցը, բոլորովին այլ իրավիճակ կը պարզէ: 1894-ին սկիզբ առնելով, 1915-ին իր գագաթնակէտին հասած հայերու ցեղասպանութիւնը եւ անոր յաջորդող ժամանակահատուածներու մէջ, տարբեր տեսակի բարբարոսութիւններով շարունակուող նմանօրինակ արարքները, հայ ժողովուրդը մղած են իր ձեռք բերած կարելիութիւններով եւ միջոցներով միջազգային հանրային կարծիքը կատարուածին տեղեակ պահելու, մեկնելով պատմական իրականութիւններու ենթահողին վրայ ձեւաւորուած իր մշտարթուն յիշողութեան գործօնի անփոխարինելի հենքէն, ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ եւ ՊԱՅՄԱՆՉԱՏԻՐՈՒԹԵԱՆ հանդէպ ունեցած իր աներեր հաւատքը վառ պահելու...:

Համոզուած եմ, որ եթէ ոչ այսօր, ապա ի վերջոյ, հակառակ ուրացումի քաղաքականութեամբ ցեղասպանութիւնը կրկնող վարչակարգին, հայ ժողովուրդին ձեւաւորած մշտարթուն յիշողութեան գործօնի յաղթանակով, պատմական իրականութիւնը հիմք պիտի հանդիսանայ Թուրքիոյ ապագայի պետական կառոյցներու ստեղծումին, կը հաւատամ նաե՛ւ հայ ժողովուրդի ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ եւ ՊԱՅՄԱՆՉԱՏԻՐՈՒԹԵԱՆ ի խնդիր մղած պայքարի արտակարգ ուժականութեան...: Մէկ խօսքով, ցեղասպանութեան անհերքելի փաստարկներու բարձրաձայնումը կը քօղագերծէ հայ ժողովուրդի ինքնութեան սպառնացող ուրացումի քաղաքականութիւնը, որ սկիզբ առնելով Օսմանեան բռնապետութեան

ժամանակներեն, շարունակուած է հանրապետական Թուրքիոյ ցեղասպան վարչակարգի շրջանին...:

Երրորդ գործօնի՝ մեղաւորին ցեղասպանութեան իրականութիւնը ընդունիլ տալու ճնշամիջոց հանդիսացող հասարակական խիղճի պարագային, պետք է ըսել, որ պարբերաբար, հայ ժողովուրդին ի նպաստ տեղի ունեցող զարգացում մը, հարկաւոր է դիտարկել հասարակական խիղճի հայ ժողովուրդի արդար պահանջատիրութեան հանդէպ գոյացուցած համոզումի եւ զօրակցութեան տեսանկիւնէն:

Դեռ չէ պատահած, որ որեւէ պետութիւն առանց համապատասխան հասարակական կարծիքի բանեցուցած ճնշամիջոցներուն, ինքնըստինքեան Թուրքիոյ կառավարութեան դէմ ցցուելով, «ցեղասպանութեան ճանաչման» ի նպաստ որոշում առնէ, անկախ այն իրողութենէն, որ այլոց առած որոշումները Թուրքիոյ պետութիւնը պարտաւորեցնող իրաւական ո՛չ մէկ բնոյթ եւ ուժ կը կրեն, եւ ահա այս պատճառով, «ցեղասպանութեան ճանաչման ի նպաստ» որոշում առած պետութիւններ, իրենց սեփական շահերու պաշտպանութեան համար, Թուրքիոյ կառավարութեան կողքին կը կանգնին: Ասոր ամենավառ օրինակը Գերմանիան է, որ հակառակ ցեղասպանութենէն դար մը ետք այս պատմական իրականութիւնը ընդունած ըլլալուն, դեռ կը շարունակէ պնդել, որ իր առած «որոշումը», ո՛չ մէկ իրաւական կամ քաղաքական պարտաւորութեան առջեւ կը դնէ Թուրքիան: Աւելորդ մեկնաբանութիւններու կարիք չկայ ընկալելու Գերմանիոյ դրսեւորած այս վարքագիծին երկերեսութիւնն ու սադրանքը... հետեւաբար, այս պատճառով, հանրային կարծիքի լուսաբանութեան եւ ճիշդ կողմնորոշման մէջ, մեծ դեր վերապահուած է քաղաքացիական ողջմիտ կառոյցներուն: Անձնապէս համոզուած եմ, որ նացիական վարչակարգին ընդդէմ, այս երկրբեւեռ աշխարհին մէջ հակա-նացիստական պայքարի ճակատ բանալու համար, հանրային կարծիքի բանեցնելիք ճնշամիջոցները, այս անգամ պիտի յաջողին ծունկի բերելու Թուրքիոյ ուրացումի քաղաքականութեամբ առաջնորդուող վարչակարգը... պետք է հաւատալ, որ հասարակական խիղճը աներկբայօրէն կողմնակից է հայ ժողովուրդի արդար ՊԱՅՄԱՆԱԿՏԻՐՈՒԹԵԱՆ...:

«Գ.»- Ցեղասպանութենէն աւելի քան հարիւր տարի ետք, այլեւս անիմաստ կը թուի ճանաչումի պահանջը: Հայ ժողովուրդի այսօրուան առաջնագոյն օրակարգը պահանջատիրութիւնն է: Ի՞նչ կը մտածէք այս մասին:

Ա.Է.- Արդարութիւնը մերժող մտայնութիւնը հայ ժողովուրդին հանդէպ թշնամանքի շարունակականութիւնը կը վկայէ, ոխի ու ատելութեան սնուցումը ծայրայեղութեան ցուցանիշ է:

Անձնապէս համոզուած եմ, ինչպէս որ աւելի քան 100 տարիէ ի վեր բարձրաձայնուող ցեղասպանութեան ճանաչումի պահանջը իր կարելորութենէն ոչինչ կորսնցուցած է, այդպէս ալ պիտի շարունակէ մնալ մինչեւ արդարութեան հաստատումը...:

Հայ ժողովուրդը իր դատը կը կորսնցնէ միայն այն ատեն, երբ յոյսը կտրէ եւ թէկուզ ամենափոքր չափերով ընկրկում ցուցաբերէ, բան մը, որ առիթ կ'ընծայէ Թուրքիոյ ուրացումի քաղաքականութեան վախճանական նպատակի իրականացման եւ հայ ժողովուրդի ողջ ունեցուածքի մնացորդացի իւրացման, հայ ինքնութեան կենսակերպին յատուկ ցուցանիշներու ոչնչացման եւ տարածաշրջանէն հայու ամենադոյզն հետքերու վերացման... մէկ խօսքով՝ Արեւմտահայաստանի իրենց բնօրրանէն մինչեւ վերջին հայու վտարումին:

Ակնյայտ իրականութիւն է նաեւ այն հանգամանքը, որ կը հաստատէ թէ մեծ նմանութիւն մը կայ նացիներու քաղաքական նպատակներով հրեայ ժողովուրդին հանդէպ գործած ողջակիզումին եւ Թուրքիոյ ուրացումի վարչակարգին, հայ ժողովուրդին հանդէպ գործած ցեղասպանութեան նպատակներուն միջեւ: Երկուքին վախճանական նպատակը գերմաներէնով կը բացատրուի «ENDLOSUNG» բառով, որ կը նշանակէ «վերջնական լուծում»...:

Անկարելի է, ո՛չ միայն հայ ժողովուրդի, այլ ամբողջ Միջին Արեւելքի ժողովուրդներուն խաղաղութեան պայմաններով ապրիլ, եթէ արմատական փոփոխութիւն չկրէ ամբողջ 100 տարի երկրի հասարակութեան հոգեբանութեան տիրապետած այլամերժութեան մտայնութիւնը, եթէ հիմնայատակ չքանդուին ցեղասպանութեան գոհերու բլրակոյտին վրայ կառուցուած Թուրքիոյ Հանրապետութիւնը դեռ կանգուն պահող, քաղաքական

խաւարամտութեան մէջ խարխափող երկրին բոլոր կառոյցները:

Թուրքիոյ ուրացումի վարչակարգը սարսափեցնող ամենամեծ սպառնալիքը՝ հայ ժողովուրդի արդարութեան պահանջքն է, պարզապէս որովհետեւ արդարութեան յաղթանակով վերջ պիտի գտնէ ցեղասպանութեամբ մեղադրուող վարչակարգին գոյութիւնը:

ԳԵՐԱԳՈՅՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ յաղթանակով Թուրքիա պիտի պարտաւորուի հայ ժողովուրդին վերադարձնել անորմէ խլածները, այլապէս «պումերանկ»ի օրէնքով պիտի ենթարկուի ոչնչացման կրկնօրինակին, սպառնալիք մը, որուն առթած սարսափը ինքնին, արդէն կ'ահաբեկէ Թուրքիոյ խիղճը, մանաւանդ այնպիսի պայմաններով, երբ հայ ժողովուրդի պահանջատիրութեան զուգահեռ, կ'եռելեփի եւ ամէն օր նոր զարգացումներ կ'ունենայ նաեւ քիւրտերու եւ ալեւի դաւանանքի հետեւորդ ժողովուրդներու արդարութեան պայքարը...:

«Յատուցումը, Յողն ու Ունեցումը» արդարութեան անփոխարինելի եւ անշրջանցելի պահանջներն են, որոնք առանց առարկութեան պէտք է բաւարարեն պահանջատիրութեան նիւթական պայմանները ... սակայն պէտք է հարց տալ նաեւ, թէ հատուցումի ի՞նչ տեսակով ու չափերով կը հակակշռուին անծայրածիր անապատներու տարածքին իրենց կեանքը կորսնցուցած աւելի քան 1.500.000 հայերու, ինչպէս նաեւ ինքնութեան անեացման վտանգին ենթակայ, ամէն օր, ամէն պահ գոյութեան պայքար մղող աշխարհատարած վերապրողներու անչափելի կորուստները... նիւթական ի՞նչ հատուցումով գէթ կը մեղմանայ մարդկութեան հանդէպ գործուած ցեղասպանական այսօրինակ ոճիրին ահաւորութիւնը...:

Մեր միութիւնը կը հաւատայ հայ ժողովուրդի արդարութեան ի խնդիր մղած պահանջատիրութեան պայքարի յաղթանակին, կը մատնանշէ ուրացումի քաղաքականութեամբ գործող վարչակարգին անօրինակաւորութիւնն ու հետեւաբար կը ձգտի անոր վերացման, միաժամանակ ընդգծելով, որ այսպէս կոչուած «քաղաքակիրթ աշխարհը» մեղսակից է ցեղասպանութեան իսկական ոճրագործներու՝ օսմանցի «Իթթիհատ վէ Թերաքքի»ի եւ անոր բնական շարունակութիւնը հանդիսացող Թուրքիոյ Յանրապետութեան

իրարայաջորդ վարչակարգերու արիւնալի հիմնականոյցներուն, եւ ասոնց կողքին դատապարտելով նաեւ Թուրքիոյ հասարակութեան իսլամ ժողովուրդներու խճանկարին մաս կազմող, ցեղասպանութեան մեղքէն ոչ այնքան հեռու գտնուող թուրք, քիւրտ, լազ, չերքէզ, արաբ, պօշնաք, առնաւուտ, փոմաք եւ այլ հատուածներու ունեցած դերակատարութիւնը գործուած յանցագործութեան մէջ, անոնք նոյնքան մեղաւոր են եւ տեղ պէտք չէ ունենան միջազգային ընտանիքին մէջ, այնքան ատեն, որ ժխտումի եւ ուրացումի իրենց տարբերակներով, կը շարունակեն լծուած մնալ Թուրքիոյ հայատեացութեամբ առաջնորդուող քաղաքականութեան սայլին:

Համոզուած ենք, որ հայ ժողովուրդին նման, նաեւ անոր ճակատագրակից տուժած ժողովուրդները՝ ինչպէս յոյները, ասորիներն ու եգիպտիները պէտք է վերատիրանան իրենց իրաւունքներուն... անշրջանցելի պահանջք մը, որ մեր կարծիքով հայ ժողովուրդին հետ հաշտութեան ճանապարհի բացման առաջնագոյն պայմանն է...:

Երկրորդ եւ աւելի կարեւոր պայմանը՝ մեր քաղաքացիական հասարակութեան մէջ հոգեբարոյական համամարդկային արժէքներու հանդէպ կայանալիք գիտակցութեամբ, այսուհետեւ մարդկութեան հանդէպ գործուող յանցագործութիւններու բեռին տակ չմնալն է, այլապէս կարելի չէ հաւատալ ցեղասպանութեան եւ նմանօրինակ մեղքերով ծանրաբեռն ժողովուրդի մը «ներողութեան» եւ «հաշտութեան» խօսքերուն, մինչ երկրին պետական պաշտօնական գաղափարախօսութեան մակարդակով եւ ամենայն լրբութեամբ, դեռ կը շարունակուի կիրառուիլ ուրացումի քաղաքականութիւնը...:

Համոզուած ենք, որ քիւրտ ժողովուրդի սպառնալից ընդդիմութիւնը, վաղ թէ ուշ վերջ պիտի դնէ իր ցեղասպանական էութեամբ գոյատեւող Թուրքիոյ ներկայ վարչակարգին:

Ամէն բան սահման մը եւ աւարտ մը ունի...:

Կը հաւատանք, որ Յիթլէրի կիրառած բռնապետական քաղաքականութեան ունեցած վախճանին նման, օր մը վերջ պիտի գտնէ իթթիհատականներէն մինչեւ հանրապետական Թուրքիա, շարունակական ընթացքի մէջ եղող երկրին խաւարածին վարչակարգը...:



ՈԳԵԿՈՉՈՒՄ

«ԱԶԳԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԳՈՄԻՍԱՐՈՒՄԻ,
ԿԱՆԱՆՑ ՈՒ ԵՐԵԽԱՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒՄԻ,
ԴԱՆԻԱԿԱՆ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԿԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ
«ՏՕԳԹԵՕՐ» ԼԷԲՍԻՈՒՄԻ ԳԵՐՄԱՆ-ԱՐԵՎԵԼԵԱՆ
ՄԻՍԻՈՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ»¹

ՄԱՅՐ ՔԱՐԷՆ ԵՓՓԷԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Անի Ֆիշենկոճեան
Պատմական Գիտութիւններու Թեկնածու

«Հայը հայասեր չի կրնար ըլլալ, այլ ազգասեր: Ես ազգասեր հայ մըն եմ եւ ինչ որ կատարած եմ ու կը կատարեմ ազգասիրական մղումով է ...»

Քարէն Եփփէ

Համիտեան վարչակարգի որդեգրած հայատեաց քաղաքականութեան լուրջ տարածուած էր ամենուրեք: Սկսած էին ցոյցեր կազմակերպուիլ, մամուլի մէջ կը տպագրուէին հակասութեանակալ յօդուածներ, մեկնաբանութիւններ եւ միաժամանակ կը հրապարակուէին կոտորածներու լուրեր եւ ականատեսներու յուշագրութիւններ:



Այս իրադարձութեան արձագանգը սկսած էր ալեկոծել մարդկայնօրէն բաբախող ազնիւ սիրտերը: Բազմաթիւ կազմակերպութիւններ եւ անհատներ Արեւմուտքէն կը փութային Արեւելք, իրենց ազնիւ լուման դնելու այդ ստեղծագործ ժողովուրդներու փրկութեան:

Եան: Որքան մեծ էր կատարուելիք աշխատանքը, Նոյնքան եւ աւելի մեծ ու անբուժելի էին ցաւն ու կորուստը: Այս ծովածաւալ գործի յորձանուտին մէջ պիտի յայտնուէր հեռաւոր Դանիայէն երիտասարդ Քարէն Եփփէն, որուն համար այլեւս հայրենի ափերուն խաղաղ ու անհոգ կեանքը հրապուրիչ չէր: Նոյնիսկ սեփական ընտանիք կազմելու գաղափարը վանած էր եւ վճռած էր բնութեան իրեն պարգեւած մայրական գորովը նուիրել հայ որբերուն՝ անոնց ինամքի ու դաստիարակութեան մէջ գտնելով իր կեանքի գերագոյն իմաստը:

Օր. Քարէն Եփփէ ծնած է 1 Յուլիս 1876-ին, Դանիոյ Իպլանտիա թերակղզիի Կուլինկ գիւղը: Համեստ ընտանիքի երդիքին տակ կը դաստիարակուի, կը ստանայ բարձրագոյն կրթութիւն եւ կը տիրապետէ քանի մը լեզուներու: Ուսումը կատարելագործելու համար կը մեկնի Օրտրուփ արուարձան: Անհանգստութեան պատճառով կը մտնէ ուսուցչական ասպարէզ: Այդ տարիներուն դանիական եւ գերմանական մամուլէն կը տեղեկանայ հայ ժողովուրդի ողբերգութեան մասին:

1903 թուականին, 27-ամեայ Քարէն Եփփէն կ'անդամակցի Գերմանիոյ Արեւելեան միսիոնարութեան, որուն ղեկավարն էր հայ ժողովուրդի բարեկամ, դոկտ. Եոհաննէս Լեփսիուսը: Նոյն թուականին Եփփէ կը մեկնի Եդեսիա (Ուրֆա) եւ կը ստանձնէ Միլլեթ խանում միսիոնարութեան կազմակերպած որբանոցի տնօրէնութիւնը: Այդ որբանոցը

¹ 9 Յուլիս 1935թ.-ին Բերիոյ թեմի Ազգային առաջնորդարանի կողմէ պատրաստուած Օր. Քարէն Եփփէի մահուան մահազդին վրայ այսպէս գրուած է:

ԳԱՆՁԱՍԱՐ

պատասպարած էր Ուրֆայի 1895 թուականի կոտորածներուն ընթացքին որբացած հայ երեխաները: Այդ օրը ճակատագրական կը դառնայ Եփփէի համար. ան իր կեանքը կը կապէ հայ ժողովուրդին հետ: Հայերէն, արաբերէն եւ թրքերէն կը սորվի ընդամենը մէկ տարուան ընթացքին:

1908-ին Զարէն Եփփէ կը վերադառնայ իր ծննդավայրը դասախօսութիւններ կարդալու, սակայն նոյն ժամանակ կ'իմանայ Կիլիկիոյ մէջ կատարուած նոր ջարդերու մասին, զոր խլած էր 20-30 հազար հայերու կեանքը: Ան ամէն ինչ ձգելով կը վերադառնայ:

1915-ի Ապրիլին Ուրֆա կը հասնին Չէյթունի առաջին կարաւանները: Եփփէ օգտագործելով իր բարեգործի իրաւունքները կը մտնէ աղետալներու կարաւաններուն մէջ, անոնց հայթայթելով սնունդ եւ հագուստ, միաժամանակ կը կազմակերպէ բժշկական օգնութիւն: Մինչեւ Ուրֆայի հերոսամարտի օրերը (1915-ի վերջը)՝ Զարէն Եփփէ կ'օգնէ Ուրֆայէն անցնող հայ գաղթականներուն: Ան չընկրկելով իրեն սպառնացող վտանգին, ընդարձակ բնակարանը կը դարձնէ հայ փախըստականներու պատասպարան:

1915-էն մինչեւ 1917-ի գարունը Զարէն Եփփէ իր կեանքը կ'անցընէ հայ տարագիրներու կողքին: Որպէս ականատես վկան կը հանդիսանայ անյուսալի կացութեան մատուած հայ բազմահազար կանանց ու երեխաներու տառապանքներուն, կ'ապրի հայ տարագիրներու տեղահանումներու եւ զանգուածային ջարդերու սարսափով, աչքերով կը տեսնէ գաղթավայրերու մէջ փռուած մարդկային կմախքները, Տիգրիսի ու Եփրատի հոսանքներուն յանձնուած անհամար կիներու եւ երեխաներու դիակները:

Ականատեսի՝ Զարէն Եփփէի, խորագագ սիրտը չի դիմանար, առողջութիւնը կը վատթարանայ եւ ստիպուած ժամանակաւորապէս կը մեկնի Գոբենիակըն՝ եւ կը յանձնուի բժիշկներու խնամքին:

Ապաքինուելէն ետք օրիորդ Եփփէն կրկին կը տեսնենք իր առաքելութեան մէջ: Իր շնորհիւ շուրջ 2.000 հայ կիներ ու երեխաներ կը փրկուին գերութենէն եւ թրքացման վտանգէն: Իր նախաձեռնութեամբ կը հիմնադրուին արհեստանոցներ, ուր հայ այրիացած կիներ այդ աշխատանքին մէջ ներգրաւուելով իրենց ապրուստը կը հոգային: Ան բժշկական օգնութիւն կը կազմակերպէ Հալէպի Սուլէյմանիէ

եւ Համիտի շրջաններուն մէջ ապրող հայ տարագիրներուն՝ փրկելու զանոնք համատարած համաճարակէն: Իր միջամտութեամբ դանիական «Հայերու Բարեկամութեան Ընկերութիւնը» եւ դոկտոր Լեփսիուսի միսիոնարական ընկերութիւնը կ'որոգեգրեն իւրաքանչիւրը 300 հայ որբ երեխայ: Կը կազմակերպուի 600 որդեգիրներու հայեցի ուսուցումը ազգային վարժարաններու մէջ:

Յաւրջ պետք է արձանագրենք, որ կարգ մը այլազգիներ կը հրաժարէին երեխաները վաճառելէ. այսպիսով հայ մայրերը չբաժնուելով իրենց զաւակներէն կ'որոշէին մնալ իրենց զաւակներուն մօտ:



Որբահաւաքի աշխատանքներու ընթացքին Զարէն Եփփէ հայ որբերը այլազգիներու *հարեմներէն* հաւաքելու գործով միայն չի զբաղիր. ան հարկադրուած էր նաեւ ժամանակ մը հոգալ անոնց ապրուստը եւ արհեստ կամ ձեռագործ սորվեցնել: Ազատած որբերուն, որոնք մեծ մասամբ մոռցած էին իրենց մայրենի լեզուն, Զարէն Եփփէ ջանք չէր խնայեր կրկին հայերէն սորվեցնելու, ինչպէս նաեւ տարրական կրթութիւն տալու, որքան որ կը ներէին իր սահմանափակ ժամանակն ու միջոցները:

Զարէն Եփփէի շնորհիւ ազատած հայ որբերը կը տեղաւորուին հետեւեալ եղանակով.-

ա) Կը յանձնուէին հայ թերթերու մէջ տպուած փնտռուքներու միջոցով գտնուած ազգականներուն.

բ) Արհեստ սորվելով ինքնաբաւ կը դառնային.

գ) Կարճ ժամանակ մը մնալէ ետքը զբաղում կը գտնէին եւ կը հեռանային.

դ) Յայ որբուհիներէն ոմանք կ'առնուէին իբր սպասուհիներ.

ե) Ոմանք ալ կը նշանուէին եւ կ'ամուսնանային:

Այս ապացոյց է այն բանին, որ Քարէն Եփփէ հայ որբերու ինամքի ու դաստիարակութեան գործին ձեռնարկելով, չէր առաջնորդուեր միսիոնարական ընկերութեան կանոններով ու հրահանգներով, այլ միայն ու միայն կը նուիրուեր իր սիրած որբերու հայեցի դաստիարակութեան:

Քարէն Եփփէի գթառատ եւ հայապաշտպան գործունեութեան իր աջակցութիւնը կը ցուցաբերէր նաեւ Դանիոյ մէջ ստեղծուած «Յայ Բարեկամներու Դանիական Ընկերութիւնը»:

11 Մարտ 1926-ին Քարէն Եփփէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Սահակ Բ. Խաչայեանէն ստացած «Յայրապետական Օրինաբեր Կոնդակ»-ին առթիւ հետեւեալ շնորհակալական նամակը կը ստորագրէ. (ստորեւ կ'արձանագրենք ձեռագիր նամակը ամբողջութեամբ):

Յալէպ 27 Մարտ 1926²

**«Ամենապատիւ
Տ. Տ. Սահակ [Բ.] Խաչայեան
Վեհափառ կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ
Պէյրութ
Վեհափառ Տէ՛ր,
Անհուն ուրախութեամբ եւ շնորհակալութեամբ ստացած եմ Ձերդ վեհափառութեան 11 Մարտ 1926 թուակիր եւ 29 հմր. [համարակալ] հայրապետական օրինաբեր կոնդակը, տեղոյս առաջնորդ Չերաշնորհ Արտաւազդ ծ. Վրդ. Սիւրմէեանի ձեռամբ:
Գործը՝ զոր կը տանիմ 4-5 տարիներէ ի վեր, իր աստիճանական զարգացումով, ներկայիս ստացած է այնպիսի ձեւ եւ ծաւալ, որու մասին երբեմն մտածած ատեն, մարդկայնօրէն յուսահատութեան կը մատնուիմ,**

կարծելով որ ոյժերս չպիտի զօրեն բաւարարելու համար անոր զանազան ճիւղաւորումները, որովհետեւ ինքզինքս բոլորովին մինակ ու առանձին զգացած եմ ու կ'զգամ[կը զգամ], իմ գործի՝ գէթ ժամանակաւոր տեւականութիւնը ապահովելու իմ ճիգերուն եւ ոգորումներուն մէջ:

Թերեւս ակնարկածս յուսահատութիւնը, կարենար բարոյալքել զիս, եթէ չունենայի այն խոր հաւատքը թէ մարդկային հասողութեան անձանօթ ու անկից գերիվեր կայ ոյժ մը, որ իր ամենայն օր ձեռքերով կանգուն կը պահէ բոլոր անոնք, որոնք՝ իրեն ապաւինիլ գիտեն ու կրնան:

Իմ այս հաւատքին եւ ի՛նչ տարակոյս որ իմ բարեկամներու սրտաբուղիս աղօթներուն շնորհիւ, միշտ ալ կ'զգամ [կը զգամ] զիս առաջնորդող այդ անտեսանելի զօրութիւնը, որ նոր ոյժ ու կորով կը ներշնչէ ինձ եւ կ'ըսէ ԲԱԼԷ՛:

Ձեր սրբազնութեան երանաւետ կոնդակը ահա մէկ գործնական ապացոյցն է այդ աղօթքներուն եւ մաղթանքներուն, որուն համար իմ սրտագին շնորհակալութիւններս:

Պիտի հետեւիմ այդ ձայնին ու պիտի քալեմ միշտ, իմ ոյժերուն ներած չափով ամոքելու համար խորախորունկ վերքերը դժբաղդ ազգի մը, որ իր մէջ այնքան զնահատելի արժանիքներ ունի անթեղուած:

Խնդրելով որ հաճիք ընդունիլ շնորհակալութիւններն ու յարգանաց հաւաստին, եւ միշտ անպակաս ընել Ձեր աղօթքները իմ գործին համար»:

**Կը մնամ Ձերդ
Karen Jeppe**

Անհաս էր Եփփէի սերն ու յարգանքը հայ ժողովուրդի հանդէպ: Ան դարձաւ հայ առաքելական եկեղեցւոյ զաւակ: Այսպիսով Քարէն Եփփէ իր քայլով վառ օրինակ հանդիսացաւ հայ մարդու կերպարին, ազգային արժանապատուութեամբ եւ հայ ապրելու գիտակցութեամբ պատուաստեց հայ որբը՝ պատրաստեց վաղուան հայ մարդը:

Յալէպի Ազգային գերեզմանատան մէջ ութսուն եւ հինգ տարիէ հանգիստ կը ննջէ հայ ժողովուրդի եւ յատկապէս հալէպահայութեան կողմէ ՄԱՅՐԻԿ յորջորջուած Դանիացի

² Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, արխիւատուն, Բերիոյ թեմի, հաւաքածոյ 3, ցուցակ 1, թղթածրար 104, էջ 1-2:

ԳԱՆՁԱՍԱՐ

Զարեն Եփփեն: Հայ մայրիկի՝ Զարեն Եփփեի անունը կ'ամռնչուի որքան Ուրֆայի հայերու պատմութեան, Նոյնքան եւ աւելի ե՛լ Սուրիոյ հայ համայնքի պատմութեան, ե՛լ որչ Սփիւռքի կազմաւորման, որբահաւաքի, այրիներու օգնութեան եւ այլն:



1947թ. Հոկտեմբերին Զարեն Եփփեի յիշատակը յաւերժացնելու առաջադրանքով Ազգային Իշխանութիւնը թեմի առաջնորդին հետ գնահատանքի արժանի քայլ կը կատարէ Նոր Գիւղի մէջ Ազգային Ճեմարանը իր անունով կոչելով՝ սերունդներուն փոխանցելու անոր պայծառ կերպարի պատմութիւնը: Այս առթիւ Թեմի Առաջնորդ Տ. Չարեհ Սրբ. Եպիսկոպոս Փայասլեան կ'ըսէ. **«Այսօր Հալէպի մէջ շատ կան երկրորդական վարժարաններ, անգլիական, ամերիկեան, ֆրանսական կրթարաններ, սակայն անոնք չեն պատրաստեր ճմարիտ եւ գիտակից հայ հանրային մարդը, որուն այնքան պէտք ունի այսօր գաղթահայութիւնը, ազգային իր գոյութիւնը անաղարտ ու ապահով պահելու համար հազար**

ու մէկ յորձանքներու, փոթորիկներու դէմ: Հայ ծնողներու վրայ կը ծանրանայ պարտականութիւնը գիտակցելու այն անփոխարինելի դերին, զոր կոչուած է կատարելու Հայ երկրորդական վարժարան մը, վաղուան հայ մայրերն ու հայրերը պատրաստելու համար»³:

Իրօք, Ազգային Զարեն Եփփե ճեմարանը եօթնասուն եւ երկու տարիներու իր գոյերթին ուսանողը զինեց գրչով, յղկեց գաղափարով, դաստիարակեց վաղուան քաղաքացի եւ վաղուան հայ մարդը:


Հիւրընկալեց մտաւորական ուսուցիչներու փաղանգ մը:

Պատրաստեց հայ ուսուցիչը, հայ եկեղեցականը, հայ խմբագիրը, հայ լրագրողը, հայ մտաւորականը, հայ մարզիկը, հայ արուեստագետը եւ աշխարհով մէկ սփռեց զանոնք, որպէս առաքեալներ՝ պատգամելու Զարեն Եփփեի խօսքը:

Յարգելի՛ ճեմարականներ, Ազգային Զարեն Եփփե ճեմարանի աշխարհացրիւ շրջանաւարտ հայորդիներ՝, այսօրուան մարտահրաւերներու դէմ չընկրկինք: Այլ միանանք մէկ գաղափարի շուրջ՝ հաւատանք մեր ուժերուն, ինչպէս որ հաւատացած էր Զարեն Եփփեն. **«միշտ ալ կ'զգամ [կը զգամ] զիս առաջնորդող այդ անտեսանելի գորութիւնը, որ նոր ոյժ ու կորով կը ներշնչէ ինձ եւ կ'ըսէ «ԲՍԼԷ՛»»,** յուսանք գալիքին եւ նպաստենք հայաստեղծման գործընթացին:

Թող յիշատակը անթառամ մնայ բոլոր այն նուիրեալներուն, որոնք իրենց կեանքով, գրիչով ու պատգամներով օրինակ հանդիսացան որչ հայութեան:

³«Արեւելք» օրաթերթ, 26 Հոկտեմբեր 1947, Հալէպ:




ՅԱԲԵՐԺՈՒԹԵԱՆ ՍԵՄԻՆ

(Քարեն Եփփեի մահուան 85-ամեակին առիթով)

Անի Բրդոյեան-Ղազարեան

Չարմանալի ԷՄԱՐԴԸ: Աւերողը, քանդողը, աքսորողը, տարագրողը, սպանողը... մարդն է, նոյնպէս այդ բոլորէն փրկողը: Չարն ու բարին անընդհատ կը պայքարին երկրի



վրայ: Նիւթականն ու հոգեւորը, լոյսն ու խաւարը, բարձրը եւ ստորինը, առաքինին ու ընչաքաղցը, մարդկայինն ու անմարդկայինը... բոլորը գոյ են ԷՄԱՐԴուն մէջ: Յարափոփոխ յաւերժութիւնն է սա՛ կեանքը իր երկու եական երեսներով: Երկու ծայրայեղութիւններուն տիրողներուն անունները կ'երեւին, կը գրուին ու կը յիշուին սերունդներու փոփոխութեամբ.

«Մեր նորածինները Թալիաթ, Էսվեր, Ճեմալ եւ Յամիտ պիտի անուանենք, նոյնիսկ եթէ անոնք Էգ ծնին», հեռատեսիլէն յայտնեց թուրք մը, ի լուր ցեղասպանութեան ճանաչման վերջին իրադարձութիւններուն:

Մինչ մտապատկերիս մէջ ուրուագծուե-

ցաւ արձանին շերմ, հարազատ, համեստաբոյր, մայրական, պարուրող տեսքը: Առաջին արձանն էր, որ տպաւորած էր զիս, երբ կը յաճախէի այդ հսկայ, ի՛ր անունը կրող հաստատութիւնը, ուր բակին մէկ անկիւնը զետեղուած է արձանը:

Անդին, դիմատետրի էջերուն մէջ յաճախ կ'երեւին տարբեր տարեշրջաններու շրջանաւարտ սերունդներուն, տարբեր երկիրներու մէջ ցրուած հայորդիներուն խմբանկարները: Անոնք կը յիշեն նոյն հաստատութեան անունը, որ յաւերժացումն է հայ որբերու ու այրիներու փրկութեան համար ամէն հաճոյք, կեանքի վայելք ու փառք ոտնակոխող, ֆիզիքապէս մայրութիւնը չապրած, բայց հազարաւոր տարագրեալներու մայրը կոչուած դանիացի Քարեն Եփփեին:

Մարդը երբ կը ծնի ձեռքը բռունցք մըն է, ուր կը պահուի գաղտնիք մը, առաքելութիւն մը՝ միայն իրեն վերաբերող:

Շատեր կու գան ու կ'անցնին առանց նոյնիսկ այդ գաղտնիքին գոյութեան անդրադառնալու: Ոմանց կը վիճակուի բացայայտումը: Անոնց՝ միայն որոնց համար անձնականը գոյութիւն չունի. անոնք կեանքի բացած դռներուն դէմ չեն ընկրկիր, կ'ընտրեն միայն մէկը՝ ամենամութը, ամենածանրը, ամենատանջալիցը, ամենանուիրականը... ամենամարդկայինը, իոն՝ ուր կ'ոտնակոխուի նիւթը, կամ, գոյութեան պարագային, կ'օգտագործուի նուիրումի, զոհողութեան, կեանքի մը փրկութեան համար: «Ես»ը պատնէշել կը ջանայ ուրիշ «ես»երու պատճառած ակերն ու կտորածը:

Յոս գոյնը, լեզուն, ազգի մը պատկանելիութիւնը պարզապէս անուններ են տրուած ընդհանուր «մարդ» եակի կոչումին: Լուսիա

ԳԱՆՁԱՍԱՐ

Մը Աստղիկի մը միացնելու համար գոհողությունները կը դիզուին, ոչ մէկը խոչընդոտի կը վերածուի, եւ կը քակուի գոհողութեանց կծիկը կամքին թելադրութեամբ. ամէն միջոց

կութեամբ, նոր խանդավառութեամբ, առաջինէն տարբեր, բայց առաջինին կառչած. այնպէս, ինչպէս ցանած սերմին ծլարձակումը տեսնող ու հողի պարարտումով, ջուրի յագե-



ի գործ կը դրուի գանոնք միացնելու՝ երկու կորուսեալ, տարագիր, պետեւորներու վրաններուն մէջ ողջ ու բաժնուած հարագատներ. միացնելու երկու ցաւեր, որ ամոքուին անոնք իրարմով ու դառնան մէկ, անոնց միանան տասներ, հարիւրներ, հազարներ ու ցաւերը վերանան մի առ մի: Անցեալի թախիծը, կորուստն ու վիշտը կամաց-կամաց սպիանայ ու նոր միջավայրի մէջ հիւնը նորոգուի, շնորհները, տաղանդները բացայայտուին ու նորի ստեղծումով մշուշոտի հինին պատճառածը:

Ափերը պարզած կը շարունակէ տարածել սեր, բարիք ու իւրաքանչիւր նուաճումէ ետք, իւրաքանչիւր որբի եւ այրիի ժպիտին մէջ կը մոռնայ ի՞րը, կը լիանայ անոնց ժպիտներով, կ'երջանկանայ ու ինք եւս անցեալը կը ջնջէ կարօտեալներուն անցեալին մոռացում պարգեւելով եւ կը նուիրուի միայն անոնց, առանց նոյնիսկ յիշելու իր ծննդավայրը, ծնողը, տունը հայրական: Կաթիլ մը յոյսի ներշնչումը առաջնահերթութիւն է. որբուկ մը գրկելը, անոր արցունքը սրբելը, գայն կշտացնելը, սիրելը ամէն ինչէ վեր է:

Ու կը դիտէ ան իր կերտածը, կը շարունակէ կերտումի իր աշխատանքը նոր երջան-

ցումով կը ջանայ անհատը մէկ ծիլը դարձնել երկու-երեք..., հաւատքն ու յոյսը կ'ընկերանան ու նոր ծիլերը ծառի վերածելու ջանքը հաճելի կը դարձնեն:

... Եւ արձանացած յաւերժութիւնը կը դիտէ իր անունը կրող հաստատութեան բակէն



ամէն ինչ: Կը փայլի երբեմն պրոնզեայ հպարտ կեցուածքով, արեւուն շողերը կը յըստակացնեն ազնիւ դէմքին մանր կնճիռները, պարուրող ժպիտը, որ կը ծածկէ աչքերուն թախիծը: Հայեացքով կը գրկէ նոր պատանիները՝ նոր ծիլերը եւ մտովի կը հաշուէ իր ջանքերով վերապրողներուն սերունդները:

ԵՐԱԽՏԱՐԺԱՆ ՆԱՅՐԱՊԵՏԸ

ԾՆՆԴԵԱՆ 200-ԱՄԵԱԿ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՏՏ ՄԿՐՏԻՉ Ա. ՎԱՆԵՑԻ ԽՐԻՄԵԱՆԻ
(1820-1907)

Արփի Յարութիւնեան-Սանտեան

Խրիմեան հայրիկ ծնունդ առաւ հայ ժողովուրդին ծոցէն, հանդիսացաւ պատմական, կրօնական, քաղաքական, մշակութա-



յին, կրթական եւ ազգային ազատագրական պայքարի մեծագոյն, պանծալի դէմքը:

Խրիմեան հայրիկ խոր հաւատքով, անհունօրէն ծառայեց, հաւատարմօրէն, անշա-

հախնդիր գործեց, խիզախօրէն քարոզեց, հայրաբար խրատեց, անկոտրում կամքով պայքարեցաւ, մարդկային անարդարութեան դէմ: Եղաւ համեստ ու տիպար ուսուցիչ, բազմաբեղուն խմբագիր ու գրագետ, օրինակելի վարդապետ ու վանահայր, քաջարի առաջնորդ ու պատրիարք եւ վերջապէս 1892-ին՝ 72 տարեկանին, արդարօրէն ընտրուեցաւ մեր արժանաւոր 125-րդ Ամենայն Յայոց Կաթողիկոսը:

Մկրտիչ Խրիմեան ծնած է անցեալի հզօր Վան քաղաքը, Վասպուրականի քաջերու բնօրրանը, հայ ազգային, ազատագրական պայքարի մեծագոյն միջնաբերդին մէջ:

**Ախ, դու սիրուն Վան, իմ մայրաքաղաք,
Արծրունեաց գահ դու փառք ու պարծանք,
Թէեւ վատ թուրքին դու գերի դարձար,
Բայց հայ ազգը միշտ քեզմով է հպարտ:**

Մ. Խրիմեան նախնական կրթութիւնը ստացած է վասպուրականի Լիմ եւ Կտուց անապատներու վանական դպրոցներուն մէջ, որոնք ըստ աւանդութեան, 4-րդ դարուն սկիզբը հիմնադրած է Գրիգոր Լուսաւորիչը: Լիմ անապատին մէջ կառուցուած են Ս. Աստուածածին, Ս. Կարապետ եւ Ս. Գեորգ եկեղեցիները, իսկ Կտուց անապատը եղած է գրչութեան կեդրոն, ուր գրուած են բազմաթիւ ձեռագիրներ, ունեցած է հարուստ մատենադարան: Այս կրօնաբոյր մթնոլորտին մէջ Խ. Յայրիկ ուսանած է գրաբար եւ հայագիտութիւն:

1842-ին առաջին անգամ որպէս ուխտաւոր կ'այցելէ Էջմիածին, Նոյն տարին կու գայ Պոլիս եւ կը զբաղի ուսուցչութեամբ, ստանձնելով հայերէնի եւ ազգային պատմութեան դասեր Խասգիւղ թաղամասի Օրիորդաց

վարժարանին մեջ:

1847-ին կը ճամբորդէ Անդրկովկաս, Պարսկաստան եւ Երուսաղէմ:

1851-ին Կ. Պոլսոյ Յայոց Պատրիարքի յանձնարարութեամբ մեկնած է Կիլիկիա՝ կրթական գործի զարգացման նպաստելու եւ հայութեան կեանքը ուսումնասիրելու նպատակով:

1853-ին կրկին վերադարձած է Վան:

1854-ին Աղթամարի մէջ կը ձեռնադրուի վարդապետ:

Արագիլ, սոխակ վաղուց եւ չուած, Անգղն ու բազէն այնտեղ բոյն դրած, Իր խաչքարերով տաճարի Աղթամար Մեծ լիճի սարին անտերունչ կու լայ:

Ան արթուն, խանդավառ հոգեւորական կը դառնայ:

Խրիմեան Յայրիկը Որպէս Խմբագիր

Խրիմեան հայրիկ հրատարակած է «Արծուի Վասպուրական» ամսագիրը, ապա՝ շաբաթաթերթը՝ նախ Կ. Պոլսոյ մէջ 1873-74-ին, ապա՝ նաեւ 1858-64 Վարազայ վանքին մէջ:



Սա Արեւմտահայաստանի տարածքին հրատարակուող առաջին պարբերաթերթը եղած է: Խմբագիրներ՝ Մ. Խրիմեան եւ Մ. Անանեան: Անոնք լուսաբանած են եկեղեցական կեանքին, Յայաստանի պատմութեան, կրթութեան եւ բարոյական դաստիարակութեան առնչուող հարցեր:

Մեծ բաժին յատկացուցած է հայ դպրութեան, մշակոյթի գործիչներուն՝ Մ. Մաշտոցի, Սահակ Պարթեւի, Մովսէս Խորենացիի, Եղիշէի, Դաւիթ Անյաղթի: Խրիմեան քարոզած է ազգային ազատագրական գաղափարը, դարձած է Արեւմտեան Յայաստանի գաւառներու ժողովրդավար մտաւորականութեան հայեացքներուն արտայայտիչը, պայքարած է Ազգային սահմանադրութեան իրա-

կանացման համար:

«Արծուի Վասպուրական» թերթին աշխատակցած են Գ. Սրուանձտեանցը, Ա. Թոխմանեանը, Ս. Գրիգորեանը, Ա. Բժշկեանը, Րաֆֆին (Յակոբ Մելիք Յակոբեան) եւ ուրիշներ:

Խրիմեան Յայրիկը Որպէս Վանահայր

Վարազայ վանքը հանդիսացած է կրօնական, կրթական ու մշակութային կեդրոն:

1857-ին Վարազայ վանքի վանահայր կարգուած է Խրիմեան Յայրիկ (Մկրտիչ Ա. Վանեցի), հիմնած է տպարան եւ շարունակած է «Արծուի Վասպուրականի» շաբաթաթերթի հրատարակութիւնը:

1858-1864 Վարազայ վանքին մէջ հիմնած է ժառանգաւորաց դպրոց, ուր դասաւանդած են եւրոպական կրթութիւն ստացած ուսուցիչներ: Ժառանգաւորացը եղած է նոր ձեւի դպրոց, ուր վերացած են աշակերտներու մարմնական պատիժները, մուտք գործած են մանկավարժութեան յառաջադէմ ձեւեր ու դասաւանդուած են կրօնի, պատմութեան, աստուածաբանութեան, երաժշտութեան, ճարտարապետութեան, աշխարհագրութեան, հայոց պատմութեան եւ հայրենագիտութեան նիւթեր:

1862-ին դպրոցը տուած է շրջանաւարտ առաջին հունձքը, որուն մաս կազմած են Գարեգին Սրուանձտեանցը, Արսէն Թոխմանեանը եւ ուրիշներ: 1880-ին ժառանգաւորաց դպրոցը վերածուած է երկրագործական վարժարանի: Եւրոպայէն բերած են գիւղատնտեսական գործիքներ, գնած են ընդարձակ հողեր սոյն աշխատանքը գործնական հիմքերու վրայ դնելու համար:

1896-ին Վարազայ վանքը կողոպտուած է թուրքերու կողմէ, վարժարանի ուսուցիչներէն ու աշակերտներէն մաս մը սպանուած են:

1915-ին Վարազայ վանքը լքուած է, իսկ ներկայիս հիմնայատակ կործանած է:

Երեւանի Մեսրոպ Մաշտոց Մատենադարանին մէջ պահպանուած են Վարազայ վանքէն ներս ընդօրինակուած տասնեակ ձեռագիրներ, որոնց մէջ ուշագրաւ են Գրիգոր Նարեկացիի «Մատեան Ողբերգութիւն»ը, Գրիգոր Տաթեւացիի «Զարոզագիրք»ը եւ այլն:

Խրիմեան Յայրիկը 1860-ին մեկնած է Արեւելեան Յայաստան, եղած է Երեւան, Էջմիածին, Սիւնեաց աշխարհ, Արցախ եւ Թիֆլիս:

1862-ին Խրիմեան Յայրիկ կ'ընտրուի Առաջնորդ Տարօնի եւ կը տեղափոխուի Մշոյ Ս. Կարապետ վանք, ուր իր թերթն ալ կը դառնայ «Արծուիկ Տարօնոյ» երկշաբաթաթերթ: Յրատարակուած է 1863-1865-ին, խմբագիր ունենալով Գարեգին Սրուանձտեանց:

Թերթը ներկայացուցած է Արեւմտեան Յայաստանի գիւղացիութեան շահերը, ժողովուրդին տառապանքը եւ յանդուգն յօդուածներով Խրիմեան Յայրիկ բողոքած է թուրքերու եւ քիւրտ ցեղապետներու վայրագութեանց դէմ, պահանջած է, որ գաւառներու մէջ գործադրուի Ազգային Սահմանադրութիւնը:

1864-ին անբարենպաստ քաղաքական պատճառներուն բերումով թերթը կ'արգիլուի: Տարօնի հոգեւոր առաջնորդ Մ. Խրիմեան



«Խրիմեան» Թանգարան

եւ Գ. Սրուանձտեանց Կ. Պոլսոյ մէջ վերսկըսած են հրատարակել թերթը: Թերթին վրայ որոշ ազդեցութիւն գործած են Մ. Նալբանդեանի հայեացքները: «Արծուիկ Տարօնոյ» թերթը քարոզած է ազգային, ազատագրական գաղափարներ, պանդխտութեան եւ արտագաղթի դէմ պայքարելու միջոց համարած է երկրագործութեան զարգացումը, 1865-ին թուրք իշխանութիւնները վերջնականապէս արգիլած են թերթին հրատարակութիւնը:

1868-ին Մ. Խրիմեան Էջմիածինի մէջ օծուած է Եպիսկոպոս:

1869-ին Կ. Պոլսոյ Ազգային ժողովին կողմէ ընտրուած է Կ. Պոլսոյ Պատրիարք, մնալով միշտ անհաշտ պայքարողը անարդարութեան ու խաւարին դէմ:

Յայ ժողովուրդը մեծ յոյսեր կը կապէ անոր անձին: Պատանի Պ. Դուրեան կ'ողջունէ բացազանչելով. «Ո՛վ է որ կու գայ, թագաւորի մը, ո՛չ, սեւ սքեմ մը ուսին՝ Յայոց Յայրիկն է որ կու գայ»:

Դժբախտաբար 1873-ի Օգոստոսին ան հրաժարած է Պատրիարքութենէն:

1876 թուականին տեղի կ'ունենայ Վանի աղետը՝ հրդեհը, կողոպուտը եւ Խրիմեան Յայրիկ կը գրէ «Վանագոյժը», որ քնարերգութիւն մըն է ամբողջովին արիւնով ու արցունքով գրուած:

Խ. Յայրիկ հայութիւնը կը մղէ ուժի պաշտամունքին, զէնքով պատասխանելու համար թուրք եւ քիւրտ սանձարձակներուն եւ բարբարոսներուն:

«Ով հայոց ողջ մնացած որդիներ, դեռ պիտի կոտորուի՞ք, դեռ պիտի մորթուի՞ք: Դուք մարդ էք ու ձեռք եւ բազուկ ունեք... Միթէ՞ դուք ցանկալի ազատութիւնը առանց զոհի եւ արեան, ձրի՞ ստանալ կ'ուզէք»:

Երբ 1876-ին հռչակուեցաւ Օսմանեան Սահմանադրութիւնը, հայ մտաւորականութեան մէջ ինչ որ յոյսեր արթնցան: Իր մտորումներն ու նկատառումները արտայայտեց Նաեւ Խ. Յայրիկ գրելով. «*Յասաւ, հասաւ այն ժամանակ, ազատաբերելու քեզ աւետիս կու տամ, ժողովուրդ, լռած լեզուդ եւ փակուած բերանդ բաց այտուհետեւ, խօսէ եւ գրէ*»: Բայց այս խանդավառութիւնը, խոստումները, ազատութիւնը մտահոգիչ էին եւ Խ. Յայրիկ չի թաքցնէր իր զարմանքը ըսելով. «*Մարդ չէր հաւատար, որ հինգ հարիւր տարեկան թուրքիոյ պառաւցած եւ ամուլ մայրը երկնելով հին աշխարհին համար նոր մանուկ սահմանադրութիւն մը ծնէր*»:

Պերլինի վեհաժողով 1878

Խ. Յայրիկ որպէս հայկական պատուիրակութեան ղեկավար՝ Նախապէս այցելած է Եւրոպական մեծ տերութիւններու (Գերմանիա, Անգլիա, Ֆրանսա, Իտալիա) պետական պաշտօնեաններուն եւ փորձած է ձեռք ձգել անոնց բարեացակամութիւնը հայկական հարցին լուծման համար: 1878-ին կը գումարուի Պերլինի վեհաժողովը վերաքննելու համար Սան Սթեֆանոյի դաշնագրին պայմանները: Ներսէս Վարժապետ Պատրիարքին կարգադրութեամբ Խ. Յայրիկ Մ. Չերագի եւ Նարպէի ընկերակցութեամբ կը մեկնի Պերլին իբրեւ հայկական պատուիրակութեան նախագահ:

Նպատակն էր մեծ տերութիւններուն ընդունիլ տալ անմիջական գործադրութիւնը հայկական նահանգներուն բարեկարգութեան: Սակայն հայկական հարցը զոհ կ'երթայ

Պերլինի մեջ մեծ տերութիւններու մրցակցութեան: Սան Սթեֆանոյի դաշնագրին մէջ ընդունուած 16-րդ յօդուածը կը փոխուի 61-րդ յօդուածի, որուն հիման վրայ հայկական բարենորոգումները պիտի իրագործուէին եւրոպական վեց պետութիւններու հաւաքական հսկողութեան տակ:

Խ. Յայրիկ հիասթափուած ըլլալով մեծ տերութիւններու դիւանագիտական խաղերէն, վերջնականապէս կը համոզուի, որ արեւմտեան քաղաքակիրթ աշխարհին մէջ «արդարութիւնն հանգուցեալ է տիրապէս», «գիտցիր այսուհետեւ թէ դու ինքդ ես միայն քեզ օգնական»:

Պոլիս հասնելով պիտի տար իր խորիմաստ բոցաշունչ պատգամը՝ «Երկաթէ Շերեփը»:

«Ժողովուրդ, ամենէն առաջ քու ազատութեան յոյսը քո վրայ դիր, քո խելքին եւ բազկին ո՛յժ տուր, մարդ ինքնիրմէն պէտք է աշխատի որ փրկուի»:

1879 թուականին Խ. Յայրիկ ընտրուած է Վասպուրականի հոգեւոր առաջնորդ. եռանդուն գործունեութիւն ծաւալած է նահանգին մէջ, օժանդակած է Վանի «Սեւ Խաչ» եւ «Կարին Պաշտպան Յայրենեաց» ազգային-ազատագրական գաղտնի կազմակերպութիւններու ստեղծման:

1885-ին Բարձր Դուռը (Սուլթանի պալատը) զինք կանչած է Կոստանդնուպոլիս. հակառակ խիստ հսկողութեան, այդտեղ նոյնպէս ծաւալած է հասարակական գործունեութիւն:

Ազգային ժողովը Խրիմեանի նախաձեռնութեամբ երկու տեղեկագիր-բողոքագիր ներկայացուցած է թրքական կառավարութեան հայ գաւառներու օրըստօրէ վատթարացող վիճակին մասին:

15 Յուլիս 1890-ին, Գում Գաբուի ցոյցէն ետք, թրքական կառավարութիւնը զինք արտորած է Երուսաղէմ, այս ցոյցը առաջին հակաթուրք երեւոյթն էր Պոլսոյ մէջ:

1892-ի Մայիսին կ'ընտրուի Ամենայն Յայրոց Կաթողիկոս, սակայն սուլթանը չի համաձայնիր Խրիմեանը ազատել թրքահպատակութենէ եւ միայն 13 ամիս ետք Ռուսաստանի ցարին միջնորդութեամբ անոր կը թոյլատրուի երթալ Ս. Էջմիածին:

26 Սեպտեմբեր 1893-ին կ'օծուի Ամենայն Յայրոց Կաթողիկոս:

1895-ին կը մեկնի Սանկտ Փետրոսպուրկ

Նիկոլա երկրորդ ցարին ներկայացնելու Արեւմտեան Յայաստանի խոստացուած բարենորոգումներու իրականացման խնդրագիրը:

1894-1896 Յամիտեան ջարդերու ժամանակ արեւմտահայերուն առաւելագոյն չափով օգնած է, պայմաններ ստեղծած է գաղթականներուն հայրենի երկիր վերադառնալու համար:

Յիշարժան է Խրիմեան Յայրիկին կեցուածքը հայ եկեղեցապատկան կալուածներու բռնագրաւման օրէնքին դէմ: Ան եռանդուն պայքար մղած է ցարական կառավարութեան 12 Յունիս 1903-ին հրատարակած օրէնքին դէմ, հոգեւոր թեմակալ առաջնորդներուն հրահանգած է որ չենթարկուին անոր: Օրէնքին համաձայն, հայ եկեղեցւոյ եւ հոգեւոր հաստատութիւններու պատկանող ամբողջ անշարժ գոյքը (այգիները, վարելահողերը, մարգագետինները, արօտավայրերը, անտառները, առետրական կրպակները, ջրաղացները, արհեստագործական ձեռնարկութիւնները եւ այլն) եւ դրամական ունեցուածքը պիտի անցնէին պետական տնօրինութեան:

Օրէնքը այդ ժամանակաշրջանին ռուս ինքնակալութեան վարած ազգային քաղաքականութեան դրսեւորումն էր, որ նպատակ ուներ հայկական մշակոյթի եւ լուսաւոր կեդրոնները զրկել նիւթական օժանդակութենէ եւ արագացնել հայ ժողովուրդի ռուսացման գործընթացը, հայ հոգեւորականութիւնը վերածել պետութենէ նպաստ ստացող հնազանդ պաշտօնեութեան:

Եկեղեցական գոյքի բռնագրաւման օրէնքը բուռն զարոյթ յառաջացուցած էր հայ բնակչութեան մօտ: Շարժումին գլուխը կանգնած էր Ամենայն Յայրոց Կաթողիկոս Մկրտիչ Ա. Վանեցի:

Օրէնքին դէմ հանդէս եկած են նաեւ հայ ազգային-քաղաքական կուսակցութիւններ: Անդրկովկասի շարք մը քաղաքներ Թիֆլիսի, Պաքուի, Երեւանի, Կարսի, Շուշիի, ինչպէս նաեւ բազմաթիւ գիւղերու մէջ տեղի ունեցած են զանգուածային ցոյցեր, բախումներ ժողովուրդին ու ոստիկանութեան ու զօրքին միջեւ: Արտերկրի հայութիւնը նոյնպէս բազմաթիւ բողոքներ յղած է Ս. Էջմիածին եւ Ս. Փետրոսպուրկ, սակայն կառավարութիւնը չէ հրաժարած իր որոշումէն:

Յամաժողովրդային բուռն պայքարի եւ Ռուսաստանի մէջ սկսած յեղափոխութեան

ազդեցութեան տակ ցարիզմը ստիպուած եղած է նահանջելու: 1 Օգոստոս 1905-ին, Նիկոլայ երկրորդ ցարը ստորագրած է եկեղեցական գոյքը վերադարձնելու մասին հրամանագիր, միաժամանակ նաեւ կը թոյլատրուէր վերաբանալ հայկական դպրոցները:

Խրիմեան Հայրիկին Գործերը Ամփոփ Գիծերու Մէջ

Խ. Հայրիկ գրած է բազմաթիւ գործեր, որոնց մէջ իւրայատուկ տեղ կը գրաւեն հոգեւոր, կրօնական ստեղծագործութիւնները, անոնցմէ են 1851 թուականին «Հրաւիրակ երկիրն Աւետեաց» չափածոյ պոէմը, ուր կը նկարագրէ եւ կը գովերգէ քրիստոնէական եկեղեցիին համար սրբազան դարձած Երուսաղէմը, փրկչին գործունեութեան սուրբ վայրերը:

«Հրաւիրակ Արարատեան»ը գրաբար լեզուով գրուած, կը ներկայացնէ հայրենի հողին ուժը եւ անսահման սերը:

«Դրախտի Ընտանիք»ը 1878 թուականին, որ կը պարունակէ ընտանիքի գաղափարին պաշտպանութեան եւ կնոջ հաւասարութեան սկզբունքներուն նուիրուած խրատական գրութիւններ:

«Սիրաք եւ Սամուէլ» բարոյական հարցերու շուրջ կը խօսի:

«Մարգարիտ Արքայութեան Երկրից», «Յիսուսի Վերջին Շաբաթը», «Խաչի ճառ», «Ժամանակ եւ Խորհուրդք Իւր» կրօնական եւ փիլիսոփայական խորքով գրուած գործեր են:

«Պապիկ եւ Թոռնիկ» իր վերջին գործը, որ գլուխ գործոց մըն է, Պապիկը (Խրիմեան) կը խօսի թոռնիկին հետ, որուն կը փոխանցէ հայ հողին սերը, ընտանեկան սրբութիւններու պաշտամունքը եւ հայ անանդութիւնները:

Հայ ժողովուրդի 125-րդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Խրիմեան Հայրիկ 1892-էն 1907 թուականին որպէս կաթողիկոս բոլորանուէր ծառայութիւն մատուցեց իր հօտին:

Հայ ժողովուրդի օրհասական տարիներուն իր յանձնառու պաշտօնը ձեռնհասօրէն վարեց:

Հայոց հայրիկին նուիրական իղձն էր հարազատ ժողովուրդը տեսնել միակամ ու

միասնակամ, հաւաքուած Մասիսի շուրջը:

10 Մարտ 1905-ի կոնդակով ազգահաւաքման, հայրենադարձութեան կոչ ուղղեց եւրոպայական հայերուն. «*Արիք, պանդուխտ եւ տարագիր հայք, ելէք եւ փութացարուք հայրենի աշխարհ ձեր... արիք եւ շինեցէք զԱւերակսն եւ բնակեցէք ի Նոսա, աճեցէք եւ բազմացարուք եւ լցէք գերկիրն, երկիրն զորս ետ Տէր հարց ձերոց*»:

Նախանձախնդիր հայ կեանքի, մշակութիւնի առաջընթացքին Խ. Հայրիկ նուիրումով ծառայեց հայ դպրութեան, երիտասարդ սերունդի կրթութեան ու դաստիարակութեան:

29 Հոկտեմբեր 1907-ին վախճանեցաւ մեր 125-րդ քաջակորով, եռանդուն հայ կաթողիկոսը:

Խ. Հայրիկի ճանապարհը հեզասահ չընթացաւ, քարքարոտ էր: Գործունեութեան առաջին երկար շրջանը կապուած էր գլխաւորապէս Թուրքիոյ անազակապետութեան

հետ, իսկ վերջին տարիները խռովեցին ցարական կառավարութեան հակամարդկային գործողութիւնները: Խրիմեան հայրիկ իր կաթողիկոսութեան շրջանին Էջմիածինի մէջ կառուցած է Նոր հիւրանոց՝ Սինոդի Նոր շէնքը, թանգարան, Նոր մատենադարան: Նորոգած ու բարեզարդած է Ս. Հռիփսիմէի եւ Ս. Գայիանէի վանքերը:

Հայ բանաստեղծներ ներբողներ հիւսեցին, գրագետներ մեծարեցին, արուեստագետներ կոթողներ բարձրացուցին, դիմաքանդակներ կերտեցին: Իսկ 2018 թուականին դերասան Հրանդ Մարգարեան Խրիմեան Հայրիկի տիպարը

եւ հեղինակութիւնը ներկայացուց, մեակատարութեամբ վերակենդանացուց այդ մեծաքանչ հայրիկը, նորահաս սերունդին եւ հայ աշխարհին ծանօթացուց այդ վեհ հայուն արժանիքներն ու սխրագործութիւնները՝ յանուն ազգին ու եկեղեցիին:

Խրիմեան Հայրիկ անմնացորդ նուիրուեցաւ հայ ազգի բարգաւաճման, հայ եկեղեցիի բարօրութեան, անկոտրում կամքով պայքարեցաւ Հայաստան աշխարհի խաղաղութեան եւ ազատութեան համար:



«Երկարժե Ծերեպ» Յուշադիւր

ՀԱՅՐ ՂԵՒՆՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԾՆՆՂԵԱՆ 200-ԱՄԵԱԿԻ ՇԵՄԻՆ

Համադրեց՝
Յակոբայ Սարկալազ Պարսումեան

«... Ուր որ հայրենի երգեր կը լսուին՝ հոն հայրենիքը ողջ է»

1. Ալիշան

Հայագիտութեան երախտաւոր Ղեւնդ (Զերովբէ) Ալիշան (1820-1901) ծնած է Կոստանդնուպոլիս, դրամագետ-հնահաւաք Պետրոս Ալիշանեանի ընտանիքի յարկին տակ: Ան նախնական կրթութիւնը ստացած է Պոլիս: 12 տարեկանին՝ 1832-ին, զինք կ'ուղարկեն Վենետիկի Սուրբ Ղազար կղզին, իր եղբոր՝ Սերովբէի եւ ուրիշ բազմաթիւ ընկերներու հետ միասին: Անոնք կ'աշակերտեն նշանաւոր հայագետ Մկրտիչ Աւգերեանի:

Ալիշան չորս տարի շարունակ կ'ուսանի վանքի դպրոցին ընծայարանին մէջ, այնուհետեւ կը փոխադրուի տեղւոյն բարձրագոյն կրթարանը, ուրկէ կը սկսի անոր գրական ու գիտական գործունեութիւնը: Ալիշան կրած ըլլալով հայ ժողովուրդի ազգային-ազատագրական ճակատամարտի՝ Աւարայրի պատմիչ Ղեւնդի անունը, ազդուած է անկէ եւ իր ուղեցոյցը դարձուցած զայն իր ամբողջ կեանքին ընթացքին:

1838-ին, Ղեւնդ Ալիշան Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան անդամ էր: Ան որպէս ուսուցիչ աշխատած է Վենետիկի Սուրբ Ղազար կղզիի Մուրատ Ռափայելեան վարժարանին մէջ՝ 1866-1872:

Արդարեւ, 1849-1851-ին խմբագրած է «Բազմավէպ» հանդէսը, իսկ 1859-1861-ին Փարիզի Մուրատեան վարժարանի մէջ աշխատած է որպէս տեսուիչ: Ղեւնդ Ալիշան գրեթէ իր ամբողջ կեանքը անցուցած է Մխիթարեան Միաբանութեան մէջ, դառնալով հայագիտութեան մշակներէն մէկը: Աւելցնենք, որ այստեղ աշխատած են նաեւ նշանաւոր հա-

յագետներ՝ Ռափայել Թրեանց, Գաբրիէլ Այվազովսկի, Մկրտիչ Աւգերեան, Արսէն Բագրատունի եւ ուրիշներ: Այստեղ ալ տպագրուեցան Ղ.Ալիշանի հայագիտական արժէքաւոր աշխատութիւնները՝ «Տեղագիր Հայոց Մեծաց» (1855), «Շիրակ» (1881), «Սիսուան»




(1885), «Այրարատ» (1890), «Սիսական» (1893), «Հայ-Վենետ» (1896) եւ ուրիշ գործեր, որոնք փառք ու պատիւ բերին անոր:

Ղեւնդ Ալիշանի հայագիտական վաստակը ժամանակին բարձր գնահատած են Միքայէլ Նալբանդեանը, Գրիգոր Արծրունին, Ռափայել Պատկանեանը, Մկրտիչ Պէշիկթաշլեանը, Ղազարոս Աղայեանը, Յովհաննէս Թումանեանը, Արշակ Զոպանեանը, Աւե-

տիս Ահարոնեանը եւ ուրիշներ: Ան ճանչցուած եւ գնահատուած է նաեւ օտարներու կողմէ:

Հայր Ղեւոնդ Ալիշան եղած է ֆրանսական ակադեմիայի պատուաւոր լեգեոնի դափնեկիր, արժանացած է նաեւ Գերմանիոյ Փիլիսոփայութեան ակադեմիայի պատուաւոր դոկտորի, Իտալիոյ եւ Ռուսաստանի ակադեմիաներու պատուաւոր դոկտորի տիտղոս-

փոքր ու մեծ բազմաթիւ հետազօտութիւններ, որոնք փաստական հսկայական նիւթ կը պարունակէն մեր ժողովուրդին պատմական անցեալին մասին: Ականաւոր հայագետին աշխատութիւնները այսօր ալ դեռ մեծ արժէք կը ներկայացնեն հայ ժողովուրդին նիւթական եւ հոգեւոր պատմութեան եւ շարք մը հարցերու մշակման եւ ուսումնասիրութեան տեսակետէն:



Միխթարեան տպարանը՝ իր առաջին տպագրական մեքենաներով (1896-97)

ներուն: Հայագիտութեան համար խիստ արժէքաւոր են Յ. Ղեւոնդ Ալիշանի ճամբորդական նոթերը, յատկապէս այն իմաստով, որ ան ո՛չ միայն սովորական ճամբորդ էր, այլ հմուտ մասնագետ, պատմաբան, աշխարհագրագետ, հնագետ, ազգագրագետ եւ այլ ընթացքին կատարած է բաւական հետազօտութիւններ, որոնք աղբիւրագիտական հիմք ծառայած են իր աշխատութիւններուն համար: Անոնք հայագիտական մնայուն արժէքներ են հայագիտութեան եւ հայ գրականութեան պատմութեան մէջ:


Ղեւոնդ Ալիշան հայ գրականութեան եւ պատմագրութեան մէջ կը գրաւէ նշանակալից տեղ: Անոր գրիչին կը պատկանին հայոց պատմութեան, հնագիտութեան, աշխարհագրութեան վերաբերեալ բազմաթիւ հսկայածաւալ աշխատութիւններ, ինչպէս՝ «Տեղագիր Հայոց Մեծաց», «Շնորհալի եւ Պարագայ Իւր», «Շիրակ», «Սիսուան», «Սիսական», «Այրարատ», «Հին Հաւատք կամ Հեթանոսական Կրօնք Հայոց», «Հայապատում» եւ այլ

Ալիշան հայ նոր գրականութեան պատմութեան մէջ մտած է որպէս աշխարհաբար քերթողութեան հիմնադիրներէն եւ ականաւոր ներկայացուցիչներէն մէկը: Անշուշտ այդ էր որ նկատի ունեցած էր Միքայէլ Նալբանդեան, երբ «Կրիտիկա Սօս եւ Վարդիթեռի» խորագրով իր գրախօսականին սկիզբը կը գրեր, որ Արովեանի «Վերջ Հայաստանի» եւ Պերճ Պռոշեանի «Սօս եւ Վարդիթեր» վէպերը «հիմք դրին արդի ազգային վիպասանութեան», ապա անելցուցած. «Չենք մոռացած «Նահապետ» ստորագրութեամբ Յ. Ղեւոնդ Ալիշանեանց արժանաւոր վարդապետի հրատարակած հոյակապ քերթուածքը՝ «Պլպուլն Աւարայրի», «Հայոց Աշխարհիկ» եւ միւս բոլոր աշխարհաբար ոտանաւորքը, բայց այստեղ չի շեղուիր, որովհետեւ արձակբանաստեղծութեան վրայ էր մեր խօսքը, ապա թէ ոչ, չափաբերական քերթուածոց մէջ արժանաւոր վարդապետը ախոյեան չունի...»: Ալիշանի, որպէս բանաստեղծի, պատմական ծառայութիւնն այն է, որ ան բացաւ Միխթարեան-

ԳԱՆՁԱՍԱՐ

Ներու կլասիցիզմը (քլասիկ, դասական ուղղություն «Գ.») եւ իր «Նահապետի երգեր»ով

քնարերգութեամբ: 1872-ին ան ամբողջովին նուիրուած է գիտական գործունեութեան:



Մխիթարեան տպարանը՝ 1850-60 թուականներուն

հաստատեց պատմական իրաւունքը գրական այն նոր ուղղութեան՝ ռոմանթիզմին,



որուն սկիզբը դեռ 19-րդ դարու 20-ական թուականներուն դրած էր Ալամիարեան իր

Ալիշան գրական ասպարեզ իշած էր որպէս բանաստեղծ, անոր ստեղծագործութիւնները դարձած են ազգային-ազատագրական ձգտումներու արձագանգն ու արտացոլումը: Աշխարհաբարով գրուած երկերուն մէջ ան պատկերած է հայ ժողովուրդի պատմական անցեալին հերոսական դրուագները: Վենետիկի մէջ, 81 տարեկանին վախճանեցաւ հայ ժողովուրդի ու Յայաստան Աշխարհի պաշտամունքը համազգային ապրումի, մտածողութեան, վարքագիծի եւ երգի վերածած անբասիր եկեղեցականն ու ներհուն բանաստեղծը: Հայ մտքի եւ գրականութեան հսկաներու փաղանգին մէջ իր պայծառ դէմքով ու վսեմ ճակատով կ'առանձնանայ վաստակը «Մեծ Ալիշան»ին, ինչպէս որ մահուան առիթով զինք անուանած էր ՀՅԴ պաշտօնաթերթ «Դրօշակ»ը՝ շեշտելով, որ հայոց «Նահապետ»ը՝ «կրօնք մ'ունէր՝ Յայաստանը, եւ իտեալ մը՝ անոր ազատութիւնը եւ փառքը»: Բառին ամենէն ընդգրկուն իմաստով կրօն մը եղաւ Յայաստանը «Նահապետ» գրչանունով անմահացած Հ. Ղեւոնդ Ալիշանի համար, որ ամէն բանէ առաջ եւ վեր՝ հաւատքի մարդ էր. ապրեցաւ եւ գործեց հայ եկեղեցականի ոգեշնչող ներկայութեամբ:

Օգտագործուած Աղբիւր՝ Բագմավէպ, Հայագիտական պաշտօնաթերթ, Վենետիկ, Սուրբ Ղազար:

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ՈՒՊՈԱԳՐԱԿԱՆ ԱՌԵՂԾՈՒՄԾ ՄԸ

Արմենակ Եղիայեան

Եթէ ձեզմէ մէկը յանձն առնէ «Նոր Զայկազեան»-ն ու «Արմատական»-ը մանրակրկիտ թերթատել, ապա պիտի նկատէ, որ մեր բառերուն եւ արմատներուն գանձարանը եղող այս զոյգ բառարաններուն մէջ չկայ որեւէ միաւոր, որուն մէջ յ տառէն առաջ **ե** կամ **է** գտնուի. այլ խօսքով՝ չունինք՝ ո՛չ **եյ** եւ ո՛չ **էյ**:

Առ այժմ մէկ կողմ ձգենք **եյ**-ը՝ աւելի ուշ կը տեսնենք զայն:

Գայթակղեցուցիչ է բացակայութիւնը **եյ**-ին, քանի որ այս հնչիւնախումբը համարժեքն է հնդեւրոպական **ei**-ին, որուն աւելի կամ պակաս կը հանդիպինք մեզի ծանօթ հնդեւրոպական բոլոր լեզուներուն մէջ.

-**յունարէն**՝ apodeixis, ardeia, enchaleis, eis, poseidon, apoikeia, politeia...

-**լատիներէն**՝ dei, deinde, diei, eia, hei...

-**ֆրանսերէն**՝ sein, seize, treize, reine, serein...

-**անգլերէն**՝ eight, heir, height, weird...

-**իտալերէն**՝ dei, lei, mei, nei, sei, saprei, vorrei...

-**գերմաներէն**՝ ein, zwei, arbeit, eleison, heinz, schreiben, zeitung, Heinrich Heine, weil...

-**ռուսերէն**՝ Èáéèà – ցնցուղ (ֆրանսերէն douche ըսուածն է)

Èäáéñòáð – օսլայի խիւս, շրեշ


Ñáéíáð – ծովային ձկնորսանաւ

Çàðáéíèè – սրամիտ, հնարամիտ, զուարճախօս, կատակաբան

Øéáéð – քանի մը իմաստ ունի՝ տուտք, քարշակ, տեսակ մը տափան, տեսակ մը ուռկան

Իսկ մեր բառերու եւ քերականութեան սերտողութիւնը կը թելադրէ **եյ** երկբարբառի

բազմաթիւ պարագաներ, որոնք սակայն... բացակայ են, չկա՛ն:



Յապա ո՞ր էն անոնք, եւ ի՞նչ առեղծուած է այս:

Ահա նման առեղծուածի մը լուծումին է որ կը լծուինք հիմա:

1) Աչքի առաջ ունենանք կարդալ բայի ներկան եւ անկատարը, որոնք կու տան՝ կարդամ - կարդաս - կարդայ (**լ > մ - ս - յ**)

կարդայի - կարդայիր - կարդայր (**լ > յի**)

յիր-յր)

Ուրեմն ներկայի մէջ կարդալ-ին լ բաղա-
ձայնը դարձաւ մ-ս-յ, իսկ անկատարի մէջ ան
դարձաւ յի-յիր-յր: Ասոնք հայերէնի դիմային
մասնիկներն են անխտիր մեր բոլոր բայերուն,
այսինքն՝ այս մասնիկներուն շնորհիւ է, որ
հայերէնի ակելի քան եօթը հազար բայերը
առանց որեւէ բացառութեան դէմք, թիւ, ժա-
մանակ ու եղանակ կը ստանան:

Հիմա այս դիմային մասնիկները փոխադ-
րենք ել լծորդութեան բայի մը վրայ. օրինակ՝
վազել-ին:

վազել-մ	վազել-ս	վազել-յ
վազել-յի	վազել-յիր	վազել-յր

Ուրեմն այս յարացոյցին մէջ կը գտնենք
չորս բայաձեւեր, որոնք պէտք է եյ ունենային
եւ չունին. այդ եյ-ին փոխարէն մենք կը գըտ-
նենք Է՝ վազԷ, վազԷի, վազԷիր, վազԷր:

Այսինքն՝ փոխանակ գրելու եյ, Մեսրոպ
կանոնագրած է գրել Է:

2) Առնենք հիմա ուրիշ բառախումբեր.
օրինակ՝ աշտեայ, երկաթեայ, քրիստոնեայ
բառերը, որոնց նմանութեամբ ունինք մեծա-
թիւ ուրիշ բառեր եւ որոնք կը վերջանան եայ
եռաբարբառով:

Այս բառերը շեշտափոխութեան, պատ-
մական հնչիւնափոխութեան եւ բառակազ-
մութեան բերումով՝ նախ կը կորսնցնեն
իրենց եռաբարբառին ա ձայնաւորը, որ
կը դառնայ՝ եայ>եյ, իսկ այս վերջինիս փոխա-
րէն մենք կը գտնենք Է.

Այսինքն՝			
աշտեայ	>աշտեյ	>աշտէ	
երկաթեայ	>երկաթեյ	>երկաթէ	
քրիստոնեայ	>քրիստոնեյ	>քրիստոնէ	

Օրինակ՝ քրիստոնեայ-քրիստոնեական-
քրիստոնէութիւն...

Ուրեմն այստեղ եւս Է ու յ իրարու հանդի-
պելով տուած են Է եւ ոչ թէ եյ:

3) Հիմա տեսնենք քանի մը մեկուսի բա-
ռեր:

***Մեր ձեթ բառը փոխառութիւն է քիչ մը
անծանօթ սեմական աղբիւրէ: Շատ հաւա-

նաբար ասորերէնէ:

Բոլորս գիտենք, որ գոնէ արդի արաբերէնի
մէջ ան կ'արտասանուի զեյթ: Թրքերէնի
մէջ ան նմանապէս զեյթ կ'արտասանուի: Մեզի
փոխատու լեզուին մէջ ալ ան պէտք է
ունեցած ըլլայ այս նոյն արտասանութիւնը, եւ
ուրեմն երբ օրին նոր փոխ առինք զայն ձեթ
ուղղագրութեամբ, մենք ալ այս բառը ան-
շուշտ կ'արտասանեինք ձեյթ եւ ոչ թէ ձեթ,
ինչպէս այսօր կ'արտասանենք: Եւ այս ձեյթ
արտասանութիւնն ալ յանգած է ձեթ ուղղագ-
րութեան՝ Է-ով (եյ>Է):

Ծանօթ.- Օտարին զ հնչիւնը հայերէն դի-
րաւ կը դառնայ ձ. օրինակ՝ պարսկերէն darzak
հայերէն տուած է դերձակ, ուր շ>ձ :

***Մեր եւ սեր

Այս բառերը պէտք է զանազանուէին
իրենց արտասանութեամբ, այլապէս Մեսրոպ
տարբեր ուղղագրութեամբ պիտի չգրեր
զանոնք: Իսկ ո՞ր էր այդ զանազանութիւնը.
պարզ Է՝ առաջինը կ'արտասանուէր ser, իսկ
երկրորդը կ'արտասանուէր seir, այսինքն՝
սերյ: Եւ ճիշդ այս վերջին արտասանութիւնն
ալ յանգած է սեր ուղղագրութեան:

Եզրակացութիւն

Ուրեմն մեր Է տառը յղացուած է իբրեւ եյ-ը
փոխարինող երկբարբառ մը:

Այլ խօսքով՝ ան երկբարբառ մըն է, եւ ճիշդ
այս պատճառով ալ գրաբարի արդի ձեռ-
նարկներու մէջ ան չի դասուիր պարզ ձայնա-
ւորներու շարքին:

Մեսրոպեան այբուբենի 36 տառերէն 35-ը
պարզ հնչիւններ նշած են, միայն մէկ հա-
տը՝ Է-ն, երկբարբառային է, այսինքն՝ կը նշէ
երկու հնչիւն՝ Է+յ:

Ժամանակը քանդած է մեր երկբարբառ-
ները, բոլորը¹, նաեւ եյ երկբարբառը, այս վեր-
ջինը մասնաւորաբար դարձած է Է՝ կորսնց-
նելով իր յ կիսաձայնը: Ահա թէ ինչու մենք
այսօր սեր եւ սեր բառերը կ'արտասանենք
նոյն ձեւով: Նոյնիտայն Է կ'արտասանենք

¹Մեր բազմաթիւ երկբարբառներէն մնացած է միայն «իւ»ն, երբ զայն կ'արտասանենք «ու-թիւն»ին
մէջ. օրինակ՝ բարու-թիւն, մաքրու-թիւն, մեծու-թիւն: Իսկ ան կը չքանայ, երբ այս նոյն բառերը կ'արտա-
սանենք՝ բարու-յուն, մաքրու-յուն, մեծու-յուն տարբերակով:

բոլոր Է-ով գրուող բառերը: Այլ խօսքով՝ Է=Եյ երկբարբառը այլևս գոյություն չունի աշխարհաբարի մեջ, եւ ճիշդ այս պատճառով այլ Մա-



նուկ Աբեղեան 1922-ին մեր այբուբենէն վտարեց Է տառը, քանի անոր համապատասխանող ուրոյն հնչիւն չունիւք: Սակայն աւանդութեան սիրոյն կը պահենք այդ վաղեմի Է-ն:

Ծանօթ.- Ընթերցողը պէտք է զգուշանայ




թիրիմացութենէ մը, որ հետեւեալն է. մեր արդի ուղղագրութեան բոլոր Է-երը Եյ երկբարբառի ներկայացուցիչներ չե՛ն անպայման: Ունիւք յունական, ասորական եւ պարսկական բազմաթիւ փոխառութիւններ, որոնք գրուած են Է-ով, որ այդ լեզուներուն մէջ կը համապատասխանէ մերթ կարճ e-ի, մերթ երկար é-ի եւ ոչ ուրեմն ei երկբարբառին: Չանց կ'ընեմ մանրամասն օրինակները՝ տաղտկալի չդարձնելու համար յօդուածս. հետաքրքրուողները կը յղեմ Յ. Աճառեանի «Յայոց Լեզուի Պատմութիւն»-ին մէջ այդ լեզուներէն կատարուած փոխառութիւններու ցանկերուն:

* * *

Երկու խօսք այլ Եյ-ին մասին:

Այս երկտառը ներկայիս կը գտնենք միայն օտար յատուկ անուններու մէջ, ինչպէս՝ Ալէյ, Պէյրութ, Պոմպէյ, Չէյթուն, Ռէյֆուն եւ այլն եւ որոնց ուղղագրութիւնը տգիտութեան հետեւանք է, քանի որ այդ օտար անուններուն մէջ լսուող ու գրուող երկբարբառը մեր վերը տեսած ei-ն է, որ երբեմն այլ ey-ով կը գրուի (օրինակ՝ Beirut Beyrouth) որուն համարժեքը հայերէն Եյ է:

Քանի որ Է համարժեք է Եյ-ի, փոխարինենք զայն Ալէյ-ին մէջ, եւ պիտի ունենանք՝ Ալէյյ, իսկ այսպէս արտասանուող տեղի անուն չկայ, թող որ արտասանելի այլ չէ ան: Պարագան նոյնն է բոլոր միւսներուն համար: Ուրեմն նմանները պէտք է հայերէն տառադարձուէին Եյ-ով՝ Պոմպէյ, Ալէյ, Չէյթուն, Ռէյֆուն եւ այլն:



ԱՌՕՐԵԱՅ ԽՕՍՔԻ ԱՐՏԱՅԱՅՏՉԱԶԵԻԵՐՆ ՈՒ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐՈ

Սօսի Միշոյեան-Տապաղեան

Առօրեայ լեզուն կը տարբերի պաշտօնական լեզունէն անով, որ խօսողին յարաբերութիւնը լեզուին հետ աւելի անմիջական կ'ըլլայ: Խօսքը կ'արտաբերուի յանպատրաստից, անկաշկանդ: Բառեր գեղեցկացնելու ճիգեր չեն ըլլար հոն, սովորաբար, ոչ ալ՝ բառերու որոնում: Ո՛չ հռետորաբանութիւն է, ո՛չ ճարտասանութիւն, այլ պարզ կառուցուածքով, ժողովրդական բառ ու բանով համեմուած խօսք:

Առօրեայ լեզուին մէջ գործածուող բառերը, անշուշտ, ունին իրենց գրական համարժեքները, սակայն խօսքին աւելի անմիջականութիւն բերելու համար, կը համեմուին դարձուածքներով ու ասոյթներով. «Շուկան կրակի գին ունի» արտայայտութեան մէջ, օրինակ, «սուղ» բառը «կրակ» բառով կը փոխարինուի՝ խօսքին պատկերաւորութիւն մը ապահովելով:

կամ՝

–Ո՞ր կը բնակի:

–Եօթը թաղ անդին: Փոխանակ՝ «հեռու»

ըսելու:

Առօրեայ լեզուն կ'արտայայտուի նաեւ

յարադրաւոր բառերով. «Սիրտս անցաւ» յարադրաւոր բառը պաշտօնական խօսքին մէջ պիտի ըսէի «անօթի եմ», իսկ «սիրտս կտրեց»-ը՝ զիս նեղացուց:

Այս արտայայտչաձեւերուն գեղարուեստական ստեղծագործութիւններու մէջ ալ կը հանդիպինք անպայման եւ զանոնք բարբառայնութիւն կը կոչենք: Գեղարուեստական գրականութեան մէջ բարբառայնութեան որպէս դիպուկ օրինակ, բերենք Յակոբ Մնձուրիի պատմուածքներէն հարուստ նմոյշներ.

*Կրկնաւոր բառեր, ինչպէս՝

Խոշոր-խոշոր խօսիլ¹:

Յոնգուռ-հոնգուռ լացաւ²:

Աչքերդ կոկան-կոկան³ եղեր եմ⁴:

Մտտիկդ վեր-վեր մի՛ ըներ⁵:

Ոսկորներդ փշուր-փշուր պիտի ըներ⁶:

*Յայիոյանք ու անեծք.

Որձամոլ շուն⁷

Լկրտած շուն⁸

Չորնայ ու քորնայ հարսիկդ⁹

*Երդում, պաղատանք ու աղաչանք.

Երկու աչքերս քորնան¹⁰

Անդամալուծ ըլլամ¹¹

¹ Յակոբ Մնձուրի, «Գիւղը Կ'ապրի Իմ Մէջս», Իսթանպուլ, 2005, էջ 89:

² Նոյն տեղը, էջ 145:

³ Կոկանը վայրի ողորկ ու բոլորակ սալորն է:

⁴ Յակոբ Մնձուրի, նշ. աշխ. էջ 90:

⁵ Նոյն տեղը:

⁶ Նոյն տեղը, էջ 145:

⁷ Նոյն տեղը, էջ 144:

⁸ Նոյն տեղը:

⁹ Նոյն տեղը, էջ 90:

¹⁰ Նոյն տեղը, էջ 144:

¹¹ Նոյն տեղը:

Սատկիմ առջեղ¹²


*Օրօրոցայիններ, աշխատանքի երգեր, բարբառներ, օրհնանքներ, բարի խօսքեր, պատկերաւոր արտայայտչաձեւեր... Եւ այլն:

Ծօ՛, կիրակմուտքի վասա՞կ¹³ ես, ի՞նչ ես, ինչո՞ւ խօսք մտիկ չես ըներ¹⁴:

Չատկուան հաւկիթին պէս կարմրուկ ատ երեսիկներդ սիրես¹⁵:

Ամենուն բերանը ինկանք¹⁶:

Առօրեայ խօսքին մէջ ակնյայտ են նաեւ օտար բառերու փոխառութիւնները, սակայն երբեմն նկատելի են ո՛չ միայն սոսկ օտար բառերու ներթափանցումները հայերէնին մէջ, այլ նաեւ որոշ արտայայտութիւններ, որոնք օտար լեզուամտածողութեան արդիւնք են: Արաբական միջավայրի մէջ, օրինակ, կրնանք լսել հետեւեալ արտայայտու-



թինը. «Ո՞ւր էիր, վրադ կը փնտռէի»: Յստակ է, որ արաբերէնի խօսակցականին մէջ գործածուող «վրայ» կապի ազդեցութեան արդիւնք է վերոնշեալը: Իսկ անգլիախօս միջավայրի մէջ կրնանք հանդիպիլ, օրինակ, «**հեծիքիս հետ գացի**», կամ «**մատիտիս հետ գրեցի**» խօսքերուն, տրուած ըլլալով որ **հետ** (with) կապը թե՛ անձի, թե՛ ոչ անձի առումով կը գործածուի օտար լեզուին մէջ: Սակայն այս արտայայտչաձեւերը սխալախօսութիւն կը համարուին եւ մերժուած ձեւեր են, անշուշտ, գրաւորին մէջ:

Միւս կողմէ, սակայն, որոշ բառեր (սկիզբը բանաւոր խօսքի մէջ, ապա՝ գրաւոր), ժամանակի ընթացքին, նոր իմաստ ձեռք կը բերեն: Երբեմն երկու իմաստներն ալ գուգահեռ կրնան գործածուիլ, բայց երբեմն ալ նախկին իմաստին փոխարէն նոր իմաստ մը կրնայ յառաջանալ եւ նախկինի նշանակութիւնը կորսնցնել: Այդպիսի բառերէն տանք օրինակներ, որոնց նախնական իմաստին կը հանդիպինք Յայր Ղեւոնդ Ալիշանի «Յուշիկը Յայրենեաց Յայոց» պատմա-գեղարուեստական երկին մէջ, որ գրուած է այդ ժամանակաշրջանին յատուկ հայերէնով:

«**Հարկաւ**» բառը Ալիշանի մօտ եւ իր ժամանակի հայերէնին մէջ, հարկ բառի գործիական հոլովն է, որ կու տայ հարկադրաբարի, պարտադրաբարի իմաստը: Այսօրուան հասկացողութեամբ «հարկաւ»ը իմաստափոխուած է եւ կորսնցուցած է հոլովի գործառոյթը, եւ որպէս գրաբարէն փոխանցուած քարացած ձեւ կը նշանակէ «**անշուշտ**» կամ «**ի հարկ է**»:

«Կարմիր Վարդան» բաժնին մէջ կը կարդանք. «**Մենք հարկաւ եւ ոչ կամաւ՝ անցնիմք գետոյն այն կողմը, թշնամեաց բանակն այլ քիչ մը ճանչնալու¹⁷**»:

«**Քաղաքավարութիւն**» բառը, Ալիշանի մօտ եւ իր ժամանակի հայերէնին մէջ, «քաղաքակրթութիւն» իմաստը կ'արտայայտէ. ահաւասիկ օրինակ մը.

«Նախաբան առ Յայկակ»ին մէջ, Ալիշանի հայրենիքին մասին բացատրութիւններ տալէ ետք, կը դիմէ Յայկակին ըսելով. «**Միշտ փառք ու պարծանք է իր երկիրն եւ իր ազգը սեփական լեզուաւ եւ օրինօք պահելն. - ունենայ յատուկ եւ բնիկ լեզու մը, սահման մը, քաղաքավարութիւն մը, ծես մը, եւ յիշատակարաններ, որոնց համար բարեկամ բարեկամի հետ խօսելով կարենան ըսել. մերը. այս կատարեալ հայրենիք է, երկրիս որ կողմն այլ որ ըլլայ, ինչ դիրք այլ որ ունենայ¹⁸**»:

12- Նոյն տեղը:

13- Ծաբաթ գիշերները՝ կիրակմուտք կը կոչուին եւ հին ատեն գիւղին մէջ արգիլուած էր այր ու կին մարմնական յարաբերութեան մէջ մտնել, որովհետեւ նուիրական օր կը համարուէր կիրակմուտքը, տուներու մէջ խունկ կը ծխուէր, մեռելներուն համար ալ աղօթք կ'ըլլար: Իսկ այդ օրուան ծնունդ մը մեղքի ծնունդ կը համարուէր եւ ծնողին ալ «կիրակմուտքի վասակ» կը կոչէին:

14- Նոյն տեղը, էջ 104:

15- Նոյն տեղը, էջ 89:


16- Նոյն տեղը, էջ 142:

17- Ալիշան Յ. Ղեւոնդ, Յուշիկը Յայրենեաց Յայոց, Գ. Բ. Վենետիկ, 1921, էջ 228:

18- Նոյն տեղը, էջ 9:

Այս բառին մասին անուղղակի անդրադարձ կայ նաեւ գրականագետ Արսէն Տէրտէրեանի «Հայ Կլասիկներ» ժողովածուին մէջ, ուր մէջբերելով «Յուշիկք»ի սոյն տողը ան կը գրէ.

«...միշտ փառք ու պարծանք է իր երկիրն եւ իր ազգը սեփական լեզուաւ եւ օրինօք պահելն. - ունենայ յատուկ եւ բնիկ լեզու մը, սահման մը, քաղաքավարութիւն (պետութիւն) մը, ծես մը, եւ յիշատակարաններ, որոնց հա-



մար բարեկամ բարեկամի հետ խօսելով կարենան ըսել. մէրը. այս կատարեալ հայրենիք է, երկրիս որ կողմն այլ որ ըլլայ, ինչ դիրք այլ որ ունենայ¹⁹»:

Ակներեւ է, որ Արսէն Տէրտէրեանի համար այս բառը պետութիւն իմաստով հասկցուած է: Այժմ, քաղաքավարութիւն բառը դուրս մղած է իրմէ այդ իմաստները պահելով **կրթականութիւն, բարեկրթութիւն** հասկացութիւնները:

«**Օդաչու**» բառին կը հանդիպինք թռչուններու նկարագրութեան բաժնին մէջ. «*Երկրիս ծայրէն ի ծայրը տեղափոխիկ օդաչու եւ ծովագնաց թռչունը անգամ, ունեցեր են տեղիկ մը, բունիկ մը...*²⁰»: Այս կը նշանակէ, որ «օդաչու» բառը ածականաբար գործածուող բառ էր եւ «**օդին մէջ չուող**»ի, այսինքն թռչողի իմաստ կը կրեր, այժմ՝ գոյականաբար կը գործածուի եւ **օդանաւը վարողին** իմաստը ունի:

Յիշենք նաեւ **օրիորդ** բառի իմաստափոխութեան ընթացքը: **Օրիորդ** բառը կազմուած է **օրի** եւ **որդ** բաղադրիչներէն: **Որդի** բառին վերջին ձայնաւորի՝ «ի»ի անկումով, **որդ** բա-

ռը բարդ բառի վերջին բաղադրիչը դարձած է եւ՝ տղու իմաստը պահած²¹: Օրի կը նշանակէ իշխան (Իսրայէլ Օրի = Իսրայէլ իշխան). հետեւաբար՝ **օրիորդ** բառը նախապէս կը նշանակէր **իշխանի որդի** (այսինքն՝ տղայ): Բառիմաստի պատմական փոփոխութեան ընթացքին **օրիորդ** բառը փոխած է իր իմաստը, նշանակելով միայն **իշխանի դուստր**, ապա իմաստի ընդլայնումով՝ չամուսնացած **աղջիկ, դուստր**: Խօսակցական արեւմտահայերէնի իմաստային առաւել փոփոխութեամբ մը, այսօր, **օրիորդ** կը նշանակէ նաեւ **ուսուցչուհի**²²:

Տակաւին կայ իմաստային տարբերութիւն հայերէնի երկճիւղ լեզուներուն մէջ. յիշենք օրինակ **Չզուելի** բառը, որ արեւելահայերէնի մէջ **Նողկալի, պժգալի** իմաստով կը գործածուի, մինչդեռ արեւմտահայերէնի մէջ զգուիլը ձանձրանալու իմաստը ունի: Առաջինին պարագային կ'ըսուի. «**Չզում եմ միջատներից**», իսկ երկրորդի պարագային՝ «**պարապութենէն եւ անգործ մնալէն կը զգուիմ**»: Այս շարքը տակաւին կ'երկարի, հարկաւ:

Առօրեայ լեզուի յատկանիշներէն մէկն ալ այն է, որ խօսքը անելի սեղմումի եւ կրճատումի կ'երթայ. օրինակ՝ «**Գիտե՛ս, այսօր Սունդուկեանի մէջ «Քառս»ը պիտ խաղցուի**»: Նոյնը եթէ փորձէի գրաւոր արտայայտուիլ պիտի գրէի. «**Գիտե՛ս, այսօր ..., Երեւանի Սունդուկեան թատերասրահին մէջ Շիրվանզադէի «Քառս»ի թատերգութիւնը պիտի խաղցուի**»: Այս պարագան յուշել կու տայ, որ առօրեայ խօսքը իրարահասկացողութեան մակարդակ մը կ'ենթադրէ զրուցակիցներուն միջեւ: Առօրեայ խօսքով պիտի ըսէի. «**Մէկը լեպ կ'ըսէ, միւսը լեպլեպուն կը հասկնայ**»:

Եզրակացնելով ըսենք, որ առօրեայ խօսքը ժողովրդական ստեղծագործութեան մէկ մասնիկը կը համարուի եւ կը ծառայէ գեղարուեստական գրականութեան հարստացման ու պերճացման: Իսկ բառերու աշխարհը նկարագրելու համար, կ'արժէ Եղիշէ Չարենցի նմանակութեամբ կրկնել. «**Օ՛ր, բառերու աշխարհ, տիեզերք մ'անհուն**»:

¹⁹- Տէրտէրեան Արսէն, Հայ Կլասիկներ, Երեւան, 1944, էջ 26:

²⁰- Ալիշան, նշ. աշխ. Գ. Ա. Վենետիկ, 1920, էջ 6:

²¹- Աճառեան Զրաչեայ, Հայերէն Արմատական Բառարան, Երեւան 1926, էջ 2648:

²²- <https://hayerenblog.wordpress.com/2017/06/19/%d5%b8%d6%80%d5%a4%d5%ab%d5%b6-%d5%a1%d5%b2%d5%bb%d5%ab%d5%9e-%d5%af-%d5%a7-%d5%a9%d5%a7-%d5%bf%d5%b2%d5%a1%d5%b5/>

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լալա Միսկարեան-Մինասեան

Արտօն ելաւ անկողինէն ու խոհանոց մտաւ: Այդ օր ինք պիտի բանար խանութ, գործատերը հիւանդ էր, աշկերտը՝ զինուորագրուած: Կինը լսած էր անոր հողաթափերուն քստքստոցը. անմիջապէս սրճեփը օճախին դրաւ ու պատրաստուեցաւ խօսելու: Գիտեր, կինը այդ շարժումով կը սկսեր կարելոր ըսելիք մը, յատկապէս՝ խնդրանք մը: Չնկատել ուզեց, մտաւ բաղնիք: Ի՞նչ պիտի ըսէ. միայն նոր ծախսի դուռ չբանայ. ինք հիմա կարելիութիւն չունի: Սուրճին թարմ բուրմունքը առաւ, տրամադրութիւնը բարձրացաւ:

- Ինչո՞ւ կանուխ ելար, - կինը հեռուէն կը սկսէր:

- Խանութը ես պիտի բանամ:

- Զեզի աղուոր ըսելիք ունիմ, - ժպտեցաւ ու նազանքով ըսաւ կինը:

Ինք գլուխը սուրճի գաւաթին հակած՝ կը սպասէր:

- Մարոյեմ տուներնին կը ծախեն, պիտի ճամբորդեն, յարմար գինով պիտի տան, կ'աճապարեն:

- Է՛, ո՞ւր կ'երթան, - հարցուց, թէեւ կը զգար, որ կինը աւելի լուրջ ըսելիք ունի:

- Զանատա, ընդունած են, արագ պէտք է ընեն, շատ լաւ առիթ է, կ'ըսեմ ձեռքէ չփախցնենք, - մէկէն ամէն գիտցածը ըսաւ ու ժպիտով նայեցաւ ամուսինին:

- Ի՞նչ չփախցնենք, - ձայնին մէջ վախ կար, ինք կը սպասէր պահանջք մը, բայց ոչ այսչափ:

- Տունը, Արտօ՛, աչքս վրան էր, միայն տեսնես, ընդարձակ, լուսաւոր, երկու յարկ, շուրջը՝ պարտեզ, կը նստիս ու առտուան սուրճը կը խմես, ծաղիկներ կը ցանենք...

- Նայի՛նք՝ մենք հոս պիտի մա՞նք, ամէն մարդ կը հեռանայ այս երկրէն:

- Ես տեղ մը գացող չեմ, քանի ծնողքս հոս է, - վճռական էր կնոջ ձայնը:

- Մեր տունին ի՞նչ եղեր է, ինչո՞ւ նոր տուն, հիմա ատոր ատե՞նն է, - ըսաւ ու ելաւ:

Ճանապարհի առաջին կիսուն տհաճութեամբ խօսուածի մասին կը խորհէր, երկրորդ կիսուն մոռցաւ, սկսաւ խանութի մասին մտածել, ապա տարուեցաւ օրուան հոգերով:



Երեկոյեան նոյն խօսակցութիւնը, յաջորդ առտու նոյնը, կէսօրին նոյնը, երեկոյեան նոյնը: Պատճառաբանութիւն, որ երեխաները կը մեծնան, տունը պզտիկ պիտի գայ, ամէն

մեկը զատ սենեակ պիտի ուզէ, եւ...խաղաղ տեղ, մաքուր օդ, սուրճը, ծաղիկները...

Արտօն դէմ չէր նոր ու մեծ տունին, բայց ուրկէ՞ բերես դրամը: Իսկ կինը ժամանակ չէր կորսնցներ, գացեր իմացեր էր գինը: Նոյնիսկ խնդրեր էր քիչ մը սպասել: Անոնք պիտի սպասէին ակամայ, քանի որ քաղաքը ազատագրուած էր, սակայն պատերազմի ասպարտը անորոշութեան կ'երթար, ծանր ու հեղձուկ օրեր էին: Մարդիկ տակաւին կը գաղթէին, տուններ կը ծախէին ստիպուած՝ աժան գիներով, ու կարելիութիւն ունեցողներ կ'օգտագործէին առիթը: Պատերազմներու չգրուած օրերը է՛ շատերու թշուառութեամբ քիչեր կ'ուռճանան. այս է մարդոց արդարութիւնը:

Առանց կնոջը ըսելու, գնաց դուրսէն տեսաւ տունը. ըսուածին չափ կար՝ հողամաս, ծառ ու ծաղիկ, պատրաստ *կարած*, ու դեռ՝ եղածին պէս կու տան, կահոյքով: Տատանումները սկսան հալիլ, սակայն ուրկէ՞ բերես դրամը: Այո՛, տունին արդար գինը չէ, բայց նուէր ալ չէ: Նեղ օրուան համար պահածը չի բաւեր, պարտքի տակ մտնել ալ չի սիրեր: Արդէն տուող ալ չկայ այս օրերուն: Բայց եթէ ինք ու կինը որոշած են տակաւին մնալ այս երկիրը, ուրեմն սա առիթ է, երկու գաւակ կը մեծնայ... Բայց իր ունեցած ազատ դրամը հազիւ գինին կէսը կը բերէ:

Նոյն օրը լուր ստացաւ, որ երեկոյեան ընկերոջ տուն երթայ: Դուռը բացաւ անոր ծերուկ մայրը ու գլուխը լուռ օրօրեց: Գործատերը՝ Խորէն, դիմաւորեց թախծոտ ժպիտով: Գունատ էր:

– Ի՞նչ է, սիրտդ արձակուրդ կ'ուզէ, գործը մեր վրան ձգեր, քէյֆիդ կը նայիս, – փորձեց կատակել, բայց զգաց որ անտեղի էր ու լրջացաւ.

– Ի՞նչ ունիս, աղբար:

– Ամերիկա կ'երթամ. հոս բան մը չհասկցան բժիշկները. քեզ ատոր համար կանչեցի. վաղը Պէյրուս կ'երթամ, տոմսս գնուած է արդէն, հոնկէ ալ կը ճամբորդեմ:

– Վիզա՞...

– Մայրս ու ես քաղաքացիութիւն ունինք, հարց չունինք:

Վերադարձին ե՛լ ցաւ, ե՛լ շփոթ կար գլխուն մէջ: Խորէնը իրեն յանձնած էր խանութին ամէն ինչը՝ ապրանքի տնօրինումը եւ բոլոր աշխատանքները: Ինք անոր դրամ պիտի փոխանցեր:

Ինքնայարգանքի պէս բան մը կը զգար,

մեծ վստահութիւն էր այդ: Միւս կողմէն կար վախ, ինքզինքին իսկ չխոստովանելիք վախ մը ինքն իրմէ, ապագայէն. ծանրութիւն մը, զոր բացատրել անկարող էր:

Կնոջը բան չըսաւ. ժամանակի պէտք ունէր այս լուրջ վստահութեան արժէքը ու իր խիղճին ձայնը կշիռքի նժարներուն դնելու: Առտու ճամբու դրամ ընկերը, ապա խանութ գնաց սովորականէն կանուխ: Երբ կը բանար, ինքզինք բռնեց սեփականատիրոջ զգացումի մէջ: Կրկնափեղկը բարձրացուց, կղպուած դարակներէն հանեց ու սկսաւ շարել զարդերը: Ապա դուրսէն դիտեց ու շուրջը նայեցաւ զգուշութեամբ: Թէեւ առաջուան չափ ոսկեղէն չէ դրուած ցուցափեղկը, բայց ո՞վ գիտէ: Զաղաքի ազատագրումէն ետք Խորէն առաջիններէն էր որ համարձակեցաւ կրկին բանալ խանութը: Շուրջի քանի մը խանութատերեր՝ նպարավաճառ, ակնոցավաճառ, դեղատուն, անուշավաճառ, մանկական հագուստ կամ գուլպայ ծախողներ՝ հին ծանօթներ էին: Արտօններս անցաւ, դուռին փակակնքը դրաւ, դարակները բացաւ, դիտեց հոն եղածները ու կրկին իր մէջ որսաց զգացում մը, զոր առաջ բնաւ չէր ունեցած. տիրոջ մօտեցում էր այդ: Մտքին մէջ ուղղեց չարտասանուած բառը՝ ո՛չ տիրոջ, պատասխանատուի՛ մօտեցում: Արագ անցաւ այդ միտքին վրայէն: Գանձարկղը բանալու վարանեցաւ, յետաձգեց:

Առաջին անգամ, օրուան շահը դնելու համար, երբ գանձարկղը բացաւ, սրտի կծկում ունեցաւ: Խորէնը մոռցե՞ր էր, թէ՞ պէտք չէր զգացեր ու հոն դրամ ձգեր էր, օտար դրամ: Այդքա՞ն կը վստահի իրեն, թէ՞ փորձելու համար ըրած է. բայց չէ՛, ան շփոթած ու տագնապած էր: Գողի զգացում ունեցաւ, երբ ձեռքն առաւ դրամին տրցակը: Արագ տեղը նետեց, բայց տեսաւ քանի մը թուղթերու տակ մնացած արծաթեայ, նուրբ աշխատանքով գեղեցիկ զարդատուփ մը ու նոյնպէս չկըրցաւ չբանալ: Դոն էին ոսկեայ ժամացոյցն իր հաստ ու գեղեցիկ բանուած շղթայով, զոր Խորէն ապսպրած էր անցեալ տարի, երբ նշանուեցաւ: Այդպէս ալ բախտ չունեցաւ կրելու: Աղջիկը նշանը ետ տուաւ ու ճամբորդեց Ամերիկա: Ետ տուաւ նաեւ նուէր ոսկեղէնը, որ նոյնպէս հոս էր, նշանուածներու միատեղ նկարին հետ: Խորէնը այն ատեն ամիսներով տխուր էր:

Արտօն արագ գոցեց գանձարանին

դռնակը, բանալին դրաւ գրպանը ու շտապ ելաւ խանութէն. կարծես հոն գինք դիտող կար:

Երեկոյեան ալ չհամբերեց ու կնոջը յայտնեց նորութիւնը: Կինը ուրախ արձագանգեց.

- Տեսա՞ր, Աստուած ալ մեզի հետ է, աս առիթ է մեզի:

- Ի՞նչ առիթ, ի՞նչ կ'ուզես ըսել, տղան հիւանդ՝ ես ատիկա առիթ պիտի սեպեմ, - սրտնեղեցաւ. կինը ուղղակի իր հոգիէն ներս կը գրոհէր:

- Բան չեմ ըսեր, - փորձեց շտկել կինը, մինչդէռ ինք կրկին զգաց՝ կինը անուն տուաւ մտածումին, որ կար իր ուղեղին մէկ անկիւնը եւ զոր ինք իրմէ կը ծածկէր: Սրտնեղեցաւ ու կանուխ գնաց պառկելու: Դժուար եղաւ քնանալը: Միտքերը, գծուծ միտքերը կը սողոսկէին ու ինք ի գուր կը փորձէր վանել զանոնք: Մանկութեան ընկերներ էին հորէնին հետ, միասին անարտած դպրոցը, միասին ակումբային կեանք, երկուքն ալ միամօրիկ՝ եղբօր պէս էին: Երբ իր խանութին վրայ հրթիռ ինկաւ ու ինք մնաց անգործ՝ հորէնը օգնեց. երբ ան խանութը բանալ որոշեց՝ զինք հրաւիրեց միասին աշխատելու, թէւ իր կարիքը չունէր: Ինք ալ մասնաբաժին դրաւ, բայց չնչին բան մըն էր: Զիմա կը ցաւէր ընկերոջ հիւանդ ըլլալուն, բայց ի՞նչ էր այդ խուլ ու անբացատրելի զգացումը կրծքին տակ, որուն երբ կինը դպաւ՝ ինք ցնցուեցաւ:

Յաջորդ օրը Կիրակի էր, բայց շուկայի պատրուակով անգամ մը անցաւ խանութին առջեւէն ու սեփականատիրոջ արդէն ծանօթ զգացումը ցաւ չպատճառեց: Դուռը բանալ, մտնել ու ամենը մէյ մը նայելու փափաքը զսպեց:

Խորէն տակաւին դրամատան իր թիւերը չէր դրկած, հետեւաբար դրամը անոր փոխանցել չէր կրնար: Խորէն ըսած էր, որ շատ չի մնար Ամերիկա, յոյս ունէր շուտ վերադառնալու: Արտօ փորձեց հեռաձայնով կապուիլ ու անոր վիճակը հասկնալ: Ծեր մայրը պատասխանեց: Ձայնը յստակ չէր լսուեր. այնքան շուար ու շփոթ խօսեցաւ, որ Արտօ շատ բան հասկնալ չկրցաւ. միայն իմացաւ, որ տղուն վիճակը անելի լաւ չէ: Մօր ձայնին լալագին շեշտը ազդեց. ամբողջ օրը ծանր ազդեցութեան տակ էր: Այդ կինը իրեն ալ զաւկի գուրգուրանք տուած էր. սիրտը կը սեղմուէր: Երեկոյեան դրամը գանձարկղը դնելու համար բացաւ զայն, արագ դրաւ ու առանց

նայելու գոցեց դուռը: Տիտիութիւն մը կար մէջը՝ անբացատրելի:

Նոյն երեկոյեան կինը յայտնեց, որ ուրիշ յաճախորդ յայտնուէր է, ու եթէ դրամը իրենք անմիջապէս չտանին՝ տունը պիտի ծախուի: Այնքան յարմար գինով, գեղեցիկ, լուսաւոր... Դաւադիր էր կնոջ ձայնը, դաւադիր էր հայեացքը, երբ յուշեց.

- Արտօ՛, կրնաս խանութին շահէն վճարել, ետքը տեղը կը դնես, երբ որ հորէնը գալու ըլլայ...

«Գալու ըլլայ» ու ոչ թէ՛ «գայ»: Ան ի՞ր մտածումները կ'երկրորդէր:

Յաջորդ օրերուն գործարքը եղաւ: Խորէնին գանձարկղը պարպուեցաւ: Առաջուան պէս կ'աշխատէր ամէն օր ու երեկոյեան դրամը կը դնէր հոն, արդէն սովորական շարժումներով, արդէն գոհունակութեամբ, արդէն առանց յուզումի: Իր «ամսականը» ու շահաբաժինը, զոր նշանակած էր հորէն, կ'առնէր կրկնակի, անոր միացնելով նաեւ ենթադրեալ աշկերտի ամսականը. խանութը միշտ ալ ունեցեր է աշկերտ: Ամսավերջը տարադրամի կը վերածէր դրամը, մաս մը հորէնին կը դրուէր, հետն ալ նշելով, որ գործերը շատ թեթեւ են, քաղաքը մարդ չէ մնացած: Ինք ալ կը համոզուէր իր ըսածին, յատկապէս երբ ուրիշներէ տես կը լսէր, թէ քաղաքը կը պարպուի ու յատկապէս՝ քրիստոնեայ թաղերը:

Նոր տուն փոխադրուելու գործերը կինը իր եղբօր հետ կարգադրեց, այնպէս որ Արտօն մէկէն պատրաստ տունը մտաւ: Գոհ մնաց: Այս պատերազմէն միակ կորուստը հօր խանութն էր: Ան ալ հրթիռի զոհ գնաց: Բայց Աստուած դուռ մը որ գոցէ, ուրիշը կը բանայ, կ'ըսեն, ու այդպէս ալ եղաւ: Զիմա երկու տունի տէր էր, նախկինը կրնար վարձու տալ: Ներսի թաղերէն տնանկ մնացած իսլամ ընտանիքներ կան, որ կը ձգտին քրիստոնեական թաղերը նստիլ ու կը վճարեն: Կնկան եղբայրը, որ հազիւ օրուան հացը հոսկէ-հոնկէ առած նպաստներով կը հասցնէր՝ վարձու կ'ապրէր: Արտօն լսել անգամ չուզեց, երբ կինը ակնարկեց, որ իրենց տունը ապրին: Մանաւանդ հարագատի եթէ տաս, ետքը ինչպէ՞ս պիտի հանես գիրենք: Կ'ըսուի՝ բարեկամի հետ առեւտուրի մէջ մի մտնէր, կամ ալ՝ տուած ատենդ լաւ ես, ուզած ատենդ՝ գէշ:

Ամիսները կ'անցնէին, երբեմն ընկերոջը հեռաձայնել կը մոռնար, իսկ հոնկէ ձայն չկար: Առտու մը, երբ իրենց առանձնատան պատըշ-

ԳԱՆՁԱՍԱՐ

գամը նստած վարդերու բոյրին մէջ սուրճ կը խմէին, կինը յայտնեց.

- Լսեցի որ Խորենը «գէշ» հիւանդութիւն ունի:

Տաք սուրճը այրեց լեզուն, պնակին մէջ թափեցաւ: Ինք քարացաւ ու հարցական նայեցաւ կնոջը, թէն իր միտքէն այդ մէկը անցած էր: Ան հաստատեց.

- Այլեւս դադրեցնիր դրամ դրկելը: ՌՎ պիտի առնէ, եթէ ան հիւանդանոցն է ու ծանր վիճակ ունի:

- Բայց մայրը հոն է, մէկը կ'ունենան ի վերջոյ,- այրած լեզուն բերնին մէջ դարձնելով ըսաւ կամացուկ, ինք իրեն համար:

- Մայրը գլուխ չի հաներ այդ գործերէն, իսկ հոն ազգական չունին, մօրքուրին աղջիկը կար, անոր հետ ալ կապ չունին:

ցուդարձը ճշդէլ, չէր ուզեր խորերը նայիլ:

Եկաւ ակնկալուած լուրը, բայց ոչ դրամի պահանջք, քանի որ միւս աշխարհին մէջ Խորեն այլեւս դրամի կարիք չունէր: Եւ յաւերժական խաղաղութիւնը հոն մի՞թէ ատով չէ պայմանաւորուած: Բայց մա՞յրը... հաւանաբար ան ալ ծերանոց մտաւ, հոն լաւ կը նային ծերերուն: Չէ՛, դրամով գացին, կինը փողոցը չի մնար: Յետոյ ենթադրութիւնն ալ հաստատուեցաւ, ծանօթ մը յայտնեց, թէ Խորենին մայրը ծերանոց դրուեր է: Ու Արտոյին միտքը հանգստացաւ, փառք Աստուծոյ՝ ծեր կինը փողոցը չմնաց:

Սակայն ընկերոջ մահուան լուրը առնելու օրէն վախ մը սողոսկած էր սիրտը՝ անպայման անոնք ազգական ունին, որ վաղը միւս օր պիտի գայ եղածին տեր դառնալու. եթէ ոչ՝



- Հաւանաբար քովերնին դրամ կայ, ատկէ գատ, իրենք Ամերիկայի քաղաքացիութիւն ունին, ուրեմն բուժումն ալ անվճար է,- կրկին ինքն իրեն հետ խօսեցաւ Արտոն ու չսիրեց իր խօսքերը:

- Անշո՛ւշտ, քիչ մը ատեն սպասէ, եթէ լուր դրկեն՝ դրամ կը փոխանցես, մենք գող չենք:

Ո՛հ, ինք չէր ուզեր ընկերոջ դժբախտութիւնը, բայց ի՞նչ կրնար ընել. ուշ կամ կանուխ բոլորս ալ մահկանացուներ ենք, ու Խորենին այս բախտը ինկած է: Եթէ «այդ» հիւանդութիւնն է ու յառաջացած՝ Խորենը այլեւս ետ չի դառնար: Ինք կը ցաւի՞ անոր համար. անշո՛ւշտ. բայց չէր կրնար իր ներսի ան-

պետութիւնը տեր պիտի կանգնի կամ ալ ազգը ձեռք պիտի դնէ: Ու մտորումներու մէջ՝ յիշեց այլազգի բարեկամը, որ գիտեր հարցը պետականօրէն «օրինաւոր» լուծելու բոլոր ճամբաները: Ծաշի հրաւիրեց գայն ու հարցը պարզեց: Մարդը իրաւունք տուաւ. վերջապէս Արտոն ալ մասնատեր էր ու ընտանիքի ապրուստի հոգս ունէր...

Ընտանիքի հին բարեկամը տանտիկնոջ հետ կը կատակեր, «բարեկամի մը սահմաններու մէջ»: Տիկինը դէմ չէր իրմով հիացող անոր գաղտնի հայեացքներուն, իսկ Արտոն չտեսնելու կու տար, այդչափը իր ու կնոջ չխօսուած ռազմավարութիւնն էր: Փոխարէնը՝

«անպիտանը ուզած գործդ կը լուծէ, իրեն համար անկարելի բան չկայ»: Ինք բարեկամին չյայտնեց, որ համկալը նաեւ ոսկի ձգած էր խանութը: Այդպէս աւելի դիրքին եղաւ, քանի որ մարդը հակառակին պիտի գարմանար: Այդպէս անոր տալիքին չափն ալ շատ չէր կրնար ըլլալ: Շահերու համաձայնութիւն եղաւ ու բարեկամը ամիսէ մը հարցը լուծեց՝ խանութը, մէջը եղածով, Արտոյի անունին անցաւ: Եթէ եւթադրեալ ազգական մը գար, ինք շատ հանգիստ կրնար ըսել, թէ հորէն իր բաժինը ծախեց ընկերոջն ու գնաց: Ո՞վ կրնար հակառակը փաստել:

Առաջին գործերէն մին եղած էր հանել ու դարակը դնել հորէնին հօր լուսանկարը, որ ան մեծցուցեր ու պատը կախեր էր: Շաբաթօր մը, երբ կրկնափեղկը կէս իջեցուցած՝ ներսը կը մաքրէր ու կը վերադասաւորէր՝ նկարը դարակէն ուղիղ իր աչքերուն նայեցաւ ու սիրտը ծակեց, անցաւ: Նախ ուզեց թանկարժէք շրջանակը պահել, թերեւս պէտք ըլլայ, ապա միտքը փոխեց, հանեց ապակին, կտրտեց շրջանակը, պատռեց նկարը առանց մարդու դէմքին նայելու, ամէնը դրաւ աղբի պարկը՝ մնացածին հետ թափելու համար: Ու շունչ առաւ: Բայց մարդուն սուր հայեացքը դրոշմուեցաւ մնաց մտքին մէջ: Երբ գանձարկղէն հանեց հորէնէն մնացած փաստաթուղթերը, անոնց մէջէն ալ անձնագիրի քանի մը նկարներ թափեցան: Այս անգամ ընկերը կը նայէր իրեն՝ լայն բացուած խոշոր ու ժպտուն աչքերով: Յիշե՛ց, միասին գացած էին լուսանկարիչի. հորէն կը փորձէր լրջանալ անձնագիրի նկարին համար, ինք կատակներով կը խանգարէր. այդ զսպուած ժպիտն է մնացեր անոր դէմքին: Վաղուց անցած այդ պահը, կարծես մոգական ուժով մը կենդանացած՝ պարուրեց զինք: Ինկաւ աթոռին ու երկար նայեցաւ նկարին. իր մանկութեան լաւագոյն ընկերը: Ժողովներու՝ միասին, գործունէութիւններու՝ միասին, երեկոյեան ընթրիքներու՝ միասին, գաղափարական վիճաբանութիւններու եւս միասին էին, ուր ան միշտ վերջին խօսքը կ'ըսէր, քանի որ ընթերցող էր: Նաեւ պատանութեան քանի մը անգամ միասին ծեծկռտուած են այլ տղոց հետ ու ամէն անգամ ան իր վրայ առած է իր բաժին ծեծը, քանի որ ջլապիկը, մարգուած տղայ էր, ճիշդ իրեն հակառակը: Յիմա ան կը նայէր ու կարծես իրմէ բան մը կը սպասէր, խօսք մը, թէկուզ կաթիլ մը արցունք: Ինք իր փոքրագիւթներէն պժգաց, երբ նկարները

ճգմեց ափով ու նետեց աղբին մէջ: Շարունակեց դարակները խառնել աննպատակ, երբ անսպասելիօրէն փղծկեցաւ. «Ա՛ս է կեանքը, աղբա՛րս, ներէ՛»:

Իրեն համար ալ անսպասելի՝ Կիրակի մը մտաւ եկեղեցի, մոմ առաւ ու վառեց Քրիստոսի սրբապատկերին առջեւ: «Յայր մեր» միայն գիտէր, ըսաւ մտովի: Յոգեհանգիստի երկար շարք մը կ'ընթերցէր քահանայ մը, մականունները դժուարութեամբ հնչելով: Ու յանկարծ լսեց՝ հորէն Աստուրեանի... Ո՞վ պիտի հոգեհանգստեան աղօթք ըներ հորէնին համար, երբ հոս ան ազգական չունի: Այո՛, ընկեր մըն էր, որու հետ ինք շատոնց չէր տեսնուած, ան ըլլալու էր: Յայեացքները հանդիպեցան ու երբ Արտօն մօտեցաւ ձեռքը բռնելու, ան կտրուկ շրջեցաւ ու հեռացաւ: Արիւնը զարկաւ դէմքին. սիրտը արագ զարնել սկսաւ. գլուխը կ'այրէր կարծես: Ուրեմն կը խօսուի քաղաքին մէջ: Առանց շուրջը նայելու ելաւ:

Մինչ այդ հորէնին մահը վերացական էր, հեռուէն եկած խօսք, անշօշափելի բան մը, որ ցաւ կը պատճառէ, բայց միշտ կը մնար անհրակակնի շղարշով պատուած: Յիմա կարծես թէ աչքովը տեսաւ, կարծես թէ քիչ անդին սգակիրներով շրջապատուած դագաղին մէջ ննջողը հորէնն էր, ու ինք ծանր ցաւերու, անտանելի տառապանքներու միջոցին դաւաճանած էր անոր: Այն միջոցին, երբ ան ցաւերու մէջ կը գալարուէր՝ ինք դադրեցաւ անոր դրամ դրկելէ ու տո՛ւն գնեց, խանութի տէ՛ր եղաւ... անոր մահուամբը: Այս արդէն իրականութիւն է, ինչպէս որ իրականութիւն էր եկեղեցւոյ մէջ դրուած դագաղը: Ըշմարտութիւնը հիմա դէմը տնկուած էր այնպէս անողոք, մերկ ու սակայն՝ լուռ, ինչպէս որ լուռ էր դագաղին մէջ պառկող անծանօթ մարդը: Կորէն անծանօթ չէր, բայց լռեց մանկութեան ընկերոջ վատութենէն. գէթ անգամ մը ինք կամ մօրը բերնով պահանջք չդրաւ, նախատիք... ու մեռաւ օտար մարդոց մէջ, թաղուեցաւ ո՛վ գիտէ ուր, ինչպէս: Մինչդեռ ինք հոս անծանօթ մարդուն հոգեհանգիստին էր, ինք՝ ուխտադրուծ. չէ՛, մեծ բառ է. ինք՝ քսակահատ, գո՛ղ, գո՛ղ...

....Այնուհետեւ իմ տեսադաշտէն անհետացաւ Արտօն: Ու ես անարտ չունիմ: Եթէ անպայման անարտ մը կ'ուզէք այս պատմութեան, անոնք շատ են ձեր շուրջը, դուք շարունակեցէ՛ք:

ՁՄՐԱՆ ՅԵՔԻԱԹ

Յուշիկ Ղազարեան

- Կ'ուզեմ որ անմիջապէս անցնիս գործի,-
ըսաւ հազար-հազար հրեշտակի ձայնէն աւելի
քաղցր ու զնգուն ձայնով...

- Բ... բայց, Տէ՛ր իմ...

- Բայց ի՞նչ... Չե՞ս ուզեր աշխատիլ,- հար-
ցումին հետ բացուեցաւ հազար-հազար ար-
շալոյսէ աւելի խոստմնալից ու բոսոր ժպի-
տը,- Գիտե՛մ, եկած ես գտնելու այն հանգիստը,
որ չգտար փշոտ աշխարհին մէջ: Մի՛
վախնար, հոս յոգնութիւն չկայ, կայ միա՛յն
աշխատանքին հաճոյքը: Ծուլութիւնը ինծի
համար անընդունելի է, պէտք է ամէն հոգի
բանով մը զբաղի... երգե՛լ ալ չես գիտեր...

- Դ... Դո՛ւք գիս այսպէս ստեղծեցիք...

- Այո՛, այդպէս է եւ Մենք Մեր պատճառ-
ները ունինք: Մինչեւ հոս վստահեցար ինծի՝
հո՛ս ալ կրնաս վստահիլ... Այնպէս չե՞,- եւ
հարցական փայլքով մը յարեց հազար-հա-
զար ովկիանոսէ աւելի խոշոր ու բարութենէն
աւելի բարի աչքերը:

- Այնպէս է,- եղաւ խեղճ ու կրակ պա-
տասխանը:

- Գաբրիէ՛լ,- ոռոտաց հազար-հազար շե-
փորէ աւելի ուժգին ձայնը:

Եւ երեւցաւ Գաբրիէլը, իր ոսկի հանդեր-
ձանքով, ձիւնափայլ թելերը շքեղօրէն բա-
ցուած, գօտիին մէկ կողմէն կայծակէ սուրը,
միւսէն ադամանդեայ փանդիռը կախուած,
պատրաստ գինուորի պէս: Զոգին դողաց
պատկերին փառահեղութեան դիմաց: Փշոտ
աշխարհին ձգած էր վախը, բայց հոս՝ այս
ամպերուն վրայ, զգացումներու տարբեր
երանգներ կային...

- Տա՛ր գինք, թող սկսի իր աշխատանքը:

Գաբրիէլին մէկ նայուածքը բաւարար էր,
որ Զոգին անտրտունջ հետեւէր անոր: Չհեռա-

ցած, վերջին անգամ դարձաւ ու նայեցաւ Ան-
բացատրելիին ու երկուքով ձուլուեցան
գուլարթագին երգերուն մէջ:

* * *

Զիմա նստած ամպիկի մը վրայ, իր շրջա-
պատը կը դիտէ: Զեռու ու մօտ կը շարունա-
կուէին գուլարթ երգերը, հպարտ փառաբանու-
թիւնները: Այս ամպը համեմատաբար լուռ էր:
Եւ անդորրին մէջ զգաց մէկու մը մօտենալը:
Չէր սխալած, մոխրագոյն զգեստ, աւելի հա-
մեստ թելեր ու յամառ նայուածք ունէր մօտե-
ցողը:

- Բարի եկած ես,- ձայնը բարի, բայց տա-
փակ էր,- գիտե՞ս ինչու հոս ես:

- Այո՛, բացատրեց ինծի...

- Գիտե՞ս ճիշդ ինչպէս պիտի աշխատիս:

Գլուխը թափահարած ձեւէն ո՛չ «այո»
կը հասկցուէր, ոչ ալ՝ «ոչ»ը: Եկուորը զգեստին
ծալքերուն մէջէն հանեց ոսկեգոյն բան մը ու
երկարեց անոր:

- Այս ի՞նչ է...

- Մկրատ:

- Մկրա՞տ...

- Կեանքիդ ընթացքին չէի՞ր տեսած:

- Տեսած եմ, բայց ինչո՞ւ...

- Գործդ կատարելու համար,- երկար
մատներովը քովի ամպէն բարակ բան մը քա-
շեց:

- Այստեղէն կ'առնես հում նիւթը, այս
մկրատով կը կտրես ու հո՛ն կը դնես:

Բացատրութիւնը կարճ, հապճեպ, բայց
բաւարար էր: Ափին մէջ առաւ ոսկի մկրատը,
զգաց անոր մատներուն պաղութիւնը, բայց
մինչեւ գլուխը բարձրացնելը արդէն խօսա-
կիցը հեռացած էր:

Տարօրինակ արարած, որ կարծես անյա-

րիոր էր եթերային, այս շրջապատին: Չնգուն ձայներուն մէջ տափակ ձայն մը, ձիւնափայլ զգեստներուն մէջ մոխրագոյն քուրձ մը, ժպտուն դէմքերուն մէջ անժպիտ զուարթուն մը՝ պաղ մատներով:



Ամպէն քաշեց բարակ կտոր մը ու բացատրութեան համեմատ կատարեց առաջին փորձը: Ափերուն մէջ փայլեցաւ առաջին ձիւնի փաթիլը: Աստուած իմ, այս ինչ հրաշք է... Ափերուն մէջ բռնած էր ձիւնի փաթիլ մը, տաքո՛ւկ-տաքուկ... այնքան տաքուկ, որ ամբողջ հոգին բռնեց տաքութիւնը:

Կատարելութիւն

Բան մը, որուն կը ձգտեր ամբողջ եութեամբ այն փշոտ աշխարհին մէջ, բայց չէր գտներ... քանի-քանի գիշերներ լուսցուցեր էր անոր սիրոյն: Պէս-պէս կտաւներ մատներու հպումով կեանք առած էին ու վերածուած խայտաբղետ զգեստներու, յաճախորդներ իր շէմքէն հեռացեր էին միշտ գոհունակ ժպիտով ու ինք մնացեր էր դրան ա՛յս կողմը մոխրահամ կճռտուք մը ակռաներուն տակ: Որքան կը սիրեր աշխատանքը այնքան կ'ատեր իր գործերը: Անոնք միայն թոյլ նմանութիւն մը ունէին իր մտքին մէջի սաղմին, որ միշտ կը թուէր թէ ծանր երկունքէ ետք ոչ թէ կը ծնէր, այլ ամէն անգամ կը վիժէր:

Իսկապէ՛ս փշոտ աշխարհ, ձախողութիւններու անվերջանալի թուող շարք մը, որ պիտի աւարտէր իր հոս գալով: Աշխատանքը իրմէ օտար չէր, պարզապէս կը յուսար անոր բեռնէն ձերբազատիլ... Հիները ճիշդ ըսեր են՝ «Կեանքը կը վերջանայ՝ գործը չի վերջանար»...

* * *

Ինչպէ՛ս բացատրել ժամանակի թաւալիլը հոն, ուր ժամանակ գոյութիւն չունի, հոն ուր գործերն ու դէպքերը կ'անցնին յաւերժութեան ծփծփուն ու ոլորուն սլաքներուն հետ...

Յաճախ երբ երկրի վրայ եկեղեցի կ'երթար, կը մտածէր, թէ ինչո՛ւ այդպէս տիրապետող ներկայութիւն ունէր ժամացոյցը, որ երբեմն նոյնիսկ անյարմար պահերու իր թոյլ զանգակով կ'լոր ժամը կ'ազդարարէր: Հերետիկոսութիւն չէ՞ Անժամանակին ներկայութիւնը ժամացոյցի «փենփիլ»էն կախել ու կտրել ու կտրտել... Հիմա կը հասկնայ, որ ժամանակը կայ, այնքան ատեն որ կայ աշխատանք, կան իրարայաջորդ դէպքեր: Հոս պարզապէս անզօր է ան ու խորշումներ չի ձգեր դէմքերուն ու ձեռքերուն վրայ... թերեւս որովհետեւ չկան դէմքեր ու ձեռքեր, որ խորշումին...

Մտածումներ, մտածումներ...

Ահա եւս բան մը, որմէ չէր ազատած, կը պատկերացնէ՞ք մտածել ոչ թէ գլուխով, այլ ամբողջ եութեամբ եւ իւրաքանչիւր մտածումի հետ ծնունդ տալ նոր ձիւնի փաթիլի մը: Ահա թէ ինչո՛ւ ամէն մէկ ձիւնի փաթիլ կատարեալ է ու անկրկնելի: Անոնք իրենց երանգը կ'առնեն մտածումի փայլքէն ու ձեւը՝ ոսկի մկրատին հարուածներէն, որոնք մտածումներու ուղղութեամբ կ'երթան... ա՛լ ինչպէ՛ս նմաներ մէկը միւսին:

Չուարթագին երգերէն հեռու, դրախտի մէկ լուռ անկիւնը նստած, Հոգին, որ երգել չի գիտեր ձիւնի փաթիլներ կը կտրէր, տարիներ, տարիներ, դարեր շարունակ: Միակը չէր: Կային իր նմանները, բայց ընդհանրապէս իրարմէ հեռու կը նստէին անոնք ու ոչ միայն չէին երգեր, այլ նաեւ չէին խօսեր ու բացարձակ լռութեան մէջ ծնած հոգիներու ջերմութիւն բերող պաղ ձիւնի փաթիլները լուռ կը սահէին երկինքէն...

Ամէն օր կու գար Մոխրագոյն Չգեստաւորը եւ փաթիլ կտրողներէն կը հաւաքէր անկատար փաթիլները, որոնք խորթ մտածումի մը պահուն անկանոն ձեւ կամ գոյն առած կ'ըլլային: Բացատրութիւն չէր տար, պարզապէս տոպրակի մը մէջ հաւաքելով թելերուն թափ կու տար ու կը հեռանար... «Ո՛ր կը տաւիս», ամէն անգամ կը հարցնէր Հոգին ու անպատասխան կը մնար: Արդե՞օք չէր պատասխաններ, որովհետեւ իր քով ամէնէն քիչը կը գտնուէին անկատար փաթիլներ... թերեւս, բայց առանց յուսահատելու, ամէն անգամ կը կրկնէր հարցումը:

Ու այսպէս, կրկնուող դէպքերը ժամանակի թաւալումի զգացում կու տային...

– Ո՛ր կը տանիս

– Դուն գիս չե՞ս ճանչնար:

Աչքերը զգեստին պես մոխրագոյն էին ու նայուածքը ձեռքերէն աւելի սառնոյցային.

- Չէ... ո՞ր կը տանիս:
- Մի՞շտ այդպէս հետաքրքիր եղած ես:
- Ո... ոչ... ես... կը սիրեմ...
- Կը սիրե՞ս
- Այո, կը սիրեմ իմ փաթիլները, նոյնիսկ անոնք, որոնք կատարեալ չեն: Անոնք ալ ի՛մս են... ո՞ր կը տանիս...
- Դուն զիս չես ճանչնար

Ու վերջին խօսքերուն հետ թելերուն թափ տալով հեռացաւ: Յաջորդ հանդիպումին շրթունքներուն ծայրերը քիչ մը դեպի վեր ուղրուած էին, բայց այս անգամ հարցում չկար: Փաթիլները քուրձին մէջ դրաւ: Լռութիւն... թելերը չթափահարած ետ դարձաւ ու նայեցաւ: Յոգին ամբողջ ուշադրութեամբ մը կը կտրէր փաթիլ մը, որ տարօրինակ արատասովոր գոյն ուներ:

- Այդ մէկը գալ գալուս կը տանիմ:
- Անպատասխան մնալով թելերը թափահարեց ու հեռացաւ...

* * *

Ամպին անկիւնը բաւական բարձրացաւ անկատար փաթիլներուն կոյտը, իսկ Մոխրագոյն Չգեստաւորը չէր գար ու չէր գար...

Պակա՞ս... այո, պակա՞ս... պակաս բան մը կար: Դրախտին մէջ ալ պակասի զգացումը ձեռով մը կրնայ բռնել հոգիները, մանաւանդ երբ անկատար փաթիլներու կոյտը աւելի ու աւելի բարձրանայ, եւ իր անտարբերութեան մէջ հարազատ դեմքը ա՛լ չերեւի... ո՞ր է արդեօք, ո՞ր ամպին անկիւնը լուռ ու մունջ կը հաւաքէ անկատար փաթիլները... փնտրուողը, կարօտ յիշեցնող տամուկ զգացումը՝ գալէն ի վեր առաջին անգամ ըլլալով խռովեցուցին Յոգին, սկսան մկրատէն աւելի յաճախ սպրդիլ անկատար փաթիլներ: Կոյտը հետզհետէ վայրի գազանի մը տպաւորութիւնը կը ձգէր վրան, գազան մը, որ երախը բաց կը սպասէ Յոգին կու տալը: Պետք է բան մը ընել, ու կտրուկ որոշումին հետ ոսկի մկրատը գրպանը դրաւ ու գնաց:

Ո՞ր, ինքն ալ չէր գիտեր... ամպէ-ամպ կ'ոստոստէր ու կը դիտէր շրջապատը: Աստուա՛ծ իմ, այսքան ատեն ինչո՞ւ իր ամպին գերին մնացած էր, ինչո՞ւ չէր տեսած ու չէր լսած այս բոլորը:

Ակնածանքով սկսաւ դիտել հոս ու հոն հաւաքուած գուարթագին խմբակները: Անոնցմէ ամէն մէկը միւսէն գեղեցիկ երգ ու

երաժշտութեամբ կը թնթացներ ամբողջ դրախտը, բայց բոլորին մէջէն ամէնէն հետաքրքրականը, ամէնէն գուարթագինը, փոքրիկ խմբակ մըն էր՝ անդամները հազիւ մէկ ձեռքի մատներուն թիւով, քանի մը հոգի, քանի մը հրեշտակ՝ բոլորը վարդագոյն զգեստներով ու քիչ մը աւելի շողացող դեմքերով: Մէշտեղը կանգնած հոգին, ձեռքը փառահեղ տաւիղով այնպիսի սրտառուչ մեղեդիներ կը յօրինէր, որ անկարելի էր չյափըշտակուիլ: Քայլ մ'առջեւ, քայլ մը ետեւ մօտեցաւ անոր:

- Նուագդ... շատ... գեղեցիկ... Է...
- Շնորհակալ եմ:

Անոր նայուածքին հետ տարօրինակ տաքուկ բան մը կարծես բռնեց հոգին:

- Միացի՛ր մեզի...
- Այո, այո, այո...

Ո՛չ... որքան խնդրանքները զինք կը քաշէին այն քան վախը հակառակ կողմ կը հրէր... Չէ՞ որ ինք երգել չի գիտեր:

Վազեց, վազեց, շնչասպառ՝ ինքզինքը գտաւ իր ամպին վրայ ու... Ո՛վ գարմանք... կոյտը չկար, կար միայն այն տարօրինակ գոյնի փաթիլը, որ անցեալ անգամ ալ չէր առած: Ամբողջ եութիւնը կը դողար... վերցուց փաթիլը: Տաքուկ չէր, անոր ձեռքերուն պաղը կար մէջը: Պաղութեան մէջ հարազատ փաթիլը սեղմեց ամուր, ամուր ու անոր հետ պաղեցաւ եւ խռովքը:

Այլեւս փաթիլները տարբեր փայլք ու ձեւ ունէին եւ ոչ մէկ նոր անկատար փաթիլ կը սպրդէր մկրատէն: Բոլորը, իրենց ամբողջ տարօրինակութեամբ, կատարեալ էին: Իր կտրած փաթիլներուն հռչակը ամբողջ դրախտին մէջ տարածուեցաւ: Յրեշտակ մը կամ հոգի մը չկար որ չէր եկած զանոնք տեսելու եւ զմայլելու անոնց ձեւին, չափին ու գոյնին: Բայց Մոխրագոյն Չգեստաւորը չկար...

* * *

- Որքան գեղեցիկ է:

Չնգուն ձայնը ծանօթ թուեցաւ: Դարձաւ, նայեցաւ ու աչքերուն չհաւատաց: Ոսկեթել տաւիղը թելին տակ, վարդագոյն զգեստին փայլքը դեմքին, իւրաքանչիւր բառ կ'ըսես երգ մըն էր...

- Շ... շնորհակալ... եմ...
- Տակաւին ամչկոտ ես:

Ու ծիծաղը հարիւրաւոր գանգակներու հնչիւնը եւ հարիւրաւոր գարնան աղբիւրներու կարկաչը ուներ:

- Չէ... պ... պարզապես...
- Պարզապես, գործը խօսքեն անելի՞ կը սիրես:
- Ըսաւ, մեղմութեամբ ձեռքէն մկրատը առաւ ու արագ, հմուտ շարժումներով սիրուն փաթիլ մը կտրեց:
- Ինչպէ՞ս:
- Ինչպէ՞ս ի՞նչ... ինչպէ՞ս կրնամ կտրել:
- Ա... այո...
- Ես ալ երբ որ նոր եկայ, քեզի պէս փաթիլ կը կտրէի,- պահ մը լռութիւն տիրեց.- ինչո՞ւ լռու ես:
- Կը մտածեմ որ... ինծի ըսուեցաւ, որ հոս երգել չգիտցողները կու գան:
- Այդպէս է, երգել չէի գիտեր... անկեղծ ըսեմ՝ փաթիլ կտրելու մէջ ալ քեզի չափ վարպէտ չէի:
- Դուն գտեր ես քու բնական առաքելութիւնդ:
- Դուն չե՞ս գտած... եւ այնքան լաւ կը կըտրես...
- Պարզապէս որովհետեւ բան մը լաւ կ'ընես, ըսել չէ որ առաքելութիւնդ է:
- Բնաւ չէի մտածած ըսածիդ մասին... դժգո՞հ ես:
- Գլուխը թափահարեց ժխտական ու հագիւ լսելի ձայնով ըսաւ.- Գոհ ալ չեմ...
- Վարդագոյն Չգեստաւորը գլուխը կախեց



ու սկսաւ մատներուն ծայրով թրթռացնել տաւիղին ոսկի թելերը: Աստուած իմ, նոյնիսկ ամենէն անհեթեթ ձայները կրնան ամոքել պատռուած հոգիները... Առանց բան մը ըսելու կրկին տաւիղը թելին տակ առաւ ու անհետացաւ: Շարժուձեւին մէջ կար բան մը, որ կը յիշեցներ Մոխրագոյն Չգեստաւորը:

Անմիջապէս ձեռքը տարաւ զգեստին ամենէն խոր գրպանը, ուր պահած էր տարօրինակ փաթիլը: Առանց գրպանէն հանելու

մատներուն մէջ առաւ, շոյեց, շօշափեց եւ պաղ մտերմութեան զգացումը բռնեց ամբողջ հոգին: Այդ պահուն աչքերը ինկան Վարդագոյն Չգեստաւորին կտրած փաթիլին վրայ: Փայլքը գարնան առաջին բացուած կոկոնը կը յիշեցներ: Ա՛յս ալ յատուկ էր ու կ'արժէր պահելը: Վերցուց, դրաւ պակաս խորունկ գրպան մը եւ անցաւ աշխատանքի:

Մկրատը քիչ մը անելի թեթեւցած էր ձեռքին մէջ:

* * *

- Վարդագոյն Չգեստաւորը սկսաւ յաճախ գալ: Շատ չէին խօսեր, ընդհանրապէս կը նըստեր քիչ մը անդին, տաւիղին ոսկի լարերուն հետ կը խաղար եւ փաթիլները նոր փայլք ու երանգ կ'առնէին: Կատարեալին ալ անելի կատարեալը կայ... եղեր...
- Չե՞ս կարօտնար փաթիլ կտրելը:
- Վերջին լարէն տարօրինակ ձայն մը ելաւ ու լռութիւն տիրեց:
- Փաթիլ կտրած ատեն ինքզինքդ... ինքզինքդ... ապերջանիկ կը զգայի՞ր...
- Ա՛յ-եր-ջա-նի՛կ...
- Այո, ապերջանիկ...
- Այս տեղերուն չի վայլեր այդ բառը:
- Թերեւս, բայց զգացումը... անելի յարմար բառ չեմ գտներ:
- Չե՞ս սիրեր աշխատանքդ:
- Աշխատանքը չէ որ չեմ սիրեր... պարզապէս... միևնա՛կ եմ...
- Ինչո՞ւ միևնա՛կ ես, տե՛ս, շուրջդ բազմաթիւ փաթիլ կտրողներ կան:
- Անոնք խօսիլ չեն սիրեր... հոս ամենքը այդպէս են, նոյնիսկ անիկա...
- Ո՞վ... Մոխրագոյն Չգեստաւորը...
- Ու նուագակցութեան մեղեդիէն կարծես սահեցաւ ոսկի փայլքը ու տեղը նստաւ գորշ, մոխրագոյն ամպ մը...
- Թերեւս եթէ երգել գիտնայի...
- Կ'ուզե՞ս սորվեցնեմ:
- Անմիջապէս մօտեցաւ ու իր ուղղութեամբ երկարեց տաւիղը:
- Դպի՛ր լարերուն:
- Քանի մը անգամ մատները լարերուն մօտեցան ու առանց դպնալու ետ քաշուեցան: Վերջին փորձին մէկ մատով զարկաւ լարի մը, տարօրինակ ձայն մը տարածուեցաւ չորս դին:
- Վստահ որ առաջին փորձդ յաջող չ'ըլլար: Անգամ մըն ալ փորձէ... այսպէ՛ս:
- Յետգիտէ տարօրինակ ձայները սկսան

ծելի մտնել, բայց կատարելութենէն, շա՛տ... շա՛տ հեռու էին:

- Կրկնութիւն, սիրելի՛ս... կրկնութեամբ անկարելին կարելի կ'ըլլայ, կարելորդ՝ չնուսահատիս, չձանձրանաս ու փորձես մինչեւ կատարելութիւն:

- Ամէն բան չէ որ կրկնութեամբ կը փոխուի: Աւելի ճիշդը...

- Աւելի ճիշդը ի՞նչ:

- Մոռցի՛ր... կրնա՛մ նորէն փորձել...

Ինքն ալ չէր գիտեր, թէ ինչո՛ւ չուզեց պատմել այն մոխրագոյն պարապութեան մասին, որ ամբողջ եութիւնը երկուքի կը բաժնէր... Այո, ոսկեգոյն թրթռացումները բաւական կ'օգնէին այդ պարապութիւնը չզգալու... Ուրեմն՝ որոշեց տիրապետել կախարդական լարերու արուեստին: Թո՛ղ անոր բացակայութիւնը հազար պարապութեամբ հազար տեղէն կտրտէ հոգին, ինք ունի ոսկի լարեր ու ոսկի մկրատ:

Եւ կրկնութիւնը անկարելին ըրաւ կարելի:

* * *

- Որովհետեւ... որովհետեւ, Տէ՛ր, կ'ըսեն միևնույնութիւնը միայն Ձեզի կը վայլէ...

- Միևնույնութիւնը... նոյնիսկ Մեզի հաճելի չէ

- Ուրեմն, Տէ՛ր, կը հասկնաք...

- Դրդապատճառը կը հասկնամ, այդ ըսել չէ, ամէն պարագայի, որ արդարացուած է ըրածդ...

- Չեմ հասկնար, բայց... բայց ես ի՞նչ յանցանք գործեցի...

- Չէ՞ որ քու առաքելութենէդ շեղած ես...

- Չեմ շեղած, պարզապէս... երբեմն...

- Գիտե՛մ:

Անշո՛ւշտ գիտեր... Պահ մը լռութիւն տիրեց:

- Տէ՛ր, ես... ես պատրաստ եմ, ի՛նչ ալ ըլլայ պատիժը, բայց կ'աղաչեմ... կ'աղաչեմ... կ'աղաչեմ...

- Հանդա՛րտ... ավելորդ մի՛ յուզուիր: Պատիժ եւ այլն չկայ, չէ՞ որ դո՛ւն պիտի գտնես քու ճամբան... Հակառակ ընդհանրացած կարծիքին՝ պարտադրել չեմ սիրեր... Նուազդ բարելաւուած է:

- Այդպէս ըսին...

- Կ'ուզեմ լսել:

Ու չես գիտեր ուրկէ, մօտեցաւ հրեշտակ մը, երկարեց իրեն ոսկեթել տաւիղ մը:

- Տէ՛ր, շատ պատրաստ չեմ...

- Վնաս չունի, կը լսեմ...

Առաջին քանի մը ձայները այնքան վայել

չէին, բայց հետզհետէ երաժշտութիւնը կարծես թուլցաւ ու սկսաւ ավելի սահուն հոսիլ: Յանկարծ զգաց մշուշոտ ներկայութիւն մը... բարձրացուց գլուխը եւ երկու գոյգ աչքեր իրար հանդիպեցան: Երաժշտութիւնը սկսաւ թրթռալ նոր ելեւէջներով ու անոր հետ կը բարձրանար ու կ'իջնէր կուրծքը: Անկէ ետք ինքն ալ չէր գիտեր ինչ պատահեցաւ, մատները յանկարծ դադրեցան ու թելը փրթաւ...

Վերջին անգամ ըլլալով՝ երկու գոյգ աչքերը իրարու հանդիպեցան, այս անգամ երկուքին միջեւ խոնաւութեան պատ մը կար կարծես... Խոնաւութիւնը հաւաքուած էր աչքերուն մէջ ու կը հոսէ՛ր, կը հոսէր...

Սոխրագոյն Չգեստաւորը խոնաւութեան մէջ չքացաւ, ու ա՛լ բնաւ չհանդիպեցան իրարու:

* * *

Երբ վերադարձաւ իր ամալը՝ ոչ մէկ բան առաջուան պէս էր: Պահ մը նստաւ՝ ձեռքի ամէն մէկ պզտիկ շարժումը ծանր բեռ մը կը թուեր ըլլալ... կարծես լուծում չկայ: Լուծո՞ւմ... ինչի՞ լուծում... ի՞նչ է այս զգացումը՝ անընդհատ լուծում գտնելու մղումը, ո՞ր հարցին լուծում, հա՛րցը ի՞նչ է... Կը թուի թէ հարցը լուծումն է, լուծումը՝ հարց եւ երկուքն ալ չկան... Այս ինչ տարօրինակ միտքեր են... Անոնց դէմ ինքը միայն մէկ լուծում ունի, ձեռքը երկարեց գրպանը ու ոսկի մկրատին հետ բան մը ինկաւ...

Վարդագոյն Չգեստաւորին փաթիլն էր: Վերցուց... Տարօրինակ ալիք մը կուրծքէն բարձրացաւ, անցաւ ուսին, թելին, ափին... մատներուն, որ ամո՛ւր, ամուր սեղմեցին փաթիլը ու... փը՛թ... կաթիլը ափէն սահեցաւ վար, ամպէն ալ վար... Ան իր հոգեղէն աչքերը վերջին ծայր բացած հետեւեցաւ կաթիլին, որ իջաւ, իջաւ, հասաւ երկիր ու ծարաւ հողը զինք անմիջապէս ծծեց իր խորքը... Ամբողջ եութեամբ, կարծես կաթիլին հետ ներծծուած՝ բերկրանքներուն բերկրանքը կ'ապրեր...

Շուրջը նայեցաւ, այդ ի՞նչ էր... ձեռքը երկարեց հում նիւթին, որ արագ-արագ իր հպումներով կաթիլներու վերածուեցաւ ու սկսաւ հոսիլ... հոսիլ ի՛ր երաժշտութեան տարօրինակ ձայնով, հոսիլ մրոտ մայթերու, չորցած դաշտերու, առաջին համբոյրներու վրայ... հոսիլ ու հոսած տեղը վարդի կոկոններ բանալ, արցունքներ ծածկել, հառաչներ գողնալ, հոսիլ այն խոնաւութեան պէս, որ իր աչքերէն հոսեցաւ, երբ Սոխրագոյն Չգեստաւորը վերջին անգամ տեսաւ...

ՈՒՇԱԾԱԾ ԳԱՐՈՒՄԸ

Կարո Արսլանեան

Ծանր կեանք մը ապրած էր:

Ծանրաբեռն հեւքով մը քաշքշած էր օրերը, սպասումները միայն դիտած էր բաց աչքերով՝ աշնան գաղթող ծիծեռնակներուն հետ:



Շատ բան լսած էր, միամտօրէն հաւատացած էր, բայց ո՛չ մէկ սէ՛ր ապրած էր: Ընդամենը ուներ կին մը ու երեք զաւակներ, որոնց հետ չէր կրցած կիսուիլ՝ բացի չոր ու լեղի հաց մը:

Յալէպի մէջ բացած աչքերը, որոնք միագոյն պատկերներ ճանչցած էին միայն՝ կատաղի յամառութեամբ կ'ուզէր փակել՝ Նոյն այդ միագոյն Յալէպի, միանուագ մահերգին մէջ:

Եղած էր համեստ արիեստաւոր: Տախտակին ու մուրճին հետ բարեկամացած էր շրջան մը: Ստորգետնեայ աշխատանոցին մէջ, հազիւ թթուածինը շնչած էր, փոխարէնը գանձելով ափ մը թուղթ, որ պիտի երթար երեք զաւակներուն տարեկան կրթաթօշակները փակելու:

Ապու Յայկ կը կոչէին թաղեցիները զինք: Յայկի ծնունդով շատ ու շատ ուրախացած էր օրին, Նոյնիսկ անոր յաջորդող միւս տղաներով:

Բայց կեանքը միանուագ չէր: Կրցած էր Ապու Յայկի ունեցած զուարթ ժպիտը եւ վատակած միակ ունեցուածքը՝ հարազատ աշխատանոցը իլել ձեռքէն եւ արդէն դարձած էր մեքենավար պաշտօնեայ մը, որ ամէն օր պիտի սողար ճակատագրին ետեւէն, Յալէպի Նեղ ու խոնաւ փողոցներէն օրուան ապրուստը ճարելու:

Քիչ անց, սրտին մէջ յուսահատութիւնը արդէն իր սեւ բոյնը հիւսեց: Ծխախոտը դարձաւ իրեն անելի հարազատ, իսկ գործէն վերադարձին թափանցիկ օդին մէջ փնտռեց իր անթափանց երազներուն ուրուականները:

Տան մթամած յարկին տակ զաւակները երբեք չվայելեցին անոր շուքն ու հովանին: Երեքն ալ իրենց նկարագիրները կերտեցին ազգային ու միութենական կառոյցներու մէջ եւ իրենց կեանքերը կապեցին Նոյն կառոյցներուն հետ:


Գարունները կ'անցնէին, բայց Ապու Յայկի երդիքին տակ միայն աշնանային ցուրտ քամին կը փչէր: Կինը հազիւ չորս տղամարդու սպասարկէր: Անոնց սեղանին տաքուկ ճաշ մը հասցներ, որուն մէջ պիտի կաթեցներ Նաեւ իր դժբախտի արցունքը:

Տիկին ժազլինը մեղմ հոգի մը ուներ, աշխարհի վայելքներու համին անծանօթ: Աստուծոյ ձայնը լսող ու անոր պատուիրաններուն հնազանդ ծառան էր, ու կրցած էր, քիչ թէ շատ, Քրիստոսին տաճարը կառուցել երեք զաւակներուն սրտերուն մէջ:

«Պիտի համբերեմք տղա՛ս, օր մը կ'արթընեսայ ու կը վերադառնայ, Աստուծոյս դուրպա՛ն ըլլամ, ինք ամէն բանի ժամանակը գիտէ», կ'ըսէր եւ աչքերը կամացուկ մը կը սրբէր թաքցնելու համար իր անհուն վիշտը:

ԳԱՆՁԱՍԱՐ

Ու գաւակները մօր օրհնութիւնը ստացած յաջորդաբար դուրս եկան բոյնէն ու երկուքը գացին շատ ու շատ հեռուներ եւ տունը վերածուեցաւ ողջերու գերեզմանի:



Հասաւ անողոք պատերազմը:

Ապու Յայկը հանգստեան կոչուեցաւ: Այլեւս յանձնուած էր ձմրան բուք ու բորանին: Ժամերով տեղը քարացած, ծխախոտի կիսամեռ ծուխին հետ կը հետեւեր երկրի անհաւատալի արիւնածոր լուրերուն:

Կ'ափսոսար, արցունքները չէր կրնար գսպել, բայց նոյն խոժոռ, յուսալքուած, բայց ժլատ մարդն էր, օղիին հետ ունեցած մտերմութիւնը անելի խորացած էր եւ յիշողութիւնը անընդհատ կը նահանջէր իւրաքանչիւր բաժակին հետ:

Մարդ ու կնիկ ա՛լ կապ չունէին իրարու հետ:

Խեղճ կնիկը, որու ինչ պատմեր, գէթ աղջիկ մը ունենար եւ իր սիրտը պատռէր անոր դիմաց, գուցէ քիչ մը հանգստանար:

* * *

Տարիներու կուտակուած քանի մը դուրուշը վերջացաւ: Ապու Յայկը ի՞նչ ըներ, որո՞ւ

դիմեր: Ո՛չ մէկ հարազատութեան կամուրջ պահած էր մէկու մը հետ: Պատերազմի այս դաժան օրերուն ամենահարազատ կամուրջն անգամ նեղ պիտի թուար անոր, մարդիկ հագիւ իրենց առօրեայ հոգերուն բոցով կը տապկուէին: Գիտէր նաեւ, որ գաւակները պաշտօնեաներ էին եւ իրենց ձեռքերը հագիւ հասներ իրենց կոկորդներուն:

Բայց քրիստոսի կառուցած տաճարները՝ իր գաւակներուն սրտերուն մէջ, երբեք չմնացին անարձագանգ անոր աղերսանքին դէմ: Երեքն ալ պարբերաբար կը գանգէին, իրենց բարի լոյսերով ու քանի մը զուարթ խօսքերով կը փորձէին բարձրացնել իրենց հօր վաղա՛մեռ տրամադրութիւնը, մինչեւ որ օր մը ապու Յայկը, ծանրացած լեզուին կապանքը քակելով իր անդրանիկէն գումար խնդրեց:

Հայկը, որ տարիներով հեռացած էր Հալեպէն, անմիջապէս արձագանգեց հօր խընդրանքին.

- Դուն մի՛ մտահոգուիր պապս, միայն պիտի խնդրեմ, որ քու առողջութեանդ հանդէպ անելի բժախնդիր ըլլաս, երբեք չկարծես միևնակ ես, ես բան մը կ'ընեմ:

- Տղա՛ս, ի՞նչ առողջութիւն, իմ ապրիլս ա՛լ անելորդ է, օրերս կը համբեմ:

- Ի՞նչ օրեր պա՛պ, ընդամենը 70 տարեկան ես, մի՛ յուսահատիր, միայն շուրջդ լաւ նայէ՛, տե՛ս, պատերազմի օրերուն անգամ մարդիկ դեռ կը սպասեն գարունը:

- Ի՞նչ գարուն տղա՛ս, ես երբ գարունը տեսայ, զգացի, որ հիմա այս դժբախտ օրերուն գարունը սպասեմ, ես...

Եւ կապը անջատուեցաւ:

Այո, գարունը ուշացած էր. ապու Յայկը, որ կեանք մը ամբողջ վատնած էր մէկ քաղաքի մը մէջ, միանուագ ու միագոյն, ալ սպասելու ինչ բան ուներ...

Անծանօթ ուրուականի մը հալածանքէն փախչող մարդը այնպէս ալ երբեք չիմացաւ, որ զինք հալածող սեւ ստուերը՝ տգիտութիւնն էր, ընկերային քարացած կաղապարները եւ վերջապէս թերահաւատութիւնը:

Ու մնաց խոպան հողին նման, ուր ո՛չ մէկ գարո՛ւն ծաղկեցաւ եւ ո՛չ մէկ սէ՛ր ծիլ տուաւ տարիներով անոռոգ մնացած կեանքին մէջ:

Ու մնաց ապու Յայկը հոն՝ իր պատշգամին անկիւնը լքուած, թաղարներուն քով կիսատ ծխախոտ մը ձեռքին սպասելով, որ ծաղկին եւ անոնց բուրմուկը գուցէ հասնի իր «ուշացած գարունը»:

ԿԱՐ ՈՒ ՉԿԱՋՅ

Պերճուհի Աւետեան

Պատմական քաղաք Հալեպի մէջ կեանքը կը շարունակուէր բնականոն... մինչ երկիրը կեցած էր քաղաքիական խառնակութեանց վիհի սեմին՝ ներքին խլրտումներ, Ուրբաթ օր բողոքի պոռթկումով մզկիթէն դուրս խուժող ամբոյխ...

թիւն, որ կը թունաւորէր խաղաղ բնակչութեան անդորրը:

Աստիճանաբար կեանքը աւելի վտանգաւոր ու անապահով կը դառնար: Ոմանք լաւատեսութեամբ՝ բարուք, շուտափոյթ լուծման հաւատալով կը քաջալերէին սպասել,



Ու ապականութիւնը քաղաքի ծայրամասէն աստիճանաբար տարածուեցաւ. անբուժելի քաղցկեղ էր, որ գաղտագողի բոյն դրած էր քաղաքին մէջ: Համակիրներ գիրկ բացած էին «միւս»ներուն... Եւ Արեւմտեան կամ Ամերիկեան խմորումով թրծուած «արաբական գարուն»ը ժամանած էր: Աշխարհին իբր յեղափոխութիւն որակուած այս շարժումը գարուն չէր բերած, այլ արիւնով շաղախուած գարուն, ամառ, աշուն, ձմեռ, գարուն, ամառ, աշուն, ձմեռ, եղանակներու յաջորդականու-

քիչ մը համբերել կը թելադրէին. ուրիշներ հոռետեսութեամբ՝ ճամպրուկները հաւաքած կը հեռանային երկրէն:

Մեր վարձակալ Ապտօս, որ ակնյայտ համակրանք ուներ «ընդդիմադիր»ներուն հանդէպ, արդէն ազատ-համարձակ սկսած էր քննադատել երկրի անձեռնմխելի անձիքը՝ իշխանութիւնը, Նախագահը (անթոյլատրելի, Նոյնիսկ դատապարտելի երեւոյթ այս երկրի քաղաքացիին համար): Ան տակաւին կը հաւաստիացներ, որ ահաւոր՝ շատ ահաւոր օրեր

պիտի գային, արիւն պիտի հոսեր ու հասներ... (ձեռքը ծունկին գարնելով) ահաւասիկ այստեղ, մինչեւ ծունկերը...

Այո՛, վիճակը անխուսափելիօրէն կը վատթարանար, շրջանը ամայացած էր, թաղի, շուկայի, շրջապատի խանութները փակուած էին: Ապտօսն այլ հազուադէպ կը յայտնուէր իբր աչք նետելու խանութին. ամենագէտի ինքնավստահութեամբ անոր հաղորդած լուրերը կը սարսափեցնէին... յատկապէս երբ կը հաւաստիացնէր թէ առաւելագոյն շաբաթ մը եւ «անոնք» պիտի հասնին ու գրաւեն քաղաքի կեդրոնը պիտի, պիտի...

Մեր տունը...

Ճակատագրի խաղո՞վ, թէ պատահական, մեր տունը յայտնուեցաւ հակառակորդ երկու խումբերու՝ պետական գօրքի եւ ընդդիմադիրներու միջեւ գտնուող սահմանագիծին վրայ (խաղաղասեր եւ դեմոկրատ պետութիւններու կողմէ նրբանկատօրէն ահաբեկիչ անուանումի փոխարէն ընդդիմադիր բառը կ'օգտագործուէր):

Իսկ մենք...

Մենք՝ քաղաքական հակումներ եւ ակընկալիքներ երբեւէ չունեցող, երկրին հաւատարիմ քաղաքացիներս, ծուարած մեր տան մէջ, լաւատեսութեամբ կը սպասէինք, կը դիմանայինք, կը գոյատեւէիք:

Մենք...

Յօրենական մեր ընտանիքի պատմութիւնը՝ (ներկայիս վտանգաւոր դիրք ունեցող) այս տան հետ սկսած էր 1935 թուականին: Երբ մեծ հայրս՝ բառին բուն իմաստով «թափառական հայ», «վետերան գաղթական» մը, իր ընտանիքը հաւաքած, եօթը պետութիւններ շրջելէ ետք, կը հաստատուէր Սուրիոյ Զալէպ քաղաքը: Սալիպէ թաղամասի արաբական գողտրիկ բակի մը մէջ բնակելու իր ընտրութիւնը առնչուած էր Ս. Քառասնից Մանկանց պատմական եկեղեցիի այդ թաղին մէջ պատուական դիրք գրաւելուն: Յետագային արաբական բակի տարածքը վերափոխուեցաւ երկյարկանի խանութ-բնակարանի, ուր ապրեցան մեծ հայրս ու մեծ մայրս, մեր եւ հօրեղբօս ընտանիքները:

Ու տեղի ունեցաւ տերեւաթափ, անխուսափելի սերնդափոխութիւն, մեծերը հեռացան այս աշխարհէն, փոքրերը դարձան մեծահասակ... Իսկ բնակարանը բոլորին համար «Քաղցրիկ Տուն» էր:

Մենք...

Սօրենական ընտանիքիս անդամները կրկնակի գաղթի ենթարկուելով (Յասանպէյ-Սանճաք) 1937-ին Ադըբասանդրետի պարտադիր դատարկումով կը հասնէին Զալէպ...

Գաղթականներ... ու գաղթականի գաւակներ կը կազմեն ընտանիք քարաշէն ու ապահով այս տան մէջ, եկեղեցիներով հարուստ թաղամասին մէջ:

Հիմա Մենք...

Այդ շէն ու քաղցրիկ տունի մնացորդացը՝ մայրս, քոյրս, ես լաւատեսութեամբ կը սպասէինք, կը դիմանայինք, կը գոյատեւէինք:

Ժամանակի կծիկը կը քակուէր, քակողը անհամբեր արքայազնը չէր, այլ ինքը ժամանակը, մինչ մենք ժամանակի թաւալման ականատեսները...

Իսկ ինչպիսի՞ անակնկալներ կը սպասէին մեզի.

Մարդիկ յաճախ անհամբեր տիրող իրավիճակին, բախտագուշակներու կը դիմեն իմանալու իրենց վերապահուածը, մենք՝ որպէս հայ քրիստոնեաներ հաւատքով եւ յոյսով կը սպասէինք ժամանումը խաղաղ օրերու, որոնք չես գիտեր ինչու կ'ուշանային:

24.8.2012

Ուրբաթ յետմիջօրէ Է...

Ամառնային այն պահն է, երբ նեղացուցիչ տաք ալիքը եւ գերիշխող արեւը աստիճանաբար կը նահանջեն... օդին մէջ կախուած պատուհասը ճօճանակի նման կ'օրօրուի. նախագագացումն է:

Կէսօրուան մօտ էր, Ծովիկը հեռաձայնեց թէ քրոջը տունը կ'երթայ:

«Այսօր կարծես վիճակը լաւ չէ, հոն մնաս լաւ կ'ըլլայ»... կ'ըսեմ:

«Ինչո՞ւ բան մը կայ», կը հարցնէ ան մտահոգ:

«Ուրբաթ է, գիտես...», կը պատասխանեմ ուրիշ բացատրութիւն չգտնելով:

Վեցերորդ գգայարանք...

Որոտանման առաջին պայթումը կը թուի մօտիկ ըլլալ: Դէպի անցք կը վազենք ես, մայրս ու քոյրս, շուարած, օղակ կազմելով: Զաւանաբար նման պահերուն կողք-կողքի ըլլալը ապահովութիւն կը թելադրէ:

Յաջորդ հրասանդը ճարճատելով որոտաց: Քոյրս «մամա՛» ճչաց, ինքնաբերաբար աւելի մօտեցած ենք իրարու, մայրս կը փորձէ քաջալերական բառեր փսփսալ, ես պա-

պանձած եմ... յետոյ ամենաահաւոր, հաւա-
նաբար ամենամօտիկ պայթումը: Պահ մը
մթութիւն տիրեց, գետինը երկրաշարժի նման
ցնցուեցաւ, ինկող քարերու, ապակիներու
ձայներ, տրաքոց:

«Ո՞ր ինկաւ», կ'ըլլայ յաջորդ հարցումը:

Հանդարտութիւն տիրած է, սակայն քա-
րացած, իրար սեղմուած կը մնանք անցքին
մէջ: Նման պարագաներուն զգուշութիւնը
կարելոր է, կրնայ հրասանդ մը եւս արձա-
կուիլ:

Ի վերջոյ սրտատրոփ դուրս կու գամ,
ամէն կողմ քարի կտորտանքներ, սեւ խաւով
ծածկ, փշրուած ապակիներ, պայթած դռ-
ներ... աստիճաններէն կամացուկ կը բարձ-
րանամ տանիք, ջրամբարի տակառը ծակած է
ու ջուրը շատրուանի նման կը ժայթքի:

Մեր տան մօտիկ երեք հրասանդ ինկած են
ու քանդումներ յառաջացուցած..

Կարելորը մենք ողջ առողջ ենք.

«Աստուած մեզ կը փրկէ»

Մօրս կրկնած ամէնօրեայ նախադասու-
թիւնն է, որուն կ'ուզեմ փակ աչքերով հա-
ւատալ:

Հեռաձայնը կը հնչէ.-

- Ինչպէ՞ս եք...

Սրբազան Հօր ձայնն է, կը փորձեմ մէկ
շունչով պատմել պատահարը:

- Հիմա այդ բոլորը մոռցիր, տղաքը պի-
տի գան, Առաջնորդարան եկէք:

Նման պարագաներուն տեր-տիրական
ունենալու զգացումը ինքնավստահութիւն
կը պարգեւէ: Սրբազանը ոչ միայն հոգեւոր
հովիւ է, այլ թաղեցի դրացի, իսկական Հայր...
Խրախուսիչ խօսքերով կը դիմաւորէ մեզ,
կ'անջատուիսք պահ մը, բայց բջիջայինի
զանգերը անհատնում են...

Քանի մը ժամ ետք կազդուրուած, լաւա-
տեսութեամբ գինուած կը վերադառնանք
«Մեր տուն».

28.8.2012


Տան մէջ անհրաժեշտ նորոգութիւններ
պետք է ընել, ապակիներուն մասին չենք
մտածեր, յոռետեսութիւնն է... Նման պայ-
թումներ կրկնուելու հաւանականութիւն կայ,
հետեւաբար «նայլոն» կ'անցընենք ապակիի
փոխարէն, իսկ ջրամբարի տակառին նորո-
գութիւնը անխուսափելի է, ամէն գնով պետք է
նորոգուի: Ապու ճամիլին կը հեռաձայնեմ:
Բժիշկի նման պայուսակ մը շալկած կու գայ,

հազիւ դէպի տանիք քայլ նետած, համա-
զարկ:

Կը սպասենք:

Մանկական խաղ է կարծես, քայլ մը
առաջ, երկու ետեւ. շիկացած է վիճակը,
Ապու ճամիլ յուսահատ կ'ուզէ մեկնիլ.

*«Մինչեւ գաւաթ մը սուրճ խմես՝ ամէն ինչ
կը կարգաւորուի»,* կը փորձեմ համոզել... ան
կը համոզուի՞. գիտեմ որ միամիտ ու հետե-



ւող բարի պտուղ չէ, բայց ընտանիք ունի,
պիտի կերակրէ պատերազմի այս դժուարին
օրերը յաղթահարելով:

Ի վերջոյ ցանկալի հանդարտութիւնը
կը տիրէ, Ապու ճամիլ կապիկի ճկունութեամբ
կը մագլցի ջրամբարը կրող սիւնին վրայ,
սիրտս կը թփռտայ, նորոգութիւնը կարելոր է,
հապա՞ մարդուն կեանքը, որ ամէն ինչէ
աւելի սուղ է, թէեւ պատերազմը յօրինողնե-
րուն համար՝ չնչին..

Պայթիւն, ցնցում, ահ ու դող, քիչ մը դա-
դար, գաւաթ մը սուրճ.. Ի վերջոյ Ապու ճա-
միլ նորոգեց ջրամբարը:

Հրասանդերուն գործած ակերները կը հե-
տազօտեմ... Կողքի անշուք, բարձր շէնքերու
միջեւ սեղմուած արաբական բակին տանի-
քին վրայ ինկած է հրասանդ մը եւ դանակի

Նման հատած ներքեւի սենեակը: Միւսը մեր տան դիմացի թանգարանի երկրորդ յարկին վրայ գտնուող սենեակի աջակողմեան պատը խորտակած, երրորդը՝ ճակատի ցանկապատը: Մէկ խօսքով մեր անմիջական շրջապատը ականուած վիճակ կը ներկայացներ, մինչ մենք՝ հրաշքով փրկուած:

«Յրեշտակները կը պահեն մեզ», կ'ըսեր մայրս:

Սատանաները սակայն անդով կը գործին, անոնք մարդ արարածներ ալ կրնային ըլլալ, շատ բարեկիրթ տեսքով ու մարդկային իրաւունքներու մասին թղթածրարը շալկած «արաբական գարունը» աւետող:

Մենք... իսկ մենք՝ հայ քրիստոնեայի հաւատքով եւ յոյսով կը գոյատեւէինք:

28.10.2012

Թաղամասին մէջ հայ ընտանիքները կարծես տիրող մթնոլորտի ազդեցութեան տակ աւելի մտերմացած են, մարդ արարածը անել պարագաներու հանդիման նեցուկ կը փնտռէ, երբեմն անուշ խօսք մը, քաղցր ժպիտ մը հոգեկան բաւարարութիւն կը պարգեւեն:

Այս Կիրակի կէսօրէ ետք մեր կարգն է այցելել կողքի թաղի մեր դրացի Չուպրիկեան ընտանիքին:

Տան շքամուտքին բարեւ կը փոխանակենք «երիտասարդ»ներուն՝ թաղը պաշտպանող զինուորներուն հետ:

- Ապահո՞վ է այդ կողմէն.- գլխաւոր ճամբան ցոյց կու տանք, թէեւ ծրագրած ենք քիչ մը աւելի երկար, բայց ապահով ներքին ճամբով երթալ:

- Ապահով է *Խալէ* (մօրաքոյր).- կ'ըսէ զինուորը:

Քաջալերուած՝ «Ճտէյտիէ»ի կողմէն, հաւ ծախողներու կիսաւեր թաղը դիտելով, շորոքալով կ'ուղղուինք դէպի յաջորդ թաղը:

Անկիւնադարձին՝ հազիւ քանի մը քայլ նետած՝ խուճապ..

Մայրս կողքիս ծունկի վրայ կը տեսնեմ, հաւանաբար քարի կտորէ մը սայթաքա՞ծ, կ'օգնեմ որ ոտքի բարձրանայ ու զօրքի «տղաք»ը իրարանցումի մատնուած են, զինուոր մը գէնքը վերցնելով դէպի «Ճտէյտիէ» կը կրակէ: Տղաքը կը վազեն մեր մօտ. խուճապ... խուճապ...

Դիպուկահարը կրակած է, մայրս եղած է անուղղակի թիրախը:

Փամփուշտը պատին զարնուելէ ետք,

մօրս մարմնի փափուկ մասին մէջ մխրճուած է:

«Ինչո՞ւ մայրս». այնքան լաւատես մայրս, որ կը խրախուսէր բոլորս, թէ՛ «*Աստուած պիտի պահէ մեզ*»:

Մայրս բազմաթիւ զոհերէն մէկն էր... Եթէ փամփուշտը քանի մը սանդիմէթր դէպի ներքեւ խրուած ըլլար, կրնար փշրել սրունքի ոսկորին գլուխը եւ յաւիտեան անդամալուծել այս պատերազմին հետ ոչ մէկ կապ ունեցող անմեղ մայրս:

Շտապ օգնութիւն, հիւանդանոց...

Յերթապահ բժիշկը նախընտրեց փամփուշտը ձգել մօրս մարմնին մէջ, պատճառաբանելով, որ չէր թելադրեր կրնքի բարդ գործողութեան ենթարկել զինք, նախընտրեց դեղերով յաղթահարել մանրէներու հաւանական յարձակումը օտար մարմնի ներխուժումը կանխելով... Եւ... Եւ..

Իսկ ինչո՞ւ մայրս.

Մայրս առանց առարկելու կը համակերպեր դիտելով աղէտը լաւատեսի իր տեսանկիւնէն:

«*Աստուած բոլորիս երեսը նայեցաւ... որ փամփուշտը*»... մտովի կը հակաճառեմ.-

«*Երեսնիս լաւ նայէր այս փորձանքը չգար մեր գլխուն*». ու յաջորդ պահուն՝ որպէս հայ քրիստոնեայ իրավիճակի ծանրակշռութիւնը մտաբերելով կը բարձրաձայնեմ ձայնակցելով մօրս.-

«*Յազար Փառք*»:

Գիշերը ուշ ժամուն, երբ ցաւազրկիչի ազդեցութեան տակ մայրս մշիկ-մշիկ կը քնանար, ես ու քոյրս ստուգելէ ետք որ վերքին արիւնը լերդացած է, փակեցինք նստասենեակին դուռը եւ վերադարձանք խորհրդակցութեան:

Ստահոգիչ էր փամփուշտը ձգել մարմնին մէջ... յանկարծ եթէ թունաւորում... ուրեմն ուրիշ բժիշկի պէտք է դիմել:

29.10.2012

Դէպի Ճտէյտիէ մուտքերը փակ են, միակ ճամբան առաջնորդարանի կողմէն պիտի ըլլար: Դիմեցինք մեր տղոց, մեր «Շտապ օգնութեան»:

Տղաքը պատգարակով մայրս փոխադրեցին:

Շտապ օգնութեան մեքենան գիլ շնոցը սփռելով կը սուրայ, մօրս բարի նայուածքը յառած է դէպի մեքենային առաստաղը ու

շրթունքները կը շարժին, գիտեմ, կ'աղօթեմ: Խցկուած կողքին կը բռնեմ ձեռքը, ժպիտը կը գծագրուի... կ'ուզեմ փոխադարձել, կը շոյեմ մազերը, կը զգամ որ շրթունքներուս վրայ ծամածռանք մը կը յայտնուի, կոկորդս կը սեղմուի:

«Ինչո՞ւ մայրս»:

Նայուածքս կ'ուղղեմ այլ կողմ, մեքենան անդու ճչոցով գգուշացնելով շրջապատը կը յառաջանայ, կողքի ապակիի ցլացումէն կը նկատեմ վարորդը... զարմացած կը փորձեմ ստուգել, չէ՛, չեմ սխալած Տեր Յայրն է, Տեր



Տրդատը, այսպիսի անել օրերուն բոլորը իրար ձեռք կը մեկնեն, Տեր Յայրը կը դառնայ վարորդ:

Մայրս բժիշկի գոհասեղանին՝ երեսն ի վար տարածուած, իրեն յատուկ համբերատարութեամբ կը սպասէ բժիշկի որոշումին. ան որպէս վկայեալ մասնագետ ի գուր կը փորձէ դուրս հանել փամփուշտը չարչրկելով մայրս, ապա հեռաձայնը ձեռք առնելով կը զբաղի խորհրդակցութեամբ, կարծես սեղանին պառկած կիներ, փորձարկումի ենթարկուելիք անասուն մը ըլլար... անտանելի է երբ արդիւնքը չիմանալով կը փորձեն:

Ի վերջոյ կը փոխադրենք զինք այլ հիւանդանոց, ոսկրաբոյժ մասնագետը վճռական իր խօսքը կ'ըսէ.

- Գիտե՞ք որքան մարդիկ-զինուորներ այս օրերուն բեկոր կամ փամփուշտ ունին իրենց մարմիններուն մէջ, անհոգ եղէք:

Մօրս հեզ ու բարի նայուածքը կը յուսադրէ, այդ անսահման բարութիւնը մէջս կրկին կը բարձրացնէ ընդվզման ալիքը.

«Ինչո՞ւ մայրս»:

Կանաչ նայուածքը յառած առաստաղին, անոր շրթունքները կը շարժին, չի գանգատիր, չի յուսահատիր... Յոյսը, այո՛, յոյսը, այս

ծանր պայմաններուն առանց յոյսի կարելի չէ գոյատեւել:

«Վստահի՞ր Բարձեալին»:

Սրբազան Յայրը այցելեց ու խրախուսեց: Որպէս շլմորած հօտի հաւատաւոր հովիւ, որպէս գուրգուրալից հայր անոր ներկայութիւնն ու աղօթքը օրհնութիւն ու մխիթարանք էր:

Մտաբերեցի հայրս... Երկրորդ տարին էր որ չկար. հարազատի կորուստը որքան ալ հասուն տարիքի ըլլայ ցաւալի է անտարակոյս, բայց ես այդ պահուն գոհ էի, որ ան իր հանգիստը գտած էր... կը մեղանչէի՞.

Դիպուկահարի փամփուշտը մնաց մօրս մարմինն մէջ ու Մենք... հայ քրիստոնեաներ, հաւատքի եւ յոյսի ուժով այս փորձութիւնը եւս յաղթահարեցինք:

15.11.2012

Ամերեւոյթ բնականոն է մեր կեանքը, մայրս ապաքինած է, «տղաքը» սովորական կը վազվզեն, կրակոցներ կան, բայց արդէն մեր առօրեային մաս կազմող: Ձմեռը փեշերը հաւաքած կանգնած է դրան սեմին: Վառելանիւթ ապահովելու պարագան հացի չափ անհրաժեշտ է:

Մառանը մեծ սնտուկի մէջ հօրս կաղապարները կային, ընտիր յղկուած փայտէ: Տարիներ առաջ երբ ան դադրած էր աշխատանքէ, մայրս ակնարկած էր, թէ անիմաստ է այլեւս զանոնք պահելը... հայրս կրակ կտրած յայտարարած էր, թէ ոչ ոք իրաւունք ուներ անոնց ձեռք երկարելու, թէ ինք ամէն ինչ ձեռքէ կը հանէր, նոյնիսկ այդ մասին կարծիք յայտնողը, իսկ կաղապարները պիտի՛ մնային անձեռնմխելի: Մայրս ահաբեկած նոյնիսկ հօրս մահէն ետք սրբութիւն պարունակող այդ սնտուկին չէր համարձակած ձեռք տալ...

Յիմա արդէն ժամանակն էր հօրս սիրելի կաղապարները օգտագործելու, անոնք հիւսնալի շերմութիւն պիտի փոխանցէին:

Ու մենք ճարճատող վառարանին շուրջ կծկուած՝ քրիստոնեավայել պահուածքով կը փսփսայինք.

«Աստուած հոգիդ լուսաւորէ»:

Ես հաւատացած էի, որ հօրս հոգին կը սաւառներ սենեակի շերմութեան մէջ ոչ թէ զայրացած, այլ այնքան գոհունակ, որ նեղ օրերուն այս ձեւով օգտակար կ'ըլլար մեզի.

14.2.2013

Ընդոստ կ'արթննամ: Արձակուած կրա-

կոցներու սարսափազդու ծայներ, ցնցումներ: Վերմակին պլլուած, կը զգամ փետրուարեան վաղ առաւօտի գորշ մթնոլորտը: Ռմբակոծումները աստիճանաբար կը մօտենան, աղջամուղջին մէջ կը փնտռեմ հողաթափներս: Շառաչիւն, քամի ու... ահաւոր պայթում, գետինը կը շարժի ոտքերուս տակ, պահ մը սառած կը նայիմ շուրջս:

- Ինչո՞ւ ելար, կանուխ է տակաւին.- մայրս կը ջանայ հանդարտեցնել, ձայնին ընդմէջէն կը զգամ քօղարկուած մտահոգութեան երանգը:

Ցնցում-պայթիւն, ցնցում- պայթիւն... գետինը կը դողդայ:

- Այս ի՞նչ կ'ըլլայ կոր.- քոյրս գլուխը դուրս կը հանէ վերմակին տակէն:

Չգուշաւոր կը մօտենամ դէպի նեղ փողոցի վրայ բացուող պատուհանին, կրակոցներու մէջ կիսովին խլացած ու սահմուկեցնող «Ալահ ու աքպար»ները կը կախուին օդին մէջ:

- Ելէ՛ք, արդէն հարցը լուրջ է... շո՛ւտ հագուիկք:

Որքան ալ նախապատրաստուած ենք, անհրաժեշտ իրերու-հագուստներու պայուսակ, փոխադրելի համակարգիչ, ընտանեկան «գանձ»ի պայուսակ, բայց շուարած եւ խուճապահար ենք:

Շէնքի կողքի նեղ անցքէն կը լսեմ դրացուհիին ձայնը:

- Շո՛ւտ, շո՛ւտ իջէք, «միւս»ները յարձակեցան.- պատուհանի ճաղերուն մէջէն կը նայիմ, անոր ստուերը արձանի նման կը գծագրուի, գլխարկով գլուխը ծածկած, «նայլոն» պայուսակ մը ձեռքին.- Ապու Յայտարը ըսաւ փախէ՛ք... տէ՛, շո՛ւտ, մամային ուշադիր եղէ՛ք,

(Ապու Յայտարը, թաղի գօրքի պատասխանատուն էր, ուրեմն հարցը շատ լուրջ է):

«Փախէ՛է՛ք», ձայնը կ'արձագանգէ պայթիւնին մէջ խլանալով, դրացուհին անհետացած է:

Այո՛, ամենամտահոգիչը մօրս պարագան է, տարիներու բեռի հետ մարմնին մէջ փամփուշտը ու քայլերը դանդաղ են:

- Մա՛մ, դուն կամաց-կամաց իջիր աստիճաններէն մինչեւ դռները փակենք:

- Մի՛ վախնաք, Աստուած մեզի հետ է:

Մայրս յաւիտեան կառչած է Ամենակալի փէշերուն, մինչ ձայնը կը դողայ:

Տան դուռը փակած պահուն երկվայրկեանուան թռուցիկ մտածումը կը փայլատակէ...

«Մեր պապերը այսպէս լքած են իրենց բնակարանները ու չեն վերադարձած, թերեւս մե՞նք ալ»:

Կը նայիմ շուրջս, միթէ՞ վերջին անգամ, որքան յոռետես կը դառնամ... մայրս չկայ, պայթուցիկներու ձայներ... հապճեպ հասնելով շքամուտքի սկիզբը, կը նայիմ ձախ, դէպի մասամբ ապահով փախուստի ճամբան: Մայրս արդէն հասած է փողոցը հատող թաղին անկիւնը ետին քաշելով իր փոխադրական պայուսակը: Խորունկ շունչ մը կը քաշեմ, յետոյ...

Վախի ու հետաքրքրութեան մղումով



կը նայիմ աջ, հազիւ քսան քայլ անդին թաղի մուտքի կողմը... պատերազմ է, արձակուած փամփուշտները օդին մէջ կարմիր գիծերով կը փայլատակեն, ճակտին կանաչ կապով գինեալ մը կը գոռայ իր Ալլահը կանչելով ու դէպի «դրախտ» ճամբան հարթելով:

«Աստուա՛ծ իմ»... ես ալ իմ Աստուածս կը կանչեմ:

Պահ մը կը տատամսիմ, սրունքներս կը դողդղան, յետոյ վճռական քայլս կը նետեմ լափթափն ու ձեռքի զոյգ պայուսակներս ամուր բռնած, խելայեղ վազքով կը հասնիմ քրոջս ետեւէն, կամարին տակ սպասող մօրս միանալով: Մեր ընտանիքը միատեղուած է...

- Մա՛յրս, մեզմէ արագաշարժ դուրս եկար.- սրտատրոփ՝ բայց կը փորձեմ կատակել:

Վտանգաւոր հատուածը մեր ետին է, պայթիւններ ու կրակոցները կը լսուին հեռուէն, բայց միթէ՞ անվտանգ հատուած կայ այս քաղաքին մէջ: Ինքնախաբերութիւնը կ'ըմբռնես երբ ամբողջ եութեամբդ կ'ապրիս ահաւոր պահը:

Փողոցները ամայի են, մեքենաներ չկան, հատուկենտ՝ մարդիկ: Յուրաքանչյուր կը քալենք դեպի քրոջս բնակարանը:

Տիառնընդամասը է, այլոց համար Վալանթայն-Սիրոյ օր, մինչ ամենուրեք ատելութիւն է, թշնամութիւն:

Սեր-ատելութիւն կողմնորոշուիլ է պետք այս խաղին մէջ, աշխարհի Մեծերուն խաղին...

22.10.2013

Տաքունկ արեւ մը կար, ոսկորներդ տաքցնող: Բնութիւնը երբեմն բարեխիղճ է... յուսանք մօտալուտ ձմեռն ալ նման օրեր կը պարգեւէ: Անիւներով թաւալող կառքը առի ու սնունդ ապահովելու համար դուրս եկայ.

«Մասապար»ը (դեպի քաղաք ուտեստ մատակարարող միակ անցքը) գոց է եղեր... մարդուկ մը սեւ տոպրակներ դրաւ մայթին. արագ մօտեցայ, կաս-կարմիր ախորժաբեր խնձորներ էին, սակայն փնտռածս գետնախնձոր եր:



- Յիմա ասի կայ, վաղը աս ալ չես գտներ, ինծի լսէ, ա՛ռ.- խրատեց մարդուկը: Իրաւացի եր: Բարդ բառին առաջին արմատը ջընջելով խնձորը առի գետնախնձորի փոխարէն... Մարի Անթուանէթը իրաւունք ունէր հացի տեղ *կաթօ* թելադրելով.

Սակայն լուսաւոր բաներ ալ կան այս օրերուն, ամիսներ ետք վերջապէս հացին քիլոն տասնապատիկ անկում կրած է նախկին օրինաւոր գինին վերադառնալով, սակայն այդ բարիքը եւս կարելի չէ առանց ճիգ թափելու ստանալ, երկա՛ր ժամեր հերթի պիտի կենաս, բայց կարելի է եկթադրել, թէ փակուղիէն դուրս գալու յոյսեր կան: Մենք մեր անսահ-

ման յոյսով գինուած երբեք չենք ընկրկիր:

Ամենամօտիկ փուռին դիմաց երկար-երկար շարքին մէջ տեղ գրաւեցիք քրոջս հետ... յառաջխաղացը դանդաղ է, սրտմաշուք, բայց պիտի համբերենք, համբերութիւնը մարդուս ի վերուստ շնորհուած արժանիք է:

Կողմնակի դուռը ճռնչելով ետ կ'երթայ, գինուոր մը ահագին հացի տրցակ շալկած, գոհունակ ժպիտով «*Տեղք, ես յարթական եմ*», ըսող նայուածքով, արմուկովը հրմշտկելով իր անցքը խոչնդոտող ամբոխը առաջ կ'անցնի... երկրի պաշտպանը առանձնաշնորհեալ է, ի՛նչ խօսք:

- Յացը սեւ է.- կը փսփսամ քրոջս:

- Յիմա գտար ալ սեւը-ճերմակը կը փընտռես:

«Իրաւունք ունի» կը մտածեմ ու կը գոհանամ շնչելով կողմնակի դռնէն ելլող «շապպի»ին հսկայական հացի տրցակին բոյրը, սա ալ քաղաքի պաշտպանը «հալալ»...

«Ապու Ահմատ», կը գոչէ անդիէն նոր ժամանող մը. հաց բաժնողի անտարբեր նայուածքը յանկարծ կը սրանայ, յարգալից կը բարեւէ ու տրցակ մը հաց կ'երկարէ:

«Ապու Ահմատ... Ապու Ահմատ», ձայներ կը ինչէն աչէն, ձախէն եւ ձեռքերը առաջ կ'երկարին, իմ կոկորդիս մէջ եւս կը լեցուի այս կանչը, բայց մարդուկին շանթահարիչ նայուածքը սուր դանակի շեղքին նման կը հատէ աղմուկը:

Օրերը ինչե՛ր վերապահած են..

- Ապու Ահմատը հիմա այս թաղամասին ամենակարեւոր անձն է.- կը փսփսամ քրոջս:

- Յապա՛, նո՞ր հասկցար.- կը պատասխանէ ան հեգնական.- դուն ալ՝ դրամովդ հաց մուրացող իր փուռի սեմին... Էհ տունիա՛, այսպիսիները մեր գլխուն վարպետ դարձան...

Մեծամտութի՛ն, քա՛ւ լիցի... Պատերազմը կը շրջէ մարդոց կեանքն ու դիրքերը:

Ի վերջոյ քոյրս երկու քիլօ հաց կը ստանայ, կարգը իմս է, քաղցր ժպիտ մը գծած դեմքիս մանրուքը կ'երկարեմ Ապու Ահմատին,

- Յաց չմնաց, խմորի մեքենան պիտի նորոգեն.- խօսքը միայն ինծի չէ, այլ ետեւս գոյացած շարքին:

Առաջ երկարած ձեռքս պահ մը կախուած կը մնայ:

- Զալէ՛.. առածս կը բաւէ.- քոյրս կը փորձէ ամոքել:

Գոհանալը եւս՝ արժանիք մը....

ԱՐԴԱՐ ԲԱԺԱՆՈՒՄ

Կարո Վ. Մանճիկեան

Պօղոսը իր գիւղին առաջատար բանուորներէն էր: Իր հիմնական զբաղումը գիւղատնտեսութիւնն էր: Պարտիզպան էր: Կը ցաներ

նուորութիւն ընելու, փոխան օրապահիկի մը վճարումին, համագիւղացիներուն կալուածներուն մէջ աշխատելով. փորել, հողը շրջել,



ցորեն, ծխախոտ, բանջարեղէն... սակայն իր բազմազանակ հօրմէն ստացած ժառանգը քիչ էր. բաւարար տարածութիւն չունէր, որ օգտագործելով բաւարարէր իր ընտանիքին պէտքերը: Վերջապէս օրերը շատ փոխուած էին եւ սակաւութեամբ ապրելու նախկին կենցաղին կերպը փոխուած էր: Չաւակները օրուան հետ քայլ պահելով նոր բնոյթի կարիքներ ունէին, ուստի ան հարկադրուած էր բա-

անշաղախ պատեր պատել, պարտեզները անպիտան ու վայրի թուփերէն, մացառներէն ու տատասկներէն ազատել-մաքրել... հողագործին գործ չէր պակսեր: Որպէս խղճամիտ բանուոր, ռանչպար, արդէն գիւղացիներուն հանրածանօթ ու անոնց կողմէ փնտռուած դարձած էր:

Ինք իր մասին հպարտութեամբ կ'ըսէր.
- Ես ֆրանսացիներուն դարէն մնացած

բանուոր եմ:

Անշուշտ նկատի ունեք ֆրանսական հոգատարութեան տարիները, որոնք հազիւ թէ դուրս եկած էին հայրենիքէն՝ Սուրիայէն:

Գիւղացիք իր ծածկանունը «Ոսկի Պօղոս» դրած էին: Գիւղին մէջ իւրաքանչիւրը իր ծածկանունը ունէր: «Արպաթաշ», «Մանա», «Փայլուն», «Չուռնաճի», «Սերսերեան»... Եւ այլն: Իր ծածկանունը շատ լաւ էր՝ «Ոսկի Պօղոս», եւ ինք հպարտ էր այդ մակդիրով:

Օրերը շատ փոխուած էին: Կենցաղի ոճ, ուտելիք-խմելիք, հագուստ-կապուստ... ամէն ինչ: Սակայն Ոսկի Պօղոսը կը մերժէր իր հագուստն ու արտաքին տեսքը փոխել: Նախ կը մերժէր մկրատ զարնել իր սուր պեխերուն, կը մերժէր իր լայնածաւալ ու արաբական շալվարը եւրոպական տափատով փոխել՝ փոխարինել: Հալէպի ներսի փակ շուկային ամենանշանաւոր դերձակին քով կարել տուած էր, բարեկամի մը միջոցաւ. ինք Հալէպը ո՞ր պիտի գտներ՝ շալվարը զինք գտած էր: Արդէն հազիւ 30-40 տարի կ'ընէր որ երկար *գըպկա-ճուպկան* փոխած էր շալվարով:

Չէր ուզեր նաեւ ճաղատ գլուխը ծածկող «պէրէ» գլխարկէն ձերբազատիլ: *Ճէս* կամ *դալփախ* չէին սագեր իր բանուորի գլխուն, մանաւանդ որ պէրէն գնած էր ֆրանսացի զինուորէ մը. յետոյ պէրէն նիւթեղէն անարարկելի փաստն էր, որ ինք ֆրանսացիներուն դարէն ի վեր բանուոր էր:

Չաւակները դպրոցէն խեր ընելու երես չուներին: Գիւղին Տէր Թեօդիկեան վարժարանը տան մօտ գտնուելով հանդերձ, անոնք քարշ տալով աւարտած էին անոր վեցամեայ ընթացքը՝ տասը եւ աւելի տարիներու հասցնելով զայն:

Մեծ տղան՝ Շմաւոնը, չորրորդ դասարանին երբ լքեց դպրոցը, արդէն պէխն ու մօրուքը սեւցած էին, ուստի հարկաւոր էր անոր ածելի սուր դանակ մը ճարել, կաշիէ սրոցին հետ միասին:

Պէխ ու մօրուք ունեցողը այլեւս տղամարդ կը համարուէր եւ պէտք է որ գործի երթար: Արդարեւ, ամէն օր, Ոսկի Պետրոսը տղան՝ Շմաւոնը իր հետը գործի կը տանէր. զայն «կը կրթէր», կը վարժեցնէր: Այլապէս մէկ ձեռք աշխատելով, ինչպէ՞ս պիտի կարենար ածելի դանակ-սրոց ապահովել տղուն: Փոքր տղան ալ շուտով կը հասներ:

Գարնանային տաքուն կ'որ մը գացած էին

դրացի գիւղը, այնտեղի հանրածանօթ Միլաս աղային կալուածը աշխատելու, ուր խոպան հողը պիտի շրջէին, որ յետոյ ծառեր տնկէին այնտեղ: Աղան խնձորի տունկեր բերել տուած էր Լիբանանէն:

Երբ կ'եսոր եղաւ, աղան անոնց բերաւ մեծ կաթսայ մը լեփ-լեցուն տոլմա-սարմայով: Ձաւարով տոլմա-սարմա էր: Պօղոս կը մերժէր նորածեւութեան հետեւելով բրինձով շինուած տոլմա-սարմա ուտել: Ո՛ր ձաւարը, ո՛ր բրինձը:

Հայր ու տղայ նոր մշակուած հողին վրայ ծալապատիկ նստած, բացին իրենց հետ բերած թոնիրի հաստ հացին ծրարը, կաթսային քով: Լոլիկը ջարդելու համար պնակ չկար, սակայն մօտակայ որթատունկին տերեւները պնակի գործ կրնային կատարել:

Երեք-չորս տերեւի վրայ ջարդեցին ափի չափով երկու կիսահասուն կարմիր լոլիկներ. աղան պղինձէ շինուած «սաղկնդետով» (սեղանի թաս) մածուն ալ բերած էր: Հայր ու տղայ կռթնած նոր շրջուած հողի մեծածաւալ գուղձի մը, ասլանի ախորժակով գրեթէ լափեցին ճաշը, մածունը, լոլիկը եւ հացը: Թէեւ աղ չկար իրենց հետ, սակայն առանց աղի ալ համով էր իրենց կերածը:

Արեւը արդէն հասած էր երկնքի զենիթին: Հողի գուղձը թեւանցուկ բարձ ընելով, հայր ու տղայ հասակի երկայնքով փռուեցան խոնաւ հողին վրայ մրափ մը առնելու եւ հանգչելու:

Արեւածագէն մինչեւ կ'եսոր աշխատանքէն ետք, քիչ մըն ալ հանգիստի պէտք ունէին, որպէսզի մինչեւ մայրամուտ գործի դիմանային:

Մեղմ-մեղմ, դանդաղ-դանդաղ, իրենց պառկած տեղէն առանց իրարու նայելու կը խօսակցէին:

Շմաւոն շլացած աղային հրամցուցած ճաշէն, թմբուկի մը չափ ուռած փորը շփելով, հօրը դառնալով ըսաւ.

- Ետոյ (Հայր), լաւ կերանք ու կշտացանք, հա՛:

- Այո, այո տղայ. լաւ կերանք. չէ՞ որ կտրիճներ ենք:

- Այո, բայց, յետո՛յ, շատ չենք փորած, աչքիս քիչ կ'երեւի մեր փորածը:

- Է՛հ, տղաս. «ղըթ» (ուժ) չունինք, «ղըթ» չունինք:

Աղան, մի ըսեր թէ քովի կիսափուլ պատին ետին չոք եկած զիրենք կը լրտեսէր,

կ'ունկնդրեր. հաստ ու երկար փայտ մը ձեռքին արշաւեց անոնց վրայ.

- Յա՛, ուտելու համար կտրիճներ էք, բայց փորելու համար «ղըթ» չունիք հա՛. եալլա, դո՛ւրս, դո՛ւրս:

Օրերը թաւալեցան, գաւակները մեծցան: Աղջիկը, որ միջնեկն էր, երբ յարմար փեսացուն եկաւ, ամուսնացուց. աղջիկը որքան շուտ մարդու երթայ, այնքան լաւ:

Մեծ տղուն ալ բեռնատար ինքնաշարժի մը վարորդին օգնական կարգեց, թեւ բեռնակրութիւնը ինք կ'ըներ: Արդէն երկու տարի կ'ըներ, որ աւարտած էր գիւտուորական ծառայութիւնը, որ տւեա՛ծ էր հինգ տարի: Բեռնատարին եկամուտը բաւարար էր. ապագայ կը խոստանար: Միակ անպատեհութիւնը ամրան գիւղը օդափոխութեան եկած օտարական երիտասարդներն էին, որոնք յաճախ պատրուակ մը ստեղծելով հետը կը կռուրտէին, եւ անոնք շատուոր ըլլալով, միշտ ծեծ ուտողը ինք կ'ըլլար:

Փոքր տղան, Միսաքը, շուտով պիտի աւարտէր իր գիւտուորական ծառայութիւնը, որ մեծ եղբօր ծառայութեան սման, տւեա՛ծ էր հինգ երկա՛ր տարիներ: Յայրը պարտաւոր կը գգար անոր ապագային համար կարգադրութիւններ կատարելու:

Ուստի, ծախեց վարի թաղի իր մշակած եւ ծառեր տնկած հողաշերտը, եւ անոր փոխարժեքով գնեց խոպան, անմշակ հողատարածք մը, որ նախկինին եռապատիկն էր: Մեծ տղան՝ Շմաւոնը, բեռնակրութիւն կատարելով, յաջողած էր քանի մը «ղրուշ-ղրուշի վրայ» ղնելով յարմար գումար մը հաւաքել, ու անոր այդ գումարով գնեց նոր դրացիէն ուրիշ հողաշերտ մը:

Յայր ու տղայ, ձեռք-ձեռքի տուած, կառուցեցին երկու մէկ սենեակի քարաշէն տուներ: Փոքր տնակներ էին եւ շատ պակասաւոր: Ի՞նչ հոգ: Յառաջիկային կրնային անոնց վրայ սենեակներ աւելցնել...: Յետոյ, յիշեց, որ երբ ինք ամսունացաւ Սառային հետ, բնակեցաւ իր հօրենական մէկ սենեականի տան մէջ: Առագաստի գիշերն ալ այնտեղ անցուց, երբ նոյն սենեակին մէջ որպէս թէ կը քնանային հայրը, մայրը, կովը, հորթը, այծը եւ ուլիկը. թեւ սենեակը բաւական մեծ էր:

Չինուոր Միսաքը, երբեմն արձակուրդին, տասը-տասնիինգ օր կու գար տուն, եւ կ'օգնէր իրենց: Ու այսպէս հողերը մշակեցին. իսնձորի ծառեր տնկեցին, թոնիր մը պատեցին:

Նոյնիսկ 12 մեթր խորութեամբ եւ 5 մեթր տրամագիծ ունեցող ջրհոր մըն ալ փորեցին ու պատեցին. ջրհորին ակը քիչ մը տկար էր, եւ Սեպտեմբեր ամսուն գրեթէ կը ցամքէր. բայց ի՞նչ հոգ, իրենց տնային պէտքերուն եւ նոյնիսկ բանջարանոց մը ջրելու կը բաւէր:

Կարելորդ ուրախ եւ երջանիկ էին:



Ժամանակը հասած էր որ Շմաւոնը կարգէր: Այդպէս կը մտածէր Ոսկի Պօղոսը:

Տունը, կալուածը, թոնիրը եւ ջրհորը պատրաստ էին: Միայն հարս մը կը պակսէր:

Մեծ տղան՝ Շմաւոնը, հագիւ աւարտած էր գիւտուորական ծառայութիւնը, մօտակայ շրջանի գիւղերէն յարմար աղջիկ մը գտնելով կարգեց:

Օրերը արագ թաւալեցան, հաշտ ու սիրով էին: Միսաքը հագիւ աւարտած էր գիւտուորութիւնը, անոր ալ Յալեպէն հարս մը գտաւ ու պսակեց: Անոնք իր՝ Ոսկի Պօղոսին, եւ Սառային տան մէջ բնակեցան: Շմաւոն, որ արդէն երկու գաւակ ուներ, միւս, կից տան մէջ կը բնակէր:

Միսաքը կարգուելէն ետք, քանի մը մանրմունր վեճեր ունեցան, հայր ու տղաք, հարսմարս ու կեսուր:

Ժամանակին հետ ըսի-ըսաւները շատցան. Ոսկի Պօղոսը եւ Միսաքը մէկ կողմ, Շմաւոնը միւս կողմ:

Վեճերը այնտեղ հասան, որ ջրհորէն ջրելու-խմելու եւ թոնիրը հաց եփելու համար ամէն օր վեճ կ'ունենային: Ջուրն ու հացը անհամ կը դառնային:

Կալուածին համար վեճ չունէին: Թիգթիգ, ծառ-ծառ հաւասարապէս ու արդարօրէն կատարուած էր բաժանումը: Կռուախընձորները՝ ջրհորն ու թոնիրն էին: Դրացիներն ու թաղեցիք ալ կողմ դարձած էին ու կը մաս-

նակցեին վեճերուն: Չէ որ երկրին մէջ կը տիրէր ընկերվարական կարգեր, համայնական ու հաւաքական դրութիւններ, ինչպէ՞ս բաժնեկից չըլլային վեճերուն... համայնական, հաւաքական վեճեր, հայկական վեճեր:

Դրացիները, երկուստեք *«իրաւունք կը բաժնէին»*: *«Այո՛, իրաւունք ունիս»* նախադասութիւնը, քաջալերական էր երկու կողմերուն: Այդ նախադասութիւնը բաւական էր որ Պետրոսին, Շմաւոնին եւ Միսաքին ձայները բարձրանային ու հասնէին Տէր Աստուծոյ: Կիներն ալ կը ձայնակցէին պոռչտութիւն: Մայրը՝ Սառան ալ իրենց կը ձայնակցէր, այն ատեն *«ամբոխը կը ստանար պատկառելի երեւոյթ»*:

Հարցի լուծման փորձերը գլորուելով գացին հասան գիւղին *«երկրագործներուն եւ գիւղացիներուն համագործակցութեան»* վարչութեան մօտ (Իթթիհատ Ալ Ֆալահին), անշուշտ անցնելէ ետք գիւղի թաղապետին եւ հոգեւոր հովիւին բովերէն: Անոնք՝ թաղապետը



տը եւ Պատուելին, չէին յաջողած խօսք հասկցնել անոնց, վիճող կողմերուն, գերդաստանը, յայտնի էր որպէս «սկզբունքային» հարցերուն մէջ կարծրատիպ, չըսելու համար, յամառ գերդաստան:

Համագործակցականի վարչութեան ատենապետը, որ նոյն ատեն դպրոցին վարժապետն էր, քանիցս կանչեց, յորդորեց, խրատեց զանոնք՝ *«հայր ու տղայ էք, ամօթ է...»*, անօգուտ:

Ուստի, համագործակցականի վարչութիւնը, կազմեց հաշտարար յանձնախումբ մը, գլխաւորութեամբ վարչութեան ատենապետին, եւ վիճող կողմերուն գերդաստանէն Ոսկի Պօղոսին երկու հօրեղբորդիներուն: Անոնք ճարահատ գացին թոնկիին եւ ջրհորին վայրը, տեղւոյն վրայ լուծելու հարցը:

Որպէս բանակցութեան եւ համաձայնութեան

վայր, նկատի առնուեցաւ Շմաւոնին տունը, սակայն կիներուն բացակայութեան, տղամարդոց վեճին կիները ինչո՞ւ ներկայ պիտի ըլլային:

Որոշուած օրը, կեսօրէ ետք արդէն յանձնախումբը կանգնած էր ջրհորին բերանը:

Թոնկիին հարցը դիւրին լուծուեցաւ:

Կիրակի օրը, Աստուծոյ էր: Հաց եփել արգիլուած էր: Իսկ շաբթուան 6 օրերը, երկու կողմերուն, երկու մասի բաժնելով, իւրաքանչիւրը 3 օրեր եփելու իրաւունք ունէր, իւրաքանչիւրը իրարայաջորդ մէկ օր: Այսինքն մէկ օր՝ այո, մէկ օր՝ ոչ: Իսկ Կիրակին երկուքին՝ *«Ո՛չ»*: Հասկնալի:

Կարգը եկաւ ջրհորին:

Հօրեղբորդիներէն Վարդգէսը հետը բերած էր 6-7 մէթր երկայնքով, 10x5 սմ. լայնքով ու հաստութեամբ տախտակի ողորկ կտոր մը: Վիճող կողմերը մէջ մը տախտակին, մէջ մըն ալ Վարդգէսին աչքերուն կը նայէին, բայց չէին յաջողեր լուծել տախտակին հանելուկը:

Ոսկի Պօղոսին մտքէն մէկ անգամ անցաւ, արդեօ՞ք տախտակը իրենց թիկունքին տալու՞, տփելու՞ պիտի ծառայէր: Չէր համոզուած: Շմաւոնն ալ այդպիսի կասկած մը ունէր... անհաստատ:

Մոռցայ յիշելու, թէ թոնկիը շիկացնելու ցախը պիտի ամբարձին թոնկիին, որ շինուած էր երկու տուներուն միջեւ, տարածութեան մէջտեղ, իւրաքանչիւրը իր տան հանդիպակաց կողմը, եւ անոնց արգիլուած էր իրարմէ ցախ գողնալ. նոյնիսկ փոխ առնել:

Երբ կարգը եկաւ ջրհորին հարցը լուծելու, Վարդգէս, որուն ակնարկին ինկած էին երկու տափակ ու մեծածաւալ, ժայռի մեծութեամբ քարեր, իրամայեց որ այդ մեծ քարերը մօտեցնեն. մէկը Պօղոսը, միւսը Շմաւոնը. ու երկար տախտակը ջրհորին բերանը, ճիշդ մէջտեղը տեղաւորելով իրամայեց, որ տախտակը ամրացուի բերուած քարերով: Գրպանէն չափը հանելով չափեց հեռաւորութիւնները. տախտակը դրուած էր ճիշդ ու ճիշդ մէջտեղը, ու դառնալով կողմերուն ըսաւ.

- Ինձի լաւ նայեցէք ու մտիկ ըրէք. մէկը դոյլը տախտակին այս՝ իր տան կողմէն ջրհորին մէջ մխրճելով ջուր կ'առնէ, միւսն ալ միւս կողմէն: Իւրաքանչիւրը իր դոյլը չուսնով կը գործածէ: Որ իրար դոյլ չգործածէք, տուն տարեք դոյլերը, իւրաքանչիւրը իր տունը: Յետոյ բացարձակապէս արգիլուած է մէկը

ԳԱՆՁԱՍԱՐ

միւսին կողմէն ջուր առնելը, ատիկա գողութիւն կը համարուի: Զասկցա՞ք, ալ կը բաւէ՛. անգամ մըն ալ մեզի այստեղ պիտի չկանչէք: Կը բաւէ՛:

Ճարահատ համաձայնեցան: Ու վերջացաւ:

Արդար էր բաժանումը, ու անառարկելի: Թոնիքը օգտագործելու համար, օրերէն մէկն ալ գիջած էին Տէր Աստուծոյ:

Ալ ի՞նչ կը մնար:

Սո՛ւրճ, բաժակ մը սո՛ւրճ ըմպել՝ Շմաւոնին տան մէջ:

զես երդնում. խա՛ջ վկայ, իմ կողմէս բերի, սուտ չեմ խօսիր կոր: Իմ կողմէս է, իմ կողմէս:

Այնքան նեղացած էր որ որպէս առանձին ջրհորէն ջուր քաշած ըլլալու ուրախութիւնը (յետ արդար բաժանումին), գլուխէն թռցուց Վարդգէս հօրեղբայրը:

Ինչ որ է. Վարժապետ-ատենապետը մըթնոլորտը փոխելու համար գրոյցը այլ տեղ տարաւ ու խօսեցան հին, անվերադարձ ու երանի օրերէն քիչ մըն ալ նորերէն, ու այսպէս մինչեւ որ իրիկունը իր գորշ վարագոյրը իջեց-



Սուրճը առանց թարմ ու պաղ ջուրի ըմպել չէր ըլլար. ուստի Վարդգէս հրամայեց Շմաւոնին սափոր մը՝ «փարջ» մը պաղ ջուր բերել ջրհորէն:

Շմաւոն, որ շատ գոհ մնացած էր արդար բաժանումէն, համարեա՛ վագելով շտապեց դուրս, եւ դոյլը հետը տանելով, իր կողմէն մխրճելով դոյլը ջուրին մէջ, գայն վեր քաշելով լեցուց փառջը (փոքր կուժ): Տուն մտնելով, բաժակ մը լեցուց պաղ ջուրէն ու երկարեց Վարդգէս հօրեղբոր: Զօրեղբայրը բռնեց բաժակը, մօտեցուց դէմքին, բայց փոխանակ ուղղակի խմելու, բաժակը աւելի մօտեցուց քթին, խոր շունչ մը առնելով, խորունկ հոտոտաց ու հոտոտաց ու դառնալով Շմաւոնին ըսաւ.

- Տօ՛, Շմաւո՛ն, սուտ չխօսիս հա՛, այս ջուրը քո՞ւ, թէ հօրդ կողմէն քաշելով բերած ես: Սուտ չխօսիս հա՛, ես հոտը առած եմ: Գիտե՛մ:

- Վարդգէս հօրեղբա՛յր: Ինչի՞ վրայ կ'ու-

նելու պատրաստուեցաւ:

Յանձնախումբը գոհունակ, վիճողները գոհունակ ճամբայ ելան դէպի մօտակայ բլուր, որուն ետին կը գտնուէին անոնց բնակարանները: Երկար զարիվեր մը բարձրանալով հասան գագաթին, ուր փոքր, ազատ շունչ մը քաշեցին:

Վարդգէս՝ արդար բաժանումին հերոսը, գոհունակ հայեացքը ետ դարձուց, դիտելու համար Ոսկի Պօղոսին եւ Շմաւոնին նորաշէն թաղը, ներքին ինքնաբաւութեամբ:

Սահմուկած քարացաւ հայեացքը:

Շմաւոն, օգտուելով յանձնախումբին մեկնումէն եւ հօրը բացակայութենէն, շուտափոյթ տունէն բերած էր իր դոյլը եւ արագ-արագ, հեւ ի հեւ իր դոյլը կը մխրճէր ջրհորին մէջ, տախտակով բաժնուած հօրը կողմէն ու լեցուած դոյլը իր կողմը կը պարպէր:

Չէ՞ որ խօսք տուած էր խարդախութիւն չընել: Արդար եղած էր ջրհորին բաժանումը:

ՏՕՆԱԾԱՌԸ, ՆՈՐ ՏԱՐԻՆ, ՀԱԼԷՊԸ ԵՒ ԱՇԽԱՐՀԸ

Խորեն Քհնյ. Պերթիզլեան

Այս տարի ալ տնեցիներով տօնածառ գարդարեցինք: Իգական սեռը այս գործին մասնագետն է: Պէտք է ընդունիլ որ այս հաճելի աշխատանքը իր լրումին կը հասնի կին արարածին ճամբով: Տեսալին կինը իր վարպետ ձեռքերով, նուրբ ճաշակով եւ բծախընդիր մօտեցումով լուսաւորման սարքաւորումը կը ստանձնէ, գարդարանքը խնամքով կը գետնոյէ եւ մտուրը հետաքրքրաշարժ կը դարձնէ: Մէկ խօսքով, կաղանդի ծառը շքեղ եւ գրաւիչ ընելու համար ամէն ճիգ կը թափէ: Տունին մթնոլորտը բոլորովին տարբեր կ'ըլլայ:

11 ամիս «տերեւաթափ» եղած ծառը կրկին կը ծաղկի, փայլք եւ հմայք տալ կը սկսի: Մարդիկ ապրելու թափով, նոր երազներով եւ անսպառ եռանդով կը տօնեն Ամանորը:

Ահաւասիկ երեք տարի եղաւ Հալէպի ազատագրման: Որոշապէս անվտանգ ապրելու կարելիութիւն ունեցաւ հալէպցին: Պատերազմի փոշին թօթափելու կանչուեցաւ սուրիահայութիւնը, սուգին, սարսափին, խորտակումներուն եւ խռովութիւններուն «ոչ» ըսաւ, եւ վճռեց վերապրումի վկան հանդիսանալ:

Տօնածառը պատերազմի ահաւոր տարիներուն մռայլ էր: Սուգի թանձր խաւարը դիրաւ մեզ պաշարած էր: Չրկուած էինք տօնածառին հրապուրիչ տեսքը վայելելու հաճոյ-



քէն: Ձեռով մը տափակ օրէնքի կամ չոր սովորութեան տպաւորութիւն կու տար տօնածառ գետնոյէլը, քանի որ ճոխութիւնը բացակայ էր, ցաւը կը ճնշէր, կարօտը կը յուզէր, տագնապը կը կաշկանդէր եւ սեւ լուրը մտքեր կը պղտորէր: Այլ խօսքով, քացախով խառնուած գիւնի կը նմանէին հալէպցիին Նոր Տարուան հաւաքոյթները: Հիմա, փառք Աստուծոյ, պայմանները որոշ չափով փոխուեցան, որովհետեւ մարդիկ մեծ մասամբ կրցան «իրենց իւրով տապկուիլ», քիչով գոհա-

ԳԱՆՁԱՍԱՐ

Նալ, բարին յուսալ, տոկալ եւ Աւետարանի պատուերին համաձայն օրուան հացով գոհանալ: Այլապէս պիտի մատնուէին ողբալի կացութեան, պիտի յանձնուէին ընկճուածութեան: Անբուժելի ախտ մը, որ քաղցկեղի նման կը կրծէ մարդ արարածը:

Նոր Տարուան առիթով բնականաբար սպասումներ եւ ակնկալութիւններ ունիք Աստուծմէ, որովհետեւ՝ *«Միայն բարի նուէրները*



եւ կատարեալ պարգեւները կու գան երկինքէն՝ Զօր Աստուծմէ, որ լոյսի արարիչն է» (Յկ 1.17): Ուստի, կ'աղօթենք որ 2020 թուականը օրհնութիւններու եւ յաղթանակներու տարի ըլլայ: Կան գուշակողներ, որոնք ենթադրութիւններով կը խօսին, գալիքին վերաբերեալ անհիմն տեղեկութիւններ կը փոխանցեն: «Շուկայ տաքցնող» այս յայտագիրները դիտաւորեալ կը ներկայացուին: Այս շինծու «գիտելիքները» միայն կասկածամտութեան, անորոշութեան եւ մտավախութեան դրդապատճառ կը դառնան: Աստուծոյ վստահողը ականջ չի՛ տար սխալ գաղափարներու, որոնք չարէն կու գան, անվերջ վեճերու դուռ կը բանան եւ մարդահաճոյ նպատակներու գոհացում կու տան: Նմանօրինակ վատա-

ռոջ մտայնութիւններ հաւատքի մղումով չեն, *«Եւ ինչ որ հաւատքէն չի գար՝ մեղք է»* (Յո 14.23): Զետեւաբար, ինչո՞ւ մտահոգուիք: Մեր Տերը կ'ըսէ. *«Վաղուան մտահոգութիւնը վաղուան ձգեցէք: Իւրաքանչիւր օրուան նեղութիւնը ինքնին բաւարար է»* (Մտ 6.34):

Անգբաղ մտքով եւ անկաշկանդ կերպով ապրելու համար, Էական է նախապաշարումներէ եւ հաւատքի հետ աղերս չունեցող նիւթերէ հեռու մնալ, նման մօտեցում խոհեմ եւ իմաստուն կեցուածքի արտայայտութիւն է: Իմաստուն մարդը գալիքով չի մտահոգուիր, տարեվերջին առիթով շինիչ կը նկատէ յետադարձ ակնարկով նայիլ տարուան ընթացքին կատարածներուն, սխալը սրբագրելու, բարիին ձգտելու եւ կեանքը արժեւորելու նպատակէն առաջնորդուած: *«Անցեալը անցած է»*, ըսած է երջանկայիշատակ Գարեգին Բ. Կաթողիկոսը: Ինչ խոհափիլիսոփայական հաստատում: Անցեալը մարդուն արմատն է: Զին օրերը թթամորն են գալիքին: Անցնող ամիսներու փորձառութիւնները իրենց տեղն ու դերը ունին մարդկային կեանքի ողջ տեւողութեան: Ուրեմն, *«անցեալը անցած է»*:

Այս տարուան վերջալոյսին կը փորձեմ մտաբերել կեանքէն պատկերներ: Աշխարհը անբնական ընթացքի մէջ է: Զաճոյապաշտութիւնը, սանձարձակութիւնը, ծայրայեղութիւնը, սրբութիւնները ոտնակոխելու ամօթալի արարքները, եւ տակաւին ուրիշ ափսոսալի երեւոյթներ, որոնք կը պարզեն մարդկային կեանքին բարոյական անկումն ու հոգեւոր սովը: Ուստի, հաւատացեալը հաստատուն մնալու է, որպէսզի երբ *«Անձրեւները գան, գետերը յորդին, հովերը փչեն»* չկործանի, այլ՝ զինուի մեղքին դէմ յաղթանակ կերտելու համար:

Վերջապէս, սիրելի՛ ընթերցող, յուսադրուած հոգեվիճակով մեր շրջապատին ըսենք «Շնորհաւոր Նոր Տարի», յոյսով ակնկալենք բարին: Յոյս... ինչ սփոփարար եւ ուրախարար դեղ մը, որ կու տայ տոկալու կամեցողութիւն, նպատակ իրագործելու կարողութիւն, գոհունակութիւն եւ խաղաղութիւն:

Եկէ՛ք միասիրտ ամենուն մաղթենք բարին, լաւատեսութեամբ նայինք գալիքին, թող յաջողութեան դռները բացուին, իրարմէ խռովածները հաշտուին, եւ Յիսուսի սիրով մեր կեանքը նորոգուի:

ԳԱՄԻՇԼԻԻ ԽԱՅՏԱԲՈՒՆ ԿԵԱՆՔԻՆ ՅՈՒՇԵՐՈՎ

Մարի Մելքոն

«Ապրէ՛ք, երեխէ՛ք, բայց մեզ պէս չապրէ՛ք»: Հայրս այս նախադասութիւնը յաճախ կը կրկներ, երբ գիշերները իր շուրջը բոլորուած հետաքրքրութեամբ կ'ունկնդրէիք այն պատմութիւնները, զորս մեծ հայրս պատմած էր իրեն ու թարմ յիշողութենէն վերստին կ'արտադրեր զանոնք:

Մեծ հայրս ջարդէն փրկուած, հազիւ ուրջ տարեկան երեխայ, որք մեծցած էր: Ինչէ՛ր-ինչէ՛ր ըսես չէր տեսած խեղճ մանչուկը, մինչէ՛ւ որ հասած էր երիտասարդ տարիքի,



ամուսնացած եւ կազմած իր բոյնը ու տքնանքով աշխատած՝ ընտանիքին ապրուստը հոգալու համար: Ազգասեր, հայրենասէր էր ան: Չաւակները ազգային դպրոց ուղարկելու համար ամէն տեսակ զոհողութեան պատրաստ էր: Անգութ մահը, սակայն, կանուխ խլած էր զինք... Այստեղ հայրս կը դադրեցներ իր պատմութիւնը ու արցունքը գաղտագողի սրբելով կը շարունակէր պատմել.

– Ես տասներկու տարեկան էի, երբ հայրս մահացաւ: Այդ օրերուն վեցերորդ կարգի գերազանց աշակերտ էի, ապագայի նկատմամբ երազանքներ ու յոյսեր ունէի, սակայն

բոլորն ալ հիմնայաւոր կործանեցան հորս մահէն ետք: Աշխատանքի ասպարէզ նետուելով կեանքի դաժան հարուածներուն դէմ դրի: Աղքատութիւնը որքան լեղի էր ու... – արցունքները զսպելով կը կրկներ, – Ապրէ՛ք, երեխէ՛ք, բայց մեզ պէս չապրէ՛ք:

Իսկապէս ալ, մենք հանգիստ, անհոգ ու խաղաղ մանկութիւն մը ապրեցանք, որուն մասին յաճախ կը պատմեմ զաւակներուս:

Գամիշլիի ինծի համար ծննդավայր մը չէ միայն, այլ եութեանս մէկ կարեւոր մասնիկը: Հոն ունիմ անկրկնելի յիշատակներ, որոնք կը տարբերին իւրաքանչիւր եղանակի հետ: Աշունը՝ պաշարի պատրաստութեան, ձմեռը՝ տուններու տանիքները ցեխով ծեփելու հսկայ աշխատանքին, գարունը՝ դալարագեղ դաշտերու մէջ պտոյտներու յուշերով հարստացուցած են ողջ եութիւնս:

Գամիշլիի կիզիչ ամրան, մեր բնակարանները մեղուափեթակի կը վերածուէին: Մեծէն պզտիկ գործի կը լծուէին, իւրաքանչիւրը ունէր իրեն վստահուած աշխատանք մը: Լուիկի խոյսի պատրաստութիւնը ունէր իր հետաքրքրական ծեսը: Իւրաքանչիւր շէնքի տանիքը լուիկի հիւթ պարունակող ափսէներ կարմիր կակաչներու նման երկինքն ի վեր կը նայէին: Երոզները կարմիր գոյնով կը ներկուէին... Է՛հ, երանելի օրեր, թաղեցիները կը հաւաքուէին իրարու օգնելու, լուիկը կը ճգմէին, հիւթը դոյլերով տանիք կը փոխադրէին, եւ հո՛ն, մեծկակ ափսէներու մէջ կը տեղաւորէին: Այսպէս մարդիկ լուիկի խոյսի իրենց ձմրան պաշարը կ'ապահովէին: Կարգը կու գար ցորենին, Նոյն աշխուժութեամբ կը պատրաստուէին ցորենը խաշելու: Խոշոր կաթասներու մէջ կը գետեղէին ցորենը, մարմանդ

ԳԱՆՁԱՍԱՐ

կրակի վրայ եփելով ու մերթ ընդ մերթ խոշոր շերտերով խառնելով գայն: Մենք մայթին նստած կը հետեւեինք այս արարողութեան մանրամասնութիւններուն եւ մեր փորձակը սրած, պնակները մեր ձեռքին կը սպասեինք ցորենի խաշելուն, որպէսզի մեր բաժինը ստանալով համեղ ցորենը վայելէինք:

Հայրս ինչպիսի դժուարութեամբ արցունքները կը զսպեր, երբ խօսեր իր մանկութեան մասին: Հիմա կարգը իմս է: Արցունքներս չեմ կրնար զսպել, անոնք դիւրաւ կը հոսին, բայց այս անգամ ուրախ յիշատակներու համար ու փայլք մը կու տան դեմքիս: Ու կը մտածեմ, թէ ի՞նչ մաղթեմ զաւակներուս: Արդեօ՞ք հօրս խօսքը կրկնեմ... Բառերը բեր-



նես կ'ելլեն, սակայն տարբեր շարահիւսութեամբ, զաւակներուս դեմքին նայելով կ'ըսեմ. «Ապրէ՛ք, երեխէ՛ք, բայց երնէ՛կ մեզ նման ապրէք»:

Յիշողութիւններով կրկին կը սլանամ դէպի Գամիշլիի ամառնային օրերը ու կը պատմեմ, թէ Գամիշլիի կլիման այնքան տաք կ'ըլլար, որ մեծերը իրենց ճակտին վրայ վազող քրտինքը սրբելով, կատակելով զովանալ կը փորձէին. «Եթէ հոս այսքան տաք է, հապա դժո՞խքը ինչ պիտի ըլլայ»: Կարծեք բոլորն ալ

իրենց տոմսերը ապահոված ըլլային դէպի դժոխք... Յամենայնդէպս մեծերը բոլոր եղանակներէն ալ դժգոհ էին... «Չմեռը արքատներու թշնամին է» կ'ըսէին: Աշնան, օդի փոփոխութեան հետ կռիփն ու հարբուիսը կը վարակէին բոլորը ու անոնք մեզի կը թելադրէին հաստ հագուիլ հիւանդութենէն պաշտպանուելու համար: Իսկ գիտէ՞ք որ՝ «Գարնան հովը դմակ է, իսկ Աշնան հովը՝ դանակ է»: Գարունն ալ կիներուն համար մեծ հոգ է, տան ընդհանուր մաքրութիւն, Մեծ Չատկուան պատրաստութիւն... Մեծերը յաճախ դժգոհ էին, սակայն մենք՝ փոքրերս, բոլոր եղանակներուն ալ ուրախ ժամեր կը ստեղծէինք: Ամբողջ համն ու հոտը տարբեր էր սակայն: Տանիքը քնանալը, սարքուած յատուկ մահճակալներու վրայ, որոնց չորս անկիւնները երկար տախտակներ կը տեղադրուէին ու անոնք սպիտակ, երկար սաւաններով կը փաթթուէին, որպէսզի քնացողները անտեսանելի դառնային շրջապատի մարդոց կողմէ: Գիշերը երկննալ այդ մահճակալներուն վրայ, երկնքի լուսնին ու աստղերուն տիրելու զգացումը ապրիլ, Աստուծոյ հետ խօսելու ուղղակի ճանապարհը գտնել ու անուշ երագներով, անհոգ քնանալ... Եթէ ամառը դժոխք էր մեծերուն համար, մեզի համար դրախտի մանրակերտն էր:

Այս է հայաբնակ Գամիշլին՝ իր մերթ դաժան, մերթ քաղցրաբոյր օրերով: Հայկական մեր բարբերը պահպանող ու անոնցմով իսկ յատկանշուող Ճեզիրէի սիրտն է ան, որ յարակից է պատմական մեր Մծբինին ու սնանած է անոր ակունքէն:




ԳԻՐՔԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԸ

Յակոբ Միքայելյան

Նոր պաշտոնիս բերումով ինկեր եմ գիրքերու աշխարհի մը մէջ ու չեմ ուզեր դուրս գալ: Այն դպրոցը, ուր հինգ տարիներէ ի վեր

տարի ինծի յանձնեց գրադարանի արեւմտահայերէն գիրքերու պատասխանատուութիւնը, զոր ընդունեցի սիրով, քանի որ գիրքերու աշխարհը միշտ ալ հետաքրքրած է զիս ու մեծ սիրով մտած եմ այդ դիւթական աշխարհէն ներս:



Պատահած է, որ երկար վայրկեան կանգնիմ գրավաճառի մը ցուցափեղկին առջեւ ու չդիմանալով գայթակղութեան, մտնեմ ու գնեմ նոր հասած գիրք մը, ուրիշ կարելոր բանի մը համար մէկ կողմ դրած գումարը տեղւոյն վրայ «զոհելով»:

Դպրոցի գրադարանը բաւական ճոխ է հայերէն, ռուսերէն եւ անգլերէն գիրքերով, որոնց շարքին Յայաստանի մէջ տպուած արեւմտահայ գրողներու գործեր ալ կան, սակայն դժբախտաբար անոնք տպուած են արեւելեանական ուղղագրութեամբ, հայաստանաբնակ ընթերցողին մատչելի դարձնելու համար, բայց, իմ կարծիքով, այդ ձեւով աղաւաղուած են անոնք:

Անոնցմէ անդին, գրադարանին մէջ գտայ բաւական պատկառելի քանակ մը արեւմտահայերէն գիրքերու, որոնք ժամանակին պատկանած են սփիւռքահայ մտաւորական, հեղինակաւոր անհատի մը, որուն մահէն ետք, անոր հարազատները ամբողջ գիրքերը նուիրած են մեր վարժարանին:


Անցայ աշխատանքի՝ խումբ-խումբ գիրքերը դարաններէն վար առնելով եւ ցուցակներ կազմելով: Ամենագրաւիչները հնատիպ գիրքերն էին, որոնք 100, 120, 140, մինչեւ իսկ 155 տարիներու հնութիւն ունէին: Անոնցմէ շատերուն թերթերը այնքան փտած էին, որ ձեռնելու կը վախնայի: Սկսայ մեծ հետաքրքրութեամբ թերթատել, եւ օրերու ընթացքին

կը պաշտոնավարեմ, անցեալին որպէս արեւմտահայերէնի դասատու եւ առաւել աշակերտական թատրոնի բեմադրիչ, այս

ԳԱՆՁԱՍԱՐ

ամբողջ ժամեր անցուցի անոնց հետ: Կողքերն ու տիտղոսաթերթերը նկարեցի եւ կարգ մը գրասեր բարեկամներու ուղարկեցի, այն յոյսով որ գուցէ հետաքրքրէ զիրենք, սակայն ցարդ պատասխան չեմ ստացած:

Ես այս գրութեանս կը կցեմ անոնցմէ քանի մը հատին նկարը, որպէսզի ինծի նման ընթերցողներն ալ տեսնեն, թէ ինչքան չլսուած անուններ կան հեղինակներու, որքան տար-



բեր նիւթեր շօշափած են անոնք, որքան ստուար մտաւորական խաւ մը ունեցած ենք անցեալին, յատկապէս Պոլսոյ մէջ, ուր մեր խմբագրատուներն ու տպարանները ահագին գործ տեսած են ժողովուրդին տարատեսակ գրական գործեր մատակարարելով:

Մատենագրութիւն, գրականութիւն, տրամաբանութիւն, մանկավարժութիւն, բարոյախօսութիւն... ինչի ըսես չեն անդրադարձեր անոնք: Գիրքեր կան, որոնց վրայ յիշուած է «Երկրորդ, երրորդ, չորրորդ տպագրութիւն»... Այդ որքան ընթերցող ունեցած են, որ շուկայի պահանջը գոհացնելու համար քանի մը անգամ հրատարակութեան տուած են

գործ մը:

Ահա՛ քանի մը նմոյշ.

-«Սկզբունք Տրամաբանութեան», Ա. Ս. Վ. Գարագաշեան, Կ. Պոլիս, 1864

-«Ճաշակ Արդի Հայ Մատենագրութեան», աշխատասիրող Ա. Պիպեճեան, Կ. Պոլիս, 1884

- «Մարդ Ըլլալու Միջոցը», Ա. Կ. Սեքլեմեան, Կ. Պոլիս, 1894

-«Աշխարհաբար Գործնական Զերակաւորիւն Եւ Շարադրութեան Տարրեր», հեղ. Ա. Կ. Պետիկեան: Կ. Պոլիս, 1898

-«Առաջին Ընթերցարան», Կ. Պոլիս, 1907 (ինչպէս կը տեսնէք, Պոլիսը ոմանք օ-ով գրած են, իսկ ուրիշներ ո-ով)

Երբ կ'ըսենք որ մեր երրորդ Ոսկեդարը եղած է 19-րդ դարը, չափազանցած չենք ըլլար: Եւ տակաւին, նկատի առնել, որ այս բոլորը իրագործուած է օսմանեան իշխանութեան օրերուն: Արդեօք որեւէ յիշատակում կա՞յ տեղ մը, թէ քանի հատ եւ ինչ հայերէն գիրքեր տպուած են այդ օրերուն, եւ միեւնոյն շրջանին թրքերէն ի՞նչ եւ քանի՞ գիրք տպուած է:



Չեմ կարծեր որ անոնք կրնան մրցիլ հայկականին հետ:

Երբ 1512-ին Յակոբ Մեղապարտ Վենե-

տիկի մեջ հայերեն տառերով տպեց առաջին հայերեն տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրք»ը, պարզապես Կիւթենպերկի գիւտէն (1468) ընդամենը 44 տարի ետք, Թուրքերը միայն 200 տարի ետք ունեցան տպարան ու տպագիր գիրք:

Գիրքը, եւ մասնաւորաբար տպուած գիրքը, չափանիշն է ազգի մը մտաւոր մակարդակին: Ընթերցասէր ժողովուրդ մը նախ աւելի գիտակ կ'ըլլայ, ապա բազմակողմանի զարգացում կ'ունենայ: Այնպէս որ շատ մը հարուստ հայեր, ինչպէս տպագրութեան գիւտէն առաջ՝ ձեռագիր, իսկ յետոյ ալ տպուած օրինակներ պատուիրած են ու բաժնած իրենց բարեկամներուն, որպէս թանկարժէք նուէր:


Եթէ նկատի առնենք, թէ առաջին գիրքի տպագրութենէն անմիջապէս ետք 16-րդ դարուն յաջորդող դարերուն որքան աճեցաւ տպուած գիրքերուն քանակը, պիտի զարմանանք, իսկ երբ թեւակոխենք 20-րդ դար եւ յատկապէս Հայաստանի մէջ խորհրդային շրջանին տպուած գիրքերուն քանակին անդրադառնանք... գիրքեր, որոնք տասնեակ հազարներով կը տպուէին եւ մարդիկ օրերով հերթերու կը կանգնէին գիրք գնելու համար: Հայաստանի մէջ, քաղաք, գիւղ կամ տուն չկար, որ գրադարան չունենար:

Իսկ այսօր... ափսոս, կեանքի պայմանները ստիպած են, որ այդ գիրքերը հնավաճառներուն մօտ ծախու դրուին: Երեսանի «Վերնիսաժ»ի արեւմտեան կողմէն եթէ մտնէք, արդէն մայրէն սկսեալ ձեզի դիմաւորողները կ'ըլլան գիրքերու կոյտերը:

Այո, ոչ միայն կեանքի պայմանները, այլեւ ներկայ ճարտարագիտութեան արդիւնք եղող գիւտերը՝ համակարգիչը, համացանցը, բջիջային հեռախօսը, պատճառ դարձան, որ մարդիկ ընթերցանութեան փոխարէն, անոնցմով զբաղին: Սակայն եւ այնպէս, տակաւին կան շատ մարդիկ, որոնք ընթերցանութեան հաճոյքն ու բաւարարութիւնը ոչ մէկ բանի հետ կը փոխեն:

Ընթերցանութիւնը խթանելու ինչ-ինչ ձեւերու մասին կը մտածեն ու կ'օգտագործեն թէ՛ գրավաճառները, թէ՛ գրադարանները եւ թէ՛ դպրոցները, ինչու չէ՞ նաեւ՝ ակումբները, մրցումներու միջոցով, մրցանակներ շնորհելով, յաճախ անոնց մասին խօսելով ու դասախօսելով: Պէտք է խոստովանիմ որ, թէեւ Հայկախի, հաւանաբար նաեւ Պէյրութի հայ-

կական ակումբները բոլորն ալ գրադարաններ ունին, անոնք սակայն, որոշ բացառութիւններ յարգելով, տարիներով «յաճա-



խորդ» չեն ունենար ու փակ կը մնան դժբախտաբար: Թելադրելի է, որ սկաւտական եւ ուսանողական ղեկավար մարմինները հաւաքներու եւ բանակումներու առիթները օգտագործեն եւ գիրք կարդալու մղեն նոր սերունդը:

Իմ կարծիքով, վերոյիշեալ բոլոր միջոցներէն աւելի օգտակար կ'ըլլայ երեխաներուն փոքր տարիքէն գիրք նուիրելն ու կարդալու մղելը: Շատ ծնողներ սովորութիւն դարձուցած են իրենց մանուկներուն քնանալէ առաջ կէս ժամ գիրք կարդալը, հոգ չէ սկիզբը նկարներով կը զբաղին, յետոյ, երբ արդէն գրաճանաչ կ'ըլլան, կը սկսին կարդալ: Շրջան մը ետք, արդէն սովորութիւն կը դառնայ եւ երեխան ինք գիրք կը խնդրէ:

Այս սովորութիւնը կը շարունակուի մարդու կեանքի ամբողջ ընթացքին ու մարդիկ ընթերցանութեան մոլի կը դառնան: Սովեռանդութիւնը վնասակար բան է ընդհանրապէս, սակայն ընթերցանութեան մոլի դառնալը միակ օգտակարն է:

Ընթերցանութեան տուած հաճոյքն ու օգուտը ուրիշ ոչ մէկ բան կու տայ:

...ԲԱՐՁՈՒՆՔԻՆ

Մարիանա Պերթիզլեան-Ղազարեան

..Տունը լեռան բարձունքին, անտառի մեջ է, ուր լոյսը անտառային գաղտնի դռներն ճեղք մը գտած, յորդած է գոյացնելու դափնիի ծառերով շրջապատուած գիւղական փոքրիկ գոյութիւնը՝ տնակը:

Բարակ կածան մը դուրս կուգայ լեռան խորքէն միանալու տնակին: Ուրցի բոյրը ամենուրեք կը տարածուի՝ արբեցնելով շրջակայ տարածութիւնը:

Ճառերու խեղդուած պատրանքներուն ծուէնները, պատերազմէն մնացած ողբը, քա-



րացած աղաղակները, գունաթափ քարտեզի մը պէս կը թեւածեն տամուկ անտառի ներքին արահետներուն վրայ: Տեղ-տեղ լեռնային մանիշակներ գոյնզ գոյն կոճակներու պէս կը զարդարեն համայնապատկերը, որ կ'երկարի հասնելու մինչեւ լեռան ստորոտ: Կամաց-կամաց մութը կ'իջնէ, լոյսը կ'ամփոփուի ինքն իր վրայ, կը կծկուի տնակէն ներս:

Ադամամութիւն, շրջապատը լուսաւորող միակ խոկացող տնակն է՝ կապոյտ, ամայի լեռներու կանաչ բարձունքին հանգչած: Արիւնարբու ահաբեկիչներէն բռնաբարուած, հիմա վերականգնած, հոգեպէս պայքարելու

վճիռով շրջապատի անհաւատութեան եւ հիասթափութեան դէմ:

Ներքին ձայներ՝ տան սիւները կանգուն պահող, ժամանակի հոսքին հետ կուտակուած հնչիւններ, բառեր, մէկիկ-մէկիկ կը սթափին, ոտքի կ'ելլեն, նոր իմաստ, գոյութիւն եւ շունչ տալու, կանաչ ամայութեան մէջ մրափող աւանդին...

Տնակի երագող աչքերուն մէջ իր տերերը վերածուցան հեքիաթի հերոսներու, արքաներու, իշխանուհիներու:

Տերերը՝ կրակարանի բոց, կենդանութեան շունչ:

Փայփայեց երկար, սերը, բռնուած անոր հեռացող քղանցքէն, իր օրօրուող բազրիքէն:

Հիմա կը հեռանան, կը վազեն հեռու դէպի անտեսանելի:

Բարձունքի ստորոտը աղօտ կ'ուրուագծուի Միջերկրականի հիւսիս արեւելեան շրջանին բազմած Ռաս Պասիթի հրուանդանը:

Լոյսի եւ ջուրի միացութեան մէջ, աստղեր կը ծնին. փոփոցող ջուրի կաթիլներ կը միանան լոյսի շեղբերուն, աստղահոյլեր, կոհակներ ստեղծելով: Արծաթէ անեզր ծովը կը շնչէ, կ'ելլէլէլ կուրծքը, ներս կը ծծէ լոյսը, որ աստղածորան շղթաներ արտադրէ: Լոյսին պատկերը կը քանդակուի ջուրի կաթիլներուն վրայ. լուսածոր աստղեր կը ժայթքին դէպի վեր, հատիկ-հատիկ. ետքը դարձեալ կ'ընկըմին լուսապսակ շղթաներով ալիքներուն մէջ, կ'անհետանան որ բարձրանան կրկին միասին դէպի վեր, միանալու արեւի ուղեծիրին, ջինջ պայծառ վետվետող լոյսէ ուլունքաշարերու տեսքով, սպիտակած ամպերով, մշուշապատ ճառագայթներով միախառնուելու կրակէ կառքին, խոյանալու տիեզերքի խորերը:

կը փոքրանան ժամանակն ու տարածութիւնը, որ ամփոփուին շուրի ջինջ կաթիլներուն ու լոյսի բիւրեղեայ շողերուն մէջ, մեզի համար կամ մեզի հետ աստղի մը արեւի մը խտացեալ կեանքին մէջ գոյատեւելու: Անհասանելի կարծուած աստղերը մերը կ'ըլլան եւ մենք անոնցմէ...

Լոյսէ հիւլէներուն հետ թռիչքի պահուն հզօր սերը կը ղեկավարէ...

Յայնացքի մէջ ամփոփուած տիեզերք...

.....

Եւ տնակը գեղեցիկ լուսաշող գոյութեան, շողի բարակ թելէն բռնած, կառչեցաւ անոր, դողաց՝ յանկարծ արմատախիլ չընելու համար այդ մնացած բարակ յոյսի թելն ալ:

Ծրագրուած ըլլար կարծես, տակաւ առ տակաւ սկսաւ հեռանալ շողը, սիրոյ մէկ հատիկ բարակ թելը, որուն վրայ գուրգուրացած էր երկար. բազրիքին սրբանցքներէն կամացուկ մը սկսաւ դուրս սահիլ, իրար յաշորդող մայրամուտներուն:

Աչքերը անթարթ մնաց, յարած հեռացող, սահող շողին, լուսէ կէտին. թիկունքին Պոնտական շղթայուած լեռնապարը, ոգեղինացած հայնացքը անթարթօրէն նոյն կէտին յառած, յաղթանակի եւ սիրոյ մասին երազեցին:

Նոյն սիրոյ առանցքէն բռնուած, անթարթ աչքերով երկար հետեւեցաւ շողին, ետքը յուշիկ մրափեց...

Յեռուն հմայող է, բայց վտանգաւոր. հեռուն գեղեցիկ է, բայց միթէ՞ ապահով. հաւանաբար այնտեղ այծեամի մը ձագը կը հատէ անյայտին սահմանագիծը, որ ետքը անհետանայ երազային ու ծերացած լեռներուն խորքը խաղաղօրէն նիրհելու:

Յեռաւոր կէտերը իրենց մէջ կը պարփակեն ընդհանրական ինչ որ բան, որ ստորգետնեայ ուղիով մը կը միանան իրարու: Տնակի կողքէն ջրվիժող աղբիւրի կաթիլները, հատելով ժայռաթէք բարձունքներ, կամացկամաց կը միանան ծովուն:

Յեռուներու սահմանը հատող այծեամի ձագուկը արդեօ՞ք ցատկեց փայլփլուն լուսէ կաթիլներուն մէջ. կէտ մը միայն կ'երեւի հորիզոնին վրայ, անոր ուրախութեան ճիչը տակաւին կ'արձագանգէ տնակին պատերուն վրայ...

Տխուր է, եւ հեռուն եւ հեռուի անյայտութեան մասին մտածելը: Իսկ խաղաղութիւնը որքան հանգիստ է յարմարաւետ, այնքան համազօր է չգոյութեան: Դադրիլ բարախելէ,

անհանգստանալէ, տանջանքէ ու այն ատեն զգալ անդենականին շունչը:

Շարժումը, անհանդարտ վիճակը, պայթուցիկ ու յղի, թաքուն ոլորտէ մը ծնող երջանիկ նորածին այծեամը կը յիշեցնէ: Երկրագունդը նուաճած ըլլալու ուրախութիւնը թաքնուած է այդ լացին, այդ փոթորիկին մէջ:

Թէեւ հիմա դատարկ է բարձունքը հեռացումով, բայց ուրիշ տնակի մը մէջ, ուրիշ քաղաքի մը կէտրոնը կամ ծայրամասը ներկայութեամբ լեցուն է. քաղաքին երկինքը միացած է այս բարձրաբերձ երկինքին: Ու թեւաւոր աղաւնի մը կը թռչի: Անոր ոլորտի ճառագայթը, որ կը սկսի բարձունքէն, կը հասնի հեռաւոր հորիզոններ:

Դաշտի ծաղիկներ, արեւի ճառագայթներուն մէջ լողացող ծաղկաւետ դաշտեր երազի մէջ են:

Անծայրածիր տիեզերքի հուրհրանին մէջ, երկնքի աստղեր, հոգիի կրակ ու սեր, գիրքերու էջերուն, տնակի պատերուն մէջ պահուած կը մնան...



Որքան ալ հզօր ջերմ սփռէ իր շուրջ բոլորն ու հեռուն, արեւը անհասանելի է, ցաւէն, տամկութենէն ծուարած հոգիին, տնակի խորքին՝ հեռու, անհայելի:

Տնակը կրնա՞յ թռչիլ...

Ու դեռ որքա՞ն մնալ լերան բարձունքին, խելագարօրէն երազել եւ հիանալ հերոսներով, հասնելու արեգնաթագ եթերին...

Մերկ, ամայացած ափերով դողողացող, առանձնութենէն սարսռացող, բարձունքին հանգչող տնակի հոգին կը բերեմ ծովու բացերը, կը բերեմ երկնակամարի շեմ, գգուանք, հոգիի ջերմ, աւիշ հաղորդելու անոր:

Կը լռեմ, որ խօսի ու ես ընդմիջտ լսեմ...

ԱՆՍՊԱՍԵԼԻ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐՈՎ ԲԱՅՈՒՂ ԴՈՆԵՐԸ

Տիրուկ Մարգարեան-Կարապետեան

Շաբաթ առաւօտ էր: Աշխատակից ուսուցիչներուն եւ տնօրէնութեան միջեւ մտերմիկ մթնոլորտ մը ստեղծելու նպատակով, միեւնոյն ժամանակ արուեստի թանկարժէք նմոյշներ տեսնելու եւ անոնց հմայքը վայելելու միտումով, պաշտօնավարած գործակալութեանս տնօրէնութեան հրաւերին ընդառաջելով շտապեցի Թորոնթոյի «Ադա Խան» թանգարան:

Քանատայի ցուրտ օդը իր պաղ շունչով սկսած էր մարդոց ոսկորները ներթափանցել եւ զոհերը անկողին նետել: Այդ զոհերէն մէկը չըլլալու համար ինքնաշարժի վարորդէն խնդրեցի, որ մինչեւ դրան մօտ հասցնէ զիս: Հասցուց: Միտքիս ծայրէն անգամ չէր անցներ, որ հո՛ն, անակնկալները իրենց կախարդական ցօղերը պիտի սրսկէին ամբողջ եութեանս մէջ ու խռովէին հոգիս:

Ինքնաշարժէն դուրս չելած, տեսած առաջին անակնկալս արդէն մոռցնել տուաւ ինծի դուրսի ցուրտը ու ես, զարմանքի ճիչ մը արձակելով դուռը բացի ու դուրս նետուեցայ ինքնաշարժէն: Հալէպի Ազգային Բարեն Եփփէ Ճեմարանի մտերիմ դասընկերներէս արուեստագետ Գեորգ Մուրատին նկարը, իր արուեստի նմոյշներէն մէկը ձեռքիս, մեծ պաստառին մէջէն բարի գալուստ մաղթեց ինծի: Աչքերուս չհաւատացի: Սօտեցայ ու հոն իր անունը եւ «սուրիահայ» բառը կարդացի եւ կրկնակի հպարտութիւն զգացի:

Ուրկէ՛ ո՛ր: Ես ու Գեորգը Թորոնթոյի թանգարաններէն մէկուն շրջափակին մէջ պիտի հանդիպէինք իրարու: Հոն տեսածս պարզապէս նկար մը չէր կարծես, այլ յիշողութեանս թելեր տալու միջոց մը, որուն շնորհիւ յիշեցի մեր դպրոցական օրերը: Պատանութեան

տարիներէն արուեստով շաղախուած գեղանկարիչ էր Գեորգը, դասարանը անպայման առիթ մը կը գտներ ու իր գծագրութիւններով կը հիացներ բոլորս: Ընդհանրապէս պալերիկի նկար էր գծածը: Կը յիշեմ, յուշատետրիս մէջ, իր գրութեան քով գծած էր այնպիսի հիանալի պատկեր մը, որ մինչեւ օրս պահած եմ Հալէպի տանս գրադարանին մէջ: 90-ական թուականներուն սկիզբը «Նիկոլ Աղբալեան» սրահին մէջ ցուցադրուած էին իր արուեստի գործերէն քանի մը հատը: Ամուսինիս հետ հիացմունքով դիտեցինք Գեորգին գծագրութիւնները ու իրմէ իմացանք, որ պիտի ճամբորդէր՝ ուսումը կատարելագործելու նպատակով: Տարիներ առաջ հանդիպեցանք Հայաստանի մէջ ու երկար զրուցեցինք



արուեստի մասին: Հիմա՞: Հիմա, Քանատայի մէջ, աշխարհահռչակ արուեստագետ դասընկերոջս աշխատանքը յայտնուեցաւ դեմս ու հին օրերէն յուշեր փռեց ոտքիս տակ:

Ներս վազեցի: Բոլորը հաւաքուած էին արդէն: Բարի գալուստի մաղթանքէն ետք տոմսս տուին ու սկսանք քալել դէպի մայր մուտքին դուռը, ուր առաստաղէն կախուած էին դասընկերոջս արուեստի բացառիկ գործերը: Ներողութիւն խնդրելով պատահաբար մատնանշեցի ու բարձրաձայն ըսի բոլորին. *«Ես շատ ուրախ եմ, որովհետեւ պատահաբար հեղինակ արուեստագետը դասընկերս եղած է, նայեցէք հոս գրուած է անունը եւ յիշուած է, որ ան սուրիահայ է: Ինչպէս գիտէք, ես ալ Սուրիայէն եկած հայ եմ: Մեր ազգը իր մշակոյթով ու արուեստով միշտ փայլած է, ահաւասիկ փաստը...»*: Բոլորը հիացմունքով սկրսան դիտել անոր արուեստի գործը ու առաջարկեցին անոր դէմը լուսանկարել զիս: Իրենք ալ լուսանկարուեցան ու գոհունակութեամբ բոլորս ներս մտանք եւ սկսանք շրջիլ ցուցասրահին մէջ, ուր ցուցադրուած էին Արեւելքի արուեստի գոհարներէն քանի մը օրինակներ:

Անակնկալով սկսած օրս զգացումներս, մտածումներս եւ անցեալի յուշերս վերակենդանացնող թանկարդներ լարած էր դէմս: Ամէն քայլափոխի ներաշխարհիս մէջ գոյացող նոր երկրաշարժը կը ցնցեր էութիւնս: Առաւօտուն խաչակնքելով դուրս ելած պահուս չգիտցայ, որ Աստուած անկրկնելի օր մը շնորհած էր ինծի:

Տարբեր տարիներու, տարբեր երկիրներէ եկած ուսուցիչներով կը պատեիք թանգարանի սրահներուն մէջ: Պարսիկը, եգիպտացին, հնդիկը, իրաքցին, աֆղանը, չինացին, պանկլատեցին եւ այլ երկիրներէ հոս հասած մարդիկ կը հպարտանային իրենց հայրենիքին արուեստով: Սուիէլիան հպարտութեամբ զիս կը կանչէր պարսկական հնամեայ ձեռագիր մը ցոյց տալու համար: Ծիւնը՝ չինական ասիւսէ մը ցոյց կու տար ու անոր վրայի գրութեան իմաստը կը բացատրէր, մինչդէռ ես սուրիական գոյնգոյն յախճապակեայ կուժերը, մարմարակերտ շատրուանը եւ այլ թանկարժէք իրերը ցոյց տալով կը պարծենայի ծննդավայրէս հոս հասած հնութիւններով, բայց միշտ հոս ու հոն կը փնտռէի հայկական ձեռագիր մը, ուրարտական արձանիկ մը կամ նոյնիսկ պատիկ թանկարժէք իր մը, որմով հպարտութեամբ ցոյց պիտի տայի մեր հայկական արուեստին մէկ մասնիկը: Մտածումներով տարուած էի, երբ յանկարծ դէմս պարզուեցաւ կարմրաւուն գորգ մը, որուն

զարդանախշերը հայկական էին:

Գորգը առիւնքնեց զիս: Պատին տեղադրուած բացատրողական բացիկին վրայ՝ *«17-րդ դարու պատկանող, բամպակով հիւսուած հայկական կարպետ»*, նախադասութիւնը կարդալուս պէս շունչ մը քաշեցի ու պաշտօնակիցներս կանչելու պատրաստուեցայ: Չայնս բանտարկուած մնաց ձայնալարերուս ետեւ, յոյզերս հոգիէս ժայթքելով կոկորդս հասած էին ու կապած էին լեզուս: Ա՛խ, որքա՛ն սեր ու կարօտ կար սրտիս մէջ. անոնք հիմա կը խեղդէին զիս: Յուզմունքս զսպելու քանի մը փորձէ ետք յաջողեցայ բացատրել, թէ այս հագուագիւտ զարդանախշերով հիւսուած գորգը հայու ձեռակերտ է: *«Յայրենիքիս մէջ գործուած է այս գորգը»*, ըսի ու գամուած մնացի անոր դէմ: *«Տաճիկներու շուկային մէջ ծախուելու նպատակով հիւսուած հայկական գորգին մէջտեղը մզկիթի լամբը, մոմակալը, եւ խնկամանը կը տեսնենք»*, գրուած էր ցուցանակին վրայ, բայց իմ տեսածը բոլորովին այլ բան էր՝ բուրվառ, մոմակալ, սափոր եւ խնկաման: Ես եկեղեցւոյ սպասները տեսայ անոնց մէջ ու հիացայ:

Քանի մը նկար նկարելէս ետք, սկսայ աչ ու ձախ հայկական հնութիւն մը փնտռել եւ իսկոյն հայկական ասեղնագործութեան 2 օրինակ տեսայ դէմի պատին վրայ: Գոյները ու գծապատկերները Ուրֆայի ասեղնագործութիւնը կը յիշեցնէին: *«Սուիէլիա՛, եկուր տես՛ս ի՛նչ գեղեցիկ ձեւով հիւսուած են այս հայկական ձեռագործները: Արծիւը, կենաց ծառը, կենդանակերպերը, ծաղիկները եւ նուռերը... կը տեսնես՛ս՝ բոլորն ալ գոյութիւն ունեցած են մեր ձեռարուեստի պատմութեան մէջ»*, ըսի եւ պատին վրայի խոցելի բացատրութիւնը կարդալուս պէս արցունքներս զսպել չկրցայ: *«Ի՛նչ ունիս, ինչո՛ւ կու լաս»*, հարցուց ան: *«Կը տեսնես՛ս, մեր ձեռագործին վրայ՝ «19-րդ կամ 20-րդ դարու Օսմանեան մետաքսեայ գործուածք» գրած են: Ամէն ինչ գողցան ու իրենցը համարեցին: Մե՛րն է, հայոց կը պատկանին այս ձեռագործները, հայ մամիկներուն աչքին լոյսն են անոնք: Յայ մամիկներուն, որոնք Օսմանեան Կայսրութեան լուծին տակ կ'ապրէին... Դուն Յայոց Յեղասպանութիւնը ինչ է, գիտես՞: Մեր հողերը, ունեցուածքը ու կենքը խլեցին անիծեալները...»*: Զեմ գիտեր խօսակիցս որքանով հասկցաւ ըսածներս, բայց անոր արցունքներն ալ հոսեցան դողդուացող շրթունքին վրայ:

«Եկէ՛ք, եկէ՛ք: 19-րդ դարու հնդկական աննման դուռը տեսէ՛ք», ուրախութեամբ կը կանչէր գործակալութեան նոր աշխատակից Ուրմիլան: Ան *«Մարգարիտեայ գարդերով դուռը արդէօք ո՞ր պալատին կը պատկանէր: Այսօր մեզի համար ընտանիքը միացնող տօն է: Եթէ հիմա Յնդկաստան ըլլայի տասնեակ հարազատներով համախմբուած կ'ըլլայինք: Է՛հ, անցեալին, այս տօնական օրուան առիթով քանի՞ անգամ բացուած ու գոցուած է այս դուռը արդէօք: Ո՞վ գիտէ»*, ըսաւ ան ու թախծոտ աչքերը պահելով առաջ անցաւ: Այդ վայրկեանին զգացումներու խառնարանին մէջ «Ասոնք բոլորն ալ մէկ կարօտ ունին իրենց սրտին մէջ, ան ալ հայրենիքինն է, իսկ մենք՝ հայերս ծննդավայրի, հայրենիքի, կորուսեալ հողերու, խլուած ունեցուածքներու եւ իրաւունքներու կրակարանին վրայ դրած ենք մեր սիրտը ու խորովածի պէս կ'այրենք զայն ամէն քայլափոխի», մտածեցի:

Մէկ ժամ եւս թանգարանին մէջ մնալէ ետք իջանք վարի յարկ, ուր արեւելեան իրեր վաճառող տաղաւարներ կային, իսկ ձախին ապակեայ դռներուն ընդմէջէն ճաշարանի սեղան-աթոռներ կ'երեւէին: Տնօրէնը շնորհակալութիւն յայտնեց մեր ներկայութեան համար եւ տաղաւար շտապելէ առաջ *«Ազատ գագէ՛ք»* ըսաւ ու բոլորիս հրաժեշտ տուաւ: *«Եկէ՛ք ներս մտնենք: Հոս թանգարանի պէս ճաշարան մը կայ»*, ըսաւ Ուրմիլան:

Բանի մը հոգիով ներս մտանք: Այդ վայրկեանին ո՛չ միայն մտքով սաւառնեցայ դէպի ծննդավայր, այլ ամբողջ էութեամբս Հալէպի ճաշարանի վերածուած, հին արաբական տուններուն «Տար Չամարիա»ի, «Բէն Չաման»ի, «Սիսի»ի կամ «Բանթարա»ի մէջ գտայ ինքզինքս: Մտքով ճամբորդելուն իմաստը այդ վայրկեանին հասկնալ սկսայ: Առաստաղին ու պատերուն վրայ հանգչած փայտեայ խոշոր, փորագիր, արաբերէն գրութիւններ բովանդակող մակերեսները ապշեցուցին զիս: Սպասեակներունու *«Ասոնք իսկակա՞ն են»* հարցուցի, եւ՝ *«Այո՛, Սուրիայէն բերուած, Անգլիոյ մէջ վերանորոգուած ու հոս գետեղուած են: 18-րդ դարու պատկանող տան մը պատերուն մակերեսներն են անոնք»* պատասխանին հետ առաստաղի գարդերուն ուշիուշով նայեցայ եւ՝ *«Ես ալ Սուրիայէն եկած եմ եւ այսպիսի մակերեսներով տուններ շա՛տ տեսած եմ»*, ըսի ու մանկութեանս օրերը յիշելով գացի անցեալ եւ սկսայ պտտիլ Հալէպի

հնամայ թաղերուն մէջ:

Սօրս հետ «Թիլել»էն գնում ըրինք ու մտանք «Հոգետուն»՝ թանթիկ Արուսեց այցելութեան: Արաբական երկյարկանի տան երկրորդ յարկն էր թանթիկեց տունը: Այս նոյն առաստաղէն հոն ալ կար: Տան մուտք պատերը երբեմն սարսափի կը մատնէին զիս ու ամէն քայլափոխի տախտակամած յատակին ճաթըռտոցը կը խռովէր մանկական հոգիս: Բիչ մը քալեցի ու այս անգամ դասընկերներուս հետ վազել սկսայ Հայկազեան դպրոց տանող «Ճիտեսիէ»ի թաղերուն մէջ: Բիչ վերջ Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցիին դէմէն անցայ, խաչակնքեցի ու հասայ Արծիւեաններուն տունը: Դուռը բացաւ ողորմած Ազնիւ հօրքուրը, Ֆլլէմը քաղեց ու ափիս մէջ տեղաւորեց, *«Ա՛ն, կախարդական հոտ ունի»*, ըսաւ: Անոնց արաբական տան պատերուն վրայի նախշերը դիտեցի ու նեղիկ թաղերուն քարքարոտ ճամբաներէն ուշադրութեամբ քալեցի ու հասայ Ազգային Պատըսպարան: Հոն պատսպարուող քանի մը դասընկերուհիներու հետ «բարձր քար» խաղը խաղացինք շատրուանին շուրջի քարերուն վրայ, ապա գացինք նապրավաճառէն *տասա* եւ *տուս* առինք ու վազեցինք «Երեք Անթել»ի ոսկերիչներու շուկային մէջ մեզի սպասող Հայկազեան դպրոցի օթօքարը բարձրանալու: Պարոն Միշելին ձայնը լսեցի, որ իր նշանաւոր *«1-2 վառեցայ, կրակին մէջը այրեցայ: 3-4 չորցայ... աման ընկեր յոգնեցայ, ա՛ն, ա՛ն, ա՛ն»* խաղ-արտասանութեան բառերը կըրկնեց, յետոյ՝ *«Շուտ նստէ՛ք, դուռը պիտի գոցեն»* ըսաւ ու սկսաւ *օթօքարը* վարել:

«Sorry, can you read and translate these writings for us, please?», սպասեակին խընդրանքը լսելով յիշողութիւններուս գիրկէն ելայ ու խնդրանքին ընդառաջելով պատին գրութիւնը կարդացի. *«Մարգարէին հաւատա՛ եւ աղօթէ, որ երկինքի արքայութեան դռները բացուին դէմդ: Բարիք ըրէ՛ եւ կամեցող եղի՛ր, որ դրախտի դռները...»*: *«Այսօրուան դռներուն խնդիրը ի՞նչ է, ամէն դուռ մը բացուելուն մտքովս նոր ճամբու մը վրայ կը յայտնուիմ»*, ըսի ու թանգարանի դռնէն դուրս ելայ: Դուրսի քամիին հարուածները խարազանեցին դէմքս: Չանոնք նկատի չառնելով նկար մը նկարուեցայ Գեորգին պատկերին դիմաց ու հրաժեշտ տալով փակեցի անակնկալներով լեցուն այդ օրուան անկրկնելի պտոյտին դռները:

ՄԻ ԲԱՆՈՎ ՕԳՆԷՔ

Յարվարդ

Ամիրեան փողոցի վրայ յաճախ կը հանդիպիմ շատ գեր ու հսկայ մուրացկանի մը, որ անթացուպով կը քալէ՝ քանի որ ոտքերէն մէկուն գարշապարը ծռեր է, ի դէպ երեւելի վերքեր ալ կը պատեն ոտքին մաշկը, ո՞վ գիտէ «elephantiasis»-ի՝ փղախտի պատճառով...

Բայց մուրացկանին ինքնուրոյն յատկանիշը իր օգտագործած նախադասութիւնն է՝ «Մի բանով օգնէք», զոր կ'արտասանէ իր բամբ ու խորունկ ձայնով: Ինչքան ազդեցիկ խօսք... որեւէ բանով... ձեր սիրտերէն բխող որ եւ է դոյզն միջոցով օգնեցէք: Սակայն, միջոց մը ետք, երբ նոյն պարզ նախադասութիւնը անգամ-անգամ կրկնուի եւ փորձի ենթարկէ մարդու տրամաբանութեան սահմանները, մուրացկանը,- իր ահաւոր վիճակով հանդերձ,- կը վերածուի խաբեբայ դերասանի որ ինքն իր դժբախտութիւնը կ'օգտագործէ իբր դրամագլուխ:

Առաջին հանդիպումը ամենէն ազդեցիկն է. տասներորդին՝ արդէն զուտ անտարբերութիւն կայ անոր հանդէպ. չես ուզեր նոյնիսկ աչքերդ գան դէմ յանդիման եղելութեան: Տասներորդին՝ ոտքը չէ, այլ գիրութիւնը կը նկատես, այս ի՞նչ լաւ սնուող՝ օրական երկու պնակ խաշ ուտող մուրացկան...

Մտածելու է, թէ մարդ քանի՞ անգամ կրնայ նոյն նախադասութիւնը կրկնել. «Մի բանով օգնէք, մի բանով օգնէք», օրն ի բուն, օրէ օր, ի տուրնջեան* եւ ի գիշերի, ամբողջ տարուան ընթացքին: Արդեօք երբ «գործ»ը վերջանայ, տուն երթայ ու մայրը հարցնէ՝ «Դուրսը պա՞րհ էր, տղաս»:- Մի բանով օգնէ՞ք: Կ'ըսէ: Դրացի-հարեւանը թէ՛ «Յոսանքը այսօր երկու ժամ անջատեցին»:- Մի բանով օգնէք: Մոսկուայի քրոջմէն հեռաձայն կու գայ,

«Շնորհաւոր Ամանոր»- Մի բանով օգնէք: -Ձրի բուժման կեդրոնէն ներս, բժիշկը թէ՛ «Ոտքի ցաւ ունի՞ք»:- Մի բանով օգնէք: -Հայաստանը աշխարհի ճատրակի ախոյեանն է, խումբի անդամները վրան-բաց ինքնաշարժի մէջ ոտնկայս կ'անցնին Ամիրեանով. ժողովուրդը՝ «Յուռաա՛...», մուրացկանը՝ «Մի բանով օգնէք», երգչախումբէն լսուող ֆոլսնորթի մը նման:

Յետոյ ուրկէ՞ ուր միտքս կու գայ Հալեպի Պուսթան Զլեպի մեր խանութին առջեւէն յաճախ անցնող շրջուն վաճառողը: Արաբ մարդ մըն էր որ՝ գիտեմ չեմ գիտեր՝ կ'անցներ հոսկէ: Ամառները՝ կը ծախէր օդով փչուող-ուռող փոքր աւազաններ, որոնցմով կը զուարճանային տաքին ջուրով խաղացող փոքրիկներ... «Պըրքէ պըրքէ պըրքիէ. պըրքէ պըրքէ պըրքիէ», արաբերէնով կը կանչէր մուսետիկ վաճառողը, «աւազանն ինձմէ, օդը ձեզմէ»:



Համոզելու արտակարգ կարողութիւն մ'ունէր, որով «Պըրքէ»ները՝ ծովակները շուտով կը սպառէին եւ ան ձեռնունայն տուն կ'երթար,

ԳԱՆՁԱՍԱՐ

գրպանը՝ հացի դրամ: Օրը նոր, ծովակները նոր, իսկ ձմրա՞ն... ճափոնական մկրատ, այո, «Եապանի եա մը-աս, եապանի եա մը-աս» կանչելով՝ նարնջագոյն բռնիչներով՝ բարձրորակ մկրատներ կը ծախեր բոլորին, - իր անուշ լեզուով, - նոյնիսկ պետք չունեցողին: Զառա-

անոնք օրուան իսկական «գոհ»երն էին կարեկցութեան մելամաղձոտ խաղին, գուցէ «առաջին հանդիպում»ն էր: Ըստ երեւոյթին՝ Պրն. «Մի բանով օգնէք»ը «ծանր հրետանի-ներ» ալ ուներ իր մուրալու կրկներգի ցանկին մէջ, քանի որ յանկարծ պոռթկալով խօսքը



սուն-յիսուն տարուան ծանօթութիւն կար մեր միջեւ, ուստի՝ «Պարոն Կարպիս, հապիպի պարոն Կարպիս» ըսելով խանութէն ներս կը մտնէր, միայն բարեւելու (ինչպէս կը սիրէր ինք ըսել), ոչ թէ վաճառելու, բայց ենթաթէքսթը, տողատակի իմաստն էր՝ «Մի բանով օգնէք»:

Մինչ յուշ-յիշատակով էի քարացած տարուած, Ամիրեանի պարոն «Մի բանով օգնէք»ը կը կարծէ թէ ես մինչդեռ գերազդուած եմ իրմով, աչքերուս խորը զննելով կը չափէ իմ կարեկցութեան հնարաւորութիւնը՝ հաւանակա-նութիւնը: - Մի բանով... - Դրամ տաս՝ մուրացկանութիւնը քաջալերած կ'ըլլաս հայրենիքիդ մէջ, չտաս՝ խղճի խայթ կ'ունենաս վասն մարդասիրութեան, բայց յետոյ կը յիշես որ պատահականութիւն չէ, այլ դիտում-նաւոր ինքնագոհաբերում՝ քանի մը կոպեկի սիրոյն. Սիրանոյշ մեծմօրս ըսածին պէս՝ «Մէկ հացի համար»... իսկ այդ քանի մը կոպեկը օրն ի բուն, օրէ օր, ի տուրնջեան* եւ ի գիշերի, ամբողջ տարուան ընթացքին կ'ըլլան հարըս-տութիւն. կաթիլ կաթիլ կ'ընէ փաթիլ:

Զիչ մը անդին՝ երեք երիտասարդ ընկե-րուհիներ քովէ քով կը յառաջանային՝ յուլ-օրէն սողացող մուրացկանին ուղղութեամբ: Սիրունիկ օրիորդներուն երեսներուն վրայ յստակ նշաններ կային խղճահար գուրթի,

ուղղեց օրիորդներուն,
- Ձեր էղճահար նայուածքները խնայե-ցէք սիրունիկ օրիորդներ՝ ու Մի ԲԱՆՈՎ ՕԳ-ՆԵՔ անկար աղետահար թշուառին...- Օ՛, գրագետ չքաւոր... սպասեցի, արդիւնքը տես-նելու. օրիորդները իրենց ձեռքերը հեզասահ-օրէն տարին իրենց գրպանները:

Գիշերը, դեպի տուն վերադարձի ճամ-բուն վրայ, սովորական տեսքով, վաթսուննոց տիկին մը մօտեցաւ Մաշտոցի փողոցի վրայ եւ ըսաւ, «Կը ներքե, մի բան ուզում եմ աս...», բայց տիկնոջ «ասեմ» բառին առաջին վան-կին վրայ հասաւ իմ բնագղաբար արտասա-նած՝ «Փող չունեմ»ը, որ խաչաձեւեց տիկնոջ խօսքը՝ զինք թողելով ափ ի բերան՝ ապշած: Արդեօք ի՞նչ կար իմ տեսքին մէջ որ յուշեց հարստութիւն, սփիւռքահայութիւն կամ խիղճ, մուշտակ գդա՞կս, քալուա՞ծքս, ձեռ-նոցնե՞րս, աչքե՞րս. բայց անելին՝ ի՞նչն էր որ սրեց իմ բնագղս մուրացկանի թեկնածու տիկ-նոջ խօսքը կանխելու, չէ՞ որ տիկինը դեռ չէր յայտնած իր բուն հարցը:

Բայց ըսեմ, - ի վերջոյ, - որ երբ մեր քայլե-րը մեզ հեռացուցած էին իրարմէ բաւականա-չափ՝ հակառակ ուղղութեամբ, տիկինը բարձրաձայն ըսաւ ետեւ նայելով՝ «Ախր, մի բանով չօգնէ՞ք»:

* տը-վընջ-եան, տիւ (օր) բառի հոլովը

Յարվադո



ՉԷՐ

Աչքը՝ որ ամեն
ամեն ինչ կը տեսնե
ինքզինք չի տեսներ

հարկ է որ ուրիշ մը
զինք տեսնե
ազդարարե

թե ոչ հայելի
որ աչքն ինքն
իր վրայ հսկե

Աչքը՝ ամեն ամեն
ինչ կը տեսնե
բացի իր միջուկէն

յայնժամ չ' ուզեր
ուրիշի ակ
ոչ իսկ հայելի

Աչքը փակ ինքնիրեն
կը սորվի նայիլ
դէպի ներս

Որս չէր
աղանիսն դիպաւ քարին

Մահ չէր
մարմինը կ' երթայ
ոչ թէ հոգին

Ապտակ չէր
այլ
այտը եկաւ ափին

Սէր չէր
եղևիկը կամայ կեցաւ
դարձաւ առիծին

ԳԻՆԱՐԲՈՒՔ

Հանրապարտեզի ծառերէն
զովութիւն մը
ամառօրէն կը ծորեր

Յետմիջօրէն կամաց կամաց
իր կանաչապատ կոպերը
կը փակեր

Երեք ընկերներ
այբ բեն եւ գիմ
սեղանին շուրջ բոլորը
թուղթ կը խաղային

Պորտը լուռ
կիթառ մ' իգայ կը սպասեր
չորրորդ աթոռին նստած

որ սօլօներուն կարգը գար
ու գրկուէր կուրծքն իր
մաչայ

ա)
Երբ որ գաւաթը լրանար
ու նախատրամադրուած
օրէն թռչնանար

բ)
Հանրակոպերը զովանային
կանաչածոր պատումով մը
պարտիզուած

եւ գ)
Յետմիջօրէն
ամառօրէն փակուէր
կամաց
կամաց ծառացած

ՅԱՄԱՔԱՄԱՍ

Չորս միլիմ կը նիհարնայ
Հնդկաստանս
ամեն տարի

յուլօրէն ու քաղցրաբարոյ
5 սանթիմ դէպի հիւսիս
լողալէն

զինք կը սպասե
հեզահամբոյր յարութեամբ
բարձրաւանդակդ
Հիմալայան

ամեն տարի
2 սանթիմ եւս վերանալու
միասնաբար:

Այս բոլոր բանաստեղծությունները կը գտնուին «Ան Է Որ Կայ» բանաստեղծութեան 2-րդ գիրքիս մէջ, որ լոյս տեսաւ 2019-ին Իսթանպուլի մէջ: Բոլորը լոյս տեսած են Յայերէն պլոկին վրայ՝ 28 Ապրիլ 2017-19 Յունուար 2019:

Լեռնա Գարագիւթիք

ՔԱՐԷ ՊՈՒՊՐԻԿ

քարին վրայ
մանուկ մը ծնաւ
փափուկ խանձարուրով փաթթուեցաւ
պառկեցաւ կակուղ անկողինին մէջ
կերակրուեցաւ, խնամուեցաւ
ստիկքէ մը ծորած
մեղր ու կաթով
աչքերն որ բացուեցան
ոչ աշխարհն կակուղ
ոչ ալ մարդիկ փափուկ էին
դաժան եւ անողորմ
չարը ճանչցա՞ւ բարին
թէ բարին էր ճիրաններուն տակ
չարին հալածիչ
մրցումը անաւարտ
վերջակէտը ըլլար անյայտ
հեռու էր գիծը
հորիզոնին երփներանգ
խաբէբայ եւ հմայքով լեցուն
խաղալիքներ էին բոլորը պեսպիսուն
պիտի ուզէր գտնել անմեղը
նստաւ քարին վրայ
պուպրիկ մը ծնաւ
պորտը չինկաւ հողին
պուպրիկը քարէ էր
ինկաւ գետին
փշրուեցաւ աւաղ
քարէ պուպրիկը
աւազ դարձաւ

ԴԵՌ ԽՕՍՔԵՐ ԿԱՆ

Արդարութեան պահն է սա.
 հաշուեկշռի խօսքեր են ահա:
 Ռ՞Վ անդրադարձեր է:
 Զանդուներ են պատերը բոլոր,
 սակայն մտածումն է կալանուեր:
 Որքա՞ն սարսափազդու, չէ՞:
 Մէկիկ-մէկիկ քարերը կը նետուին
 ծով. ծով մը փոթորկոտ,
 ուր ալիքներ կը կատողին:
 Ռ՞Վ է որ հոն կը նստի.
 ստուե՞ր մը միայն
 կը շարժի ծովափն ի վար,
 ծովափն ի վեր:
 Մէկը կը գրկէ ու կ'ազատէ:
 Ռ՞Վ է որ հոն կը կենայ.
 Ստուե՞ր մըն է միայն.
 պիտի նայի ու անցնի
 եւ կամ պիտի գլորի
 նման քարերու,
 զիկը ծեծող ալիքներով քշուին
 խորհուրդներն իր բոլոր:
 Թող մէկը ըսէ՝
 ինչպէ՞ս բանտել մտածումը,
 անցնիլ պատին ետեւ,
 մէջտեղ հանել ու արտայայտել:
 Բայց ինչպէ՞ս,
 ինչպէ՞ս՝
 մէկը թող ըսէ:
 Խօսքերը անբաւարար կը մնան:
 Մտածումն է շղթայուեր:

ԻՄ ՔԱՂԱՔ

քաղա՛քը...
յուշի՛կ-յուշիկ կը հեռանայ
ինձմէ, իմ քայլերուս ուղղութեամբ.
վարդագոյն-սէւ նշոյլներ
հեռո՛ւն կ'առկայծին,
թէւ կապոյտ, թէւ կանաչ
փոխանցումը երփներանգ...
օրն ի բուն ասֆալթը կ'ապրի. տաքուն,
փոշիին, կուպրին հոտը ժունգերուս՝
կը քալեմ պողոտաներու աչ ու ձախ
երթելեկին մէջ դողդոջուն.
մայթեր կրունկաւոր կօշիկներու
թփռտուքին ներքեւ
զուարճութեան ծիծաղ կը բարձրացնեն,
եւ ներբաններու հեւքը անոնց վրայէն
շոյանքով կ'անցնի...
այս քաղաքը՝ հսկայ շրջանակ,
կուլ տալու պատրաստ,
աչք կը բթթ սիրելիներուն.
անոնք՝ գինով
թեւ թեւի
իրարու փարած կամ անշատ
կը ցատկոտեն, շղարշով
ծածկուած գիշերներուն մէջ.
դո՛ւն, իմ սիրած քաղաք,
քայլերս քեզմէ հեռու՝
լուսաւոր նորէն...
նորէ՛ն, ետ տանելու.
դո՛ւն, ինծի որքա՛ն մօտ
ես հիմա քեզմէ այնքա՛ն հեռու.
եւ երկինքէն իյնալու պատրաստ
աղանեակի սպիտակ փետուր մը...

ՅԵՌՈՒՆ

Յեռուն՝ հիմա հեռու, շա՛տ, ինձմե
ծովափին վրայ կանգնած
հեռուն, կը դիտե փարոսը,
որ աչք կը քթթէ.
Նաւերու ծուխը կը տարտողի
եւ ալիքներ կը փշրուին
խարիսխներուն, ուրկէ շառաչը լսելի.
հեռուն կը լսէ:

Յեռուն, որուն մօտ ձայներ կը շիջին,
եւ նշոյլներ աղօտ կ'առկայծին,
հասնիլ կը ջանայ մօտիկին.
ըղձանքը անճանաչ.
գէթ ձեռք մը,
շունչ մը
գալարուն կը բարձրանայ
կոհակներու ծփանքով
խլրտուն:

Յեռուն ես եմ. ինձմե
հեռու. եւ...
չունիմ մօտեցում.
կոհակներու հոսանքն ի վեր,
հոսանքն ի վար
աղաղակ մըն եմ.
փնտռուք,
աղաչանք,
նուաղումը՝ ես.
ընկողմանած
չգոյուրթին:

ՑՈՒԼԵՐ

Մարուշ Երամեան

Սեւաքարերը կը ճչան իրենց վերքերուն մեջէն
Եւ լռութիւնը կը պայթեցնէ սահմանները անապատին
Ցուլերուն ճերմակ աչքերը ա՛լ չկան
Բայց կայ նայուածքը
Մեխուած ապագայի մը արիւնտոտ
Որ դեռ պիտի գայ
Լուալու վերքերը քարերուն

Կային ցուլերուն կողերը
Որոնք կրէր էին դարերու ծանրութիւնը
Չէին յոգնէր
Որովհետեւ բարի էր հողը
Եւ բարի էին մարդիկ այն ժամանակներուն
Երբ արիւնն ալ կը խօսէր
Որպէս միակ բարբառը մարդերուն Բաբելոնի

Բայց կը մնան կողերը
Որոնց վրայ պատմութիւնը տակաւին կը տրոփէ
Յակառակ բացուած խորունկ վերքերուն
Որոնք կը խոստանան չսպիանալ
Պահելու համար մեղքը պատմութենէն ալ ծանր
Պահելու համար գոնէ բարութիւնը
Որ կար
Եւ որ ջախջախուէր էր
Բիւրերորդ անգամ

Եւ կը մնան մագիլները նոյնքան սուր
Եւ ճանկելու կարողութիւնը
Եւ անէծքը լուռ անկարող բառի
Եւ կարող շա՛տ կարող բզկտելու
Արիւնի ախորժակը
Թափելու փորոտիքը այս բարբարոսութեան
Որուն անուն չկրցան տալ պատմութեան
Ճանապարհորդները բանիմաց

Բայց անապատը դեռ կը պատռտի
Ճիչովը լռութեան
Յաւովը վերքերուն ցուլերուն
Որոնք կրցեր էին այլ վերքեր կրել իրենց կողերուն
Եւ հիմա կողերը ա՛լ չկան
Ու որբ են բոլորը
Որբութեամբը այրուող անտառներուն

Մնացեր են ձագերը մեծ ցուլերուն
Նոյնքան մեծ նոյնքան ճերմակ աչքերով
Կոյր մինչեւ երկրորդ գալուստը խոստումին
Մնացեր են թեւերը անոնց թռիչքի խոստումով
Եթէ միայն մնայ երկինքը անփուլ
Եթէ միայն մնայ լռութիւնը առանց խզտուածքի
Եւ մնայ յիշողութիւնը ծանրակիր կողերուն




ՉԱՆՅԵՏԱՑՈՂ ԱՐԺԷՔՆԵՐ

ԴԱՐ ՄԸ ԿԵԱՆՔԷ ԴԵՊԻ
ԴԱՐԵՐՈՒ ԱՆՄԱՐՈՒԹԻՒՆ
ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ս. Մահտերեճեան

«...Ու կըքողս Նա ինքն եղաւ, որ սահմանեց ինձ պոետ»:
Յ. Թումանեան

Աւելի քան 80 տարի առաջ, հայ գրականութեան պարտեզին մէջ ծլարձակուեցաւ բանաստեղծ մը, որ 2019-ի Նոյեմբերի առաջին օրերուն կնքեց աւելի քան մէկ դարեան իր կեանքը եւ թեւակոխեց դարերու անմահ



հուրեան փուլը: Անունն էր Ժագ Ս. Յակոբեան, որ աւելի քան 40 հատորներու գրական վաստակով մը կերտեց վիթխարի կոթող մը

եւ իր պատուանդանը հաստատեց սփիւռքահայ յետ-եղեռնեան մեր գրականութեան պատմութեան մէջ:

Ի վերուստ բանաստեղծական շնորհներով օժտուած գրող էր Ժագ Ս. Յակոբեան, կը մարմնաւորէր Յովհաննէս Թումանեանի այն արտայայտութիւնը, թէ ԱՆ եղած էր զինք բանաստեղծ կնքողը:

Իր իսկ խոստովանութեամբ՝ գրական առաջին փորձերը կատարած է աշակերտական տարիներուն, սակայն իբրեւ բանաստեղծ՝ անոր անունը հանրածանօթ դարձաւ 1938-ին, երբ լոյս ընծայեց իր անդրանիկ՝ «Գաղտնի ճամբան» խորագրեալ բանաստեղծութիւններու ժողովածուն: Հազիւ 90 էջերու վրայ տարածուող երգերը առաջին իսկ օրէն աւետեցին, որ մեր բանաստեղծութեան երկնակամարին վրայ ծնած է նոր աստղ մը, որ անշէջ մնաց աւելի քան 80 տարի, անշէջ ալ պիտի մնայ դարեր շարունակ, այնքան ատեն, որ կ'ապրին հայ գրաւոր մշակոյթն ու անոր հաղորդակից դարձող ընթերցողները:

«Գաղտնի ճամբան» հատորի վերջին բանաստեղծութեան տակ, ընթերցողը կը տեսնէ 1936-1937 թուականները. սա գրողին կողմէ հաստատում մըն է, որ «տաճաթայր»ին մէջ մէկտեղուած բանաստեղծութիւնները երկնուած են այդ տարիներուն, այսինքն՝ այն օրերուն, երբ Ժագ Ս. Յակոբեան 20 տարիքը չէր բոլորած (1917-ի ծնունդ է): Առաջին իսկ բանաստեղծութիւնը՝ «Անցորդին» խորագրեալ, ինքնավկայութիւն մը կը բերէ Բանաստեղծի մը ծնունդին.

Ողջո՛յն քեզ, անցորդ. - իբրև ընծայ թանկագին

Քեզ կը բերեն խունկ ու վարդ.

**Քումայթ ցայգուն՝ այս ազնիւ, լիճի պէս
նարմ րոպէին՝**

Ինձի եկո՛ւր, բարի՛ մարդ:

Նուրբ զգացումներով ու անպարագիծ տեսիլներով օժտուած բանաստեղծի մը ծնունդը չէր կրնար աննկատ անցնիլ արժէքներ որոնող ու յայտնաբերող մեծ քննադատէն, որ կը կոչուէր Նիկոլ Աղբալեան: Սա այն «հանքագործ»ն է, որ յայտաբերած էր ու ընթերցողին ծանօթացուցած՝ Իսահակեանի, Չարենցի, Լեւոն Շանթի նման ադամանդներ, վերստին կեանքի կոչած էր Սայաթ Նովան: Քանի մը տարի ետք, Ն. Աղբալեան պիտի չերկմտէր յառաջաբան մը գրելու Նորափոթի բանաստեղծին երկրորդ երգարանին՝ «Մեղրալուսին»ին համար, եւ պիտի հաստատէր, որ «ժագ Յակոբեան մի Նոր բողբոջ է մեր մշակոյթի բազմադարեան ծառի վրայ եւ ունի մեծարժէք կարողութիւններ այդ մշակոյթը գունազարդելու եւ Նոր տարրերով հարստացնելու»: Եթէ Աղբալեան հրաշքով մը իր աչքերը վերստին բանար տասնամեակներ ետք, պիտի տեսներ, որ իր նախատեսութիւնը մարմնաւորուած է Յակոբեանի բազում հատորներուն մէջ:

ՍԵՐՈՒՆԸ

Ժագ Ս. Յակոբեան մէկ անդամն է բանաստեղծներու այն սերունդին, որ հասակ առաւ Յեղասպանութեան յաջորդող տասնամեակներուն: Նոյն սերունդին կը պատկանէին Մուշեղ Իշխան, Վահէ Վահեան, Արմէն Անուշ, Անդրանիկ Ճառուկեան եւ ուրիշներ, որոնք ո՛չ միայն հաղորդ էին գիրենք կանխող տիտաններուն՝ Մեծարենցի, Տերեանի, Վարուժանի, Չարդարեանի, Թէքէեանի, Չօպանեանի եւ նմաններու արուեստին, այլ հրապարակ եկած էին անոնց արուեստի գիծը շարունակելու, գայն դէպի Նոր բարձունքներ տանելու ճիգով: Յակոբեան բախտը ունեցած է իր ծննդավայրին՝ Գահիրէի մէջ վայելելու Թէքէեանի մտերմութիւնը, որպէսզի իր գրիչով յետոյ դառնայ ուղղակի կամուրջ մը՝ թէքէեանական սերունդին ու աւանդապահներուն միջեւ: Ան ընդհանրապէս հաւատարիմ մնաց մեր դասականներուն արուեստին ու արտա-

յայտչաճեւերուն, իրացուց եւ զարգացուց իրեն ժառանգ ու աւանդ հասած արուեստը, դառնալով իր անդաստանին մէջ Նորարար մը, առանց յարելու արդի գրականութեան մէջ ծնունդ առնող ու զարգացող Նորարարութեանց:

Չինք կանխած եւ իր միտքն ու բանաստեղծական արուեստը լուսաւորած սերունդին հետ անոր մտերմութեան մէկ արտայայտութիւնն ալ՝ հայերէն գեղեցիկ բառերուն յարատեւ տողանցնքն է իր էջերուն: Անոր վաստակը ուսումնասիրող բանասէրին ուշադրութենէն պիտի չվրիպի այս յատկանիշը, եւ եթէ օր մը անոր գործերուն հաւաքածոն կազմուի գիտական հրատարակութեան մը ճամբով, վստա՛հաբար անոր մէջ տեղ պիտի գտնէ բառարան մը, ուր տեղ պիտի գտնեն լոյսէ հեռու մնացած, սակայն իր եւ նմաններու կողմէ լոյսին բերուած՝ մայրենիի գանձարանին գոհարները: Ընթերցողը վստահաբար նկատեց, որ վերի չորս տողերուն մէջ կան գոնէ երկու գեղեցիկ եւ «մոռցուած» բառ՝ քումայթ (շէկ, կարմրաւուն) եւ նարմ (խաղաղ, հանդարտ): Ահա թէ Մեծարենցի ու Վարուժանի նման բանաստեղծներէ ինչպիսի՛ արձագանգներ կարելի է գտնել այս բանաստեղծին տաճարին մէջ...

ԼԱՐԵՐԸ

Ժագ Ս. Յակոբեանի քնարը բազմալար է ու անմիջական արձագանգ կը գտնէ կարդացողի սիրտին, միտքին ու հոգիին մէջ, ո՛ր տարիքի ալ ըլլայ ան: Ու պատահական չէ, որ բանաստեղծութիւններու հաւաքածոներ կազմողներ բազմագոյն փունջեր կը քաղեն ժագեան անդաստաններէն, ասմունքողներ ու արտասանութեան մրցումի մասնակցողներ անոր էջերէն կը վերցնեն բազմաթիւ կտորներ, կը խլեն ծափահարութիւններ:

Բանաստեղծին քնարին առաջին տարրերը կազմուած են սիրոյ, զգացումներու եւ անձնական ապրումներու լարերով: Անոնց կողքին, կը հնչեն հայրենիքի, ազգի, մայրենիին հանդէպ պաշտամունքի հասնող սերերը, Յայ Գիրքին ու Մաշտոցեան աւանդներուն հաւատարմութիւնը, անոնց պահպանման պատգամները, մեր Դատին հանդէպ յանձնառութիւնն ու տիրութեան յորդոր եւ պատգամ: Յակոբեան ամենէն վաւերական մէկ երգիչն է հայուն, ու մասնաւորաբար անոր

սփիւռքեան թելին տխուր եւ ուրախ ապրումներուն. մէկ կողմէ կ'որբայ հայուն պարտադրուած օտարացումի եւ հայալքումի ողբերգութիւնը, սական կառուցելու հանդիսանայ Յեղասպանին դէմ կուրծք տուող եւ ազգային ժառանգութեանց տիրութիւն ընող սերունդները մարմնաւորողն ու կամքին արտայայտիչը:

Կարելոր այլ լար մըն է քրիստոնէական հաւատքն ու անոր պատգամներուն տարածումը, որ 1948-էն ետք, յիշեալներուն չափ ու անոնց կողքին վերածուած է մշտափոփ գետի եւ ոռոգած՝ իր աշակերտներուն ու լսարաններուն հետեւողներուն հոգիներուն դաշտերը: Ժագ. Ս. Յակոբեան կրօնաւոր մը չէր, սակայն հմուտ էր Աւետարանին, մեկնաբան մը՝ անոր մարդկային ու բարոյական թելադրանքներուն.

այս լարին ունկնդիրը պիտի անդրադառնայ, որ ան քրիստոնէութիւնը չէր ընդունած իբրեւ սոսկական կրօնական հաւատալիք, այլ նոյնինքն Կրօն հասկացութեան վստմագոյն մէկ արտայայտութիւնն ու կիրարկումը: Փաստօրէն, անոր բոլոր գրաւոր արտայայտութիւնները ուղղակի կամ անուղղակի ինքնակենսագրութիւն են, բառին նեղ ու ամենէն ընդարձակ իմաստներով:

Ժագեան բանաստեղծութիւններու լարերը վարակիչ են ու համակող, ներգրաւող, ինչպէս որ կոչուած է ըլլալու իրա՛ւ բանաստեղծութիւնը: Առաջին ընթերցումն իսկ ընթերցողը կը դնէ գրողին հետ համահունչ գիծի վրայ: Ընթերցողը կը զգայ, որ բանաստեղծին բառերն ու տողերը ի՛ր ալ զգացումներուն արտայայտիչն են: Չէ՞ որ ունինք երգեր, որոնց հեղինակները չեն յիշուիր, այդ երգերը կը դասուին ժողովրդականներու շարքին, այսինքն՝ ժողովուրդը կ'որդեգրէ զանոնք ու կը շահի հեղինակի իրաւունք: Այսուամենայնիւ, Ժ. Յակոբեանի բանաստեղծութիւնները, մուտք գործելով հանդերձ ժողովրդային կալուածին մէջ, չեն լուսանցքայնացներ բանաստեղծին անունը: Ընթերցողը չի մոռնար, որ սա ժագեան սիրոյ արտայայտութիւն մըն է, ժագեան հայրենասիրութիւն կը բուրէ, ժագեան պահանջատիրութիւն, մայրենիին ու գիրքին հա-

ւատարութեան արտայայտութիւնն է, յակոբեանական քրիստոնէաշունչ թռիչք է: Այլ խօսքով, բանաստեղծին պէս կը դառնայ սիրահար, հայրենասէր, լեզուի ու մշակոյթի հանդէպ պաշտամունքով լեցուն, քրիստոնէութեան՝ մարդացնո՛ղ ազդեցութեան ենթակայ:



Կարելի չէ Յակոբեանական բանաստեղծութեան մասին խօսիլ, առանց նշելու, որ ան վարպետ է բազմաթիւ արտայայտչաձեւերու: Բառեակներու, հնչեակներու եւ տաղաչափութեան այլ ձեւերուն կողքին, կարելի է գտնել դիւցազներգական արտայայտութիւններ, երկարաշունչ՝ պոեմանման էջեր: Տողտող կամ տունէ-տուն անցումի վարպետ մըն է, ինչպէս զինք ներշնչող մեծերը: Անոր գրիչը ինքզինք չէ սահմանափակած լոկ չափածոյով, այլ անկէ նոյն հաղորդականութեամբ ծորած են արձակն ու նամակագրութիւնը, գրական ուսումնասիրական աշխատանքներ ու յուշագրութիւն եւ մասամբ նորին:

Չափածոյ թէ արձակ՝ անոր էջերուն մէջ մնայուն յատկանիշ է երաժշտականութիւնը, որ դասական բանաստեղծութեան մէկ հիմնական իւրայատկութիւնն է ու ընթերցողը համակելու եւ ներգրաւելու ոչ բռնագրօսիկ գործիք մը: Անհատական մտածումները եթէ համակող են, նոյնքան վարակիչ են հայրութեան, մայրենիին ու մեր մշակոյթին յաւերժականութեան անոր ձգտումը, եւ արդէն, սա կարմիր թելի նման կ'անցնի իր գրեթէ բոլոր հատորներուն մէջէն, կը կազմէ անոր բազմերանգ գորգին հենքը կազմող՝ տիրական գոյնը: Ահա թէ ինչո՛ւ անոր իւրաքանչիւր գրա-

Լոր արտայայտութիւնը բան մը կ'աւելցնէ իր վաստակի արժեքին վրայ, զինք կը դարձնէ բոլոր ժամանակներուն հասնող բանաստեղծ:

ԴԵՊԻ ԱՆՄԱՅՈՒԹԻՒՆ

Ժագ Ս. Յակոբեան ինքնագիտակից, նաեւ իր արժեքին գիտակից գրող էր ու այդպէս ալ պիտի մնայ մեր յիշողութեան մէջ: Սայաթ Նովայէն սկսեալ, մինչեւ մեր օրերը, մենք հարուստ ենք նման գրողներով (նախընթաց դարերուն, համեստութիւնն ու ինքնագովութենէ խուսափումն էին տիրակաւոր): Խօսքը սին ինքնագովութեան մասին չէ բնականաբար: Անոր կեանքն ու գրականութիւնը ընդելուզուած են մեր ժողովուրդի հաւաքական կեանքին հետ ու այդպէս ալ պիտի մնան ընդմիշտ: Ամենէն պերճախօս օրինակներէն մէկն ալ այն էր, որ վերջին շուրջ 20 տարիներուն, ան հատորներ ու բանաստեղծութիւններ նուիրեց հայութեան կեանքի պատմական հանգրուաններուն: Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօնք հռչակման տարեդարձը, Արամ Ա. Կաթողիկոսին կողմէ իրարայաջորդ տարիներ որոշ արժեքի մը կամ սրբութեան մը նուիրելու նախաձեռնութիւնը, Նոյնիքն Տեղասպանութեան 100-ամեակն ու այլ հանգրուաններ անմիջական արձագանգ գտան անոր գրիչէն, հագուադէպ երեսոյթ՝ մեր ապրող գրականութեան մէջ. Նարեկի, Հայ Գիրքի, Հայ Դպրոցի ու այլ «Տարի»ներուն նուիրեց գողտիկ կամ ընդարձակ հատորներ: Իսկ քանի մը տարի առաջ իր լոյս ընծայած մէկ հատորը, որ կը կրէր «Գոյնգոյն» խորագիրը, կարծէք թէ մէկ բնութագրումը ըլլար իր գրական վաստակին եւ հեռակայ արձագանգ մը՝ Ն. Աղբալեանի այն նախատեսութեան, որ Յակոբեան «*մի նոր բողբոջ է մեր մշակոյթի բազմադարեան ծառի վրայ եւ ունի մեծարժէք կարողութիւններ այդ մշակոյթը գունազարդելու*»:

Եղաւ բախտաւոր, այն իմաստով, որ հակառակ վերջին տարիներու ֆիզիքականին որոշ նահանջին, մինչեւ վերջ ալ պահպանեց միտքի պայծառութիւնը եւ յաղթականօրէն տօնեց իր դարադարձը, արժանացաւ մրցանակներու՝ Մաշտոցանուն շքանշանի: 100-ամեակին առիթով իր գրած մէկ բանաստեղծութիւնը այլապէս կը հանդիսանայ իր ինքնագիտակցութեան մէկ արտայայտութիւնը.

***Կամքովն Աստուծոյ
Եւ իր շնորհքով,
Գլխո՛ւն տակաւին
Կեանքի թա՛գ
Փալփլուն,
Ես կը մտնեմ
Հարիւրէն ներս
Արքայի պէս,
(.....)
Ա՛լ վրայես
Թօթափելով
Ցնցոտին հին
Տարիներուս,
Ես՝ հողէն ժայթքած
Ծիլի հանգոյն
Վերանորոգ,
Գարունո՛վ
Պիտի քալեմ
Արքայօրէն
Եւ ընթանամ
Դեպի երկրորդ
Հարիւրի նոր,
Նո՛ր արշալոյս...***

Իրաւունք ունի ժագ Ս. Յակոբեան, որովհետեւ իր երկրաւոր մէկ դարեան կեանքին ընթացքին կերտած վաստակը զինք իրաւա՛մբ կը դասէ անմահներու փաղանգին, անոնց՝ որոնք կ'ապրին դարեր, ժառանգորդներն ու զանգահարող պատգամաբերներն են Մաշտոցներու, Շնորհալիներու, Նարեկացիներու, Կոմիտասներու եւ մեր հին ու Նոր բոլոր անմահներուն: Այսօրուան ու վաղուան սերունդներուն կը մնայ ուղղակի հաղորդակից մնալ անոր գրաւոր ժառանգութեան, թոյլ չտալ, որ ան բանտարկուած մնայ գրադարաններու դարակներուն վրայ: Բանգի այս տողերը բաւարար չեն անոր վիթխարի ժառանգութեան ու անանդներուն հետ հաղորդակից դառնալու, այլ կը մնան միայն նշուել անոր գրական վաստակին հետ լիարժէք հաղորդակցութիւն մը:




ՄՆԱԼՈՎ ԱՒԱՆԴՈՅԹԻՆ ՀԱՒԱՏԱՐԻՄ

Հրազդան Թորմաճեան

Հայերը ընդգծուած յարգանքով են վերաբերում օտարազգի միսիոնարներին: Օսմանեան կայսրութեան մի շարք քաղաքներում բազմաթիւ միսիոնարներ տասնամեակներ ձգուող գործունեութիւն են ծաւալել:

հետաւոնցներն են: Այդպիսի կեդրոններ ստեղծելու անհրաժեշտութիւն է առաջացել յատկապէս 1894-1896 թուականներին տեղի ունեցած Համիտեան ջարդերից յետոյ: Ընտանիք կերակրող, ամուսինները կորցրած



Սփռոց, 19-րդ դար, Տեր Չօրի Յուշահամալիրի թանգարան, Սուրիա:

Նրանց կրօնակրթական, առողջապահական, բարեսիրական եւ որբախնամ գործունեութիւնը անջնջելիօրէն դրոշմուած է հայութեան յիշողութեան մէջ: Առ ի երախտագիտութիւն նրանց անուններով են կոչուել ոչ միայն բազմաթիւ ընտանիքներում ծնուած երեխաներ, այլեւ փողոցներ ու դպրոցներ, կանգնեցուել են յուշարձաններ:

Մարաշում (Kahraman Marash), Այնթապում (Gaziantep), Ատանայում, Ուրֆայում (Banliurfa) եւ այլ քաղաքներում նրանց ծաւալած բազմակողմանի գործունեութեան մէջ մեզ հետաքրքրողը ասեղնագործութեան ար-

բազմաթիւ այրիների ու որբերի աշխատանքով ապահովելը դարձել է մի շարք միսիոնարների կարեւորագոյն խնդիրը:

Այդպիսիներից է Ամերիկայի Միացեալ Նահանգներից 1882 թ. Այնթապ ժամանած Ֆէնսի Շեփըրտը: Նրա ամուսինը՝ Ֆրետա Շեփըրտը հրաւիրուած էր Կեդրոնական Թուրքիայի Գոլէճում դասաւանդելու եւ Գոլէճին կից գործող Ազարիա Սմիթ հիւանդանոցում աշխատելու նպատակով: Տիկին Շեփըրտը ուսանած բժիշկ էր, մասնագիտացած կանացի հիւանդութիւնների գիծով:

Նրա գործունեութեամբ հիացել, գնահա-

տանքի բազմաթիւ տողեր են գրել թէ ամերիկացի աւետարանական գործիչները¹ եւ թէ հայերն ու թուրքերը: Մեզ համար կարելորն ու գնահատելին այն է, որ Ֆէնի Շեփըրտի գործունեութիւնը մեծապէս նպաստել է հայերի մօտ ասեղնագործութեան զարգացմանը: Բարեբախտաբար Նրա կարելորագոյն գործընկերներից Յովակիմ Պազգալեանի² յուշերում պահպանուել են ուշագրաւ մանրամասնութիւններ: Պարզում է, որ լինելով կանացի բժիշկ նա առընչուել է թէ՛ Այնթապի եւ թէ՛ շրջակայ գիւղերի կանանց: Ծանօթ է եղել նրանց ձեռագործ աշխատանքներին: Ըստ Պազգալեանի, Տիկին Շեփըրտին ամէնից աւելի զարմացրել է այն յանգամանքը, որ աշխատատար ձեռագործները հայերը աշխատել են իրենց համար՝ առանց վճարման ակնկալիքի:

Երկարատեւ նախապատրաստական աշխատանքներից յետոյ, Ֆենի Շեփըրտին յաջողում է ստեղծել իր նախատեսած ձեռագործի կեդրոնը: Նա իր շուրջը համախմբած կանանց յանձնարարում է փորձական ձեռագործներ պատրաստել: Ըստ Շեփըրտի, դրանք կոպիտ էին եւ չէին կարող մրցել Եւրոպայում յաջողութեամբ վաճառուող ճաբոնական ու չինական ձեռագործների հետ: Անհրաժեշտ էր թէ՛ աշխատանքը նրբացնել եւ թէ՛ զարդածելերը յարմարեցնել ընդունուած ճաշակին: Ամիսներ տեւող այս գործընթացը դրամական ներդրումների կարիք ուներ: Շեփըրտ ոչ միայն աշխատանքային պիտոյքներ էր ապահովում, այլեւ վճարում էր աշխատանքի դիմաց: Նրա ծրագրին սատար է կանգնում, օգնութեան ձեռք է մեկնում ամերիկաբնակ քոյրը՝ Օր. Լ.Բ. Էնտրիւսը:

Որոշ ժամանակ անց կուտակուած փորձ-

նական աշխատանքները Անգլիայում վաճառելու առաջարկով նա դիմում է FRIENDS OF ARMENIA կազմակերպութեանը: Վաճառքը սպասուածից անհամեմատ արդիւնաւետ է լինում: Հաւաքուած գումարը նոր խթան է հանդիսանում Տիկին Շեփըրտի գործունեութեանը: Ըստ Պազգալեանի, ստեղծուել է մի իրավիճակ, երբ 2700 կանայք իրենց ժրաջան աշխատանքով դժուարութեամբ են հասցրել պատուերները կատարել: Իսկ ձեռագործները յաջողութիւն են գտել ոչ միայն Անգլիայում, այլեւ Ամերիկայում³, Գերմանիայում, Ֆրանսիայում, Եգիպտոսում եւ Իրաքում:

Այս աշխոյժ գործունեութեան ընթացքում տեղի է ունեցել մի փոփոխութիւն, որը ժողովրդական արուեստի ուսումնասիրութեան տեսակետից կարելոր է: Պահպանուած տեղեկութիւնները ապացուցում են, որ ձեռագործ աշխատանքների յարմարեցումը շուկային եղել է կարելորագոյն խնդիր: Միաժամանակ անհրաժեշտութիւն է զգացուել «նոր գաղափար, գեղարուեստ մտցնել գործին մէջ»⁴ Այս նպատակով Այնթապ են բերուել Եւրոպա հրատարակուած քաթալոկներ, որոնցում ներկայացուած զարդածելերը ներմուծուել են ձեռագործների մէջ: Յովակիմ Պազգալեանն ինքը յատակապէս զբաղուել է նոր յօրինուածքների (քումփոզիցեաների) զարդածելի ստեղծմամբ:

Եթէ այս ամէնը ամփոփենք, կը տեսնենք, որ տեղական ասեղնագործութեան մէջ ձեւամտածողութեան իմաստով սկզբունքային, նկատելի փոփոխութիւններ են տեղի ունեցել: Այդ փոփոխութիւնները որոշակիօրէն կարելի է նկատել տարբեր ժամանակներում հիւսուած ձեռագործների համեմատական ուսումնասիրութեամբ:

¹LETTERS FROM ARMENIA. INTRODUCTORY LETTER FROM W. E. GLADSTONE. *Letters from the Scenes of the recent Massacres in Armenia* by James Rendel Harris and Helen B. Harris. Fleming H. Revell Co., Publishers of Evangelical Literature. New York. Chicago. Toronto.

²Յովակիմ Պազգալեանը(1879-1961) ուսումը շարունակելու նպատակով Այնթապ եկած սեբաստացի է: Նա 1904 թ. Ամերիկեան Գոլէճը աւարտելուց յետոյ դարձել է Տիկին Շեփըրտի ամենակարելոր աշխատակիցներից մէկը: 1920-ականներին Հալէպ տեղափոխուած Յովակիմը կարելոր գործունեութիւն է ծաւալել Քարէն Եփփէի հիմնած ձեռագործի կեդրոնում:

³Ըստ Նազարեթ Պարսումեանի Միացեալ Նահանգներում Շեփըրտի ուղարկած ձեռագործները առաջին անգամ հանրութեանը ներկայացրել է Յակոբճան Պարսումեանը: Յակոբճանը Այնթապում նշանաւոր լումայափոխ Կարապետի որդին էր, որն իր բժշկական ուսումը Այնթապի Ամերիկեան Գոլէճում աւարտելուց յետոյ մեկնել էր Միացեալ Նահանգներ, Ֆիլատելֆիայում շարունակելու համար: Nazareth Barsoumian, STOWAWAY TO HEAVEN, 1961, p53.

⁴Hovagim Bakkalian, HISTORY OF AYNTAB ARMENIANS, 1953. Vol. II p305.

Այնթապցի հայերի ընտանիքներում սերնդէ-սերունդ պահուող, նախամայրերից մնացած ձեռագործները, թանգարաններում պահուող հին ասեղնագործութիւնները ունեն որոշակի օրինաչափութիւններ: Դրանցից ամենակարելորդ յօրինուածքի կեդրոնական բաղադրիչն է: Մինչեւ 19-րդ դարի 80-90-ական թուականները պատրաստուած ձեռագործների կեդրոնում ամենուր կամ ութթեւանի աստղն է, կամ նրա տարատեսակները՝ ոճաւորման կայուն սկզբունքներով: Այն որ ութթեւանի աստղը հայկական կիրառական արուեստում ընդհանրացած երեւոյթ է, ակնյայտ է: Ակնյայտ է նաեւ այն, որ հարիւրամեակներ շարունակ այս խորհրդանիշը եղել է սիրուած ժողովրդի կողմից: Աւելին, որոշ ուսումնասիրողների կարծիքով այն հնագոյն սրբազան նշան է:⁵ Ակնյայտ է, որ աստիճանաբար ութթեւանի աստղը տեղը գիշել է հրեշտակներին, նրանցով կազմուած համադրութիւններին: Հայ ընտանիքների մօտ պահուող հազարաւոր ձեռագործների մէջ դժուար է գտնել այնպիսիք, որոնք հիւսուել են 1920-ից յետոյ եւ կեդրոնում ունեն ութանկիւն կամ ութաթեւ աստղիչեցնող կեդրոնական վահան: Նրանք ժամանակի պահանջով «արտաքսուել» են յօրինուածքի կեդրոնից:

Հալէպում մի քանի տարիքաւոր կանայք իրենց օժիտը ներկայացնելիս հպարտանում էին մահճակալի ծածկոցների ու բարձերի վրայ հիւսուած բազմաֆիկուր քումփոզիցիաներով: Սրանց մէջ հրեշտակներից բացի պատահում են ձիաւոր ասպետներ, սիրահար գոյգեր, ծաղկեկողովներ, քնար, լողացող կանայք, եւայլն...: Սրանք հսկայական աշխատանքի արդիւնք են եւ ամեն գովասանքից՝ վեր:

Վերը շարադրուածը սակայն չի նսեմացնում մեր հետաքրքրութիւնը տեղական, բնիկ ձեւերի նկատմամբ: Ուստի եւ Տիկին Շեփըրտի, Յովակիմ Պագալեանի եւ նրանց համախոհների կողմից տարած աշխատանքի նկատմամբ մեր վերաբերմունքը միանշանակ չէ: Ակնյայտ է, որ նրանք որոշակի խնդիրներ են լուծել (եւ մեծ յաջողութեամբ):

Սակայն արդիւնքում գոհ են գնացել հնից եկող արժեքաւոր ձեւեր: Փոխուել է ճաշակը, լաւի ու վատի տեղական ըմբռնումները:

Պետք է նշել, որ ներմուծուած ձեւերը ամբողջութեամբ չեն ոչնչացրել հներին: Յատկապէս յօրինուածքը շրջանակող գարդագօտիներում աւանդական ձեւերը երկար ժամանակ գոյատեւել են: 20-րդ դարում ասեղնա-



Սաթենիկ Թահմիզեան Էքարտ: Պռուս Էքարտի կինը:

գործուած ծածկոցների մեծ մասը հին եւ նոր ձեւերի գուգորդութիւններ են: Այս պատճառով էլ այսպիսի աշխատանքները կարող ենք անուանել «խառնածին»:

Թւում է թէ տուեալ իրավիճակում գործերը այլ ընթացք չէին էլ կարող ունենալ: Սակայն ասեղնագործութեան յայտնի կեդրոններից Ուրֆայում պատկերը բոլորովին այլ է: Միսիոնար Գորինա Շաթըքի (դարձեալ ամերիկացի) հիմնած «Նխշին Տան»ը գործերը այլ կերպ են զարգացել: Այստեղ մեծ խնամքով են վերաբերուել տեղական աւանդոյթներին: Այսպիսի եզրակացութեան համար հիմք է

⁵Հ. Յ. Աստուրեան, ՆԱԲԱՍԱՐԴ, «Հայկական Դրամներ», Կոստանդնուպոլիս, 1914, էջ 308:

հանդիսանում Հայաստանի Ազգային Պատկերասրահում պահուող Պռուևո Էքարտի⁶ հաւաքածուն: Պռուևոյ կիևը՝ Սաթենիկ Պեգիկեանը ամուսնու հաւաքածուն փրկել, հասցրել է Հայաստան եւ 1956թ. յանձնել Ազգային Պատկերասրահին: Այն բաղկացած է ձեռագործ պատառիկներից (73 հատ) եւ գար-

ամուսնու յատուկ վերաբերմունքի մասին վկայում է նաեւ Սաթենիկը:⁷

Այս պատճառով է, որ Պռուևո Էքարտի պարագային մեր երախտագիտութիւնը կըրկնակի պատճառ ունի: Ուրֆայում կարողացել են պահպանել թէ՛ ամանդական ձեւերը եւ թէ՛ ձեռագործի վաճառքով եկամուտ ապահովել



Մահճակալի ծածկոց (հատուած), 1917թ., Այնթապ, Արմիկ Փափագեան Պարսումեանի հաւաքածոյ, Հալեպ,

դանկարներից (223 հատ): Ձեռագործ աշխատանքների համար նկարուած օրինակներից երեւում է, որ այստեղ յատուկ ուշադրութիւն է դարձուել հին ձեւերի անադարտութեանը, նոր նախշեր մշակելիս հիմնական օրինաչափութիւնները պահպանելուն:

Մեր կարծիքով այս հարցում որոշիչ է եղել Պռուևոյի դերը: Նա ոչ միայն Օսմանեան Կայսրութիւնում գիևուորական ծառայութեան կոչուած սպայ էր, այլեւ արհեստավարժ նկարիչ, որն աւարտել էր Պերլիևի Գեղարուեստի համալսարանը: Ձեռքի տակ եղած հին ձեռագործների նկատմամբ

կարիքաւոր ընտանիքներիև:

Մշակոյթները զարգացման ընթացքում անպայման փոփոխուում են: Թէ՛ ներքին պատճառները եւ թէ՛ արտաքին փոխազդեցութիւնները կարելուր են այս հարցում: Յատկապէս կրօնական, քաղաքական բնոյթի փոփոխութիւնները իրենց հետ բերում են ոչ միայն նոր գաղափարներ, այլեւ՝ ձեւամտածողութիւն: Մեր կարծիքով անցեալը ճանաչելու գործում կարելուր են թէ՛ պատմական իրադարձութիւնները եւ թէ՛ նրանց ուղեկցող մշակութային դրսեւորումները, ձեւամտածողութեան մէջ տեղի ունեցող փոփոխութիւնները:

⁶Պռուևո Էքարտը Ուրֆայում գործող գերմանական գորգի գործարանի տնօրէն Ֆրանց Էքարտի եղբայրն է: Նա ծնուել է Պերլիևում 1885թ.: Ըստ չստուգուած տուեալների Պռուևոն մահացել է 1918թ. Պաղեստինի ճակատում Դաշնակիցների դէմ կռուելիս:

⁷Ուրֆայի Ասեղնագործութիւն, հատոր Ա., Հալեպ 2014թ.:

ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆ

Գայիանե Սիմոնեան-Տերեան

Ռոմանոս Մելիքեանը երաժշտական ստեղծագործության պատմության մեջ յայտնի է որպես ռոմանսի եւ ընդհանրապես վոկալ լիրիկայի անգերազանցելի վարպետ:



Իր ստեղծագործության ոճի ինքնատիպության եւ գեղարուեստական բարձր յատկանիշների շնորհիւ, նա դարձաւ նոր կազմաւորուած կոմպոզիտորական ազգային դպրոցի ականաւոր ներկայացուցիչներից մէկը:

Յետաքրքրական է, որ եթէ կեանքում Ռոմանոս Մելիքեանը հասարակական մեծ եռանդ ունեցող մարդ էր, մաքառող, իր գործին նուիրուած ֆանատիզմի հասնելու աստիճան եւ այդ իսկ պատճառով կարծես նոյնիսկ

անողոք, ապա ստեղծագործության մեջ նա լիրիկ էր՝ յստակ, նուրբ, երբեմն նոյնիսկ փխրուն: Պատահական չէ, որ Խսահակեանը Նրան համարել է «ամենալիրիկականը»՝ հայ կոմպոզիտորներից: Այս քնքշութեան մեջ է Ռոմանոս Մելիքեանի երաժշտութեան հմայքի գաղտնիքներից մէկը: Կոմպոզիտորի կերպարները խորունկ են ու նրբայոյս, գեղեցիկ են եւ իմաստալի, ինչպէս կեանքը: Նրա երգերից ու ռոմանսներից շատերը իրենց փոքր ձեւի մեջ կարծես յոյզի ու մտքի մի աշխարհ են ներփակում:


Ռ. Մելիքեանը ծնուել է 1883 թուականի Յոկոտեմբերի 1-ին հիւսիսային Կովկասի Ղզլար քաղաքում, միջնակարգ կրթութիւնը ստացել է նոր-Նախիջեւանի հայկական դըպրուցում, որտեղ աշակերտել է Գեորգ Չորեքեւանին, նրանից ստանալով երաժշտական առաջին գիտելիքները: Շուտով նա դառնում է իր ուսուցչի օգնականը՝ երգչախմբի ղեկավարման գործում, իսկ աւելի ուշ նշանակւում է տեղի Ս. Գեորգ եկեղեցու երգչախմբի ղեկավար: Նրան առանձնապէս ոգեւորում էր Կարա-Մուրզայի օրինակը, հայաշատ կերրոններում երգչախումբեր կազմակերպելու եւ համերգներ տալու նրա բուռն գործունէութիւնը: Երգչախմբերից բացի, նա կազմակերպում է մանտոլինահարների աշակերտական խումբ եւ 1900 թուին Ղզլար քաղաքում տալիս է իր անդրանիկ համերգը, կատարելով գերազանցապէս ազգային-հայրենասիրական երգեր:

1902 թուին անարտելով թեմական դպրոցը, նա ընդունւում է Ռոստովի երաժշտական ուսումնարան եւ ձեռք բերում աւելի հիմնաւոր գիտելիքներ:

ԳԱՆՁԱՍԱՐ

Սակայն Նրա ծրագրերի կատարման համար ուսումնարանի տուածն էլ քիչ էր: Նա ձգտում էր երաժշտական բարձրագույն կրթութեան, որը հնարաւոր էր իրականացնել Մոսկուայում կամ Փեթերսպուրկում: Թեւեւ նիւթական հնարաւորութիւններից զուրկ, բայց աշ-

եան տարածման գործը: Նրա գլխաւորութեամբ կազմակերպում են երաժշտութեան ցուցադրական դասեր, աշակերտական ցերեկոյթներ, հրատարակում են ձեռնարկներ: Այս տարիներին նա գրում է Նոր ստեղծագործութիւններ: Այս շրջանին են վերաբերում «Վարդը»



խատելու եւ սովորելու բուն ցանկութեամբ տարուած, նա 1905 թ. մեկնում է Մոսկուա: Այստեղ նա աշխատանքի է ընդունւում Լազարեան ճեմարանում՝ որպէս ուսանողական երգչախմբի ղեկավար: Նրան չի յաջողւում ընդունուել Մոսկուայի երաժշտանոցը, բայց մասնաւոր դասեր է ստանում ականաւոր երաժիշտներից: Այնուհետեւ Մոսկուայի ժողովրդական երաժշտանոցը բացուելուց յետոյ, ուսումը շարունակում է կոմպոզիցիայի եւ տեսութեան դասարանում: Այս տարիներին փորձեր է կատարում ժողովրդական երգերի մշակումների ուղղութեամբ, գրում է իր առաջին ռոմանսներն ու խմբերգները: Սակայն, ուսումնառութեան ծրագիրը շուտով ընդհատւում է: Նա հիւանդութեան պատճառով ստիպուած է լինում թողնել Մոսկուան եւ տեղափոխուել Թիֆլիս, որտեղ նա Ազատ Մանուկեանի եւ մի խումբ հայ երաժիշտ-մանկավարժների հետ 1908 թուականին կազմակերպում է «Երաժշտական Լիկա» ընկերութիւնը, որի գլխաւոր նպատակն էր կարգաւորել երաժշտութեան դասաւանդումը դպրոցներում, կազմակերպել հայ երաժշտութե-

ան տարածման գործը, եւ Թումանեանի թարգմանութեամբ, «Ուռնի»-ն՝ Խնկոյեանի խօսքերով զուգերգը, ժողովրդական երգերի մշակումներ եւ այլ գործեր:

Մասնագիտական ուսումը շարունակում է 1911-ին՝ մեկնելով Փեթերսպուրկ, ընդունւում է երաժշտանոց եւ սովորում Գլազունովի եւ Լեատովի մօտ:

Փեթերսպուրկում ուսանած տարիներին գրում է մի ամբողջ շարք ռոմանսներ՝ «Աշնան Տողեր» խորագրով: Այս շարքը ունի պատմական եւ գեղարուեստական կարեւոր նշանակութիւն, քանի որ այն ռոմանսների առաջին ամբողջական շարքն է: «Աշնան Տողեր» շարքի մէջ են մտնում «Տարեք Յողմեր», «Անջատման Երգ», «Վայրի Ծաղիկ», «Ուշ է Արդէն», «Աշնան Երգ», «Աշնան Էթիւտ», «Քընքուշ Թագուհին», «Երբ Կը գայ Նա» ռոմանսները: Ճնշող մեծամասնութիւնը գրուել է Վահան Տերեանի բանաստեղծութիւնների հիման վրայ:

Դժբախտաբար Մելիքեանին այս անգամ էլ չի յաջողւում ավարտել երաժշտանոցը հիւանդութեան եւ նիւթական կարիքի պատ-

ճառով, նա ստիպուած է լինում 1914 թուին ընդհատել ուսումը եւ վերադառնալ Թիֆլիս, ուր գործուն մասնակցութիւն է բերում Թիֆլիսի հայ երաժշտական ընկերութեան գործունեութեանը եւ շարունակում է ստեղծագործական աշխատանքը: Իր կեանքում առաջին անգամ հեռաւոր ուղեւորութիւն կատարելով Արեւմտեան Հայաստանի գաւառներ, նա ժողովրդի կենցաղում ուսումնասիրում է հայ ժողովրդական երգը, հաւաքում ու ձայնագրում է արժէքաւոր նմուշներ, եւ հարստացած բազմաթիւ տպաւորութիւններով վերադառնում է Թիֆլիս: Բացառիկ էր այս ուղեւորութեան նշանակութիւնը կոմպոզիտորի ստեղծագործական կեանքում: Նոր ու թարմ երաժշտական տպաւորութիւնների հիման վրայ վերջնականապէս բիրտեղանում է նրա ստեղծագործութեան ազգային ոճը եւ նա թեւակոխում է իսկական հասունութեան շրջանը՝ կերտելով «Չմրուխտի» երգ-ռոմանսների շարքը:

Այս շարքը բաղկացած է ութ ռոմանսներից, Թումանեանի, Իսահակեանի, Տեմիրճեանի, Խնկոյեանի եւ Զալաշեանի խօսքերով: Ռոմանսները տարբեր են իրենց բնոյթով: Նա ժողովրդական երգի ոչ մի օրինակ չի օգտագործել, թեպէտ շարքի բոլոր ռոմանսներն էլ ունեն ժողովրդական գունաւորում, մօտ են ու հարազատ հայ ժողովրդական երգի ոգուն:

Այլ բնոյթ ունի «Չամ-Վամ» երգաշարը: Այստեղ գերակշռում են ժանրային-նկարագրական թեմաները, որոնք հայրենի բնութեան ժողովրդական կենցաղի պատկերներ են՝ գրուած բանաստեղծական թարմ շնչով եւ վարպետին յատուկ գրչով: Այս շարքի համար հիմք է ծառայել երկու գլխաւոր աղբիւր՝ հայ ժողովրդական-գեղջկական երգը եւ գուսանների արուեստը: Խորհրդային կարգերի հաստատումից յետոյ Ռ. Մելիքեան տեղափոխուում է Երեւան: Այդ օրուանից նրա կեանքն ու գործունեութիւնը անխզելիօրէն կապուում են հայ նոր երաժշտութեան զարգացման հետ: Նա գործուն դեր է կատարում Երեւանում երաժշտական սդուտիայի ստեղծման գործում, որի հիման վրայ 1923-ին բացուում է Երեւանի Պետական Երաժշտանոցը: Մի քանի տարի շարունակ կազմակերպում է համերգներ Հայաստանի ողջ տարածքով:

Ռոմանոս Մելիքեան նշանակալի դեր է կատարել Երեւանի պետական օփերան կազմակերպելու գործում՝ որպէս առաջին երաժշտ-

տական խորհրդատու: Նա եղել է նաեւ Հայաստանում երաժշտական հրատարակչութիւն կազմակերպելու գործի առաջին ղեկավարներից մէկը:

Ռ. Մելիքեան տակաւին որոնումների մէջ էր ստեղծագործական բնագաւառում, նոր, համարձակ ստեղծագործական խնդիրների լուծման նախաշեմին, երբ անսպասելի մահը կտրեց նրա կեանքի թելը: Նա մահացաւ 30 Մարտին 1935-ին: Նրա ստեղծագործութիւնը մեծ ազդեցութիւն է ունեցել հայ երաժշտութեան, եւ ամէնից առաջ վոկալ երաժշտութեան հետագայ զարգացման վրայ:

Ռոմանոսը ցանկութիւններ, ծրագիրներ, անելիքներ շատ ուներ: Բայց նրա մեծագոյն ցանկութիւնն էր՝ փոքր ձեւից անցնել մեծ ձեւի, գրել մի օփերա ժամանակակից թեմայով: Նրա ցանկութիւնն էր օփերայի մէջ ներկայացնել մեր ժողովրդի ուրախութիւնը, երգ ու պարերով, եւ կենցաղի գունագեղ արտայայտութիւններով: Երագում էր այդ օփերայի մէջ ներդնել տարիների իր երաժշտական փորձը, իր մշակոյթը եւ իր սիրտը: Զանի որ նա այն կարծիքին էր, որ ամէն մի արուեստագետ իր գործի մէջ պետք է դնի իր սիրտը:

Ցաւօք դա չիրականացաւ: Սակայն Ռոմանոսը ապրում է իր գմայլելի, իր վճիտ, կարկաչուն երգերում:

Եւ քանի դեռ հայ ժողովուրդը ունի երգ եւ երաժշտութիւն, քանի դեռ հայոց բարձր լեռներում կը հնչի հայ երգը, մենք միշտ կը լսենք Ռոմանոս Մելիքեանի սրտի տրոփիւնը, եւ յաւերժ կ'ապրի գեղեցիկ հնչիւնների այդ սրտագին վարպետը:

Ես անձամբ, որպէս երաժիշտ իմ առաջին քայլերը սկսել եմ Երեւանի Ռոմանոս Մելիքեանի անուան երաժշտական ուսումնարանից, երաժշտական մի հզօր հաստատութիւն, որտեղ ստացայ իմ երաժշտական գիտելիքները, եւ այժմ, ետ նայելով անցեալի օրերին, ես հպարտ եմ, որ Ռոմանոս Մելիքեանի անունը կրող հաստատութեան շրջանաւարտն եմ: Թող անմահ մնայ մեծ երաժիշտի յիշատակը:





ՓՈՐՁ ՄԸ ՓԱՐԱՃԱՆՈՎԻ ԵՒ ԱՐՇԻԼ ԿՈՐՔԻԻ ԱՐՈՒԵՍՏԸ ՀԱՍԿՆԱԿՈՒ



Վարդգես Պարսումեան

Այս յօդուածը չի միտիր նկարագրել հայ երկու մեծ վարպետներուն արուեստին առանձնայատկութիւնները եւ կամ մեկնաբանել անոնց բովանդակութիւնը, այլ կը փորձէ պարզել ու ներկայացնել այն յատկանիշները, որոնք արուեստագետի մը գործին կ'ուտան համաշխարհային ու տիեզերական արժէք:

Չարմանալի չէ բնաւ, որ մարդկութեան մեծամասնութիւնը Արշիլ Կորքիի գործերը խժքծանք է, իսկ Փարաճանովինը անկապ պատկերներու անհասկնալի ու տարօրինակ մեկտեղումներէ աւելին չի համարեր:

Համաշխարհային փառքի տիրացած ի՞ր հայ զաւակներով հպարտանալու առիթը չփախցնող հայութեան շատ փոքրաթիւ մէկ մասը միայն հազիւ թէ կ'ընկալէ անոնց արուեստին արժէքն ու եութիւնը: Այդ փոքր հատուածէն յաճախ դուրս կը մնան Նոյնիսկ մեծ թիւով մասնագետ նկարիչներ, թատրոնի մարդիկ եւ բեմադրիչներ:

Որքան ալ մեծ ըլլայ արուեստի գործի մը ներգործելու կամ տպաւորելու ազդեցութիւնը հանդիսատեսին վրայ, դրական թէ ժխտական իմաստով, այդ գործին առարկայական (objective) մեկնութիւնը չի դադրիր հանրութեան լայն խաւերուն համար դժուարին գործ մը ըլլալէ: Ընկալելու ու հասկնալու գործը առաւել եւս կը կնճռոտի, երբ հարցը կը վերաբերի 20-րդ դարու արուեստի «արդիական» (Modern) հոսանքներուն պատկանող արուեստագետներու:

Անհերքելի է այն փաստը, որ մեզմէ ծնած իւրաքանչիւր բան կամ գործ, ինչ կ'ուզէ ըլլայ տեսակը անոր, արուեստ թէ արհեստ, հոգեվիճակ (ոխ, նախանձ) թէ զաւակ,

հայելին է զայն ստեղծողին, անկախ անկէ թէ ո՞վ է տուեալ գործին հեղինակը, մանր՞կ թէ չափահաս, խելագա՞ր թէ իմաստուն, հեռետի-



կոս թէ սուրբ, ազնիւ թէ կեղծաւոր, նախամարդ թէ տիեզերագնաց, նաեւ անկախ անկէ թէ գործին հեղինակը հայելին մէջ արտացոլուած պատկերը որքանով կը հասկնայ (այսինքն ինքզինք կը հասկնայ, կը ճանչնայ կամ կ'ընդունի):

Կորքիի եւ Փարաճանովի գործերը որքան ալ ինքնուրոյն ու արժեքաւոր ըլլան, այսուհանդերձ այդ գործերը համաշխարհային արուեստի արդիական ուղղութիւններու հոսան-

քեն դուրս կարելի չէ պատկերացնել ու հասկնալ, հետևաբար անհրաժեշտ է համառօտ



կերպով ներկայացնել ժամանակակից արուեստի ուղղութիւններու յառաջացման եւ տարածման դրդապատճառները:

Արդի արուեստը ծնունդ առաւ «քաղաքակրթութեան դրօշը» կրող Եւրոպայի մէջ, իսկ Չինաստանի, Յնկաստանի, Ափրիկէի ու Յարաւային Ամերիկայի նման հազարամեակներէ եկող ու մշակութային հարուստ ու արժեքաւոր անցեալ ունեցող ազգեր ու երկիրներ, մինչեւ վերջերս (մօտ 100 տարի) հաւատարիմ ու հաշտ մնացին իրենց աւանդական կենցաղին եւ այդ կենցաղին հայելին եղող արուեստին:

Իսկ Եւրոպայի մէջ, անցնող 800 տարուան ընթացքին, իշխանութեան ձգտող՝ կրօնական, աշխարհիկ, թագաւորական, գիւտորական ու մտքի եւ արուեստի մարդոց միջեւ մեծ բախումներ ու յարատեւ տեղաշարժներ տեղի կ'ունենային: 13-րդ դարէն 16-րդ դարերուն, յարատեւ եկեղեցւոյ միապետական խիստ (scholastic) ու քարացած համակարգին դէմ պայքարող եւ մարդկայնութիւն քարոզող արուեստագետներ, 100 տարի տեւող զարթօնքէ մը ետք ինքզինքնին նստած գտան նոր կազմաւորուած ու եկեղեցւոյ զուգահեռ ու հաւասար իշխանութեան ձգտող հարուստներու ու «ազնուականութեան» գիրկը: Երկու դար ազնուականութեան ցած ու մակերեսային ճաշակին գոհացում տուող արուեստագետներու հսկայ բանակին մէջ յայտնուեցան մատներու վրայ հաշուընդող ինքնատիպ ու

ճշմարիտ արուեստագետներ:

18-րդ դարու վերջերուն հարստանալ սկսող նոր դասակարգ մը որդեգրեց եւ հովանաւորը դարձաւ եկեղեցիէն ու պալատէն հեռացած արուեստի ու մտքի մարդոց: Այս վերջիններուն ալ սահմանափակ ու պարզունակ նպատակներուն տուրք չտուող արուեստագետներ գտնուեցան, ինչպէս Daumier, Goya, William Blake եւ այլ ըմբօստ ու անաչառ անհատներ: 1860-ականներէ ետք որեւէ դասակարգի դրօշակին տակ չպատսպարուող արուեստագետներու խումբ մը՝ Gauguin, Vangogh, Rodin, Cezanne-ի նման, ընտրեց «պոհեմական» կեանքը որպէս խնդիրի լուծում:

Մինչ այդ, 18-րդ դարու 2-րդ կեսէն ետք, արեւմուտքը այլազան նպատակներով ու միջոցներով հասաւ ամենուրեք, աշխարհի ամենահեռաւոր անկիւնները, որուն հետեւանքով Եւրոպայի հասարակութիւնը եւ մանաւանդ այդ հասարակութեան միտքն ու աչքը հանդիսացող շրջանակներ, առիթը ունեցան ծանօթանալու Եւրոպա ներմուծուած հնագոյն մշակոյթներու ստեղծագործութիւններուն, ինչպէս



Նաեւ ժամանակակից շատ մը ազգերու հարուստ ու ինքնատիպ արուեստին: Մեծ արուեստով ստեղծուած համաշխարհային արուեստի այս գլուխ գործոցները յայտնութիւն մը եղան մարդկայնութեան ու մշակոյթի կայծը իրենց սրտերուն մէջ կրող խումբ մը տաղանդաւոր երիտասարդներու համար, որոնք 19-րդ դարու վերջերուն, Եւրոպայի գիւղերէն ու քաղաքներէն, իրենց մշակոյթի ծարաւը հագեցնելու ու յետոյ զայն տարածելու համար հասած էին այդ տարիներուն՝ Եւրոպայի սիրտը համարուող Նախ Փարիզ, ապա Պերլին եւ Մոսկուա: «Վայրի» Ափրիկէի ու լատին ամերիկեան «բարբարոս ցեղերու» ու յետա-

մնաց Արեւելքի եւ երրորդ աշխարհի արուեստներու ինքնատիպութիւնն ու բազմազանութիւնը մեծ ազդեցութիւն գործեցին եւ լոյսի հասնելու յոյսի նոր աղբիւր դարձան այս երիտասարդներուն համար: Անոնք չուշացան իւրացնելու ու օգտագործելու 2500 տարի եւրոպական քաղաքակրթութենէն, որպէս յետադիմական ու հակարուեստ, մերժուած ու դուրս մղուած յատկանիշներ՝ ու տարրերը այս նորարուեստներուն: Անոնք անգամ մը եւս իրենց ստեղծագործութիւններէն դուրս շարտեցին եւրոպական արուեստի չափազանց կոկուած ու մակերեսային գեղագիտութիւնը, մարդկային անմիջականութենէ ու ջերմութենէ զրկուած, սթեյլեթ ու արհեստական ոճն ու զայն ծնունդ տուող եւրոպական կեղծ կենցաղավարութիւնը: Իրենց թարմ ու կենդանի արուեստը հակադրեցին տեսանելի աշխարհը լուսանկարչական ճշգրտութեամբ ընդօրինակելու կոյր մղումին, որուն հետեւանքով գործը կամ պատկերը կը դառնար copy-paste մը, իմաստագուրկ վերարտադրութիւն մը, կրկնութիւն մը արդէն իսկ գոյութիւն ունեցող բնութեան եւ անտեղի ցուցադրութիւն մը «արուեստագետի» հմտութեան կամ վարպետութեան եւ կը վրիպէր այն առաքելութենէն որուն համար իսկ ստեղծուած էր:

Մէկ խօսքով այս արուեստը զգաստանալու նոր կոչ մըն էր, ուղղուած հասարակութեան այն բոլոր հատուածներուն, որոնք կեղծ ու սնամեջ մարդասիրութեան, հաւասարութեան եւ եղբայրութեան ու լուսաւորութեան լոզունքներով, նոր աշխարհ մը ու բարձր քաղաքակրթութիւն մը հիմնել կը յաւակնին եւ կամ հիմնած ըլլալու պատրանքովը կ'ապրին:

Արշիլ Կորքին դարձաւ մէկ օղակը տաղանդաւոր երիտասարդներու այն սերունդին, որոնք երկու համաշխարհային պատերազմներու դժոխքէն անցնելով, ապրեցան անոնց բոլոր սարսափներն ու ցաւը եւ ի գին իշխանութեան ու հարստութեան, մարդկային ու տիեզերական բոլոր արժէքներու ոտնակոխման ականատեսը ու վկան դարձան: Անոնք իրենց զուտ անհատապաշտական արուեստով մերժեցին ու մերկացուցին ամէն տեսակի գաղափարախօսութիւն ու խմբաւորում եւ երբեք չփորձեցին որեւէ մէկու հաճոյանալ կամ համակրանքը շահիլ, իրենց գործերը աժան գիւղագիտութեամբ մը շպարելով կամ կիրթ ու քաղաքավարի քաղաքացիի մը հա-

մազգեստ հագնելով:

Արշիլ Կորքիի նկարներուն մէջ կորսուած հայրենիքի կարօտը հանդիսատեսին չի ներկայանար հրաշալի բնաշխարհի մը հոյակերտ վանքերու, գոյնզգոյն դաշտերու, երկինք սլացող սարերով ու ծիրանենիներու



քաղցր մեղրի տեսքով կամ պատկերներով, այլ զուտ նկարչական բառապաշարով մը, գոյներու, գիծերու, ծաւալներու ու տարածութեան տարբեր համադրութիւններու (composition) ընդմէջէն, կտաւէն մեզի փոխանցուող կանխամտածուած տպաւորութեամբ: Սովորական մարդու մը աչքով խժբժանքի նմանող այս գործերը երբ մասնագետ նկարիչի մը աչքով կը դիտենք, կը նկատենք նկարչութեան արհեստին տիրապետած մեծ վարպետը, վարպետութիւն մը որուն կը ձգտին ու կը հասնին միմիայն անոնք, որոնք իրենց փոթորկոտ ու վառ անհատականութիւնը արտայայտելու համար նկարչական համազօր միջոցներու տիրապետելու հրամայականը կը զգան:

Նոյն կերպ պէտք է դիտել Փարաճանովի «հանելուկային համադրութիւններն ու ֆիլմային խորհրդանշական պատկերները, որոնք նկարչականօրէն հանդիսատեսին վրայ ներգործելու մեծ ներուժ կը պարունակեն (առանց երկխօսութեան, երաժշտութեան ու դիպաշարի):

Այսօր, հարիւր տարի անց, տնտեսական ու ճարտարագիտական մեծ ոստում ու աճ արձանագրած արեւմուտքի ծնունդը եղող այս արուեստը, կնքուած ու մկրտուած ըլլալով ժամանակակից կամ արդի արուեստ MODERN ART փայլփլուն անունով, կ'ապրի իր փառքի օրերը, իսկ իր անուան ու վարկին շուրջ հիւսուած ու գովազդուած յաջողութիւններու (մարդու ինքնադրսետրման ազատութեամբ

եան, ազատագրուած ու փրկուած մարդկութեան) ու յաղթանակի պատմութիւնները կը շարունակեն հիպոստացնել ուր որ է ամբողջ աշխարհը, ինչի հետեւանքով, իրենց



անցեալին ու համեստ կենցաղին մէջ քարացած ու անշարժացած երկիրներու ստեղծագործ տարրերը կը ներշնչեն որդեգրելու եւ ընդօրինակելու, չըսելու համար կապկելու գայն: Անոնք, ընդօրինակելով այդ փորձը, իրենք իրենց կ'ընկալեն, որպէս աշխարհի «հինցած ու փտած» համակարգին դէմ համարձակօրէն ըմբոստացող, անցեալի սուտ ու կեղծ սովորութիւններն ու գաղափարախօսութիւնները տապալելու քաջութիւնը ցուցաբերող, հետեւաբար ինքնաարտայայտման բացարձակ ազատութիւնը նուաճած, իրենց ինքնուրոյն ոճն ու անհատականութիւնը գտած ու գայն աշխարհին պարտադրած, «կայացած անհատներ»:


«Արուեստագետներու» այս բանակը առանց երկար բարակ մտածելու, հասած է այն ճշմարտութեան, որ իրական կամ ճշմարիտ արուեստը.

1.- Ինքնատիպ արուեստն է: Յետեւաբար անոնք ջանք չեն խնայեր իրենց բոլոր նա-

խորդներէն տարբեր տարագով մը (ոճով մը) երեւալու հանրութեան, մինչեւ իսկ տձեւ, բռնագբօսիկ ու նոյնիսկ այլանդակ image-ներ յօրինելով իրենք իրենց:

2.- Թէ ճշմարիտ արուեստը նոր մտքեր ու գաղափարներ կրող արուեստն է միմիայն եւ պարզամտօրէն, նոր ձեւ մը կամ ոճ մը հնարելով, նոր գաղափարի մը կրողը ըլլալ կը կարծեն կամ կը ձեւացնեն:

Իսկ ճշմարիտ արուեստագետները,



առանց որեւէ ճիգի, միշտ ալ ինքնատիպ ու նոր կամ նորարար եղած են, որովհետեւ կրցած են անարատ հայելիի մը նման, անաչաբօրէն, առանց կեղծիքի, կողմնակալութեան կամ դիմակներու, ցոլացնել իրենք զիրենք եւ այն ժամանակը, որուն մէջ ապրած են, իր բոլոր խոցելի կողմերով ու արժանիքներով: Իրենց արուեստին նիւթը ուրիշ բան չէ եղած եթէ ոչ աշխարհի հետ իրենց ունեցած յարաբերութեան ընթացքն ու բնոյթը բացայայտելը եւ այդ մարդկային, միեւնոյն ատեն առանձնայատուկ ու ինքնուրոյն փորձառութիւնը արուեստի գործի մը նիւթը դարձնելով, գայն իր նմաններուն հետ բաժնեկցիլը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԳՐՈՒԵԱՏՐ

Սեան Ազարիկեան-Պարմասրզեան

Հայ ժողովուրդի արուեստը սկիզբ առած է հազարամեակներ առաջ, սակայն հայկական արուեստը իր տոհմիկ նկարագիրը ստացած է դասական միջնադարուն (IV- XIV դարերուն) յանձինս գրականութեան, ճարտարապետութեան, նկարչութեան, կերպարուեստի, որոնց շարքին առանձնակի տեղն ունեցած են գորգագործութիւնն ու կարպետագործութիւնը:



Հայ մատենագրութեան մէջ կապերտ (կարպետ) բառին կը հանդիպինք առաջին

անգամ Աստուածաշունչի թարգմանութեան (V դար): Մինչդեռ գորգ բառին կը հանդիպինք XIII դար որպէս կարպետի հոմանիշ: Carpet բառը (որ հայերէն «կարպետ» բառն է) գոյութիւն չունի պարսկերէնի մէջ: Եւրոպական Ժ. Եւ ԺԱ. դարերու գրականութեան մէջ խօսած են Հայաստանէն եկած գորգավաճառներու մասին, ուրեմն փաստ մը որ Պարսկաստանէն դարեր առաջ Հայաստանը գորգագործութեան կեդրոն եղած էր:

Կարպետը եւ գորգը հայ ժողովուրդի կենցաղին մէջ հնագոյն ժամանակներէն եղած է կենսական անհրաժեշտութիւն: Պատմական Հայաստանի մէջ ականդոյթ եղած է ժողովրդական, եկեղեցական եւ թագաւորական շինութիւններու յատակը ծածկել կարպետով կամ գորգով: Այս արհեստին տիրապետած են ընտանիքներ եւ պարտադիր մտած է աղջիկներու օժիտին մէջ: Անոնք մանկութենէն տիրապետած են արհեստին եւ մինչեւ ամուսնութիւն իրենք գործած են իրենց օժիտի գորգերն ու կարպետները:

Գերմանացի գորգագետ Վոլքմար Գանձհորն բազմաթիւ արուեստներու հմուտ մտաւորական մը, հմայուած հայ մշակոյթի հարըստութեամբ եւ ազդեցութեան տարողութեամբ, տասնամեակներ տրամադրած է ուսումնասիրութիւններ կատարելու եւ պատրաստած է փառահեղ հատոր մը՝ «Զրիստոնեական Արեւելեան Գորգը», ուր հարուստ տուեալներով կը փաստէ հայկական 2500 տարուան մշակոյթին ազդեցութիւնը արեւելեան գորգագործութեան վրայ: Ան կը ժխտէ բոլոր այն վարկածները, որոնք կը փորձեն փաստել, թէ արեւելեան գորգին ծագումը թրքական է:

Հայկական գորգերու մասին յիշատակութիւններ կան պահպանուած հայկական միջնադարեան ճարտարապետական կոթողներու արձանագրութիւններու վրայ: Գորգերու եւ կարպետներու պատկերներ կան նաեւ եկեղեցական շինութիւններու պատկերաքան-



դակներու եւ որմնաքանդակներու վրայ: Հայկական Միջնադարեան մանրանկարչութեան զարդածեւերը կը կրկնուին նաեւ գորգերու վրայ եւ մէկը միւսին փոխազդելով զարգացած ու ներկայացած են որպէս մէկ արուեստի միասնական օրկանիզմի տարրեր:

Հայ դասական գորգերու եւ կարպետներու ուսումնասիրութիւնները կը պարզեն, որ հնագոյն դարերէն ի վեր հայերը գործածած են վառ, ցայտուն կարմիրը եւ ջինջ կապոյտը, իրենց բոլոր երանգներով: Ինչպէս նաեւ ոսկեգոյն դեղինը, կաթնագոյնը, գմրուխտի կանաչը եւ սմբուկի մուգ մանիշակագոյնը: Շատ քիչ գործածած են սեւ գոյնը:

Հայաստանի իւրաքանչիւր շրջան ունե-

ցած է ներկի պատրաստման արհեստանոցներ եւ հնագոյն ներկերէն կարելի է յիշել որդան կարմիրը եւ տորոնը:

Գորգագործութեան հնագոյն գործիքը՝ կտուտն է, որ յայտնաբերուած է Հայաստանի մէջ: Ոսկորէ պատրաստուած այս գործիքը թէ՛ ձեւով եւ թէ՛ չափով տարբեր չէ այսօր գիւղերու մէջ գործածուող կտուտէն:

Հայ գորգագործներ նախապատուութիւնը տուած են ոչխարի փափուկ եւ երկարավիզ բուրդին: Լաւագոյնը համարուած է զարնանային խուզը: Հայաստանի տարբեր գորգագործութեան դպրոցներու մէջ տարբեր եղած է գորգերու հանգոյցներու խտութիւնը՝ մէկ քառակուսի տեսիմէթր մակերեսի վրայ: Իջեւանի եւ Չանգեզուրի գորգերու խտութիւնը 900-1600 հանգոյց է, Արցախինը՝ 1300-1600, Վասպուրականինը՝ 784-900, Կարինինը եւ Սեբաստիայինը՝ 2025-2100:

Հայկական գորգերը կը բնորոշուին եւ կ'առանձնանան արեւելեան երկիրներու գորգերէն հետեւեալ յատկանիշներով.

Ա- Բուսական եւ կենդանական մոթիֆները պատկերուած են ոճաւորուած եւ վերացարկուած, ինչպէս՝ թելատարած արծիւր, հովահարածեւ պոչով սիրամարգը, խոյի եղջիրները եւ այլն....

Բ- Մարդկային եւ կենդանական պատկերները նկարագարուած են շարժման ընթացքին, այսպէս՝ այծեամը վազքի պահուն, աքլորը խրոխտ կանգնած եւ այլն..

Գ- Չափազանց բնորոշ են կրկնուող զարդամոթիֆները՝ գունային տարբերութեամբ, ինչ որ պատկերը կը դարձնէ առաւել ակընհաճոյ եւ աշխոյժ:

ՀԱՅՎԱԿԱՆ ԿԱՐՊԵՏՆԵՐՈՒ ՏԵՍԱԿՆԵՐ

Հայկական կարպետներու յայտնի տեսակները կը բաժնուին եօթը խումբերու. մեզար, ջեջիմ, մատնաքաշ կարպետ (երկու երեսանի կարպետն է), շուլալ կարպետ, ուղիղ օղծիտ-փաթաթովի կարպետ, թեք օղծիտ-փաթաթովի կարպետ եւ ծոպաւոր կարպետներ:

Չուտ հայկական գորգեր պէտք է համարել հետեւեալները. «Սեւան»ը, «Լոռի բամպակ»ը, «Քոնաքէնթ»ը, «Շելաբերդ»ը (Ջրաբերդ), «Խնձորեսկ»ը, բոլոր «Վերնէ»ները, «Սումաք»ները, «Ախսթաֆա»ն եւ բոլոր «Ղաւրաբաղ»ները....:

ՊԱՏՄՈՒԹԵՆԸ ԱՐՃԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Իսկ հալտուն-Արաբական խալիֆայութեան տրուած տուրքերու ցանկը բովանդակող «Ժիրապ ալ Տաուլէ» իր գիրքին մէջ կը յիշատակէ թէ Ը. Դարու վերջերուն, Յայաստան 20 գորգ կու տար Պաղտատի խալիֆային, իբրեւ տարեկան տուրք: Փաստօրէն, եթէ Յայաստան գորգի արտադրութեան



կեդրոն չըլլար, իրմէ գորգ պիտի չպահանջուէր որպէս տուրք:

Թալալապի կը տեղեկացնէ 1021 թուականներուն Յայաստան այլ տուրքերու կողքին, պարտաւոր էր 30 գորգ տալ Պուճիտեան Սուլթանին:

Թապարի 768-ի արձանագրութեան մը մէջ կը յիշատակէ «Յայաստան»անունը, զոր

կարդացած է հայկական գորգի մը վրայ:

Իտալացի ճանապարհորդ Մարքո Փոլօն իր յուշերուն մէջ գրած է «Յայերը եւ Յոյները երեք մեծ քաղաքներու՝ Գոնիայի, Կեսարիոյ եւ Սեբաստիոյ մէջ կը գործէին աշխարհի ամենագեղեցիկ եւ ամենանուրբ գորգերը»:

Յայկական գորգերու մասին ամենէն կանուխ վկայութիւնը տրուած է գերմանական Enzyklopadie des Orientteppichs-ի (Արեւելեան գորգերու համայնագիտարան) մէջ, ուր մէջբերուած է Նիկողայոս Ադոնցի պատմական փաստը, ըստ որուն 813-ին, Պուլկարիոյ Քրում թագաւորը հայկական բուրդէ գորգեր աւար տարած է Արեւելքէն: Համայնագիտարանը կը յիշէ Պայիաքի պատմիչին 1025-ի մէկ արձանագրութիւնը, որ կը խօսի Ղազնայի Մահմուտ խանի կողմէ Թուրքիստանի Բատիր խանին նուիրուած հայկական թանկարժէք գորգերու մասին:

Գանձհորն գրաւոր ոչ մէկ հին վկայութիւն կը գտնէ, Անատոլի տարածքին սելճուքեան կամ թըքական գորգերու արտադրութեան մասին: Հեղինակը ցոյց կու տայ թէ Բ.ա. 70-էն սկսեալ, երբ Տիգրան Մեծ ընդարձակեց Յայաստանի սահմանները, հայերը հաստատուած են կովկասեան շրջաններու, Միջագետքի, կեդրոնական եւ արեւմտեան Անատոլի տարածքին: Ժ. Ե. ԺԱ. Դարերուն, սելճուքեան արշաւանքները պատճառ դարձան, որ Յայաստանի բնակչութեան կեսը գաղթէ դէպի Գարահիսար, Կեսարիա եւ Կիլիկիա:

Պատմական տուեալները ցոյց կու տան, որ կարպետները ունէին իշխողին հաւասար դիրք եւ կը խորհրդանշէին անոր ներկայութիւնը: Կարմիր գորգ փռելը, ինքնին, խորհրդանշական պատիւ մըն է հիւրին հեղինակութեան: Գաւառներու մէջ, գորգերը իբրեւ դեսպան՝ կը խորհրդանշէին իշխողին ուժն ու ներկայութիւնը: Մինչեւ Միջնադարու եւ Վերածնունդի շրջանները, գորգերը այլ դերակատարութիւն չունէին: Անոնք աշխարհիկ եւ կրօնական ուժի արտացոլումն էին:

Այս տուեալներէն մեկնելով, Գանձհորն կը փորձէ փաստել թէ քրիստոնէական գորգի ծագումը ո՛չ միայն արեւելեան է, այլեւ՝ հայկական: Դարեր շարունակ, քրիստոնէական զարդարուեստին բնորոշ զարդանմոյշներ տիրապետած են գորգարուեստի զարգացման վրայ: Այդ զարդանմոյշներուն պատգամը անժխտելիօրէն քրիստոնէական է, իսկ արմատը՝ հայկական, Ը. Դարէն ետք՝ որ-

դեգրուած քրիստոնեայ սուրիացիներու եւ յոյներու կողմէ եւ օգտագործուած՝ մինչեւ միջնադարու աւարտը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՉԱՐԴԱՆՍՈՅՇՆԵՐ

Հայկական գորգերը մաս կը կազմեն աւանդական զարդանմոյշներու եւ կրկնուող ձեւերու շղթայի մը, որ չէ փշրուած իր զարգացման ընթացքին, սկսեալ՝ Ք.ա. առաջին հազարամեակէն մինչեւ այսօր եւ այնտեղէն տարածուած է Ասիա եւ Եւրոպա:



Քրիստոնեական գորգերու վրայ երեւցող խաչերու եւ խաչ-աստղերու հիմնական 12 ձեւեր կան, որոնք լոյսի խորհրդանիշերն են: Հայկական խորհրդանիշերէն յատկանշական կը համարուի S եւ E ձեւերը:

S-ն Տէր բառին առաջին տառն է, որ կը նշանակէ Ամենակարող Աստուած: Անկկա կ'երեւի առաւելաբար վիշապագորգերու վրայ: Հայերուն համար հին դիցաբանութեանց մէջ վիշապը կը խորհրդանշէ բարիք, իմաստութիւն, իբրեւ ջուրի պահապան՝ կը մարմատրե ուժը եւ կը ծառայէ անարդարութեան ու չարութեան դէմ: Միջագետքի եւ

կովկասեան լեռներու վրայ վիշապի խորհրդանիշը՝ իբրեւ երկնային մարմնաւորում, գոյութիւն ունեցած է հին դիցաբանութեանց մէջ, իսկ չինացիներու մօտ՝ կը խորհրդանշէ առնականութիւն եւ բարեբերութիւն:

Այս իմաստով, S-ի ձեւով վիշապը իբրեւ Աստուծոյ խորհրդանիշ՝ յաճախ փոխարինած է խաչը: Հայաստանեաց Առաքելական եկեղեցւոյ եպիսկոպոսապետներու գաւազաններուն վրայ կ'երեւին երկու վիշապներ, թագադրուած՝ խաչով:

E-ն հին հայերէնով կը նշանակէ «Ան», այսինքն՝ Ամենագոր երկնայինը: Նաեւ՝ Յիսուսի անուան առաջին տառն է, շրջուած ձեւով: Յիսուսի ամենէն հին խորհրդանշանն է, որ ժամանակի ընթացքին կերպարանափոխուելով՝ վերածուած է շուշանի (Մարիամ Աստուածածինի խորհրդանիշ), ապա ծաղկելով՝ կենաց ծառի: Շուշանը կը խորհրդանշէ ճշմարտութիւն, իսկ կենաց ծառը՝ կենսքի աղբիւր:

Արեւելեան Հայաստանէն մինչեւ Կերոնական Ասիա տարածքին արտադրուած գորգերուն վրայ կայ ԴԴ գիրերով խորհրդանշանը: Գանձհորն կը բացատրէ, թէ դ-ն հայկական այբուբենի չորրորդ տառն է, իսկ չորսը սրբազան թիւ մըն է հայերուն համար: Կ'ամնչուի չորս անտարանիչներուն եւ կը խորհրդանշէ ոգիին յորդումը կամ հաւատքի յայտարարութիւնը: Երեւանի մատենադարանին մէջ, 1304 թուականէն եկած ձեռագիրի մը լուսանցքին մէջ կ'երեւի արեւու պատկերը, որուն տակ կայ ԴԴ նշանը:

16-րդ դարուն, իսլամական կրօնի պարտադրանքով, քրիստոնեական խորհրդանշաններ կորսնցուցին իրենց սկզբնական իմաստը եւ ստացան նոր ձեւ: ԺԷ-ԺԸ դարերու «պարսկական» գորգի մը վրայ կ'երեւի ծաղկեփունջ մը, որ տակաւին կը յիշեցնէ Կենաց Ծառը: Անոր մէջ կայ խաչ մը, որուն շուրջ դրուած են ԴԴ խորհրդանշանները:

Պատմական Հայաստանի գորգագործական տարբեր դպրոցներու մէջ գործածուած են տեղական նշանակութիւն ունեցող բուսական եւ կենդանական մոթիֆներ, որոնք կը գանազանուին իրարմէ: Լոռի-Գուգարքի գորգերու վրայ կը հանդիպինք եղջերուի, այծեամի, խոյի, սոխակի, ճնճղուկի, արքաղաղի, մարդու եւ բուսական բազմաթիւ մոթիֆներու:

ԳԱՆՁԱՍԱՐ

Արարատեան դպրոցի գորգերու վրայ կը գտնենք սիրամարգի, արեւի, աստղերու, խաղողի ողկոյզի, ծաղկած ճիւղի եւ կենցաղային իրերու պատկերներ: Սիւնիքի մէջ նախապատուութիւն կը տրուէր արեւի, վիշապ օձերու, եղջիւրի եւ խոյի զարդածեւերու: Արցախի եւ Նախիջեւանի գորգերու յատուկ են

զէնքի պատկերներու: Անոնք, ո՛չ միայն գործածուած են որպէս վերացարկուած զարդանաշխեր, այլեւ որպէս չարէն պաշտպանուելու խորհրդանշան, նոյնիսկ սուրեր եւ նիզակի սայրեր կրող գօտիներու մէջ, որպէս պահպանիչներ: Հայ ժողովուրդի համար զէնքի նման հզօր պահպանիչ միջոցներն եղած են հաւատքի խորհրդանշանները՝ խաչը, Սուրբ Երրորդութեան երեքնուկը եւ Սուրբ Հոգիի գալստեան աղաւնին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԱՆԱՄՈՐ ԳՈՐԳԵՐ

Աշխարհի ամենէն հին ճանչցուած գորգը՝ Փագիրիքը հիսուած է Ուրարտական թագաւորութեան շրջանին Զ.ա. 5-էն 4-րդ դարուն: Գտնուած է 1949-ին, Ալթայի լեռներուն վրայէն: Այսօրուան չափանիշներով իսկ շատ նուրբ աշխատցուած գորգ մըն է անիկա: Անոր վրայ երեւցող խորհրդանշաններն ու պատկերները փռիւզիական են, իսկ հայերը իրենց նախահայրերը կը համարեն փռիւզիացիները, ապա այդ զարդանմոյշները հիմը կը կազմեն հայկական գորգերու ավանդութեան:

Գորգին վրայ պատկերուած է հեծեալներու թափօր մը, ուր ձիաւորները յար եւ նման են Փերսեփոլիսի բարձրաքանդակներու վրայ երեւցող հայ պատուիրակներուն կերպարանքին: Գորգի շրջանակին վրայ պատկերուած է հեծեալները կը խորհրդանշեն թաղման թափօր մը, իսկ վարդիկները՝ արեւը եւ հաւատարմութիւնը՝ անդենականին մէջ: «Փագիրիք» գորգը հայկական կանուխ շրջանի գորգագործութեան մէկ ցայտուն ապացոյցն է, որ ապսպրուած է իբրեւ թաղման իր: Հիւսուած է Կովկասի գորգագործական ամենէն հին կեդրոններէն՝ Արտաշատի մէջ, եւ իր բանուածքով շատ նման է Զ.ա. 8-րդ դարէն յայտնաբերուած հիւսուածքներու:

Թեքնիկ բարդութեամբ, գեղարուեստական արժանիքներով իսկական գլուխգործոց է «Անահիտ» գորգը: Ան ունի հայերէն յիշատակութիւն, կը պատկերացնէ եղեմական այգին:

Գորգի հայկականութեան, այսինքն պատկանելիութեան խնդիրը այսօր դարձած է կարելոր հարց: Հարկ է փաստերով համոզել միջազգային կարծիքը, որ գորգարուեստը սկսած է Հայաստանէն ու տարածուած՝ ամբողջ աշխարհի մէջ:



քարավանի, նուռի եւ վարսանդապտուղի պատկերները: Չանգեզուրի եւ Վասպուրականի կարպետներու վրայ կը հանդիպինք

ԱՄԱՆՈՐԵԱՆ ԽՈՀԱՆՈՑ

ՆՈՒԵՐԻ ՏՈՒՓԸ

ԲԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- 5 հաւկիթի ճերմկուց եւ 1/4 գաւաթ շաքար
- 5 հաւկիթի դեղնուց եւ 1/2 գաւաթ շաքար
- 3/4 գաւաթ ալիւր
- Փոշի վանիլ
- Ծիրանի անուշ
- Decofondant-ի խմոր՝ զարդարանքի համար



ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

- 1.- Չարնել հաւկիթի ճերմկուցը մինչեւ որ թաւ դառնայ, աստիճանաբար անելցնել շաքարը եւ շարունակել զարնել մինչեւ որ ամրանայ ու փայլուն դառնայ:
- 2.- Չարնել հաւկիթի դեղնուցը շաքարով մինչեւ դեղնի եւ քրեմի վերածուի ու թեթեւայ:
- 3.- Խառնել ալիւրը եւ վանիլը հաւկիթի դեղնուցի խառնուրդին:
- 4.- Դգալով մէջը պարպել զարնուած հաւկիթի ճերմկուցը (մէրէնկ) եւ ստանալ թեթեւ եւ թաւ խառնուրդ մը:
- 5.- 20սմ. x 20սմ. չափով եւ 4-5 սմ. բարձրութեամբ ափսէի մը յատակը ծածկել խոհանոցի յատուկ թուղթով (parchment paper), կամ իւղոտել եւ ալիւրոտել զայն, պարպել մէջը խմորը եւ եփել կարկանդակը մինչեւ որ եփի ու երեսը թեթեւօրէն վարդագոյն դառնայ:
- 6.- Շրջել ու մէկդի ձգել որ պաղի:
- 7.- Դանակով բաժնել կարկանդակը երեք հորիզոնական մասերու:
- 8.- Տարածել ծիրանի անուշը խաւերուն միջեւ եւ իրար փակցնել:
- 9.- Մակերեսին վրայ դարձեալ ծիրանի անուշ քսել:
- 10.- Պատել կարկանդակը նարնջագոյն Decofondant-ով:
- 11.- Պատրաստել գունաւոր ժանեակներ զարդարելու համար կարկանդակը:
- 12.- Օսլայ եւ փոշի շաքար ցանուած սեղանի վրայ գլանով լողել գունաւորուած decofondant-ին խմորը եւ ժանեակներ պատրաստել:
- 13.- Decofondant-ը երիզանման կտրելէն ետք, փաթեթել պատրաստուած ժանեակները տախտակէ դգալին ծայրը որպէսզի չորնայ եւ ձեւ առնէ: Ապա զարդարել կարկանդակը եւ հիւրասիրել:

DECOFONDANT-Ի ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Decofondant-ը շաքարով խմոր է որ կը գտնուի անուշազամաններու մօտ եւ որմով կարելի է գանազան ձեւեր եւ գոյներ տալ: Ան կը բաղկանայ շաքարէ, շուրթ եւ քաշուած նուշէ:

Ծանօթ.-

Կարելի է կարագով քրեմ գործածել ծիրանի անուշին փոխարէն: Decofondant-ը շատ արագ կը չորնայ եթէ բաց ձգուի:

ՉԱՄԻՉՈՎ ԵՒ ՆՈՒՇՈՎ ՁՈՒԿ

ԲԱՂԱԴՐՈՒԹԻՒՆ

- 1 խոշոր լուբոզ կամ համուր ձուկ՝ 2 1/2 -3 քկ.
- 1/2 գալաթ ալիւր
- 1/2 թէյի դգալ համեմ
- 1 թէյի դգալ աղ
- 6-7 պճեղ սխտոր՝ ճգմուած
- 1 լեմնի տաշուք
- 3 միջակ սոխ
- 1/2 կապ քրքպարա
- 4 լոլիկի շերտեր
- 1/2 թէյի դգալ սել փոշի պղպեղ
- Աղ՝ ըստ փափաքի
- 1 գալաթ կեղուած Նուշ
- 1/2 գալաթ չամիչ
- 1 գալաթ լեմնի հիւթ
- 5 ապուրի դգալ թահին
- 1 1/2 գալաթ ջուր



ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

- 1.- Լուալ եւ ցամբեցնել ձուկը:
- 2.- Խառնել ալիւրը, համեմն ու աղը:
- 3.- Ծածկել ձուկը եւ քերթել լեմնը:
- 4.- Մանրել սոխը եւ քերթել լեմնը:
- 5.- Լաւ մը լուալ ձուկ եւ հանել վրայէն ալիւրին խառնուրդը:
- 6.- Դարձեալ վրան ցանել աղ եւ պղպեղ: Լեցնել ձուկը սոխով, լեմնի տաշուքով, սխտորով, քրքպարայով եւ լոլիկի շերտերով:
- 7.- Վրձինով ձեթ քսել ձուկին վրայ, փաթեթ արծաթ թուղթով եւ խորովել ցայն նախապէս տաքցուած փուռին մէջ 350 աստիճան F/180 աստիճան արծաթ թուղթով եւ կեղուել ձուկին մորթը՝ երկու կողմով:
- 8.- Խառնել թահինը ջուրով, լեմնի հիւթով եւ աղով:
- 9.- Տապկել Նուշն ու չամիչը:
- 10.- Դնել ձուկը հակթաձեւ ամանի մը մէջ, տարածել վրան թացանը, գարդարել Նուշով ու չամիչով եւ տաք վիճակի մէջ հիւրասիրել:

ՖԻԼԷՅԻ ՓԱԹՈՅԹ՝ ԲԱՆՋԱՐԵՂԵՆՈՎ



ԲԱՂԱՂՈՒԹԻՒՆ

- 1 քիլոկրամ կովու ֆիլե միս
- 1/2 թեյի դգալ միջակ փշրուած սեւ պղպեղ
- 1 տուփ մանրուած սունկ
- 1/2 միջակ կանաչ պղպեղ՝ խորանարդածեւ մանրուած
- 1/2 միջակ կարմիր պղպեղ՝ խորանարդածեւ մանրուած
- 1 ստեպղին՝ խորանարդածեւ մանրուած
- 1 միջակ սոխ՝ խորանարդածեւ մանրուած
- Աղ եւ 1/2 թեյի դգալ անուշ պահար
- 2 ապուրի դգալ կարագ՝ բանջարեղէնը տապկելու
- Ձեթ՝ միսը տապկելու եւ եփելու (1 ապուրի դգալ կարագ եւ 5 ապուրի դգալ ձեթ)
- 1 գաւաթ կարմիր գինի
- 1 թեյի դգալ կարագ
- 1 ապուրի դգալ ալիւր

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

- 1.- Տաքցնել 2 դգալ կարագը տապակի մը մէջ եւ տապկել սոխը, կարմիր եւ կանաչ պղպեղը սունկն ու ստեպղինը 5 վայրկեան: Մարել կրակը, հանել բանջարեղէնները տապակէն եւ թեթեւօրէն համեմել գանոնք աղով ու անուշ պահարով:
- 2.- Ֆիլե միսը բանալ միսի յատուկ մուրճով տափակցնել ստանալու համար ուղղանկունաձեւ խոշոր կտոր մը: Վրան թեթեւօրէն աղ եւ սեւ պղպեղ ցանել:
- 3.- Տարածել տապկուած բանջարեղէնները միսի շերտին վրայ, փաթթել եւ դերձանով կապել գայն կամ ցանցի ֆիլեի մէջ դնել:
- 4.- Տաքցնել ձեթն ու կարագը խորունկ տապակի մը մէջ, աւելցնել միսը եւ զօրաւոր կրակի վրայ տապկել մինչեւ որ բոլոր կողմերը սրճագոյն դառնան:
- 5.- Միսին վրան ցանել սեւ պղպեղ: Չտետղել ափսէն փուռին մէջ եւ եփել 20-25 վայրկեան: Մերթ ընդ մերթ շրջել միսը որպէսզի չփակի ափսէին յատակը:
- 6.- Հանել միսը, քակել դերձանը եւ ձգել գայն տաք ամանի մը մէջ մինչեւ հիւրասիրելիք ժամանակը:
- 7.- Միսէն ելած ջուրը գործածել թացանը պատրաստելու:

ԹԱՅԱՆԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

- 1.- Դնել 1 հաւու խորանարդը խառնել 1 գաւաթ ջուրով, աւելցնել միսէն ելած ջուրին եւ եփել գինիին հետ:
- 2.- Աւելցնել 1 թեյի դգալ մանանեխի խիւս (մութարտ), ռուն եւ շարունակել եփել մինչեւ որ թացանը թանձրանայ:
- 3.- Հիւրասիրել միսը այս թացանով, բրինձէ փիլաւով եւ թեթեւօրէն տապկուած բանջարեղէնով:

ՌՈՒԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

- 1.- 1 թեյի դգալ կարագով խարկել 1 ապուրի դգալ ալիւրը ստանալու համար ռուն:
- 2.- 1 գաւաթ կարմիր գինին տաքցնել պոյտին մէջ (քասերօլ) մինչեւ որ քանակը նուազի 1/4 գաւաթի:

Ի՞ՆՉ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՆ 2020-ի ԱՍՏՂԵՐԸ

Կարպիս Արապաթեան

Խոյ

Տարին յաջող կ'ընթանայ խոյերուն համար: Այս նշանի ներկայացուցիչներուն յաջողութիւնը կը սկսի Յունուարի Նոյնիսկ առաջին օրերէն: Խոյերուն խորհուրդ կը տրուի յաճախ ներկայ ըլլալ ընկերային միջավայրի մէջ, նոր ծանօթութիւններու շնորհիւ նոր բարեկամութիւններ հաստատել. այդ մտերիմ մարդիկը կրնան օգնել յաղթահարելու քանի մը բարդ խնդիրներ, որոնք առանձին դժուար պիտի ըլլայ լուծել:

Յուլ

Այս տարի բեռնաւորուած պիտի ըլլան գործերով, որոնք պիտի ստիպեն հանգիստ ցուլերուն արագացնել իրենց կեանքին ընթացքը եւ աշխոյժ ըլլալ՝ ինչ որ իրենց նկարագրային յատկանիշներէն չէ: Պետք է պատասխանատուութեամբ մօտենայ իր դէմ ծառայող հարցերուն, որպէսզի կարենայ աւարտել կարելոր գործերը: Յուլը կրնայ դէմ յանդիման գտնուիլ կնճռոտ իրավիճակներու. խորհուրդ կը տրուի դիւանագետ ըլլալ յարաբերութիւններու մէջ եւ պահել հոգեկան անդորրը:

Երկուորեակ

Մտերիմներու հետ երկուորեակին յարաբերութիւնները էական պիտի ըլլան. բարձրացում պիտի գտնէ գործի եւ ուսման մէջ, իսկ բոլոր անոնք, որոնք տակաւին չեն հանդիպած իրենց երկրորդ կէսին, անպայման պիտի գտնեն զայն: 2020 թուականին ուշադիր պետք է ըլլալ բախումներէ, թակարդներէ եւ ապարդիւն զբաղումներէ, որոնք կրնան սպառել իր ուժերը. այդ պատճառով ան պետք է աշխատի առանց ջիղերը անհանգրտացնելու. իսկ եթէ խանգարիչ տարրերու հանդիպի, պետք է հանդարտ մնայ եւ պահէ ներքին հանգստութիւնը, որուն միջոցով պիտի հասնի իր գործի աւարտին:

Խեցգետին

Խեցգետինին համար տարին այդքան ալ դիւրին պիտի չընթանայ, բայց եթէ յաջողի վերագտնել իր եռանդը եւ ըստ այնմ աշխատիլ, շատ անելի յաջողութիւններու կը հասնի եւ շատ բան չի կորսնցներ: Կարելոր է նաեւ լրջութեամբ մօտենալ անձնական առողջութեան: Թելադրելի է 2020-ին յաճախակի կապ հաստատել հեռաւոր բարեկամներու հետ: Լաւ ընտանեկան յարաբերութիւնները պիտի նպաստեն յաղթահարելու տարատեսակ դժուարութիւններ:

Առիժ

Յառաջիկայ տարին առիժը ստիպուած պիտի ըլլայ կատարելու բազմաթիւ ճամբորդութիւններ, որոնք հաճելի ժամեր վայելելու կարելիութիւն պիտի ստեղծեն, սակայն ան կրնայ երկար ժամանակ իր երկրէն հեռու մնալ եւ հետագային տեղափոխուիլ: 2020-ին Առիժները պիտի ունենան տնտեսական յաջողութիւն, իսկ գործի իմաստով ուսումներ պիտի արձանագրեն. անձնական մրցակցութիւնը բազմաթիւ յաջողութիւններ կ'ապահովէ առիժին:

Կոյս

Տարին այդքան դիւրին պիտի չըլլայ. կոյսը պիտի օգտուի նախորդ տարիներու փորձութիւններէն: Իր աշխատելաճը պետք է ճիշդ ձեւաւորէ՝ ժամանակը եւ ուժը խնայելով: Պետք է յատուկ ուշադրութիւն դարձնէ առողջութեան եւ մարզանքիլ հետեւի: Ստեղծագործական աշխատանքներով լի տարի մը պիտի ըլլայ, որովհետեւ ինչ բանի որ ձեռնարկէ ան, պիտի արդիւնաւորուի:

Կշիռք

Այս տարի հաւանական է որ կշիռքը վճարէ իր նախկին սխալներուն գինը, բայց նաեւ կըրնայ զինք հետաքրքրող բոլոր հարցերուն պատասխանները գտնել: Պետք է վստահի իր ներքին ուժին եւ չվախնայ մտերիմներէն օգնութիւն խնդրելէ, անոնք կրնան անելի շատ օգնել իրեն քան այն անձերը, որոնցմէ օգնութիւն կ'ակնկալէ:

Կարիճ

Տարին լի է զարգացումներով: Պիտի կընքուին նոր համաձայնագիրներ եւ հաստատուին նոր ծանօթութիւններ: Կեանքը փայլուն գոյներով դիտելու համար կշիռքը պետք է արժեւորէ իր կարողութիւնները: Խորհուրդ կը տրուի չվստահիլ ոչ մէկուն եւ միայն ականջ տալ ներքին ձայնին, որպէսզի կարելի ըլլայ հեռանալ տհաճ մարդոցմէ:

Աղեղնաւոր

Աղեղնաւորին անձնական կեանքը հետաքրքրական դէպքերով եւ հանդիպումներով պիտի հարստանայ այս տարի, այդ պատճառով ան ընծայուող բոլոր առիթները պետք է օգտագործէ: Յաճախ պիտի հանդիպի հետաքրքրական եւ իմաստուն մարդոց: Դժուարութիւններու յառաջացման պարագային խորհուրդ կը տրուի հանգիստ մնալ եւ յիշել որ սեւ օրերուն կը յաջորդեն փայլուն օրեր:

Այծեղջիկ

Առնետի տարին այծեղջիկներուն համար նոր կեանքի առիթներ պիտի բանայ, հաւանաբար կալուածներու տեր դառնայ, ինչ որ երկար տարիներու իր երազն էր: Յառաջիպացք պիտի արձանագրէ գործնական եւ անձնական կեանքին մէջ: Առաւելութիւններով լեցուն այս տարուան մէջ ժամանակ պիտի գտնէ օգնելու այն հարագատներուն, որոնք օգնութեան շատ կարիք ունին:

Ջրիս




























































Անցեալը միշտ իր անդրադարձը կ'ունենայ ջրիսի կեանքի այս փուլին, մոռցուած հարցեր կրկին գլուխ պիտի ցցեն: Անձնական սխալները, որոնք պատահած էին անցեալին, պիտի նպաստեն գործելու անելի զգօն: Այս տարի հետաքրքրական ծրագիրներ պիտի ունենայ ան, որոնք դիւրաւ պիտի իրականանան: Խորհուրդ կը տրուի յաջողութիւններով չգիտնուած եւ շարունակել իրենց աշխատանքը նոյն թափով: Այս տարի իսկապէս յաջողութիւններով լեցուն պիտի ըլլայ, այնպէս որ կարելի է նաեւ արկածախնդրութիւններու ձեռնարկել:

Ձուկ

Ձուկերուն համար տարին աշխոյժ եւ բեղուն պիտի ըլլայ: Յաջողութիւնները զիրար պիտի յաջորդեն: Չգոյշ ըլլալ առանձնութենէ: Առանձին մնալու փոխարէն ժամանակ անցնէ մտերիմներու հետ, բայց մակերեսային ծանօթութիւններէ հեռու մնալով եւ յարաբերութիւն մշակել անկեղծ մարդոց հետ: 2020-ը հարուստ պիտի ըլլայ դրական յարաբերութիւններով եւ գործի մէջ նորութիւններու ներմուծումով:

ՏՕՆԱԿԱՆ ԽԱՉԲԱՌ

Պատրաստեց Մարինա Զիլարժեան-Պողիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1															
2															
3															
4															
5															
6															
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															

Հորիզոնական

- 1- Սուրբ Ծնունդին գիրար կը շնորհաւորենք ըսելով. «Քրիստոս Ծնաւ եւ յայտնեցաւ. Օրհնեալ է Քրիստոսի»: Տարի:
- 2- Նոր: Հակառակ՝ փոխադրամիջոց: Հակառակ՝ իգական անուն:
- 3- Հակառակ՝ լեռ: Հակառակ՝ 4004: Բարակ մորթ:
- 4- Աղբիւր: Կրկնուած ձայնաւորներ: Լեզուով մը՝ այո: Կրկնուած ձայնաւորներ:
- 5- Սպառող կրակի ձայն: Սիամանթոյի ծննդավայրը:
- 6- Արժէք: Հակառակ՝ վանքի մէջ բնակող կրօնաւոր:
- 7- Հակառակ՝ թատերական ներկայացումի բաժանում: Տառի մը անունը:
- 8- Սարգիս Օհանջանեանի ծածկանունը: Անձնական դերանուն:
- 9- Հայ ազգային ազատագրական շարժման գործիչ, մասնակցած է Խանասորի արշաւանքին որպէս յիսնապետ:
- 10- Տառի մը անունը: Կրկնուած ձայնաւորներ:
- 11- Յիսուսի ծնունդը ներկայացնող յուշապատկեր: Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան արեւմտեան մասը գտնուող շրջան:
- 12- Տառի մը անունը: Ասացուածքը կ'ըսէ. «Լաւ է աչքով կոյր ըլլալ, բան»: Հակառակ՝ Եական բայ:
- 13- Եական բայ: «Կիլիկիա. Առիւծների Երկիր» ֆիլմի մեկեւնաս երգչախումբը:
- 14- 5420: Քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ պետական կրօնք հռչակուելու թուականը: Անձնական դերանուն: Եղեգնասրինգ:
- 15- Պայծառակերպութիւն տօնին միւս անուանումը:

Ուղղահայեաց

- 1- Միշտ աճող: Մկան:
- 2- Տարածքի միաւոր: Գոյութիւն ուներ: Հակառակ՝ անձնական դերանուն: Սրբուհի մը:
- 3- 304: Հետեւեալ խօսքին հեղինակը. «Կայ մի բան, որ աշխարհի զանազան ծայրերից կարող է միաւորել հայերին՝ հոգով, մտքով եւ արիւնով, այն է՝ Ազգային սէրը»: Հակառակ՝ տառի մը անունը:
- 4- Հայկական դիցաբանութեան մէջ դպրութեան աստուածը: 160: Աչք: Հպարտ:
- 5- Ահաւասիկ: Հակառակ՝ գազանի բոյն: Հակառակ՝ հաստատական պատասխան:
- 6- Բազուկը կախուած տեղը: Իրարայաջորդ տառեր: Հեզ: Խոշոր կապոց:
- 7- 7001: Երկսայրի սուր:
- 8- Սաստիկ պայթիւն: Էջի մը հորիզոնական գիծը: Հակառակ՝ 5200:
- 9- Դրամանիշ: Բաղաձայն տառեր: Ժխտական նախածանց:

10- Հակառակ՝ շաղկապ: Առագաստի սիւն: Հակառակ՝ 7001: Տառի մը հարեւանները:

11- Անգոր: Ճառագայթ:

12- Հակառակ՝ անօթ: Կոճակ անցընելու օղակ: Հակառակ՝ 3001: 509:

13- Լեզուով մը՝ այո: Կրկնուած ձայնաւորներ: Ձայնաւոր տառեր:

14- Հետեւեալ խօսքին հեղինակը. «*Իրաւունքը այսօր ալ սուրին ծայրն է, այսինքն՝ անոնք միայն իրաւունք ունին, որ սուր ունին կամ գէթ զմեզի մը ետթաղանին դէմ*»: Կրկնուած բաղաձայններ:

15- Իշխանութեան գաւազան: Անձնական դերանուն: Մայրիի տեսակի մշտադալար ծառ:

ԼՈՒԾՈՒՄ

դ	ւ	վ	ժ	ւ	ս	ո	մ	բ	ի	ա	լ	մ	ի	մ	15
վ	ւ	ս	շ	ն	դ	ա	մ	ն	ա	մ	վ	դ	մ	14	
ւ	ն	ն	ն	ն	ն	մ	ա	ս	ն	ն	ն	ն	ն	13	
բ	դ	ն	ի	ս	ժ	տ	ր	ն	ն	ն	լ	ն	մ	12	
ն	ա	ժ	ա	շ	ա	ժ	մ	ւ	ս	ն	ր	ն	ն	11	
բ	բ	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ս	ն	ն	ն	ն	10	
ն	ր	ն	դ	ա	ր	ւ	ս	ն	լ	ս	ի	վ	դ	9	
դ	ա	ն	ս	ի	ս	ա	ն	ա	ն	ս	ն	ն	ն	8	
ա	ս	ն	ա	մ	ա	մ	ն	ն	ն	ն	ն	ն	ն	7	
ն	ի	ա	ն	ա	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	6	
ն	ի	ա	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	5	
ա	ա	ն	ա	ս	ն	ի	ի	ն	ն	ն	ն	ն	ն	4	
ի	շ	ա	ր	ն	ն	ս	ն	ն	ն	ն	ն	ն	ն	3	
ա	ր	ս	ա	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	2	
ր	ա	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	1	
15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	

2019-ի ՄԱՐԶԱԿԱՆ ՉԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ

Ռաֆֆի Սիլահեան

ՏԵՂԱԿԱՆ

ՃԷՅՇԻ ՊԱՍԵԹԻ ՏՂՈՑ ԽՈՒՄԸ ՍՈՒՐԻՈՅ ԱԽՈՅԵԱՆ

Սուրիոյ պասքեթի տղոց ախոյեանութեան մրցումներուն իրենց մասնակցութիւնը բերին տասը խումբեր՝ ՃէյՉ, Ուահտ, Իթթի-



հատ, Ճալաա, Յուրիէ, ՅՄԸՄ, Զարամէ, Սաուրա, Նար եւ Սահէլ: Ախոյեանութեան առաջին փուլը աւարտելէ ետք, Սահէլ եւ Նար խումբերը իրենց արձանագրած ձախողութեան հետեւանքով փոխանցուեցան Բ. դասակարգ, իսկ մնացեալ խումբերը մաս կազմեցին FINAL 8-ի մրցումներուն: Աւարտական քառեակի մրցումներուն մաս կազմեցին ՃէյՉը, Ճալաա-ը, Իթթիհատը եւ Ուահտէն: Սուրիոյ պասքեթի տղոց ախոյեանութիւնը աւարտեցաւ ի նպաստ Դամասկոսի ՃէյՉ խումբին: Խումբը տիրացաւ Սուրիոյ ախոյեանութեան: Տղոց հանրապետական մրցումներուն, ՃէյՉի կազմը դարձեալ յաջողեցաւ նուաճել բաժակը, աւարտական մրցումին պարտութեան մատնելով Յոմսի Ուասպէն:

ՃԷՅՇԸ ՆՈՒԱՃԵՑ ՍՈՒՐԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԲԱԺԱԿԸ

Սուրիոյ ֆութպոլի այս տարուան ախոյեանութեան մրցումներուն կը մասնակցէին 14 ակումբներ: Մրցումները ընթացք առին տար-



բեր քաղաքներու մէջ: Աւարտին, Դամասկոսի ՃէյՉը անգամ մը եւս կրցաւ ձեռք ձգել ախոյեանութեան բաժակը, ապահովելով 54 կէտ, անոր յաջորդեց լաթաքիոյ Թշրինը՝ 53 կէտով: Հալէպի Բանուորներու եւ Դամասկոսի Մաճտ խումբերը փոխանցուեցան Բ. դասակարգ: 2018-2019 տարեշրջանին տեղի ունեցաւ 175 մրցում, արձանագրուեցաւ 377 կոլ: Կոլակորիստներու աղիւսակը գլխաւորեց ՃէյՉ խումբի խաղացող Մուհամմետ ալ Ուսթէտ՝ 27 կոլով:

ՄԻԶԱՉԳԱՅԻՆ

ԱՆԳԼԻՈՅ ԼԻՎԻՐՈՒԼ ԶԱՆԴԻՍԱՅԱԹ ՉԱՄՊԻՇՆԸ-ԼԻԿԻ ԱԽՈՅԵԱՆ

Պատմութեան մէջ 6-րդ անգամ ըլլալով Անգլիոյ Լիվրփուլի ֆութպոլի խումբը յաջողեցաւ տիրանալ Եւրոպայի Չամպիոնզ-լիկի ախոյեանութեան, աւարտական մրցումին պարտութեան մատնելով Թոթենհամը 2-0

ԳԱՆՁԱՍԱՐ

արդիւնքով: Մրցումը տեղի ունեցաւ Մատրիտի մէջ: Յաղթական խումբին կողերը նշանակեցին Մուհամմետ Սալահ՝ տուգանային



հարուածով եւ Տելուկ Օրիկի՝ 2-րդ եւ 87-րդ վայրկեաններուն: Յիշենք որ մրցաշարքի պատմութեան մէջ այս 7-րդ անգամն է, որ նոյն երկիրէն խումբեր միասնաբար կը հասնին աւարտական մրցումին:

ՉԵԼՍԻ ԻՐՐՈՓԱ-ԼԻԿԻ ԲԱԺԱԿԱԿԻՐ

Ատրայէյնճանի մայրաքաղաք Պաքուի մէջ տեղի ունեցած Իրոփա-լիկի աւարտական



մրցումին, Անգլիոյ Չելսին 4-1 արդիւնքով պարտութեան մատնեց Արսենալը, եւ տիրացաւ Իրոփա-լիկի բաժակին: Չելսիի կողերը նշանակեցին Օլիվիէ Կիրուն, Փետրօ Ռոտրիկէն եւ Յազարտը՝ 49-60-65-72-րդ վայրկեաններուն, իսկ Արսենալի կողը նշանակեց Ալեքս Այուպին՝ 69-րդ վայրկեանին: Այս հինգերորդ անգամն է որ Չելսին ձեռք կը ձգէ Իրոփա-լիկի բաժակը:

ՊԱՐՍԵՆՈՆԱՆ 26-ՐԴ ԱՆԳԱՄ ԸԼԼԱՆՈՎ ՍՊԱՆԻՈՅ ԱԽՈՅԵԱՆ

Սպանիոյ քաթալոնական ակումբը՝ Պարսելոնան, 26-րդ անգամ ըլլալով յաջողեցաւ տիրանալ Սպանիոյ ախոյեանութեան: Վերջին 11 տարիներու ընթացքին, այս 8-րդ անգամն է, որ Պարսելոնան կը տիրանայ ախոյեանութեան:

եանութեան: Խումբը իր կատարած 35 մրցումներուն ընթացքին ապահովեց 83 կէտ,



անոր յաջորդեց Աթլետիքօ Մատրիտը՝ 74 կէտով:

ՄԱՆՉԵՍԹԵՐ ՍԻԹԻՆ ԱՆԳԼԻՈՅ ԱԽՈՅԵԱՆ

Չերթականօրէն, երկրորդ անգամ ըլլալով Մանչեսթըր Սիթին տիրացաւ Անգլիոյ Ֆուլթայլի ախոյեանութեան տիտղոսին: Յաղթանակը յստակացաւ մրցաշարքի վերջին փուլին: Խումբը իր կատարած 38 մրցումներուն



ապահովեց 98 կէտ, մէկ կէտի տարբերութեամբ իրեն յաջորդեց Լիվըրպուլը: Աւելցնենք, որ վերջին երկու տարիներու ընթացքին, սպանացի մասնագետ մարզիչ Կուարտիլան յաջողեցաւ բարձրացնել խումբին մակարդակը եւ խումբին հետ տիրանալ երկրի ախոյեանութեան:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

-ՎԵՐԱՐԺԵՒՈՐԵՆՔ ՄԵՐ ԶՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆ ՈՒ ՀԱՅՈՒ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ	Մասիս Եպս. Չօպուեան	1
-ԻՆՉՈ՞ՒՔ «ԳԱՆՁԱՍԱՐ»Ի ԲԱՅԱՌԻԿԸ	Չարմիկ Պողիկեան	3
-ՏԱՐԵՄՈՒՄԻ ՄԱՐԹԱՆՔ	Արմեն Սարգսեան	5
-ԺՈՂՈՎՐԴԱՆՈՒԵՐ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՄԲ, ՄՇԱՆՆՈՐՈԳ ՈՒԽՏՈՎ	Յակոբ Քիլեճեան	6
ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ		
-ՄԻԱՄԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ		8
-ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ 2019-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ		18
-ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԻՐԱՄԵԱԿԻ ՍԵՄԻՆ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ (2019)		23
-100 ՏԱՐԻ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ՝ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՍ ՀԵՏ, ԺՈՂՈՎՈՒՐԴԻՍ ՀԱՄԱՐ		30
-2019-Ի ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	Պատրաստեցին՝	
	Սեւան Ազարիկեան	
	Մարինա Պողիկեան	
	Լուսին Զիլմբօշեան	40
ՀՅԴ 130-ԱՄԵԱԿ		
-ԿԻՐՕ ՄԱՆՈՅԵԱՆ. «ԱՅՈ՞Ւ, ՊԱՅԸ ԵԿԱԾ Է, ԵՒ ՊԵՏԶ ԶԷ ՅԱՊԱՂԻՆՔ ԶԵՐ ԲՆՈՐՈՇՈՒՄՈՎ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՅԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ ՄՇԱԿԵԼՈՒ ԵՒ ԱՄՐԱԳՐԵԼՈՒ»	Հարցազրոյցը վարեց	
	Յարութ Էօրտէկեան	46
-ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՈՒՅՆ ՈՒ ՊԱՏՄԱԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՆՊԱՐԱԳԻԾ ՎԱՍՏԱԿԸ	Խաչիկ Շահինեան	49
-ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԽՕՍԵԸ ՆՈՐԱԶԱՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՅՍՕՐՈՒԱՆ ԺԵՆՈՐԻՆ ՄԵՋ	Վաչէ Բրուտեան	53
-ՀԱՅՈՒՆ ԵՐԱԶԸ ԵՒ ՀՐԱՇԱԳՈՐԾ ԱՐԱՄԸ	Պարգէլ Աւագեան	57
100-ԱՄԵԱԿ ՍԵՐԻ ԴԱՇՆԱԳՐԻՆ		
-ԹՈՒՐԶԻԱՅԵՆ ՈՒ ԱՇԽԱՐՀԵՆ ԱՆԺԱՄԱՆՅԵԼԻ ՊԱՐՏԱՍՈՒՐՀԱԿ ՄԸ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՁԵՌՔԻՆ	Ս. Մահսէրեճեան	59
-ՍԵԼՐԻ «ՍԻՆՍՐՈՒՄԸ»	Գեորգ Յակոբճեան	65

ՀՐԱՊԱՐԱԿԱԳՐԱԿԱՆ

-ՍԱՍՈՒՆ 1938. ՉԼՍՈՒՄԾ ՈՒ ՉԳՐՈՒՄԾ ԱՊՍԱՍՄԲՈՒԹԻՒՆԸ **Սոֆիա Յակոբյան 67**

-ՄԵՐ ԱՐՏԱՅԱՅԱՍՏԱՆԸ **Վրեժ-Արմեն 72**

-ԱՐԵՒՄՏԱՅԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԵՒՐՈՒԹԻՒՆԸ **Շողիկ Աշղբեկյան 75**

-ՀԱՅՈՒՆ ՀԱՒԱՔԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ ԵՒ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ **Մարուշ Երամյան 83**

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ-ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

-ՀԱԼԵՊԻ ՍՐԲՈՑ ԶԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԸՆ-
ԴԱՐՁԱԿՈՒՄՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ **Դոկտոր Հուրի Ազեզյան 87**

-ՅԱԽԵՐԺԱԿԱՆ ՀՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆԸ **Յակոբ Սկրտիչյան
Նայիրի Սկրտիչյան 93**

ՀԱՐՑԱԶՐՈՅՑՆԵՐ

-«ԳԱՆՁԱՍԱՐ»Ի «ԿԿՈՒ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՆԵՐԴԻՐԸ ԴԱՍՏԻԱՐԱԿԻՉ ԴԵՐ ՈՒՆԻ
**Հարցազրույցը վարեց
Սեւանայ Հալլաճյան 103**

-ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ, ԴԵԿԱՆ ՍԻԼՎԱ ԻՇԽԱՆԵԱՆ. «ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ
ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ Է, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ԱՅԼ ԽՕՍԵՐՎ՝ ԳԻՏՈՒԹԻՒՆ,
ԱՇԽԱՏԱՆՔ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ» **Հարցազրույցը վարեց
Մարինա Պողիկյան 107**

-ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԵՐԵՈՂՆԵՐՈՒ ԴԵՄ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ՆԱ-
ԽԱԳԱՅ ԱԼԻ ԵՐԹԵՄԻ ՀԵՏ **Հարցազրույցը վարեց
Սալբի Գասպարյան 110**

ՈԳԵԿՈՉՈՒՄ

-ՄԱՅՐ ԶԱՐԵՆ ԵՓՓԵԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ **Անի Ֆիշենկճյան 119**

-ՅԱԽԵՐԺՈՒԹԵԱՆ ՍԵՄԻՆ **Անի Բրդոյեան-Ղազարյան 123**

-ԵՐԱԽՏԱՐԺԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԸ **Համադրեց
Արփի Յարութիւնեան-Սանոսեան 125**

-ՀԱՅՐ ԴԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 200-ԱՄԵԱԿԻ ՇԵՄԻՆ **Համադրեց
Յակոբայ Սարկաւազ Պարսումեան 130**

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

-ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԱՌԵՂՇՈՒՄԾ ՄԸ **Արմենակ Եղիայեան 133**

-ԱՌՕՐԵԱՅ ԽՕՍԵՒ ԱՐՏԱՅԱՅՏՉԱՁԵԻՐՆ ՈՒ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ **Սօսի Միշոյեան-Տապալաղեան 136**

-ՍՈՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ	Լալա Միսկարեան-Մինասեան	139
-ԶՄՐԱՆ ՀԵՔԻԱԹ	Յուշիկ Ղազարեան	144
-ՈՒՇԱՑԱԾ ԳԱՐՈՒՆԸ	Կարո Արսլանեան	149
-ԿԱՐ ՈՒ ՉԿԱՅ	Պերճուհի Աւետեան	151
-ԱՐԴԱՐ ԲԱԺԱՆՈՒՄ	Կարո Վ. Մանճիկեան	158
-ՏՕՆԱԾԱՌԸ, ՆՈՐ ՏԱՐԻՆ, ՀԱԼԷՊԸ ԵՒ ԱՇԽԱՐՀԸ	Խորեն Քինյ. Պերթիզլեան	163
-ԳԱՄԻՇԼԻԻ ԽԱՅՏԱԲՂԵՏ ԿԵԱՆՔԻՆ ՅՈՒՇԵՐՈՎ	Մարի Մելքոն	165
-ԳԻՐՔԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԸ	Յակոբ Միքայելեան	167
-...ԲԱՐՁՈՒՆՔԻՆ	Մարիանա Պերթիզլեան-Ղազարեան	170
-ԱՆՍՊԱՍԵԼԻ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐՈՎ ԲԱՑՈՒՈՂ ԴՈՆԵՐԸ	Տիրուկ Մարգարեան-Կարապետեան	172
-ՄԻ ԲԱՆՈՎ ՕԳՆԷՔ	Յարվարդ	175
-ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ	Յարվարդ	177
-ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ	Լեռնա Գարագիւթիւք	178
-ՑՈՒԼԵՐ	Մարուշ Երամեան	182
-ԴԱՐ ՄԸ ԿԵԱՆՔԵ ԴԵՊԻ ԴԱՐԵՐՈՒ ԱՆՄԱՅՈՒԹԻՒՆ-ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ	Ս. Մահսերճեան	183
-ՄՆԱԼՈՎ ԱԲԱՆԴՈՅԹԻՆ ՀԱԲԱՏԱՐԻՄ	Հրազդան Թոքմաճեան	187
-ՈՌՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆ	Գայիանէ Սիմոնեան-Տերեան	191
-ՓՈՐՁ ՄԸ ՓԱՐԱՃԱՆՈՎԻ ԵՒ ԱՐՇԻԼ ԿՈՐՔԻԻ ԱՐՈՒԵՍԸ ՀԱՍԿԱԼՈՒ	Վարդգէս Պարսումեան	194
ԿՆՈՋԱԿԱՆ		
-ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԳԱՐՈՒԵՍԸ	Սեան Ազարիկեան-Պարմաքըզեան	198
-ԱՄԱՆՈՐԵԱՆ ԽՈՅԱՆՈՑ		203
-ԻՆՉ ԿԸ ԽՈՍԱՆԱՆ 2020-Ի ԱՍՏՂԵՐԸ	Կարայիս Արապաթլեան	206
-ՏՕՆԱԿԱՆ ԽԱՉԲԱՌ	Պատրաստեց Մարիանա Չիլմբոջեան-Պողիկեան	208
ՄԱՐԶԱԿԱՆ		
-2019-Ի ՄԱՐԶԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ	Ռաֆֆի Սիլահեան	211

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ՝ «ԳԱՆՁԱՍԱՐ ԲԱՑԱՌԻԿ-2020»Ի ՄԵԿԵՆԱՍՆԵՐՈՒՆ

-Շնորհակալություն Տեր եւ Տիկ. Աւետիս Զարակիպեաններուն, «Գանձասար Բացառիկ 2020»ին կատարած իրենց նուիրատուութեան համար:

-Շնորհակալություն քուէյթահայ բարերար տիար Կիրակոս Գույումճեանին, «Գանձասար Բացառիկ 2020»ին, ինչպէս նաեւ զանազան առիթներով թերթիս կատարած իր նուիրատուութեան համար:

-Շնորհակալություն ընկեր Գեորգ Յակոբճեանին:

-Շնորհակալություն ՍՕ Խաչի Շրջ. Վարչութեան:

-«Գանձասար Բացառիկ 2020»ի հրատարակութեան իրենց նիւթական օժանդակութիւնը բերին նաեւ Զանատայի մեր սուրիահայ ընկերները, որոնք անմիջապէս արձագանգելով մեր առաջարկին, խմբովին նուիրատուութիւն կատարեցին սուրիահայ կեանքը իրենց առօրեային կամրջող «Գանձասար»ին, հաստատելով որ թէ ու թիկունք են իրենց Մայր գաղութին ու կը մնան նոյն յանձնառու եւ ծառայասեր մեր ընկերները:

Անոնք են՝

Ռաֆֆի Մինասեան

Շահէ Թաշճեան

Արմէն Մելքոնեան

Յովիկ Շիշոյեան

Չարեհ Փօլատեան

Վահէ Կեօզիքիւչիկեան

Չոհրապ Խաչերեան

Ժան Հալլաճեան

Յակոբ Մահսերեճեան

Անդրանիկ Խշուաճեան

Սեւակ Սիսեռեան

Յակոբ Գրճալեան

Կերի Մինասեան

Վաչէ Մելքոնեան

Տիգրան Համայոյեան

Անդրանիկ Խաչատուրեան

Գեորգ Լեպլեպճեան

Գեորգ Գարամարտեան

Կարօ Միսիրեան

Վիգէն Գեորգեան

Վահէ Գեորգեան

Սեդա Սկրտիչեան

Պետիկ Գարասարգիսեան

Մարտիկ Տերտերեան

Վաչէ Պերպերեան

Յարութ Զգիրեան

Ասատուր Արամեան

Սագօ Զեօսէեան:



مؤسسة قصابيان

Kassabian Est.



ACDelco

**BATTERY
EXCELLENT STORAGE LIFE**

Head Office Address

Bustan Kul Ub St. P.O.Box: 3785 ALEPPO - SYRIA

Phone: +963 (021) 22 20 615 / 22 45 246 Fax: +963 (021) 22 23 027

بيع جميع انواع البطاريات

شركة البركة السورية شارع السليمانية هاتف 220 50 46 سوريا - حلب